,, խել զերկնից տեսչուհին յայլ տեսուի , նոյնպէս և անհնար
,, է՝ որ ՚ի քնէ ուսեալ եմք և հաստատեալ յօրէնս յայս , ան-
,, սալ այդպիսի հրամանի և հաւանել . զոր և լոկ քանիւք
,, անգամ լսել ոչ կարեմք , քանզի և կամիմք իսկ ոչ :
,, Ա.յլ վասն օրինացդ ձերոց՝ զոր գրեալ էր և տուեալ քերել
,, առ մեզ , մեք ձեզ ոչ երբեք լսեմք՝ մինչ որ այդր լինիմք
,, ՚ի դրանն , և կամ (՚ի լսելն) ՚ի մոգուցդ՝ որ ձեր օրինա-
,, ուսոյցքդ իմն կոչին , այսպն արարեալ արհամարհեմք .
,, Թող Թէ և գրոյ ևս յօժ արեցուցանեք զմեզ կարդալ , և
,, լսել՝ որ ինչ ոչ է մեզ պիտոյ և խնդիր : Ա.յլ յառաւել ևս
,, պատուհելոյ զթիշդրուեցիդ ձեր՝ և բանալ անգամ զգրեալսդ
,, կամ տեսանել ոչ կամեցաք . զի զօրինս՝ զոր ձանձրեմք ,
,, եթէ սուտ են՝ և անմիտ մարդոյ բարբանջմունք , զոր բա-
,, զում անգամ մեր լուեալ է ՚ի ձեր անուանեալ սուտ վար-
,, դապետացդ՝ և տեղեակ եմք իբրև զձեզ , զայն ոչ կարդալ
,, պարտ է՝ և ոչ լսել . մի զի ըստ կարդալն՝ հարկիմք և ծաղր
,, առնել . ուստի օրէնքն և օրէնսդիրքն՝ և որք պաշտեն զայդ-
,, պիսի խաբեուիս , ՚ի միասին թշնամանին : Յաղագս որոյ
,, և ոչ զմեր օրինս գրել և տալ բերել առ ձեզ ըզ հրամանիդ
,, ձերոյ՝ ՚ի դէպ և ՚ի պատշաճ համարեցաք . զի եթէ զձեր
,, սուտ և զարժանի ծաղու օրէնսդ չհամարեցաք արժանի
,, կարդալոյ և մատուցանելոյ ՚ի մեզ , զի մի թշնամանեսցուք
,, զձեզ՝ ծաղր առնելով զօրինօքդ . զոր ըստ ձերում իսկ
,, մեծի խրատուդ պարտ էր զմտաւ ածել՝ և ՚ի գրելն և ՚ի
,, տալ բերելն առ մեզ , մեք զնորդ զայսպիսի զանծասեր և
,, զձշմարիտ օրէնսն գրիցեմք առ ձեր անգիտուիդ՝ յայսպա-
,, նումն և ՚ի թշնամանս : Ա.յլ այս եւեթ ձեզ ՚ի հաւաստոյս
,, մերոյ յայտնի լինի , զի տարերց ոչ ծիւեմք , արեգական և
,, լուսնի , հովմոյ և կրակի , ոչ դուքդ . և բազում ածողդ՝
,, զոր անուանեքդ դուք ՚ի յերկրի և ՚ի յերկինս , պաշտօն ոչ
,, մատուցանեմք . քանզի ուսաք , և հաստատեալ ծառայեմք
,, միւսոյն միայնոյ ձշմարտին Աստուծոյ , որ արար զերկինս և զեր-
,, կիր . և զնմա ինչ՝ որ ՚ի նմ . և նա միայն է անուանելոյդ ՚ի
,, ձէնջ ածողդ ածէ և արարիչ , թէր թէրաց և տէր տիրանց .
,, և նման միայնոյ վայելէ նմ բանաւորաց մատուցանել երկր-
,, պագութի և պաշտօն ։

Է . Ա.և ապա յոմէնէի կաթուղիկոս , և այլ եպիսկոպոսունք քա- Ա.դիկ . Է .
ղեալ զիւր միաբերաեսին՝ դրեցին ուրոյն և այնմ պինդ . զոր
և գտցես ՚ի գիրս եղիշէի . գլ . Է . երես . 26 : Ա.ւր սկիզբն առ-

նեն խօսիլ ընդ նմա այսպէս. * Յովհէփ եպիսկոպոս Հանդերձ
,, ամ միաբանելովքս՝ ի մեծամեծաց մինչև ցիոքունս, մեր-
,, նելոեհի մեծի հազարապետի արեաց և անարեաց՝ քա-
,, զում խաղաղասէր մտօք բազմասցի ողջոյն առ քեզ, և ամ
,, մեծի սպահիդ արեաց ։ Ա՛յլ յետ խոնարհական բանից,
և մաղթելոյ բարիս Թագաւորին, ասէն. Ա՛ սան նաամակին՝ զոր
առաքեալ էիք յաս մեր, չէ՛ մեզ հարկ գրել պինախ. զի յառաջ
քան զմեզ միոմն՝ ի մոգպետաց ձերոց, որ կատարելագոյն էր
՝ի դենիդ ձերում, և դուք առաւել քան զբնութիւն մարդկան
՝ի վեր համարէիք զնա, որ և հաւատաց յած կենդանին արա-
րիչ երկնի և երկրի, նա ինքն արար պինախ, և քան առ քան
ելոյծ զայն. և խնացոյց ձեզ զօրինս ձեր, թէ ոնչ ինչ են. և
իբրև ոչ կարացիք բանիւք զդեմ ունիլ նմ, քարկոծեցիք զնա
՝ի ձմկա սրմզդի արքային ։ Ա՛յժմ եթէ կամիք զմեր
բանս ևս լսել, զնորայն ընտրեցէ՛ք. զի՝ ի բազում տեղիս
այդը յաշխարհիդ ձերում գտանին գիրք նորա. և անտի տե-
ղեկասջի՛ք ։

Ա՛յլ ապա ինքեանք ևս միաւ մի պինախ տուէալ բանից Թըղ-
թոյն՝ առեն զնմին. ուր յետ բազմապատիկ փաստիւք ցուցա-
նելոյ զձշմարտութիւն քրիստոնէական հաւատոյ՝ գրեն. Ի՛սկ
զոր ասէքդ, թէ զնայրդ ձեր նախանձէ՛ զմեզ՝ զոր և
կեր ապամ, մահ արար, պարտ էր ձեզ՝ ի միտ առնուլ, թէ
ահա և պատուա մի մադաղաթ վատնեաւ քան զԹուղ, բայց
յորժամ քան Թագաւորին գրի՝ ի նմա, այնչափ յարդոյ լի-
նի, մինչև եթէ ոք պատառեսցէ զայն՝ մահու մատնէ զնա
Թագն. այսպէս է և այդ. ձեր ետ հրամանն զմեզ Թղոյն, զի
ծանուսցի՝ Թէ ձեր է. և զի մարդն պատառեաց զհրամանն,
ընկալաւ զպատիժ մահուանն, ոչ՝ ի նախանձոյէ, այլ՝ յար-
դարութէ ։ Ա՛յլ զոր ասէք, Թէ զնայրդ ձեր՝ ի կնոջէ ծնաւ,
չէր ձեզ արժան խորհիլ. զի ահա արձին և որմիզդ ձեր՝
՝ի հօրէ ծնան, և ոչ՝ ի մերէ. որում եթէ քաջ միտ դնէիք,
և ոչ դուք յանձն առնուիք ։ Ա՛յլ զրպել յաւելուն ասել. Ի՛սկ
զոր ասէք զերկուս ձեծս՝ չար և բարի՝ կատարեալ ծէ, այլ
ինն անհնարին մոլորուի է այդ. զի ոչ միոյ ծէ երկու Թա-
գաւորք ոչ լինին, նոյնպէս և ոչ միոյ արարածոյ՝ երկու ձեծ.
և եթէ լինին երկու Թագք միոյ ծէ, ծն աւերի, և Թագրու-
Թիք եղծանին ։

Ա՛յլ յետ բազում բանից յարձն. մեր հաւատոք այս են. և յայսմ
հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք, ոչ մար-
դիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ջուր, և ոչ ամ որ ինչ և են դառն
հարուածք ։ Ա՛ք ինչք և ստացուածք մեր՝ ի ձեռս քո. և
մարմինք մեր առաջի քո. ըստ կամաց քոց արա՛ ընդ մեզ զինչև

կա-

կամիս . ի քէն տանջանք , և ի մէնջ յանձնառութիւնք . սուր քոյ՝ և պարանոց մեր : Ցեմք ինչ մեք լաւ քան զառաջինան , որ յայսր վկայութէ վր եդին զինչս և զստացուածս և զմարմինս իւրեանց . զի եթէ և անմահ իսկ էաք , արժան էր մեռանիլ մեզ վն սիրոյն քո . քզի նա անմահ էր , և այնչափ սիրեաց զմեզ , մինչև զմահ յանձն էառ . զի մեք նր մահովամբն ի յաւիտենական մահոնէանէն ապրեցաք : Այլ եթէ նա չիւր անմահութիւնն ոչ խնայեաց , մեք՝ զի կամք եղաք մահկանացուք , կամք մեռցուք վն սիրոյ նորա . զի կամք յանձն առեալ զմեզ չիւր անմահութիւնն : Ցեցուք իբրև զմահկանացուս , զի ընկալցի զմեր մահ իբրև զանմահից : Այլ ի վախճանի ասեն . Ա՛յլ դու լեր այսր ասի զմեզ բանիւք այլ ի հարցաներ . զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց՝ յորմէ պատրիկիմք իբրև զաղայս , այլ՝ ընդ այս կենդանւոյ . յորմէ չէ հնար մեզ քակիլ և ի բաց ելանել , ոչ այժմ և ոչ առ յապայ , և ոչ յաւիտեանս : Ո՛այսպիսի երկուս թուղթս կնքեալ առաքեցին ի ձեռս հալարապետին միհրներսհի : Այլ ինքեանք յաղթեալ ապաւինեալ խնդրելին յայ զայցելուի փրկուէ :

Գ Լ Ո Ւ Խ Ա Յ :

Յաղագս նկելոց յաղէքսն գնահարաց հայոց . և սրբոցելոց գնա յերկրպագութէ պեգհան :

Ա՛ռնդ հասանել նամակացն հայոց առ միհրներսեհ յԱն պարսից , առեալ նր ըստ իւր զմոգպետան՝ գնաց առ արքայ յազկերտ . և արքայ հրամայեաց առնադպրին իւրում ընթեռնուլ զնամակն առաջի իւր , և առուլի մեծամեծաց իւրոց՝ որք ժողովեալ էին անդր : Այլ յորժամ լուան զբանս նամակացն , լի եղեն ամօթով ամենեքեան , որք թշնամի էին Ձհմարտուէ հաւատոյս մերոյ . և Թագաւորն գլխովին ափշեալ ափիբերան եղև . և քաղցումք անդէն յաւուցդ առեւտին սկսան հծծել ընդ միմեանս , և գոլել և յարգել զուզղուէ վշտուէնք քրիստոնէից , և զարմանալ ըստ անվեհեր պատասխանիս նոցա :

Այլ մոգպետն գառնացեալ ըստ այն՝ սկսաւ առաւել քան զինքն գառնայուցանել զԹագաւորն . և յայլ ինն խորհուրդ շղթեալ զմիտս նր՝ յորդորեաց զնա , զի կշեցեն զերեւելի նախարարս հայոց . որոց ոմանք ի հայաստան էին , և ոմանք ի պարսս . և սահեսայ գնա ի կամս իւր , և քանզի ըստ տացե երկիր-

պագանել արեգական . և ո՞վ է ասէ՝ որ ընդեմ գարձցի քեզ ։ Յայնժամ Թագաւորն լցեալ Թունաւէք բանիւ մոգպետին՝ գրեաց հրովարտակ առ նախարարս հայոց , ո՛չ օրպէս օրէն էր Թիւրայն պարսից գրել առ հայս , այլ՝ ծանր և զայրագին բանիւք . և հրամայեաց , զի փութանակի եկեսցեն առ ինքն յՅն պարսից . որոշակի յայտ արարեալ զանուանս մեծամեծ նախարարացն , զորս ինքն ձանաչէր . որք և էին սքը . վասակ սիւնի՝ մարզպան հայոց . ներշապուհ արծրունի ռշմթոսեան՝ երևելի և մեծ ՚ի նախարարս . արտակ ռշտունի . գադիշոյ խորխոռունի . վարդան մամիկոնեան սպարապետ . արտակ մոկացի . մանէճ ապահունի . վահան ամատունի . գունտ վահևունի , և շմաւոն անձաւացի ։ Յորում էին նախարարքն երևելիք՝ արք հզօրք և անուանիք ։ Այլ զայլս՝ որոց անունանք ոչ յիշեին . Թոռղ և զայնս , որք էին ՚ի դրան արքունի . որպիսի էր արշաւիր արշարունի , որ և կամսարական՝ փեսայ մեծին վարդանայ . և այլք ։ Նոյնպէս գրեաց հրովարտակ և առ նախարարս աղուանից և վրաց . և կոչեաց զնոսա սպառնալեօք ։

Գ . Ընդեալ սոցա ամի զհրովարտակ արքային , գիտացին զպատճառ կոչելոյն նր , զի ո՛չ էր այն հրաւէր խաղաղութեանն , այլ՝ խռովութեանն և կորստեան ոգւոց . որոյ վճռ տխրեալ Թախծէին . և յոյժ օգնականութիւն ևեթ ապաւինեալ էին ։ Եւ ապա պատգամաւորութիւնս առաքեալ առ միմեանս՝ ուխտ դնէին ՚ի ձեռն սրբոյն յովսեփայ կաթուղիկոսին՝ անսասան մնալ ՚ի հաւատս ։ Եւ յետոյ խորհուրդ արարեալ հաստատեցին ՚ի միտս՝ գնալ առ Թագաւորն , ո՛չ առ երկիւղի սպառնալեացն , զի յայնժամ երկիւղ մարդոյ արհամարհեալ էր առաջի նոցա , այլ՝ առ հնարս գտանելոյ խաղաղութեան ծին , և ազատելոյ զայլ նահատարս և զզօրս և զժողովուրդս հայոց՝ որք էին ՚ի դառն գերութեան յՅն պարսից , և ունանք ՚ի կողմանս հռնաց ։

Երեսուն ապա սոցա յՅն իւրեանց՝ գնացին ՚ի պարսս սակաւաձեռն գնդաւ . ընդ որս էր և մեծ քրեշին կիւր Թագաւորն վրաց վազդէն՝ միւս փեսայ վարդանայ . և քրեշին գունգարացւոց աշուշայ , որ և կոչիւր քրեշին վրաց . և արքայն աղուանից վաչէ որդի արսվաղենայ ։ Եւ իբրև հասին սոքա ՚ի դուռն արքունի , ընկալեալ եղեն արհամարհանօք , և ոչ պատուոյ ոչ օրէն էր . վճռ զի յառաջն աւուրսն էր , զի յորժամ զօրագլուխ կամ նախարար ոք ՚ի հայոց գնայր առ Թիւրն պարսից հանդերձ գնդաւ , յղեր Թագաւորն երից ընդ առաջ նոցա զմի ոմն ՚ի պատուաւոր անձանց՝ հարցանել զողջունեն նոցա , և զխաղաղութեն ծին . և ՚ի յանդիման լինել նր առաջի Թագաւորին , գովութիւնս մատուցաներ նմա և ծին նր նա ինքն

Թագաւորն . և յիշելով վկաստակս նախնեացն՝ չնորհակալ լինել : Ասէ՝ ի գալ այսոցիկ նախաւերայ՝ ոչինչ այսպիսի եցոյց նոցա . և ոչ իսկ թոյլ ետ՝ ի սկզբան անդր երևիլ առաջի նոցա : Եւ ապա՝ ի նմանութեան աւուր զատկի յարուցեալ նորա , այն է օր աւագշաբաթու , իբրև յանդիման եղեն նմա՝ և ետուն ողջոյն յարգանաց ըստ սովորութեան , փոխանակ ընդունելոյ նորա զողջոյն նոցա՝ սկսաւ վիշապաձայն որոտալ , և մռնչելով խօսիլ ընդ նոսա : Եւ նախ հարցեալ զնախարարս հայոց՝ ասէ ցնոսա . կամիմ լսել՝ ի ձէնջ , թէ զինչ համարեալ եմ ես ձեզ . և կամ դուք որպես կարծէք զձեր անձինս լինել : Եւ նոցա պատասխանի արարեալ՝ ասեն . այդ ձեր հրամանն առանց պէսպէս լսելոյ՝ ի մէնջ՝ յայտնի է ամ արեաց և անարեաց : Վրկնեալ արքայն՝ ասէ . ես՝ ի ձէնջ կամիմ լսել . և զձեր ձանաչողութիւդ կամիմ գիտել , եթէ զինչ համարիք զիս . զոր կարծէքդ , առացէք ցիս : Եւ նոքա ասեն . մեք զձեզ Թագաւոր գիտեմք ամենեցուն , առաւել ևս մեր , որ և ունիք իշխանութիւն սպանանել և կեցուցանել :

Ասէ ցնոսա Թագաւորն . այդ պատասխանիք ձեր՝ շատ հեռի են՝ ի նմանակէն , զոր ետուք քերել առ իս , և աննման ամենևին . վասն զի՝ ի նմանակէն յայտ արարեալ էր ձեր , թէ է ինչ՝ յորում պարտական եմք հնազանդիլ քեզ և չընդդիմանալ . և է ինչ՝ զոր ոչ քեզ պարտ է ասել , և ոչ մեզ հնազանդիլ և յանձն առնուլ : Եւ դարձ՝ ի մեր Թիւրուէն առաջին և կարևոր խնդիրքն քան զայդ այդ է , զի ընկալջիք զօրէնս մեր . և ահա այդու ձանաչի մեր առ ձեզ տիրուի , և ձեր առ մեզ արդար ծառայութիւն : Եւ արդ՝ եթէ զայդ իմ ղկամս , զոր վճ ձեր հոգւոյ փրկուէ հոգւացաք , յանձն առնուցուք , մեծամեծ փառօք արձակիք՝ ի մէնջ ցձեր . ապա թէ այլազգագոյն ինչ խորհիք , և արգարև յոր միաս և յոր մոլար օրէնս ցայժմ կացեալ է ձեր , ի նմին յամառեալ դնիք , կնաւ և որդւով և ապգաւ կորուսիք զձեզ :

Յայնժամ յառաջ մատուցեալ քաջին վարդանայ սպասպետին՝ սկսաւ զոճարիթ դիմօք և համեստ բանիւք խօսիլ ընդ արքայի , և ասէ . քաղցում են աստ քան զիս աւազագոյնք դահու և աւուրբք , և են որ կրտսերագոյնք են . և ամենեցուն մեր ծառայուի և վաստակ յայտ է առաջի ձեր . զոր ոչ ինչ պիտոյ է ինձ կիմ ուսեք՝ ի սոցանէ յայտ առնել վերստին . և այլ ևս պատրաստ եմք յամի ծառայել քեզ . և եթէ գոյր ինձ հնար , զմի անձն իմ՝ բազում առնէի , և զամ ինչ զիս՝ զոյժ և զզօրուն ձեր առնելով՝ առաւել քան զամենեսին վասատակեի : Այլ զոր այժմ խնդրէք , ոչ ծառայութիւն է , այլ ապստամբուի յայ կենդանւոյ , և ողորմելի թշուառութիւն .

զոր չէ լինձ հնար յանձն առնուլ, և ոչ իսկ ձեզ օրէն է զայդ պահանջել։ Եթե զծառայութիւնս իմ խնդրէք, աւասիկ եմ. ապա թե զհաւատն իմ խախտել կամիք, այդ անհնարին է. զի զոր ընկալայ յայ՛ի մանկուէ, զնարդ կարելի է ինձ թողուլ, և կամ յերկիւղէ մարդկան ուրանալ. զի թէև՛ի մոր դոյ առեալ էի զայն, և գիտեալ թէ ձշմարիտ է՝ ուրանայի, ողորմելի զանձն իմ համարեի. քանի՞ և՝ զոր յայ ընկալայ, և՛ի բերանոյ նր ուսայ, վաճառել վն մնոտի փառաց. քան լինի ինձ զայդ առնել։ Եմ պատասխանի այդ է. յորում ցանկամ մեռանիլ, քան թէ ուրանալ և կեալ առանց այ։ Եակ դոքա ամենեքեան, որ կանդ աւադիկ առաջի ձեր, բաւական են տալ վ՛ս անձանց պ՛նի։

Այսժամ և նք աներկիւղաբ՛ յ՛ջ մատուցեալ՝ խօսեցան ընդ արքայի, և ասեն. Եմդրեմք՛ի քէն արքայ քաջ, ունկն դիր սակաւիկ մի քանից մերոց, և լսեր քաղցրութ՛ք՝ զոր ասելոց եմք. Եիշեալ՛ր արքայ զձմկ շապհոյ երկրորդի՝ արքայից արքայի նախնւոյն քո, որ էր հայր հառոյ քոյ յաղկերտի. որում ետ ձե երկիրն հայոց. և ծառայեցին նմա հարք մեր քրիստոնէութ՛ն օրինաք. և կային՛ի խաղաղութ՛ն. և բազմ անգամ մեծարեալ լինէին՛ի նմանէ։ Եւ յայնց ժամայ հետէ մինչև՛ի Թէոդոսի քո՝ նուիրն ծառայութ՛ն ծառայեցաք քեզ և ամբ. և զուցկ Թէ մեք առաւել ևս քեզ՝ քան Թէ հարք մեր հարց քոց։ Եւ յասելն զայս՝ յառաջ բերեալ նախարարաց զիւրաքանչիւր գործս ծառայուե իւրեանց՝ յայտնի յուցին նմա. նմանապէս և զառաւելուե հարկացն, զոր ետուն նմա՝ քան զոր տուեալ էին հարք իւրեանց։ Եւ յաւելին ևս ասել. զու արքայ նաև՛ի վ՛ր եկեղեցեաց մերոց եդիր հարկս. զոր ոչ աք ետ՛ի հարց մերոց. բայց մեք ոչինչ ընդդիմացեալ հրամանի քում՝ զայն ևս առաք. և զամ՝ զոր միանգամ կամեցար, կատարեցաք։ Եւ արդ՝ վ՛ս ի՞ր յուզեալ էիցէ այժմ ցառաջինս այս՛ի վ՛ր մեզ. զի՞նչ յանցանս գտեր՛ի մեզ. միթե քրիստոնէական օրինաք մեր միասս ինչ հասուցին Թ՛գրուե քում, և եղէն իմ՛ք պատճառ ոչ ծառայելոյ քեզ. ոչ ապաքէն՝ ի հրամանէ օրինացդ մերոց կամք քեզ՛ի ծառայուե։

Ձ. Եակ արքայն զերեսս իւր դարձուցեալ՝ ի միւս կողմն՝ ասէ ցնոսա. ես միասս համարիմ ընդունիլ՛ի գանձս իմ զհարկ աշխարհին ձերոյ, զի են ինչք քրիստոնէի. և անօգուտ վարկանիմ զդործս ծառայութ՛ն ձերոյ, զի ոչ գործէին ամբ մերովք. վ՛ս զի դուք ոչ միտաբար մոլորեալ՝ անարգեք զնոսա, և զկրակ ապանանէք. և զմեռեալս՛ի հող թաղեալ՝ զերկիր ապականէք։ Եւդ՝ յանցանք մեծ է ինձ առանց ուղղելոյ զձեզ՝ ընդունիլ զհարկ և զծառայուե՛ձեր. զի գու-

ցկ ՚ի ձեզ քարկոծեալ ՚ի վէր մեր վա՛ ձեր՝ վրէժս առնուցուն ՚ի մէնջ ։ Ա. ՚ի արդ՝ եթէ կամիք ապրիլ ՚ի ձեռաց իմոց , և մեծարանաւք յուղարկիլ զձեր , և կալ յիշխանուքե , վաղիւ ՚ի ծագել արեգականն՝ որ միայն է ՚ի ձէ աքանչելի , վաղվաղակի երկիր ըսպաղէք նմա . ապա թէ ոչ՝ զնա դառն տանջանս կուտեցից ՚ի վէր ձեր . մինչև ականայ կամաք հաւանեսջիք կատարել զհրաման իմ ։

Յայնժամ ձայն բարձեալ նախարարացն միաբերան՝ ասեն ցնա յանդիման մեծամեծացն պարսից , որք էին անդ . Ա՛ի և առեր մեզ զայդ բան ահրեայ . զի ոչինչ բան կարէ յաղթել հաւատոյս մերոյ և եկեղեցւոյ . վա՛ զի ոչ է եկեղեցի շինուած մարդկան՝ կամ տուրք արեգականն , այլ՝ հաստատուն ձեռամբ տուէ հիմնեալ զօրութեն նոյ ՚ի վէր անշարժ վիմի . ոչինչ յերկրաւորացս կարէ շարժել զնա , և ոչինչ յերկնաւորաց դրդուել ցուցանել ։ Ա. ՚ի արդ՝ եթէ ոչ երկիր և ոչ երկինք կարեն դրդեցուցանել զնա , ապա մի՛ ոք իբրև զքեզ խրոխտասցի յաղթել նմա ։ Ապա՝ զինչ և կամիս , արա՛ . պատրաստ եմք առնել , և ասա՛ ՚ի մահ ։

Է . Ա՛նդ այս՝ առաւել դառնացեալ Թէրին՝ ահագին սաստկութեբ ընդառնացաւ նմա , երիցս և չորիցս երդումն տուեալ յարեգական . եթէ ասէ արդարև ոչ զինջանիք ՚ի կամս իմ , զամենեսեան զձեզ , և զայլ քրիստոնեայս ըն ձեզ , որք են ըն զօրս իմ , կասկէ՛ ՚ի չղթայս իբրև զանարգ գերիս առաքեմ ՚ի սադաստան ըն առաստարս . մինչև նախ զհասանելդ՝ քշմիք ՚ի ձէնջ մեռցին ՚ի խորշակէ և ՚ի տարժանմանց ձանապարհի . և որք ողջ հասանիցեն , յանել բանտս արդելցին ։ Ա՛յսպէս և յձ ձեր առաքեմ զօր բազում՝ հանդերձ բազմութբ փղաց . և զնմ ընտանիս ձեր և զորդիս ՚ի խուժասատան տամ խաղացուցանել . և քանդեմ զեկեղեցիս ձեր և զվկայարանս , և զնմ ձն յաւերդարձուցանեմ . և թէ ոք դիմակալ դացի , ըն ոտիւք գազանաց անողորմ մեռցի . և զնացեալսն ականայ կամաք ձդեցից ՚ի դէնս մազդեզանց ։

Ո՛այս ասացեալ՝ հրամայեաց մեծաւ անարդութբ հանել զնա յերեսաց իւրոց . և պատուէր ետ դահձապետին պահել զնա՝ ընդ որս և զայլ նախարարս , որք յառաջն իսկ էին ՚ի դրան արքունի ։ Իսկ նախարարացն տեսեալ զինքեանս յանհնարին աղետս տարակուսի , և զսիրելիս իւրեանց ՚ի մեծի նեղութբ , և զնն ՚ի վտանգի կորստեան , ոչ գիտէին՝ թէ զինչ արասցեն . զի և ոչ իսկ գոյր ժամանակ հնարս գտանելոյ . նաև ոչ աւելի և պարապ փախչելոյ . մանաւանդ զի օրն էս խոնարհեալ էր ՚ի մուտս . սակն իրի մեզ անփարատելի պաշարեալ զնոսա . և կային յանբերելի տխրութբ . Ջանասցան հնարս խնդ-

թել · քաղցր ինչ ևս խոստացան իշխանաց պարսից , քայլ ոչ ինչ շահեցան ։

Ա.մ 450 Ա.մ 4

Այլ երբև առաւօտ եղև , հրամայեաց Թէոդոս գնալ զնա · և վերստին յորդորեաց զնա ողջանալ և սատկուլ պատրաստել յերկրպագուն արեգական ։ Այլ նոքա մատուցեալ ասեն · մեզ չէ օրէն թողուլ զաստուածն արեգական , և պաշտել զաստղեգակն · վասն մի ընդունայն հրամայեր մեզ զայդպիսի յիմարութեան գործ ։ Յայնժամ հրամայեաց Թէոդոս դնել զնա ի դիպահոլ , և քաղցեալ տառապանօք պահել անդէն · և զգուշանալ զի մի ոք զերծցի · և ետ պատուէր պատրաստել գունդ մի զօրաց , զի հարցէսցէ վշտօք վարեալսն զնա ի սագաստան յանդարձ օտարուն ։

Գ Լ Ո Ւ Խ · Զ ։

Յաղագս պարսից հաճելոյ նահատակացն Քրիստոսի յիշատակի ։

ԱՅ . առաւօտ նախատարագն և իշխանք հայոց ոչք առնարգուէք փակեալ կային ի տան միում իբրև ի բանտի , պաշարեալ յահագին հուպ տարակուսանաց տառապէին · և ոչ կարէին գտանել հնարս առաջնկայ փորձանաց ։ Այլ ներքինին ոմն ի խոշհրդակնաց արքայի՝ որ և էր ի ծածուկ քրիստոնեայ , եկն առ նոսա զանխտուլ ի գիշերի երկրորդումն , և խրատ ետ ոմանց ի նոցանէ , և ասէ · ոչ գիտեք զի ի կորնչիլ ձեր՝ և աչխարհ ձեր ըստ ձեզ կորնչի · և ամ ազգդ դառնան յօրէնս պարսից · և քառնի խաչատ քրիստոնէութեան յձեռ ձերումն ։ Այլ արդ՝ խորհուրդ մի տամ ձեզ · միաբանեալ ձեր այժմ՝ կատարեցէք արտաքուստ զկամս Թէոդոսի՝ երկիր պագանելով արեգական , և զմիտս ձեր ուղղեցէք առ քս · և այսու ապրեցուցեալ զանձինս՝ ապրեցուցանէք և զձեր · ասէ Թէ ոչ՝ վտանգ մեծ առաջի կայ ի վեր ազգիդ · զի ի տարապրիլ ձերում՝ տարապրի և ազգ ձեր յօրինաց քրիստոնէութեան , և մատնի ի պղծուն հեթանոսուէ ։

Այս խորհուրդ Թէպետև դառն էր , քայց ոմանց ի նախատարացն հաճոյ Թուեցաւ · որոյ վասն ազատարեալ առաքեցին բանս առ Թէոդոս՝ ծածուկ ի վարդանայ · և խնդրեցին ի նմանէ ժամ տալ ինքեանց խորհելոյ վասն այսր · զի ոչ փոքր ինչ է ասեն իրգիդ , յոր քառնագատեալս եմք · և ոչ իսկ մնրթէ ի սակաւ ժամուս զգործ մեծ այդպիսի փոյթ կատարել ։ Այնդ այս խնդիր նոյ հաճեալ Թագաւորին և աւագանւոյն՝

Ա.մխ պն
450

թոյլ ետուն նմ աւուրս ինչ՝ խորհիլ, զոր կամիցին առնել։ Յայնժամ՝ ի մի վայր ժողովեալ նախարարաց գաղտ՝ ի վարդանայ՝ խորհէին և ասէին. զինչ պարտ է մեզ առնել, և զերս իրացդ գտանել։ Նա յետ քնջմ բանս՝ ի մէջ արկանելոյ՝ պատշաճ՝ թուեցաւ նմ հաւանիլ խորհրդոյ ներքինւոյն. ոչինչ այլ գոյ ասեն մեզ հնար զերծանելոյ յորոգայթէ յայսմանէ, յոր ձգեալ պաշարեաց զմեզ սատանայ, քայց եթէ առժամ մի յանձն առցուք պատճառանօք զհրամայեալսն. և երթեալ յիւրաքանչիւր ՚ն մեր՝ ծառայեսցուք ձկմարիտ հաւատոյս մերոյ, յոր ծնաք աւազանին նորոգութէ. և եթէ այս ոչ յաջողեսցի յաչխարհի մերում, թողեալ զ՚ն մեր՝ փախստեայ դնասցուք իւրաքանչիւր յօտարութէն հանդերձ ընտանեօք մերովք, և յօտար ՚ի պաշտեսցուք համարձակ զքն ՚ն մեր. և եթէ այս ևս անհնարին լիցի, ժողովեալ ամ ազգքս ՚ի մի մարտիւ վանեսցուք զքրիստոնեայս հաւատոյ մերոյ։ Այսպս եթէ զանձանց փրկութէն ևեթ կամեալք ընդմանամք անօրէնն հրամանացս, թէպետև մեք շահիմք զոգիս մեր մարտիրոսութէ. քայց անթիւ բազմութէ մարդկան՝ առանց և կանանց, ծերոց և տղայոց՝ լինիմք պատճառ յաւիտենական կորստեան. զի ածեալ զնս այսր, և կիս դիմեալ՝ ի վէր նմ՝ զաւնին դարձուցանեն ՚ի ծնկութէն պաշտամանն սուտ օրինաց իւրեանց. և ամ ազգք մեր կործանեսցին ՚ի հետոյ. և ՚ն մեր մերկասցի ՚ի քրիստոնէութէ։

Այս թէպետ և այսպէս հաստատեցին ՚ի մէջ իւրեանց, քայց ոչ համարձակէին յայտնել սպարապետին վարդանայ. զի ձանաչէին զհաստատութէն մտաց նմ ՚ի հաւատս։ Նա սակայն չյայտնել ևս ոչ կարէին. քանզի գիտէին, թէ առանց նորա ամ խորհուրդք իւրեանց ՚ի դերև ելանէին. զի թէև մարթ էր նմ խաբեալ զթագրն՝ զերծանել, քայց յոչ լինել վարդանայ ձեռնտու՝ յայլ մեծ թշուառութի անկանէին։ Այսպս յետ բազում լինչ խորհելոյ՝ ժողովեցան միաբան առ վարդան. և յայտնեցին նմ զամ՝ զոր խորհեալն էին. և թախանձելով ստիպէին զնա միաբանիլ ընդ ինքեանս. Այեաց ասեն յատաջիկայդ փոանգ մեծ, յոր հանդերձեալ են կորնչիլ այնչափ բազմութէն հաւատացելոց. և այն ոչ այժմ միայն, այլ մինչև ՚ի կատարած։ Նա արդ՝ եթէ քո ՚ի գութ բերել՝ առ վայր մի միաբանեսցիս ընդ մեզ, լիցիս պատճառ հաստատուն եկեղեցւոյ. և եթէ փոքր մի կարասցես հիւծանդանալ ընդ մեզ, ողջասցուցէ զմեզ քև հանդերձ ամենաբժիշկն յն։ Այսոսիկ լուեալ մեծին վարդանայ՝ քացե ՚ի քաց հրաժարեցաւ ՚ի խորհրդոց նմ, և ասէ. մի լիցի ինձ ստել արարչին իմում, և մոռանալ զբան նմ՝ զոր առաց, որ սիրէ զկին կամ

զորդիս առաւել քան զիս , չէ՛ լինէ արժանի . և արդ՝ մի՛ և ա-
ասէք լինէ զայն լինչ , զոր չէ՛ լինէ արժան լսել , Թէոդ Ը՛ ար-
դեամբք կառարել ։ Ցլսելեացն յոյժ էր այս նախատրտնք , և
խռովեաւ լային , զի զբանս վարդանայ իրաւացի համարէին .
բայց զելս իրացն գտանել տկարանային ։ Ա՛պա վերատէն՝ ի
նոյն առաջին խորհուրդ գառնային՝ ըն յորդորելոյն աշուշայ
զդեշխին գուգարաց և վրաց . և զի՛ ի մէջ նախաբերացն սիրելի
էր վարդանայ առաւել քան զայլս արտաք եշխանն մեհկայ՝ այր
համարատ , զնա սկսան յորդորել . զոր և ՚ամ առնելով փութա-
դույանէին՝ հաւանեցուցանել ըստ միտս իւրեանց զվարդան
խանդաղատական բանիւք ։
Ա՛յլոյ անսալ վարդանայ և բանից նր , զդեշխին վրաց աշու-
շայ , որոյ կին էր քոյր կնոջ համայեկայ եղբօր վարդանայ ,
վերատին հանդերձ բազմութեբ նախարարացն՝ սկսաւ թա-
խանձել զնա , առաջի եգեալ նմ պատճառանօք և այլևայլ
մտօք զբազում բանս սր գրոց . և զայն էա՝ զոր ասէր պօղոս ,
եթէ ուխտիւք խնդրեի ես ինքն նզով լինել ես փրկուե եղբարց
իմոց և ազգականաց ըստ մարմնոյ . և ասեն ամբիծն . մա՛ և դու
յանձն՝ նզովս լինել վս փրկուե հոգւոց բազմադակ ՚ծիս հայ-
ոց և վրաց և աղաչանիս . և մեք զոր և հրամայես մեզ առ-
նել վս փրկութե ՚նց , արասցուք անյապաղ՝ հեղլով և զա-
րիւն մեր ի պաշտպանութե՛ն հաւատոյ . միայն առ անդամ
մի զերծցուք ի վտանգէս ։ Ա՛ւ զայս բան հաստատեցին միա-
բան երդուեալ և եդեալ զձեռս յաւետարանն՝ քսի . և եթէ
ոք ասէն ստեցե այսմ երդմանն , որոշեալ ՚ձեղքեցի նա յար-
քայութե՛նն ՚ոյ . և զամենայն ՚ինսա հոգւոց ՚ծ ի ՚ձեռաց նր
խնդրեացե ։
Ե՛ս Ա՛ ուեալ վարդանայ զայս ՚ամ , և տեսեալ զահագին
երդմունն՝ ՚նց , հարաւ յաթոռսուս , և յանձն եառ միաբանիլ
ընդ նմս ։ Ա՛ւ ապա ամբիծն միաբերան ազօթս և պաղատանս
մատուցեալ առ ՚ծ , խոստովան եղեն նմա դառնագին ար-
տասուօք զայն վիրաբանց գործ . զոր և ոչ բարի տեսանելով՝
վս քարոզ կամէին կատարել ։
Ա՛ւ մինչդեռ նք յայսպիսի սրտաստոյգ աղօթս կային , գու-
կան հասանէր առ Թէոդն , եթէ գունդ մեծ ի հնոյց անցեալ
ըստ Թուրքաստանաւ ընդ անհուն ձանապրհ հիւսիսակողմն
կասպից ծովու՝ դիմել են ի խորասան յ՚ն ՚ոլորտէ պարսից , և
յաւարի առնուն զաշխարհն ։ Ա՛յլև զայս լուեալ Թէոդն , պատ-
րաստեցաւ գնալ ընդ ՚եմ նց . և փութացոյց յառաջ քան զե-
լանել իւր՝ վերատին ստիպել զնախարարսն ի կատն իւր . և
եթէ ոչ առնուցուն յանձն , ի նմին աւուր վարեսցեն զնս կա-
պանաւք ի սաղաստան ։

Յորժամ ազգ եղև այս նախահայրապետն, զիպաղ առնէր հա-
մարեալ նոցա՝ զոր խորհեալն էին՝ ի գործ դնել, յորմէհին
պատգամ առ Թագաւորն, եթէ յանձն առեալ են կատարել
զկամն նորա։ Ո այս լուեալ Թագաւորին՝ զոհարձայաւ ի միտս
եառ. և նոքա եկեալ առաջի նորա ի մեհեարանն, մատուցին ընդ
նմա արտաքուստ երկրպագութեամբ հրոյ և արեգական. այլ որք
հաստատուն էին ի հաւատս, պատճառանօք իմն ևեթ կո-
րացուցեալ զանձինս՝ չուցանէին երկիրպագանել. իսկ որք
ոչ ձեռնարտութիւն ունէին զբրիստոնէութենէն, ոմանք էր վասակ
սիւնի, և գադիշոյ խորխոռունի, հանդարձակ միտին զանձինս
երկրպագութեամբ և ի զոհ ըստ օրէնս մատուցանել։ Եւ յետ կա-
տարման գործոյն՝ ամենք գոհութեամբ առատ և շնորհակալու-
թեամբ մատուցանէին Թագաւորին, ասելով. Ձեր նախնիքն
սիրէին զմեզ՝ հոգալով զմեր օգուտ մարմնաւոր. բայց դուք
առաւել ցուցիք զսէր ձեր առ մեզ, զի զմեռս ածիք ծանու-
ցանել մեզ զյաւիտենական օգուտ հոգւոց մերոց. և արդ՝ ե-
թէ նոցա ծառայեցաք յիմի յօժարութեամբ, ապա առաւել
և ես ձեզ։

Ե. Եւ ի տեսիլ նախահարապետ զվարդան, զի և ինքն խո-
հեալ զանխափան բանս յառնելի անդ, սկսաւ և նա այլընդայ-
լոյ բանիւք շնորհս մատուցանել արքային և աւագանեցին
պարսից՝ խոստանալով մեծ ինչ գործել, ըստ գրելոյ փարպեց-
ւոյն։ * Ո իմոց ընտիրներայն ասէ զհպատակութեամբ և զվաս-
,, տակ, զոր յայս գործս և առ ձեր թիկունսդ արարեալ
,, է, ի ժամանակի՝ յորմէհետէ կարգեալ եմք ի ձեր ծա-
,, ռայութիւնդ, զօրք ամէն քաջագոյն գիտէք. և ինձ սէ է
,, պիտոյ յաղագս այդպիսի իրաց՝ միլիմիոջէ տեղեկացու-
,, նել զձեզ, զոր ստուգագոյն առաւել ձանաչէք քան զիս։
,, Այս թէպետ և շատ նուազ եմ քան զիմ նախնիսն, սակայն
,, օրշափ կարն էր յիս՝ եղեալ էր ի մոխ արդար վաստակօք
,, հաճել զիմոս ձեր. և ուր հառեալ էի ի գործ ի ձեր հրա-
,, մանն, տեսեալ էր զօրապետացդ ձերոց և իմ ընկերացդ՝ ըստ
,, իմ ուժոյ միամտութեան զիմ զգործն և զվաստակն։ Այլ
,, արդ՝ յայսմ հետէ այսպէս կամք են, ջանամ, զի թէ ցայժմ
,, գործեալ ինչ էցէ (իմ), և ոչ արժանի անուանն կամ գո-
,, վութեն, յայսմ հետէ հնարիմ ամ զօրութեամբ և ուժով օգ-
,, նականութեանն այլ գործել գործ այնպիսի, զոր ոչ միայն
,, առաջի ձեր արեսց, այլև ի կայսեր գրանն, և յայլ աշգա-
,, պատմեցին համբաւն այն մինչև ցյաւիտեան ։

Եւ յետ սմա ասէ զաշտոր փարպեցին, թէ * Ո այս բան ոչ
,, ի հնարէ այլ սպարապետին հայոց առացեալ ձեն մամիկո-
,, նեից, զոր հաշակեալ էր զնահատակութենն՝ որ առ այժ ի

Ա.մ Ա.մ
450 45

,, դարս յաւիտենից ։ Այլ զայսպիսի ասացմունս լուեալ Թա-
,, գաւորին պարսից և ամ աւագանւոյ դրանն՝ մեծաւ ընդհա-
,, կաւլութիւ զարմացեալք , գովեցին զնա և գոհացան . քան-
,, զի ծածկեաց ոճծ զբան խոստմանցն , զոր ասաց գործել
,, սպարապետան Հայոց վարդան՝ յաղագս մեծի անուանն Համ-
,, բաւոյ , զոր պարգևեաց նմա ծածկ՝ զանուն նահատակութե
,, յաղագս յաւիտենից ։

Այս այսու բանիւ և գործով խաբել Թագաւորին՝ ետ աւիշն նմա զառատ պարգևս . և զամենին նորոգ հաստատեաց յիշխանութիւնն իւրեանց . ըստ նոսին արձակեաց ի խնդրոյ նմա և զպարթեղին սրոճանձտեան՝ զոր եդեալ էր ի բանտի . և վերստին կացոյց զվասակ զիշխանն սիւնեաց ի մարզպանութե Հայոց . և զքաջն վարդան ի սպարապետութե . և ետ քեզմ զօրս պարսից ի ձեռս նմա Հանդերձ զօրավարօք յօգնականութե նոցին . և կարգեաց առ ըստ նմն զեօթն Հարիւր մոգս և զքուրմն . և ի վէր նմա եդ մոգպետ ոմն . և յորդորեաց զնա փութալ գնալ յաշն Հայոց , և զամենեսեան դարձուցանել ի կրօնս պարսից . և զեկեղեցիան կործել ի մեհեանս , և զքահանայսն կացուցանել մոգս և քուրմն ։

Այլ զերկու որդիսն վասակայ զբաբիկ և զամիրներսէհ պահեաց առ իւր ի դրան իւր ի պատանդի ։ Այնպէս ապրեալ անդէն յաշին պարսից զարքայն վրաց զվաղգէն , և զբդեշխն գուգարացւոց զիշուշայ , և զարքայն աղուանից զվաչէ . զի նախ յաշն Հայոց ևեթ կամեցաւ ձեռն արկանել , և յետ այնորիկ յերկիրն վրաց և աղուանից և այլոց ազգաց ։ Օ այս այսպէս կարգեալ Թագաւորին՝ առաքեաց յաշ ամ աւետաւորս վն այսր . և ինքն խաղաց ի վէր գնդին Հոնաց ։

Ա.ղիւէ · Գ· Ե . Երբև լուան զգործ ուրացութե նախարարացն Հայոց քրիստոնեայք , որք էին յաշին պարսից և յայլ տեղիս , և կային ի նեղութե մեծի , զարհուրեցան յոյժ . զի ոչ գիտէին ըզխորհուրդս նոյ . և մտին ի սուգ դառնութե ։ Այս ոմանք ի նոյնէ եկեալ առ նախարարան՝ լային առաջի նոյ , և քեզմ բանս մեղադրութե խօսէին առ նա . մանաւանդ՝ որք յաղգէ աղուանից և ի վրաց էին և յաստրուց ։ Օ ինչ գործ գործեցիք առեն . զնարդ առ ոտն Հարիք զուխտ քրիստոնէութե . ապա * զի առնիցէք զբոլ կտակարանդ . և յո առնիցէք զսպաս տիրունեան սեղանոյն ... զինչ առնիցէք զպատուիրեալսն ի ձեռնէ . որ ուրացայք զիս առաջի մարդկան , յուրացաք եզեց և ես զնմանէ առաջի հօր իմոյ յերկինս և հրեշտակաց սրբոց ։ Ա արդապետք էիք առաքելական քարոզութեն . արդ՝ աչակերտք լինիցիք մոլար խաբէութեն ... ի հուր և ի հոգի էիք մկրտեալ , արդ ի մոխիր և յաձիւն Թաւալի-

„ ցիք . . . Տաճար էիք հոգւոյն սըբ . արդ զոհարան դիւ-
„ ւնիցիք . . . Ուրեք՝ ի վաղնջուց իսկ էին կուռացեալք . ըզ-
„ հետ կուռացն և դուք կուռացայք . . . Ըրբ ուսանիցիք ըզ-
„ քաղաքավարութիւն անուանեան ածոց նոցա , այն՝ որ չիք ուրեք ի մի-
„ ջի և ոչ մի . . . Եթե գիտեիք դուք՝ և երևեր ձեզ յայտնի ,
„ զի սուգ առին երկինք ի վրայ ձեր , և թախծեցաւ երկիր
„ ի ներքոյ ոտից ձերոց . . . Եթե մարդոյ փրկեալ էր ըզ-
„ ձեզ ի ծառայութենէ , և դուք անձամբ զանձինս այլում ի
„ ծառայութիւն արկանիցիք , ի մեծ բարկութենէ բրդեիք զառա-
„ ջին ձեր . իսկ արդ՝ զի՞նչ առնիցէք զնոճասատան հրա-
„ մանն . . . Ուրք էիք մեր ամուր ապաստանի . յորժամ աս-
„ ու (ի բռնութենէ պարսից) վտանգ հասանէր մեզ , առ ձեզ
„ յանդորր ելանէաք . արդ մեծ ամուրդ այդ հինն ի վեր
„ տապալեցաւ : Ուրք էիք մեզ պարծանք առ թշնամիան
„ ձեմարտութենէ . արդ դուք եղէք մեզ նախատինք առ նոյն
„ թշնամիան : Յայժմ վն ձերոյ ձեմարիտ հաւատոյն՝ և ի
„ մեզ փոքր ի շատէ խնայեիմն . արդ ի պատճառս ձեր և ըզ-
„ մեզ անողորմ դատին : Ալ միայն զանձանց դատաստանն
„ տալոց էք առաջի ահեղատենին նոյ , այլև զբազմաց ամե-
„ նեցուն՝ որ ի ձեր պատճառս զնոն ևս չարչարեցան ‖ :

Օ այսպիսի բանս լուեալ ի նոցանէ նախարարացն Հայոց՝ առաւ սկսին յանհնարինս ի միտս իւրեանց . զի ոչ կարէին յայտնել՝ զոր խորհեալ էին առնել . և ոչ ժուժկալին լռել՝ զոր կամէին կատարել . որոյ վն ի նեղութենէ արտիւն հեղձամղձուկ լինէին . և յանձկուէ ոգւոյն արտասուօք զերեսս իւրեանց թանային :

Ղազար քահանայքն՝ որք էին ի տիսբոն , ձայնապարեալ փութա-պէս առաքեցին զմի ումն յոցն հայոց՝ ծանուցանել եպիսկոպոսին դուռն նախարարացն : Ասեալ նմին յայրարատ , և գտեալ անդ զեպատոնս , զի դեռևս չէին մեկնեալ անտի , պատմեաց նոցա զամենայն զոր ետես , և զոր լուաւ : Օ այս բոլոր խրովս լուեալ եպիսկոպոսին՝ զոր ասէ՝

թէ իւրեանց յՅերն հայոց , յորդորեալ զինեցին հաւատովքն քով . և ըստ հաստատելոյ խորհրդեան իւրեանց՝ վառէլ պատրաստեցին զնա ընդդէմ ուրացելոցն և մոգուց , առհասարակ զարս և զկանայս , զղջնականս և զազատս , զքահանայս և զկրօնաւորս ։

Գ Լ Ո Ւ Խ · Լ ։

Քաղաքս Գաղոյ մոգուն հանդերձ նախարարօք ՚ի հայս , և վանելոյ նոցա ՚ի բնակչէն աշխարհին յորդորանօք պղոնդեայ . և վանդելոյ ոմանց ՚ի մոլորութենէն վաճառի ։

ԱՅ. Եւ եղև ՚ի խաղալ յազկերտի ՚ի մէջ առաքատակութեան հոնաց , ելին և քաղմութիւնք նախարարացն հայոց յՅէն պարսից ՚ի միասին ընդ մոգուց և ընդ մոգպետին . որոց և թագաւորն յազկերտ ինքնին ՚ի սկզբան անդուղեկից եղև առ փոքր մի ՚ի խնդութենէ սրտին . և եդեալ զնա յուզի՝ յորդորեր , զի մինչև ՚ի գառնալ իմում ասէ ՚ի պատերազմէ՝ լիապէս կատարեալ լիցէ ձեր զնամ զհրամանս իմ դարձուցանելով զՅն հայոց համօրէն յօրէնս մոգութենէ . և ինքն մեկնեալ ՚ի նոցէ գնաց . Ա՚պա և բանակն մոգուց և նախարարաց խաղաց անտի ՚ի հայս . և ՚ի գալ զՅնանապարհայն՝ երամակք մոգուն վիճակս արկանէին , որ գաւառ որում հասանիցէ՝ աշակերտել ՚ի կրօնս իւրեանց , և յաւարի առնուլ զգանձս եկեղեցեաց ։ Հասեալ նոքա ՚ի գաւառն Ծաղկոտն կամ Ծաղկուտն մօտ ՚ի գիւղաքաղաքն մեծ , որ կոչիւր անգղ , քանակեցան հանդէպ նմա ՚ի հեռուստ . և մնացին անդ զաւուրս քանեւհինգ . մինչև եկին և այլ մնացորդք նոցա . և որոց էին և քահանայք ոմանք ։ Ո՚յս իմացեալ ղևոնդեայ մեծի երիցու՝ դիմաց ՚ի քաղաք անդր՝ տեսանել և քաջալերել ըզժողովուրդ փեղոյն՝ հաստատուն կալ ՚ի հաւատս , և պատերազմիլ վասն քրիստոսի ։

ԱՂ. Մոգպետն՝ որ ՚ի կասկածէ կայր ՚ի վէր Ձին հայոց , զի ոչ յուսայր՝ թէ յանձն առնուցուն նք զօրինս մոգութենէ , կամեցաւ ՚ի փորձ մատչիլ . և յետ քանեւհինգ աւուրց առեալ ընդ իւր զոմանս ՚ի մոգուց և ՚ի զօրացն պարսից հանդերձ զօրաւարաւ՝ եկն ՚ի գիւղաքաղաքն անդր յաւուր միաշաբաթու . և մատուցեալ ՚ի դուռն եկեղեցւոյն՝ ձեռն էարկ քակել զայն ։ Յայնժամ սքեն ղևոնդ հանդերձ ուխտիւ եկեղեցւոյն ելեալ ընդդէմ նմա և ընդդէմ զօրացն նորին՝ արգել զնա ՚ի քառնութենէն . և էած տապնեալ մեծ ՚ի վէր նմ ։ Յայն շփոթ աղաղակի հասին

անդր

անդր բազմութեի քաղաքացւոց ամբոխ մեծ. և դիմեալ քա-
450 րամբք և փայտիւք՝ հարին չարաչար զմոգն և զմոգպետն և
զղօրան որ ընդ նմ. և յիրևցան կացուցեալ՝ հալածական ա-
րարին զնա. մինչև հազիւ կարել նմ փախստեայ անկանիլ՝ի
բանակն, և զերծանիլ։

ք. Իբրև տարածեցաւ լուր այսր գործոյ յաշս հայոց, ամե-
նեքին առ հասարակ զինու վառեալք հասանէին անդր. ընդ-
ոյս և կանայք ոմանք սուր ածեալ ընդ մէջ, վահան՝ի ձեռին,
և սաղաւարտ՝ի գլուխս՝ պատրաստեալք՝ի պատերազմ. այլև
եպիսկոսունք և քահանայք քիմ յոյժ, և նա ինքն յովսէփ
կաթուղիկոս՝ դիմեալ եկին անդր՝ի յորդոր քաջութե։ Իւ
և բազումք՝ի նոցէ՝ որք՝ի բանակին էին ընդ մոգպետին՝ քա-
հանայք և ժողովուրդք, զատեալք՝ի բանակէ անտի՝ անկան
450 ի քաղաք անդր. և եղև ամբոխ բազմութե մեծ յոյժ։
Իւ մի ոմանք՝ի նոցանէ՝ որք եկին՝ի բանակէն, դիտէին ըզ-
գաղտնի խորհուրդ նախարարացն, մատուցեալ առ յովսէփ
կաթուղիկոս և առ ղևոնդ երէց՝ յայտնեցին նմ։ Իւ նքյղել
զմի ոմն՝ի հաւատարիմ պաշտօնէից առ սպարապետն վարդան՝
կոչեցին զնա՝ի ծածուկ։ Իկէ վարդանայ՝ անկաւ յոտս կա-
թուղիկոսին և եպիսկոպոսացն՝ որք առ նմա էին. և պատմեաց նոցա
զոյսոսմանէ աչօք զնմ իրան ստուգութե, և զխորհուրդ
մտաց իւրոց. և խնդրեր՝ի նմանէ զթողուն վ՚ս առ աչս ուրա-
ցուցեն։ Ոյս լուեալ եպիսկոպոսացն՝ փոքր մի ոդի առին և մխիթա-
րեցան. և վարդան դարձաւ վերստին առ իւրսն։

ճ. Իսկ մոգպետն՝ որ հարուճածեալ և փախստեայ ան-
կեալ էր՝ի բանակն, տեսեալ՝ թէ նախարարքն, որք անդ էին
ընդ նմ, մանաւանդ վարդան, ոչ առնէին ինչ վրէժխնդրուն
՝ի վր եղելոցն, այլ՝ կային իւրք հաձեալ ընդ գործն, անկաւ՝ի
վարանս, և գիտաց ստուգիւ, թէ ոչինչ իւիք կարէ կատա-
րել զհրամանն թագաւորին։ Ամին իրի խորհեցաւ ընդ վասա-
կայ՝ գրել առ մոգպետաց մոգպետն, և առ միհրներսէհ հա-
զարապետ, զի հաւանեցուսցեն զթչերն՝ թուլացուցանել առ
ժամանակ մի զհրամանն իւր, մինչև հնար լինի առ սակաւ
սակաւ շահիլ զհայս. ապաթէ ոչ ասէ՝ անհնար է մեզ բըռ-
նութե նուճաձել զսոսա. զի թէ անզէն մարդիկ այսպէս զօ-
րացան, եթէ յանկարծ զզինուորս ևս ընդ ինքեանս միաբա-
նեցուսցեն, ո՞ կարէ կալ առաջի դոցա յանդուգն յարձակ-
մանն. * մարդք, որ ոչ՝ի կապանաց զանգիտեն, և ոչ՝ի
,, առանձնաց երկնչին, և ոչ՝ի ստացուածոց պատկառին. և
,, որ յետին չար է քան զիմ չարիս, զմնոյ քան զկեանս ընտ-
,, րեն. ո՞ է՝ որ կարէ դոցա դիմակաց լինել ։։
Իւ սկսաւ պատմել վասակայ, թէ որպէս յառաջ շահիլ

հալածողի բռնադատեցին պարսիկք զքրիստոնեայս Թողուլ զհաւատս , և աղքի աղքի տանջանօք նեղեցին զնա , և ինչ ոչ օգտեցան . (ըստ որում գրեցաք . գործ · Ե · գլ · 38 · երես · 406) ։ Իսկ ասա ասէ առաւել քան զնոյն տեսանեմք . նա՝ թէ և ինքեանք իսկ ուծքն մերս եկեսցեն մեզ յօգնութիւն , էի՛ հնար օրինաց մոգութիւն՝ ի հայս առնուլ զհաստատութիւն . ոյզ ասա և ես զիտեմ առի միաբանութիւն ուխտի եկեղեցւոյն ։ Այս իրաւի լուծեալ էին , բայց չէին գիտակ այսպիսի և այսչափ հաստատութիւն մնալոց աղգիդ . իսկ դու , որ՝ ի մանկութիւն յայդ օրէնս յազգի քումմանեալ էիր , և գիտեիր զպնդութիւն նոցա՝ ի հաւատս , և զայդ ևս քաջ ճանաչէիր , թէ առանց պնդութեան և հեղման արեան պարսից չառնուն դէպ յանձն զօրէնս մերս , և մահուամբ պաշտպանեն զեկեղեցիս իւրեանց , ընդ որ յառաջագոյն ոչ ասացեր զայս ամ յանդիման արքային . զի քեզ անկանէր խօսիլ . վասն զի դու էիր մարզպան աշխարհիս . և արդ՝ ոչ իմաստութիւն արարեր զայդ . կամ թէ գուցէ և դու՝ ի նոցա խորհրդի էս . և քո խորհրդովդ զայս անցս անցուցին ընդ իս . զի՝ ի քումմ ձեռին է աշխարհդ ։

Ե . Իսկ վասակ , որ՝ ի սրտէ ևս ուրացեալ էր զքս , խրատ ետ մոգպետին լռել առ վայր մի . զի այլով ձանապարհաւ կարող եմք ասէ կատարել զհրամանն արքունի . և ապա յորդորեաց զնա , և ասէ . դու առաքեա՛ ի դուռն , և տուր բերել գունդ մի այրուձիոյ . և ես ժողովեցից այլ ևս զօրս . և քակտեցից զմիաբանութիւն հայոց . և՝ ի վանել մեր զնոսա՝ այնուհետև դիւրաւ կարեմք առնել՝ զօր կամիմք ։ Այլ մոգպետն իմաստնագոյն գտեալ քան զնա՝ ասէ ցնա . եթէ պատերազմաւ կամիցիմք վհատուցանել զնոսա , ոչինչ օգտիմք . զի քանզի ես , և դու հասանեմք մեզ , և արքունեացս մերոյ . ապա եթէ յաջողեացի ինչ նոցա , արկցեն զամենի զմեզ ։

Զ . Այլ վասակ չընկալաւ զմիտս նո՛ր՝ յայլ իմն հնարս եմուտ . և հաւանեցոյց զնա կալ հանդարտ . և ինքն մտեալ՝ ի քաղաքն՝ խաբեական բանիւք խաղաղացոյց զամբոխն . և արձակեաց զիւրաքանչիւր՝ ի տեղիս իւրեանց . և սկսաւ այնուհետև ստուէր և ողոքական բանիւք և առատ պարգեւօք և մեծամեծ խոստմամբք յինքն յանկուցանել զբազումս , որք էին՝ ի քաղաքի անդ և՝ ի բանակին , և նոքօք զայլս . և արձակեաց զնո՛ և զնախարարս ընդ՝ ի բանակէ անտի ։ Այս ապա բազում խաբեբայ արամբք որոգայ զբզմեա , յորդորելով զնա մի ինչ ընդեմ կալ մոգուց , այլ՝ առ ձեմ մի թոյլ տալ նոյ կատարել զպաշտամունս իւրեանց . զի յետ հաձելոյ ասէ մեր զկամն նո՛ , նո՛ք վստահ եղեալ՝ ի մե՛ք՝ ինքնին մեծինն յձեռ առնէ . և մեք հանդարձակ պաշտեմք այնուհետև զօրէնս քրիստոնէութեան ։ Այս

ասպա սկսաւ բաշխել զմտս ի տունն նախարարացն . և տե-
ղեր զնա և զայլ պարզամիտս՝ գնել առ երեսս երկիրպագա-
նել արեգական և հրոյ , մինչև դադարեցի բռնութեն հրա-
մանաց թագաւորին :

Ե . Յայսպիսի սուտ խոստմունս նը վատահայեալ բազմոց
ի պարզամտաց և ի թուլասրտից՝ հնազանդեցան նմա . և
ոչք զգաստքն էին , ի տարակուսութեն ըմբռնեալ՝ վարանէին
ի միտս , և կային ի լռութեն յիւրաքանչիւր քաղաքս : Սոյն-
պէս և այն բարեխորհուրդ նախարարքն՝ ոչք եկին ի պարսից ,
յապուշ միտս կրնթեալ՝ ոչ գիտացին զնա իրացն իմանալ , և
կային շուարեալք : Վասն և բազումք , ոչք նախանձու վա-
ռեալ՝ խորշէին ի նոյնանել իբրև յուրացողաց . և ամենեքին
առ հասարակ կային զգուշեալք և վարանեալք , տխրեալք և
տուայտեալք :

Այլ զայսմանէ բնչմ լինչ գրե զազար փարպեցի , և յաւելու .
Տեսեալ ասե զայս ամ նախարարացն , * ոչք պատձառանօք և
,, ոչ ձշմարտութեք ուրացօղքն էին , կամէին յառնել և ընդ
,, ինքեանց սուրն ելանել . ոմոք ոչ սիտէր և առ վայր մի
,, կեալ , քան թե զայնպիսի տեսանել զազէտս և ժուժկա-
,, լել . ոչք զկերակուրս ուրախութեք ըն բանի տալմսերգին
,, իբրև զմխիթր ուտէին , և զըմպելի իւրեանց արտասուօք
,, խառնէին . քզի ոչ ոք հաւանէր ըն նմ կամակից լինել սե-
,, ղանոյ , ոչ կին , ոչ որդի , ոչ ազատ , ոչ ծառայ ոք , և ոչ
,, սպասաւոր : Այլ էր այնուհետև տեսանել զամենեսեան
,, քակտեալս ի միմեանց և պատառեալս ... իբրև զհօտ՝ որոյ
,, ոչ գուցե հովիւ : Ա՛ն ամի այսորիկ սուգ առեալ կոծէին
,, կանայք աւագ աղատայն : Ա՛ն եղկաք պատուհասական քահա-
,, նայիւք և եկեղեցական ուխտիւ , ծերովք և տղայովք և
,, ամ ժողովրդոցն բազմութեք կառաչ բարձեալ լսէին ի
,, տանն ամ . և էր տեսանել ծեփեալ արեանց հոսմամբք զամ
,, դէմն ուղղափառ մարդոց :

Այսպա համարձակութեի առեալ մոգպետին և մոգուցն և քըր-
մաց՝ յաձախեցին յամ տեղիս զգաստչելիս իւրեանց ի քաղաքս
քաղաքս , յաւանս և ի շէնս , և ոչ թողուին հայոց կատա-
րել զկարգս կանոնաց քրիստոնէութեն , յամի գործակից ու-
նելով ի ծածուկ զբարն վասակ : Ա՛ռեցին այնուհետև օրհնու-
թիք ամ յեկեղեցեաց , և պատեաց զամենին անառն ահ մոգու-
թեն , և մեգ երկիւղն :

Այ յաւուրսն անդ գարշելի պաշտամանց յծիս հայոց՝ ո- Յովհ. Մամ.
մանք ի նախարարաց և քաղաքաց ի ամենայն յայտնապէս թո- Այրարատ :
ղին գհաւատս քրի . և երկու յերևելեացն անտի՝ շաւասպ արծ-
րունի , և վահդոյ գունեցի՝ կանգնեցին ի գաւին քաղաքի ըզ-

կրա-

կրակատուն. ուր և նա ինքն վիզդոյ կարգեաց զորդի իւր ըզ-
շերոյ քրմապետ իւրում մեհենի, ձեռնտու լեալ նմա մինչ-
նայ, որ յառաջն կարգեալ էր վերակացու ՅԻՆ իբր հազա-
րապետ։ Այլ յետ այսորիկ չարն վասակ զանխուսել ետ թերել
առուծաբ գունդ մի պարսից յՅՆն հայոց. զի առաւել համար-
ձակութիւն վարեսցին մոգք, և անկասկած լիցին ի նախա-
րարացն հայոց։

Գ Լ Ո Ւ Խ · Ը ։

Հաղափս Ներսեհայ Քաջպանայ յաշխարհէն հայոց, և գառնալոյ, և վանելոյ պարսից։ Ասր և յաղափս երիցորդի Թողմայի զահապետութեան։

ԱՐդեան սպարապետ մեծ՝ որ յայմ ժամ Թախծէր 450
և սգայր ի հոգի իւր ի վէր անարժան գոր-
ծոյն՝ զոր յանձն էառ ընդ այլ նախարարս ի
դրան արքունի, տեսեալ զայս ամ չարիս, և հայեցեալ թէ
Թմրեալ կան նախարարք, ժողովեաց առ ինքն զբազմութիւն
ընտանեաց և ազգականաց իւրոց. որոց ոմանք խորհեալ և
մեհնեալ էին ի նմէ վը կարծեալ ուրացութենէն։ Ասկաս խօ-
սիլ ընդ նոսա Թախծագին, և ասէ. գիտասջիք սիրելիք իմ, զի
ես ոչ ուրացայ զարարիչն իմ և զնոր յն քն՝ կամաւ և կիր առ
երկիւղ. և սէգ զվիշապութիւն և զհաւատս սրբոյ աւետարանին.
այլ միայն առ վայր մի կորեայ խաբէութիւն. բայց զայդ ա-
րարի, զի գտից զիս ձեօք հանդերձ՝ չշմարտութիւն. արդ՝ վինակ
զի Թողի զիս պատճառանօք, կամիմ առուգութիւն Թողուլ
զայմ ինչ կենցաղոյս՝ վը խմոյ փրկութեանն և ձեր, և դնալ յօ-
տար երկիր։

Այլ ի խօսիլ նմա զայս ընտանիս իւր՝ պինդ ետ եղբայրն նր
հմայեակ, և ասէ. փութա՛ կատարել զոր խորհիդ, և մի՛
յապաղեր. քանզի ոչ ոք կարէ լինել երաշխաւոր անձին իւ-
րում և ոչ ժամ մի. և մեք պատրաստ եմք գալ ընդ քեզ, կա-
մաւ յանձն առեալ զայմ վիշտս, եթէ սուլ և եթէ սուբ։ Այլ
այսպէս միաբանեալ նոքա ի մի խորհուրդ՝ արհամարհեցին և
Թողին զայմ մեծութիւն խրեանց՝ զոր ունէին. և ելին ի
Ձահապարհ գնալ հանդերձ ընտանեօք ի կողմանս ՆորՈ-
ՐԵՆ յունաց։ Այլ հասեալ ի գիւղ մի ասրամանայ կոչեցեալ
ի գաւառին բագրեւանդայ մօտ ի սահմանս բասենոյ և
տուճարծատատիայ՝ կացին անդ զաւուրս ինչ։

Ք. Առեալ ոխստապահ նախարարացն զլուր չուէլոյն

վար-

վարդանայ՝ շուարեցան ի միտս իւրեանց . արդ ասեն զի-
տեմք , զի կորեաք իսպառ . և ոչ է հնար մեզ զերծանիլ յձե-
կայ չարէս . եղիւն ասպա ամբին ի մտի , զի և ինքեանք չուշա-
ցեն յՅե անտի՝ գնալ ի մանն բաժնի յոնոյց : Իբրև իմացաւ
զայս վասակ , անկաւ ի տարակոյս մեծ . քանզի կասկածէր ,
Թէ ի գնալ նախարարացն յայլ ՅԵ՝ ընդ նոսին մեկնեացին և
ռամիկք տամբք իւրեանց . և աչխարհս դատարկացեալ , ոչ
յաջողեացի նմա ի գլուխ տանիլ զոր եդեալ էր ի մտի , մո-
լորեցուցանել զամ մեծամեծս Յնին հայոց յօրէնս պարսից , և
Թագաւորել ի վեր ազգին :

Լուեաց առ ինքն զուխտատպահ նախարարսն , և հաւանեցուցեալ
զնա հանդարտիլ , իբրև Թէ զօգուտ նոյ խորհելով . և գրեաց
Թուղթ ազաչանաց առ վարդան ի դիմաց ամենեցուն . և ետ
գրել իւրաքանչիւր նոյ առանձին Թուղթ առ նոյն վարդան .
և բերեալ զաւետարանն՝ առաջի եպիսկոպոսացն և քահանայից՝ ետ
երդնուլ ի նա և ինքեանք , զի ի գալ վարդանայ՝ ամբն հնազան-
դեացին նմա , և նովաւ վանեացեն զմոգան յՅե անտի , և միա-
բանեալ ընդ կայսեր յոնոյց՝ զդէմ կալցին յազկերտի : Իսկ նա-
խարարացն ոչ գիտացեալ զնենգաւն նոյ՝ յօժարակամ կատարե-
ցին զամ : Իսկ ազաչեցին զերանելի զևնդ երէց , զի ինքնին
տարցի զնամականին՝ ընդ զԹուղթան , և նա և զաւետարանն՝ առ
վարդան . քանզի գիտէին՝ Թէ վարդան ոչ առնէ անտես զա-
ղաչանս նոյ : Իսկ նա ընդ ընդեայ և զայլ երկուս քահա-
նայս , զերեմիա ի վաղարշապատէ՝ որ երբեմն սարկաւագա-
պետն էր սբոյն սահակայ , և զխորէն ի մլեհնոյ . ընդ նոսին և
զերիս աւագ նախարարս , զարշաւիր կամսարականն զինչհանն
արշարունեաց , զՏմայեակ իշխանն դիմաքսենից , և զգաղրիկ
իշխանն աբեղենից :

Ձասել սոցա ի նահապետացել գիւղն արամանայ՝ գտին անդ զվար-
դան և զեղբարս նոր . և տուեալ նմա զԹուղթս նախարարացն ,
և եդեալ առաջի նոր զկնքեալ աւետարանն , յորդորելին զնա և
զեղբարս նոր դառնալ յետս . դուք ասեն աւադիկ հոգայք ապ-
րեցուցանել զանձինս ձեր , և բարւոք առնէք . բայց մեք ա-
մենեքին կորնչիմք յանվախձան կորուստն . վն զի ոչ է հնար
մեզ առանց ձեր երբեք պատահել փրկութե և կեալ . և արդ՝
ունի հոգացեալ ինամ տանիք ձեզ , նոյնպէս տարջիք ինամ և
մեզ , և մի Թողուք այսչափ բազմութե ոգւոց կորնչիլ :
Վնանի ետ վարդան , և ասէ . արդարև պարտ է ինձ հոգալ և վն
փրկութե այլոց . այլ զինչ օգուտ է ինձ ամ շահել , և զանձն կո-
րուսանել , և զինչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ : Իսկ
այժմ ես և ընտանիքս իմ ոչ եմք յերկիւղէ սրոյ փախուցեալ
եմք , այլ վն կեցուցանելոյ միայն զոգիս մեր : Այլ քանզի

չէ՛ լինձ հնար ընդդէմ կալ աւետարանիս քոյ, ամա հնազան-
դելով եկից ընդ ձեզ։

Եւ իբրև եկին նա հանդերձ եղբարբքն իւրովք և ամէն ընտա-
նեօք՝ ի վաղարշապատ, ելին ընդ առաջ նոր ուխտապահ և քա-
րեհաւան նախարարքն, ընդ որս և վասակ նենգաւոր. և տե-
սեալ զնա՝ ուրախ եղեն յոյժ։ Եւ մինչդեռ հոգայր սբն վար-
դան փութաթափ միաբանել զամենեսեան, և վանել զմոգս, և մոռ-
բել զաշխարհն ի սլջծուքէ, միւսանգամ սկսաւ վասակ պա-
տիր բանիւք յապաղումն ի վր բերել. եթէ ասէ յայտնապէս
ընդդէմ գինեցուք պարսից, խմացեալ յազկերտէ՝ առ ժա-
մայն տայ սպանանել զամ քրիստոնեայս՝ որք են ի պարսս, և
մանաւանդ զհայս և զիշխանս վրաց և աղուանից. և նախ
քան զամ՝ զորդիսն իմ զաբէիկ և զամիրներսէհ. և ոչ այս-
չափ միայն, այլև զամ յաստուածն իւր Թափէ ի վր ձիս. և մեք
չկարեմք զդէմ ունիլ. վն որոյ լաւ և աս է, զի առ սակաւ
սկ և մեղմով ջանասցուք հեռացուցանել զմոգն. և միշտ
միանգամայն քունէք։ Այսպիսի վատ խորհուրդս վասակայ
խոնարհեալ և այլոց ոմանց՝ կամակից եղեն նմա. և ի յո-
ղջ բանս հնարաւոր ձորտարուեն լեզուի նր ըմբռնեալ, և
յաղքայաշուք ձոխուէ իշխանուե նր ակնածեալ, յապաղէին
ի գլուխ տանիլ գնրն։

Եւ սիրտ վարդանայ զեղեալ տխրութիւն. զի տեսանէր զաշ-
խարհն առ հասարակ ի մոլորութիւն արևապաշտուե և կրա-
կապաշտութիւն շաղախեալ, և զաւրեզարդութիւն քրիստոնէ-
ութիւն բարձեալ. Թող զայն, զի ուրեք ուրեք ի հեռաւոր
վայրս ի մէջ եկեղեցւոյ՝ ուր յառաջն քն պատրագէր, կանգ-
նեալ էին բագինք պաշտաման հրոյ։ Եւ տեսեալ, Թէ որոյ
վն եկն ինքն, ոչ կարէ առ ժամայն ի գլուխ տանիլ, անմիա-
Թար ոգւով սգայր աւուրս բազումս։ Եւ ապա խնայեալ՝ Թէ
այս ամ ի նենգուէ վասակայ է, և Թէ պատրանօք նր լռեալ
կան մեծամեծք, կոչեաց զհամակամ նախարարսն՝ գալ ի
շահապիվան. և խորհուրդ արար ընդ նս՝ զինուորիլ ի սերն
քրի՝ ըստ խոստման իւրեանց. և վանել յՅե անտի զամենն,
ոք խոտորեցուցանէին զազգն ի քրիստոնէուէ. և չանգամ
այլ ընդ այլոց բանից վասակայ. և եթէ հակառակ ինչ գտցի
նա՝ կորուսանել և զնա։ Այս առաւել ևս սկսաւ յորդորել
վահան ամատունի, մինդ վն ատելուէն՝ զոր ունէր նա ընդ-
դէմ վասակայ։

Ե՛. Նոյն աւուրս՝ մինչդեռ կային նախարարքն հայոց ժո-
ղովեալ ի միասին անդ ի շահապիվան յապարանս մեծին վար-
դանայ, հասին առ նս եկիսունք ի վաղարշապատոյ՝ հան-
դերձ կաթողիկոսն. և դոյժ տուեալ նմ՝ ասէն. կորեաւ ահա ձա

Ղևոնդ Ե.

Ի.մ 450

Հայոց հեթանոսութիւն. և տեսանք անօրէնութի նոր. զի կամայք մոգուց և իշխանացն պարսից հրամանաւ վասակայ և մոգպետին պատառեցին զհանդերձս հաւատացուց կամանց, և շինուցին զձրագունս յեկեղեցիս. և ինքեանք առաւել քան զարս իւրեանց հաստատակեցան գործել չարիս։ Եւ արդ՝ եթէ դուք ևս հաձեալ էք ընդ այդ, և ձերով խորհրդով լեալ հրամայեաք զայդ վասակայ, նախ զմեզ սպանէք առ, և ապա ձեռն արկէք յայդպիսի գործ։

Ի.շին.գ. Պատգ.

Յայնժամ ասին ընդ յոտն կացեալ՝ առեն. գիտէ ած, զի անպարտ եմք մեք յայդ չարեաց։ Յայնմ վայրկի խրախոյս տուեալ երանելւոյն վարդանայ՝ ասէ. մինչև ցերկիր լեզ մեզ Թաքուցանել զձմարտութեի հաւատոյ, և կորնչիլ և կորուսանել զձս. ժամ է արդ յայտնի լուսով գնալ երկրէ ի տունջրեան, և որդիս լուսոյ կոչիլ, և մի ևս մնալ ի խաւարի. ապա Թէ ոչ՝ երեսաւ կորնչի քրիստոնէութի առ հասարակ յձեռ մերմէ։ Եւ անդէն ամբոխն հաւանութեամբ վարդանայ և եպիսկոպոսացն ուխտեցին միաբանիլ ի միասին, և վանել մարտիրոսութեան հաւատոյ. և նախարարքն վերատեսին ընտրեցին զվարդան՝ լինել ինքեանց գլուխ և առաջնորդ. և բերեալ ի մէջ զաւետարանն՝ երդուան ի նա՝ հաստատուն կալ ի միաբանութենն։ Եւ ապա անկեալ առ ոտս կաթուղիկոսին և եպիսկոպոսացն՝ առին վերատին Թողուի վս առաջինն տուտ ուրացուցն։ Եւ դիմն ապա պայման ի միջի, զի իւրաքանչիւր ի նոցն ծածուկ ի վասակայ ժողովեսցէ ի տունմէ և ի գաւառէ իւրմէ զայնոսիկ՝ որք կամիցին ինքնակամ նահատակիլ պատերազմաւ ի վերայ հաւատոյ։ Եւ եղեն ժամադիր, զի յամսեանն մարերի, յն ի յուհնիսի՝ ազգասցեն սկիզբն գործոյն։

Լսեալ մի ումն յոստանեայ աղբատնի տանէն, որում անուն էր զանդազան, այլ ժանտ, դիտացեալ վնորհուրդ միաբանութենն՝ վազվզուկի գնացեալ զեկոյց վասակայ։ Ոյն լուեալ նախարարացն՝ առաքեցին և կալան զնա ի գեօղն, որ կոչիւր արծակ՝ ի բագրեւանդ գաւառի. և կապեալ եդին ի քանտի ի մերձակայ գեօղ մի անուանեալ բերդկունս. և յետ աւուրց ինչ եառնն քարկոծել զնա։ Եւ ի լինել այսր այսպէս, հրաւիրեցաւ յաշխարհին հայոց խորհուրդ միաբանութենն նախարարացն. և բազումք՝ որք բռնադատեալ էին ի մոգութ, մերժեցին և արհամարհեցին զնա. առնել և ոմանք ի նախարարաց։ որոց ի տունս կային պաշտօնեայք ամպարշաւուն, արտաքսեցին զնա. և ամենեքին միաբանեցան ընդ վարդանայ։

Լնդ այս երկուցեալ մոգպետին և զօրավարացն պարսից, ժողովեցին զնա զօրս իւրեանց ի բագրեւանդ գաւառ. ուր հաս-

ցեալ և վաստակայ՝ առաքեաց առ նա և զայլ զօրս պարսից ՚ի սահմանաց աշխարհին սիւնեաց, և առնուաստացոյց զգունդ նոյ,
և ինքն ևս միացաւ ընդ նոսա ։

Իբրև եհաս ամին մարերի, ժողովեցան նախարարք հայոց ընդ ժամադրուն հանդերձ զօրօք յամուրն անդր ՚ի ծագկուտն գաւառի. եկին անդր և եթեսունք հայոց և սքեն յովսեփ ընդ նա. և անդէն պատրաստեալ, և յայր ձեռն ապաւինեալ, բաժանեցին զզօրս իւրեանց յերիս գունդս. և կազմուածք զինուց յարձակեցան ՚ի վերայ գնդին պարսից. գունդն առաջին յապրևելից կուսէ, գունդն երկրորդ յարևմտից կուսէ, և գունդն երրորդ ՚ի կողմանէ հիւսիսոյ. և պաշարեալ զնա յամենայն կողմանց շուրջանակի՝ կոտորեցին յանխնայ. և զբաղումս ՚ի նոցանէ՝ որք երևելիքն էին՝ ձերբակալ արարին, և կապեալ եդին ՚ի բերդս. և զամ առաւր բանակին ՚ի մի վայր ժողովեալ՝ պահեցին զգուշութիւն ։

Գտեալ ապա և զանօրէնն վաստակ՝ ձերբակալ արարին զնա. և կամէին կապել և դնել ՚ի բանտի. այլ նա քեզմ թախանձանօք աղաչեաց զնոսա, և երդուաւ յաւետարանն սքի՝ հաստատուն կալ ՚ի հաւատս, և զամ ապաշխարանս առնուլ յանձն, միայն թէ մի մեկնեսցեն զնա ՚ի միաբանութէ իւրեանց ։ Այս ինքն թէ պէտ և վատահայել յահագին երդումն նոր՝ ընկալան զնա յիւր եանս, քայց տակաւին ոչնչին կասկած մեծ ։

Վարդենի ։ Ձ. Ապա առ ՚ի հաստատուն իրացն և յամրուն քրիստոնէական հաւատոյ՝ ժողովեցան հրամանաւ սքին յովսեփայ կաթուղիկոսի և մեծին վարդանայ ՚ի շահապիվան բազմութիւնք եպիսկոպոսաց և երիցանց, նախարարացայ և աւագաց, և այլ բիւրաւոր ժողովրդոց. և կոչեալ առաջի ղվաստակ, ասեն ցնա. մեզ այլ ոչ ե խորհիլ լինչ, քայց եթէ յայտնապէս պաշտպան լինել սքոյ հաւատոյս, և ջնջել զմոգուն ՚ի ՚ձէս, և համարձակ պաշտել զքո. արդ՝ եթէ սերտ սրտիւ միաբանիս ընդ մեզ, բարի է. ապա թէ ոչ՝ չկարեմք մեք այլ ևս պատրանօք վարիլ և շողոքորթել զպաբոսիկ ։ Ո՜ այս լուեալ վաստակայ՝ կեղծաւորեցաւ ընդ իւրսն բարուցն, և ամ սիրով հաւանեցաւ միաբանիլ ընդ նոսա՝ ցուցանելով զինքն առաւել քան զամենին ջերմագոյն յաջակալուածս. և յանդիման ամենեցուն վերստին երդուէալ կընքեաց իւրով մատանեաւ զաւետարանն սքի. զնոյն արարին և այլ իշխանք ։

Յայնժամ ապա համաձայնութիւք ժողովոյն դրեցին եպիսկոպոսունք յետոյ երդման ՚ի վէր հաստատուէ ուղղափառ հաւատոյ ՚ի ձև մատենացաւ ՚ձոյ. և եր պատճէն թղթոյն այսպիսի, ընդ որում յառաջ բերէ զազգսր վարպետի. * Ո՜ քեզ սքի ,, Հայր՝ արարիչ երկնի և երկրի, և զօրդիդ քո միածին զնոր

,, մեր

,, մերոյ քո, և զսէր հաւատոյդ կենդանասարս, զանոսիկ և զան-
,, քակ երրորդութեդ միութիւն խոստովանիմք արարիչ ամի, տե-
,, սակաց և անտեսից - որ միայնդ ես ածծ, և չիք այլ ոք բաց
,, ի քէն: Որ և ըստ մարգարէիդ յաղագս փրկանէ տիեզերաց
,, ի վախճան աւուրցս մի ի սէր երրորդութեդ ծնար ի սէր կու-
,, սէն մարիամայ. և զնոմ կարիս բարձեալ քոյին մանուածովդ
,, զոր ի սէր և յիծծածինն կուսէն առեր, տարեալ քեւեռեցեր
,, ի խաչափայտի. յորում հեղեալ զսէր արիւն քո՝ ազատեցեր
,, զաշխարհ ի ծառայութէ մեղաց անիծից. մեռար, թաղե-
,, ցար և յարեար. և վերացեալ յերկինս՝ եռաւր աւետիս խոստո-
,, մանն՝ տանել առ քեզ զամեն, որ խոստովանին առ քեզ ածծ
,, Աշմարիտ, Թագաւոր Թագաւորաց և Տէր տիրանց:
,, Այս մեք վկայեմք և խոստովանիմք զքեզ ածծ Աշմարիտ, ածծ
,, ածոյ և Տէր տիրանց, ածծ քաւիչ մեղաց մերոց, ուրացեալքս
,, և զղջացեալքս, յանցուցեալքս և յողորմութիդ ապաւի-
,, նեալքս, գլորեալքս և կանգնեալքս: Ընկալ զմեզ որպէս զորդին
,, ուրացօղ, որ ծախեալ աղտեղեցաք զհանդերձ սէր մկրտութեն,
,, զոր զգեցուցեր մեզ աւազանին լուացմամբ. և անառակ
,, անօրէնութէ թաւալեցաք ի տղմի ուրացութէ իբրև զդա-
,, սական խոզոյ: Այս արդ՝ դարձեալ առ Աշմարիտ հայրդ
,, երկնաւոր՝ աղաղակեմք ասելով, մեղաք յերկինս և առա-
,, ջի քո. հնորհեա մեզ բարեխօսութէ լուսաւորիչ առաքելոցն,
,, և վաստակովք սէր նահատակին գրիգորի նոցին նմանոյն և
,, գործակցի՝ ջնջողութէ մեղաց մերոց. և զգեցո մեզ զառա-
,, ջինն պատմութեանն. և մաքրեա զոտս մեր ի խոչիցն չա-
,, րեաց, որով ծակոտեալ թշնամւոյն՝ կաղացոյց զմեզ. և
,, ազատ մեզ ճշմիկս պահպանութէ աւետարանին սէր. և գիր
,, զմատանին զգծած խաչի քոյ ի մատին աջոյ ձեռնի մերոյ.
,, որով կնքեալք զբոլոր անդամս մեր՝ սարսել յանսարկուն
,, փախիցեմ ի միջոջ: Այս ոչ հեղեր դու զարիւնդ քո սէր ի վէմ
,, մեղաւորաց ի փրկութէ յանցաւորաց, պարգևեա և մեզ հե-
,, ղուլ զարիւնս մեր ի վէմ խոստովանութես այսորիկ և իբրա-
,, քանչիւր Թողութէ մեղաց:
,, Այս որ ոք հեռացեալ յուխտէ երդմանցս այսորիկ ցուցցի,
,, և ուխտազանց ի միաբանութէս մերմէ որոշեցի, եղիցի նա
,, արտաքս ընդ յուդայի, որ մերժեալ ընկեցաւ ի գնդէ սուրբ
,, առաքելոցն. և աստանց ոչ Թողութէ կացեալ ի ձախսս կող-
,, մանն՝ լուիցէ ի քէն զահագին բարբառն, զոր ասես յա-
,, ւուրն հատուցմանն, Թէ երթայք յինէն անիծեալք ի հուրն
,, յաւիտենից, որ պատրաստեալ է սատանայի և արբա-
,, նեկաց նր:
Այս իբրև ընթերցեալ եղիցի այս նամակ խոստովանութէ՝ օրհ-

նութեան և անիծից չականջս ամ բազմութեան՝ ձայնակից լինելով և նոցունց իբրև ի հանդիսական դաւանութեի , ա-
ռեալ կնքեաց զայն մատանեաւ իւրով նա ինքն վասակ , և
ապա համօրէն երևելի նախարարք և գլխաւոր ասնուտեարք
և աւագ սեպուհք . և եդեալ զայն ի մէջ աւետարանին՝ յոր
երդումանն , յանձնեցին ի ձեռս սրբոյն յովհեփայ կաթողիկոսի ։ Եւ
կրկնին կրկին երդուման և հաստատեցին առաջի նորա և ամ
ենայնց և քահանայից՝ անխախտ պահել զսէր ուխտ հաւա-
տոյ , և կամակար մնօք ձգնիլ ի վէր այնր մինչև ցմահ ը-
դեմ քառնութեե սպառիչ ։

Վարդենի ։ Ե . Յայնմ վայրի հնչեաց երկիրն ամ՝ ը ասելոց փարպեց-
Եղիշէ · Գ · ւոյն՝ ի բարբառոյ բազմութեե մարդկան . որք միաձայն յայծ
խրախուսեալ ազազակէին՝ ը գրելոց եղիշէի . * Պատրաստ
,, եմք ի հալածանս և ի մահ և յայմ նեղութիս վ սէր եկե-
,, ղեցեացն , զոր աւանդեցին հարքն մեր առաքելինք՝ զօրու-
,, թիւ դալստեան տէն մերոյ յիսուսէ . որով վերատին ծնաք ի
,, միոյս հաւատոյ՝ մկրտութիւ ի քոյ , ը նմին նմանութիե
,, կամիմք չարչարանօք և արեամբ նորոգել զանձինս մեր ։
,, Քանզի հայր մեր զսէր աւետարանն գիտեմք , և մայր՝ զա-
,, ռաքելական կանթուղիկէ եկեղեցի ։ Ի՛ ոք չար անջրպետ
,, ի մէջ անկեալ՝ զմեզ քակեացէ ի սմանէ ։ ։

Եւ յաւելու ասել սբն եղիշէ . * Ի՛ այնու հետև երևեր տր
,, առաւել քան զծառայ , և ո՛չ ազատ փափկացեալ քան ըղ-
,, գեղջուկ վշտացեալ . և ոչ ոք քան զոք նուաղեալ յարիու-
,, թէ ։ Ի՛ սիրտ յօժարութիե էր ամենեցուն , արանց և կա-
,, նանց , ծերոց և տղայոց՝ ամ միաբանելոցն ի քն . քանզի
,, առ հասարակ զմի զինուորուէ զինուորեցան , և զմի զբահ
,, զգեցան զհաւատոց պատուիրանին քոյ . . . կեանք իւրեանց
,, ի մահ համարեալ էին , և մահք իւրեանց անշուշտ կեանք ։
,, Նայց այս բարբառ առեալ առեալ ընթանայր . քաջութիե
,, միայն մեռցուք , զանուն և զհոգիս ևեթ ժառանգես-
,, ցուք . զի կենդանի իցէ ի մեզ քն . որում պիւրին է միւս-
,, անգամ նորոգել զմեզ ի հողոյ , և հատուցանել իւրա-
,, քանչիւր ըստ գործս իւր ։ ։

Ա.յսպիսի օրինակաւ միաբան քաջալերեալ ամենեցուն զան-
ձինս և զընկերս՝ վառէին կազմէին ի վրէժխնդրուն եկեղե-
ւոյ . ապա հրամանն ետուն նախարարք ամ՝ գալ ժողովիլ յիւ-
րաքանչիւր գաւառաց և այլ ևս զօրաց քաղմութե . մինչև է-
անց թիւ հասարոյ նց աւելի քան զհարիւր հազար ։ Խաղա-
ցին այնուհետև ի վերայ քաղաքաց և աւանից , յորս չկնեալ
էին պարսիկք զմեհեանս և զկրակատունս . և կային քնա-
կեալ ի նոսին իբր յանհոգս . ընդ որս էին միաբանեալ և բա-

Ք. Տ. ՌՀ ամն 450

զումբ՝ ի հայոց՝ զկեաս երիթեալ կրօնից նոցա ։

Յովհ. կաթ. Պարդաւն ։

Այլ նախ դիմեալ սկսեալ վարդան և որք ընդ նմա՝ ի գումին քաղաք՝ ձերբակալ արարին զանօրէնն շուառասպ արծրունի, և սատակեցին զնա. և զկերակայսն այսորիկ զմիկան՝ որ նստեր անդ, արարին փախստական, և կործանեցին զմեհեանն ։ Ձերբակալ արարեալ և զիշխդ՝ այրեցին զնա՝ ի կրակարան անուամ պաշտամանն նոր. և կալեալ զորդի նորուն զձերդ՝ կոխեցին զփայտե. և կործանեցին զմեհեանն և զկրակատունս նոր ։ Այլ կանգնեցին՝ ի տեղի մեհենին զեկեղեցի մի փայտեայ յանուն սուրբ գրիգորի լուսաւորչին ։

Ներկը. գ։ Վարդեցի ։

Ոյնպէս դիմեալ և՝ ի մեծն արտաշատ, ՝ի գառնի, յանի, յարտագերս, յարշնի, յողկան, ՝ի կապոյտ, յորոտն, և յայլ քաղաքս և յամրոցս, կալան զնոմ քուրմն և զմոգս պարսից՝ որք ութեալ էին՝ ի նոսին. յորոց զբազումն՝ ի մի հաւաքեալ՝ ի դիւղն զարեհաւան՝ չարաչար սպանին զնոսա. և զայլս յոլովս արկին՝ ի բանտ. և զկանայս և զորդիս նոցն վարեցին՝ ի գերութիւն. և քանդեալ զնոմ բնակութիւնս նոցն և զմեհեանս և զկրակատունս՝ մնքրեցին զկահս նոցին ։ Այլ արքեալ զնոմ տեղիս՝ ՚ի հայոց՝ նորոգ հաստեցին. և յնոմ եկեղեցիս՝ զորս պղծեալ էին պարսիկք, կանգնեցին զխաչն յարութեան, և ուղղեցին սեղան խորհրդոյ. յորս և եդին քահանայս և պաշտօնեայս. և զաւար պարսից ետուն եկեղեցեացն. և յնմ քաղաքս կարդեցին պահապանս և վերակացուս ։

Ըստ նմին օրինակի նաև երիցունք և վանականքն իւրաքանչիւր գաւառաց և քաղաքաց մնեալ՝ ի տունս մոգպետանց յատրուշանս՝ քանդեցին և հրձիգ արարին զայնոսիկ. գանեցին և զգուրմն և վարեցին՝ ի բաց. մինչև զնաջինջ առնել յՅէն ՚ի հետս իսկ կրօնակատար մնլորութեանն ։ Այս գործ սոցա բազմապատիկ նշանք երևեցան յնոյ. զորս տեսեալ բազումք՝ ի հեթանոսաց՝ դարձան՝ ի հաւատս քրիստոս. ոմն գրէ եղիշէ ակնատես գոլով ։

Այլ ի քաղումք՝ ի պարսից անտի ամրացեալ էին յանառիկ և յանմատչելի բերդս, զորքն հայոց խաչանշան արարեալ՝ ի վերայարձակեցան, և առին զնա. և ոմն գրէ եղիշէ, * երկու մեծ ,, ծառեր բերդից պարիսպքն առանց ուրուք մերձենալոց անկեալ կործանեցան. մինչև ամ բնակչաց զահն հարեալ՝ ի ,, մեծ նշանէն՝ ինքեանք ինքեանց ձեռօք զկրակատունն այրեին. և ուրանալով զօրէնս մոգուԹեն՝ խոստովանէին ՚ի սուրբ աւետարանն ։ Այլ էր սեասանել յայնժամ զայր իւրաքանչիւր յՅէն հայոց վառեալս և վհատեալս՝ ոչ միայն ՚ի ըզգեստս և ՚ի զրահս, այլև յաւէտ յարութիւն ոգւոյ և ՚ի նախնի եկեղեցեաց ընդէմ թշնամեաց հաւատոյ. մինչև ըստ

լոյ նորուն եղիշէի , նաև * տղայք Ծին իբրև զարս սատե-
րազմօղս խիզախեին ։ Ա.մհ Ա.մհ 4

Գ Լ Ո Ւ Խ · Ը ։

Յաղագս խաղալոյ հայոց յաղուձանս , և պարզիչելոյ ընդ պարսիկս ,
և փանդռելոյ պահակին հռնայ ։ Յոր և յաղագս բազմադիմի
չարութենէ վասակայ և գործակցաց նը ։

Եւ ահա լուեալ միհրներսեհի հազարապետին պար- 450
սից՝ զոր արարին հայք , առաքեաց աղքատանի
հրամանաւ յՃն աղուձանից զերեք հարիւր մարդս
հանդերձ զօրօք՝ դարձուցանել և զնա ՚ի կրօնս պարսից , և
զեկեղեցիս նոցա կարգել ՚ի մեհեանս . ոչ հանդերձեալ էր նոցա
առնել և յՃն վրայ և այլոց աղգաց եղելոց ընդ իշխանութիւն
պարսից ։ Այլ ոչ զի անխափան յաջողեսցի այս , յղեաց պատ-
ուիրեր սա ինքն միհրներսեհ առ սերբոխտ սպարապետ պար-
սից , որ նստեր ՚ի դուռն Ձորայ ՚ի պահակի հռնայ , գնալ
յաղուձանս և օգնական լինել մուգուցն ։

Ոչ այն իբրև տեսին աղուձանք , զահի մեծի հարան . և ոչ
գիտէին , թէ զինչ արասցեն . մանդ զի ոմանք յիշեանայ նոյ
ձեռնտու եղեն պարսից . իսկ Թէրն իւրեանց վասէ քառնադա-
տեալ ՚ի յաղկերտէ՝ ընկալեալ էր զօրինս մուգութենէ , և կայր
առ Ձմկի մի արգելել ՚ի պարսս . ուստի և ՚ի վառանդի մեծի էր
բռնանդակ Ծն աղուձանից ։ Ասպա անդէն վաղվաղակի հազա-
րապետ նոյ և կաթուղիկոսն դիմեցին տազնապաբ ՚ի հայս ,
և խնդրեին օգնութենէ ։

Ոչ այս գոյժ դառնութենէ լուեալ հայոց՝ քաջալերեցին զնա .
և փութացուցին վաղվաղակի դառնալ յետս , և պատրել շո-
ղոքորթանօք և կաշառօք զզօրագլուխն պարսից և զմուգան ,
զի յամեցուսցեն զնա , մինչև կարասցեն ինքեանք օգնութենէ
հասուցանել նոյ ։ Այլ յետ այսորիկ խորհուրդ ՚ի մէջ առեալ
հայոց՝ առաքեցին ՚ի կոստանդինուպօլիս առ փոքրն Թէոդոս
զմի ոմն ՚ի մեծ նախարարաց ՚ի տոհմէ գնունեաց ատոմ ա-
նունն՝ աղգական երանելւոյն ատոմայ առաքնոյ . ընդ նմին և
զՀմայեակ մամիկոնեան զեղբայրն վարդանայ , և զվահան ա-
մատունի , և զմերհուժան արծրունի զեղբայրն աղանայ ,
հանդերձ Թղթով , յորում յիշեցուցանէին զնախնի սիրոյ հռոմ-
մայեցւոց ՚ի Ձմկէ անտի տրդատայ , և խնդրեին օգնութենէ .
խոստանալով մնանել ՚ի ծառայուն կայսեր՝ եթէ ձեռն տա-
յէ ինքեանց ։ Այս էր օրինակ Թղթոյն այս .

* Յոմէ.

* Յովհէփ եպիսկոպոս՝ բազում ենկակոծօք իմովք և ամ զօ-
,, ղջ հայոց , վասակ մարզպան , և ներշապուհ զբմբռեան՝
,, հանդերձ ապարապետաւս և ամ մեծամեծ նախարարօքս ,
,, առ մեծանուն թէոդոս կայսր՝ բազմասցն ողջոյն մեր առ
,, քեզ և ամ զօրաց քոց . Ար խաղաղասէր մարդասիրութիւ
,, ձերով տիրիք ծովու և ցամաքի . և չիք ոք յերկրաւորացս ,
,, որ ձերում անարգել հրովեթեդ ընդեմ դառնայցէ . որպէս
,, և մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանն զառաքինի
,, նախնեացդ ձերոց . ունելով զեբրոպէ՝ անցին և տիրեցին
,, և ասիայէոց կողմանցն՝ ի սահմանացն սերայ մինչև ի
,, կողմանս գադիրոնի . և ոչ ոք գտաւ ստամբակեալ և ե-
,, լեալ ըստ ձեռն նոցա : Ար յայնչափ մեծի իշխանութիւն՝
,, գաստակերտ մեծ և սիրելի գհայոց աշխարհս անուճանէին :
,, Ասան որոյ և նախնին մեր տրգատիոս յիշելով զառաջինն
,, սէրն ձեր , որ ի տղայութէ հասակին փախուցեալ ի հայ-
,, րատպան մարդախոշոշ հօրեղբարց իւրոց՝ ապրեալ անաւ
,, ի յերկրիդ յունաց , և ի ձէնջ թագաւորեցուցեալ՝ տիրեր
,, հայրենի ծիս : Այոնպէս և գհաւատան՝ որ ի քէ , ընկա-
,, լեալ ի սէր ենկակապետին հռոմոյ (կամ ի հռոմէ) , լուսաւո-
,, րեաց գնաւարապային կողմանս հիւսիսոյ . զոր և այժմ կամին
,, կորզել և հանել ի մէնջ խաւարասէր որդիքն արևելից :
,, Ար մեր ի ձեր քաջութի արութեդ խիզախեալ , էր ինչ՝
,, որ ընդեմ դարձաք նոցա հրամանաւն . և քաղում այն է՝ որ
,, արդ առաջդ պատրաստեալ եմք : Ընտրեցաք զմեզ ամ-
,, պաշտութէ՝ քան գկեանս ուրացութէ : Ար եթէ գուք ևս
,, ի ձեռն առջիք զմեզ , ահա կրկին կենաց հանդիպեցաք ,
,, և մնոյ՝ և ոչ միանգամ : Ար եթէ սակաւիկ մի հեղգայք ,
,, գուցէ և այլոց աշխարհաց բազմաց հասանիցէ տապ բո-
,, ցոյ սորա ‖ :

Այսու նամակաւ յղեալ հայոց զդեսպանն՝ պատուէրն ետուն նոցա , զի ատեմ՝ և հմայեակ կայցեն մնասցեն ի թիւրական քաղաքին , մինչև ի գլուխ տանիլ զկերան . իսկ վահան և մերոյժան գնասցեն յետոյ իբր դեսպանս առ մեծամեծ նախարարս հայոց , որք էին ընդ ձորուբէ կայսեր ի մնան բաժնի յունաց . առ որս գրեալ էին և թուղթս , աղաչելով զնա գալ ի միաբանութէն իւրեանց , և վանել զթշնամիս հաւատոյ յաշխարհէ անտի , և ի կողմանցն աղուձանից , և մի անփոյթ լինել ընդ աւերութէն եկեղեցեացն քոյ :

Ար . Այլ քանզի կարճութէն առաջիկայ ժամանակին ոչ ներեր սպասել դարձի սոցա և օգնութէն յունաց , վարանէին ի միտս . և հայեցեալ ի սակաւութէն զօրաց իւրեանց առ բազմութէն թշնամեացն՝ տարակուսէին : Այլ սպասխնեալ

յաւծ՝ ասէին. * դիւրին ե՞ւ այ սակաւուք զբազմաց գործ
,, գործել, և անարգօք զմեծամեծ իրս կատարել ‖: Ա՛պա
Համագունդ՝ ի մի վայր ժողովեալ նախարարացն՝ զամ զօրս
իւրեանց յերիս գունդս բաժանեցին: Ո՛ գունդն առաջին
ետուն՝ ի ձեռս ուրմբասեան ներշապհոյ մեծի նախարարի
արծրունեաց, որ և զմարզպետութեանն ունէր պատիւ. զի գնա-
ցեալ՝ ի կողմանս ատրպատական՝ կացցէ պահապան ընդ-
դէմ պարսից: Ո՛ գունդն երկրորդ ետուն՝ ի ձեռս վարդա-
նայ ապարապետին. զի անցեալ ընդ սահմանս վրաց՝ գնասցէ
յաղուանս՝ ի վերայ սերբոխտայ սպարապետի կողմանցն ձորայ:
Ա՛ն եկին ընդ վարդանայ, խորէն խորխոռունի. արշաւիր կամ-
սարական՝ փեսայ նորին վարդանայ. Թաթուլ դիմաքսեան.
Հմայեակ դիմաքսեան, և մուշ դիմաքսեան. արտակ պա-
լունի. և այլ տանուտեարք և սեպուհք. և բազումք՝ ի քա-
ջացն Հայոց. որք լինքնայօժար փութով տենչային լինել վնդ-
խնդիր ուխտի սէր եկեղեցւոյ, և տալ զանձինս՝ ի մահ՝ ի
վերայ Աշմարիտ Հաւատոցն: Որոց միաբան մտեալ յեկեղեցի՝
յանձն արարին զանձինս՝ ի ձեռս այ. և առեալ զսէր խաչն և
զաւետարանն՝ համբուրեին ջերմեռանդն փափաքանօք և սր-
տասուքօք, և դնեին՝ ի վէր աչաց և ձակատու իւրեանց, մնէնդ
երանելին վարդան. և ելեալ անտի՝ դնային ուրախութիբ ընդ-
դէմ թշնամեացն:

Իսկ զգունդն երրորդ ետուն՝ ի ձեռս վասակայ իշխանին սիւ-
նեաց, վտահացեալ՝ ի բանս նր. զի կացցէ յՀայոց՝ ի
պահպանութիբ զգուշանե: Այլ սակայն նա թէպետև երդ-
ուեալ էր յաւետարանն՝ հաստատուն մնալ յուխտին քրիս-
տոնէից, բայց՝ ի ներքուստ կապեալ գոլով յօրէնս պարսից՝
առ ակնկալուբն անցաւոր փառաց, յընտրելն զնախարարս և
զգօրս իւրաքանչիւր գնդից՝ հաւ յինքն զայնոսիկ, զորոց ըզ-
ԹաղուԹիբ հաւատոյն գիտեր. զիշխանն բագրատունեաց
տիրոց կիմտիրան անուն՝ զօրօք իւրովք. զիշխանն խորխոռու-
նեաց գադիշոյ՝ զօրօք իւրովք. զիշխանն ապահունեաց մամկէ
զօրօք իւրովք. զիշխանն վահեւունեաց գունտ կիմ գիւտ՝ զօ-
րօք իւրովք. զիշխանն ամատունեաց մանաձիհր՝ զօրօք իւ-
րովք. զիշխանն պալունեաց վարաշապուհ՝ զօրօք իւրովք.
զիշխանն դաբեղենից արաւեն՝ զօրօք իւրովք. զիշխանն ռշ-
տունեաց արտակ՝ զօրօք իւրովք. զիշխանն ակհոյ ընձուղ.
զիշխանն ուրծայ ներսեհ. զսեպուհն ամատունեաց մանէն
անուն. և զայլ իշխանս և սեպուհս յոստանիկ տանէ և յայ-
լոց տոհմից:

Ա՛պա՝ ի չուել անդ ներշապհոյ՝ ի կողմանս ատրպատականի,
և քաջին վարդանայ՝ ի կողմանս աղուանից, անօրէնն վասակ

Ա՛ղէքս. գլ. ք. և ը: Վաչագեայ:

Ա՛ղէքս. 450

վաղվաղակի ի ծածուկ դեսպանս առաքեաց առ միհրներսէհ, և ծանոյց նմա զնա՝ զոր ունէր ի սրտի։ Ոչ ետուն և առ նիխորականն սեբոխտ սպարապետ, և ասէ. զչորս հայոց քայքայեալ՝ յերիս բաժանեցի. և ահա վարդան գայ ի վրէ քո սակաւ ջորւոջ. ել ընդառաջ նմա, զի կարես յաղթել նմա. և յետ նուաճելոյ քո զաղուձանն՝ ելի և մնաս յաջս հայոց. և ես եղէց քեզ ձեռնտու և օգնական հանդերձ գնդաւս։ Ո՛վ այս իբրև լուաւ սեբոխտ, աճապարեաց անցանել ընդ կուր գետ, և խաղալ ի կողմանս վրաց, և սպասել անդ. զի ի գալ վարդանայ՝ ի դիմի հարցին նմա։

Եւ եղև ի հասանել մեծի գնդին սեբոխտայ ի դաշտ ընդարձակ ի սահմանս ուտէացւոց և աղուանից հանդիպ խաղխաղ քաղաքի, եհաս անդ և քաջն վարդան զօրօք իւրովք։ Եւ տեսեալ զայնչափ բազմութեն զօրացն պարսից՝ ոչինչ զարհուրեցաւ. այլ քաջալերել յորդորեաց զիւրսն յաղթել կալ, և յաճախ միայն ապաւինիլ։ Եւ բաժանեալ զզօրսն յերիս առաջն՝ զաջ թևն ետ ի ձեռս կամսարականին արշաւրայ, և նիզակակից նմին զմուշ դիմաքսեան. և զահեակն ետ խորենայ խորխոռունւոյ, և զօրավիգն նմա զՀմայեակ դիմաքսեան. և ինքն իւրովք թիկնապահօքն պատրաստեր ի միջոյ յարձակիլ։

Եւ իբրև այսպէս կարգեցաւ ձակատն, միաբան և միակամ խրախուսեալք առ ՚ի՛ն, ասեն. եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զմեզ ՚ի՛ն. զի ոչ վ՚ն մեր ինչ մտեալ եմք ՚ի գործ պատերազմիս, այլ՝ վ՚ն փառաց անուանն քո, և վ՚ն եկեղեցւոյ սրբոյ քոյ։ Զ արժեաւ և դուցաւ ՚ի՛ն զգուշադագունդ բազմութենէ ահաւորինացդ այդոցիկ. ցրուեա՛ և վանեա՛ զհակառակորդս սրբոյ հաւատոյս մերոյ զօրութե՛ փրկական խաչին քո. և տուր ՚ի ձեռն սակաւուցս զքաջութի՛ յաղթութե՛ն ընդեմ բազմութե՛ն ամբոխիդ։ Ո՛վ այս ասացեալ՝ յարձակեցան ՚ի վերայ թշնամեացն, և հարին զսաստաջամարտիկս նոցա։

Ընդ նախապրաւ յառաջեալ ՚ի յաջոյ արշաւիր կամսարականն և մուշ դիմաքսեան, առ ՚ի յուժգին արշաւելոյ երիվարացն՝ անտեղեակ գոլով և վայրացն՝ անկան երկոքին ՚ի տղմուտ տեղիս, և խրեցան երիվարք նոցա։ Ո՛ր տեսեալ ոմանց ՚ի թշնամեացն ՚ի հանդիպոյ, որք էին ՚ի լմնաց և ՚ի քաղաքականաց յարելոց ՚ի զօրս սեբոխտայ, սկսան տեղալ վնետս ՚ի վե՛ր նո՛ց. յորոց առ ՚ի մահ վիրաւորեալ երանելին մուշ՝ անդէն կատարեցաւ։ Իսկ արշաւիրայ զօրացեալ էջ յերիվարէն. և խրեալ ինքնին ՚ի տիղմն՝ խլեցաւ զերիվարն ՚ի յետուստ՝ ոստնուլ ՚ի վեր և ընթանալ. և թէպէտ իբրև զտարափ անձրևոյ հոսէին նետք և նիզակք ՚ի վե՛ր նո՛ր, քայց

Նա զամանս յայնցանէ վահանաւն վաներ ՚ի քաց , և զոմանս յօդոյ յաւիշտակեալ ՚ի թշնամին արձակեր · միանգամայն և զերիվարն ՚ի ցամաք կոյս մղեր · ուր և մնայ մի նի (ոյ միւս ՚ի վերատուր կօշկացն) թաղեալ մնաց ՚ի տղմի ։

Տեսեալ ապա՝ թէ վտանգ է նմա յամել անդէն , եթող զերիվարն , և դիմեաց հետիոտս միամիտ և աղմաթաթաւ ՚ի վէր թշնամեաց՝ առիւծօրէն գոչելով · և վարազաբար յարձակէր եհաս յիշխանն վրդի՝ որ էր եղբայր թագաւորին լինաց · եհար և սատակեաց զնա , ել նմին և զբազմութիւն ՚ի թիկնապահից նր · և վանեաց զամբոխն յառաջոյ իւրմէ · և ապա փութանակի հանեալ ՚ի ցամաք զերիվար իւր , և հեծեալ ՚ի նա՝ խաղաց անվեհեր քաջութիւ ՚ի վէր յանդիմանակաց թշնամեացն · և արծուիօրէն խոյացեալ յերասն նոցա՝ զողացողց և զարհուրեցոյց զամենեսեան զնա ։

Ընդ որ զարմացեալ նախարարացն հայոց՝ որք ՚ի միւս կողմանէ պատերազմէին , առաւել ևս սաստկացուցին զհարուածան · և զի ՚ի սաստկանալ մարտին՝ սուր քաջին վարդանայ էրկև գերանդի հնձելով՝ զբազմութի ՚ի թշնամեացն զմիմեամբք յերկիր առապալեր , զայն սեսեալ նոցա՝ լուծան և լքան · ել որս տագնապեալ և բուն քանակին սեբոխտաց՝ զատան և անցին յայնկոյս , և փախուցեալ անկան ՚ի պահակին հոնաց ։ Իսկ զինացեալ ամբոխ բազմութե զբոյն հարին հայք ՚ի բերան սրոյ · և զպլչն վարեցին տագնապաւ մինչև յափն լոբնաս կի՝ լբնաս գետոյ ։ Ուր յաձապարել նց անցանել ել գետն՝ ոմանք նաւակաւ և ոմանք լուղելով , ձայն եհաս մեծն վարդան քաջին արշաւոյ զհետ սլտիլ նց իւթայովքն , վատահայեալ յանվրէպ յաջողուած նետաձգութե ձեռինն , ել ասելոյ փարպեցւոյն ։

Ուր նր հասել մօտ հանդերձ նիզակակցօքն , և նետաձիգ լինել ՚ի նաւս թշնամեացն՝ դխաճասալ ՚ի գետ անդր թափեալ զինն · և զմա՛ զբուղորդան ել նմին օրինակի խոցոտեալ հեղձամահ կորոյս · մինչև ել ասելոյ եղիշէի *յուլագոյն այն էր՝ զոր ,, (նա՝ և ընկերք նր) գետամոյնս առնէին , ել զանկեալսն սրով ,, ՚ի ցամաքի · և ՚ի քաղմութե դիականցն անկելոց՝ յատակ ,, ջուրք գետոյն յարիւն դառնային ։ Ուր և ոչ ապրեր ոք ՚ի նոցէ , բայց մի ոմն միայն , որ էանոյ երիվարաւ յայնկոյս գետոյն , և փախուցեալ անկաւ մեզապուրծ ՚ի պահակին հոնաց ։ Յայնմ մարտի յառաջին յարձակմանն զազրիկ դիմաքեան այր քաջ վիրաւորեալ էր՝ և կայր անկեալ ՚ի մէջ դիականց թշնամեացն · որոյ տեսեալ զզօրանալ հայոց՝ զօրացաւ և ինքն ՚ի յոտի իւր · և սպառեալ ինքնին զվէրսն՝ վերծաւ ՚ի տեղւն անքոյթ , և եկն յետոյ առ իւրեան ։

Վարդ

Ա.Մ. 450 Ա.Մ. 450

Վարձ արարեալ ապա զօրացն Հայոց՝ յաւարէն առնլոյն զկա-
ռուստ կողոպուտ անկէլոյն . և դադարեցին անդէն զայն օր .
և ի վաղիւնն չուեալք՝ անցին ընդ դէտն կուր . և մնեալ յայն
աղօճանից՝ կոտորեցին զամ պարսիկս և զմնացս՝ որք անդ
էին . և սրբեցին զամ տեղիս , զորս պղծեալ էին նք զոհիւք
իւրեանց . և զերծուցին զձն ի ձեռաց նց : Իբրև զայս լը-
ուան նախարարքն և շինականք աղօճանից բղէնք , որք ցրուեալ
էին ի լերինս , եկին հասին անդր . և տեսեալ զպաշտօնեայն
գործոյն՝ զոր արարին Հայք , գոհացան զնմ . և ինքեանք ևս
խառնեցան ի նս՝ պատերազմիլ ընդ սմանէ հաւատոյ ընդէմ պարսից ,
որք կամէին խախտել զնս ի սէր կրօնից իւրեանց :

Իսկ ապա առ հասարակ յաճախ ապաւինեալ՝ խաղային ի դուռն
Ձորայ , որ հանդէր յայն ալանաց և հնաց . ուր և նստէր բա-
նակ գնդի զօրացն պարսից և այլ զօրք ի պահպանութիւն տեղ-
ւոյն , և բազմութիւնք ռամկաց ոչ սակաւ : Կոտորեցին անդ
զամ պարսիկս , և քանդեցին զամ շինուածս նց , և տապա-
լեցին զպահակն մեծ զձեռակերտն յաղկերտի . և անտի դես-
պան արձակէր առ Թէոդոս ալանաց և հնաց զվահան անուն
ոմն , որ էր յազգէ Թէոդոսի աղօճանից , խնդրեցին հաստա-
տել ուխտ խաղաղութիւն ի մէջ իւրեանց :

Ո՛ այսպիսի լուր առեալ նց՝ վաղվաղակի եկին անդր . և տե-
սեալ զգործն՝ զոր գործեցին Հայք , ուրախ եղեն յոյժ . և
երդմամբ ուխտ եդին ընդ նս ըստ իւրեանց հեթանոսական օրի-
նի՝ հաստատուն պահել զմիաբանութիւն ի մէջ իւրեանց : Ապրե
եղիշէ , ընդ նմին և զաղաւ փարպեցի , թէ յայս ամ պատերազ-
մունս ոչ ոք մեռաւ ի Հայոց , բայց միայն մուշ դիմաքսեան
խրեալ ի տղմուտն :

Յ. Այլ մինչդեռ զօրքն Հայոց ի գործս քաջութիւն զբա-
ղեալ կային , անօրէնն վասակ խոպաւ յետս կացեալ ի քրիս-
տոնէութենէ՝ ինքն և որք ընդ իւր միաբանեալ էին , բազում չա-
րիս գործեաց յՀայոց . աւերեաց զբազում տեղիս , և
հրձիգ արար զբազում քաղաքս այրարատոյ , յորս ջերմագոյն
պաշտէին զՀնոմս քրէ . յարիշտակեաց զբազում բերդս ի ձե-
ռաց Հաւատառիմ պահապանաց , և ինքն եդ ի նս յիւրոց ան-
տի պահապանս . կալաւ զորդիս տոհմին մամիկոնէից և կամ-
սարականաց և այլոց նախարարաց միաբանելոց ընդ վարդա-
նայ , և ետ պահել զնս յամուր բերդս Ձիւն սիւնեաց : Կալաւ
և զերկոսին եղբօրորդիս իւր , և ետ վարել ի սահաստան
յանդարձ օտարութիւն : Այլ ի վեր այսր ամի չարեալ գրել քա-
ղաքս սահապատիր Թուղթս առ իշխանս յունաց և այլոց ազ-
գաց , և պատրեաց զնս՝ առ անկասկած կալոյ ի խնամն չա-
րութիւնէ իւրոյ :

Ա[ն]ձակեաց և դեռսանս հաւանութիւն համախոհից իւրոց առ միմեանս եկն և առ այլ իշխանս պարսից , և ծանոյց նոցա , զոր արար . և եդ ուխտ հաստատութիւն թողուլ զօրինս քրիստոնէութեան իսպառ , և կանգնել զմեհեանս , և պաշտել՝ի նմա զարև և զհուր ։ Այս ապա ձեռն էարկ յեկեղեցիս սըբս , և էառ զսպաս սուրբ սեղանոյ . կալաւ զբահանայս , և եդ՝ի բանտի . և զբռնութեամբ միայնակեացս հալածեաց յՀայս . և առաքատակ սփռեալ յամենայն տեղիս արտաքոյ այրարատեան՝ եւս կանգնել սեղան պաշտամանց արեգական և հրոյ ։ Յայսպիսի չար գործս ուրացելոցն Թէպետև ոչ միաբանեցան՝ի սկզբան անդ արտակ ըղձութեան , լինձուղ ակեղ , ներսէհ ուրծայ , և մանկն սեպուհ ամատունեաց . բայց յետոյ նոքին ևս եղեն կամակից , բաց՝ի գիւտայ վահեւունւոյ ։

Իբրև եհաս լուր այսր ամի յականջս վարդանայ , և զօրացն՝ որք ընդ նմա , Թէպետև տրտմեցոյց զնա , բայց յոյս նշոյ՝ զոր ունէին առ Աստ՝ քաջալերեաց զսիրտս նոցա ։ Այլ նովին յուսով զօրացեալ՝ի նոր՝ ասէն . ահա առեալ հեծանոց՝ի ձեռս փըղկիչն աւրհնեա քո՝ սրբե զկաղ իւր , ընտրել զհատս ցորենոյ՝ և ժողովել՝ի շտեմարանս արքայութե , և զյարդն մատնել անշէջ բոցոյն . եղիցուք մեք ցորենահատք սրբեալք , և ցանկութիւն սպասեացուք աւուր նահատակութե մերոյ . յորում եթէ արժանի եղեալ՝ դիպեացուք մասին սըբոյ , վախձան մեր քաղցր՝ զմեզ պահել ։

Զայս ասացեալ՝ չոքեցին և ելին միաբան յՀայոց աղուհանից , և գայթին փութով յՀայոց յամենեանն տրէ , այն է նոյեմբեր , աճեալ ընդ իւրեանս աւար բազմ յոյժ ։ Իսկ անօրէնն վասակ , և իշխանքն՝ որք ընդ նմա , լուեալ զգալուստ նոցա՝ զահի հարան յոյժ . և անդադարեալ անկան յՀայս սիւնեաց . և առ քաղաքաւ նոցա՝ զարս և զհանայս՝ աճին ստիպաւ յարարատեան ձոր . և տիրեցին աւրոցայն , զոր առեալ էր վասակայ , և բնակեաց նոր . և սրբեցին զեկեղեցիսն . և ոչընդ առեալ լայնին՝ի վեր գործոց նոցա . այլ գոհանային և զնոյն , որ յաջողեաց ինքեանց վանել զթշնամին յՀայոց իւրեանց , և նորոգել զեկեղեցիս . և զի եհաս՝ի վեր ձմեռն , հանգեան ասկաւարիկ մի ։

Ընդ ամ 450

Յայնմ ժամանակի լուր եհաս առ նա, թէ յաղկեդոն դարձեալ է ի պատերազմ ելուզակութեանն հմնաց, և թէ լուեալ զայս զոր գործեցին հայք, զորթոքեալ է բարկութեամբ յոյժ. և է ի պատրաստի գալոյ և հարկանելոյ զնա ի սկիզբն գարնանայնոյ: Ո՞ այս իբրև լուան նոքա, ինքեանք ևս ըստ յորդորելոյ քաջին վարդանայ զհետ լինելին պատրաստութեամբ՝ ապաւինել յօգնութեան նորա. և ամբերին ծարաւեալ փութաքեին աւուր նահատակութեանն իւրեանց. և ոչ ոք ի նոցանէ այնուհետև ածէր ինչ զմտաւ վասն յաղթութեան կամ պարտելոյ ի թշնամեացն. այլ՝ յանկայնին միայն փրկութեանն բաժակին, դնելով զանձինս ի վերայ անսուանն քրիստոսի և եկեղեցւոյ նոցա:

Յայնժամ և սբեն յովսէփ կաթուղիկոս քաջալերեալ զանձին ընդ, պատուէրն ետ, զի զայն ամիս մինչև ի ածանն յայտնութեան պահօք և աղօթիւք խնդրեսցեն յնոյ զայցելութեան. և ի ածանի յայտնութեանն կատարեսցեն զհանդէս շնորհակալութեան վասն յաջողութեան իրացն, որք եղեն ի ձեռս նոցա: Եւ այս եղև ի վախճան երկոտասաներորդ ամի թագաւորութեանն յաղկերտի, յառաջնում աւուր քաղոց ամսոյն, այն է դեկտեմբերի ինն. յամի շն. 450:

Գ Լ Ո Ւ Խ Զ:

Յաշակց դարձի գերապանցն հայոց. և նենգաւորութեանց ի գրոհել զինաբանութեանն հայոց, և առաւելոյ ջօրօք զինդնեզ սէհ ի վէր նոցա. և փոքիոյ ջորնն վաստակ:

(1) Եսպանք հայոց, որ է ատուիմ գնաւնի, և հմայեակ մամիկոնեան, և ընկերք նոյ, որք առաքեցան ի կոստանդինուպոլիս յամենանն յունիսի ի նոյն ամի. 450. ըստ որում առացաք ի վերոյ, իբրև հասին անդր, յանդիման լեալ մեծի կայսերն ընդերցան առաջի նորա ըստ թուղթն գրեալ յեպիսկոպոսէ և ի նախարարացն հայոց. և յիշեցուցին նմա զուխտ դաշինն սիրոյ, որ եդեալ էր ի մէջ երկուց աղգացս առ կոստանդիանոսիւ: Ո՞ որ լուեալ թէոդոսի՝ հրամայեաց յուզել ի յիշատակարանս և ի մատեանս նախնեաց. յորս և գտին գնոյն ուխտ հաստատութեանն: Որոյ վն խորհուրդ սրարեալ թէոդոսի ըստ մարկիանոսի, որ ընկալեալ էր զպատիւ կեսարութեանն, հաձեցաւ ձեռն տալ նմ. քայց քզի ի նմին իսկ ժամանակի, յամի շն, 450. ի վերջին աւուրս ամենանն յունիսի վճարեցաւ ի կենաց նա ինքն փոքրն թէոդոս, խաղաղասիրեցաւ յօգնելոյ հայոց:

Կղէշ. գ:
Փարպեցի:

Իսկ Մարկիանոս՝ որ յաջորդեաց նմա ՚ի կայսերութեան, (Մ
450
հայելով յաւետ ՚ի հանդիստ իւր քան ՚ի պաշտպանութեն ե-
կեղեցւոյ՝ չկամեցաւ բնաւ օգնել, արգելեալ ՚ի ընչին պատ-
ճառաց · իբր թէ վրդովեալ էին քաղաքն ՚ի նորոգ ծագեալ
հերետիկոսութենէ եւտիքեայ ։ Այլ առաւել ևս խոտիան ե-
ղև օգնականութենե նր անատոլիոս զօրավար արևելեան՝ որ և
վերակացու էր կարգեալ անտիոքայ · քանզի սա յամ կողմանց
արգելս եդ ՚ի միջի, և պաշարեաց զկաման նր · զի որովհետև
միաւորդութենէ իւրով եդեալ էր դաշն խաղաղութեն ՚ի մէջ
պարսից և յունաց, ոչ կամէր ձեռն տալով ՚ի հայս՝ զդաշն խախ-
տել · զի զարհուրեալ էր յերեսաց յաղկերտի ։ Նա դրձել կաս-
կածէր, թէ յօգնել իւրեանց՝ գուցէ և այն հայք՝ որք էին ՚ի
մասն քաժնի յունաց, միաբանեացին ընդ նմա, քան ընդ հայս՝ որ ՚ի
քաժնին պարսից, և եղցեն յինքնանութենէ յունաց ։ Զհայս խոր-
հուրդ անատոլեայ ձեռնտու եղև և այլ չարադրդիւ ոմն յա-
սորի ազգէ եփեսրիոս կիճ փլորենտոս անուն՝ երևելի ՚ի դրան
արքունի ։ Որով և մարկիանոս ոչ միայն խոպան հրաժարե-
ցաւ յօգնական լինելոյ հայոց, այլև առ աներկիւղ մնալոյ ՚ի
յաղկերտէ՝ առաքեաց առ նա դեսպան խաղաղութեն զնոյն
ինքն պեփլարիոս, ցուցեալ նմա՝ թէ ինքն բարեկամութեն ե
ընդ պարսիկս, և չունի ինչ ընդ հայս՝ որ ՚ի քաժնին պարսից ։
Զայսպիսի միտս տեսեալ հրեշտակացն հայոց պյոյնս՝ խորհեցան
դառնալ յետս ՚ի հայս · քայց ընդ ամն ունէին հաւանեցու-
ցանել գնոսն զոմանս ՚ի հայոց՝ որք էին ՚ի մասն քաժնի յու-
նաց, սիրելեան յայլևայլ նախարարուիս ՚ձին այնորիկ՝ խնդ-
րել օգնութենէ՝ ընդ յանձնելոյ վարդանանց · այլ ատովմ գնու-
նի փութացեալ դարձ արար ՚ի մեծն հայս · և եհաս անդ
յայնմ աւուր, յորում նորոգ դարձեալ էին վարդանանքն յա-
ջողութենէ մեծաւ ՚ի կողմանցն ազուանից ։ Որք և լուեալ յա-
տովմայ, թէ ոչ կամին յոյնք օգնել ինքեանց, ոչինչ զարամե-
ցան, և ոչ իսկ խորհուրդ առեալ ետանց ՚ի միտս նր · այլ
մնանդ իբրև ձշմարիտ բարեկամ և սիրելիս համարելով զինք՝
դրեցին անդրէն թուղթ առ կայսրն և առ ուխտ եկեղեցւոյն
կոստանդինուպոլսոյ · և ծանուցին նմ զամն անցս՝ որք անցին
ընդ ինքեանս ընդ յաջողելոյ նմա · և խնդրէին ՚ի նմանէ փոխանակ
մարմնաւոր նպաստից զհոգևորն, այն զաղօթս վասն պահպա-
նութենէ եկեղեցւոյ, և զօգնականութենէն գոյանելոյ յայն · զի
* ան՝ ոչխարքս ասեն՝ ՚ի նմին և կատարեսցուք ։
Իսկ վահան ամենայնի չորքաւ յայն աղէնեալ · և ոչ կարա-
ցեալ հաւանեցուցանել զմեծ բդեշխն նմ ՚ի միաբանութենէն ի-
րեանց, դարձաւ յետս ուրեմն ։ Նոյնպէս և հմայեակ եղ-
բայրն վարդանայ և մերհուժան արծրունի՝ չկրցեալ աստ և

անդ

անդ ի բաժնին յունաց՝ թէպէտև ջանացան շահիլ զհայս եւ
450 ղեալս անդ , այլ հարի նոքաղունս . և այս յաւէտ ի սադրե-
ղոյ չարին վասակայ ծածուկ պատգամաւորութիւք . և սակայն
ակն ունելով նոցա առ սակաւ սակաւ զբիշմն շահիլ՝ յամեցին
անդ գրեթէ տարի մի . որպէս յայտնի երևի ի բանից գա-
զարու փարպեցւոյ ։

451 Ե . Ի սկ նախարարքն հայոց , և միաբանեալքն ընդ նմա , յետ
վհատելոց զամին քաղաց պահօք և աղօթիւք՝ սկսան պատրաս-
տիլ ի գործ պատերազմի ընդդէմ պարսից ։ Այլ սակայն սիրտք
նոքա հանապազ ձմլեալ մաշէին ի վէր հայոց եղելոց յԱրին պար-
սից . զի նոքա անդէն ի տառապանս էին . և եթէ տեսա ի կռիւ
մտանելին ընդ յաղկերտ , նա առաւել ևս տայր տառապեցու-
ցանել զնոսա ։ Ամին իրի խորհեցաւ քաջն վարդան առնել զայս-
պիսի ինչ . հրամայեաց լուծանել զմի ումն յերևելեաց անտէ
ի պարսից , զորս կապեալ և արգելեալ ունէին , և ածել ա-
ռաջի նախարարացն ։

Եւ իբրև քերին զնա անդ , խօսեցաւ ընդ նմա քաջութեամբ ինչ .
և յայտնի եղոյց նմա , թէ այս ամ ինքաք՝ որք գործեցան ընդ-
դէմ թագաւորին , եղեն վտ ի զուր նեղելոյ նոր զհայս , և վտ
ուրացուցանել քաջմոց , և առաւել ևս վտ անօրինութիւն ուրա-
ցելոյն վասակայ ։ Եւ իբրև յայտնի արար նմ զայս ամ , ա-
ռաքեաց զնա հրեշտակութիւք առ յաղկերտ յաղերս աղաչա-
նաց՝ խնդրելով ի նմանէ ներել ամի , զոր արարեալ էր նոցա
ընդդէմ նորա , և գթութիւք վարել ընդ նմա . և խոստացաւ արտ
մտօք ծառայել նմ այնուհետև , և տալ հարկս անվրէպ . միայն
թէ ոչ ևս կամիցի խախտել զնա ի հաստատից ։

Վտաքեալ առն ի ձմերոց արքունի՝ պատմեաց յականջս յաղ-
կերտի զնմ , զոր լուեալ ի վարդանայ և ի նախարարացն ,
յայտ արարեն նմա միանգամայն՝ թէ ինքն եկեալ է վտ ապա-
տէղոյ զնա ։ Իբրև լուեալ զայս յաղկերտ , զինքս փոքր մի յամ-
քարտաւանութիւն իւրմէ . և երկուցեալ , թէ գուցէ ի պատե-
րազմիլ իւր ընդ հայս՝ յաղթեալ ի նոցանէ , յամօթ լինի առա-
ջի ամ ազգաց , խորհեցաւ նենդութիւք կատարել զկամս իւր .
վտ հրամայեաց ի վերին երեսս , զի ոմ ոք և կայցէ ի քրիս-
տոնէից յԱրին պարսից , հաւանեցուսցէ զօրինս քրիստո-
նէութեան . և եթէ իցէ ոք ի նոցանէ ի կապանս , արձակեալ լի-
նի . և ոյր ուրուք ինչք կամ առաջաւածք յափշտակեալ իցեն ,
դարձցին ոմնդրին . և եթէ ոք ակամայ ուրացեալ իցէ զհա-
ւատս , աներկիւղ դարձցի ի նոյն . և քահանայք անխափան
լինիցին ի պաշտամանց իւրեանց ։

Օ՜ սոյն պատուէրք գրեաց և առաքեաց յԱրին տէրութիւնն իւրոյ , և
առ ամ ազգս քրիստոնէից եղելոց ընդ իշխանութիւն իւրով . և մաս

նաւորապէս առ Հայս՝ հաստատեալ առաւ երդմամբ զուխտ
խաղաղութեան ընդ նմա . զի մարթասցի քակտել զմիաբանութիւն նոցա ,
և զնմանին անհոգս առնել . ոչ զի յանկարծակի որսասցի ըզ-
նոսա , և զբեռին գառնուն սրտի իւրոյ թափեսցէ 'ի նմա ։ Իսկ
առ անկասկած մնալոյ 'ի յուսոց՝ արձակեաց դեսպան առ մար
կիանոս կայսր՝ հաստատուն պահել զդաշն խաղաղութեան . և ինքն
առաւել ևս ատուհարացոյց զգունդս զօրաց իւրոց ։

Ե. Յորժամ առին Հայք միաբանեալք զԹուղթ Թագաւո-
րին , որ 'ի վերին երեսս ունէր զաւետիս կենաց , և 'ի ներքոյ
զդաւանութիւն մահու , յայտնապէս ծանեան 'ի բազմնշանաց և 'ի
խօսից , եւս և յաղդարարուէ ոմանց՝ զխաբէութիւն նենգութեանն
նոր . և ամենևին ոչ հաւանեցան նմա , և ոչ հաւատացին բա-
րեացն՝ զորս խոստանայր նոցա . * Այլ ինքն իւր չար է ասէն , այ-
,, լևս մեծ ոչ կարէ լինել . և որ ինքն ընդ խաւար գնայ ,
,, այլևս ոչ առաջնորդէ ձշմարտութեամբ լուսով . (վ'ա զի) որպէս
,, չինք յանխրատուէ արդարութի , և 'ի ստուէ ձշմարտութիւն ,
,, ոչինպէս և ոչ 'ի խռովասէր մտաց ակնկալութի խաղաղութիւն ։
,, Այլ մեք ասեն ապրեալքս զօրութենն այլ , և հաստատեալքս
,, 'ի յոյսն քո . . . ոչ պատրիմք իբրև զտղայս , և ոչ մոլորիմք
,, իբրև զանտեղեակս , և ոչ խաբիմք իբրև զգետս . այլ
,, պատրաստ եմք ամ փորձութեանց և մահու 'ի վերայ եկեղեց-
,, ւոյ սրբոյ ։

Այս ասպա հաստատեցին 'ի մէջ իւրեանց , և ասեն . եթէ Թու-
լասցուք՝ յորմէ սկսաքս , թէև կարասցուք մեք կեալ , բայց
եկեղեցիք մեր մատնեսցին 'ի ձեռս հեթանոսաց , և ազգ մեր
դառնայցեն յօրէնս անիծուածոց . և զի պիտոյ է մեզ այսպիսի
կեանք . մեռցո՛ւք ապա վ'ա քան , և կեցցո՛ւք ընդ նմա . ելցո՛ւք
'ի վէր անիծից , և փրկեսցուք զեկեղեցիս քան 'ի ձեռաց նոցա . մի
երկիցուք 'ի ժամանակաւոր մահուանէ , զի մի մահն յաւիտե-
նական հասցէ մեզ և որդւոց մերոց ։

Օ այս այսպէս հաստատեալ 'ի մէջ իւրեանց՝ սկսան առաւե-
լապէս հոգ տանիլ միաբան կալոյ ։ Այլ քանզի հասեալ էին
յայնժամ աւուրք զատկի , հրամայեաց վարդան , զի երթեալ
իւրաքանչիւրոք 'ի տունս՝ ուրախասցին ընդ ընտանիս իւրեանց ընդ
հոգւոյ և ընդ մարմնոյ , միանգամայն և պատրաստեսցեն զան-
ձինս 'ի զենումն մարտիրոսուէ՝ 'ի վանելն զԹշնամիս վ'ա 'ի քն
հաւատոց ։

Ե. Իբրև ետես յազկերտ , թէ հայք ոչ հաւատացին նենգ-
դաւպատիր բանից իւրոց , և կան ևս միաբան , վերացոյց զա-
ռաքաստ խաբէութեն , և յայտնի արար զծածուկս սրտի իւրոյ ։
Այլեաց զմիհրներսեհ զհրամանատար տիրութե իւրոյ . և ետ
'ի ձեռս նր զամ զօրս պարսից , և զերամակս ամենի փղաց ,

Ա.մխ. 451 Ա.մխ. 451

խաղալ ամ՛ զօրութ՛ի վէր հայոց միաբանելոց ընդ վարդանայ , և մաշել զանձինն ՛ի տուր տուսերի։ Այլ նոր ելեալ անհամար բազմութ՛ յՅէն պարսից , ՛ի վերջ ամենեցուն մեհեկի , այն է ակիզբն մարտի , եկն մօտ ՛ի սահմանս հայոց յաշխարհն փայտակարան յամենեցունց ահեկանի , այն է ասպրիլ . և եմուտ ՛ի քաղաքն՝ որ յանուն Ձին կոչի փայտակարան . և սիրեաց զգօրսն շուրջ զքաղաքաւ ՛ի զգուշութ՛ի պահպանութ՛ե , և ՛ի փոյթ մեծի պատրաստուե ։

Ընդ յղեալ կոչեաց առ ինքն զուրացեալն վասակ . և խօսեցեալ ընդ նմա՝ խոստացաւ մեծամեծս . և ըստ ասելոյ եղիչէի՝ առաջի եդ նմա * իշխանուե աւելի քան զոր ունէրն . և հայեցաւ ,, ցոյց գնա ՛ի կարծիս մնոտիս , որ ՛ի վեր էր քան զիւր ՚ի ,, թին . իբրեւ թէ տացէ նմա հասանել մինչև ՛ի թագաւոր ,, ական վիճակն ‖ , եթէ հնարեսցէ քակտել զհաստատուն միաբանութ՛ենն հայոց ։ Այլ նոր յանձն առեալ զայս՝ դարձաւ յիւր ՛ի սիւնիս . և զբազումս ՛ի մեծամեծաց և ՛ի ռամկաց որոց յիւր կոչեն . և գտեալ զերկուս առաւ երիցուն . որոց անուանք էին զանազակ , և պետրոս՝ երկաթի ասացեալ . և զերկուս սարկաւագունս . որոց մին կոչիւր սահակ ձայնօղ , և միւսն մուշի , առաքեաց զնա յայլևայլ կողմանս Ձին հայոց , և առ միաբանեալս ընդ վարդանայ ՛ի տունս տունս . և ծանր ծանր երդմամբ ցուցաներ նոյ , թէ խոստումն Թէոդորին Ձշմարիտ է . այսուհետև ամենեքեան կարեն վարել համարձակ զքրիստոնէութի . և ես ասէ այժմ միջնորդ եմ և վկայ . և միշտ ներբակէս ոչ յաղագս այլ ինչ իրաց եկեալ է , քայց եթէ ի վերնդիմակացան քրիստոնէուե վանեսցէ ։

Այսպիսի խոտանութ՛ենէ բանիւք մոլորեցոյց զբիշմն՝ կալ յանհաւատութ՛ե . և եհան ՛ի միաբանուէ հայոց զայնոսիկ , որք յառաջն մեհենալ էին յիւրմէ , և յաւելել էին ՛ի վարդանանն , և զայլ ևս ոչ սակաւ բազմուի . որոց ոմանք արհամարհելով զմիաբանեալսն իբր զանհաւանս՝ գնացեալ խառնեցան ՛ի կողմն վասակայ . և կէսք յրուեցան ՛ի գեօղս և ՛ի քաղաքս . ոչ գիտելով թէ ինչ ունիցի ուսարտիլ չար խորհուրդ ուրացելոցն ։ Այնմիջ և քրմ նիսարաղք ՛ի քաջ կացեալ յերկուց կողմանց ՛ի վասակեանց և ՛ի վարդանանց՝ ամենայնիւ զքրքջ իւրեանց , և նստան ՛ի նիզ , տարակուսեալք ՛ի վէր ելից իրացն , և շուարեալք ՛ի բանից ուրացելոցն վասակայ ։ Վասկեաց սա և զմիաբանութ՛ենէն վրաց և աղուանից ՛ի հայոց , և որպես զբազումս ՛ի նոցանէ ՛ի կողմն իւր . արդեւ սա և զանցս հնոցս , զի մի կարասցեն նք անցանել առ հայս յօգնականուի նոցին . գրեաց և յՅն աղեքսեաց՝ չօգնել վարդանանց . զի կարծէր՝ թէ նք ձեռնտու իցեն միաբանելոցն . գրեաց նոյնպէս և ՛ի տմորիա , ՛ի կորդուքս ,

Ա.ղիլէ. Փարպեցի ։

յարձակ և 'ի խաղտիս · և յետս կասեցոյց զինս ։

Ա. Ա. 45 Եւ 'ի վեր այսր ամի գրեաց գիր և առ այլ վասակ ոմն մամիկո-
նեան, որ էր զօրավար յունաց, և վերակացու այնոցիկ հայոց՝
որք էին 'ի մասն բաժնի նոցա, և ասէ · յայսկէրտ արքայ պարսից
հրաման ետ յայտնի պահել զօրինս քրիստոնէութեան, և կալ ա-
մենեցուն 'ի խաղաղութեան · և ամ հայք հաճեալ և հաւանեալ
են այսմ · իսկ վարդան սպարապետ նոցա ոչ կամեցաւ հնազան-
դիլ, այլ ժողովեալ զոմանս 'ի հայոց հանդերձ նախարարօք
և եպիսկոպոսօք ոմանցիւք՝ խորհի զապստամբութեան 'ի թագաւորէն
պարսից · վնաս և թագաւորն յարուցեալ է պատերազմ 'ի վր
նոր ։ Ո՛չ այն գրեաց և առ այլ բազում ազգս քրիստոնէից ։
Ո՛չ այսպիսի լուր առեալ միւս վասակայ, որ ոչինչ պակաս էր
գործովք քան զառաջեալն վասակ, գրեաց և ծանոյց և նա
զնոսին 'ի կոստանդինուպօլիս առ կայսրն և առ ենկստոս,
բարդեալ և կուտեալ զայլ բազում բանս ամբաստանութեանց
զմիաբանելոցն · և արար առելի զնոսա կայսերն և ամ յու-
նաց · * եգիտ (ահա այսպէս՝ ասէ երանելին եղիշէ) այս վա-
,, սակ զայն վասակ ‖ համանուն և համագործ 'ի մեծամեծ
չարիս · և երկոցունց սոցա միաբանութեանն առնակոխ արար
զազգ մեր ։

Ե. Տեսեալ միհրներսեհի զառաւելութիւն չարեաց 'ի չարն
վասակ՝ քանձն լուր, և գիտացեալ՝ թէ նա սրտի մտօք ջա-
նայ 'ի կատարումն խորհրդոց իւրոց, հնարհակալ լինէր զնմանէ,
և զերկուց երիցանց՝ որոց ձեռօք արարել էր վասակ բազմ ինչ ·
և խոստանայր նոցա զմեծամեծ պարգևս ։ Եւ ապա հարցեալ
տեղեկանայր 'ի վասակայ զնոմ օրպիսութի միաբանելոցն հայոց,
թէ քանի՛ են, և քանի՛ իշխանք և նախարարք կան 'ի նոսա ·
յո՛րպիսի պատրաստուած են · և որո՛վք ունին պատերազմիլ ։
Եւ իբրև զնոսին տեղեկացաւ, կոչեաց առ ինքն զնոմ զօրավարս
պարսից, և կացոյց 'ի վերայ նոցա զօրագլուխս զայր ոմն երևելի
արուբ յատագաց անուն, որ կոչիւր մուշկան նիւսալաւուրտ · և
օգնական նմա զդողըվճ · և պատուիրեաց նոցա և ամ զօրավա-
րաց, զի ըստ ակնարկելոյն վասակայ գործեացեն՝ երթ և տայ-
ցեն նոցա հրաման չուելոյ կամ պատերազմելոյ, սկսանելոյ կամ
դադարելոյ ։ Ո՛ այս այսպէս կարգեալ միհրներսեհի՝ եւ լինքն
'ի փայտակարանէ, և գնաց 'ի պարսս առ յազկերտ · և պատ-
մեաց նմա զնոմ՝ որ ինչ եղեւ · և զհնարսն վասակայ ետ ինն-
քեան · և զվասակ եցոյց չար և դաւաճան ներուէն պարսից ·
մինչև 'ի քարկուէ իսկ չարժել զթագաւորն 'ի վր նր ։

ՃԾԱ ՃԾԱ
45։

ԳԼՈՒԽ ԽԺԵ։

Յաշափս պարտապետէ, և ՚ի ծածկ պատճառին հայոց ընդ պարսից. և նոցին պատասխանիք սէնն վարդանայ և ընկերաց նը։

451 ԱՅ. Տեսեալ քաջին վարդանայ զգործս չարուճեն վասակայ, և զերկպառակուն աշխարհին իւրոյ, և զի- ատացեալ՝ թէ ոչ գոյ նոցա ուստեք օգնական, եդ յիւր զոյս իւր. և առեալ զլուր պատրաստուն գնդին պարսից, որ ՚ի փայտակարան ՚ին, առաքեաց պատգամաւորս առ ամ միա- բանեալ հայս, որք ՚ի ծովն զատկին գնացեալ էին ՚ի տունս իւրեանց. ազդ արար նոյ, և ասէ՝ ՚ի գրելոյ զաղաչու փար- պեցւոյ. * Կուռնդ բազում հասեալ գայ՝ բերելով ահագին զօրս պատկառելի. արդ՝ որք ցանկայքդ առնուլ, առնուցէք, (և հասէք յարարատեան Տ յարտաշատ քաղք). զի մի վերպեսցի օք՝ և զղջանայցէք. և եթէ օք խորհի այլազգ ինչ, ոչ և այլքն՝ որք խոստովեցան գկնի սատանայի, դա- դարեալ հանդիպիլ՝ ուր և հաճոյ Թուխեացի ինքեան. քանզի ոչ ոք պակի ՚ի ընկերայ իւրոյ, թէ ոչ տանջի ՚ի նն. այլ իւրաքանչիւրոք անձին իւրում գանձէ՝ զհողեղէնան, և զյաւիտենականն ։

Օ այսպիսի հրաւէր առեալ ՚ի նմանահուէն զանմահուէն խնդրողաց՝ ցնծացան հոգւով. և մի քան զմի յառաջելով էբրև հօտ՝ որ ընթանայ գկնի ձայնի հովուին, փութացան ՚ի ձեռս և հասին յարտաշատ քաղաք, ՚ի մծտաւոր աւուրս ոտնի համ- բարձման տեն, նախատրաք և աղաւաք հանդերձ զօրօք՝ զոր ու- նէին ՚ի ձեռամբ իւրեանց ։ Ասէր ասէ փարպեցին. * Թուխի ինձ՝ ,, ոչ այնպէս ընթացեալ երագունս աբրահամու ՚ի տանել ,, զորթ հրեշտակացն, որք խոստացան տալ նմա զորդի, ոչ ,, ձեռեալ ընթանային զօրքն հայոց գկնի երանելոյն վար- ,, դանայ սպարապետին հայոց, երթալ յընթերիան քոխ, և ,, ուտել գհայ հրեշտակայ ։ Օ որս տեսեալ սքնին վարդանայ՝ առաւել ևս զօրացաւ և քաջալերեցաւ յանձն իւր, և քաջա- լերեաց զամենեսեան ։ Եւ ապա խորհուրդ արարեալ ամե՛ն ՚ի նոսա՝ կացոյց ՚ի տեղի այնոցիկ նախարարաց, որք մեկնեցան յիւրեանց, կամ որք չորան գկնի վասակայ, զեղբարս նը և զորդիս և զեղբօրորդիս նոցին ։

Եւ էին անուանք երևելեաց նը ժողովելոց յարտաշատ՝ այսո- քիկ. Ա՛ռաջին՝ վարդան մամիկոնեան՝ սպարապետ և առաջ- նորդ հայոց. յետ նը՝ ներշապուհ արծրունի, և ազգական նո-

ըին վահան · սուրբ խորհուրդն խորհուրդունի · սրտակ պալուն[ի]
ձորն մոկաց · վահան ամատունի · գիւտ կամ գունտ վահեւու-
նի · հմայեակ ձորն դիմաքսեանից · Թաթուլ դիմաքսեան ձորն
վանանդայ · գաղրիկ դիմաքսեան ձորն աբեղենից · արշաւիր
արշարունի ձորն կամսարականաց · շմաւոն անձաւացի · տա-
ճատ գնեհունի · ատոլմ գնունի · խոսրով գաբեղեան · կա-
րին սահառունի · ներսեհ քաջբերունի · փառաման մանդա-
կունի · արսէն ընձայացի · այրուկ սղկունի · ապրսամ արծ-
րունեաց · շահ ախուռապետ · վրէն տաշրացի · խուրս և գա-
րեգին սրուճանձտեանք · և այլ ևս նախարարքը · ըստ որս և քա-
ղեանքն , և ակնացիքն , և տրպատունիքն , և զօրքն ուշտու-
նեաց , և զօրք յոստանիկ արքունի տանէ · և սեպուհք քաջք ,
և արք զօրութեց , որք սրտի մտօք զհետ եղեն նոցա · ոմանք
հեծեալք , և ոմանք հետևակք · ոմանք սուսերաւորք և
տիգաւորք սպառազինեալք զրահիւք , և ոմանք աղեղնաւորք
անզրահ զինեալք ։

Այսպէս թիւր համարոյ ամբոխեալ քաջազէն զինուորաց՝ վաթ-
սուն և վեց հազր , ամբոխին լինքնայօժար նահատակելք՝ ի պատճառ ,
ոչ վասն անձանց իւրեանց , այլ վասն քրիստոնէական հաւատոյ · և
վասն անջինջ պահելոյ զնոյն հաւատոյ ձեռն զի որպես
յայտ է՝ ի նախադրելոցդ , երկու ինչ կայր ընդ յայնժամ ա-
ռաջի · այր կամ յայտնապէս ուրանալ զհաւատս քրի՛ , և այնու
հասանել երկրաւոր փառաց , և ստանալ վերստին զկորուսեալ
Թագաւորութեն իւրեանց , և կամ մատնել զանձինս ՚ի տան-
ջանս , և առնուլ զպսակն մարտիրոսութե ։ Այլք քանզի ըստ յա-
ռաջադոյն ասելոց մերո՝ տեսանէին , զի յետ մարտիրոսութե իւր-
եանց հայաստան բոլոր ՚ի ձեռս պարսից անկմանելով՝ աղքն առ
հասարակ ունէր քրիստոսասիրութե հաւատոյ , վնաս
լաւ համարեցան զայն հանդէս մարտիրոսութե պատերազմաւ
վճարել ՚ի սերն քրի՛ , և այնու պաշտպանել զաղքն ողջոյն յու-
րացուէ հաւատոյ ։

Այսպէս հանդէս մտին և սքն յովսէփ կաթուղիկոս հայոց , և
սքն սահակ եպիսկոս ուշտունեաց , և սքն ղևոնդ երէց · և այլ
ևս քահանայք և պաշտօնեայք բազումք · զի ոչ եթէ մարմ-
նաւոր ինչ կռիւ համարէին զայն պատերազմ , այլ՝ աչխար-
հաւոր շահատակուէ պահպանութե հաւատոյ · յորում և ցան-
կային հեղուլ զարիւնս իւրեանց ըստ երանելն նահատակացն ՚ի
պարծանս անուանն քրի ։

Ա յլ սակայն բազմութիք յոյժ յաղթէն հայոց՝ որք յոր-
դորանօք որսացեալ էին , և խաբէութէ պատրեալ էին ՚ի սուտ
այնց երկուց երիցանց , և յայլոց գործակցաց չարին , դիմեցին
առ վասակ՝ հանդերձ նախարարօք իւրեանց , առքին կատա-

պեալք և զինեալք ընդէմ վարդանայ և միաբանելոց ընդ նմա։ Զի որ լինդայեալ պարսից՝ պարծէին յանձինս. և ոչ էա կամ մեզին յասպաղել անդ. զի մի՛ ի յամել իւրեանց Թուլասցին սիրտք անպիտանացելոցն։ Զեալ ապա նոյ՛ ի փայտակարան ձեզ գային բովանդակ պատրաստուքեն՛ ի գաւառն զարևանդ և՛ ի հեր՝ հանդերձ վասակաւ և այլովք միաբանելովք ընդ նմա։ Զի անդ զտեղի առնել՝ բանակ հարին. և արձակեցին գունդ մի մեծ յասպատակուն գաւառաց ծին։

Զայն իբրև լուաւ վարդան, ընտրեաց՛ ի զօրաց իւրոց ըզսեպուհ մի յազգէն ամատունեաց առանձնար անուն՝ երկու հազար հետևակօք և երեք հարիւր հեծելովք. և առաքեաց ընդ առաջ ասպատակիչ գնդին պարսից։ Զարձակեալ առանձնար՛ ի վերայ եհար և սատակեաց զբազումս՛ ի նոցանէ, և զինացեալսն արար փախստական՛ ի բուն բանակին իւրեանց. և ինքն տեղեկացեալ որպիսութենէ բանակին նոյ, դարձաւ ողջանդ ամիւրովքն հանդերձ առ վարդան. և եղև ուրախութի մեծ զօրացն հայոց։

Իբրև ետես մուշկանն նիւսալաւուրտ, եթէ սաստիկ է զօրութի հայոց, խորհուրդ արար ընդ վասակայ, զի վերստին հնարեսցի քակտել զմիաբանութի նոցա։ Եւ անօրէնն վասակ ընդ իւրում չար կեղծաւորութեն առաքեաց առ միաբանեալսն զսուտ ղեկուս երիցուհան զգործակիցս իւր հրեշտակութէ՝ հանդերձ պարսիկ իշխանաւ՝ խօսել ընդ նոսա զխաղաղութի։ Այլ ոչ եղև հնար այսմ. քանզի յայտնի էր հայոց նենգութի խորամանկութէն նոցա. սակս իրի արհամարհեալ զկեղծաւորութի նոցին՝ արձակեցին յետս. և ամենեքին առհասարակ յորդորէին զմիմեանս՝ ճշդիւ եւկսունքն՝ հաստատուն կալ՛ ի միաբանութէ, և արութէ պատերազմիլ՛ ի վերայ հասատոյ։ Այլ այսու ամենայնիւ պակասամիտք ոմանք՛ ի միաբանելոց անտի՝ որք իբրև չորս հազարք, պատրեալք՛ ի բանից սուտ երիցանին՝ Թուլացան՛ ի խորհուրդս. և Թէպետ կային և մնային՛ ի միաբանեալսն անդ, և ոչ յայտնէին զինքեանս, բայց սիրտք նոյ միտեալ էին զկնի վասակայ։

Զոկ մուշկանն նիւսալաւուրտ տեսեալ՝ Թէ չէ հնար խաբեութէ որսալ և բաժանել զմի աբանեալ հայս, յառաջ կոչեաց զանօրէնն վասակ, և զամ միաբանսն ընդ նմա յիշխանաց անտի, և զնաթեայ երիցունսն. և հարցեալ զնոսա՝ դարձեալ սկսաւ տեղեկանալ՛ ի նոցանէ որպիսութէ իւրաքանչիւր նախարարացն, որք էին ընդ վարդանայ, և համարոյ զօրաց նոյ։ Եւ յետ տեղեկանալոց նմա՝ պատրաստեցաւ և ինքն, և չուս արար գալ հասանել յարտաշատ գաւառ։

Ձ. Լսեցեալ մեծին վարդանայ զդիմել գնդին պարսից՝

խորհուրդ արար ընդ նախարարան . և առեալ զնոսա միաբա-
նեալսն ընդ իւր՝ էջ և ինքն յատեաղ . և յաւուր ուրբաթու՝ մե-
ծի տօնի պենտեկոստէին եհաս ՚ի դաշտ մեծ մերձ ՚ի գիւղն
աւարայր առ տղմուտ գետով . ուր եռեսն ՚ի հեռաստանէ , զի
նորոգ ժամանեալ էին անդ և գունդք պարսից , և կային ան-
պատրաստ ։ * Որոց թէ կամեցեալ էին (ասէ փարպեցին) ,
,, կարօղ էին մանուաւորապէս վնասել երամակաձակ ծու-
,, լայելոցն . քայց Թոյլ տուեալ դադարեցին յայնմ աւուր .
,, քանզի ոչ էր եղեալ ՚ի մտի նահատակութենէ փախաքողայ
,, այնուհետև յաղթել՝ վճռ տեսանելոյ հանապազօր զհոգե-
,, կոլուածոյն զապականումն , այլ՝ միշտ և հանապազ ՚ի կէտ
,, կոլման և տենչալի մարտիրոսութենն փութանային հա-
,, սանել ։

Այսպա զայն օր փոքր մի հանդիստ առեալ վարդանայ՝ սկսաւ
խօսիլ բանս սխրաթարութենէ ՚ի քաջալերութիւն զօրայ իւրոց .
Ո՛ բազում պատերազմունս ասէ մտեալ է մեր . յոյս բազում
անգամ յաղթող գտեալ եմք , և ոչ յաղթեալք . և այն էր
մեզ պարծանք ըստ մարմնոյ՝ ՚ի հրամանէ երկրաւոր թագաւո-
որ փախչէր , վատանուն երևեր՝ և պատուհաս կրէր . իսկ որ
քաջութիւն յառաջ մատչէր , քաջ անուն ժառանգեր ։ Այս մեք
իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս և սպիս
բազումս , զոր ընկալաք քաջութիւ , և առաք փոխարէն պարգև ։ Այս եթէ վճռ մահկանացու թագաւորի զայնպիսի արութիս
կատարեաք , ոչ յապի և առաւել վճռ անմահ թագաւորին մերոյ ։
Այս արդ՝ աղաչեմ զձեզ քաջ նիզակակիցք իմ . որոց բազումք
քան զիս լաւագոյն էք արութիւ՝ և գահու ՚ի վեր . որովհետև
կամաւ ընտրեցիք զիս առաջնորդ և զօրավար ձեզ , հեշտ և
քաղցրալի թուիցին քանքս իմ ՚ի լսելիս մեծամեծացդ և
փոքունց ։ Ո՛ երկուցեալ զանդիտացուք ՚ի բազմութենէ հե-
թանոսաց , և մի յահագին սրոյ առն մահկանացուի թիկունս
դարձուացուք . զի եթէ տացէ ոք յաղթութի ՚ի ձեռս մեր ,
քարձրացի կողմն Ճշմարտութենէ . և եթէ հասեալ իցէ ժա-
մանակ կենաց մերոյ սէր մահուամբ պատերազիս , ընկալ-
ցուք խնդութիւ սրտի . և ոչ երևեցցաք մարդկան ամպարշ-
տեալք՝ կարծեալ ուրացութիւն , կրկին և երևեցուք սր-
դարացեալք ՚ի վէր խոստովանութենէ հաւատոյ՝ և լոյսք սրբ-
բեալք յաղտոյ մեղաց ։ Ո՛ լիցի մեզ վճռ մարմնաւոր ինչ
սիրոյ զլաճ ըստ մարդոյ փոխանակել , և զփառս Ճշմարտին այ
ըստ աղցաւորիս ։ Այցուք հաստատուն յանշուշտ զօրագլուխն
մեր քս . որ ոչ մոռացի զգործ նահատակութես , այլ՝ փա-
ռաւոր արասցէ զմեզ ։ Այթէ զայլս մեռուցանելով ՚ի մարտի
վճռ ոճային օրինաց՝ յայլոց փառաւորեցաք , սրբափ և ա-

ռա-

Ա.Տ 45 Ա.

Ա. Տ. 451
Ա. Տ. 451
Ա. Տ. 451

նայ մնաղխազունեայ՝ որ ի նախարարութենէ խորխոռունեայ · Ա.Կդ 51
և նիզակակից նմին զներսէհ քաջբերունի · և զզօրն կալ-
գեայ ըստ առաջնոյն աստի և անտի թևս։ Ո՛ գունդն երրորդ
եաւ ի ձեռս Թաւթելոյ վահանդացւոյ , և նիզակակից նմին ըզ-
տաճատ գնթունի , և զաջակումս ի քաջայ կայոյ նոյ թևս
աստի և անտի ։ Եւ զչորրորդ գունդն եաւ ինքն · և նիզա-
կակից իւր զվահան արծրունի , և զխչհանն առաւելեանց
փոպակ ։ Իսկ զհարաւագատ եղբայրն իւր զհամազասպեան կա-
յոյց վերջապահ զօրուն , պատուէր տուեալ նմա՝ մի զոք ըզ-
նադատել ի պատերազմ , այլ միայն յորդորել զնոսա · քանզի
կասկածէր ի վրէ ամենից՝ գիտելով զթուլութենէ սրտից նոցա ։
Ո՛ ամենին այսպէս կարգեալ և կազմեալ յերեսս աւարայրեան
դաշտին առ ափն տղմուտ գետոյն հանդէպ գնդին պարսից ,
կրկին յորդորեալ քաջալերեցաւ զնա , լուա համարիլ ի վրէ սը-
րինաց մեռանիլ , քան առաջի նոյ խոտան գտանիլ ։
Այնժամ և մուշկան նիւսալաւուրտ յառաջ խաղացեալ՝
սկսաւ և ինքն խրախուսել զզօրս իւր · գիտէք ասէ ամենե-
քին զնչըր զօրուի քաջացն հայոց՝ վարդանայ և միաբանե-
լոց ընդ նմա · զօրացարուք ապա և դուք ընդեմ նոցա · գուցէ
ի պարտութենէ մատնիցիք , և կամ ի փախուստ դարձիցիք · և
զնարդ ապրեսջիք ի բարկութենէ արքային · այլ եթէ յաղ-
րութենէ պատերազմեալ յաղթող գտանիցիք , մեծամեծ պար-
գեաս ընկալջիք յարքայէ ։ Ո՛ այսոսիկ խօսեցեալ նոքա ընդ զօրսն՝
կարգեաց և կազմեաց զնա իւրաքանչիւր զովկիանոս լայնատարած ·
և առաջի կացուցեալ զբազմութենէ կատաղի փղացն վառելոց՝
առ իւրաքանչիւր փիղ զերեք հազար զօրս պատրաստեայ
յաջմէ և յահեկէ · և զընտիր ընտիր քաջ ապառաժնան
կացոյց շուրջանակի · զատոյց և զահեղ խումբ դասուցն՝ որք
կոչեին գունդ մատեան կիր մատենիկ , և անուանեին անմահ
վասն պատերազմելոյ նոցա անհնարին քաջութենէ իւրեանց անմահս ,
և եին վառեալք անգծելի զրահիւք · և էառ զսուսս զիւրեանց ·
և զբոլոր ձախատն կազմեաց իւրեանց զաշտարակ հզօր , և իւ-
րեանց զբերդ անմատոյց ։ Իսկ զգունդս զօրացն գեղացց և զկատ-
շաց և զայլոց ազգաց , զորս գումարեալ էր առ իւր , կացոյց
յաջմէ կողմանէ գնդին իւրոյ , պատուէր տուեալ նոցա զդէմ
ունել զօրավարին հայոց եթէ · և զվասակ հանդերձ ամ ու-
րացեալովք կարգեաց ի ձախմէ գնդին բազմութի մեծ · և հրա-
մայեաց ամենից ի պատրաստի կալ , զի ի կանգնել զդրօշակս և
ի հարկանել զփողսն՝ սկիզբն արասցեն մարտի ։

Ա՛ղեքս · Ը։ Ի լուրս այսպէս պատրաստեցան երկոքինն կողմանք՝ հայ-
Փարպեցի ։ ոց և պարսից , սիրտք նոցա ի վրէ միմեանց առատանային · սո-

Ղկ ին 45։ Ղկ ին 45։

խոյանալ փութային. և նք սրտմտութիւք զայրացեալ՝ զսուսա
քնքել խրոխտանային. ի միջի ունելով զգետն փոքրիկ տղմուտ
կուէցեալ։ Ի վերացուցանել ապա դրօշակայն և ի հարկա-
նել փողոյն՝ առնեաքին առ հասարակ դէմ յանդիման կա-
ցեալ՝ յիրեարաց վէր որոտային. և շփոթութիք գոլմանց նց
խառնեալ ընդ ազդեցուն ձայնի փողոյ՝ իբրև զահագին ձայնս
որոտմանց յուզելոյ հնչէին. և փայլմունք սաղաւարտից
և զինուց նոցա իբրև զփայլատակունս նշուլեալ՝ դիմայ ի
դէմն շողային։

Յայսպիսի շփոթ ձայնից և յահեղ փայլմանց առաւել ի սրտ-
նութիւն վառեալ երկաքանչիւր կողմանց՝ սկսան անհնարին
թափով արձակել ի վէր միմեանց զնիզակս և զնետս՝ իբրև
զտարափս անձրևաց հոսելով։ Ա,ռ բաղխմունք ձայնից նի-
զակաց և նետից՝ միմեանց դիպելոց՝ և յիրեարս խառնելոց
ի յօդս ի վէր գետոյն՝ քստմնելի ձայնմունս և թնդմունս
առնէին իբրև զբոմբիւնս կայծակնահար ամպոց թխպացե-
լոց։ Սոսկալի ինն ևս տեսիլ լինէր անդ ասէ եղիշէ. զի իբրև
այն ձայնք հնչէին, և յերկուց կողմանց քաղումք վիրաւո-
րեալ առ ափն գետոյն գլորէին, * Թանձրամիտքն յիմա-
,, րէին, և վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին, և
,, նահատակքն գոչէին ‖. զօրավարք զօրայն քաջալերէին,
և զօրք զքաղքմունան սաստկացուցանէին։

Ա,ռ ի զանգիտել պարսից գնդին անցանել ընդ գետն, գունդքն
հայոց՝ որք յաւէտ ի սէր նահատակութիք՝ քան ի զէն քա-
ջութիք վառեալ էին, իբրև զնետ հրաւառ զօրութիք մեծաւ
անցեալ Թափ ընդ այն՝ սաստկապէս քաղխէին ընդ նոսին։ Ա,ռ
անդ խառնումն լինէր յոյժ պատերազմին. որով և հարուածք
կոտորածի ժամէ ի ժամ գնայր և սաստկանայր. յորմէ և
քաղում վիրաւորք յերկիր անկեալ՝ դիահաւաք խաղային։
Ա,ռ յանկեալսն անդ աղետալի լինն էր տեսանել. զի հեթա-
նոսք և ուրացօղք ի ցաւս իւրեանց հեծէին և կռնչէին. և
հաւատացեալքն յարեան իւրեանց Թաթաւեալ՝ օրհնէին և
գոհանային, և ի ձեռս քնի զհոգիսն ընծայէին։

Յայնմ վայրի ի վեր հայեցեալ արին վարդան՝ եռես ի ձա-
խակողմն գնդին հայոց, զի սաստկացեալ էր անդ հարուած
ի վէր նց յառանձին գնդե Թշնամեաց արանց ընտրելոց և
քաջաց։ Ղալարեցաւ ընդ այն սիրտ նր. և զի չուներ անցս
յայն կողմն ժամանելոյ, անհնարին ուժգնութիք յարձակե-
ցաւ յալ Թև գնդին պարսից, և խորտակեաց զայն. և իբրև
զկայծակն ձեղքեալ զառուծար Թանձրութիք զօրացն՝ ձգնա-
պարհ արար իւր սրովն. և իբրև զհուր ընդ եղէգն ձեւելով՝
կոտորեաց զբազումս ի նոցն հանդերձ վիթխարի գաղանօքն.

և հասեալ՝ ի տեղին յայն՝ ցրուեաց զքաջն , և զօրացոյց ըզդունդ իւր ։ Յակ վահան արծրունի ընդ առաջ ելեալ ցրուելոցն՝ նահանջեցոյց և դարձոյց զնա սաստկութիւբ յետս ընդէմ վարդանայ . և երկոքինն ՚ի միասին ՚ի մէջ առեալ զնա՝ կոտորեցին առատ և անտի հարիւր քառասուն զօրաւորս ՚ի նմանէ , եւ դրեալ Թուխմայէլ արծրունւոյ ։

Յայս չափեալ մարտի՝ Թուլացեալքն ՚ի հաւատս , և ուրացեալքն ՚ի սրտէ զքիս , որք կային ծածկեալք ՚ի մէջ վարդանանց՝ առ ՚ի տիարացուցանել զնա , տեսեալ՝ Թէ զօրացան նքա , սկսան ամբոխել և շփոթել զնա . և ոմանք ՚ի նոցանէ փութացան կամաւ փախչիլ . և զայլս ՚ի փախուստ յորդորել , և խռովութիւն արկանել ՚ի նա մեծ ։ Եւ այս եղև անհնարին խոչ չաղթութիւն քաջացն . զի յիւրեանց և յիւրեանս էր աղմուկն . որով և հզօրք ոմանք ՚ի վարդանանց անտի երկուցեալ՝ ինքեանք ևս սկսան փախչիլ բազմութիւբ ։

Իբրև ետես զայն մուշկան նիւսալաւուրտ , աղաղակ եբարձ առ այնոսիկ՝ որք կային շուրջանակի , սնդիլ զնեա նոյ զկողմանէքբ քանակին ։ Եւ երանելին վարդան ոչինչ գիտացեալ զայսմանէ՝ առաւել ևս զօրացուցանէր զմարտն . և տեսեալ ՚ի հեռուստ զանօրէնն վասակ հանդերձ գնդաւն ՚ի ձախակողմն պարսից , ամենապարեաց զնեա . և կոտորեաց զոմանս ՚ի գնդէ նոր . բայց անօրէնն Թաքուցեալ ՚ի մէջ փղաց և անկեալ յամրափակ բանակն՝ զերծաւ ։

Օ՜այս իբրև ետես մուշկանն նիւսալաւուրտ , զահի մեծի հարաւ յոյժ . և վարկաւ , Թէ կլանել ունի վարդան զգունդն պարսից . քանզի և զփիղսն առնէին սոքա իբրև համայն վտանգեաց . վ՚ոյ բռաւյր և գոռայր , և քաջաձերբն զզօրսն զօրանալ և սաստկացուցանել զպատերազմն . և յաղմկիլ անդ գնդիցն առհասարակ ընդ միմեանս , և յանկանիլ ՚ի տագնապ շփոթի , քանզի երևելին անձինք անկանէին ՚ի հայոց և ՚ի պարսից . և երկոքինն կողմանք մնային անպարտելի ։

Յակ մուշկանն նիւսալաւուրտ յանհնարինս մտեալ՝ շուռա բեալ տագնապէր . ազդ առնէր սաստկութիւբ արտաշրի փղապետին յառաջ խաղացուցանել զայլ ևս փիղսն , որք կային ՚ի բարձր տեղւոջ ՚ի կողմն բանակին . և իբրև եկին նոքա անդր , սոխակաց զիւր զմատեան գունդն . և տագնապաւ յառաջ մղեալ՝ ՚ի մէջ փակեաց զառանձին գունդն վարդանայ . և զաղաղակ բարձեալ գոչէր , և խրախուսէր զնա՝ հարկանել զվասպ ան ։ Յակ կորովին վարդան , որ ամենևին փոխարկեալ էր ՚ի սէրն ՅԻ , և զերկիւնս բայեալ ունէր առաջի իւր , նայեցաւ նիզակակցացն իբրև զդոյն հնոցի պղոյտս առեալ ՚ի մէջն՝ բազում նախձիրս գործեաց անդ . և զբազ-

մուքն յոյժ ՚ի քաղ արանց անտի երկաթապատ վառելոյ՝ և անգծելի վահանիւք զինելոյ՝ և անմահ անուամբ պարծելոյ տապալեաց յերկիր : Այլ ՚ի խուժել և ՚ի դուժել պարսից յամ կողմանց ՚ի վերայ նորա վիրաւորեալ ՚ի քաղում նիզակաց և ՚ի սուսերաց՝ անկաւ անդ երանելին . և աւանդեաց զոգի իւր ՚ի ձեռս երկնաւոր զօրագլխին քրի . ընդ նմին և վահան արծրունի :

Այլ ՚ի հնչել քաջբարոյ ՚ի խաւան անդ՝ թէ անկաւ վարդան , լուեալ զայն զօրացն հայոց , և տեսեալ թէ արեգակն խաղաղարհեր ՚ի մուտս , աղաղակ բարձեալ առ հասարակ վաճառն հազարքն միանգամայն , զամ զախոյեանս իւրեանց իբրև զնախատուտ պարիսպ վանեալ և հերձեալ՝ դիմեցին եղեն ՚ի մարտ անտի . և մեկնեալ ՚ի հեռաւոր տեղիս՝ օձադայեցան զայն գիշեր ամենք յայսկոյս և ամենք յայնկոյս գետոյն , առեալ զ իւրեանս և զքահանայս և զեղբկսեանս : Այլ սպա հասեալ յամուր տեղիս՝ մինն յանտառիկ քաղաքս և յանմատոյց բերդս . և նստեալ ՚ի նմա՝ ուրախութիւք սրտի օրհնէին զնիճ , և ակն ունէին փրկութեանն :

Այս եղեր հայոց ՚ի մարտն՝ առաւել զսրհուրեցոյց զպարսիկն՝ քան զպատերազմիլ նոցն ընդ ինքեանս . զի կարի ինն քաջութիւք վանելով եղեն : Այլ թէպետ ՚ի մեկնիլ նոցն անտի՝ քաջութիւք ՚ի պարսից և յուրացելոց պնտեալ զհետ տիարացելոցն՝ հարկանէին ՚ի նոսին , բայց ինքեանք ևս վանեալ ՚ի զօրաւորացն հայոց՝ սատակէին . որոց ոմանք փախուցեալ յետս ՚ի քանակ անդր պարսից անկանէին . իսկ ոմանք կալեալ զքանի մի ՚ի փախստէից՝ բերէին առ պաշտիկս . և ՚ի ներքոյ ոտից փղացն հարեալ սպանանէին զնոս : Այլ սակայն միանգամայն քաջմութիւն նոցն համօրէն յահ մեծի բռնեալ կային . և կատածէին յոյժ , թէ գուցէ յանկարծակի յետս դարձեալ հայոց՝ հարցեն զինքեանս . զի առին զփորձ քաջութիւն նոցն : Այլ յիրաւի իսկ՝ թէ չէր անկեալ ՚ի մարտի անդ մեծն վարդան , իսպառ ցիրուցան լինէին նոքա յերեսաց հայոց . այլ անկաւ հզօրն՝ փրկիչն ասքանաղեան դնդի՝ երկդն մականբ . վէմ և եղբ իրացն ոչ այնպէս վճարեցան : Այս պատերազմ մեծ համարեցաւ և մեծ եղև , ոչ զի բազումք կոտորեցան , այլ զի մեծ էր յոյժ բազմութիւն և պատրաստութիւն պարսից , և սակնեբին զօրաւորք . մեծ էր դարձեալ և վախճանն՝ որոյ վն եղև մարտն . յորում առաւել յաղթող գառան հայք՝ քան յաղթեալք :

Է . Իսկ անուանք գլխաւոր և քաջ հայոցն , որք անկան ՚ի պատերազմի անդ , էին այսոքիկ . Վարդան մամիկոնեան՝ հարիւր երեսունևերեք արամբք . որոց մի էր վահան

արծրունի. Խոլին խորխոռունի՝ ինն և տասն արամբք. Ա՛ր-
տակ պալունի՝ չիսունևեօթն արամբք. Տաճատ գնթունի՝
ինն և տասն արամբք. Իմայեակ գիմնքսեան՝ քսանևերկու
արամբք. Ա՛երահ քաղքերունի՝ եօթն արամբք. Ա՛ահան
գնունի՝ երեք արամբք. Ա՛բսէն ընձայեցի՝ եօթն արամբք.
Վարդգին արծանձտեան՝ երկու եղբարբք, և ութ և տասն
արամբք։ Ա՛նդ ամ, երկու հարիւր ինն տունևվեց. կիմ ըս զա-
զարս՝ երկու հարիւր ութ տուն և վեց։ Ա՛ս յայսց նախարա-
րունեց, որք ի պատճառս պատերազմի ի նոյն աւուրս յայլև-
այլ կողմանս նահատակեցան, և որք ի փախստէից ածեալ
անդ ի տեղւոյ մարտին ապանան, և կիմ որք յետոյ յամրոցաց
խաբէութիւք իջուցեալ կոտորեցան, եղեն՝ եօթն հարիւր քա-
ռասուն. կիմ ըս զազարս՝ եօթնհարիւր յիսուն. այնքին աւ- (1)
հասարակ ոգիք՝ հազար երեսունևվեց։ Ա՛յս հանդէս նա-
հատակութիւնք երանելի վարդանանցս եղև յամի ՌՀԱ. 451. ի (2)
մարերի. ին. այն է ի յունիսի. 2. յեօթներորդ աւուր տո-
նի պենտեկոստէին յաւուր շաբաթու, յերեքտասաներորդ
ամի Թագաւորութեն յազկերտի, ի մեռտասաներորդ ամի
կաթողիկոսութե սբին յովսեփայ, և յերկրորդ ամի մար-
կիանոսի կայսերի, յետ քսանևերեք ամաց գարձման Թագա-
ւորութեն ի տանէ արշակունեաց։

Ա՛յլ ի կողմանէ պարսից և ուրացելոցն անկան ի նմին պա-
տերազմի քաջմաստոիկ առելի, ցի երեք հազար հինգ հա-
րիւր քառասունևչորս. յորս արք ինն ի յոյժ պատուհաւորաց
էին։ Ա՛յլ ըս այս կարի իմն դառնացաւ մուշկանն նիւսալա-
ւուրտ, ոչ վճ այսորիկ ևեթ՝ զի զոր խորհէրն առնել՝ ոչ կա-
րաց, այլև յաւէտ վ՛ոկ՝ զի այնչափ քաջմութիւք և պատրաս-
տութիւք եկեալ, աւելի կորոյս՝ քան զոր շահեցաւն. և ոչ
գիտեր, թէ զինչ տացէ պատասխանի Թագաւորին։

(Գլուխ. 7.) Ա՛ռ վճ մարմնոց երանելեացն գիտելի է, զի գրի յայսմա-
ւուրս, գլուխ. 7. Թէ ի մեկնիլ անտի պարսից՝ եկեն անդր
քաջութիմբ ի հայոց յետ իբր ամաց միոյ՝ ամփոփել զնոսին։
Ա՛յլ հայեցեալ տեսին զաքանչելիս. զի մարմինք երանելոցն
կային անապականս լուսափայլ ազիատակացեալ, և բուրեին
հոտ անուշութե. իսկ անհաւատիցն սևացեալ և ուռուցեալ
և նեխեալ. ապա առեալ զնոքա մարմինան տարան և Թաղե-
ցին ի հանգստարանի։ Ո՛այս ոչ լիշէ զազար փարպեցի. և
թանիք եղիշէի ևս փոքր մի այլազգ ցուցանեն ի գլ. ե. երես.
123. ի վերջն։ Որպ դրձել ի ձեռընտիրս ինչ՝ ի լուսանցան,
Թէ քաղուկ սբին վարդանայ և սկաւառակ գլխոյ նը եղաւ ի
դամբարանսբին գրիգորի ձեռամբ Ձգնաւորի ուրումն գրիգոր
կոչեցելոյ։ Ա՛յլ զայսմանէ չունիմք որոշակի տեղեկութի։

Գլ. ՀՒՒ։

Էմ ին
451

Էմ քն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Յաղագս բազմապատիկ նենգութեանց եւ չարութեանց վասակայ. եւ ոնելոյ նմա զպնդին յովսէփ եւ զղեռնութ. եւ զոչնչութեանց հայոց ընդդէմ պարսից։

451 ՅՈ. Երացեալն վասակ իբրեւ ետես, թէ մուշկանն նիւսալաւուրտ՝ ի հոգս տարակուսանաց տագնապի, [Նշ. Ը.]
(1) [image] [image] [image]

զի չունէին և պաշար կերակրոյ · և եկին առ մուշկան նախ-
աստաւածտ հանդերձ քահանայիւք · և որս և սքեն յոմխէփ կա-
թուղիկոս , և վերադ երեց ։ Այլ անօրէնն վասակ ծալեալ
զերդմանս իւր և անթովք չարուհն՝ եւս վաղվաղակի սպա-
նանել՝ի նոցէ զերկուս հարիւր և երեքտասան այր ։
Տեսեալ զայսպիսի խոտքեքայուն վասակայ երանելին յոմխէփ
և վերադ երեց և այլ ևս քահանայք , բողոք կալան՝ի գլուխն ,
և աղաղակեցին առ մուշկան նախաստաւուտ՝ դիմել առ ար-
քայ , և խնդրել զերաւունս ։ Այս իբրև լուաւ մուշկան
նախաստաւուտ , ոչ իշխեաց սպանանել զնոս · այլ միայն զան
հարեալ զսքեն յոմխէփ և զվերադ՝ հրամայեաց պահել զգու-
շութիւն՝ի բերդն աւէն , զոր ունէին պարսիկք · մինչև ելցեն
նոքա յաստեան արքայի · վն զի չէր ուժգին օրէն սպանանել զոք
՝ի բողոքել նորա առ արքայ ։
Սակ վասակ հնարս նենգութեան՝ի մէջ առեալ՝ կոչեաց առաջի
զայլ քահանայսն , որք անդ կային , և ասէ ցնոս · այսչափ էին
կամք արքայի · յայսմ հետէ ազատութիւն չնորհեալ ես ամենեն՝
համարձակ պաշտել զօրէնս քրիստոնէութեան ։ Այս զայս ասա-
յեալ՝ արձակեաց զնոս՝ գնալ և աւետաւորել՝ի քաղաքն և
յայլ տեղիս՝ զոր միանգամ լուան՝ի նմէ ։ Այս այսպէս
առնելոյ կարծեր խաբել և թուլացուցանել զհայս՝ի միա-
բանութենէ իւրեանց , և խլուցանել յամրոցացն , զի կալցի
զնոս , և արասցէ՝ զոր կամի ։
Ե · Այց ոչ ոք այնուհետև հաւատաց խաբեքայութեան
նոր · այլ աւելին կային ամրացեալք յանմատոյց տեղիս , ոմանք
յերկիրն խաղտեաց , ոմանք՝ի կողմանս տմորեաց , ոմանք
՝ի մայրիս արձախոյ , ոմանք յանծառօթ լերինս և՝ի խաւա-
րային այրս , և ոմանք՝ի միջոց անդ ծին · յորս Թեպետ և
տառապէին , *Այց քաջալերէին զլիմեանս (ասէ եղիշէ՝ յե-
,, ղեա · 123) , և առէին · զի պիտոյ է մեզ բնաւ կեանք ան-
,, ցաւոր ծիս · և կամ ընդ տեսանելիք զարև յետ մերոց սի-
,, րելեացն ։ Օ՝ի եթէ քաջ նահատակքն մեր անկան՝ի մեծ
,, պատերազմին , և բազում վիրաւորք տապալեցան յարիւն
,, յատաժոյժ՝ի մէջ դաշտին , և աճիւն մարմինք եղեն գետ
,, թուխոյ և կերակուր գազանաց , և պատուհասական նախա-
,, րարքն մեր հասին յանարգութիւն թշուառութիւն , և լքին
,, զիւրաքանչիւր իշխանութիւն , և ետուն՝ի հալածանս նեղու-
,, թիւն , և ամ փախուստ՝ի հայոց եհաս՝ի վիշտս վտանգի և
,, յանհնարին ապականութիւն , ոչ անասնոք խաբեքայ հրա-
,, մանագիր ։ Այս ապա յարէ եղիշէ զկնի ։
* Այտղին ասէ այնուհետև զիւրաքանչիւր զգիւղս և զաւանս
,, և զագարակս . եղեն հարստունք յառաջաստաց , և փեսայք

՝ի ,,

,, ի սենեկաց . անկան ծերք յաթոռոց , և տղայք ի գրկաց .
,, երթային երիտասարդք և կուսանք և ամ բազմութիք ա-
,, րանց և կանանց՝ հասեալ ունէին զամուրս անաւատին , և
,, զանխաթ տեղիս թշմ լերանց։ Այս համարէին զգազանա-
,, բար բնակուէին ածպաշտութ ի քարանձաւս կելոյ՝ քան ու-
,, րացութ փափկանալ յիւրաքանչիւր շինուածս ։ Ուստի
,, արտնջելոյ համբերէին խոտաբուս կերակրոցն , և ոչ մի-
,, շէին զաովրական խորտիկն ։ Համարեալ էին նց դարա-
,, փաքն իբրև զյարիս բարձր շինուածոց , և գեանականս-
,, ղինքն իբրև զնկարեալ պատչհամբս ։
,, Աղմոսք էին նց՝ մրմնջնք երգոց , և ընթերցուածք սբ
,, գրոց՝ կատարեալ օրհնութիք ։ Մենայն մարդ յանձն իւր
,, եկեղեցի էր . նոյն ինքն քահանայ . մարմինք իւրաքան-
,, չիւր՝ սբ սեղան . և ոգիք նոցուն պատարագ ընդունելի ։
,, Վասնզի ոչ ոք ի նոցանէ ողբայր յուսահատութ զան-
,, կեալն ի մէջ . և ոչ հեծեծելով հառաչէր ի վեր մերձա-
,, ւոր սիրելեաց իւրոց ։ Այնդութ ընկալան զյափշտակու-
,, թի ընչից բազմաց . և ոչ յիշէին ամենևին , եթէ եղեալ
,, լցեն նց ստացուածք ։
,, Համբերութ ձգնէին . և մեծաւ առաքինութ տանէին
,, զբաջ հաւատակութին ։ Օ՛ի եթէ ոչ բացաւ աչօք տե-
,, սանէին զյոյս խնդալից , և ոչ կարէին լակ գործել զայն-
,, պիսի մեծ առաքինութի . քանզի բազումք յապգէ մեծ
,, նախարարացն էին՝ եղբարք և որդիք և դստերք հանդերձ
,, ամ սիրելեօքն իւրեանց ի մէջ ամրակաս վայրենեացն . . .
,, Այս այնքան մեծաւ համբերութ տանէին բազում նեղու-
,, թիւն վն յուսոյն այ . աղաչելով զայս միայն խնդրէին յայ՝
,, մի տեսանել նց զաւեր սբ եկեղեցեացն ։ Այս այնքին առ-
հասարակ ապաստեալ մնային այցելութե նո ։

Ջ . Լսեք եղբայրն վարդանայ հմայեակ , որ էր ի բաժնէն Խոսրովեայ ։
յունաց , լուր առեալ , եթէ նահատակեցաւ սբն վարդան
ի պատերազմի , և հայք ցրուեալ կան ի լեռնս , տրտմեցաւ
յոյժ , և սուգ եառ ի վր եղբօր իւրոյ , և առաւել ևս ի վր
իւր՝ զի ոչ գտաւ և ինքն ընդ նմա ի մեծի նահատակութե ։
Ելեալ ապա ի կողմանց անտի՝ եկն ի սահմանս խաղտեաց ,
և անտի յԱղն տայոց . և ամրացաւ ի լերինն պարխարայ կան-
մատոյց տեղիս ։ Օ՛ այն գիտացեալ բազումք ի հայոց՝ ժո-
ղովեցան առ նա , և խորհէին ի միասին , թէ զինչ պարտ ի-
ցէ ինքեանց առնել ։
Իբրև եառես վասակ , թէ այնպիսի և այնչափ հնարիւք ոչ Աղիշէ . է ։
կարաց խաբել զհայս , յորդորեալ զմուշկան նիւսալաւուրա՝
եառ ի նմանէ զօր բազմ , և խաղաց ի միջոց աշխարհին . և

հասեալ՝ ի կապոյտ լեառն՝ մարտեաւ ընդ ամենայն արուարձից։ Իսկ որք՝ ի ներքս էին, քաջութիւն պատերազմեալ հարին զբազումս՝ ի պարսից. և զենացեալսն արկին փախստական՝ ի բուն բանակն իւրեանց։

Այլ վասակայ վերատին դարձեալ յետս առ նա՝ միաբանգամ սկսաւ տուտ երդմամբ ոգոքել զնա. և այնչափ սաստկացոյց զերդմունս իւր, մինչև հաւանեալ նմա՝ առաքեցին առ նա զքահանայ ումն արշէն անուն՝ հանդերձ այլովք ընկերօք. որոյ եկեալ առ վասակ՝ արկանէր գութ առաջի նր, և աղաչէր զնա թողանալ՝ ի խստութենէ սրտի իւրոյ։ Իսկ նր կեղծաւորեալ՝ ի սկզբանն՝ եհարց զնա վն քաղցում իրաց, յորս տարակուսեալ կայր. և իբրև տեղեկացաւ ամի՝ հրամայեաց կապել զնա, և զորս ընդ նմա էին, և պահել՝ ի բերդն աւէն։

Ետ այսորիկ զամ զօրս պարսից՝ ի գունդս գունդս բաժանեալ՝ առապատակաւորս սփռեաց յամ տեղիս հայաստանեայց։ Այս առապատակաւորք քշմ չարիս հասուցին ծին մերոյ. զի զօրս գտանէին արտաքոյ բերդից զարս և զկանայս՝ ի գերութենէ վարեին. և առեալ՝ ի ձեռս իւրեանց զջահս՝ հրձիգ առնէին զբազում տեղիս և զեկեղեցիս և զվկայարանս. և յաւէր հասուցանէին զծն։

Իբրև լուան զայս ամ չարիս նախարարքն և զօրք հայոց, որք ամրացեալ էին՝ ի գաւառն տմորիս, տրտմեցան յոյժ, և ասեն. զի՞նչ օգուտ է մեզ նստիլ աստ, և տեսանել զեկեղեցիս ամ մատնեալ՝ ի ձեռս հեթանոսաց։ Այս ապա յորդորէ զմիմեանս՝ ելին անտի բազմութեամբ, և յարձակեցան՝ ի կողմանս ծին պարսից. այրեցին հրով զբազում աւանս, և քանդեցին զբազում բերդս. կոտորեցին մարդիկ քշմ, և գերեաւ զայլս քշմն՝ գարձան յամենայն կողմանէ։

Այլ մինչդեռ էր առեալ վասակայ զլուր գործոց սոցա, գիտացեալ՝ թէ հմայեակ մամիկոնեան ամրացեալ է՝ ի կողմանս տայոց, և ժողովեալ են առ նա բազումք, կազմեաց գունդ մեծ՝ ի զօրացն պարսից և յուրացելոցն սիւնեաց. և յերկուս բաժանեալ զինն՝ ետ՝ ի ձեռս երկուց ուրացեալ նախարարաց, զմին՝ ի ձեռս արտենայ գաբելեանց, և զմիւսն՝ ի ձեռս վահրազշապհոյ պալունւոյ. և առաքեաց զնա՝ ի վերայ հմայեկի։ Հասեալ նոցա անդր՝ այրեցին զեկեղեցիս երկուց գիւղից. և փութային յաւարի առնուլ զամ տեղիս այնր կողմանն։

Յարշաւել սոցա անդր՝ հմայեակ և ընկերք իւր իջեալ յամրոցացն պարխարայ՝ նստեալ էին յանհոգս՝ ի գեղջն, որ կոչիւր որջն. հաղորդէին կասկած ունելով զգալատենէ թշնամեացն։ Իբրև գիտացին թշնամիքն, թէ անդ է հմայեակ, եկին և պաշարեցին զդիւղն։ Այն տեսեալ հմայեկեանց՝ աղաղակեցին

միա-

միաբան առ ինձ , և ասեն . ահա և մեզ եհաս ժամ պտիղ-
451 մելոյ ի վեր մեծի անուանն քո ինոր . ոմն և կամիս՝ արա ըստ մեզ ։
Եւ զայս ասացեալ՝ ակնապարեցին ի զենս . և եղեալ ընդդեմ
թշնամեացն՝ հարկանէին զնոսա անդադրիւն հարուածովք . ըզ-
բազումս ի նոցանէ ի մէջ այգեստանեայց սատակէին . և զբազումս ի
վինամիջին կոտորէին . և զմնացեալս փախստեայ արկանէին ։
Եւ նոքա երանելին հմայեակ դիմեալ զոճարթապին ընդդեմ սրոյ
թշնամեաց , կատարեցաւ նահատակութիւն ի վեր սքի ուխտին .
առ որ անձկացեալն էր յաւժամ սրտի . և ժամանեաց առ եղբայրս
իւր ։ Եւ ոսկ լնկերքն նոր ողջանդամ ապրեալք՝ եկին վերստին ի
լեառն պարիսպայ . և կային ի տխրութեան , և հոգային՝ թէ
զինչ արասցեն ։ Եւ ապա միաւանդամ իմեալ անտի՝ յարձա-
կեցան ի վեր այլոց գնդից սիրելոց ի պարսից և յուրացելոց .
և հարին զբազումս ի նոցանէ . և դարձան ի տեղիս իւրեանց ։
Եւ եղև իբրև լուան զայս և այնքիկ հայք՝ որք բնակեալ
էին յարձախոյ մայրիսն , դեսպանս առաքեալ յաշխարհն հո-
նաց՝ խնդրեցին օգնութիւն ի նոցանէ ընդդէմ պարսից ըստ ուխտին ,
զոր եդեալ էին ընդ նոսա ։ Եւ նոքա գունդ բազում գումարեալ՝ դի-
մեցին առապատակութիւն յոմն պարսից . և աւերել զբազում գա-
ւառս՝ առին զբազում դերիս , և տարան յոմն իւրեանց ։
Յայսմ գառնութեան ժամանակի առաւելոյն յուզիւր ի կոստան-
դինուպաւլիս խռովութիւն հերձուածոյն եմտիքեայ , և շփոթ մա-
ծոխից ժողովին՝ զոր արար դեոսկորոս ի յեփեսոս ի պաշտ-
պանութիւն նորին եմտիքեայ ։ Եւ վասն այսր պատճառի գումա-
րեցաւ ի սմին ամի այն ի . 451 . որ ժողովն քաղկեդոնի յամ-
սեանն հոկտեմբերի , զկնի չորից ամսոյ կատարման սքոց վար-
դանանց ։ Ո այսմանէ խօսեսցուք ի գլ . ձի . առանձինն . և
մեք այժմ դարձցուք ի կարգ պատմութեան ։

ԳԼՈՒԽ ՀԴ ։

Յաղագս Իւղէլոյ յազգէրտի գնահատակեալ հայոց առ ինքն
ի յեռն ատրպատկաց մարզպանի . և յաղագս
հաշտութեան ելէփեայ ։

451 Ի ոչեալ մուշկանն նիւսալաւուրտ զամ եղեալսն՝ զայ- Իղիշէ. է ։
րացաւ յոյժ , և զահն հարաւ յանձն իւր , և գա- Փարպեցի ։
դարեցոյց զգօրս պարսից ի յարձակելոյ և ի նե-
ղելոյ զհայս . և գրեալ ծանուցեալ առքայն զամ . և զվնաս գոր-
ծոյն էարկ ի վեր ուրացելոյն վահանայ ։ Եւ իբրև լուաւ զայս
Թագաւորն , զինքս յամբարտաւանութենէ իւրմէ , և տրտմե-

յաւ յոյժ · և ստիպացաւ ՚ի սրտի իւրում վճռ դրգռելոյ զհայս Ա.Խ.Ա 451
յայսպիսի պատերազմ մեծ · յորում առաւել ՚ի սատեկեալ՝ քան ՚ի
շահեցեալ · միանգամայն և զմնացեալ ածել՝ ՚ի քանի՛ մեծամեծ
սրոք ՚ի ներքոյ անտի անկանել , և քանի՛ աւերմունք և քանդմունք
գործեցան յերկաքանչիւր աշխարհս , ՚ի քաղաքս տրտմութիւն
իւրեմն ՚ի պատմուճան բարկութեան յորոգեցեր ։ Այսպէս և քիներ ,
թէ զիա՞րդ եղև , զի հայք այսպէս արհամարհեալ զինքն և
զհրամանս իւր՝ զայսպիսի աղմուկ չիտնի արկին զնա ապա-
տուել ՚ի նմանէ , թէ ուսո՞ւմ եղև այս , և ո՞վ
եղև այսմ պատճառ ։

Այնժամ յառաջ մատուցեալ միհրներսեհ , որ թէպետ
էր ՚ի հայս , խորհուրդ ետ արքային ըստ առելութեան սրտի իւ-
րոյ , և ասէ · զայդ ես ասեմ քեզ արքայ քաջ · եթէ կամիս
առաւելութիւն լսել զարդարն , և ձշմարտիւ հաստ լինել՝ թէ
զիա՞րդ և ուսո՞ւմ եղև այս ամ , փոյթ զերևելի իշխանս հայոց ,
և ՚ի նոցանէ առեղեակցիր ։ Այսպէս արքայն , մի կարծել՝ թէ
գան նոքա աստ , զի երկիւղ կասկածի զմեզ ունելով՝ ոչ վստահին
՚ի մեզ , պատասխանի ետ միհրներսեհ · եթէ կոչեսցես զնոսա
քաղցրութիւն և սիրով , գան նոքա յօժարութիւն · և դու յետ լսելոյ
զնոսա ՚ի բերանոյ նոցա՝ եթէ տակաւին անլսօղս գտցես զնոսա , ա-
պա՛ նոքա՝ որպէս և կամիս · և խաղաղասցի թագաւորութիւն քո ։
Այս խորհուրդ նենգութեամբ միհրներսեհ արքային , զի մար-
թասցի ՚ի ձեռս քերել զմեծամեծս հայոց , և նուաճել զնոսա
իսպառ · միանգամայն առնուլ և զվրէժ ՚ի վստակայ , ընդ որ
յանհնարինս ոխացեալ էր ։

Լսեալ արքային ընդ քանս միհրներսեհի՝ գրեաց հրովար-
տակ առ մուշկան նախասպարապետ ՚ի զարեւանդ գաւառ · զի
կացուցեալ մարզպան հայոց զտրդատիդդ արշական մեծ նա-
խարար պարսից՝ որ էր յոչխարիկ կողմանս , ինքն գարձցի յետս ·
հրամանն տուեալ նմին տրտմութեամբ , զի տացէ ազատութիւն
ՈՒմի՝ ոլքեն յաշխարհին հայոց , զի համարձակ պաշտեացեն զը-
քրիստոնէութեան իւրեանց · և յորդորեացէ զմեծամեծս և զգըլ-
խաւորս նոցա գալ առ արքայ ։ Ընդ որ պատգամ և առ վա-
ստակ՝ գալ ՚ի դուռն · և նորա համարեալ՝ թէ հրաւիրի ՚ի
փառս , կամելով ինչ մի աւելի յուցանել առաջի յաղթե-
տի՝ յառաջագոյն առաքեաց առ նա զորդիս նախարարացն՝
զորս արդեալ ունէր յիւրմէ սիւնեաց · և ինքն պատրաստե-
ցաւ ջոջել , առեալ ընդ իւր և զբազումս յուրացելոց անտի ·
քանզի եղեալ էր ՚ի մտի՝ ասէ փարպեցին , * առնուլ վարձս ըստ
,, մեղեաց խորհելոյն իւրոյ՝ զնաւագութեան իսկ հայոց · ապա
,, թէ յայնմանէ վրիպեալ ինչ ասէ գտանիմ , համայն զայրն
,, ամ՝ զպատիւ և զգահս առանց ամ երկբայութեան և յերկ-

,, ուշա-

,, ոճանալոյ գտանեմ, և իմ են ‖ :

ՃԲ . Իբրև հաս մուշկան նիւսալաւուրտ զհրովարտակ արքայի, անդէն վաղվաղակի ըստ հրամանին նոր կացոյց զատրոլմիզդ մարզպան ծին . և ինքն ժողովեալ զզօրսն՝ գարձաւ ի պարս : Իսկ ատրոմնդայ մոբեդ յարարատեան ՚ի սկսաւ բազում քաղցրութիւ և կեղծուպատիր սիրով յայտ առնել ամենեցուն զկամս թագաւորին , ցուցեալ նոցա զմարդասիրութիւն մեծ : Կոչեաց առ ինքն նենդութիւ և զսահակ եպիսկոպոս ուշտունեաց , և ասա զմուշէ յաղթակայ զմեծ երէցն արծրունեաց , և զերկուս երևելի քահանայս՝ զսամուէլ և զաթթահամ , զոր էին յարարատեան ՚ի գեղջէ արածոյ . զի չորեքին առքս քիմ ինչ գործեալ էին ընդէմ մոգուց , և քանդեալ էին զկրակատունս : Ցարցեալ տեղեկացաւ ՚ի նոցէ , թէ զի՞ ինչ պատճառի և զիւրդ արարեալ էր նոցա զայն . և գրեաց զայս առ արքայ և առ միհրներսէհ :

Վասպուրական :

Եկ ապա ածել անդ առաջի իւր և զամէն յովսէփ և զղևոնդ , և զքահանայ ասրկսւագ ուշտունեաց , և զարշէն երէց բագրեւանդայ . որք և կային ցայնժամ ՚ի բերդն աւէն . և կապեալ զնոս զամենին ՚ի շղթայս՝ առաքեաց առ արքայ հանդերձ աշակերտօք նոցին , յորս երևելի էին երիցքին առքս . այր են՝ խորէն երէց յայրարատոյ՝ յորկումէ գեղջէ , և աբրահամ երէց ՚ի տայոց՝ ՚ի զենակս գեղջէ :

Եկանկանիլ սոցա ՚ի չու՝ եղեալ էր և վասակ յՀէն սիւնեաց գնալ ՚ի պարս . և դիպուճածուլ ինն պատահեալ միմեանց երկուց կարաւանիցն ՚ի Հանասպարհի՝ ծանեան զիրեարս . և վասակ իբրև ՚ի չքմեղս լեալ՝ կամէր գալ առ նոս : Այլ մինչև հասեալ էր նոր անդ , ասէ սէն յովսէփ ցերանելին ղևոնդ . զիտասջիր , զի առ մեզ գայ ուրայօղն . արդ՝ յողջունել նմ զմեզ զինչ պարտ է առնել : Պինսի ետ սէն ղևոնդ , և ասէ . ըզվարդապետուն փրկչին մի խնդրեր ուսանիլ ՚ի մարդոյ . ողջոյն առացէք ասէ . և եթէ ողջունեսցէն իմէ որդի ողջունի , հանգիսկ ողջոյն ձեր ՚ի վեր նր , առա թէ ոչ՝ առ ձեզ դարձցի : Այս ՚ի խօսիլ նմ զայս՝ եհաս առ նոս և վասակ . և իջեալ յերիվարէն իւր պատուոյ աղագաւ՝ ողջունեաց զնս : Այս նր ոչինչ բնաւ կարծեցուցել՝ թէ գիտեն ինչ զչարութիւ և զիշնամութիւ նր , եառն և ինքեանք ողջոյն սիրոյ , և ընտանութիւ խօսեցան բազում ինչ ընդ նմ , մինչդ՝ սէն ղևոնդ՝ որ ընդ առելոյ փարպեցւոյն , անտրտում և զուարթերես ցուցանէր զինքն :

Ո՞յն տեսեալ վասակայ՝ վարկաւ , թէ նր յիրաւի չեն ինչ դիտակ իւրումն չարութիւ . վայ և ուրախ եղև՝ ակնունելով վկայութիւ բարի առնուլ ՚ի նոնէ առաջի արքայի . և ցուցեալ առ նս զկեղծուպատիր սէր իւր՝ հրաւիրեաց զնս ձաշել յայն

օր ընդ իւր . և մեկնեցաւ անտի ։ Իսկ ոբեն զևոնդ ձայնեաց զկնի նոր անուամբ պատուհոյ նորին . սիմնեաց որ , սիմնեաց որ . և նա ասէ , տեառըք զինչ ասեք . ասէ ցնա զևոնդ . զնամ ինչ զմեր ի բան արկեալ պատմեցաք . իսկ զպիտոյն և զկատրևուրն մոռացաք հարցանել . ոբը երթաս ։ Ընդ այս խոժռեալ վաստակայ՝ ասէ . գնամ առ արքայ դատանել զնորհս առ ի նմանէ , և ընդունել փառս ըզ վաստակոցս մեծի ։ Ասէ ցնա ոբեն զևոնդ . սատանայն չար՝ որ պատրեաց զքեզ ատել ուխտի ոբ աւետարանին , այդպէս կարծեցուցանէ քեզ . բայց թէ արդարև դու կենդանութիւբ զղջասիդ ի վերջ ուսոցդ ի հայոց տանիս , ապա ըստ իս ոնց չէ խօսեցեալ ։ Օ այս լսեալ վաստակայ՝ սոսկացաւ և վարանեցաւ , և գիտայ իսկ զբեկումն անձին իւրոյ . քզի ինքն զփորձ առեալ էր , զի ոչ վրիպէր բան մի ի բանից սըբոյն ։

Այլ իբրև եհաս նա ի պարոս , յանդիման լեալ արքայի՝ պատուհէցաւ ի նմանէ և ի մեծամեծաց առ երեսս ։ Այլ ի հարցանել ցնա արքայի վնս մեծի պատերազմին , և վնս հարուածոց՝ որք եղեն ի զօրս պարսից , նա զվէպան էարկ ի վերջ սպառասխանին . և բազում ինչ խօսեցաւ ըղեմ հայոց՝ ցուցեալ զնոսա վնասասպարս ։ Յայնժամ ասէ ցնա արքայ . հրամայեմ տուեալ է իմ կոչել պատ զմեծամեծս հայոց . ի դալ նոյ այսր՝ լիով ևս հասից ի վերայդ . և զայս ասացեալ՝ արձակեաց զնա յիւրմէ ։

Ե . Իսկ երանելի քահանայքն որովհետև ծանրացեալ կապանօք գնային ի ձմեռնային եղանակի , զամիսս երկուս և զաւուրս քսան ձանձիհորդել բազմադիմի տառապանօք՝ հազիւ ուրեմն հասին ի ձմերոց արքունեաւ ։ Յերև լուեալ միհրներսեհ զդալուստ նոցա , հրամայեաց բերել զնա առաջի իւր ։ Յհարց նախ ցսամուել երէց արածոյ , և ցաբրահամ երէց ցսարկաւագ նոր , և ասէ . որով համարձակութիւբ իշխեցիք դուք սպանանել զկրաւն՝ արկեալ զայն ի ջուր ։ Պնեսի եւուն նոբ , և ասեն . մեք ոչ գան հարկանելով , և ոչ խոշտանգանս ածելով զնասեցաք ինչ կրաւին . այլ՝ տեսեալ , թէ սպասաւորք նորա թողին և փախեան , և կրաւն մխրեալ երևեցաւ , առաք և ընկեցաք ի բաց . և եթէ ունիք պատմեցին ձեզ , թէ ի ջուր արկեալ է մեր զայն , ընդ այդ զի ցասնուք . զի դուք ասէք՝ թէ եղբայր նոր է ջուր . և մեք յանձնեցաք զնա եղբօր իւրում՝ կալ սիրով առ միմեանս ։

Օ այս լսեալ միհրներսեհի՝ դառնացաւ . և ապա յայլ ինչ շրջեալ զբանն՝ սկսաւ յանդիմանել զնա զամենին վնս մահու վարդանայ . դուք ասէ եղէք պատճառ կորստեան քաջի առն . որոյ զնմանն չէր տեսեալ աշխարհիդ ձերոյ , և ոչ աշխարհիս

արեաց

արեաց. նաև ոչ իսկ մարդիկ հանուր ձի կարէին արժանի գովութի տալ նմա. և եթէ ձեր չէր մտորեցուցեալ զնա ըղձեալ սուտ կրօնից ձերոց, արդ վայելեալ էր մեր և ձե՛ր ի կեն-
դանութենէ նո՛ր։ Այլ քանզի զրկեցիք զուք զայնպիսի այր ի լուսոյ արեգական, անարժան էք այսուհետև տեսանել զլոյս։ Այլ ի պինդ սքղմն զևանդեայ համարձակութի՛ւ, և ի ջատագովել զնո՛ւ կրօնս քրիստոնէութե՛ն, բարկացեալ միհրներսեհի՛ եհարց ցայլս, և ասէ. գուք ևս գիտէ՞ք մեզ, թէ և ձեր նոյն բանք են, զոր մահապարտդ այդ իշխեաց աներկիւղ խօսիլ առաջի մեր։ Այլ նո՛ք միաբերան ասեն. ի դոյն կամս ամենեքեան կամակիցք եմք, և խնդրեմք՝ զի արժանի լիցուք վճարիլ ի դմին։ Ո՛յրացեալ ընդ այս միհրներսեհի՛ հրամայեաց դահճացն հարկանել շղթայիւք զբերանս նո՛ր, մինչև հոսիլ արեան արտաքս. և ետ տանիլ և պահել զնո՛ ի բանտի մահապարտաց։

Ա՛ղէքս. Ե։ Փարպեցի։

Ը. Իսկ մարզպանն ատրոմիզդ յետ առաքելոյ զերանելւոյն ի պարս՝ հրեշտակս արձակեաց յամ ամհմանս աշխարհին հայոց. և յորդորեաց զամենին՝ գալ ժողովիլ յիւրաքանչիւր տեղիս, և կալ այնուհետև աներկիւղ. և պատուէր ետ ենկսաց ամի՝ գառնալ և ոչնիլ զիշխանութի՛ւն իւրեանց անկասկած, ցուցեալ նոցա ստուգութի՛ւն զհաստատութի՛ւն արքունի հրովարտակին։

Ո՛ այսպիսի հաստատ հրաման լուեալ հայոց՝ որք ցրուեալ էին ի հեռաւոր վայրս, ժողովեցան դարձեալ ի տեղիս իւրեանց. և ամքն սկսան ըստ առաջին կարգաց վարել զկեանս, և համարձակ պաշտել զքրիստոնէութի՛ւն յամ եկեղեցիս։ Այնպէս և նախարարքն հաստատեալք ի բանս մարզպանին, և գիտացեալ՝ թէ նա եկեալ է ոչ միայն վը խաղաղութե՛ն ձին, այլև վը հրաւիրելոյ զինքեանս ի գուռն, առաքեցին առ նա պատգամաւորս, և խնդրեցին ի նմանէ՝ առնուլ ի թագաւորէ զդաշն ուխտի խաղաղութե՛ն և հաշտութե՛ն, զի աներ-
կեւան գնասցեն առ նա։

Այլ մինչդեռ ընկալեալ էր նո՛ զայն պայման ուխտի ի թագաւորէն, ժողովեցան ի մի ի գումն քաղաք. և խորհուրդ արարեալ՝ կոչեցին զեպիկտունս. և ընտրեալ կացուցին փո-
(1) խանակ սքղմն յովսեփայ կաթուղիկոս հայոց զվեց եպիսկոպոսս մա-
(2) նազկերտոյ զնո՛ մեքենաւե՛. ի նմին գաւառե. զորոյ և զանունն յիշատակեցաք ի գլ. Գ. երես. 27. և հաւանութե՛ն ամենեքեան փո-
խեցին և հաստեցուին զաթոռ կաթուղիկոսութե՛ն անդ ի դըպրին, յամի ՇՀ. 452։ Այլ թէպետ սքղմն յովսեփ տակաւին կենդանի էր, բայց քանզի ի կասկածի էին վը նո՛, թէ գու-
ցէ ոչ թողցեն զնա պարսիկք, վասն խորհեցան առնել այսպէս.

քզի ոչ կարէին տեսանել զՅս հայոց առանց կամ[ա]ուղիական· Ա.մտ ու
և այլ երևի, նաև առ այն յովհ[ա]ն ազգ արարեալ՝ առին հա- 452
ւանութեի և ի նմանէ։

Ա.ղեքս. գլ. է. և ը։ Փարպեցի։ Ցետ այսր ընտրութե ընկալեալ նախարարացն գիր ողջա- նաց և ուխտի խաղաղութե յարքայէ, հաստատեցին ի մոի գնալ առ նա, ոչ առ հաստարակ ամենեքեան, այլ թուով քանի մի. յորս երևելի էին տքին։ Ա.աթկէն և բակուր յաղ- գէն սիւնեաց. Ա.երշապուհ արծրունի՝ իշխան մեծ, և շա- ւասպ և հնդին և մեհրուժան և պարգև և տաճատ յաղգէն արծրունեաց. Ա.համազասպեան եղբայրք մեծին վարդանայ, և համազասպ և արտաւազդ և մուշեղ յաղգէն մամիկո- նեանց. Ա.շուաիր և վարձ և թաթ և ներսէհ և աշոտ յաղգէն կամսարականաց. Վ.ահան և առանձար և առնակ յաղգէն ամատունեաց. Ա.տոմ յաղգէն գնունեաց. Մա- թուղ տէն վանանդայ, և ատաղ և երկու ևս ընդ նմա յաղգէն դիմաքսեանից. Շ մաւուն և զոճարէն կամ զուբէն և առաւան յաղգէն անձաւացեաց. Փառակ կիմ փափազ և վարազգէն և դաղ յաղգէն առաւելեանից. Ա.պրահամ՝ ի միոյ ի տոհմից արծ- րունեաց. Մահակ և փարսման՝ ի տոհմէն մանդակունեաց. Ա.բէն յաղգէն տաշրունեաց. Ա.աթիկ և յոհան յառաջաս- նեան տանէն. և այլ ևս ազատ մարդիկ ազնուականք ոչ սա- կաւք. որոց ոմանց որդիքն տարեալ էին ի տրուեի պարսից հրամանաւ վասակայ։ Ա.յլեալ մեք յՅես հայոց՝ չուս արարին գնալ ի պարս. որք և ըստ ասելոյն եղիշէի, * Թէպէտ և դի- ,, տէին զդաւանութի տէրութեն (պարսից)՝ թէ սուտ են ,, յայմ, (բայց) կամեցան չարչարակից լինել սքոյն. զի ե- ,, թէ մահ ևս առաջի կայցէ, ոչնչ զանդիտեցին եր- ,, կիւղիւ ։

է. Ա.յլ մինչչև հասեալ էր սոցա ի պարս, արքայն աղ- ոնանից վաչէ՝ որ յառաջագոյն իսկ ընկալեալ էր զօրէնս պարսից, և ցայն վայր արդելեալ էր ի գրան արքունի, ա- ղաչեաց զյազկերտ՝ Թողուլ զնոսա երթալ Յբ իւր. և յաջ- կերտ վատահացեալ ի նա՝ Թոյլ ետ նմա։ Ա.յլ վաչէի գնացեալ անդր՝ պաշտեր զքր, այլ ի ծածուկ։ Վ.այնպէս և վաղգէն Ա.ղեքս. 25։ արքայ վրաց՝ զդէմեան մծխեթայ՝ որ խոպատ ուրացեալ էր Վ.ար. 30։ զքր, և էր ի գրան յազկերտի, տուէալ նմ պատանդ՝ դաթնաւ ի վիրս։ Ա.յլ կին սորա՝ երիցագոյն դուստր մեծի սքոյն վարդա- նայ՝ վարդանուհի կիմ վարդուհի. որ և գործական անուամբ շուշան կիմ շուշանիկ կոչիւր. ոմն յիշեցաք. է. 57. երես. 518։ Ա.յլ զի սա ջերմագոյնս պաշտեր զքր, ատեպէր զնա վաղգէն Թողուլ զքրիստոնէութի՝ն, և ընտրիլ զօրէնս պարսից։ Ա.յլ քանզի ամենևին ոչ անասայր նմա շուշան, վ՚ն որոյ և նա գա-

Ա.մխ. ու 452

Ա.մխ. ոն

նիւք և անսուաղութիւք և հայհոյութիւք տանջէր զերանելին ամ իբր վեց . և քառնադատեր զնա քաղմօք՝ գոնէ առ արտաքս նմանիլ ինքեան . և այնչափ տառապեցոյց զնա , մինչև տրտունեան ամ անգամք նմ . այլ նա գոհութիւք համբերեր ամի ։

{458} Յաւուր միում առաւել կատաղեաց վազդենայ՝ կամէր ինքնին ձեռամբ իւրով գանակոծ առնելով սպանանել զսրբուհին . այլ եզբայր վազդենայ ջոջիկ Թափեաց զնա ի ձեռաց քառնաւորին . և տարեալ հանդոյց ի տեղւոջ ուրեք կիսամահ . և նոր կոչեալ զքահանայ ոմն՝ ընկալաւ ի նմանէ զսքն հաղորդութիւնն . և ամբարձեալ զաչս իւր յերկինս՝ ասաց . ընկալ զհոգի աղախնոյ քոյ Քրիստոս . և աւանդեաց զհոգին ի հաստակի իբր քառասուն և հինգ ամաց ։ Օ սմանէ տես ի Ճառընտիրս և յայսմաւուրս ։ Այլ զմահուընէ ուրացելոյն վազդենայ ունիմք հիշել ի գլ . իբ ։

Ա.պտ.30։ Ա.պտ. ։

Արդ յայսմաւուրս վն սորին շուշանայ , թէ յետ ուրացութիւն առն իւրոյ վազդենայ Քանայր զսքն հաւէն նուիրեալ վրաց լուսաւորչի՝ որ կայր ի մծխիթա , (ըստ որում յիշատակի և յԴաւրաթէ խորենացւոյն) , յղել ի քնիկ դաւառ իւր ի տարան ։ Այն յայն աւուրան ի մծխիթա քրիստ Ճգնաւոր ամն յերկրէն մշոյ անդրէաս անուն յաբեղայից անտի վանացն զաղաթոյ . որ և էր աշակերտ մեծին սահակայ պարթևի . ըստ որում եդած է . 60 . երէս . 536 ։ Այս սրբուհին շուշան օգնականութիւք տադերն իւրոյ Քրիստոսի հաւէն յաբեղայն՝ տանիլ ի տարոն ի վանսն զաղաթոյ , որ և կոչիւր սքն առաքեալք մշոյ ։ Այս անդրէի առեալ զքահայն և զայլ սպասս ինչ եկեղեցեացն մծխիթայ ըստ հրամանին շուշանայ՝ եկին եհաս ի տարոն վ ի շիրակաւան դաւառ . և ոչ կարաց անցանել ի տարոն վ ի շիրակաւան Թէոդորոսի և վրդովմունս Ճանապարհին . և եկայ անդ առ ինչ ի խորշ մի լերինն ասէրոյ կիմ պարխարոյ . ուր և լուծաւ զբարի կատարումն շուշանայ ։

Այս յետ ժամանակաց՝ յորժամ զօրացել լիներ գրիգոր Թոռն Հմայեկայ մամիկոնէի յամուրն կապուտայ , առաքեալ զգայոյց նմա անդրէաս Ճգնաւոր վ ի քաղքին նուենայ , որ և կոչեցաւ շուշանայ խաչ . և նոր առեալ զարս իւր՝ Ճանոյ ընդ մուտս ձորոյն տայոց , և եկեալ էառ զքաղքն պայն . և բերեալ եդ ի բերդն կապուտայ ։ Այլ մեք դարձցուք ի կարգ պատմուէս ։

ԳԼՈՒԽ ԺԲ։

Յաշտ անբռնութեանն և պարտութեանն Վասակայ ի գալ Նախարարաց ի պարս ։

452 ԱՅնժամ անասպարտ արարեալ բազմութեամբ Նախարարացն Հայոց, զորս ի վերոյ յիշատակեցաք, հասին յՅն պարսից. և իբրև գնացին ի ձմերոցն արքունի, ընկալաւ զնոսա միհրներսեհ մեծ հազարապետ վեր ի վերոյ պատուով. և ապա ետ կապել զնոսա յերկաթի կապանս, և պահել զգուշութեամբ ի քանտ մահապարտաց, ուր էին եւ բանեալն քահանայքն ։ Յետ աւուրց ինչ կոչեաց յազկերտի զմիհրներսեհ՝ հրամայեաց առեան կարգել, և քննուի առնել, մանաւանդ ի վերայ գործոց ապստամբութեան և բազմապատիկ վնասուցն՝ որք եղեն. պատուէր տուեալ՝ զի և մուշկանն Նիւսալաւուրտ իցէ անդ առաջնիկայ ։

Եւ հան յատեան միհրներսեհ զնախարարսն և զուրացօղսն հանդերձ վասակաւ, և արար հարցուփորձ զբաղում աւուրս ի վերայ անցիցն անցելոց. և գտաւ կողմն ուրացելոց պարտաւոր, և անօրէնն վասակ յուցաւ յանցաւոր. վասն զի ոչ միայն ուխտապահ նախարարքն յայտնի արարին զանօրէնութիւնն նմա, այլև ընկերք և աղգականք նորին. ըստ որս և վարազվաղան փեսայ նորա, որ դեռ ի պարսս էր, և նա ինքն մուշկան Նիւսալաւուրտ։ Եւ ի վերայ այսու ամենայնի նաև մոգք, որք չարչարեալ էին ի հայոց, հաստատեցին զպարտաւորութիւն յանցաւորութեանն նորա ։ * Զի անդր չարչարանաց սոքա՝ որ անցին ըստ
,, մեզ, և բազում հարուածք՝ որ եղեն ի զօրս արքունի, և
,, աւեր և գերութիւն ձին հայոց և պարսից, և կորուստ
,, հարկացն արքունի, և սկիզբն և առաջնորդ չարեաց այլոց
,, այդ եղև ։

Հրամայեաց միհրներսեհ կոչել անդր զամբն յոլեսփ և զաս հակ և զղևոնդ. զի և նոքա խօսեսցին՝ ոմն և գիտեիցեն. և նոքա եկեալ՝ կրկին հաստատեցին և յուցին՝ զոր ինչ միանգամ առաջ մատուցեալ սքն սահակ եպիս ուշտունեաց խօսեցաւ քեզմ ինչ. և ըստ գրելոյ եղիշեի յաւել ասել. * Ով յայտնի ուրացեալ են՝ ի
,, ձշմարտէն ոմ, ոչ գիտեն զինչ գործեն և կամ զինչ խօսին.
,, քզի խաւարային են խորհուրդք նոց ։ Օ տեառս պաշտեն
,, սուտ պատճառանօք, և ըստ ընկերս մտանեն յոխտ սուտ
,, ծե. և են նոքա գարանք սատանայի. զի նոքօք կատարե

Ա.ղիշէ · Է։ Վարդեայ ։

,, զգաստութեան կամաց իւրոց . ոչ երևի իսկ ի դոյն չայդ
,, վասակ ։ Այնպէս մինչ ուներ զանուն քրիստոնէութեան ,
,, վերին երեսօք կարծեր ծածկել և թաքուցանել զամ չա-
,, րութիւն իւր առաջի ձերոյ անգէտ տրութեդ . և զամ նեն-
,, գութիւն իւր՝ քրիստոնէութեանն ծածկեր ։ Ասաի և ձեր իսկ
,, կարծեցեալ՝ մեծապէս պատուեցեք (զի պատուեցիք) ըզ-
,, դա առաւել քան զարժանն իւր ։ Հաւատացէք գմա զաշ-
,, խարհն վրայ . հարցէք ցձեզ , եթէ գոհ իցեն ըզմանէ ։
,, Այսուք գմա զտրութիւնն սիւնեաց . լուարուք յաղգակա-
,, նաց անտի դորա , զինչ պատմեն զմանէ ։ Այլարեք զդա
,, մարզպան հայոց . զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատու-
,, թիւ գտեալ էր , դա ի միւսմ ամի կորոյս զերկիրն ամ ։
,, Տեսեր , իբրև բարձաւ ի դմանէ պատուական անունն
,, այ՝ զոր ունէր ստութեամբ , մերկ երևեցաւ ամենայն չա-
,, րագործութեի դորա . զի եթէ առ ածն իւր սուտ գտաւ ,
,, առ ո՞ք ի մահկանացուաց աստի դա արդար գտցի ։ Այլ
,, ամ ամբաստանութեի , որ այժմ յայտնի եղև զմանէ ,
,, ահա յառաջագոյն լուեալ էր ձեր . բայց չոր դէմս (զի
,, զինչ միտս) ծածկեցէքն զուք ձեզէն քաջ գիտեք . և ինձ
,, այսպէ թուի , եթէ սուտ յուսով զձեզ խնդացոյց (կար-
,, ծեցուցեալ մոլորեցուցանել զմեզ) . այլ ոչ զուք և ոչ
,, նա և ոչ որ զկնի ձեր գալոցն է , զայն ի մեզ ոչ կարէ
,, տեսանել . արդ՝ արարէք ոչ և կամիք . ցմեզ զի հար-
,, ցանէք ։

Ք . Այս ամ լուեալ միհրներսեհի՝ հրամայեաց դար-
ձուցանել զերիցուսն և զնախարարս նուիրն կապանօք ի նոյն
քանտ . և ինքն գնացեալ առ թագաւորն չաղկերտ՝ ծանոյց
նմա զամ . և թէ օրպէս ամենայն վնասու պարսից և հայոց
գտաւ պարտաւոր վասակ ։ Այնդ որ թէպէտ և բարկացաւ
չոյժ թագաւորն և ի խոր խոցեցաւ , բայց երկայնամտեալ
լուռ եկաց զաւուրս քանի մի . զի կամեցաւ հասուցանել զնա
ի մեծ անարգութի ։ Այ չաւուրն երեքտասաներորդի՝ որ օր
երևելի էր առ նա , հրամայեաց կոչել չրնեքրիս զմեծամեծ
իշխանս գրանն ալքունի ։

Կոչեցին և զվասակ . և նա թէպէտ և վարանեալ էր ի խոր-
հուրդս իւր , բայց այսու ամենայնիւ իբր անպարտ կամելով յա-
ցանել զինքն՝ ըզ առաջին իւրացն կարգի զգեցաւ զգեստ իշ-
խանական . կապեաց ի գլուխ իւր զպատուհասն կամ զզարդ
վարսից , և եդ ի վրայ զխոյրն ոսկեզէն . հաճ ըզ մէջ գկուա-
նակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ա-
կամբք պատուականօք . ագոյգ զգինդան յականջս , և զգու-
մարտական կնիք զշինգղն ի պարանոցն . էարկ և զսամոյրն ըզ-

Թիկամբք. և ամիճ զարդարեալ զանձն՝ գնայր բազմութիւն Ծառայից յարքունիսն։ Եւ յանցանել նորա առաջի քանտին տեսեալ զնա նախարարացն կապելոց և երանելի քահանայից՝ սկսան այպանել ղկնի նը, և ասեն. * Միվ անմիտ վաճառա- „ կան, զանմահ և զանանց պատիճն եառեր, և զանցաւորդ „ գնեցեր. որ և զայդ ևս ընդ մեծ աւուրս կորուսանելոց ես։ Իսկ վասակ մոռեալ յարքունիսն, ի կատարիլ ընթերեաց՝ եկն և նստաւ ի ներքին դահլիճսն, որ էր հրապարակ մեծաւոր ծաց. և իբրև ժողովեցան անդր և այլ իշխանք, եկն առ նա սենեկապետն արքայի, և ասէ ցնա. * Արքայ յղեաց առ քեզ „ (Հարցանել) յումմէ գտեալ ես քո զայդ ամ պատուհասական „ պատիճդ. ասա ինձ վաղվաղակի. մի՞ որ արդար վաստա- „ կոց։ Եւ յաւուր նմա զնմ ամբաստանութիւնն՝ որք եղեն զնմանէ, և զցաւսն արքայի. և նա պատասխանեցաւ, և ոչինչ խօսեցաւ։

Կարգեցաւ ապա առեան մեծ, ուր ժողովեցան առագանին պարսից, ընդ որս և վասակ իբր զմի յաւագաց։ Յրամայեաց յաղկերտ ածել անդ առաջի իւր և զերանելի նախարարան՝ իւրեանց կռապանօք։ Եհարց ցնոսա զայրագին, և ասէ. զինչ զմտաւ ածեալ իշխեցիք առ ատս հարկանել զհրամանս մեր. և զոր յանձն առիք զդեհիս մերոյ զպաշտօն՝ կրկին ատամբա- կեալ մերժեցիք ի քայ, և ապստամբեցայք ի տիրուհիս մեր- մէ. որով կորուսիք զբազումս, և քանդեցիք զձեր։ Այս լուեալ նախարարացն՝ լուռ եղեն առ վայր մի. և յերկդել ար- քային զբանսն՝ ակնարկէին առ միմեանս՝ տալ պինախ։ Ե. Ապա յառաջ մատուցեալ արշաւիր կամնարական՝ խո- սեցաւ ի դիմաց առնեցուն աներկիւղաբար, և ասէ. Ըս որում գրէ զազար փարպեցի՝ լուեալ ի բերանոյ նորին ար- շաւիր, այսպէս. * Ակզբան իսկ զերացդ զայդոյիկ զպատ- „ ճառս, յորժամ ի ձեր թիւրացդ ի միտս ծնեալ՝ յայտ- „ նեցաւ մեզ բանն. և զերացդ բուռն հարիք՝ որում մեզ „ ծառայել հրամայէիք, և օրէնս իմն հարկաւորէիք ունել „ մեզ, զոր ոչ մերք և ոչ նախնիք նախնեաց մերոց գիտեն, „ և կիս ծառայեալ էր. քիմ անգամ բողոքեցաք, թէ ան- „ հնար է մեզ յանձն առնուլ և ծառայել օրինաց՝ որոց նախ- „ նիքն մեր ոչ ծառայեցին. որ և մտայ մերոց ծանր թուի „ և արհամարհանք. և այսպիսի ի մէնջ բողոքելոյ՝ ձերոյին „ իսկ վկայէ անսուտ հրապարակդ։ Եւ իբրև ոչ կամեցաք „ լսել, ըստ բռնաւոր կամացդ ձերոց և հարկաւորութեանդ յանձն „ եառաք առնուլ զպաշտօնն. զոր շրթամբք առ երկիւղն մե- „ ծարեցաք սուտ, կամեցեալ գոզանալ վայր մի խաբէութեամբ „ զերկիւղ ձեր. և սրտիւք պարշելի համարեցաք զգործն,

„ և

Ա. Կոր. ժա. 452

,, և առէաք . եդեալ ՚ի մոխ զերծանել հնարիւք , և երթալ
,, յԾմեր , և խօսել զՆն , և գնալ կնաւ և որդւովք , եր-
,, թալ կորնչել յօտար երկիր . զոր նախ քան զամին ըզ անցն
,, խորհրդոյն՝ երևելին ըզ աշխարհին իշխանաց՝ ծառայն ձեր
,, վարդան արար . զոր գիտեն և վկայեն բանից իմոց արք
,, պարսիկք յաւուրդ տոհմից , որ այժմ ողջ են , և աստ են
,, առ ձեզ . առեալ լոկ զիւր կին և զընտանիս իւր՝ դեմ ե-
,, դեալ գնաց փախստեայ ՚ի ձերոյ երկիրդ յերկնից յոմանց :
,, Եւ զգացուցեալ զայս Տնդ սիւնեաց վասակայ , փոխեալ
,, զՀետ դեսպանս արար զաւագ տանուտեարն և զսեպուհն
,, և զնք քահանայն , և զնք գիրս օրինաց մերոց կնքեալ
,, իւրով մատանեաւ՝ որով և երդուհան իսկ , ետ տանել առ
,, Նա : Ընդ որ յղեաց և զիս . և գրեաց ՚ի նամակին առ Նա
,, այսպէս , Թէ զի՞ ես փախուցեալ , և կամ զինչ է երկիրդ
,, քո , յորմէ գուդ երկնչիս , և ինձ ոչ յայտնեցեր . արդ՝ մի
,, փախչիր և մի երկնչիր յումեքէ . զի Թէ յարեաց Տնէն և
,, ՚ի նորին ուժոյ զարհուրեալ ես , մի երկնչիր . դարձիր . և
,, նամակ առնեմք առ կայսր , և զանձինս մեր նմա ՚ի ծա-
,, ռայուի տամք . և Նա (եԹէ) հաւատայ , Թէ զայսպիսի մեծ
,, Ծնիմ մեր կամաւ ՚ի ծառայուի տամք , խնդութիւք և կա-
,, մաւ յանձն առնու , և զօրս տայ մեզ . և նք և մեք միա-
,, բանեալք՝ միշտ աշխատ ունիմք զնորն արեաց և զարիս :
,, Այսպա Թէ կայսրն այլազգագոյնս ինչ խորհի , և չՀանդչէ
,, զիւր օգուտն , և ես մինչ վրաց մարզպանն էի , և դուռն
,, աղուԾանից յիմում ձեռին էր , քեզմ զօրագլուխք յունաց ըն
,, իս բարեկամացան ուխտիւ և երդմամբ . և այսօր նուիրն
,, երդմամբ երԹևեկեն առ իս . և Հարկքս Տամ Ծիս Հայոց
,, առ իս են , և գործակալք Տամ յիմում ձեռին են . և այլ
,, ևս բազում կարասի՝ զոր ՚ի պարսիկ գործակալացն Հանի ,
,, որ աստ ՚ի Հայս էին , և յիմում գանձի կայ . յորմէ Թէ ըղ-
,, մի մասն յունաց տամ տանել , անտի այնչափ սաստիկ Հա-
,, նեմ յոյնս , որչափ զի Հոգն պարսից չբաւիցէ նք յաւարի :
,, Եւ գրեալ զայս Տամ երդմամբ վասակայ սիւնեաց Տան՝ գար-
,, ձոյց բռնի զվարդան , որ էր մնեալ օտար իշխանաց՝ որք
,, ոչ են Հնազանդեալ ձերում իշխանութեդ . և նամակին՝ զոր
,, գրեաց առ վարդան սիւնեաց տէրդ , ողջ է . և կնիքն աստ
,, առ մեզ է . տեսանել Հրամայեցէք : Եւ յաղագս որդւոցն
,, Իւթոյ (արգելեալ պահելոց ՚ի պարսս) , այսպէս ասէր . Ե-
,, Թէ ոք ՚ի Հայս պարսիկ է , զամին կապանօք յամուր բերդս
,, դնեմ , մինչև Հարկաւ արքայն զիմ որդիան ՚ի բաց արձա-
,, կիցէ : Յորս կալաւ արս սակաւս ՚ի պարսկաց՝ առ վայր մի
,, կապեաց . և յորժամ ինքն նենգաւորութիւն զմերոյ կորուս-

Ա.Կո. ի. 452

„ տեան խօրհուրդ՝ի միտ արկեալ տարաւ՝ի գլուխս, ապա
„ զնա՝ի բաց արձակեաց։
„ Ամենայնի արարեալ առ կայսրն, և առ այլ աւագանի
„ դրանն, և առ սպարապետն անտիոքայ, և զվահան ա-
„ միառունի և զայլս՝ի նախարարացն յիւրաքանչիւր տոհմէ
„ ի հռոմոն արձակեաց։ Նա զվարդան և զմեզ գնդաւ յաղ-
„ ուձանս՝ի կուիւ գումարեաց. և ինքն յանդգնեայս զմեզ նեն-
„ գեալ յայս չար մղեաց, և զայնպիսի պիտանի զձեր ծա-
„ ռայ սպան. և այնչափ բազմութեամբ պարսից և հայոց կո-
„ տորածի, և աշխարհին կորստեան եղև պատճառ։ Նա
„ արդ ինքն զարդարեալ աւագիկ ոմն բարեգործ նաեւ՝ի մի-
„ ջի ձերում անհոգութեան։ Այայց դուք զնամականին զնա՝,
„ զոր գրեալ և ինքեալ է առ կայսր, և առ նմա՝ն հռոմոց,
„ և կամ առ այլս քաղցումն, տեսանել հրամայեցէք զայն. և
„ ոմն ձեզ արեաց կամ է, հրաման տուեալ՝ կատարեցէք՝ի
„ վերս մեր. զի ուր գրեալք և կնքեալք՝ի միջի են, ոմն ձեր
„ արդարութիւդ, աւելորդ քանից և շատախօսութեամբ պէտք
„ անդ ոչ են։

Ի կատարել արշաւելի զբանս իւր՝ յառաջ մատեաւ և ատամն գնուն. և կրկին հաստատեալ զառացեալսն՝ի նմանէ՝ ծանոյց յանդիման թագրին և նմա ատենին, թէ՝ի միաբանել մեր ինդրել զօգնութեն՝ի կայսերէ ընդեմ արեացս՝ գլուխս և առաջնորդ էր դա ինքն վասակ. և ես էի ասէ՝ որ տարայ զկրօնաւորսն կնքեալ մատանեաւ դորա առ կայսր։ Նա յասել նոր զայս՝ մատոյց՝ի մէջ զօրինակ թղթոյն. նայնպէս՝ի մէջ բերին և այլ նախարարք զպատճէն թղթոյն՝ զորս առաքեալ էր վասակ միաբանութէ հայոց առ վիրս և առ աղուանս և առ այլ ազգս։ Նա յասելին ասել, թէ դա ինքն մարզպան գոլով՝ ինն՝ ըստ հաճոյս իւր շրջէր զմիտս ամենեցուն, և երկդիմի երեսաք վարէր հանապազ. զմեզ յորդորէր աներկիւղ մնալ յոյժ արեացդ, և ձեզ խոստանայր ստութէ՝ ընդ զկամս ձեր. էր՝ զի միաբանեալ ընդ հայս՝ զպարսիկս տայր կատարել, և էր՝ զի ձեռն տուեալ՝ի պարսս՝ զհայս խոշտանգէր. և զընտիրս՝ի նոցանէ ջանայր կորուսանել, ոմն և զմեծ ծառայն ձեր զվարդան. զի ինքն միայն երևեսցի գլուխս ազգին. այլ արեաց ինդ մտերմութեամբ բարի ինչ առնել չէր իսկ նման փոյթ։

Ձ. Այս ամ լուեալ յազկերտի, և ամ աւագանւոյն՝ որք յատենի անդ էին, և տեսեալ ևս զնամականին, սաստուգութէ՝ի վերս հասին, թէ պատճառ ամ մեծաստուց իցէ բեալ նա ինքն վասակ։ Այնժամ յառաջ կոչեալ զնա արքային՝ խօսեցան ընդ նմ բարկութէ, և ասէ. իմ արդարև լուեալ եր

Ա.Կ. ՊՃ 452

զայդ ամ լեր քո ՚ի հաշտարարեան իմմէ ։ և այժմ ահա ստուգապէս և գիտացի ։ այլ արդ՝ ա՛ղէ ասա ։ զինչ խորհելով յայդպիսի իրս փնասուց իշխեցեր ձեռն արկանել ։ և զայնպիսի մեծ վաստակաւոր և զպիտանի ծառայ մեր զքաջն վարդան, և զընկերակիցս նր խաբեցեր և կորուսեր ։ զայնպիսի այր, զոր թէ կայսրն յունաց և կիմ արքայն հոնաց բռնութիւ՛ք յինէն առնուլ կամէին, ես ամ արեացս ուժով կռուէի, և չտայի հանգչել, մինչև այսրէն յիս դարձուցանէի ։ Ո՛րոյ երթ յիշեմ զքաջութիւնն՝ զոր արարեալ է յաձախագոյնս ՚ի սակս արեացս, և մանդ առաւելապէս զմիոյն զայն՝ զոր գործեաց հսկայաբար ՚ի մարմիուս իմ յանդիմանն ընդէմ թըշնամեաց, չեմանէ ՚ի մտացս յիշատակ առն՝ ա՛ծոց արժանի ։ Ա՛րդ՝ դու յայնպիսի առնէ զմէզ զրկեցեր ։ և կոտորածի այնչափ իմոց ծառայից արեաց և անարեաց (այլ պարսից և այլոց ազգաց) եղեր պատճառ ։ Ա՛յս ասեն իշխեցեր լրբաբար իբր անգէտ առ մեզ գալ, և տեսանել զմեզ ։ * Ա՛յլ զայս գիտեա՛, տեա՛, զի յայսմհետէ սիւնեաց տէր չե՛ս ։ և զբարիսն զնա՛մ՝ զոր ,, խորհեցար և կատարեցեր, կուտեացի՛ ամ ՚ի վե՛ր չար դէմ քո ։ և զնա՛մ հասս հայոց Ծին և պարսկաց հրամայեմք ,, խնդրել ՚ի տանէ քումմէ և յորդւոց քոց ։

Ա՛նկ ուխտադրուժն վստակ Թէպէտ և կամեցաւ խոսիլ ինչ անդ, և տալ պատճնի, և ցուցանել զվաստակս իւր, բայց ոչ ոք կամէր լսել նմ. այլ՝ ամբիոն ը արժանի գործոց նր դատապարտեցին զնա ։ յոր և ը ասելոյ փարպեցւոյն կատարեցաւ բան սաղմոսերգուին ։ * ՚ի դատաստանի իւրմէ ելցէ դատապարտեալ, և աղօթք նորա ՚ի մեղս դարձցին ։ Ա՛յս անդէն հրամանաւ Թագաւորին վաղվաղակի մատուցեալ առնա դահճապետին, մերկացոյց զնա ՚ի զարդուց իւրոց, և ըզգեցոյց նմա զգեստ մահապարտի ։ և կապեալ ՚ի շղթայս զտաս և զձեռս նր՝ եհան արտաքս, և ետ տանիլ ՚ի բանտ մահապարտաց, ուր էին երանելի քահանայքն ։ Ա՛յս զնախապարանս և վերստին դարձուցին իւրեանց կապանօք ՚ի նոյն բանտ ։ ը նոսին և զորդիս նր՝ զորս յառաջագոյն առաքեալ էր վասակայ ՚ի պարս ։ որպէս զի նեղեալ նր ՚ի տառապանաց անտի՝ դարձցին յօրէնս պարսից ։

Յետ այսորիկ արքունի հրամանաւ կողոպտեցին զնա՛մ ինչս և զտացուածս վասակայ, զորս ունէր նա յաշխարհին սիւնեաց, մինչև առնուլ և զզարդ կնոջ նր և զտան նորին բռնութեամբ ։ և զնա ինքն ողորմելի մերկութիւ՛ք և աղքատութիւ՛ք տանջելին ՚ի բանտին, և ձաղելին ։ Տեսեալ ապա վասակայ զինքն յայնպիսի յետին անարգութե և յաղետալի վիճակ՝ կոծեր զանձն և լայր ։ և հայեցեալ յուրախալից երեսս երանելի նախա-

թարացն և քահանայից՝ դառնանալը ի հոգի իւր, և դառ-
նագինս հառաչէր. և թշնամացեալ ընդ անձին իւրոյ՝ ձա-
ղէր և անարգէր զինքն. և ըստ ասելոյ փարիսեցւոյն, (որ
լուեալ էր զայս ամ՛ի բերանոյ Ծնողիցն վաստակս) , * ձաղա-
,, նօք սիրեալ զԹաթս ձեռաց իւրոց՝ ինքնին զիւրոյին ծե-
,, ծեր զդեմն՝ ասելով. ահա լնկալ զայս ձաղս՝ զոր եւս
,, բերել քեզ ուխտանենգաւթիւ սմա աւետարանին, և արիւն
,, նահատակութե սմին վարդանայ մամիկոնէի, և այլոց ցան-
,, կալի հաղորդելոցն ընդ նմա. որոց ժառանգեալ զյաւիտե-
,, նից կեանսն՝ ընկալան զանուն քաղի յերկրի և անանց
,, յաղգաց յազգս իւրեանց. իսկ դու մեզաւոր մնձն իմ կեաս
,, խղճիւ և ցաւօք մտաց զանկաւսթիւ աւուրս կենցաղոյս,
,, և պատրաստել պահիս միտնջենաւոր և անանց գեհենին ||:
Օ այսպիսի բանս ասէր հանապազ, և հառաչանօք կողկո-
ղէր, վարանեալ և թշուառացեալ յոյժ:

Ա՛պա ըստ գրելոյն եղիշէի. գլ. Է. տերէս. 140. * Իբրև այսոքիկ
,, յոյժ կողմանց հարեալ վատթարեցաւ, և չարաչար տան-
,, ջեցաւ, անկաւ յախտս գժնդակս. և անդէն ի կապանան
,, ջեռաւ փոր նորա. և հարան և տրորեցան գոկղ նորա. և
,, քամեալ մղեցաւ թանձրամսուի նորա: Առաջին որդունք
,, ընդ աչս նորա, և ի վայր սորեցին ընդ լռնգունս նր: Ելա-
,, ցան լեզուք նորա. և ծակոտեցան չարաչար շրթունք նր:
,, Ուծան ջիլք բազկաց նր. և յետ կոյս կորացան կրնկունք
,, ոտից նր: Ղեսեաց ի նմանէ հոտ մահու. և փախստական
,, եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա: Եզուն միայն
,, կայր կենդանի ի բերան նորա. և ոչ գտաւ խոստովանուի
,, ի շրթունս նր: Ա՛շակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ ի
,, դժոխս անհնարին դառնութե: Ան հարկին նմա ամ սիրելիք
,, նր. և ոչ յագեցան սաստիկ հարուածովքն ամ թշնամիք
,, նր: Այս այն՝ որ կամէր մեզաւոր լինել աշխարհին
,, հայոց, ոչ երևեցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրև
,, զշուն մեռաւ, և իբրև զեզ քարշեցաւ: Ելիցեաւ անուն
,, նր ի մէջ ազգ, և ոչ մատեաւ յիշատակ նր առաջի տե սե-
,, ղանոյն յերկեղեցւոջ: Ել ինչ եթող չար, զոր ոչ գործեաց
,, ի կեանս իւր. և ոչինչ մնաց ի մեծամեծ չարեաց, որ ոչ
,, անցին ընդ նա ի մահուձան նր ||:

Վարդենիք: Ե. Ա՛սէ յաղկերտ արքայ փոխանակ վաստակ կացոյց իշ-
խան սիւնեաց. Տին զփեսայ նր զուրացեալն վարդվաստան. և
արձակեաց զնա անդր. ոյնպէս և զայլ ուխտանենգ նախա-
րարն դարձոյց յ՚ջ իւրեանց: Ա՛յս նր պարապ գտեալ՝ շինե-
ցին իւրաքանչիւր ի տունս իւրեանց մխիթարուցս, և պաշտեին
զկրակ՝ ոմանք առ երկիւղ, և ոմանք առ ապիրատութե և

հա-

Ա.Կո. 1.Կո. 452

հանդիսական անօրինելոյ . զօրաւորին ունելով զմարզպանն ատրպատականի . որ Թէպետև ըստ մեծամեծաց կարեաց ՚ի խաղաղութեան պահեր զնա , բայց ոչ դադարեր ՚ի յորդորելոյ զՀայս ՚ի կրակապաշտութի :

Տեսեալ ոմանք ՚ի նահապարտաց , եթէ որք պաշտեն զկրակ՝ յարդին ՚ի պարսից , և անհարկ մնան , և տուգանս ինչ ոչ կրեն , նոքա և կանգնեցին զկրակատունս . և առ երեսս երևելին կրակապաշտ . այլ ՚ի ծածուկ պաշտէին զաստուածն քրիստոնէութե . ոմն լինէր երբեմն առ տամարացիս . զորոց ասէ սբ գիրն , Թէ երկնչէին ՚ի տանէ , և պաշտէին զկուռս . ՚ի Նահ . ԺԲ . 33 : Ա.յր վարազվաղան յետ բազում անխրատութիւն և չարիս գործելոյ , և զբաղումն յիւրոց անտի ՚ի կրօնս պարսից խոտորեցուցանելոյ , այսահարեցաւ , և լլկեալ ՚ի դիւէ՝ տատակեցաւ :

Եւ այսպէս երկոքին սոքա արմատք անիծից՝ վատակ և վարազվաղան սիւնիք՝ փեսայ և աներ իրերաց , որք ուրացութիւն իւրեանց եղեն առիթ այնչափ Թշուառութեց և աւերածոց աշխարհին Հայաստանեայց , լուծին ՚ի վախճանի զվերծս չարեաց իւրեանց :

ԳԼՈՒԽ ԽԴ .

Յաղագս նեղութեան նահատակացն և չարչանաց , և առաւելոյ ընծայելոյ ՚ի դրախտն Եդեմական . ուղղութեան պատմութեանն :

453 Ա. ախատարք Հայոց , և որդիք նոց , և որ եմուտնքն որք կային ՚ի բանտի մահապարտաց հանդերձ երիցամբք , ըստ գրելոյ եղիշէի՝ յերես . 138 . * Թէպետ և էին ՚ի մեծի պատուհասի , (այլ ըստ նորա առելոյն) ,, ոչինչ յիշէին զնեղութիւնն՝ որ անցեալ էր , և կամ որ այլ էս ,, ակնկալութի էր գալ ՚ի վէր . այլ զարմացեալ էին ընդ մեծ ,, յայտնութին , որ եղև նոցա (՚ի վէր պարատաւորութե ուրացելոցն ,, վատակայ) : Ա՛խ Թարէին զմիմեանս , և ասէին . քաջութե ,, պատերազմեցաք , աւաւել ևս համբերութե ձգնեցաք : ,, Լ ուեալ է մեր ՚ի ձոր հարցն մերոց , եթէ գլուխս ամ առա ,, քինուե համբերութին է . և խնամուն երկնաւոր՝ կատարել ,, ընծայաշուն . և զայս ոչ ոք կարէ գտանել առանց չարչա ,, րանաց . խակ չէրծանքն յորժամ ընդկարեսցին ՚ի վէր , յայնժամ ,, բազմանայ վարձ հատուցման պսակին : Ա՛պա եթէ այդ ,, այդպէս է , զայս միայն աղաչեսցուք զնոյն , զի համբերել ,, կարասցուք մեմ փորձուեց . և նոյն ինքնին արասցէ հնարս ,, մե-

,, մերում փրկուէ։
,, Ոչեաւ է մեր զգաստասաան քաւասուն զինուորացն քրի,
,, որք էին ի Հարուածս տանջանաց. մին ի նոցանէ փու-
,, թացաւ վրիպեաց ի սէր պահէն. իսկ երեսունևմինն համ-
,, բերուէր կատարեցան, և հասին այնմ աւետեաց՝ որում
,, ցանկացեալն էին։ Իսկ մեր ընկերակիցն (վասակ) աւա-
,, նիկ, որ յառաջագոյն որոշեցաւ ի մէնջ, ահա եղև գոր-
,, ծակից սատանայի. մինչդեռ ոդին ի մարմնի է, ընկալաւ
,, զառհաւատչեայ գեհենին տանջանաց. որ ոչ միայն սքեղն
,, է ողբալի, այլև ամ գազանաբարոյ մարդկան։ Օ այս ա-
,, սէին, և քէմ արտասուս ի վէր կորուսելոյն հեղուին. և
,, անպէն երգս հոգևոցս ի բերան առեալ՝ ասէին. բարի է
,, յուսալ ի Տէր՝ քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի
,, Տէր՝ քան յուսալ իշխանս. ամենայն ազինք շրջեցան զինև,
,, և անուամբ Տեն յաղթեցի նոցա։ Վաջալերեին զիմեանս,
,, և ասէին. զայս գիտելով եղբայրք՝ մի երկիցուք յանհաւ ազ-
,, գէն հեթանոսաց, որ քան զմեզուս վատթարագոյն ևս են
,, ի զայրանալն իւրեանց. զի և նոքա ցասումն ի սատակումն
,, անձանց իւրեանց լիցի. այլ մեք զանուն Տեն կարդասցուք,
,, և վանեսցուք զանին ։ Այսու օրինակաւ կացին մնացեալն
երանելիքն ի կապանս ի միում բանտի զբազում ժամս. և ան-
գութն յազկերտ՝ որ իբր սիրով՝ խաղաղուէն կոչեալ էր զնա-
խարարս, ուրախ լինէր ընդ տառապանս նոցա. և խորհէր ի
ձեռն նեղուածց վատթարել զնա ի հաւատոց։ 454

Ա.Կոր. Ե. Փարպեցի։ Ե. Ապա եղև յազկերտի ընդ այն աւուրս ի սկզբան վեշ-
տասաներորդ ամի թագաւորութե իւրոյ պատրաստիլ ի պա-
տերազմ, և խաղալ ընդդէմ հոնաց՝ ըստ գրգռելոյ խրատու
միհրներսեհի։ Այլ զի կասկածեր նա, թէ գուցէ ի հեռա-
նալ իւրում յՏէ անտի՝ դիւրուն ինչ տացի երանելի կապե-
լոցն, և կամ պարապ փախստեան, հրամայեաց՝ զի իւրեանց
կապանքն տարցին զնա և զքահանայն յամուր դղեակն նիւ-
շապուհ քաղաքի յապար աշխարհին՝ որ ի վրկանս։ Այս յանձն
արար զնա մոգպետին մեծի՝ որ էր երևելի ք զբշմ գիտունս
օրինացն պարսից, միանգամայն և եր իշխան այնր երկրի. և
կարգեալ եր յարքայէ դենպետ ապար Տին, այ պետ դենի և
օրինաց. և ետ նմա պատուէր, զի կամ ողբանօք և կամ
տանջանօք որսացի զնա՝ ուրանալ զհաւատս քրի, մինդ զե-
րիցունս. զի ի դառնալ նոցա ասէ՝ և նախարարք դիւրաս
միաբանին զհետ նոյ։

Ա.Կոր. Ե. Տարեալ զնա մոգպետին ի դղեակ անդր՝ բազում աւուրբք և
բազմադիմի օրինակաւ տառապեցոյց զնա, և տանջեաց չարա-
չար աւելի քան զհրաման արքայի. զի կարասցէ խախտել զնա

454

'ի հաւատոցն։ Այլ տեսեալ՝ թէ ընդ ուրախ սրտիւ և զուարթ երեսօք տանին ընդունեց, և յաւէտ ևս քաջալերել սկսեալ զնոսա զվիճակաս, որոշեաց զերիցուսն 'ի նախարարաց և յաշակերտաց իւրեանց. և փակեաց 'ի ներքնատունն մի գէշ և խաւարչտին. և հրամայեաց միայն ասկաւ ինչ կերակուր ոգեպահիկ տալ նոցա։ Իսկ կացեալ երանելեացն աւուրս քառասունս՝ ուրախութեամբ օրհնէին զԱստուած։

Օ արմացեալ ընդ այս մոգպետին՝ համարեցաւ, եթէ գուցէ ոք 'ի ծառայից իւրոց կաշառս առեալ 'ի նոցանէ՝ տայ օրըստօրէ ուտելի առաստ, և պահէ զնոսա յանդորրս. վասն ինքնին գնացեալ 'ի դուռն բանտին՝ փակեաց և կնքեաց. և զտակաւասպետ կերակուր նոցա 'ի ձեռն հաւատարիմ արանց հրամայեր տանիլ։ Այս այսու օրինակաւ այլ ևս աւուրս հնգետասան զփորձ առեալ համբերուն նոցա՝ եպիտ նոյնպէս զուարթս։ Ի ոմեալ և 'ի պահապանաց յաղագս անդադար օրհնուն երանելեացն, որք առաջնոսիւք և բերկրալի ձայնիւ զամ օր իբր տօն մեծի ցընծուն կատարէին, աքանչացեալ հիանայր ընդ միտս իւր։ Յարուցեալ 'ի միում գիշերի եկն անդ զանխուլ. և հայեցեալ ընդ լուսամուտ տանեաց բանտին՝ ետես զնոսա, զի հանգիստ առեալ փոքր մի գետնախշտի ընկողմանեալ էին. և իւրաքանչիւրոք 'ի նոցանէ աքանչելի պայծառութիւք լուսափայլել՝ իբրև զբազմաձառագայթ կանթեղս վառեալ բորբոքեին։ Յորմէ անկաւ ահ մեծ 'ի վերայ նորա. և ասէ ընդ միտս իւր ընդ մոլար ձայնսն իւրում. * զինչ իցեն այս մեծ աքանչելիքս. ծածկեն ,, մեր ուրեմն եկեալ իջեալ են 'ի բանտս. և նոքա փառաւորուին ,, լուցեալ բորբոքեն. և եթէ նոքա առ ոսոս ոչ մերձենան, մարդոյ լոկոյ անհնարին է զայսպիսի պայծառութիւն լուսոյ զգենուլ։ Եւ ոչ կարելով հասու լինել աքանչելեացն՝ համարեր, թէ կախարդանօք ինչ յաչս այնպէս ձևանան. ընդ որում և զայլ հրաշս քրիստոնէից այնպիսի վարկանէր։ Եւ մինչդեռ նա զայս խորհէր, ետես, զի յարուցեալ սքեմն 'ի քնոյ՝ նովին լուսափայլ տեսլեամբք սկսան զերդս պաշտամանց կատարել. որով և ստուգեաց, եթէ ոչ առաւօք է, այլ յանձանց նոցա ծագէ այն լոյս անաղօտ. վասն առաւել ևս յահի մեծի եղեալ՝ շուարեցաւ, և թմրեցաւ, և մնաց անդէն 'ի վերայ տանեացն իբր կիսամեռ։

Եւ ընդ առաւօտն եղեալ անտի տակաւաքայլ ոտիւք դարձաւ յապարանս իւր. և կոչեալ զպահապանն՝ հրամայն ետ հանել զերանելիսն 'ի գիշերին բանտէ անտի կապանաց, և պահել յանդորրս և 'ի զգուշութիւն 'ի ցամաք վերնատան ուրեք։ Յայնժամ մի ոմն 'ի գահճաց անտի ընթացեալ եհաս առ երանելիսն՝ իբր աւետիս մեծ տալով նոցա յանտանելի նեղուցեց բանտին

զերծանելոյ. քանզի և մեք իսկ ասէ աղաչեցաք զմոգպետն՝ ազատել զձեզ յանհնարինն վշտաց աստի։

Եւ սքեն յովհեփ՝ ի դիմաց աւգոյն արար պինախ առ դահիճն, և ասէ. երթ ասա ցյիմար առաջնորդն ձեր. մեք՝ որ ակն ունիմք գալստեան Տեն մերոյ, ոչինչ եմք ձանձրացեալ՝ ի տառապանացս՝ իբրև անաճ ոք, որոյ չիք այլ յոյս՝ քան որ երևին։ Եւ թէպետ բարւոք արարեր, զի կամեցար դիւրութիւն տալ մեզ, այլ մեք ոչ փափաքիմք այդմ. զի թէ կամք էին մեզ ձողոպրիլ՝ ի վշտաց, ՚ի ձեռին մերում էր կալ հանգամեամբ յաչին հայոց, և ոչ անկանիլ՝ ի ձեռս ձեր. այլ որպէս կամաք և յօժարութիւն առանց ինչ զանգիտելոյ մատնեցաք զանձինս յայսպիսի նեղուիս, գիտելով՝ զոր ինչ միանգամ տանջանք կային մեզ առաջի, սոյնպէս և այժմ փափաքանօք ընդունիմք՝ զի ծանրացուացես՝ ի վերն մեր զնեղուիս օրըստօրէ։ Եւ զի և որոյ վերն յանձն առեալ կրեմք զայս ամ, նախ նա վասն մեր կրեաց բազումն և անբերելի չարչարանս. և ինքն բազմերար և աժենառատ տէր է. և ունի մեզ հատուցանել բարիս անչափուելիք. յորոյ ՚ի սէր փոքր համարիմք զայս ամ չարչարանս. և յնծացեալ պարծիմք ՚ի սոյն։ Եւ ուրեալ դահճին զայսպիսի անասկնունելի բանս, և տեսեալ զհաստատուն միտս նոցա անդէն մնալոյ՝ գնաց և պատմեաց մոգպետին։ Եւ նորա ևս քան զևս հիացեալ ընդ այն՝ կայր տագնապեալ ՚ի խորհուրդս իւր ՚ի վերայ նոցա։

Ե. Այս յաւուր միում ՚ի հասանել գիշերոյ գնացեալ միւսանգամ անդրէն ՚ի բանտն՝ հայեցաւ դարձեալ ընդ ծակ մի ՚ի ներքս. և տեսս զնոսա նոյնպէս լուսափայլ անձամբք ՚ի քուն մնեալ։ Կոչեաց յանուանէ զեղիկան սահակ, որ քաջ գիտեր պարակերն։ Եւ տեսեալ նա առ դուրսն, և ասէ. ով էս դու. և նա ասէ. ես ինքնին իսկ եմ մոգպետն. կամիմ ՚ի ներքս մտանել և տեսանել զձեզ։ Եւ իբրև եմուտ ՚ի մէջ սքեղն, այլ ոչ ևս տեսս զնոսան. և պատմեաց նոցա զոր եւ տեսեն երկիցս զպայծառութիւն լուսոյն։ Այնուհետև միաբան դարձեալ ընդ հայեցեալ ընդ ինքեանս՝ խրատս յորդորականս ետուն մոգպետին ձանձրացեալ զձեզմարիտն ՚ի նմանէ ընկալեալ։ Եւ նորա ոչ կարացին հաստատել զանձինս՝ ի սէր հաւատոյ. և նոքա հաւանեալ և ձայնակից լեալ սքեղն զնա ՚ի սէր հաւատոյ. և նոքա հաւանեալ և ձայնակից լեալ սքեղն

սկսան օրհնել զնա։

Եւ եղև իբրև կրկին ՚ի քուն մտին երանելիքն, նա ինքն մոգպետն արթուն կացեալ ՚ի վերն ոտից, և զձեռանն ՚ի վերս համբարձեալ՝ կայր յաղօթս. և այն ինչ հայեր ընդ տանիսն պշուցեալ յերկինս, տուն քանտին թովանդակ լի եղև հրաշալի լուսով. և ահա սանդուղք լուսեղէն կանգնեալ յերկրէ յերկինս. ընդ որ ելանէին դունդք զօրաց ահաւոր և սքանչելի տես-

լեամբք . զորոց և զԹիւնա նոյ ՚ի միտ առնոյր . էր մի ՚ի գլխաւորացդ հայոց արամբք . միւսն երեսուն և երիք արամբք , ըստ որում և երիք ծանօթագոյնք . և միւս ևս այլ՝ երկերիւր երեքտասան արամբք . և հուպ եղեալ առ նա՝ ծանեաւ զերիս ՚ի նոցանէ , այս է՝ զվարդան և զարտակ և զվորէն . որք ունէին լինն պատակս ՚ի ձեռս իւրեանց . և խօսէին ընդ միմեանս . ահա ասեն մերձեցաւ ժամանակ , զի և սոքա՝ որք աստ են , որոց և սպասեալ մնայաք , եկեալ խառնեսցին ՚ի գունդս մեր . ընդ որս և սա ևս , որում՝ ակն ոչ ունէաք . * Ա. յս երիցս անգամ (ասէ եղիշէ) երևեցաւ էքնաղ տեսիլս առնն երանելւոյ ‖ :

Ա. ւ իբրև աներևոյթ եղև տեսիլն , փութացաւ զարթուցանել զերանելիսն . և պատմեաց նոցա կարգաւ զնոսն : Յայնժամ և սքանչացան ձայն բարձեալ՝ գոհացան և օրհնեցին զՅԾ վանն ընտրելոյ և խառնելոյ զնա , ՚ի զմոպետն՝ ՚ի Թիւռ իւրեանց . և անսպատում ըղձանօք փափաքէին հասանել սպասկացն , զոր ետես այրն՝ պատրաստեալ ինքեանդ :

Յետ այսորիկ հանել զնա մոպետին ՚ի բանտէ անտի՝ տարաւ յապարանս իւր . ուր աւազան կարգել մկրտեցաւ , և հաղորդեցաւ նա խորհրդոյն . և ապա արար նմա սեղան խրախուճէ : Նոյնպէս և զնախարարս՝ որք կային ՚ի քո՚ղքն անդ ՚ի կապանս , զիշերայն ծածուկ կոչեալ առ ինքն՝ հանդոյց և զնա . և բարելից ինջոյիւք սփոփեաց զամենին : Ա. նդ ապա միաբան աչքին յաւծ խրախուսեալք՝ յորդորէին զմիմեանս՝ հաստատուն կալ ՚ի նահատակուճէ մինչև ցվախճան : Ար ՚ի մէջ սքոյն և արշէն երեց . զորմէ կասկածէին առ փոքր ի՚ անտեղեակ դոլոյ նոքա ՚ի գիրս . և կամելով քաջալերել զնա՝ մեծարեալ հրաւիրեցին նստել ՚ի գլուխ բազմականին : Ա. ւակ այրն նոքա ոչինչ իւ՚իք կամէր յանձն առնուլ . մինչև բռնադատեաց զնա սքոն սահակ . և բազմեցոյց ՚ի վերոյ քան զամենեսին :

Ա. ւ մինչդեռ զո՚արթուճիքն նստեալ ՚ի սեղան՝ խօսէին փափաքանօք զնահատակուճէ , յոտն եկաց սքոն յովսէփ , մարգարէացաւ և ասէ . վաղիւ՚ յայսմ ժամու յերկնաւոր կոչունս ունիմք տեսանել զմիմեանս . * և զոր օրինակ տեսիք զուք զեղ
,, բայրս զայս գլուխ բազմականիս մերոյ , սոյնպէս նախ սա
,, ընդունելոց է վաղիւ՚ զպսակն ՚ի ձեռն կատարման մերոյ .
,, զի ահաւասիկ եկին եհաս մերձեցաւ առ մեզ Թշնամին կե
,, նաց մերոյ , և պսակիչ սքն չարչարանաց ծառայիցս քո՚ ‖ :
Յայնժամ ուրախացեալ երանելի երիցուն՝ ետ պինիւ , և ասէ .
* Ա. ՚ն զօ աղօԹիդ ձերոյ այսպէս արասցե ինձ քո՚ . և կատա
,, րեսցէ զնա վախճանի իմոյ յՅԾս ընդ բանի քումս : Ա. հա ընդ
,, առեալ քո՚ ապդուին եղև հոգւոյս իմոյ . և յիշեցի ես զմար
,, գարեին քո՚ . . . . Ա. ղաչեմ զձեզ տեառքդ իմ և հարբ ,

,, աղօթս արարիք ՚ի վէր անարժանութեանս իմոյ · զի արժանի
,, եղիցի մեծի աւետեացն հասանել , որ ՚ի յանապատ բերանոց
,, ձերոց քարոզեցաւ ՚ի լսելիս իմ ։ Արդ՝ փութամ տեսա-
,, նել զօրն , և յաւուր անդ գժամն եկեալ հասեալ ՚ի վէր մեր ·
,, և երբ իցէ՝ զի եկից ՚ի Թանձրադանդաղ ձանձրալի մարմ-
,, նոյս · երբ իցէ՝ զի տեսից զքեզ տէր քո · երբ իցէ՝ զի ամեր-
,, կիւղ եղէց ՚ի մահուանէ · երբ իցէ՝ զի տիւխտուիս իմ հաս-
,, ցէ ՚ի կատարեալ գիտուէ · օգնեա՛ ինձ տէր , օգնեա՛ ինձ · և
,, կարկառեա՛ զամենաշնորհ աջդ յօգնականութիւն ։ Ո այս ա-
ստացեալ երանելոյն արշենայ , յոտն կացին քաղմականք , և
արարին զաղօթս գոհուէ ՚ի վէր սեղանոյն · և ապա նստեալ
անդէն՝ սկսան այլ եւս միաբանական բանիւք քաջալերել զը-
միմեանս ։

Փոլպեցի · Ե · Յայնմ վայրի հայեցեալ երանելի նախարարացն յերեսս
Լուիւ · Ե · քահանային , մորմոքեին յոյժ , և սիրտք նոցա ձմլէին ՚ի նոսա ·
զի առաջի կայր ինքեանց բաժանիլ ՚ի միմեանց ։ Սակ սէր քա-
հանային սիրելին զնոսա՝ յուշ առնելով զոր առնելոյ էր նոցա
նա · զի հանդերձեալ էք ասեն այցելութեանն արձակիլ ՚ի կապա-
նաց ձերոց , և դառնալ յաշ ձեր · մի խռովեսջիք , զի ոչ մոռաս-
ցի ես զվաստակ համբերութեանդ ձերոյ , այլ հատուցից բիւրա-
պատիկ · և մեք փութամք ձեզիմք գնալ յառաջագոյն ՚ի քնիկ
աշխարհ մեր յերկինս · արդ՝ ոչ եթէ ոք ՚ի ձէնջ այսօր յու-
զարկեալ լինիմք ՚ի հայս , տանիմք ՚ի ձէնջ Թուղթս սիրալիրս և
ողջոյնս իւնգութեան առ ընտանիս · նոյնպէս և մեք յուզարկեալ ՚ի
ձէնջ՝ տանիմք զողջոյն և զյանձնարարուէն ձեր առ փրկիչն ,
և առ գունդս առաքելոց և ամենից · և անդ բերկրալից ապա-
սեմք ձեզ՝ ընդունիլ և զձեզ ՚ի փառս · զի ոչ չարչարակից գտաք
միմեանց յերկրի աստ , նոյնպէս և անդ ՚ի միասին վայելեսցուք
յանապատում փառս ։ Եւ արդ՝ փութացեալք առ ՚ի ձէնջ զնամ
տրտմութի , և մի սգայք ընդ մեկնիլ մեր ՚ի ձէնջ ։

Սակ նախարարացն արտասուալից ուրախութիւն պատմեին ա-
րարեալ՝ ասեն · մի եւս լինի մեզ տրտմիլ ՚ի վէր ձեր , զի յու-
զարկեմք զձեզ յայնպիսի տեղի , ուստի մերժեալ են ամ
տրտմութիւնք և ցաւք · ուր և հանդերձեալ է մեր ժամանել
փութով անդր · և մեզ օրս այս կարապետ է աւուրն տեսա-
նելոյ զձեզ յարքայութենէ երկնից · և արդ՝ ուրախ եմք , զի
զՀոգևոր հարս մեր , զորս ՚ի կենդանութեանս իբրև զհրեշ-
տակս տեսանէաք , այժմ ահա տեսանեմք խառնիլ ընդ զուար-
թունս երկնից ։ Յոպիսի խմաստուն և հոգեկից բանիւք
ուրախ ցուցեալ զինքեանս երանելի նախարարացն՝ ուրախ
առնէին և զնոքա երիցունս ։ Որոց բերկրեալ ՚ի սրտի՝ փառս
տային ասեն · գոհանամք տեսեն զքեզ փրկիչ , զի զոչխարս բա-

454 454

նաւուր հօտի սքէն գրիգորի առաւել քան զհովիւն՝ իմաստուն կարդեցեր , և զաշակերտսն քան զվարդապետն՝ գիտուն արարեր . որով և մեք աւասիկ քաջալերեցաք ՚ի քեզնից այդ , հարք յորդւոց , և վդիք յաշակերտաց . և արդ՝ ոք յուղի արկեալ առաքեն զմեզ առ քեզ . և ինքեանք մնալով ՚ի մարմնի՝ ընդ քեզ են , և քև զօրանան . գուն պահեա զսուտա ամենաղօթ աշուիքդ . գուն ինքն միխիթարեա զսուտա , գուն ա-

ձեցո՛ զընտրհս քոյ ՚ի վէր սուտա ։

Այլ յետ այսպէս գոհանալոյ նմա և միաբան ուրախանալոց , անդէն նախարարքն յանձն արարեալ զանձինս աղօթից սքեյն՝ մեկնեցան և գնային ՚ի տեղի իւրեանց ։ Իսկ մոգպետն հանդերձ սքիվքն գնացեալ վերստին ՚ի բանտ՝ դադարեաց անդէն ընդ նոսին՝ արկեալ յինքն զկապանս շղթայից ըստ օրինակի նմա . և նոքա խորհէին՝ թէ գիարդ ապրեցուսցեն զնա , զի մի ՚ի պատճառս այնպիսի առն երևելւոյ աղմուկ մեծ ծագեսցի .

և սա տուն նր պատուհաս ընկալցի ՚ի Թէդրէն ։

Ե . Այլ Թագաւորն յազկերտ յետ յանձնելոյ մոգպետին զերանելիսն , և վարելոյ զնա ՚ի նիւշապուհ , առեալ ընդ իւր զմիհրներսէհ հազարապետ՝ չորս արար գնայ մեծաւ պատրաստութիւնք ՚ի վէր հոնաց , տարեալ ընդ ինքեան զերկուս ՚ի քահանայից կապելոց՝ զսամուէլ և զաթբահամ . զորս պահեալ էր առ իւր , և չարաչար վշտօք և գանիւք տայր նեղել հանապազօր՝ ահ և երկիւղ արկանել նոքօք ՚ի սիրտս այլոց քրիստոնէից ։ Ա. Ղաղիէ . Ը ։ Վարդենի ։

Այլ էր ՚ի բանակի անդ պարսից այր ումն բեկ անուն՝ յազգէ հոնաց , իշխան երևելի . որ ինքնակամ մտեալ էր ՚ի ծառայութիւն յազկերտի , և մտերմութիւնք սպաս տանէր նմ . և էր սա ՚ի ծածուկ աշակերտեալ վիշապութենէ քրիստոնէից . որոյ և տեսեալ զչարչարանս երանելւոյն երիցանցն՝ կարի յոյժ գժուէարեր յանձն իւր ։ Այլ իբրև ոչինչ եդիտ հնարս վն դիւրուէ նմ , փախստեայ գնաց ՚ի կարաւանէ անտի , և անկաւ յՀոնաց . և մատուցեալ առ Թէդրն՝ պատմեաց նմ զամ գործս յազկերտի . և Թէ ունի նեղեալ և վեր ՚ի վայր արար նա զՀոն հայոց . միանգամայն և աղդ արար զարշաւել նր ընդէմ հոնաց ։

Ո՛այս Թէոդոտ և յառաջագոյն լուեալ էր նա ինքն Թէդրն , բայց յորժամ ստուգութիւնք տեղեկացաւ ՚ի բերելոյ , փութացաւ և էառ զզօրս իւր . և եկն ընդ առաջ յազկերտի ։ Այլ զի ոչ կարեր նա ձակատ առ ձակատ մարտնչիլ ընդէմ թագաւորին պարսից , ՚ի գունդս գունդս բաժանեալ զիւրսն՝ արձակեաց առաջապահսն ՚ի վերջին Թեւս բանակի նմ . և արար ՚ինն հարուածս սաստիկս ։ Այլ մինչդեռ ջանային զօրք յազկերտի զդէմ ունել միոյ գնդի հոնացն , յանկարծուստ յանակն-

ակնկալ պահու այլ դուռնդք յայլմէ կողմանէ՝ ի վէր հասեալ՝ Ա.Թ. ՚ի Ա.Թ.
զմիւս ԹԵ արքունի զօրուն խորտակելին . մինչև վաղդիլ
յոյժ յազկերտի , և գառնալ կորակոր յետս ։ Իսկ ԹԳրն հո-
նաց զհետ մտեալ ընդ , և ընդ ծածուկ ձեղ անցեալ ՚ի միւսմէն
պարսից՝ ոտնակոխ արար և աւերեաց զբնակ տեղիս . և դար-
ձաւ յոյժ իւր բնակ աւարաւ և գերութեբ ։

ԳԼՈՒԽ · ԺԹ.

Յաղագս վարանման յազկերտի , և նահապետութեան պետրոսի ։

ԻՆչիկ · ԸՐ ՊԱրպետի ։

454 Յ ատուցեալ յազկերտի ընդ գործս հունաց՝ յորոց ա-
մօթով պարտեցաւ , դառնացաւ յանձն իւր , և
՚ի խոր խոցեցաւ . վարաներ և տագնապեր , և ՚ի
տարակուսեբ եղեալ՝ ձգեր զպատճառս իրացն մերթ յանմիա-
բանութիւն զօրաց իւրոց , և մերթ ՚ի ծուլութիւն մոգուցն . իբր
թէ գուցէ չկարացեալ նոքա կարացեալ հաձել զմիտս ուծոցն արժա-
նաւոր զոհիւբ . որոյ վ՚ր և նոքա դարձուցին առ զերեսս իւ-
րեանց ՚ի զօրաց մերոց , և թոյլ եառուն կորնչիլ այնչափ բազ-
մութեբ ընտիր արանց ։ Ալ արաներ և միհրներսեհ ՚ի միտս իւր
,, ժանաւոր ։

Ուստ այլք ոմանք յերևելի նախարարաց ամրացուցեալ զքա-
ղաքս իւրեանց զօրականօք և պաշարօք՝ կային լուռութիւն իւր
յանհոգս ։ և ոչ ևս էր տեսանել այնուհետև՝ ի հայոստան
աշխարհի՝ ոչ քաջութիւն զինուց, և ոչ մի ծագումն ինչ ։
մինչև՝ ի կարգս անպիտան ազգաց համարիլ պարսից զՀայս ։
Ասատ և ինքն իսկ Թէրն պերոզ՝ ի խօսիլ իւրում առաջի մե-
ծամեծաց իւրոց՝ ասաց երբեմն այսպիսի ինչ ։ ի թագաւո-
րութենէ իմում Թէպէտ և անպիտան համարեալ են ասորիք ,
բայց անպիտանագոյն ևս տեսանեմ զՀայս ։ Քանզի այս լուր՝ ա-
ռաքս փարպեցին՝ արժանի էր լալոյ և ողբալոյ ։ քանզի ազգ մեր
՚ի նախկին ձմկա միշտ արի և անպարտելի անուանեալ յիշատա-
կեալ լինէր ։ որպէս յայտ է և ՚ի պատմութենէ ։ և ասկայն
՚ի ժամանակի աստ թողլով ոմանց զկրօնս քրիստոնէութենէ ,
և թուլանալով այլոց յարութենէ քաջութենէ՝ անուանեցան ան-
պիտան և խոտան ։

Եսդր. 17։ Յայսպիսի խառնարազգած ձևի՝ որք միանգամ մեացեալ էին
Եսթր. 19։ յաշակերտաց սրբոյն սահակայ և մեսրոպայ , սքեն եղիշէ , սքեն
Յ աղբան ։ մովսէս խորենացի , և այլք ոմանք , թէպէտ և իբրև աստեղս
Ալեքսիս ։ փայլէին , բայց տեսեալ յայսչափ վրդովմութենէ զձն՝ մեկնեալ
և այլք ։ յամբոխէ մարդկան՝ առանձնացան ՚ի վանորայս և յանապատս
տեղիս իբր յանծանօթս ։ և պարապէին հոգևորական կրօ-
նութեանց , և շարագրութենէ գրոց , և թարգմանութենէ սէս-
պէս օգտակար և հոգեշահ մատենից ։ զորոց յիշատակեալ
եմք յերկրորդ գիրս · գլ · կ ։

Մարտ. 29։ Ե ։ Յաւուրս ժամանակացս այսոցիկ նստաւ Տէր թագա-
ւոր յՅին հռոմայ ։ և զօրաժողով լեալ դիմեաց գալ անթիւ
բազմութեամբ ՚ի վրէ պարսից ։ և հասեալ յամին կուր գետոյ՝ նըս-
տաւ անդ ։ և անտի առպաստակ սփռեալ յաղուձանս և ՚ի վիրս՝
խաղաց ինքն ՚ի կողմանս մարաց ։ Իսկ մինչ յիշխանացն Տէր եղ
՚ի կողմանս խաչենոյ յՅին հայոց ։ և առպատակութենէ էառ
աւար և գերի բազմ , և էած զնա յընդարձակ բլուր մի ։ և անդ
կացեալ աւուրս ինչ՝ զոմանս ՚ի մնտակայ բնակչաց տեղւոյն
կալեալ սպան վ՚ը հաւատոյ ։ Ըստ որս և զաթանաս քահանայ ,
որ եկել էր յՏէմ , և զերկուս ընկերս նորին , և զոմանս յայլա-

կերս

կերտաց սքանչելեացն մեծապայծառ , որք կային անդ և ձգնեին խոտա-
քուտ կենօք ։ Ի մէջ գերեզմանին՝ զորս հաւատնա՛ի հայոց անտի ,
կայր և կին մի Թագուհի անուն՝ առաւելեալ յոյժ՛ի գե-
ղեցկութենէ . զոր և կամեցաւ առնուլ իւր՛ի կնութիւն ։ Այլ
յընդդիմանալ նմա կամաց քարքարոսին՝ գան եհար զնա սաս-
տիկ , և հրամայեաց քարշել ընդ գետին . որով և պատուա-
տեցաւ խոպան ամ մարմին նորա . և՛ ի նոյն տանջանս կատա-
րեցաւ նա՛ի քրն ։

Ապեցաց յայնմ գիշերի լոյս մեծ՛ի վերայ մարմնոյ սրբուհւոյն ,
և՛ ի վերայ իւրաքանչիւր կաթուածոց արեանն՝ իբրև աստեղս
ձառագայթելով ։ Մինդ որ զահի հարեալ իշխանին և զօրաց նո-
րա առ հասկ , կոչեցին զբահանայս՛ի գերեզմոյ անտի , և հար-
ցին՝ թէ զինչ էցէ այն . և նոքա աստի առին թառեալ՝ քարոզե-
ցին նոցա զէն ։ Ուրեք բարքարոսացն սրտի մտօք զբանս նոցա
հաւատացին և՝ մկրտեցան յաւուր աւազակ շաբաթու . և՛ ի մէջ
որոց իշխանն այն՝ և՛ սքն աւազանէն ընկալաւ անուն Թէոփի-
լոս . և որդիք նոր կոչեցան մովսէս և երանոզիս ։ Մինչեալ
ապա զմարմին սրբուհւոյն՝ եդին՛ի բլրակին , որ և վ՛ն այսր
պատճառի աստղաբլուր ասի՝ նշանակեցաւ . և աղաւտեալ արձա-
կեցին զնա՛մ գերեալսն ։

Ոսկ արքայն հանաց ասպետակեալ յծն մարաց և պար-
սից , և դառնալ իւրում քազում աւարաւ և գերութիւ՛ լը-
ուել զանցս Թէոփիլեայ և որդւոց նորա , տրտմեցաւ յոյժ և
զայրացաւ . և պատուէր յղեալ՝ կոչեաց առ ինքն զԹէո-
փիլոս հանդերձ երեսուն արամբք . և յոյդոյնեաց զնա և զորս
ընդ նմա՝ դառնալ՛ի հաւատոցն ։ Այլ իբրև ոչ առին նոքա յանձն ,
սուր՛ի վերայ եդեալ կոտորեցին զնոսա ։ Այլ իբրև լուան զայս որ-
դիք նորա մովսէս և երանոզիս , և որք ընդ նոսա , փախեան
՛ի լեառն մի մօտ՝ զերծանիլ՛ի ցասմանէ արքային . որոց ըզ-
հետ մտեալ հոնաց ապանին զնոսա անդ . և՛ ի մի վայր ժողո-
վեալ զմարմինս նոցա՝ դիզեցին՛ի վերայ փայտից , և այրեցին զնա .
յորմէ ընդ առելոյ ոմանց՝ և տեղին այն դիշափայտ կոչեցաւ ։
Այլ յետ ձմեռնց ձգնաւորք ոմանք գնացեալ անդր՝ արարին
իւրեանց վանս , և քնակեցան՛ի նմ։

Գ Լ Ո Ւ Խ · ԺԲ ։

Յաղագս ծաղկելոյն Յաղկեդոնի ։

Եւ · Որ խոստացաքն ՚ի վերոյ ՚է գլ · ԺԲ · վ՚ս ժողովոյն Յաղկեդոնի ։ արժան է մեզ աստանօր կատարել ։ Այս Թէպէտ ըս կարգի ժամանակին՝ յառաջագոյն պարտ էր խօսիլ զայնմանէ, որովհետև այն եղև իբրև երեքտասան ամաք յառաջ քան զարձակիլ նախարարացն՝ և յառաջ քան զնստիլ գիւտայ, զորոց խօսեցաք ՚ի նախընթացս գլուխդ, բայց կամեցաւ զպատմութի՛ն նոցին անընդհատ շարունակութիւն կարգել, ոչ թուձեցաւ պատշաճ՚ի կարգի նոյ դասել զձառ սորին, այլ՝ որոշակի զկնի ։

{448}

Այս արդ՝ քանզի ՚ի պատճառս այսր ժողովոյ բազում խռովութիւք և յուզմունք ծագեցան յազգի մերում ըս այլ ազգս, և յոդեցան և մուծան ՚ի թշնամեաց ժողովոյն, մինդ յասորոց բազում առասպելաբանութի՛ք և սուտ վիպասանութի՛ք յազգ մեր, պարտ է մեզ զպատմութի՛ն սորա ըս ձիշդ և անսխալ քննութի՛ն՝ ձշմարտութի՛ւք և անպատրուհակ քանիւ՛ գնել առաջի, ՚ի բաց եդեալ զնմանկեղծապատիր ստութի՛ս ։

Այս ոմն զի բարւոք և ըս կարգի աւանդեսցի այն, սկիզբն առնուցուք պատմել ՚ի ծագմանէ անտի հերձուածոյն եւտիքեայ · ոմն և աւանդի ՚ի քուն պատմութե՛ ժողովոյն, զոր յոյն լեզուաւ գրեցին նօտարք այնր ձմկի · որ և տպագրեալ կայ ՚ի մեծամեծ հատորս, ՚ի մի էջն յունարէն, և ՚ի միւս էջն լատիներէն · հատոր · Շ · և Է ։ Գրեցին զայսմ ժողովոյ և փակունդոս հերմեան մերձաւոր ձմկաւ · և եւագրիոս · գիրք · Ա · Ձ · և Է · և լիբերատոս սարկաւագ ՚է դպրոցացն · գլ · ԺԱ ։ և յետ նոցա Թէոփանէս · և փոտ ՚ի պատմութե՛ եօթն ժողովոց · և կեդրենոս · և զոնարաս · գիրք · Է · և նեղոս հռոդեցի ՚է գիրս ծողովոյ, և այլք ։ Այսուհետև զայսմանէ քիչ մինչ և ՚ի թուղթս, որք գրեցան յայնմ ձմկի ՚ի բազմաց աւս բազումս ։ Զոր զարդի մատենագիրս, որք զգուշաւոր քննութի՛ւք ածաբանող զայն գրեցին և աւանդեցին զայն պատմութի՛ն, յուսկանենս կապասս · նաստաղէս աղեքսանդր · և այլք քիչք ։ Այս ահա ՚ի սոցանէ առեալ գրեմք աստ ։

{431}

Ալեքսանդրոս Այսոփը · ԱՀ · Նայլ՝ յիշատպարկեալ ։

Ըստ որոյ մերժեցաւ նեստոր յեկեղեցւոյն ՚ի սքբ ժողովին եփեսոսի, նստաւ պատրիարգ ՚ի կոստանդնուպոլիս մաքսիմոս երկրորդ, ամս · Ը · և ամիս · 5 ։ Այս առաջ պլատիղ, ամս · ԺԶ · և ամիս · 3 ։ Այս յետ նոր փլաբիանոս · յորոյ ա-

{447} եւ զրս երևեցաւ եւտիքէս հերետիկոս ժամանակ ։ Այս էր սորին մանտրիտ՝ յոր վանահայրն մեծի հռչակաւոր մենաստանին կոստանդինուպոլսոյ . որ և անհնարին նախանձու ընդեմ զինեցաւ չարին նեստորի . և զի տգէտ ոմն էր , գլորեցաւ ի ներհական ծայրս մոլորութեանն նորա . վասն զի կամելով պատսպարել զմիութեի անձինն ընդեմ նեստորի՝ սկսաւ ջատագովել և ըզմիութեի բնութեանն ի քրս՝ հանդերձ չփոթութեաբ , յաւելեալ և զայլ յիմարական բանս ըստ մտաց ապոլինարի ։ Այս մոլորութեի սորա եկն ի յայտ յերկրորդ ամի փլաբիանոսի պատրիարգին . որում և իրազեկ լեալ եւսեբիոս եպիսկոպոսն՝ որ ի փռիւգիա , այր երևելի , քաջզում անգամ զգուշացոյց զեւտիքէս ։ Այլ նա ոչինչ անսացեալ եւսեբեայ՝ սկսաւ տարածել զմոլորութեի իւր բանիւ և գրով ի մէջ կրօնաւորաց՝ մերձաւորաց և հեռաւորաց ։

{448} Ի նմին ժամանակի ի ծագիլ հակառակութեաց ինչ ի մէջ եպիսկոպոսանց , փլաբիանոս արար ժողով ի կոստանդինուպոլիս վասն խաղաղութեան ։ Այս ի նոյն ժողով եւսեբիոս եպիսկոպոսն տորիղայ մատուցց թուղթ առաջի հարցն . յորում յայտ առնէր զմոլորութինն եւտիքեայ ։ Ընդ որ կարի ինչ տհաճեալ նոցա՝ ազգ արարին եւտիքեայ գալ վաղվաղակի ի ժողով անդր ։ Այլ նա չէաւ յանձն , պատճառս եդեալ՝ թէ ինքն հաստատեալ է ի մոի չելանել բնաւ ի մենաստանէ անտի՝ բաց ի հարկաւորութենէ մահու . զի իբրև ի գերեզման մտեալ է իմ ասէ աստ ի վանս ։ Իւանգամ կոչեցին զնա . և նա զնոյն ետպէնէ՝ միանգամայն պատճառելով և զծերութեի և զհիւանդութեի իւր ։ Այլ ապա յերրորդ անգամն կոչել՝ եկն ի տեզի նոր աբրահամ միայնակեաց հանդերձ այլովք միայնակեցօք . և ասէ . ի պատճառս խօթութեե ոչ կարէ գալ նա աստ . և մեք պատուիրեր ունիմք տալ փիսկ նոր զպինսի ։ Այլ տեսեալ ժողովոյն , թէ այս է նենգութեե հնարք , վերստին առաքեցին հրեշտակս առ եւտիքէս , և հրամայեցին , զի անձամբ անձին յանդիման լինի ժողովոյն ։

Ընձայացեալ եւտիքեայ՝ խնդրեաց ապաչանօք՝ թոյլ տալ ինքեան զաւուրս եօթն , մինչև առողջասցի ի կեղծեալ հիւանդութենէ ։ Այլ յայն եօթն աւուրսն գնաց հնարս ի մէջ առեալ՝ գիմեաց առ կայսրն Թէոդոս փոքր՝ ձեռնտուութեբ կրիւսափեայ առն զօրաւորի , որ և անհնարին թշնամի էր փլաբիանոսի պատրիարգին ։ Այս յեօթներորդ աւուր անդ {431} ի գումարիլ ժողովոյ հրամանաւ փլաբիանոսի՝ եկն անդ և եւտիքէս հանդերձ ամբոխիւ միայնակեցաց և գինուորաց . ընդ որս և փլորենտիոս պատրիկ խնամակալ տան կայսերն՝ ըստ միջնորդելոյ կրիւսափեայ . (այս այն փլորենտիոս է , զոր փար-

պեցին կոչէ փլորենտոս , և եղիշէ եփլարիոս , որ յետոյ աբ-
դել զկայսրն յօգնելոյ Հայոց) ։

Ա ։ Ժողովի անդ քննեալ զմնորութեի եւտիքեայ՝ գոհն մա-
սամբ իւիք համաձայն հերձուածոյն ապողինարի և վաղեն-
տեայ ։ Ա։ իբրև յամառեալ դասաւ եւտիքես՝ ի զատագովել
զմնորութեի իւր խառնիխուռն բանիւ , բանադրանա եդեալ
՝ի վր՝ նը՝ զրկեցին զնա յամ պաշտամանց քրիստեայութե , և
՝ի հաղորդութ հաւատացելոց , և յաւաջնորդութէ վեհասա-
տանին ։ Ա։ ստորագրեցին այսմ երեսուն հայրապետք , և
քսան և երեք վանահարք ։

Իբրև եռես եւտիքես , եթէ դատապարտեցաւ , յետ քսզում
հնարս հնարելոյ՝ բողոք կալաւ նենգալի բանիւք յաթոռն
հռոմայ առ լևոն պապ ։ Ա։այց ՝ի գրել նաև փլաբիանոսի
՝ի հռոմ , եկն ՝ի յայտ նենգութիւն եւտիքեայ . որոյ վ՚ն սկսաւ
քաշզում խռովութ՚իս յարուցանել ՝ի քաղաքին , և քաղքել
առ կայսրն . և կայսրն հրամայեաց վերստին ժողով գումա-
րել ՝ի նմին քաղաքի ։

{449} Ա։այց այսու ևս սակաւ օգտեալ եւտիքեայ՝ գրճ՚ ՝ի ձեռն
կրիւսափեայ հրամանն ընկալաւ ՝ի կայսերէ՝ զայլ ժողով գու-
մարել յեփեսոս . յորում հրովարտակաւ կայսերն ըզ նպաս-
տեղոյ կրիւսափեայ նախագահն նստաւ դիոսկորոս պատրիարգ
ազեքսանդրու՝ պաշտպան եւտիքեայ ։ Ա։ոչեաց եւտիքես հրա-
մանաւ կայսերն յայս ժողով և զմաերիմս սիրելին իւր զպար-
սամ կիմ զբարսումն պրշիմանարիան յասորւոց եպսկ , ևի-
նել բերան ամ՚ միաշնակեցաց՝ զորս որսացեալ էր յիւր կողմն ։
Ա։րաւիրեաց կայսրն և զևտն պապ յայն ժողով . և նա քան-
զի ոչ խափանել , և ոչ յիտալիա փոխադրել կարօղ էր զայն ,
զի ոչ ևս դայր ժամանակ , առաքեաց փոխան իւր հրեշտակն՝
զյուվենտոս եպիսկ , զհրեռատոս երէց , և զհիլարիոս սարկաւագ .
ըստ որս և զդուբկիտիոս դպիր ։

Ձ . Յայս ժողով գումարեցան հարիւր և երեսուն հայրա-
պետք , յամենայնն օգոստոսի , յամի տն՝ 449 . և ՝ի գալ անդր
փլաբիանոսի՝ ոչ եթող դիոսկորոս նստիլ ՝ի մէջ յիւրում տեղւոջ ,
այլ ՝ի հինգերորդ աթոռն . և ընկէց զնա հրամանաւ կայ-
սեր յիրաւանց դատաւոր լինելոյ ՝ի ժողովի անդ . և հրամայ-
եաց կալ անդ իբրև դատելի հանդերձ այնոքիւք եպիսկոպ ,
որք յառաջն ժողովեալ ՝ի գոտանդինուպոլիս դատապարտե-
ցին զեւտիքես ։ Ա։րև հասին անդր և հրեշտակք լևոնի պա-
պին , և մատուցին զթուղթն՝ զոր գրեալ էր ընդ լևոն ,
հրամայեաց դիոսկորոս ընդունել զթուղթն , այլ ոչ ետ թոյլ
ընթեռնուլ անդէն . որպես օրէնն էր յայլ ժողովն առնել .
ուր նախ ընթեռնուին զթուղթ պապին լատին լեզուաւ , և

{449}

ապա յունարէն ։ Եւ ոչ ևս ետուն հրեշտակաց տէրն ըս իւրեանց հրեշտակութե ։ վայ և ոչ նստան նք անդ , այլ ուրոյն ։ Յառաջ մատեաւ եւտիքէս՝ի ժողով անդր , և ետ դասանու թի երկդիմի և պատիր քանիւք ։ Տեսեալ փլաբիանոսի , թէ եւտիքէս խաբէութե վարելով՝ջանայ զմնլորութի իւր պատրուակել , և զանձն արդարացուցանել , ալաչեաց զհարս ժողովոյն , զի մտցէ՝ի ժողով անդր և եւսեբիոս ենկս տոլիղայ , որ զառաջինն՝ զմնլորութի եւտիքեայ՝ի յայտ ածեալ էր ։ բայց արգել ելպիդիոս կոմն՝ որ անդ էր , քարեկամ եւսիքեայ ։ Այսպս ընթերցեալ եզև գործ ժողովոյն՝ զոր արարն փլաբիանոս՝ի դատապարտութի եւտիքեայ ։

Ընթերցուալ զայն գործ ժողովոյն՝ դեոսկորոս՝ և յոբնտղ եպմացի ջատագովք եւտիքեայ՝ի վէր հասեալ և գիտացեալ , թէ ոչինչ վճարի այնու ըս կամն իւրեանց յօգնուի եւտիքեայ , յարուցին անդէն շփոթ մեծ հանդերձ իւրեանց համախոհիւքն ։ մուծին՝ի ներքս և զկինուձորան՝ որք պատրաստեալ կային արտաքոյ , և զմիանձնունն հանդերձ պարասմնաւ ։ Յարձակեցան նք միաբան՝ի վէր ժողովելոցն ։ արգելին զձեռս առնադպրաց , որք զնմ գործս ժողովոյն ընդ գրով արկանէին ։ խորտակեցին և զտախտակն ։ և լցին աղմկաւ զժողովն ։ Եւ անագան ուրեմն խաղաղացեալ՝ նզովիւք գատապարտեցին զքանի մի եպիսկոպոսունս՝ որք ոչ էին անդ , գիտելով թէ դէմս կայ են նք իւրեանց խորհրդոց ։ և հրամայեցին ընկերնուլ զնս յաթոռոյ ։ և ապա զնմ կուսակիցս փլաբիանոսի ետուն՝ի շղթայս մատնել ։

Յակ զփլաբիանոս՝ առանց թոյլ տալոյ ամենևին բարբառել ինչ՝ պահեցին անդէն ։ և սկսան պակուցանողական սպառնալեօք բռնադբօսել զայլ ենկսունս՝ որք ահաբեկեալ կային անդ , ձեռս դնել՝ի վէր անպիտան սպիտակ մագաղաթի ։ յորում զինչ ինչ արդեօք հանդերձեալ էին նոքա գրել , ոչ գիտէին ստորագրօղքն ։ Յայնմ վայրի բոլորք բարձեալ հրեշտակաց պապին , և ոչինչ օգտեալ , շտապ տագնապաւ՝ի դուրս կոչեցին զանձինս յամբռխե անտի ։ և մաղապուր ձեղոպքեալ ընդ մէջ վահանաւոր սպառազինեալ զինուորաց՝ խոյս ետուն յայլ տեղի ։ Եւ հրամայել ապա դեոսկորոսի՝ի մէջ եբեր եւտիքէս զթուղթ դատաստանին իւրոյ փոքր ինչ նման դատաստանին նիկիոյ , ի բաց հանեալ անտի զյաւելուածն զայն սրբոյ ժողովոյն կոստանդինուպօլսոյ , * որ յղացաւ՝ի հոգւոյն սրբոյ՝ի մարիամայ կուսէն ։ և զայս թուղթ ընթերցաւ յովհաննէս երէց վերծանօղ ։ Ընդ որ հաւանեալ դեոսկորոս՝ մեծաձայնաբար աղաղակաւ ձայնէր , թէ այն ինչ նիկիական հաւատք ։

Յետ այսորիկ նա ինքն դէոսկորոս միաբանութիւնք համախո-
հից իւրոց ետ վկայութիւն սրբութիւն և ուղղափառութիւն ժան-
տին եւտիքեայ. և յառաջին վիճակ անդր դասիցոյց զնա.
իսկ զփլաբիանոս և զեւսեբիոս տորիղացի հրամայեաց աք-
սորել: Յայնժամ ամենք ի մեծապատիւ հայրապետաց եղե-
լոց անդ անկեալ առ ոտս դէոսկորոսի՝ աղաչէին զնա վասն
փլաբիանոսի, ցուցեալ զանմեղութիւնն նր. բայց ի հրամայել
դէոսկորոսի՝ յառաջ մատուցեալ՝ ի բաց մերժեցին զնա անտի
զինուորք, և միայնակեացք եւտիքեայ. ոչ եղեալ արտաքս՝
արձանացեալ կայրին առ դրանն քրօք, և ոմանք և սրովք:
Տեսեալ փլաբիանոսի, թէ այն ժողով դարձաւ յելուզակու-
թիւն, և զինքն բռնութիւնք ընկենուն յաթոռոյ, ծողոք կալաւ
յաթոռն հռոմայ: Ընդ այս քան նր յանհնարինս զայրա-
ցեալ դէոսկորոսի և եւտիքեայ և պարսամայ և համախոհից
նր, յարձակեցան ի վր նր քարկուք. և խոշտանգեցին զնա
շինամանօք և գանիւք, և աքացի հարկանելով, մինդ նա
ինքն պարսամ. և այնպէս բռնի յեկեղեցւոյ անտի վարեցին
ընդ քարշ ի դուրս. մինչև յետ երից աւուրց ի ցաւոց անտի
մեռաւ երանելին յաքսորս:

Ընկէց դէոսկորոս յաթոռոյ և զԹէոդորետոս եպիս կիւրիոյ
ի բացակայութիւն նր. մինդ զի գլեալ էր զնմանէ Թէոդոս
փաքր առ դէոսկորոս՝ մի մուծանել զնա ի ժողովն: Յայն-
ժամ գրեաց Թէոդորետոս Թուղթ բողոքանաց ի հռոմ առ
պեղս լևոն, և արդարացոյց զինքն առաջի նր՝ իբր ջատագով
ուղղափառութիւն. և պեղս լևոն գրեաց առ այլս քննել զդատ
նր և զդաւանութիւն նորին ի ժողովի:

Յետ աւարտելոյ ամենայնի վերոյասացեալ ժողովոյն՝ գնա-
ցեալ դէոսկորոսի յաթոռ իւր յաղեքսանդրիա՝ գոն գոր-
ծեաց հաստատել զնմա, զոր արար ի ջատագովութիւն եւտի-
քեայ. և ի վր այսր ամենի ձերբակալ արարեալ զհրեշտակս
հռոմայ՝ եդ ի բանտի. մինոն միայն ի նոցանէ հիլարիոս սար-
կաւագ փախուցեալ զերծաւ. և Թափառեալ աստ և անդ՝
ուր ուրեմն եհաս ի հռոմ. և պատմեաց պապին լևոնի զամ-
ենայն, որք անցին յայն ժողով. ընդ որ ոչ տակաւ տրտմեցաւ
երանելին. և վաղվաղակի ժողով մեծ գումարեալ ի հռոմ՝
ունայնացոյց զնա եղեալսն ի ժողովէն անդ դէոսկորեանց:
Իսկ Թէոդոս կայսր հրամայեաց ի դէոսկորոսէ՝ հաստա-
տեաց և կարգեաց զայն չար ժողով ուղղափառ ժողովն:
Յետ երթալ վախճանեցաւ փլաբիանոս, հրամանաւ Թէոդո-
սի կայսեր ձեռնադրեաց դէոսկորոս յաթոռն զնանատոլիոս
զաւագ սարկաւագ իւր. և յանկայր կայսրն, զի և հայրա-
պետն հռոմայ հաստատեսցէ զձեռնադրութիւնն նորա: Իսկ

{449} Ա.տպ. պան

պանն խնդրեաց նախ յանատոլեայ զդաւանութենէն ուղղել հա-
ւատոյ ընդէմ եւտիքեայ . և ի տալ նորա զայն՝ հաստատեաց
զձեռնադրութենէն նորին . և հրամայեաց նմա մի՛ ևս յիշել ա-
ռաջի՝ եթէ սեղանոյն զանուանն դէոսկորոսի և ղյօթնտղի՝ վասն
այնպիսի յերկուզակութենէն , զոր արարին նոքա և ընկիցէք նոյ ։

{450} Իբրև մեռաւ փոքրն Թէոդոս , յաջորդեաց մարկիանոս դա-
հակից նորուն ի կայսերութենէ . և եթէ իւր կին պուլքերիա զդաւստոյն պող-
քեր զդաւստոն արկադեայ ։ Ա.ս զի յուղիւր տակաւին ան-
հնարին չիւոթենէն ի կոստանդնուպոլիս ի մէջ եւտիքեանց
և ուղղափառաց , և առաւել ի մէջ միայնակեցաց , խորհեցաւ
կայսրն ընդհանուր ժողով գումարել վ՚ն խաղաղելոյ զեկեղե-
ցին քրի . որոյ վ՚ն գրեաց Լեւոնի պապ . և ծանոյց
նմա զմիտս իւր . ոչ և նա իսկ յառաջն գրեալ էր . վ՚ոյ հաւա-
նութենէն նորին հրամանն եհան մարկիանոս՝ ժողովել եպիսկաց ի
նիկիա . բայց քանզի կայր կասկած երկիւղի քարբարոսաց ,
հրամայեաց փոխադրել ի քաղկեդոն բիւզանդիոյ՝ յանդիման
կոստանդնուպոլսոյ (այն է գատը քեզ) ։

{451} Ը . Ա.պա յամի տեն . 451 . գումարեցան անդ ի քաղկե-
դոն ի հայակապ և յընդարձակ տաճար սրբուհւոյն եւփի-
մեայ՝ վեցհարիւր և երեսուն հայրապետք . յորոց ոմանք էին
ի հարց անտի մեծի՝ զոր ժողովոյն եփեսոսի , որ գումարեցաւ
յաւուրս սքէն կիւրղի ընդդէմ նեստորի յամի տեն . 431 . և
ոմանք էին յայնոցանէ՝ որք գտան ի ժողովն փլաբիանոսի
և դէոսկորոսի . ընդ որս էր և հռուփանոս մեծ սամոսատա-
ցի , այն՝ որ ձեռնադրեալ էր եպիսկոպոս սամոսատոյ , և եկն
յայս ժողով . էր յայն ժողով և եպիսկն երիզայ պապ ։ Ա.ս ե-
ղեն գլխաւորք ժողովոյն հրեշտակքն լևոնի պապին , պաս-
քասինոս եպիսկ լիլիբեայ , զուկենտիոս եպիսկ ասկաղոնիոյ ,
վենիփակիոս և բասիլիոս երիցք . ընդ որս դասեցաւ և յուլիա-
նոս եպիսկ կոյսի . և յետ նոցա անատոլիոս պատրիարգ կոս-
տանդնուպոլսոյ , և մաքսիմոս պատրիարգ անտիոքայ ։ Ա.ս
ոաջնիկոյ գտան և աշխարհական իշխանք մեծամեծք , և ա-
ռագանն ի դիմաց կոյսեր . զի մի՛ ևս ըստ առաջնոյ ժողովոյն
չիւոթենէի ինչ ծագեսցի անդէն ։

Ա.ին անդ և դէոսկորոս . բայց սրաքասինոս հրեշտակ պապին
յոտն կացեալ՝ ասաց առ Հարս ժողովոյն . պատուիէր ունիմք ի
մեծ քահանայապետէն հռոմայ , զի դէոսկորոս պատրիարգ
աղէքսանդրիոյ մի՛ դատցի ի ժողովն ատ . այլ՝ հանցի ի բայ .
զիւրդ և հաձոյ լոցէ Հարցդ և աւագաց , արասջիք ։ Ա.օեն
իշխանքն . ի մէջ մատուցին նախ պատճառն ամբաստանութե-
նէ , և տեսցուք ։ Ա.պա ի կաղ դէոսկորոսի՝ յառաջ մատու-

ցեալ եւսեբիոս ենկից տորիշայ՝ նախ յայսա արտաք զանմեղութի-
իւր և զփլաքիանոսի, և յետոյ զբռնուի դեոսկորոսի և հա-
մախոհից նր՝ ի ժողովի անդ իւրեանց մի՛ արդալատացուցանե-
լոյ զեւտիքես։ Վինիկ արտաք դեոսկորոս, թէ հրովարտակաւ
կայսեր եղև այն ժողով։ Ի մէջ բերեալ յայնժամ զհրովար-
տակ կայսերն թէոդոսի փոքու՝ ընթերցան զայն։

Ա յաւարտիլ թղթոյն՝ հրամայեցին իշխանքն, ղի եկեսցե՛ ի
մէջ և թէոդորետոս, զոր դատապարտեալ էր դեոսկորոս ի
ժողովի իւրում. և ի մտանել նր ի ժողովն՝ աղաղակ բար-
ձին ենկատնք եգիպտացիք, ըստ սրա և լիւբիկեցիք և պաղես-
տինացիք, ի բայ հանել զնա ի ժողովոյ անտի. իսկ այլք
ասդէին, թէ կացցէ՛ ի ժողովն, մինչև քննեսցի վէճ նր։ Ա յ-
յաղաղակել անդ դեոսկորոսի՝ թէ ելցէ՛ նա արտաքս, ձայն
բարձին այլք ընդեմ նորին դեոսկորոսի՝ հանել զնա ինքն ըզ-
դեոսկորոս. և եղև անդ աղմուկ չփոթի. մինչև հազիւ կա-
րացին իշխանքն խաղաղացուցանել զնա. և նստուցին զթէո-
դորետոս և զդեոսկորոս ի ժողովն, քայց իբր դատելիս։

Ա յսպա սկսան կարգաւ ընթեռնուլ զգործս ժողովոյն դեոս-
կորոսի. և ի ջատագովել նր, թէ ոչ ես ինձէն արարի, այլ
գործակից էին ինձ դոքա, ըստ յոբնաղ պատրիարգ եղեմ, և
թալասիոս արքեպիսկ կեսարիոյ, ևս, և թէ՝ հաւանս դասն
մեզ հարք ժողովոյն հաւատոյն և ստորագրեցին, աղաղակե-
ցին արեւելեան եպիսկոպոսքն և այլք. ոչ ոք ի մէնջ յայն ժո-
ղով կամակար հաւան գտաւ, մանաւանդ ի հերքել զփլա-
քիանոս և զեւսեբիոս՝ և յընդունել զեւտիքես, այլ՝ բռնութի-
եղև մեզ և ստիպումն հանդերձ հարուածովք. մատուցին
մեզ թուղթ անգիր՝ ստորագրել այնմ. և ապաւնացան դա-
տապարտել և աքսորել զմեզ. դա ինքն դեոսկորոս ժողովեաց
զպինուհորս՝ ահագնացանել զմեզ սրօք և բրօք. և արդ՝ հանեք
զդա ի բաց իբրև զմարդասպան։ Ո՛ ասեն սկ հաստատեաց
երդմամբ և ստեփաննոս եպիսկ եփեսոսի, և այլք՝ որք էին ի
ժողովն դեոսկորոսի. և ասացին՝ թէ առ ահի գործեցաք զնմ
ի ժողովն անդ։

Ընթեռնուլ անդ զգործս ժողովոյն՝ իբրև յիշատակեցաւ
նամակ լեւոնի պապին, եպիսկոսքն՝ որք գտեալ էին յայն ժո-
ղով, ասեն. այդպիսի թուղթ ոչ ընթերցեալ եղև անդ։ Ա՛ար-
ցին իշխանքն զդեոսկորոս. ընդ ո՞ք ետուր ընթեռնուլ. և նա
ասէ. ես երկիցս հրամայեցի ընթեռնուլ, և նք ոչ ընթեր-
ցան։ Ա՛ստն իշխանքն. ապաքէն դու էիր հրամանատար ժո-
ղովոյն. և զիարդ ոչ լուան քեզ։ Ա՛ստ դեոսկորոս. հարցէ՛ք
զյոբնաղ և զայլս։ Ա՛ստ յոբնաղ. յորժամ՝ ի մէջ բերին զնա
մանկ լեւոնի, փոխանակ նր ակսան ընթեռնուլ զթուղթ կայ-

սերն.

{451} {451}

սերն . և խոստանեցաւ ընծերցուածն նահանգին լինել : Ասէ Թալասիոս ասէ . և ես ՚ի լուել դոցա՝ լուեցի . զի չիշխեի ընդդէմ դառնալ :

Յաւարտիլ այսր խօսից՝ իբրև սկսան վերստին ընծեռնուլ զմեծարուածն գործոյ ժողովոյն , ասեն արեւելեան եպիսկոպոսք . այդպիսի բանք ոչ եղեն ՚ի ժողովի անդ . դա ինքն դէոսկորոս տուչեալ է գրել զայդոսիկ ՚ի պատարհասկել զյանցանս իւր . քանզի ոչ թողացոյց դա գրել այլոց նօտարոյ՝ որ ինչ եղև անդ , այլ՝ իւրոյն : Ասաց և ատեփանոս եփեսացի . մինչդեռ նօտարք իմ կային անդ և գրէին , դիմեցին ՚ի վեր նոյ նօտարք դէոսկորոսի , և եղծին զդիր նոյ , և անհետ արարին . և կամէին խորտակել զձեռս նոցին :

Եւ յետ բազմ բանից՝ որովք յանդգնաւոր երևեցաւ դէոսկորոս , հարցին ցնա և ցգործակիցս նորա հարք ժողովոյն , և ասեն . ո՞չ ապաքէն եւսեբիոս տորիլացի ձշմարտութեամբ ՚ի յայտ եբեր զմոլորուն եւտիքեայ , և ընդդէմ դնեցաւ նմա . ընդդէմ ապա ոչ թողուիք զնա մտանել ՚ի ժողով ձեր , և խօսիլ ընդդէմ եւտիքեայ . այլ առանց քննելոյ զբան նո՝ արդարացուցիք զեւտիքէս . և նք ոչ կարացին տալ պատասխանի :

Յետ այսորիկ ՚ի քննել զանմեղուն և զդաւանութիւն փլաբիանոսի , և ՚ի հաւանիլ հարց ժողովոյն , ասացին իշխանքն ցայնոսիկ՝ որք մտեալ էին ՚ի ժողովն դէոսկորոսի . ընդդէմ ապա մերժեցիք զնա : Եւ նք ասեն . քանդատեցաք և ակամայ առարաք զայդ . վրիպեցաք և յանցեաք . և զայս ասացեալ՝ ողբոշեցան ՚ի մի կողմն ՚ի դէոսկորոսէ և ՚ի յօբենաղայ : Եւ իբրև ոչ կարացին դէոսկորեանքն արդարացուցանել զգործս իւրեանց , ասացին իշխանքն . ըստ կանոնաց հարց՝ նոյն պատիժ տացի դէոսկորոսի և յօբենաղայ և այլոց գլխաւորաց այնր ժողովոյ , զոր դոքա համաձակեցան տալ երանելւոյն փլաբիանոսի : Ասեն հարք ժողովոյն . արդար և իրաւացի է այդ դատաստան :

Եւ ՚ի լինել այսր՝ սկսան մաղթել յայ բարիս վս իշխանաւորացն և վս ինքնակալին , և հայցել ՚ի նմանէ զխաղաղուն եկեղեցւոյ . և ասացին զերկաքսրեան օրհներգուին , սք սք , սք հղօր , սք անմահ , աղորմեա մեզ : Եւ ապա որոշեցին և հանին ՚ի ժողովոյն զդէոսկորոս և զյօբենաղ . ընդ որս և զերս երևելի եպիսկոպոսունս , զթալասիոս կեսարիոյ կապադովկացւոց , զեւսեբիոս անկիւրիոյ գաղատացւոց , զվասիլ սեւկիոյ իսաւրացւոց , և զեւստաթիոս պերիւթոյ փիւնիկեցւոց՝ իբր զդատեալս . փոխ զի ոչ ընդիմացան գործոյն դէոսկորոսի :

Ե . Յերկրորդ դատաստանն՝ յորում ոչ էս գտան առաջնոյն նախկրգիռ վեցեքին անձինք , ընծերցան հարք ժողովոյն

նախ զՀանգանակն Նիկիական. և միաբան ասացին համօրէն
բազմութիւն եպիսկոպոսացն. * Այս է հաւատք ուղղափառաց. զոյն
,, դաւանիմք ամենեքին. մեք ի սոյն մկրտեալ եղաք, և ի
,, սոյն զայլս մկրտեմք. երանելին կիւրեղ այսպէս ուսոյց.
,, լեւն պապ այսպէս հաւատայ ։ Այսպա ընթերցան և զհան-
գանակն կոստանդինուպօլսոյ. և նոյնպէս միաբան ասացին.
* Այս է հաւատք ամենեցունն. ամենեքին այսպէս հաւա-
,, տամք ։ Յետոյ ընթերցան և զԹուղթս սքանչն կիւրղի գրեալս
առ Նեստոր և առ յովհան անտիոքացի. և նոյնպէս միաձայն
ասացին. * Ամենեքին այսմ հաւատամք. լեւն քահանայա-
,, պետ այսպէս հաւատայ. որ բաժանէ և տրոհէ՝ նեղուեալ
,, եղիցի. որպէս կիւրեղ՝ նոյնպէս և մեք հաւատամք. լեւն
,, քահանայապետ այսպէս իմանայ, այսպէս հաւատայ, և
,, այսպէս գրեաց ։ Ընթերցան ապա և զնամակ կամ զտու-
մար սքանչն լեւնի գրեալ առ փլաբիանոս ընդդէմ եւտիքեայ. և
նոյնպէս ասացին միաբերան. * Այս է հաւատք սքանչ հարց.
,, այս է հաւատք առաքելոց. ամենեքին այսպէս հաւատամք.
,, ուղղափառք այսպէս դաւանին. նեղուեալ եղիցի՝ որ ոչ այս-
,, պէս հաւատայ. պետրոս խօսեցաւ ի բերանոյ լեւնի. ա-
,, րաքեալքն այսպէս ուսուցին. Հիմարտուքէ և բարեպաշտուքէ
,, ուսոյց լեւն. կիւրեղ այսպէս ուսոյց. յաւիտենական յիշա-
,, տակ կիւրղի. լեւն և կիւրեղ միօրինակ ուսուցին. այս է
,, Հիմարիտ հաւատք հարց. այսոքիկ ընդ ոչ եղեն ընթեր-
,, ցեալ յեփեսոս (՝ի ժողովն դիոսկորոսի). դիոսկորոս ծած-
,, կեաց զայդսիկ ։

Այլ քեզի կայրն՝ ի Թղթի անդ բառք ինչ, որ կարեր այլազգ
իմացեալ լինիլ յայնցանէ՝ որք չեին տեղեակ ոճոյ լատին բար-
բառոյ, յայն սակս եպիսկոպոսքն պաղեստինոյ և լիւդիկիոյ հա-
նեին տարակոյս ի մէջ նոցին. և հարք ժողովոյն ի մէջ մատու-
ցին վկայուիս համաձայն նմին ի բանից կիւրղի ։ Այլ այսու
ամենայնիւ ոչ զի Հիմարինչ խաղաղութիւն վճարեսցի, հրաման ետուն
իշխանքն, զի զաւուրս հինգ հանգարտ մտօք և խաղաղասէր
ոգւով քննեսցեն զիրան, և որոշագոյն իմասցին ի տեղեկա-
գունից ։ Ա՛ւ յաւարտման այսր գումարման գարձեալ ասացին
հարք ժողովոյն վ՚ա դիոսկորոսի. եգիպտացին յաքսորս յղեսցի,
դիոսկորոս ի քաց մերժեցի, փինկ զի իշխեաց ծածկել զը-
Թուղթ լեւնի. և արդարացոյց զեւտիքէս, ևն ։

Յերկրորդ գումարման նախ ի մէջ մատոյց եւսեբիոս տո-
ւիղացի Թուղթ աղաչանաց. և վերստին յուշ արարեալ զայլ
եւս գործս դիոսկորոսի՝ խնդրեաց ի հարց, զի յառաջ կոչես-
ցեն զնա յատեան ժողովոյն, և արասցեն դատաստան ի մէջ
իւր և ի մէջ նը. և որ անհաւան գտցի, պատուհաս կրես-

{451} {451}

յե • ամին իրի առաքեցին հարք ժողովոյն երկուս ՚ի պատուա-
ւոր սարկաւագաց կոչել զնա : Եւ նա յղեաց պինդ , թէ ես
յօժարութե կամիմ գալ • բայց ոչ թողլ տան ինձ պահապանք
և զօրականք՝ որք կան զինեւ : Այնժամ փոխանորդք պատգին
պաշաքասինոս հրամայեաց առաքել միւսանգամ զերկուս երի-
ցունս առ դէսկորոս • և նոքա շրջեալ այսր և անդր , և յու-
զեալ՝ ոչ կարացին գտանել զնա : Ապա յաւելին առաքել
զկնի նր զերիս երևելի եպիսկոպոսս , և նոստար մի , գտանել զնա
և հրաւիրել • և նա իբրև ոչ կարաց ծածկել զինքն՝ դարձեալ
պատճառանս եդ , թէ խափանեալ եմ յայլոց • և զի առա-
գանին մեկնեալ էին ՚ի ժողովոյն աւուրս քանի մի վա կարևոր
իրաց ինչ , զայն ևս պատճառեր , մի թէ նախ նք եկեսցեն , և
ապա եկից ես • և թէ՝ յոբնատ և այլք ևս ներկայ լինիցին • և
այսպիսի բանիւք կամէր յապաղել զգնալ իւր :

Յարձեալ յղեաց առ նա ժողովն զայլ ևս երիս եպիսկոպոսս ,
(յորոց մի էր մերս հռոմփանոս սամոսատացի) հանդերձ թըղ-
թով սիրոյ և ողջոյնաց , յորդորելով զնա անդադար գալ
անդր , և արդարացուցանել զանձն յամբաստանուեցն եւսե-
բեայ : Եւ նա պատճառեր յայնմ նոճագի զհիւանդն լինել •
միանգամայն և առաջի դներ զաւաչին պատճառանս իւր ,
պահանջելով զի և իշխանքն , ըստ որս և յոբնատ գտցին ՚ի ժո-
ղովն անդ յայնմ պահու : Ապ ցնա հռոմփանոս • դու եկ
միանգամ ՚ի ժողովն ըստ խնդրոյ հարց , և նք ասեմ զայգ : Այլ
նա ոչ էառ յանձն , և ոչ անասաց նմ : Եւ իբրև յայտնի երևե-
ցաւ , թէ նա առ երկիւղի պատրաստորութե ոչ կամի գալ ՚ի ժո-
ղովն , յարեան ապա ոմանք ՚ի ժառանգաւորաց եկեղեցւոյ նր
՚ի վիճակէ աղեքսանդրացւոց , որք գիտէին զգործս ինչ գոր-
ծեալս ՚ի նմանէ ըստ դէմ կանխաւոց , և զնա ՚ի մէջ մատուցեալ՝
ամբաստան եղեն գրովք և բանիւք • և յաւելին ասել , թէ
յորժամ եկեսցէ դէսկորոս այսր յաստեան , նոսա յանդիման
նր ցուցցուք զնմին վկայութիւք :

Ապա հարք ժողովոյն առ ՚ի ննուել զկարգ կանոնական սովո-
րութե յղեցին երիս անգամ զայլ ևս երիս եպիսկոպոսս առ դէս-
կորոս հանդերձ թղթով • զի ըստ կանոնաց՝ եթէ նաև յայնմ
նոճագի կոչմանն անփոյթ լինի գալ , անկայն ըստ պատուհասիւք՝
իբրև յանդուգն ընդդիմակաց կանոնական կարգի սքն հարց :
Այլ եաւ առ նա եպիսկոպոսքն ասեն • համօրէն ժողով քաղաքաց
հայրապետաց (աւելի քան զվեց հարիւրոց) սպասեալ մնան
վա • միաբան ամենեցուն պատգամ է առ քեզ՝ գնալ առ նա
առանց դանդաղանաց , և մի լինել անհնազանդ մեծի ժողո-
վոյն և սքն կանոնաց • եթէ մաքուր է խիղճ քո , ընդ քնաւ
ակն ածես գալ յանդիման լինել և տալ պինդ • զի ոչ թէթև

{451}

ինչ են ամբաստանուիքն՝ որք զքեզն եղեն և լինին օր ըստ օրէ ։
Յակ դեռսկորոս ոչ յանձն էառ անսալ նմա. այլ երիցս և չորիցս
և հնգիցս միշտ զայսպիսի բանս ասէր · * ասացի , ասացի ·
,, զոր ասացի՝ բաւական է · այլ ինչ ոչ ասեմ · ոչ կարեմ յա-
,, ւելուլ այլ ինչ՝ ի բանս իմ , ևս ‖ ։
Յայնժամ հարք ժողովոյն միաբան հաստատեցին ըստ կանո-
նական կարգի սբ հարց տալ ընդեմ նորա զվէճս դատապար-
տուե · և առնեքին առորագրեալ ընկեցին զնա յիշխանութենէ
եպիսկոպոսէ և քահանայական պաշտաման · և գրեցին առ նա
այսպէս · * ‖ Սէր և մեծ և ընդհանուր սիրենդոդոս չնարհօքն ու
,, ըստ հրամանի թարեպաշտ և ուծասէր ինքնակալիդ մերոց
,, ժողովեալ՝ ի քաղկեդոնացւոց քաղաքի՝ որ՝ ի բիւզանդիա ,
,, ի վկայարանի սրբուհւոյն եւփիմեայ թարեյազգի վկային ,
,, առ դեոսկորոս ։ Օ՜անկը , զի գու վա՛ր արհամարհելոյդ ըզ-
,, զարբազան կանոնս , և վա՛ր անհնազանդ լինելոյ այսմ սէր և
,, ընդհանրական ժողովոյս , եւս և վա՛ր այլոց արարուածոց քոց՝
,, որովք պարտաւոր գտար , և երիցս կոչեցեալ՝ ի սէր և՝ ի մեծ
,, սիրենդոդոսէ էր սրբազան կանոնաց՝ առ՝ ի տալ պէնսի յա-
,, զագս ամբաստանուեցդ զքեզն եղելոց , ոչ եկիր և ոչ հանդի-
,, պեցար , յերեքտասաներորդի աւուր առաջիկայ ամսեանս
,, հոկտեմբերի , ՝ի սէր և յընդհանուր ժողովոյս ՝ի քաց ընկե-
,, ցեալ ես յեպիսկոպոսէ և յամէ եկեղեցական պաշտամանց ‖ ։
Օ այն դրեալ ծանուցին և առ եկեղեցին աղեքսանդրացւոց ·
և ազգ արարին նմ՝ ընտրել զայլ ոք արժանաւոր պատրիարգ
այնմ աթոռոյ ։ Եւ զայս ամ գրեցին նաև առ կայսրն , և
ծանուցին նմա զնմա ։
Է · Ի չորրորդ գումարման՝ յորում առաջիկայ էին դար-
ձեալ իշխանաւորք , վերստին հաստատեալ հարց զդաւանուի
երից սբ ժողովոյ՝ նիկիոյ , կոստանդինուպօլսոյ , և եփեսոսի ,
և զթուղթս սբ՝ին կիւրղի , միաւանգամ ընթերցեալ միաբան
հաւանութեամբ ընկալան և զնամակ սրբոյն լեւոնի քահա-
նայապետին · և ի առ ի առորագրեցին այնմ թղթոյ · ընդ
որս և պաղեստինացիք և լիւբիկեցիք՝ որք ունէին նախ տարա-
կոյս ՝ի վէր բառից լինչ նամակին ։ Եւ զի՝ ոմն ասացաք ՝ի վե-
րոյ , թաց ՝ի դեոսկորոսէ՝ զյորնադ պատրիարգ եէմի , և զայլ
եւս չորս եպիսկոպոսս առ ՃԽԿ մի՝ի թաց հանեալ էին հարք ՝ի սբ
ժողովոյն՝ վա՛ր համախոհ լինելոյ դեոսկորոսի ՝ի սկզբան , իմա-
ցեալ ապա՝ թէ ստրջացեալ են նք ըստ առաջինն գործ խրեանց,
և հաւան են ընդ նամակ քահանայապետին , զնս եւս մնծին
անդրէն ՝ի ժողովն ՝ի լիւ հայրապետաց ։ Յակ երեքտասան
եպիսկոպոսք ՝ի վիճակէ աղեքսանդրացւոց ոչ կամեցան յայնմ
պահու առորագրել ՝ի նամակն · մեք ասեն՝ մինչև ոչ դիպի
պատ-

պատրիարգ աղեքսանդրիոյ ՚ի տեղի դեոսկորոսի , ոչ կարեմք
{451} {451}
ստորագրել . և եռաւն երանելաւոր , զի ՚ի կարդել զպատրիարգ
ոք՝ նովաս հանդերձ ստորագրեցեն :

Լսակ ՚ի տրտնջել ոմանց յաղեքսանդրացւոց անտի, թէ զի պի-
տոյ էր նամակաս՝ նոր քահանայապետին առնել հաւատոյ՝ և ստո-
րագրել, պէնկի եռաւն հարք ժողովին . եթէ այդ յանցանք
ինչ լոկ մեծի քահանայապետին , ապա յանցանք էին և երա-
նելոյն կիւրղի գրել ՚ի Թուղթան իւր առ արևելեայս զբացա-
տրուն հաւատոյ , և հաւանիլ այլոց այնմ . նոյնպես և յան-
ցանք էր երանելոյն սրբոկղի, որ գրեաց զբացատրուն դաւա-
նուն ՚ի հայս՝ առ միաբան համաձայնուն հաւատոյ . որում
և ստորագրեցին բազումք ըստ լսնդրոյ նոր . արդ՝ եթէ գովելի
եղեն գործք նոքա՝ ՚ի պատճառս զինելոյ ընդդէմ չարին նեստորի ,
ապա գովելի են և գործք լևոնի մեծի՝ ՚ի սակս վանելոյ զա-
զանդ ժանտին եւտիքեայ : Եւ այս բան գրի երկար ՚ի ՟ե . հա-
պուր ծողովոյ . էրես . 466 :

Ետ այսորիկ եկին ՚ի ժողով անդր վանականք ոմանք և ար-
շիմանտրիտք , յորս գլխաւորագոյնք էին կարոս և պարսամ
ասորի , և պահանջէին ՚ի հարց անտի՝ ասելով . լսնդրեմք , զի
մոցէ ՚ի Թիւէ հարց ժողովոյս և աղքենիկան դեոսկորոս : Ո՚սեն
միաբան հարք ժողովոյն . զդեոսկորոս ՚ի բաց հերքեաց քո .
նզովեալ է դեոսկորոս . հանիւք զխռովարարսդ արտաքս . զի
զնզովեալն ՚ի համօրէն սիւնհոդոսէ իշխեցին ընդկալ անօրհնել
ընդէմ կանոնաց . ՚ի բաց հանիւք զպարսամ զյաստագոնէն եւ-
տիքեայ և զսպանօղն երանելոյն փլաբիանոսի : Ո՚վք իշխանքն
խաղաղասցուցին զնա , և խնդրեցին քննել զարան . և հարքն
պահանջէին ՚ի նոցանէ զուղղիղ դաւանուն և զմիաբանութի-
ընդ ժողովոյն :

Ո՚սէ կարոս արշիմանտրիտ . մեք զնիկիայն ունիմք հաւատոք, և
զեփեսոսին՝ որ առ կիւրղիւ . արտաքոյ նոցա այլ ինչ ոչ ընդու-
նիմք : Ո՚սեն հարքն . և մեք զնոցայն հաստատեմք . այլ զի
ընդէմ սաղանդոյն եւտիքեայ հարկ եղև մեծին լևոնի գրել
նամակ հաւատոյ համաձայն սրբոյն կիւրղի, կամիմք՝ զի և զայն
ընկալջիք . և զնեստոր և զեւտիքէս զարշիմանտրիտն նզո-
վեսջիք . արդ՝ նզովիք զնա : Ո՚սէ կարոս . զնեստոր միթէ նո-
րոգ ունիմ նզովել . զոր բազմ անգամ նզովեալ եմ : Հարքն ա-
սեն . ապա և զեւտիքէս : Ո՚սէ կարոս . ես զնիկիայն դաւա-
նիմ հաւատս . բաց յայսմանէ զայլ ինչ ոչ գիտեմ . եպիսկոպոսք եք,
իշխանուն ունիք , աքսորեցիք զնա . եթէ եւտիքէս ոչ հաւատայ

համաձայն ընդհանրական եկեղեցւոյ , նզովեալ լիցի :

Եւ եղև շփոթումն ՚ի մէջ արշիմանտրիտաց . ոմանք պատ
՚ի պատ բանիւք հերքէին զեւտիքէս , և ոմանք ջանային ար-

դարձուցանել զնա, մինչդեռ դորքեթէոս արշիմանդրիտն և պար-
պասք։ Իսկ հարք ժողովին ստիպէին զնա՝ ստորագրել՝ ի նա-
մակն լևոնի՝ առ՝ ի նշանակ մերժելոյ իսպառ զվէպսուի եւսե-
քեայ. այլ նա չառնուին յանձն։ Յայնժամ իշխանքն պայ-
ման եդին նմա զառաւօտս երկուս և երիս՝ խորհիլ առ՝ ի միաբա-
նելոյ՝ ի ստորագրուի նամակին և՝ ի դաւանուի հաստիչն ժո-
ղովոյն։ Զգդ արարին նմա և հայրապետք ժողովոյն զկանոնս
նախնեաց հարց, թէ որք միանգամ՝ ի վանականաց կամ
յերիցանց և կամ՝ ի սարկաւագաց ջատագով լինին եռիս-
կոպոսին՝ որ անկեալ է յաստիճանէ, և ոչ անասան խորհր-
դոյ այլոց հայրապետաց, ընկալցին պատուհաս ծանր։ Ա-
յսեղէն տալ նմա պայման առաջս երեսուն՝ քննել զանձինս, և
չընդիմանալ ընդհանուր ժողովոյ. և եթէ այսու ամիսս ոչ հնա-
զանդեացին վճռոյ ժողովոյն, անկցին յամ աստիճանէ և՝ ի
պատուոյ և՝ ի հաղորդութենէ։

ԸՀ. Ի հինգերորդ գումարման՝ եւսեն ընթեռնուլ հարք
ժողովոյն զսահմանն հաւատոյ՝ զոր արարեալ էին. և քննեալ
զնոյն՝ ամենեքին հաւանեցան։ Եւ՝ ի վեցերորդ գումարման
վերստին ընթերցեալ զայն առաջի կայսեր և՝ ստորագրե-
ցին այնմ ամ հայրապետքն։ Յայսմ սահմանադրութեան
հարք ժողովոյն նախ յառաջ բերեալ զհանգանակն նիկիոյ և
կոստանդինուպոլսոյ, և ընկալեալ զթուղթն սիրոյն կիւր-
ղի և սիրոյն լևոնի, եւսեն գրել զնոսա կարգաւ. և ապա մաս-
նաւորապէս սահմանեցին ընդդէմ եւտիքեայ՝ ըստ մասաց սի-
հարցն այսոքիկ։ * Ա՛պա զհետ երթեալ հարցն սրբոց, ամենե-
,, քեան միաբան ուսուցանեմք՝ խոստովանել զնոր մերմէ քո
,, մի և նոյն որդի. նոյն ինքն կատարեալ աստուածիք, և կա-
,, տարեալ մարդկութիք. նոյն ինքն ածմ ճշմարիտ, և մարդ
,, ճշմարիտ՝ ունելով զհոգի բանական և զմարմին. նոյն ինքն
,, համագոյակից հօր ըստ աստուածն, և նոյն ինքն համագոյակից
,, մեզ ըստ մարդկութեն, ամենայն նմանեալ մեզ առանց մեղաց.
,, յառաջ քան զյաւիտեանս ծնեալ՝ ի հօրէ ըստ աստուածն. իսկ
,, ի վախճան աւուրցս այսոցիկ նոյն ինքն յիշգած մեր (մարդ-
,, կան) և վասն մերոյ փրկութեն ծնեալ յածածինն կուսէն մա-
,, րիամայ ըստ մարդկութեն։ Ո՛ մի և զնոյն ինքն զքրիստոս խոստովա-
,, նիմք մի միայն որդի միածին յերկաքանչիւր բնութիս (կամ
,, յերկուց բնութեց) անշփոթելի, անփոփոխելի, անբաժա-
,, նելի, անտարանջելի։ Ո՛չ բարձեալ երբեք բնութեցն տարբե-
,, րութի՝ ի սակս միաւորութեն, այլ՝ յաւէտ անկորուստ պա-
,, հեալ յատկութեի երկաքանչիւր բնութե, և՝ ի մի անձն և՝ ի
,, մի դոյութի միաւորեալ։ Ո՛չ յերկուս անձինս ոտրեալ կամ
,, բաժանեալ, այլ՝ մի և նոյն որդի և միածին աստ բան՝ տէր յի-

{453} {453}

,, քո. ոմն ուսուցին մեզ յառաջագոյն մարգարէքն վա՛ն նո՛ր, և
,, ուսոյց և նա ինքն ինո՛ր յո՛ն քո՛ր, և աւանդեաց Հանգանակ
,, սո՛ցց Հարցին ։

Յետ այսորիկ եղեն և այլ գործք գումարմանց այնը ժողո-
վից. այլ զի՛ նո՛ն կարևւոր ինչ ոչ որոշեցաւ մեզ յիշատակելի,
զանց արարեալ զնորօք՝ դիցուք միայն զուԹերորդն և վէն-
գեառաւաներորդն ։ Ա՛պա յուԹերորդ գումարումն ժողովոյն՝
զի քննութե՛ մատուցաւ իրողութե՛ Թէոդորետոսի եպիսկո-
պի կիւրիայ. զոր ա՛ գրելոյ մեր՛ի վերոյ՝ ընկեցեալ էր յաԹոռոյ
գեոսկորոս. և էր կարծիք ընդհանո՛ր, Թէ նոցա՛ ջատագով նես-
տորի, որոյ էր աշակերտակից ։ Ա՛յդ հաճոյ Թուե՛եցաւ Հարց
ժողովոյն՝ առ՛ի բժշկելոյ զմիտս բազմաց, զի Թէոդորետոս
նզովեցաւ զնեստոր՛ի ժողովն անդ ։ Ա՛ռակ նա մատոյց ԹուղԹ
աղաչանաց առ նոսի՛րսկս պապին, և աղաչեաց ընԹերևնուլ
նախ զայն առաջի Հարց ։ Ա՛յլ նո՛ք ասեն. * ոչ կամիմք ընԹեռ-
,, նուլ ինչ. միայն նզովեա՛ զնեստոր ։ Ա՛ինի ետ Թէոդո-
րետոս. * ոչ միայն զնեստոր և զեւտիքէս, այլև զնո՛ս մար-
,, դիկ՝ որք ոչ խորհին ուղղութ՛, հերքեմ և մերժեմ ։ Ա՛-
սեն Հայրապետքն. * բացայայտ ասա. նզովեա՛ եղիցի նես-
,, տոր, և աղանդ նո՛ր. նզովեա՛ եղիցի նեստոր, և որք սի-
,, րենն զնա ։ Ա՛սէ Թէոդորետոս. ուրուհետև ամբաստա-
նեալ են զինէն՝ Թէ Թիւր վիՃակութե՛ ունիմ համաձայն նես-
տորի, և հերձուածող իցեմ, և առանց լսելոյ զդատաստութե՛
իմ ընկեցին յաԹոռոյ, ես եկի այսր՝ զի անպարտ կացուցից
զանձն իմ՛ի հերձուածոյ անտի. վա՛յ նախ առաջի եղեց ըզ-
դատաստութե՛ իմ, և ցուցից զանձն իմ ուղղադատան. և ոչ
խորհիմ նզովել զնեստոր և զեւտիքէս և զնո՛ս մարդ՝ որ յեր-
կուս որդիս բաժանէ զնո՛ր ։ Ա՛յ անտացին այսպիսի երկդիմի
բանից նո՛ր Հարք ժողովոյն. այլ՝ ասեն միաբան. * ասա՛ յայտ-
,, նապէս, նզովեա՛ եղիցի նեստոր, և որք զնորայն խորհին ։
Ա՛սէ Թէոդորետոս. * ես եԹէ ոչ մեկնեցից, Թէ զնո՛ր Հա-
,, տատամ, ո՛չ ասեմ՝ արդ՝ հաւատամ ։ և միանգամ էր ա-
ւարտել զայդ յետին բառդ հաւատամ, սկսան աղաղակել Հարք
ժողովոյն իբրև՛ի միոջէ բերանոյ. * Հերետիկոս է սա. նես-
,, տորական է սա. Հանն զՀերետիկոսդ արտաքս ։
Յայնժամ յայտնապէս նզովեաց Թէոդորետոս զնեստոր և զա-
ղանդն նո՛ր այսորիկ բառիւք. * եղիցի՛ նզովեալ նեստոր, և
,, նա՝ որ ոչ ասէ ածամա՛ին զկոյսն մարիամ. և որ յերկուս
,, որդիս բաժանէ զմի միածին որդին ։ Ո այս իբրև ասաց,
Հարք ժողովոյն անդէն աղաղակեցին. * Թէոդորետոս ար-
,, ժանի՛ է աՃաուռոյն (իւրոյ) ընկալցի՛ եկեղեցին զուղղա-
,, փառ Հովիւն եկեղեցւոյ. դարձուսցի՛ եկեղեցին յուղղա-

,, փառ

,, փառս վիշեալն Թէոդորետոս ։ Այլ վոխանորդքը պապին ա-
ռեն. արդարև եթէ ոմն հերքեաց զնեստոր առաջի մեր, և
խոստացաւ պահել զօրղղափառս հաւատս, ՚ի նմին հաստա-
տուն կացցէ Թէոդորետոս, դարձցի անդրէն յիւր աթոռն՝
յորմէ ընկեցեալն էր. զի և մեք զայս պատուիրեր ունիմք ՚ի
մեծ քննչապետէն ։ Ո նոյն ասացին և այլ հարքն ժողովոյն,
և ստորագրեցին ։ Յայնժամ և իշխանքն հաւատատեալ զվճիռ-
նդ՝ հրամայեն ետուն նմա ունել զաթոռ եպիսկոպոսութե իւրոյ՝ որ
՚ի գաւառին կիւրիայ ։ Ո այս պարարին հարքն ժողովոյն և այ-
լոց ամենց ՚ի նմին գումարման, և ետուն նզովել զնեստոր
յանդիման ամենեցուն. նոյնպէս և իբաստոյ եպիսկոպոս
յիւնեերորդ և ՚ի տասնեւորդ գումարման ։

Ճ. Ի հնգետասաներորդ գումարման ասհմանեցին հարքն
ժողովոյն քանևեօթն կանոնս ՚ի վերայ բարեկարգութե ե-
կեղեցւոյ. զորս մնրթե ե հաստատել այսպէս ։ ա. Կանոնք
նախնի ժողովոց ՚ոք հարց հաստատուն պահեսցին ։ բ. Եպիս-
կոպոսունք մի արասցեն ձեռնադրութե կաշառօք ։ գ. Եկե-
ղեցականք մի ունիցին զստացուճածս օտար կալուճածոց. և
մի առնիցեն գործակալութե ՚ի ծախանաց ։ դ. Վրնաւորք
առանց հաւանութե եպիսկ վանորայս մի կանգնեսցեն իբր
ինքնագլուխ, ևս ։ ե. Վանիկք և այլ եկեղեցականք մի փո-
խեսցին քաղաքե ՚ի քաղաք ըստ վիճակի ։ զ. Որք ոչ ունին հաս-
տատուն վիճակ ՚ի տեղոջ ուրեք, մի ձեռնադրեսցին ։ է.
Վրնաւորք մի մտցեն ՚ի վինուճորուն կիս յայլ ծախան կարգ ։
ը. Վղերիկոսք՝ որք կարգեալ են ՚ի սպասաւորութե աղքա-
տանոցաց կիս վկայարանաց, մի իշխեսցեն ՚ի քաղ կալ առանց
հրամանի եպիսկոպոսն ։ թ. Վղերիկոսք մի դիմեսցեն յծախան ա-
տեանս, այլ՝ յատեան եպիսկ իւրեանց ։ ժ. Վղերիկոսք մի
կարգեսցին ՚ի սպասաւորութե երկուց եկեղեցեաց միանգա-
մայն ։ ժա. Ո՛ ՚ի տագի աղքատաց վկայական նամակ գոլու-
թե վ՚ն դնաղոյ ՚ի ձեռն, այլ միայն սովորական թուղթ ինչ
նպաստից ։ ժբ. Վեմ միոյ մետրապոլտի մի քաժանեսցի յեր-
կուս ։ ժգ. Վղերիկոսք առանց վկայական նամակի եպիսկո-
պոսին մի իշխեսցեն գնալ ՚ի սպասաւորութե հեռաւոր եկե-
ղեցւոյ ։ ժդ. Ո՛նթերցողք մի իշխեսցեն առնուլ կին հերձ-
ուճածող կամ հեթանոս, քայց եթէ ընկալեալ խոստուն
դառնալոյ յուղղափառութե ։ ժե. Ո՛ ի կարգեցի ոք սար-
կաւագութե, թե չէցէ քառասնամեայ ։ ժզ. Վրնաւորք և
նոքիրեալ կուսանք մի կարասցեն ամուսնանալ ։ ժէ. Վալ-
ուճածք եկեղեցւոյ մի օտարացուսցին, ևս ։ ժը. Վղերիկոսք մի
իշխեսցեն միաբանել ՚ի ծածուկ դաշնադրութե՝ ընդդէմ ե-
պիսկոպոսին իւրեանց ։ ժթ. Վնկսունք իւրաքանչիւր գաւա-

ոքի

{45}

{451} {451}

ոմն երկնից ՚ի տարուցն ժողով արասցեն հանդերձ իւրեանց մետրապօլտաւ՝ վճռ բարեկարգութեանն հօտին ։ ԻԲ. Արդեօք մի՞ ընտրեսցին ՚ի սպասաւորուն եկեղեցւոյ իւրեանց զկղերիկոսս այլոց վիճակի՝ բայ ՚ի հարկէ ։ ԻԳ. Մի՛ առանց քննութեան ընկալեալ լինի չարախօսութիւն զեպիսկ կամ զայլոց եկեղեցականաց ։ ԻԴ. Կղերիկոսք ՚ի վախճանիլ եպիսկոպոսի մի իշխեսցեն կարգել յիւրաքանչիւր ինչ ՚ի նորայոց ։ ԻԵ. Կղերիկոսք՝ որք գժտեալ իցեն ընդ եպիսկոպոսի իւրեանց, մի իշխեսցեն գնալ գաղտ ՚ի կայսերական քաղքն, մինչ անդ, և ամբոխս յարուցանել ։ ԻԶ. Ամենայն նորայք կրօնաւորաց մի փոխեսցին ՚ի լինակարանս տնականաց ։ ԻԷ. Մետրապօլիտն՝ յետ վախճանելոյ եպիսկոպոսին մի յապուղեսցէ առնել ընդ երիս ամիս զայլ ոք կարգել ՚ի տեղի նր ։ ԻԸ. Ուրաքանչիւր եպիսկոպոսունք իւր կոնսոմոս կամ հոգաբարձու ՚ի վերայ եկեղեցական իրաց ։ ԻԹ. Որ ոք իշխեսցէ բռնի յափշտակել զկին, որոշեսցի յեկեղեցւոյ ։ Ի. Պայսոսիկ կանոնս ընկալան և հաստատեցին միաբան հաւանութեամբ համայն ընկալեալքն և հաստատեցին միաբան հաւանութեամբ համայն հարք ժողովոյն ։

Եւ զկնի այսորիկ ՚ի մեկնիլ անտի իշխանացն և փոխանորդացն պապին՝ անպատուիրս պատրիարգ կոստանդինուպօլսոյ հաւանեցուցեալ զայլ եպիսկոպոսունս կարգել և զայսպիսի ինչ կանոն. իբր զի՝ ամենայն կոստանդինուպօլսոյ ունիցի հաւասար արտօնութիւն հռովմայեցւոյ իբրև երկրորդ զկնի նր ։ և յիւրմէ առցեն ընձեռնադրութիւն մետրապօլիտք պոնտացւոց, ասիացւոց, և թրակացւոց, և ս եպիսկոպոսունք այնոցիկ ազգաց՝ որք են ՚ի մէջ բարբարոսաց ։ Եւ ապա ՚ի վաղիւ անդր ՚ի գումարիլ վերստին ժողովոյն՝ եկեալ և հրեշտակաց պապին՝ անհաւան ցուցին զկնքեանս ընդ այն վերջին կանոն ժողովոյն. և պապն իսկ ոչ հաստատեաց զայն. Թէպէտև խնդրեաց կայսրն ։

Ժ. Յետ վճարելոյ ժողովոյն քաղկեդոնի՝ կայսրն աքսորեաց զդիոսկորոս ՚ի գանգրաս, ուր դրե եւագրիոս. Է. 5. և Թէոփանէս, և այլք, և ձառընտիրք մեր. և ՚ի տեղի նր նատաւ պատրիարգ աղեքսանդրիոյ պռոտերիոս. որոյ վր բազում խռովութիւնս յարուցին միայնակեացք կողմանցն այնոցիկ, և ժողովուրդք տեղւոյն. և եղև աղմուկ մեծ ՚ի քաղաքի անդ. ոմանք զդիոսկորոս խնդրէին, և ոմանք զպռոտերիոս հաստատէին. և ՚ի ջանալ զինուորաց խաղաղել զինս՝ ամբոխ մեծ եղէ՝ քարամբք վանեցին զնոսին. և յանկանիլ նց ՚ի տաճար մի պաշարեալ նց զայն՝ կենդանւոյն այրեցին զինուորքն ։

Նոյնպէս և միայնակեացք աստուած և պաղեստինոյ՝ գնացեալ գտեալ ՚ի Թէոդոսէ միայնակեցէ, որ բարեկամ էր եւտիքեայ, յարուցին զայլ խնն խռովութիւն ։ Եւ այնչափ ատտիճ և կա-

տաղի եղև ատելութիւն նոցա առ նբ ժողովն , մինչև յայտնապէս ապստամբիլ , և բռնութիւբ ընկենուլ յաթոռոյ զուղղափառ եպիսկոպոսս , և նստուցանել ի տեղի նոցա յաղանդոյ իւրեանց , և մարտնչիլ և հալածել զամենին՝ որք ոչ նղովէին զնբ ժողովն ։ Այլ Թէոպէտ մարկիանոս կայսր ջանայր նուաճել զնա , և նուաճեաց իսկ , բայց բազումք ի նոցանէ սփռեալ յայլ և այլ տեղիս՝ բանիւք և գրովք սկսան ջատագովել զժողովն դիոսկորոսի , և պախարակել զնբ ժողովն քաղկեդոնի , և ցուցանել՝ թէ այն ժողով ընկալաւ զվճռութիւն նեստորի ։ Այսուհետև քան զամենին գրեաց զայնմանէ բնմ Թուղթս նախնեաց դիոսկորոսի , և մերիմ համախոհն եւտիքեայ պարսամ , և այլք բազումք ։ Այս էր հայք յայնմ ժամանակի յանհնարինն տառապանս տագնապէին , ոչ է տեսանել ի նախընթացս գըլուխսդ , ստոյգ ինչ զոյց ոչ լուծան յումեքէ ի նոցն աւուրս վէն նբ ժողովոյն ։

{457} Ո՛վ կնի մեռանելոյ կայսեր մարկիանեայ յաջորդեաց լևոն . և ի ժամանակս նորա յարեան և այլ բազում ջատագովք եւտիքեայ , և մանաւանդ դիոսկորոսի՝ արք տգէտք և յամառք . որոց գործք յաւէտ զարհուրելի են և զաղերալի՝ ըստ թէ պատմելոց արժանի ։ Այնաւուրք նոյ էին ոմք . Տիմոթէոս կուզն . Պետրոս կնափեղն՝ Թափիչ կոչեցեալ , որ եղև գլուխ ոճծաչարչար անուանելոց . Աւեռիոս կիսաւերիանոս անտիոքացի , որ եղև գլուխ անգլուխ անուանելոց . Յակոբ ծանծալոս ասացեալ , որ ևս եղև գլուխ նոցին . յորմէ յակոբիկքն առ րիք . Յուլիանոս աղիկառնացի . կայանոս . Թէոդոսիոս . բերսանիոս , և այլք . որք բազում խառնուածս սերմանեցին գրեթէ յամ տեղիս ընդեմ դաւանութեան նբ ժողովոյն քաղկեդոնի . և ատելի արարին զայն բազում ազգաց՝ և հայոց իսկ . {490} զորմէ տես ի գլ . լբ . ոյ կարէ տեսանիլ այս նաև ի գիրս հինհայոց . այլ ի Ճառ ընտիրս , ի տպագրեալ յայսմաւուրս ի հոկտ . 14 . երես . 160 . և ի սեպտ . 25 . երես . 113 . նաև ի գիրս յետնոց ոմանց , ոյ և ի գիրս հարցմ՛ . պաւնե՛ . գլ . 7 . երես . 543 ։ Այլ մեք այսոցիկ խառնակարար անձանց , ոյ գրէ եւագրիոս . է . 8 . 9 . լեզ . տիմոթէոս կուզն ամբոխ յարուցեալ յաղեքսանդրիա՝ ընկէց զպետրոս կնափեղն յաթոռոյն , և ինքն նստաւ պատրիարգ . և ի դիմել պետրոսի ի մկրտարանն՝ ապրեցուցանել զանձն , դիմեցին խուժան ժողովրդեանն քաղմուԹիք ի գրգռութիէ տիմոթէոսի ի վէր նր . և միսել սուր ի կողս նորուն՝ սպանին առ նբ աւազանաւն . և նմին և զայլ ևս վեց անձինս . և կապել զմարմին նորին պետրոսի չուանաւ , և քարշ ածեալ ի հրապարակի ի տեսիլ ամենեցուն նշաւակ առնէին զնա . և այսպանելով բարձրաձայն գոչէին և ասէին .

Աթանդոս. հպտր. Ե. Ը։ Աղաքիոս գերգ. Ե. գլ. 8 մինչ ի 18 ։ և Գ. 4 . մինչ ի 22 . և 30 . մինչ ի 34 ։ Պոպ. նղնի ։ Ղամակա- շի . ընդդեմ հերձ ։ և այլք ։

Ա.Մտ. ՚ի. ՚ի. պետրոս է տոյն այս մեռեալ։ Եւ ասպա ընդ բոլոր քաղաքն ձգձգեալ գնաց, և անդամ անդամ յօշեալ՝ այրեցին ՚ի հուր, և զմնացորդն ցնդեցին յօդս. Եւ զիորոտիս նոր պահեալ՝ ուտել ոչ ամաչեցին։

Օ այս ամ լուեալ եպիկաց կողմանցն եգիպտոսի՝ գրեցին և ծանուցին լուսին կայսեր. գրեաց և տիմոթէոս կուզն զընդդէնն առ ջատագովելոյ զանձն։ Իսկ լուսն կայսր վարանեալ ՚ի միտս՝ գրեաց ՚ի կողմանս կողմանս առ քեզմ եպիսկոպոսն և առ կրօնաւորս, ընդ որս և առ տէրն սիմէոն սիւնակեաց. և խնդրեր խմանալ, թէ ընդ կին կարծիս կայցեն վ՚ն ժողովոյն քաղկեդոնի. և միթէ կուզն արժանի իցէ կալոց յայն աթոռ։ Եւ առեալ յամենեցուն վկայուխն ուղղափառուէ ժողովոյն՝ հաւանուէք նոցին աքսորեաց զկուզն ՚ի գանգրաս, ուր աքսորեալն էր գէոսկորոս։

{457} {474} Ա.Յէ իբրև մեռաւ լուսն կայսրն, յաջորդեաց ՚ի տեղի նորա թէոդոս նորին ՚ի դստերէ՝ լուսն երկրորդ՝ որդի զենոնի. որ և աթոռակից արար զհայր իւր զզենոն. և իբրև մեռաւ նա զկնի տասն ամաց, նստաւ կայսր առանձինն նա ինքն զենոն. զոր և յետ եօթն և տասն ամաց վարեաց յաթոռոյն բասիլիսկոս, և էառ ինքն զկայսերութիւնն. և զի ծանօթ էր նմա տիմոթէոս կուզն, յետս կոչեաց զնա ՚ի յաքսորանաց. և նստոյց անդրէն յաթոռն աղեքսանդրիոյ. և նա գրգռեալ յորդորեաց զբասիլիսկոս գրել հրովարտակ ընդեմ քաղկեդոնի ժողովոյն, և տարածել յայլևայլ կողմանս՝ պատուհասս սպառնալով՝ որոյ միանգամ ոչ ստորագրեացեն նմին։ Եւ նախ ստորագրեաց այնմ՝ նա ինքն կուզն. ապա պետրոս թափիչն, և անաստասիոս եէմնայի. և այլք յեպիկաց ոչ սակաւք, եթէ {490} կամաւ՝ և եթէ ակամայ։

՚Ի յուզել այսոցիկ շփոթուէց, և ՚ի լինել պէսպէս փոփոխութեանց եպիկաց՝ զոմանք կալաւ սկսաւ պատրիարգ կոստանդինուպոլսոյ, և յարոյց ընդդեմ բասիլիսկեայ զկրօնաւորս և զժողովուրդս Թէոդրական քաղաքին. յորոց զահի հարեալ բասիլիսկեայ՝ վերստին հրովարտակ եհան, և յետս կոչեալ ընդ նախնայոյց զառաջին հրովարտակ իւր։ Իսկ այլք ոմանք յեպիսկոպոսաց ժողով արարեալ՝ ընկեցին զսակաւիոս յաթոռոյ, և հաստատեցին զառաջին հրովարտակն բասիլիսկեայ. որով յարեաւ ՚ի միջի այլ ինչն խռովութիւն. և դիմեալ ամբոխով ՚ի վէր բասիլիսկեայ՝ հալածեցին զնա ՚ի քաղաքէն։

Եւ յորժամ վերստին հաստատեցաւ զենոն ՚ի կայսերութիւնէ, եբարձ ՚ի կենաց զբասիլիսկոս. և պատառեալ զառաջին հրովարտակ նո՚ր՝ գրեաց ինքն զայլ հրովարտակ. յորում կամելով բառնալ զառիթն խռովութեանն այնր ՚ի միջ եբեր

միայն զերիս ժողովէն, և լուեաց զժողովոյն քաղկեդոնի. և [1.մ ի։ 4.
ըստ իմիք և այլոյ բանիք դատապարտեաց զայն. և այսմ հրամարտակի ստորագրեցին բազումք։ Յետ այսորիկ ընկէց զպետրոս Թաւիզ յաթոռոյն անտիոքայ, և զպօղոս յաթոռոյն եփեսոսի. և հաստատեաց զակակիոս յաթոռ իւր՝ի կոստանդինուպօլիս։ Յայնժամ բազումք յեպիկաց կղզմանցն ասիոյ գրեցին Թուղթ առ ակակիոս իրը՝ի ծածուկ, և ետուն հաւանութիւն՝ի վերայ քաղկեդոնի ժողովոյն. * Տես
,, տամք ասէն որ ինչ միանգամ սահմանեցաւ՝ի քաղկեդոն
,, բարեպաշտութէ և ուղղութէ՝ի սրբոց հարց անդ ժողովելոց։
Իսկ քոլն փոխանակ պետրոսի Թաւիզի կալաւ յայնժամ զաթոռն անտիոքայ ստեփաննոս ոմն, յարուցեալ՝ի վերայ նոյ ումանց յանտիոքացւոց՝ սպանին զնա չարաչար մահուամբ. և նստաւ՝ի տեղի նորա կաղենդիոն. և սա յորդորեաց զհիւրսն մերժել զառաջին հրամարտակ բասիլիսկեայ. և յորդորեաց նաև ըզկայսրն զենոն՝ ընկենուլ զտիմոթէոս. բայց քոլն առաջին ումանք, Թէ արդէն ծերացեալ է նա, և մերձ է՝ի վախճան, Թոյլ եւս նոքա. մինչև մեռաւ զկնի սակաւուց։ Իսկ այնուհետև շփոթք անկան վասն պատրիարգութեանն աղեքսանդրիոյ. և նստաւ անդ յովհաննէս ոմն, որ և ընկեցաւ՝ի զենոնէ. և հաստատեցաւ պետրոս ոմն, որ հաւանեցաւ հրովարտակին զենոնի։

Իսկ յովհաննէս՝ որ անկաւ յաթոռոյն, գնաց առ սիմբլիկիոս պապն հռոմայ, և առաքաստան եղև զղենոնէ. վա՛ ընդունելոյ իմաստ զժողովն քաղկեդոնի՝ մերժեաց նա զիս. և պապն գրեաց վա՛ այսր առ զենոն. իսկ զենոն արար պինդ, Թէ վա՛ այլ ինչ պատճառի ընկեցեալ զնա։ Յետ այսորիկ իբրև յաջողեաց սիմբլիկեայ պապն փեղիքս, նա ևս գրեաց առ զենոն վա՛ նորին յովհաննու, և վա՛ ընդունելոյ զժողովն քաղկեդոնի։ Իսկ զենոն գրեաց պինդ, Թէ յովհաննէս անիրաւութիւն նստեալ էր, և վանեալ զնա. իսկ վա՛ ժողովոյն քաղկեդոնի գրեաց այսպէս. * Տես ասէ պարտ է ձեզ գիտել, զի բարեպաշտութէն մեր, և համարիմն տէր եկեղեցիս ընկալեալ եմք և պատուիրեալ զամենասէր ժողովն քաղկեդոնի, որ ամենևին համաձայն է հաւատոյ ընկերականաց ժողովոյն։

Յաջորդեաց զենոնի անաստաս կայսր, յամի ՌՈՒ. յորոյ {491}
աւուրս ևս յուզեր՝ի մէջ եկեղեցւոյ հակառակութէն մեծ. ումանք՝ի նոցանէ զվէմն ժողովոյն մինչև ցնշանախեցին մերժէին. և ումանք մինչև ցկէտն պատրաստարէին. բազումք ևս՝ի հրովարտակն զենոնի պնդեալ կային։ Իսկ խռովութէն մեծ տարածեալ էր յաւուրն. և այս՝ ըստ գրելոյ եւագրիոսի, Ը. 5. յա-

Ա.Տիմ. ի. ի. Ա.Տիմ. գ. ի.

հետ մի միոյ տասի . յառել ոմանց , յերկուց քնութեց , և ոմանց՝ յերկուս բնութիւս ։ Օ այս տեսեալ անաստուածք կայսերք՝ դատապարտեալ զոր միանգամ քարոզելին ինչ՝ ի հակառակ կոչին կամ՝ ի չաստափառութի ժողովոյն ։ Վրեաց առնա որմիկք պատ անպատառ պահել զդաւանութի ժողովոյն քաղկեդոնի , և մերժել զաղանդ նեստորի և եւտիքեայ ։ և առնասուս գրեալ առ նա ասէնի , և ծանոյց՝ թէ ես չունիմ ինչ ընդհանութի առ ժողովն քաղկեդոնի ։ Ա.Յէ այսու ամենայնիւ պատճառ չիտեցին մինչև՝ ի ձեռս յուստինոսի մեծի թագաւորոյ ուղղափառ կայսեր , որ նստաւ յաթոռ ամի ՇԺԸ ։ 518 ։

Ա.ոդ՝ համառօտ պատմութի ժողովոյն քաղկեդոնի և հետևանաց նորա՝ ձշմարտութի այս է , զոր գրեցաք . և ա ուղիղ դաւանութի նոր , որ եղև վասն ընդեմ եւտիքեանց . զոր և յիշատակեալ հարց մերոց՝ ի ձեռս գրիւդորի կաթողիկոսին տղայ անուճանելոյ , ընկալան՝ ի պինին յունաց . որպես և ունիմք գրել . փէթ . է ։ Ցնա զայսմ ժողովոյ և զհակառակորդաց սր (1)
նաև՝ ի ժանօթութիւս ։ Ա.յժմ մատիցուք մեք՝ ի կարգ պատմութի մերոյ , դարձ առնելով՝ ի գործն՝ որք եղեն՝ ի ձեռս կաթողիկոսին դիւտայ , և զկնի այնորիկ յիշատութենն վասնայ մանրիկանեի ։ (2)

Գ Լ Ո Ւ Խ . Ի .

Քաղափ անդէ՝ որ անդէն ընդ գէթ կինդիկ յաղխարհին հայոց և պարսից . և յաղափ կինդիսութե տրիտափրի առաջնոյ . ոար և յաղափ ընթացն էարձրատայէ ։

Ի Տալ երանելին , որ յետ իւր չորեքտասան ամաց քաղկեդոնի ժողովոյն նստաւ կաթողիկոս հայոց , ոմն առացաք՝ ի գլ . ծբ , վաստակեալ ձգներ ոգւով յաւի հանապազորդ յուղիլ առաքինութե իւրումն հոտ . բայց հայեցեալ՝ ի վերոյժմն ձեռն՝ ի պատճառս ուրացութե ոմանց՝ ի նախարարաց՝ տառապեր՝ ի հոգի իւր , և յայնմիսիկ առաջ պաշարեալ վարաներ . զի անպատուհաս սեաներն զիւր վաստակ յանդաստան ձգ խոպանացեալ . և որ չափ ջանայր ինքն վն շահելոյ զկորուսեալսն , տեսանէր՝ զի նոքք ձգետ լինէին և զայլս կորուսանելոյ՝ դարձուցանելով զնոս՝ ի կրօնս կրակապաշտ մոլորութե ։ {491}

Ա.ոդ՝ Թեպետ բազմութիք նախարարացն հայոց և այլ իշխանք ամենատարք հաստատուն կային յօրէնս քրիստոնէութե , բայց՝ ի մտի երկիւղ ըմբռնէր յերեսաց ուրացելոցն , որք պար-

սեց զօրութիւնք խրոխտանային, յուսահատ լինն կեանս վարելին։ Ա.մ. ԽԲ
Այնպէս և ռասիկք ժողովրդեանն ահիւ պաշարեալ՝ զդու-
շանալով կային յօրինս իւրեանց։ Այս էր յայնժամ ճ մեր
յայնպիսի վիճակի, ոյժն էր հրեաստան յաւուրս մակաբայ-
եցւոց. ա. ամ. 1. ա. 2. ա. 3. ուր. այլ ոչ էր ի միջի մակա-
բէ՝ այլ է մեծն վարդան, որ վանեաց զԹշնամին հաւատոյ։
Լակ այն երանելի նախատարք՝ որք եկին ի պարսից, և որ-
դիք նոցին, զանձինս Հողոպրել կամելով խորհէին Թողուլ
զՀն, և փախչիլ յօտար երկիր քրիստոնէից, և կիմ զայլ լիմն
հնարս հնարիլ. վնդ և ստէպ կանխեալ առ երանելին գիւտ՝
ի նմանէ խնդրելին բանս միխիթարուԹիւն, և հնարս ազատուԹիւն
բաղմաց և ՀՀն հայոց համայն։
Յաւուր միում՝ ի ժողովիլ նոցա առ գիւտ, և՝ ի խօսիլ՝ ի վերայ 47ա
ԹշուճառուԹիւն ՀՀն, խարհուրդ՝ ի մէջ առին դիմել առ լևոն
կայսր յունաց. և առաքեցին առ նա գաղտ պատգամաւորս
միանգամ և երկիցս. և աղաչեցին զնա հայիլ զԹուԹիւն՝ ի
վր տառապեալ ազգին, և կարկառել ձեռն, և զերծուցա-
նել՝ ի գառն ծառայուԹէ պարսից, և առնել զնս իւր. ոյր
էին նոքա՝ որք բնակէին՝ ի մասն բաժնի յունաց. քանզի յոր-
չամ ընդ սոցա ծառայուԹէ եմք առեր, ոչ գոյ մեզ գտանել
խաղաղուԹիւն. մանաւանդ Թէ օրընօրէ տապալին կրօնք մեր,
և աղաւաղին եկեղեցիք. և եԹէ փոքր մի ևս լինի մեզ յա-
մել, ՀՀ մեր չքմի՝ ի կրօնս սո՝ Ո այս լուեալ լևոնի՝ կամեցաւ
օգնել հայոց, և փրկել զնս՝ ի ձեռաց պարսից, բայց խուսա-
նեցաւ վ՛ա դառնուԹէ իւրոյ ՀՀկին, որ յուզեր և ծխեր՝ ի
դէռակորեանց անտի. ոյր յայտ է յառաջելոցս՝ ի նախընԹաց
գլուխդ։
Այլ՝ ի վր այսր ամի պատգամ յղեաց լևոն առ հայս, Թէ 47բ
որ ոք կամիցի անկանիլ յՀն յունաց, պաշտպանեցից նմա, և
առաջ առեղի բնակուԹէ։ Այս պատգամ լևոնի ոչինչ նպաստ-
եր հայոց. զի նք ոչ զանձինս ևԹէ, այլ զՀն ողջոյն կա-
մէին՝ ի յանդորրու պահել. և սակայն ոմանք՝ ի նախաթարացն
արշակունեաց, արտաւան՝ որ առեալ եր զկի՝ ի դստերաց
Հմայեկայ եղբօր մեծին վարդանայ, և գաղտիկ եղբայր նր՝
ելեալ գնացին յՀն յունաց առ լևոն կայսր. և պատուհեցան
՝ի նմանէ իբրև արքայազունք. զոր և քնակեցոյց լևոն՝ ի նի-
կիա քղք մակեդոնիոյ յապահովի. ուր սերեցան նք ազգ
յորդին. և յետ ՀՀկաց յաւուրս հերակլեայ կայսեր փոխա-
դրեցան յադրիանուպօլիս. ուր պահեցին մինչև՝ ի ՀՀկս բոլիս
զանուն ցեղի իբրեանց՝ ի մէջ յունաց։ Այս ոմանք՝ ի նոցանէ
զկնի ամաց բազմաց եկեալ՝ ի հայաստան՝ հասին յաւագու-
Թիւն. և տիրեալ սեպհական պայազատուԹէ քանի մի ամուր

քա-

Լևոպանդին համար. է։ Ալեքսեևա. էջ. 557. համ. 437։

քաղաքաց ի կողմանս բզնոյ ի նիզդ գաւառի՝ սերեցան անդ. յորոց շառաւիղեցաւ և գրիգոր մեծ իշխանն սահլաւունի, և թառն նէր գրիգոր մագիստրոս, և որք գհետ նէր. զորոց ոչ նիմք խօսիլ ի ջորդրդ և ի հինդերդ գիրս. այժմ հայեցուք ի կարգ պատմութեանս։

Վարդենի։

472 ՟Ը. Տեսեալ երանելւոյն գիւտայ, թէ ոչ ուստեք գոյ յոյս օգնականութեան ի փրկութենէ և յողղութիւն հին, ոչ ևս կարացեալ հանդուրժել՝ սկսաւ յայտնապէս բանիւք և գրովք յանդիմանել զուրացօղսն, և պատիւ մեծ ընծայել ուխտապահացն Տեառն և բարեմիտ հաւատոյելոց։ Եւ զի ի մէջ ուրացելոյն առաւել չար էր գադիշոյ խորհուրդն մաղխազեանց, և էր նա իբր երկրորդ վասակ զօրագլուխ ամպարշտելոց՝ և յորդորել այլոց յօրէնս մոգութեան, զնա սկսաւ գիւտ առաւել քան զայլս յանդիմանել և կշտամբել։

տկարացեալ սաղարայ՝ անկաւ յերիվարէն , և խռովաթեալ
ի խռանն փախեաւ :

Երբ և տեսս վահան , թէ աղմկեցան զօրք Հայոց , և տկարա-
ցան առաջի Թշնամեացդ , և թաղումք ի ննջե փախեան , ձայն
ետ վրնայ վանականացոյ . յառաջեա՛ ասէ ի վր Թշնամեացդ .
իսկ նք զարհուրեալ յանսահմանելի շփոթութենէն՝ ասէ , ես
ոչ եմ կարող . դու յայսմ ժամու մի լինիր յիս ապաստան :
Այն լուեալ վահանայ՝ կնքեաց զինքն նշանաւ խաչին , և էջ
կայծակնաթաւր ի միջին վայր աջակողմեան գնդի Թշնա-
մեացն . հասին անդ և երկոքին եղբարք կամաւրականք՝ ներ-
ահ և հրահատ . և երեքին նք՝ թէ զինչ անդ գործեցին՝ չէ
հնար գրութեամբ յայտնել . քանզի շարժեալ անհնարին ուժգնութբ
համայն զգունդն դղրդեցին , հարին զհազարաւորս նոցա ի
թաւթափութեան ական . և անցեալ ի ձախակողմեան Թև նոցին՝
զանթիւ բազմութեն արանց քաջաց տապաստ արկին յերկիր ,
ոմն որ թօթափեցեալ զԹուեն ի ծառոյ . և խռովեցուցեալ
զբովանդակ բանակ նոցա՝ ցիրուցան կացուցին զամենին :
Ընդանօր մին ի չորից զօրավարացն պարսից , այն է վին խո-

ռեան այր հզօր՝ իւրովք թիւնապահօք բազում քաջութիւ-
ընդեմ դարձեալ հայոց՝ մնայր աննահանջելի։ Յորմէ զօրա-
ցեալ և վշտասպոյ՝ խաղայր արձակ և նա՝ ի տկարացեալ կողմն
հայոց։ Այլ քաջին վահանայ դիմեալ՝ ի վէր խոռեանն փնայ՝
սատակեաց զնա անդէն. նոյնպէս և կամսարականն ներսէհ
հարեալ նիզակաւ զվէնասպ՝ տապալեաց զնա զգլխով երիվարի
նորին, և սպան։

Յետս հայեցեալ փախստեայ հայոց և բարձրդի, և տեսեալ
թէ խորտակեցան պարսիկք և անկան՝ ի փախուստ յերեսաց
վահանայ, ոգի առեալ զօրացան, և դարձան յետս. և պըն-
դեալ զհետ փախստից՝ հարին և սպանին՝ ի նոցէ զբազումս՝
առնլի՝ ը զոր կոտորեցանն՝ ի պատերազմի. և զմնացեալս՝ ի
նոցէ հալածական արարին։ Այլ երբրև ոչ ևս զրաք տեսանէին
՝ի պարսից, դարձան ը կրունկն՝ ի տեղի բանակին. և գտին
աւար բազում յոյժ յոյժ. զորս ժողովեալ բաժանեցին յիւ-
րեանս, որովք և լցան և փարթամացան. և զերդս օրհնութիե
՝ի բերան առեալ՝ եկին և մտին՝ ի գիւղն ներսեհապատ։

Իսրոց ը առաջ եղեալ երանելին յովհան՝ ետ զօրհնութիւն իւր
՝ի նոս, և ուրախ եղև ը նա. և ցնծայր հոգւով՝ ոչ այնչափ
վս յաղթութիե նոցա, որչափ վս յայտնի տեսանելոյ՝ թէ ա-
հաւր եր ընդ նա. զի թէ չէր այնպէս, անհաւատալի իմն էր՝
այսչափ սակաւ արամբք զայնչափ բազմութիե սպառազինաց
վատթարել։ Այսպա եղեալ նոքա՝ ի ներսեհապատ գեղջէ՝ եկին
՝ի ծաղկոտն գաւառ. և փոքր մի հանգչեան՝ ի տեղւոջն վար-
շակի կոչեցեալ. լցեալ ամենեցուն խնդութեամբ՝ ի հոգիս
իւրեանց։

Ե. Յայսմիսի ուրախասէ ժամու նոցա եհաս առնն անակն-
ունելի լուր աւետեաց, եթէ վարդ եղբայրն վահանայ զեր-
ծեալ հրաշիւք՝ ի կապանաց՝ գայ. և՝ ի նմին պահու իսկ ժա-
մանեաց և նա ինքն վարդ հանդերձ ծառայիւք. և ոչ գիտեր՝
թէ զնմանէ զերծեալ էին։ Յայնժամ կրկին ուրախացեալ
ամին՝ օրհնէին և գովէին զնա. և ոմանք՝ ի բազում խնդու-
թէ երկուցեալ՝ հայէին յերեսս վարդայ՝ տեսանել, թէ
ձմարտիւ նա ինքն էր, թէ այլ ոք, և կիս առաջօք էին.
քանզի ը ասելոյ վարպետացն, գրեթէ առաւել էր տեսա-
նել աւտ՝ ք յաղատութենն պետրոսի՝ ի բանտէ. զի նա միայն
առանձինն զերծաւ, և ը մի դուռն էանց. իսկ սա ծառայ-
իւք հանդերձ ը բազմ դրունս և ը պարիսպս։

Իսկ թէ որչափ ուրախասէր եղև եղբօր նոր վահանայ, չէ հնար
քանիւ պատմել. մինչդեռ զի գիտայ նա այսու, թէ թագեալ
է նա ՚ի վերս ուրացութենն. քանզի ինքն՝ ի միաբանիլն ը
այլոց, ոչ՝ ի վեր անդ՝ է գլ. ԽԲ. գրեցաք, ասացեալ էր. ե-

թէ

Ա. կդ պն

թէ հաձեալ իցէ ասծ ընդ խորհուրդս իմ, և անտես արարեալ զմեզս ուրացութեանն իմոյ, տացէ ինձ տեսանել մերձ ընդ մերձ զանձկալի եղբայրն իմ զվարդ. և ուրախ արասցէ զիս նովաւ: Այնպէս և վաստակ եղբայրս նորա խնդրեալ էր յիմ, նախ տեսանել զհարազատ իւր զվարդ, և ապա ասէ արժանացո՛ զիս փութով հասանել նահատակութեանդ. ոչ և կատարեցաւ իսկ յետ սակաւուց. ընդ որում ունիս տեսանել՝ի յաջորդ գլուխդ: Այլ գալստեանն վարդայ, ընդ նմին և համբաւ յաղթութենն հայոց հռչակեալ և տարածեալ ընդ համօրէն հայաստան՝ կոյսացոյց զգլուխս ուրացելոց, և յամօթ արար զխորհուրդս նոյ. և ընդ հակառակն ուրախս արար զայնոսիկ՝ որք հաստատուն ունէին զհաւատս քրիստ. և լցան ընդ ընթացք նոյ օրհնութիւք տան:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ե:

Յաղագս նենգութեանն վահևնանայ. և պատերազմելոյ հայոց ընդ պարսիկս. և նահատակութեանն սահակայ ասպետի, և վասակայ մամիկոնէի:

482 Ա. Յինչդեռ դադարեալ կային հայք՝ի տեղւոջն վարշակի կոչեցեալ, եհաս առնն դեսպան՝ի թագաւորէն վրաց վախթանկայ հանդերձ թղթով. և գոյժ ետ նոյ, թէ գունդ սաստիկ եհաս՝ի պարսից յերկիրս վրաց, որոց զօրագլուխ է միհրան. ընդ լուծեալ էր հաստատութիւն, թէ գան նոքա. և իմ ասէ տեսեալ, թէ ոչ եմ կարօղ կալ առաջի նոյ, խոյս ետու՝ի լերինս հայոց մծտ՝ի սահմանս վրաց. և մնամ ձեզ: Ուրեալ էր դարձեալ՝ի նամակին, թէ ես հրամանս ետու հոնաց՝ գունդ առաքել. այլ նոքա չհնազանդեցան. բայց մինչ դուք գայք, հասանեն և նոքա. և այնպէս դուք և մեք և հոնք հարկանեմք և կորուսանեմք զպարսիկս: Եւ կարծեմ թէ ասէ՝ի գալ հոնաց՝ մեզ այնուհետև քնաւ աշխատութիւն ինչ ոչ հասանէ. նոքա իսկ վճարեն զգործն. զի մեծի բազմութեանն հրամանն տուեալ է իմ գալ:

Վարդենի:

Ա. այս իբրև լուաւ վահան՝ և այլ նախարարքն միաբանեալք ընդ նմա, ոչ կարացին անտես առնել զբանս վախթանկայ. զի երդումն տուեալ էր նոյ նմա աւետարանաւ և խաչիւ նիզակակից լինել իրերաց. վասն վաղվաղակի յարուցեալ եղեն յամուր տեղիս զկարասի իւրեանց. և յուղն անկեալ անյապաղ՝ ամ զօրօք իւրեանց՝ փութայինն հասանել առ վախթանկ. և եկեալ դադարէին առ վայր մի՝ի գաւառն կանգարայ՝ի վե-

ըսայ լերանց՝ յամենայնն հրոտից , այն է յուլիս : Այլ անդ ընտառաջ եղեալ նոյ արքայն վրաց՝ պատրոպական բանիւք թարգմանեցուցաներ զմիտս նոցա . երբեմն ասէր , թէ միհրան լուեալ զգալուստ ձեր՝ խոյս ետ ի սահմանացն վրաց , և առ երկիւղի գնաց յաղուանս : Այլ երբեմն ասէր , թէ յետ երկուց աւուրց հասանեն առ մեզ գունդք հռոմայ . իսկ ի յանցանել երկուց աւուրց՝ ի չորրորդ օր ձգեր . և ապա ի վեց և յեօթն օր :

Այլ հուսկ յետոյ առ պատրուճակելոյ զխաբէութիւն իւր՝ առաքեաց արս ի ծածուկ ի մօտաւոր դաշտավայրս վրաց՝ հուր լուցանել ի տեղիս տեղիս , կամելով այնու կարծեցուցանել՝ թէ ահա հասեալ իցէ գունդ հռոմայ . և զկռճելս ծառոց երևեցուցաներ նոցա իբր արս զինեալս : Այլ առեալ բանս ի սուտ լրտեսաց՝ ասեր , թէ անդ ի դաշտի սպասեն մեզ հռոմ , և ոչ գան աստ առ մեզ ի լերինս . զի ոչ հաւատան , թէ դուք աստ էք . այլ՝ ասեն , եթէ ձմեռոտիւ միաբան իցեն հայք ընդ քեզ , իջցեն քեզ հանդերձ ի դաշտ այսր . և մեք այնուհետև զորինչ և հրամայես առնել՝ զամ կատարեմք . ապա թէ ոչ՝ չհաւատամք քեզ : Այլ ապա աղաչեր զնա վախճանակ , և ասեր . եթէ դուք ոչ իջանէք ի դաշտդ , հռոմ ոչ պատերազմին ընդ թշնամիս . և միհրան եկեալ աւերէ զնա . և զինչ օգուտ իցէ ինձ այնուհետև եկդ ձեր :

Իսկ հայք ոչ գիտելով զխաբէութիւն նորա , և միամիտ կալով յերդման իւրեանց , հաւատացին նմա . այլ ոմանք ի նոցանէ միտ եդեալ զայս ի պատ բանից նորին՝ ոչ հաւանէին նմ . և հայհոյեալ ի տօթ ժամանակին՝ ոչ բարւոք համարէին լքանել ի լերանց անտի : Այլ յետոյ միաբանեալ ամենն ի մի խորհուրդ՝ իջին ի դաշտ անդր . և ոչ գտեալ զոք անդ՝ տարակուսեալ եղեն ի միտս իւրեանց . և վախճանակ պեսպես բանս յօդեր ի լսելիս նոցա . և բերեալ բանակեցոյց զնա մերձ ի կուր գետ :

Այլ ճաշակ նոցա անդ աւուրս երիս՝ եկին եհաս անդր միհրան անհամար բազմութեամբ զօրաց և փղաց , և սպառազէն հեծելոց այլևայլ ազգաց . և եհար զբանակ իւր յանդիման բանակին հայոց : Այն իբրև տեսին հայք , շուարեցան . և չուէալ անտի՝ իջին յայլ տեղի հեռի ի բանակէն պարսից : Այլ ի նմին գիշերի բազումք ի գնդէն հայոց՝ որք յողջոյդն էին , պաշարեալ յերկիւղէ՝ վտանգեցան և խաւարեցան ի խորհուրդս իւրեանց . առաքեցին բանս ի բանակն պարսից , և ասեն . մեք ոչ եմք եկեալ աստ կամաւ , այլ ի բռնութենէ զօրավարիս մերոյ վահանայ . իսկ միաք և խորհուրդք մեր ընդ ձեզ մի են . և եթէ չհամարիցիք մեզ ի յանցանս զգալուստ

մեր այսր, լինցուք մեք ի կողմն ձեր. և ի վաղիւ ի գալ մեր ի տեղն կռուոյն՝ մեկնեսցուք մեք ի հայոց. և այլոց ևս լինցուք յորդոր փախչելոյ ի գնդէ նոցա։ Եւ առեալ ի պարսից պինդ խաղաղութեամբ երդմամբ հանդերձ, հաստատեցին ընդ քանսն՝ զոր խորհեցան։

Ե. Ի վաղիւ անդր ի հնասանել հայոց ի տեղն պատերազմին, սկսաւ վախճանիլ խօսիլ ընդ վահանայ և ընդ այլս, և ասէ. լաւ եղև մեզ գալ այսօր աստ ի մարմնոյիլ ընդ զօրս պարսից. քանզի մեք իսկ միայն բաւական եմք վանել զտոհա. իսկ թէ հեղգացեալ էր մեր աձապարել, գալոց էին հոնք, և պանուն յաղթութեամբ և զաւար նոքա առնուին։ Այսմանէ վահան զխաբեբայութիւն վախճանիկայ, քայց անտագանց. գիտաց՝ թէ նա ոչ միայն պատիրս խօսի, այլև դեռ զմարդկայինս խորհի, և զմարդկային փառաց բերի. զի ոչ վն պաշտպանութիւն հաւատոյ էին քանք նոր, և ոչ սակս փառացն ոյդ, այլ՝ ի վէր անտեսից. վասն եթող ամենևին զխորհուրդս նոր, և ապաւինեցաւ յաստ։

Այլ տեսեալ զբազումն ի գնդէ իւրմէ լքեալս և մերկեալս յառաջին զուարթութենէ անտի, խռովեցաւ յանձն իւր, և այլագունեցան երեսք նոր։ Այլ քանզի չէր ժամանակ ընդ եղեալսն զայրանալոյ, այլ ընդ ժամանակին հաւատոյ պատերազմելոյ, անդէն վազվազակի սկսաւ կարդել և կազմել ընդ գոնդ զօրաց իւրոց, օրչափ և մարթ էր. զկողմն աջոյ ետ ի ձեռս բարշղի վահևունւոյ, և սատոնի գաբեղեան. զահեակ կողմն՝ յորում էին վիրք, ետ վախճանկայ. թէպէտ և էր վտահ յայրն խաբեբայ. և ինքն եկաց ի միջի, առեալ ընդ իւր զեղբայր իւր զվասակ, և զերեսին եղբարս կամաւորականս՝ զներսէհ, զհրահատ և զվահան. իսկ զմարզպանն սահակ, և զբաբգէն սիւնի կացոյց ընդ մէջ իւր և բարշղի վահևունւոյ։

Ինչ չև էր սկիզբն արարեալ նոյ մարտի, հայեցեալ վահանայ յերեսս եղբօր իւրոյ վասակայ՝ եառես զնա այլակերպս եղեալ, և բոլորովին լուսափայլեալ և փառաւորեալ։ Այս տեսին և այլ նիզակակիցք նոր. և զահի հարեալ՝ ոչ հանդարտէին հայել ի նա. որով և գիտացին, և իւրք յայտնի տեսին, թէ նա ի նմին առուր առնելոյ էր զյաղթանակն մարտիրոսութեան ի մարտի անդ։

Եւ իբրև եհաս ժամ մարտի, յարձակեցան երկոքին զնդակատքն ի վէր միմեանց՝ հայք և պարսիկք. և անդ խրախուսեալ վահանայ ի նոր հանդերձ կամաւորականսքն՝ զնամ յանդիմանակաց իւր միանգամայն տապաստ յերկիր կործաներ. և զայլսն ցիրևցան կացուցաներ. և զբովանդակ բանակն

պարսից դաղտագողեալ յասլշութի յիմարուէ կրթեր , և ըզբազում յերևելի աթոռոց առաքուց տապալեր . և տագնապ մեծ հասուցաներ ի վէր միհրանայ ։

Եւ ի խառնիլ անդ պատերազմի երանելին յովհաւ մկրտչեան բոլորովին յափշտակեալ ի սէրն Քրի , և յանհնարինս մղեալ ի գործ քաջութե՝ անդէն նահատակեցաւ ։ Յոկ վառակ եղբայր վահանայ հարեալ նիզակաւ զայր ոմն հզօր ի գնդէն պարսից երկաթապատ զինեալ , ի կործանիլ նմ՝ բեկաւ նիզակն . և անցեալ վառակայ զնովաւ ի խնդիր այլում նիզակի , իբրև եգիտ և դարձաւ , պատահեցաւ ներսեհի կամնականի . որոյ ևս նիզակն բեկեալ՝ և նա եր ի խնդիր այլում նիզակի ։ Ընդաղակեաց առ նա վառակ , և ասէ . * փութ՝ ,, Թանձրակռ գտանել նիզակ , և դարձիր եկ արագ . քանզի ,, ոչ երբեք կարեմք գտանել ժամ աքանչելի այսպիսի վա- ,, ճառու . ուր մահ զանմահութի փոխանակէ . վաղվաղեա , ,, քանզի չեմք կալոց անմահ . գուցէ վրիպեալ յանուանէն և ,, ի փառաւորել կատարմանէս՝ անանուն և անպիտան մահ- ,, ուամբ եղանիցեմք ի կենցաղոյս ։ ։ Եւ ինքն գրեթէ հոգիացեալ՝ ի մէջ Թանձրութե առաջուոյց բազում նախճիրս գործեր , և անդէն նահատակութե կատարեր ։ * Եւ ,, զայս լուր (ասէ փոխարէնն) քարբառեալ ի սէր առնէն ,, վասակայ մամիկոնէից հաւատոյ երդմամբ պատմէր մեզ ,, բազում անգամ ինքն տերն շիրակայ ներսէհ կամնա- ,, կան ։

Է . Ապ ինչդեռ սոքա յայսպիսի ահեղ քաջութի՝ ի սկզբան անդ պատերազմեալ լինէին , ուխտանենգ հայք՝ որք յերեկոյէ դաշնադիր եղեն ընդ պարսիկս , փախուստ առնել ի գլուխ վահանայ՝ աղաղակէին , ասելով զանձինս ։ Այն բարբառ զահի հարեալ և այլոց բազմաց առ հասարակ և նոքա ի փախուստ դարձան . ընդ որս և նենգաւորն վահան զօրօք վրայ ։ Այն տեսեալ վահանայ և կամաւորականացն՝ ոչ ևս պատաշաճ վարկան մնալ ի մարտի , այլ՝ դարձուցեալ զերասանակս երիվարացն՝ չոքան զհետ փախստից ։ Եւ յելանել անդ նոքա ի մարտէ՝ եռեսս վահան զբազկին ախնի կարել վէր խոցեալ ի պարսից , և անկեալ յերկիր ի մէջ դիականց . փութացաւ ելք և էառ զնա , և հեծոյց ի վրայ իւրոյ նժոյգի . և հանեալ ի պատերազմէ՝ ապրեցոյց զնա ։ Յոկ զօրքն պարսից իբրև տեսին զփախուստ հայոց՝ պնդեցան զհետ նոցա , և հարին զոմանս ։

Այն փախուստ հայոց՝ երևեալ հրահատակ կամաւորականի աստուածպէս վազս առեալ՝ ընկեց զնա ի վայր . և յրնթանալ հետոտա՝ հասեալ ի վրայ նր պարսից , մինչդեռ վաստա-

ելեալն էր , ձերբակալ ապստիմն զնա , և ածին առ միհրան : Ոչ այն իբրև ետես միհրան , զուարթացաւ յանձն իւր . և կանչեալ զնա ի շղթայս՝ ուր և երթայր՝ ընդ իւր շրջեցուցանէր : Կալեալ եղև յայնմ աւուր և սենպուհ ոմն սիւնի՝ յազդ աձունն , և այլք ոմանք ի վրաց . զորս և կապեցին և պահէին զգուշութեամբ .

Լուր վահան սպարապետ հանդերձ երկու եղբարբք կամնա- բականօք , այն է ներսէհ և վահան , գնաց ի կողմանս տայոց յամուր տեղիս . և նստաւ ի գեօղն՝ որ կոչիւր մինասունք . և ժողովեցան առ նա և այլ փախստեայք՝ արք իբր հարիւր :

ԿԱՊՈՒԽ ԻԹ .

Գաղափ պիտիեղոյ միհրանայ ի վր վահանայ . և պատասխանի հրահատայ . և նահապետունիք յաղթայ :

Ասացաւ առ միհրանայ՝ Թէ վահան ի կողմանս տայոց է , պնտեցաւ զհետ նր հանդերձ գընդաւն . և ջանայր՝ կիմ ի մարտն ժամանել զնա , կիմ հնարիւք ըմբռնել , և կիմ բանիւք խաղաղութեն ի հնազանդութեն նուճացնել . և այսու մտոք վաղվաղեալ՝ եկն և բանակեցաւ ի գեօղ մի , որ անուանիւր դու , ի սահմանակից աշխարհին պարսից և հոռոմոց , ոչինչ հեռի ի տեղւոջէն՝ ուր էր նա ինքն վահան : Վահան

Այլ աստ զարմանալ արժան է , զի թէպէտ և այնչափ բազմութիւն զօրաց ստուարացեալ էր բանակն միհրանայ . իսկ առ վահնայ էին հարիւր ոչիք միայն , բայց սակայն լուեալ՝ Թէ ի մատաւոր տեղիս նստեալ է վահան , սարսեալ դողայր նա ինքն միհրան և բովանդակ բանակ նորա . և ոչ իշխեր բնաւ յարձակիլ ի վր նր . վասն և բազում անգամ բանս ուղարկեալ առ նա՝ ի խաղաղութեն յորդորէր զնա , ասելով . չէ քեզ արժան ի ծառայութեն արքային պարսից եւանել , և զհայոց աշխարհ հայոց ի վատնումն տալ . անսա ինձ , և եկ ի հնազանդութեն թագաւորին . և ես միջնորդ եղէց վն քո . ես աղաչեցից զնա , և հաշտեցուցից զնա ընդ քեզ . և որ ինչ արժան է տալ քեզ՝ ջանամ , զի տայցէ . և ես գիտեմ , զի լսէ ինձ . քանզի սիրէ զիս :

Յղեաց առ նա վահան պատգամ , և ասէ . եթէ ինձ արժան իցէ ելանել ի ծառայութեն արքային պարսից , նման և արժան է արդար աչօք հայել ի ծառայս իւր , և արդարապէս տեսանել , և արդարապէս լսել . զի եթէ թագաւորն

ուղիղ աչօք չհայիցի ի ծառայս , և ուզիղ լսողութիւն չլսէ , և ըն արժանի իրաւանց չխորհի , այլ միայն գիտէ իշխանու- թիւն վարել , և այլոց աչօք ևեթ տեսանել , և այլոց ականջօք լսել , ծանր է ծառայել այնպիսւոյն և դառն . քանի՞ ևս ե- թէ ոչ գիտասցէ ընտրել ի մէջ ծառայից իւրոց զլաւն և զը- վատթարն . և չկամիցի իւրաքանչիւրումն ըն արժանւոյն մա- տակարարել զպիտոյն ։

Ա՛յդ՝ հայոց աշխարհս թէ սրպիսի մեծ և պիտանաւոր ձ է՝ դու քաջ գիտես . ցսյց ինձ այժմ , թէ թագաւոր ձեր սրպէս վարեցաւ ընդ այն՝ ի ծառայելն նմ . զո՞ւ ոչ յարժանաւոր պա- տիւ հասոյց . միայն զխաբեբայս ոմանս և զհայկատակս և զվատաւտոհմիկս վեր ի վերոյ պատուհեալ պատրեաց , ոչ վը- արժանապատիւ ինչ ծառայութե նշ , այլ զի նք առ երեսս պատիւ տան կրակի և մխսրոյ առաջի ձեր . և ոչ գիտէք , թէ յորժամ նք առանձինն լինին , անարդեն զնա , և յաղբ ևս արկանեն . և ահա այս է միայն հաձոյ յաչս թագաւորին ձերոյ . իսկ քաջութե՛ն և իմաստութե՛ն , որովք ձ չինի , այն չինդրի ի նմ՛ , և արհամարհեալ ևս է , և անպիտան համարեալ ա- ռաջի նր ։

Ա՛ւեալ իսկ է քո և ձմ պարսից զբանս թագւորին ձեր պերոզայ՝ յասել նր յատենի առաջի ձմ՝ն , թէ այր վատ և գունդ ան- պիտան առուի է . բայց թ զասուի այր՝ հայ մարդ շատ վատ- թար է և անպիտան . և ոչ արդեօք լաւ էր մե՛ք զան զայն- պիսի լսել լուր յայրքայից աղքայէ ։ Ա՛յս ո՞ այդմ պատձառ , բայց միայն ինքն ձմն արեաց . վ՞ զի նա ուրացուցեալ ի հա- ւատոյ զկորովացեալս հայոց՝ անպիտանս արար . և զորս խոս- տացաւ փառաւորել՝ յանարգս կալաւ զնոսա . և յանպիտան տոհմիչ վերակացուս կարգեալ՝ զձն ևս անպիտանացոյց . և ը այդ ուրախ է , զի մի՛ զօրացեալ տեսանելով զհայս՝ զարհու- րեսցի ի ննջե . քզի զիտրձ առեալ է քաջութե նոցա . և քո իսկ տեսել է զգօրծ նոցա ։

Ա՛մ ահա՝ որ տկարս եմ , երկու կռիւս արարեալ է ը պար- սից . և երրորդն այս է՝ զոր արարի ը քեզ ։ Ա՛ռաջինն եր- կու կռիւն ը որպիսի քաջ և երևելի մարդկան մկրտեաք , ինքնին իսկ գիտե արքայ և ձմ արիք . և մեք առանց ուրուք օգնականի սակաւաւորք վճարեցաք ։ Ա՛ւ յայսմ երրորդ կռուի ևս յաղթող դառել եմք ք յաղթել . ի ք՛ի՞ն արկ զան- կեալս ի ձէնջ և ի մէնջ . և ծանիր , թէ որոյ եղև յաղթու- թի՛ն . իսկ փախուստ մեր ոչ էր առ տկարութե՛ն , այլ ի մեր երկայառակութե՛ն , և ի ներքնդութե՛ն ոմանց ի ձէնջ խաբե- ա՛յլ եթէ ես համօրէն իշխեի ծիս , ներքնդութե՛ն ևս զդեմ առնել . զվատսն պատուհասել , և թշնամեացս յաղթանա-

կել. և քաջացն պատիւ և բարի առնել կարելի. և ցուցանել Թէոդորին քում և ձեզ ամէնն, Թէ որ ազգ անուանի է յաղթութեամբ և լաւ: Իսկ զորս ձեր իշխան կարգեալ է ձեզ հայոց ի վատ առնմէ և յանարդ ազգէ, զոքա իւրեանց յետնութիւն և անպիտանութիւն կորուսին յձեռս հայոց զքաջութիւն և զլաւութիւն և զանուն բարի. սի Թէ զօրագլուխ գնդին վատ է, գնդին լաւ լինել չի հնար. և եԹէ իշխանք ձի յետին են, այնմ անհնար է յառաջադէմ և անուանի լինել:

Ե. Իսկ յաղագս իմ զոք աւելի գիտէք, զի ի հարցն իմոց ես տղայ մնացի. սէ զվաստակս նոյ՝ որ առ աշխարհն առեաց լեալ է, գիտեմ. և ոչ յանցմանն նոյ՝ Թէ յանցեան, հաղորդ ինչ էի. բայց միոյ ես յանձին զգացի, և արեաց նոն արբանեկութիւն արժանի եղէ, եդի ի մարի՝ առնել արդար ծառայութիւն, և արդար վաստակս վաստակել. և որչափ ես ըզլաւն հոգայի, և ի լաւ վաստակն յաւելուի, վատատոհմիկ իշխանքդ՝ զորս դուք վեր ուրացուէ նոյ տանուտէրական պատուով մեծարեալ էիք, բանսարկութիւնս առնէին. և դուք սրտի մտօք լսէիք: Օ մաւս ածի, Թէ զինչ արդեօք այլ հնար գուցէ, որով ես կարօղ լինեի ուղղել զմիտս արքային և զաւագայդ, զի գանել ուղիղ աչօք հայեցային ընդ իս. և այն շատ էր ինձ:

Ա. Ե իբրև տեսի, Թէ ոչինչ իւիք մարթ է ինձ զմիտս նոյ հաձել, և ոչ ևս արժան էր յձեռս փախչել, խորհուրդ ջար ի մարի արկի, և անձամբ զանձն ապանի. ուրացայ զձշմարտութիւնն՝ զոր գիտէի. և երկեր պագի ատուեցի և մուրուեցի՝ զոր ատէի. զոր և այսօր առաջի ձեր և առաջի ամ ձի խոստովանիմ, Թէ ատուեցի է և աղտեղի խաբէուեցի: Այլ յետ կործանմանն՝ զոր կործանեցայ, մաշէի յերկիւղէ զնամ օր, Թէ գուցէ մեռանիցիմ առանց ապրելոյ, և կորնչիցիմ զյաւիտեանական կորուստն: Ապա կալեալ ի բուռն զոգի իմ, ի բաց ուրժեցի զերկիւղ Թագաւորացդ. ընկեցեալ յանձնէ կոխեցի զուրացութիւնն խիղճ, և լուսաւորեցայ. այսուհետև պատրաստ եմ հալածանաց, աղքատութիւն և ամ վշտի. զի որում և դիպիմ ուղիղ հաւատովքս, ուրախ եմ ի նմին և անահ:

Իսկ զոր խոստանաս դու, գիտեմ՝ զի կարես առնել, և Թագաւորն ևս անսայ. բայց նախ ք զնոմ պարտ է նմա հաձիլ, ապրեցեալ Թէ հրամայել՝ համարձակութիւն ունիլ ամէնց ըզբրիստոնէութիւն յձիս հայոց. և զվատ մարդիկ մի զի պատուհասեալ նոյ զմոխիր՝ ի պատիւ վերացուցանել. և զպատուհասականն մի զի ոչ պսակեալ նոյ զմոխիր՝ անարգս համարիլ. այլ միայն ի վաստակս իւրաքանչիւր հայիլ, և արժանի հատուցումն առնել. զսոհմիկն առ սոհմիկս ունիլ, և զվատատոհմն առ

անստուհմն։ Եթէ այդպէս նուճատիք զմեզ, ահա և մեք նուճա-
Ի՛ն. Գ. 48։ Հիմք ձեզ. մեր քնիկ տեարը եք, և մեք ծառայք ձեր։
Ի՛սպա թէ տակաւին ազտեղի մեղաց վաճառէք զիշխանութիւն
ծխոյ և զտանուտերութիւն, և զյետինսն առ լաւսն ունիք, և
զլաւսն յետս տանիք, մեզ չէ հնար նուճատիլ ընդ այդ ձերդ
իշխանութիւնդ։ Եւ թէպէտ գիտեմք զտկարութիւն մերոյս ու-
ժոյ, և զաւրեացդ զօրութիւն, մինչդ յայժմու ծխիս յորում
եղիք և յատիշտակեցիք ի մէնջ զթիչելութիւն մեր. բայց մեր
զմեռանիլ եդեալ է առաջի. և ի նոյն յօժար եմք, և առա-
ւել ևս ուրախ եմք. զի լաւ է մեզ փառաւոր մահուամբ մե-
ռանիլ ի քրիստոնէութենէ, քան ուրացութիւնք դնել ի ձէնջ զան-
ցաւոր փառս, և ժառանգել զկորուստն յաւիտենից։

Ի. Այնչափեւ այսպիսի պատգամաւորութիւնք գնային
և գային ի մէջ վահանայ և միհրանայ, յանկարծակի դես-
պան եհաս անդ յարքայէն պերոզէ. և կոչեր առիպաս ըզ-
միհրան ի դուռն. և նէր չու արարեալ նմա բազմութիւն ան-
կաւ յոտն, առեալ ըզ իւր և զկապեալն հրահատ կամարա-
կան, և զյաղթ սեպուհն սիւնէ, և զայլ կալանաւորս։
Եւ եղև իբրև լուաւ ներսէհ կամարական երէց եղբայր
հրահատայ, թէ միհրան առանի ըզ իւր զհրահատ, շուարե-
ցաւ ի միտս. քանզի և յօրէ յայնմանէ՝ յորում կալեալ եղև
նա, ոչ էր դադարեալ ի լալոյ, և ոչ հանգուցեալ էր ի վե-
րայ անկողնոյ, և ոչ ձաշակեալ զհաց առանց արտասուաց։
Ի՛սպա ոչ ևս կարացեալ նորա հանգուրժել ցաւոյ սրտի իւ-
րոյ՝ եւ զհետ բանակին պարսից քանի մի քաջ արամբք. եր-
թայր ի բացուստ, և խորհէր ի մտի, թէ գուցէ յուրմէն
ինչ թևի գնդին տեսեալ զինա, յարձակեսցի ի վէր. և վա-
նեալ զթշնամին՝ կարասցէ զերծուցանել զինա. կամ գոնեայ
ես ասէ դիպեալ մահու՝ հանգիստացայ յանմխիթար տրտմու-
թենէ։ Եւ իբրև եհաս բանակն պարսից ի բաւրևանդ գաւառ մերձ
ի գիւղն բագուման կամ բագաւան՝ (Յաբաւ բագնոց առա-
ջեալ), ուր էր մատուռն մի սքանչելի գրիգորի լուսաւորչին ի
լանջակողմանէ լերինն նպաստոյ, զմեռաւ ածեալ ներսեհի ըզ-
ինամն սքանչելի՝ զաղօրով սրտիւ ասպաւինեցաւ ի բարեխօսութիւն
նորին, և գոչելով առ նա ասէ. տէր գրիգոր, որ զսաստիկ մեզ
ամպարշտութենէ մերոց մերժեալ փարատեցեր յիմեն
հայոց, փարատեա և զիմ սաստիկ մեզ արտմութիւնս ի սրտէ.
և շնորհեա ինձ զանձկալի եղբայրն իմ տեսանել առողջ առ
իս. քանզի հնարաւոր է ինձ, և զքոյ ինդիր ախորժելով
կամի լսել և կատարել։

Եւ յաղօթել նմին այսպէս առ սքանչելի գրիգոր, հրահատ եղբայրն
նորին՝ աքանչելեօք արձակեալ ի կապանաց իւրոց՝ եւ հան-

482

դարտ ՚ի շրջափակ զգուշութէ՛ պահապանացն. և եկն ողջամբ առ եղբայրն իւր։ Ընդ որ հիացեալ ներսեհի՝ յուրախութէ՛ սրտի իւրոյ կակուն քարձեալ անկաւ զպարանոցաւ նր. և առեալ տարաւ վաղվաղակի ՚ի դուրն, և եցոյց հայրապետին յովհաննու՝ զոր ինչ արարն նմա ՚ուծ քարեխօսութէ՛ սրբոյն գրիգորի։

Է. Այլ յորժամ գիտաց միհրան զելանել հրահատակ աներկիւղ՚ի բանակէ, լցեալ սրտմտութէ՛ հրամայեաց ածել զառաջեաւ զսեպուհն սիւնեաց զերանելին յաղթ. և ասէ ցնա. հրահատ արժանի մահու էր. բայց մեք կամիմք թողութէ՛ առնել նմա. այլ նա չգտաւ արժանի այսմ հնարհի. ապա և դու ընկեր նորին ոչ կարես պատահիլ թողութե և փրկութէ՛ անձինդ, բայց եթէ պաշտեսցես զկրակ, և երկիրպագանեսցես արեգական։ Սոյն սկսաւ հրապուրել զնա և ուրացեալ իշխանն սիւնեաց գդիհոն, ոչ զի ապրեսցի նա, այլ զի ուրացութէ՛ մեռցի, և ժառանգեսցէ զանուն վատ։

Պինսի ետ յաղթ ցմիհրան և ցայլ իշխանս պարսից, և ասէ. եթէ ձեր էր յաւիտենական կեանք, և վաձառէիք ինձ զայն, զոր ինչ ունէի՝ տայի ձեզ, և գնէի. բայց անհնարին անմտութի՛ է գնել՚ի ձէնջ զյաւիտենական մահ, և տալ գին ըզկեանն յաւիտենից. այլ եթէ զստուի կեանս խոստանայք ինձ տալ, անուտի է՝ և անյայտ ևս. զի գուցէ վաղիւ քարձցի այն յինէն. քաւ լիցի ինձ յանձն առնուլ զայդպիսի աղետալի և կորստական վաճառ։ Եթէ ընդ այդ հաձեալ էր իմ, վաղ իսկ առեալ էի զդա հանդերձ պատուհմովք. այլ զայս ևեթ ընտրեցի՝ յորում եմն. և զայն միայն համարիմ պատուհական. և առաւել ուրախ եմ վախճանիլ քրիստոնէութէ՛ քան զկեանս հազար ամաց կեալ ուրացութէ՛, և անվախճան պատուհասին լինել ժառանգաւորք։

Ելոյծ միհրանայ զայսպիսի բանս ՚ի բերանոյ սքեայն՝ բարկացաւ յոյժ ՚ի վերն նր. և հրամայեաց հատանել սրով զգլուխս նորին՝ մերձ ՚ի նախասացեալ տեղն սքէ մնատրան մեծին գրիգորի։ Եւ այսպէս կատարեցաւ երանելին յաղթ, յամի տն. 482. յամենայնն հոռի, որ օր. ԺՀ. էր ամսոյն, այն է ՚ի սեպտեմբերի. 25։ Եւ եղաւ սքէ մարմին նր ՚ի մնատրան անդ սքեայն գրիգորի։ Եւ յետ կատարմանն յաղթայ՝ ապա չուեալ գնաց անտի բանակն պարսից։

Գ Լ Ո Ւ Խ · ԼԷ ։

Յաղագս խոչընդոտի վրայ ոմանց · և յարձակելոյ պարսից ՚ի վր֊ վա֊
հանայ · և վտանգելոյ յովհաննու մանդակունւոյ ։

Պարսից ։ ա. Գիտացեալ վահանայ սպարապետին հայոց, որ իբր 482
հարիւր սրամբք նստեալ էր ՚ի գիւղն մկնաւէնք,
թէ միհրան մեկնեցաւ ՚ի տահմանաց անտի, եկ
և եկն յայրարատ ՚ի վաղարշապատ քաղաք հանդերձ փոքրիկ
գնդաւն · և մտեալ յեկեղեցի էջմիածնայ՝ մատոյց գոհութի֊
ւառ ՚ած, և յանձն արար նմա զինքն և զիւրան · և ապա այց
արարեալ վկայարանաց սրբոց հռիփսիմեանց՝ խնդրեաց յայ
բարեխօսուքն նոցա այցելու լինել ազգին, և յուշանել ինքեան
ձանապարհ ուղիղ, և առաջնորդել ՚ի բարին ։ Եւ անդ՝ զոր
ինչ և ունէր առ իւր յաւարէ թշնամեաց, զպատուհականսն
մատոյց նուէրս ոյ · և զմնացեալսն բաշխեաց յաղքատս ։ Եւ
անտի եւեալ հանդերձ իւրովքն՝ եկն ՚ի գուխն քաղաք, և
գտեալ անդ զներսէհ և զհրահատ՝ ուրախ եղև · և հանգիստ
էառ անդէն ինքն և ընկերք իւր · քեզի ձմեռն էր ։

Յետ աւուրց ինչ անցանելոյ՝ հասին ոմանք անդր յան֊ 483
կարծակի ՚ի կողմանցն վրաց՝ սուտ աւետաւորք · կամ ըզ֊
զարու փարսպեցւոյ՝ * արք դիւազգեցիկք և խելաշուրջք ‖ · և
հարին հուչակ ՚ի քաղաքն առ աւնին, և ասեն · ողջ և կենդանի
են սահակ սպարապետ մարզպան, և մեսրովբ վարդապետ · զի գտեալ նոքա
զմեզ՝ փութացուցին և յղեցին առ ձեզ՝ տալ զաւետիս կենդա֊
նութեան իւրեանց ։ Եւ պատմէին վիրքն իբր ՚ի բերանոյ սահակայ
և վասակայ, թէ զնացէք ապրեցան · մեք ասեն ՚ի փախչիլ ձեր
՚ի կռուոյն՝ մնացաք ՚ի կռուատեղին կարեվէր խոցեալ · և ա֊
պա ՚ի ցրուիլ զօրացն պարսից՝ սողալով ՚ի վր֊ երկրի հասաք
երկոքին առ միմեանս · և ուժաթափեալ անկաք ՚ի մէջ թա֊
ւուտ գժնկաց, և կայաք անդ կիսամեռ ։

Յայնժամ ՚ի խնամոյն ՚ած եկեալ առ մեզ քահանայ ոմն ՚ի
բնակչաց անապատին, և տեսեալ զմեզ անբարբառ, եբարձ
անտի, և հանգոյց փոքր մի · և գնացեալ ՚ի վանս իւր՝ եբեր
մեզ կերակուր և ջուր ։ Եւ իբրև կերաք և զօրացաք, ե֊
հարց զմեզ՝ թէ ուստի էք դուք · և իբրև պատմեցաք
նմա, ծանուցեալ նորա զմեզ յանուճանէ՝ փառս ետ ՚ած · և
ապա բերեալ գրաստս՝ տարաւ զմեզ ՚ի վանս իւր, և պա֊
հեաց զմեզ անդ զաւուրս բազումս · մինչև առողջացաք զո֊
րութեն ՚ած ։

Այլ սակայն ոմանք յուրացելոց ծանուցեալ զմեզ՝ զհետ
483 պնդեալ են գտանել և սպանանել զմեզ. վասն և մեք յանա-
պատս և յանծանօթ վայրս շրջիմք հանդերձ քահանայիւս,
և երկնչիմք գալ այդր. զի գուցե գտեալ զմեզ ի ձեռին
ըմբռնեսցեն և կորուսցեն. և արդ՝ փութացարուք արձակել
այսի առ մեզ գունդ մի սպառազինելոց, և զօրագլուխ հա-
սատարիմ. զի զերծուացեմք զմեզ անվտանգ, և ողջամբ հա-
ասուսցեմք առ ձեզ։

482 Ի. Իբրև հռչակեցաւ այս զրոյց ստայօդ աւետեաց ի քա-
զաքին, շփոթուէ մեծ ծագեցաւ ի մէջ բազմաց. և ամբիծն
Լանդաւոնեալ ասէ—ինչիւ թաւցո՞ւք հասանել առ նա, և թեր-
ցուք աստ. զի եթէ լուիցեն պարսիկք՝ թէ նք դեռևս ողջ են,
լքանին սիրտք իւրեանց։ Որպէս և սգաղգեաց տիկնայք
նոցին, այր կանայք սահակայ և վաստակայ՝ լուեալ զայսպիսի
աւետիս, ել նոսին և այլ ևս կանայք, զսուգ իւրեանց յուրա-
խութիւն փոխելով՝ բազմ ազաչանօք և թախանձանօք աղաչէին
զվահան և զայլս՝ մի յապաղել, այլ՝ առ ձեռով գնալ և
առնել զնոս ի քաղաք անդր։

Ասէ վահանայ յայտնի գիտացեալ զստուէն բանից խռովարար
աւետաւորացն, սկսաւ յորդորել զամենին խաղաղանալ յընդ-
ունայն շփոթուէն անտի. այդ բանք ի թշնամեաց են ասէ,
483 զի հնարեսցին ցրուել զմեզ աստ և անդ. և տացեն պարսից
համարձակութիւն դիմելոց ի վերայ մեր, և կորուսանելոց զմեզ.
քանզի յայտնի գիտեմ ես, զի սուտ խօսին դոքա. և թէ
չէր իմ ակն առնել ոմանց, ոչ տայի աչխարհակորոյս արանցդ
ողջ գնալ յաշս հայոց։ Այլ առ հասարտի ցուցանելոյ՝ թէ
յիրաւի սուտ էին այն աւետիք, պատմեաց նմ զտեսիլ պատ-
կելոյ եղբօր իւրոյ նահատակութիւն, վկայ կոչելով և զայլս՝ որք
տեսին զայն, ել գրելոյ մեր ի վերոյ ի գլ. իե. վասն մի ևս ասէ
ի զուր խռովիլք խնդրել զնա. զի նա այժմ փառաւորեալ է
յարքայութենէ երկնից։

Ասէ վասն ասպետին Թէոփեոս և յայտնուի ինչ չունիմ յայ, բայց
գիտեմ ասէ, զի նա ևս ընկալեալ է զպսակն մարտիրոսուե.
մի աշխատիք ապա գնալ վասն նց. ապա թէ ոչ՝ ամօթով ունիք
դառնալ, որպէս ոք ոչ լուծանն եղիակի՝ և ելին ի խնդիր ե-
ղևայի։ Այլ զի մի երևեցայց ես ուրեք ի ձէնջ իբր ոչ հա-
ճեալ ել գիւտ անձանց նց, զայս ասեմ. ահա առաջի ձեր են
արք զօրուդ Հայոց սակաւ. որ ոք կամի երթալ՝ երթգելումբ.
բայց յիշեսջիք և գիտասջիք, թէ ոչ փոքր կորուածն իրք
վասն այդր հասանեն ձեռս։

Ոչինչ անսացեալ այսմ անխորհուրդ արանց, և թեթևա-
միտ կանանց, հաւանեցուցին զսեպուհն մնալիկոնեից զմու-

չեզ, և զոմանս ի զօրացն Հայոց. և արձակեցին զնա ի խընդիր սահակայ և վասակայ։ Ա՛ռեալ զնա խաբեբայ արանցն, և տարեալ ի սահմանս վրաց՝ շրջեցուցանէին աստ և անդ. և բազմադիմի պատրուակաւն բանիւք պատճառս կարկատեալ, երբեմն ասէին՝ Թէ դուցէ յայլ տեղիս գնացեալ իցեն նք. և երբեմն, Թէ փախուցեալ ի Թշնամեաց՝ ի Թագրատոմ են. և վն այսր տեղւոջէ՝ ի տեղի փոխելով տարուբերէին զնոսա ի խորաձորս քարանձաւաց, և ի ծառախիտ կատարս քարձր լերանց. և այսպէս ի բազում՝ աւուրս (ասէ փաւստոս) խեղճացուցանէին զնոսա մինչև ի գալուն։

Ը. Ա՛ւ երբև բացաւ դուռն գարնան, յանկարծակի եկեալ հասանէր սուխաս յԱն հայոց զարմիհր հազարաւուխտ մեծ սպարապետ պարսից աստիկ և անթիւ բազմութիւք զօրաց՝ հանդերձ ուրացեալ նախարարօք և արամբք նոցին։ Որ լուեալ ամենայն յուխտանենդ հայոց՝ զեսպանս արձակեցին ընդ առաջ նմա, և ասեն. աւասիկ վահան ի դուինն է. և կեաք զօրաց նորա գնացեալ են ի վիրս. և ինքն յանկոյս է. փութա՛ արդ անաշխատ ըմբռնել զդա, և ի գլուխ տանիլ զգործդ. և մեք հանդիպուք ի ցասմանէ դորա։ Ո՛յս իմացեալ հազարաւուխտայ՝ շտապեցաւ եանց ընդ երասխ գետ. և եկեալ բանակեցաւ յարտաշատ քաղաք. և ի վաղիւ անդր հասեալ տուեալ զօրացն՝ եհաս մօտ ի դուինն. և կարգեաց վաղվաղակի ձակատ պատերազմի ի միջոցի անտի անտառաց, ուր ասէր լսարսվակերտ, մինչև ի լեռնակողմն ջրվէժ կոչեցեալ։

Տեսեալ վահանայ, և այլոց նախարարաց՝ ոչք ընդ նմա, զայնչափ բազմութիւն Թշնամեաց ծովացեալ ընդարձակուն դաշտին, և հայեցեալ լիւրեանց այնչափ սակաւուն, ոչ համարձակեցան ձակատ առ ձակատ պատերազմիլ ընդ նոսա։ Ապրհուրդ եւս վահան խրատն, և ասէ. ոչքա չունինք ինչ ընդ քաղաքիս, այլ՝ զմեզ ևեթ խնդրեն. և եթէ լիցի մեզ զերծուցանել զանձինս, նք Թողեալ զքաղաքն՝ պնդինն զհետ մեր. և մեզ դիւրին է անկանիլ յամուր տեղիս, և զերծանիլ։

Ընդ այս խորհուրդ հաւանեալ ամենեցուն՝ կարգ եդին ի մէջ իւրեանց. և ամրացուցեալ նախ զքաղաքն, ապա մի մի և երիս երիս հետզհետէ ելեալ ի քաղաքէ քաջասրտաբար՝ յարձակեցան ի մի կողմն ստուարուէ գնդին պարսից. և ըզբազմութիւն ընտիր ընտիր վառելոց դիահարաւ յերկիր կործանեալ, և զթանձրութիւնն հետևակացն նց պատառեալ՝ գնացին անտի ի բաց. ընդ որ զահի հարեալ պարսից՝ սասանեցան,

ապշեցան և յիմարեցան :

Ե. Ա.յլ երկու հզօր նախարարք հայոց , որոց միոյն անուն էր որդի՝ ի տոհմէն դիմաքսէնից , և երկրորդին քաջաջ՝ ի տոհմէն սահառունեաց , կամեցող զերծուցանել և զհայրապետն յոխման , զոր ըէ իւրեանս ունէին , զի զնա ևս ինդրէին թշնամիք , եդին ի մտի մինչև ի մահ պատերազմիլ . որոյ վասն ձանապարհ հատեալ առաջի նր՝ ինքեանք խառնեցան ի մէջ բանակի թշնամեացն . և շիոթեալ դղրդեցին զամենեսեան . և կոտորեցին ի նոցանէ զբազումն . ուր և թրախուսեալ առ միմեանս՝ գոչէին . հարցուք զթշնամին հաւատոյ , և մեռցուք առ ի պարծանս եկեղեցւոյ . և անդէն տապաստ արկեալ զբազումն՝ երկոքին ևս անկան նահատակութիւն : Իսկ հայրապետին յոխմանու չկարացեալ ձաղոպրել ընդ երկայնութիւն բանակին՝ խոցեցաւ ի պարանոյ , և անկաւ յերիվարէն ի մէջ դիականց խթրև զմեռեալ . և մնաց անդ : Ա.յլ յետոյ ի ցրուիլ զօրացն՝ այցելուք նոցա եղեալ անտի՝ դարձան ի քաղաքն ողջութիւն . ըէ որ զարմացան յոյժ ամենեքին :

Օ այսպիսի անակնկալ հարուած ընկալեալ հայաբաւութեամբ յանհնարինս դառնացաւ . և ապա հոդան տուեալ իւրում բանակի առաջնորդութիւն ուրացելոյն գրիգորնայ սիւնեցւոյ և այլոց՝ պնդեցաւ զհետ վահանայ և ընկերաց նորա . և ջանայր ի նեղ արկանել զնոսա , և ըմբռնել զամենեսին , և դառն մահուամբ կորուսանել : Իսկ վահան և ընկերք իւր դէմ եդեալ դէպուղիղ գնացին ի սահմանս խաղտեաց , և նստան յամուր վայրս . և ոմանք յղրուեալ գնացին յայլև այլ տեղիս :

Ի վճարիլ այսր գործոյ պատերազմի ի նմին աւուր եկն եհաս և սեպուհն մամիկոնէից մուշեղ և ընկերք նր ի կողմանցն վրաց , զրաջան և ընդունայնաշատակ գտեալ ի ստապատիր յուսոյ . որոյ և տեսեալ զեղեալսն՝ ինքեանք ևս հեռացեալ մեկնեցան անտի , և գնացին այլուր :

Գ Լ Ո Ւ Խ · ԽԵ ։

Յաղագս պնդելոց հայրապետութեան և շարունց մարդպանի պիտոյ վախճանի ։

Վարդենի ։ ա · ՅԼ հաղարապետն սպարապետ պարսից ոչ կարաց 483
գեալ հասանել վահանայ՝ դիմեաց գայրագինս
զօրօք իւրովք՝ ի վերայ գիւղից և քաղաքաց · և
քանդեալ աւերեաց զբազում տեղիս · և կոտորեաց՝ ի գիւղա-
կանաց ոչ սակաւ ։ Իսկ նոքա՝ ըմբռնել զվահան , և
զտապ բարկութեանն սրտի իւրոյ հնձուցանել , և զնախատինսն
յանձնել՝ ի բաց քերել · զովք և գտաներ՝ ի հայոց՝ հարցա-
ներ վնաս · և չեւեա առեալ զպտղեհնին՝ առ սրտմտութենն ան-
դէն սպանաներ ։ Իսկ ասպա յաստիարք մեծաւ՝ ի չուս անկեալ՝
եհաս յԱրն տայոց՝ ի գաւառն ոթաղէ · և բանակեցաւ մօտ՝ ի
գեօղն՝ որք կոչեին գիւղիկ և վարդաշէն ։
Իսկ հասեալ յոմանց՝ ի վաղուձ անդր , թէ վահան՝ ի մօտաւոր
տեղւոջ անդ է յամուրն կոչեցեալ վարայրվարոյ՝ ի գաւառն
շաղագոմայ , որ էր՝ ի բաժնին յունաց ։ Իսկ համարելով՝ թէ
նա յանհոգս իցէ անդ , զի էր յիշխանութենն յունաց , պնդեցաւ
զգայգն ողջոյն տեղեակ առաջնորդօք · եհաս՝ ի տեղին , և
ոչ եգիտ զնա անդ · որոյ վէմ զայրացեալ՝ անկաւ՝ ի վէր քաղ-
մուեբ զնա ։
Ընդ գտան՝ ի նմին աւուր և կանայք երկուց կամարակա-
նացն ներսեհի և հրահատայ · զորս իբրև զանակնութեանէ որսս
ըմբռնեալ՝ էած՝ ի բանակն · և պատուհրեաց զգուշութեբ և
անարատութբ պահել զնա ըստ օրինի քրիստոնէից , և ոչինչ իւիք
նեղել զնա ։ Իսկ այլ սիրտ նմա դառնացեալ էր վասն ոչ կարելոյ
որեաւ գայն՝ զոր խնդրեր , այր զվահան , կամ գտնել զգլխաւոր
նիզակակից նմա զկամարարականն · այլ սակայն ակնկալութեբ
մեծ ունէր , թէ՝ ի ձեռն կանանց նմ կարասցէ ըմբռնել զնա ,
ևս և զվահան ։ Իսկ եթէ ասէ ոչ կարացից ունել զնա , բա-
ւական է ինձ ըմբռնել զկամարարականն , և բաժանել զնա՝ ի
նմանէ · քզի նք են նր սիրտ և ոգի · և եթէ այս յաջողեսցի ,
յայնմ հետէ նուճաձեալ հնազանդի մեզ վահան · և կամ
փախուցեալ յօտար երկիր՝ կորնչի · և մեք առատիմք՝ ի ձե-
ռաց նորա ։
Եւ այսորիկ առեալ հարարաւմասյ զգօրս իւր՝ ել
՝ի գաւառն բասենոյ · և բանակեցաւ մօտ՝ ի գիւղն գա-
դաշտին աղբերականց , զոր արծաթաղբերն կոչէին ։ Իսկ

483

յ'ի կալ նըր անդէն օր մի եհաս առ նա դեսպան յ'ի դրանէ հան-
դերձ հրովարտակաւ. յորում ծանուցանէր նմա պերոզ ար-
քայ, թէ ինքն ունի խաղալ միւսանգամ յ'ի հոն յ'ի վերայ ար-
քային հեփթաղաց. և պատուիրէր նմա, զի թողեալ զշա-
պուհ պարսիկ յ'ի միհրան տոհմէ հանդերձ ընտիր զօրօք յ'ի վէր
հայոց մարզպան դիմեսցէ յՀոն վրացս. և զթիֆրն վախճանիկ
ըմբռնեալ սպանցէ, և կամ յՀոն անտի զնա հալածեսցէ.

զի ձեռնտու էր նա հոնաց։

Լուեալ նըր զայս հրամանն եդ մարզպան հայոց զշապուհ. և
թողեալ զնա յ'ի կողմանս բասենոյ երեք հազար սրամբք քաջ
վառելովք, հանդերձ գդիհոնաւ իշխանաւն սիւնեաց և բազ-
մութեամբ զօրաց նորին, ինքն ջուջ արար շտապաւ, և եհաս յ'ի
վիրս։ Լնդ ժողովեցան առ նա ուխտանենգ իշխանք վրաց,
և միաբանեցան ընդ նմա. և նա խոստանայր նոյ բազում բարիս
առատս, ասէին զթագաւորութի, այլում գերազոյն գահ, և
կիսոց և մեծամեծ պարգևս, միայն թէ մարթասցուք առ-
նուլ զվախճանիկ։ Լբրև եառես վախճանիկ՝ թէ իշխանք իւր
միաբանեցան ընդ հազարաւուխտայ, խոյս եառ յՀոնէն վրաց, և
չոքաւ յ'իկողմանս եգեր Ծիրն, և նստաւ անդ։

Լսրէ ասողինն առեփանոս տարոնեցի. Է. 2. և վարդան, թէ
ասյն այս հազարաւուխտ յ'գալ իւր յ'հայս նահատակեաց զե-
րանելին ետն թագ, որ էր յ'գաւառէն արշարունեաց յ'կալոց
գեղջէ. և եգան ասէ նչխարք նր յ'շիրակ գաւառի՝ յ'գիւղն,
որ բեռնոս կոչիւր, յեկեղեցւոջ՝ որ անուանեցաւ ետն թագ։
Լյլ թէ ոչրպես կատարեցաւ այս նահատակութի նորա,

ոչինչ գրեն։

Է. Լսկ շապուհ մարզպան, զոր եթող հազարաւուխտ
յՀոնէն հայոց, առեալ զկնայս կամսարականացն՝ եդ զնոսա
յամուրն բասենոյ, զոր բողբերդն կոչէին. և յանձն արար
զնա վշնասպայ բերդակալին, պատուէր տուեալ նմա պահել
զնա յ'ի սրբօւէ. քանզի գիտակ էր շապուհ, թէ քանի զգաս-
տութք կայրն կամսայք հայոց յօրէնս ամուսնութե։ Լսա նոքին
իսկ կամսայք կամսարականացն մատուցեալ էին աղաչանս առ
շապուհ և առ նոյն ինքն վշնասպ՝ սը պահել զինքեանս. և
ասացեալ ևս էին նմ, թէ՝ եթէ կամիք հնազանդեցուցանել
ձեզ զարս մեր, տուք նմ լսել զմնջ՝ թէ մեք կամք անա-
րատ. ապա թէ այլ ինչ լսիցեն վն մեր, դնեն զանձինս յ'ի
մահ, և առնեն՝ զոր ոչն կամիք։

Յետ այսորիկ առաքեաց շապուհ առ արս նմ առ երկոսին
կամսարականն՝ ն առ ներսէհ և առ հրահատ, և ասէ.
Եկայք հնազանդեցարուք արքային պարսից, և առիք զկա-
նայս ձեր. և եթէ ինձ ինչ գործեալ իցէ ձեր, ես եղէց միջ-

Ա.Կոր. Ա. 483

նորդ առ արքայ. և նա թողու ձեզ. և տայ ձեզ՝ զոր ինչ արժան է. և եթէ վճռիատունեդ է ձեր այդ ապստամբուն, կալարուք զդա աներկիւղ, և մի ինչ քնաւ զանգիտիցէք. ես ահա վասն սիրելոյ իմ զձեզ խթան տամ ձեզ. զի բարւոյ լինիցի ձեզ։ Այլ եթէ կամիք գործ մեծ և սպառ արժանի ցուցանել արքայից արքայի, հնարեսջիք սպասնանել զվահան, և գտանիցիք մեծամեծ պատուս յարեւտից ձենէն. յորս վայելեսջիք խաղաղութիւն դուք և որդիք ձեր մինչև յաւիտեան։

Ե. Այլ ներսէհ և հրահատ ոչ կամեցան գառնացուցանել զսիրտ շահգոյ՝ ի վերայ կանանց իւրեանց՝ այլևայլ պինդս առնելին նմա՝ ի բաղմ աւուրս. և յետ ամի պատգամ յղեցին առ նա, և ասեն. մեր գործ և աշխատուն ոչ է վճռ երկրաւոր վայելչութեան, և ոչ վճռ կնոջ և որդւոց. այլ միայն վճռ հաւատոյ. առ որով՝ զամ ինչ կենցաղոյս փոքր համարիմք և խոտան. և եթէ ձշմարտիւ այս ոչ էր, դիւրաւ հաւատայաք ձեզ. և դիւրաւ խաբեայք զձեզ. ոչ և խաբեն էն և խաբեն իսկ զձեզ այլք, որք բաժանեալ՝ի սուրբ ուխտէն՝ առ երեսս ցուցանեն ձեզ պատուել զմխիթար, և ստուգ պատուհն՝ի ձէնջ. և մեք զայդպիսի գարշուն՝ի վաղուց մերժեցաք՝ի միջ։

Ա.Կոր. Ա. Ա.Կոր. Ա. Ա.Կոր. Ա.

Ա.Կոր. Ա.

Ա.Կոր. Ա.

էանց վահան ։ Եւ մերձեալ ի գիւղ մի կարնոյ՝ արծաթի ա-
նուն՝ իջին առ հեղեղատաւ գեղջն՝ առ վայր մի հանգչիլ. զի
վաստակեալ էին ։

Այլոյն անդ բազում մշակք , որք գործէին ի հունձս . բայց
ոչ ծանեան նք զոսոսս ։ Եւ եղև մինչդեռ սոքա նստեալ էին
անդէն , հատուած մի մեծ ի զօրաւորաց գնդին պարսից իբր
նախագրաւ հետամուտք վահանայ անցեալ առ նոքօք՝ յան-
գետս գնային , և խօսէին զնոցին . և ոչ իմացան՝ թէ անդ իցէ
ներքէ ։ Եւ զի դաւնացեալ էին յոյժ վը ոչ կարելոյ հասա-
նել զհետ վահանայ , ձեռն արկին վնասել մշակաց տեղւոյն ,
ասելով . ընդէր թողուք անվնաս շրջիլ յերկրի ատա ձերում
ապստամբելոց յարքայիս ալքայէ ։ Եւ ի պինել միոյ ի կար-
նեցի մշակաց խստութիւն՝ զօրականն մի ի պարսից անտի սուր
հանեալ կամէր սպանանել զայրն . և նա խուսափեալ շուրջ
յածելով զբարդիւճ որայից՝ փութայր ապրեցուցանել զանձն ։
Զայն տեսեալ խուրասայ արշամունեաց՝ ասէ . դա թէ մեռա-
նէ ի պարսկէ այտի , զարիւն դորա ասծ ի մէնջ պահանջէ . և
դայս ասացեալ՝ յարձակեցաւ ի վերայ պարսկին , և նիզակաւն
հարեալ սպան զնա , և զերծոյց զմշակն ։ Իբրև զայն տեսին
այլ զօրականք պարսից՝ դիմեցին անդր սուսերօք ։ Զայն-
ժամ յարուցեալ և ներսեհի և մուշեղայ՝ յարձակեցան ի վր
նոյ.հարին և սպանին ի նոցանէ զեօթանասունս և երկու այր .
և զայլս փախստական արարեալ՝ ամօթով իւր կրունկն դար-
ձուցին զնոսա . և ինքեանք մեկնեալ անտի՝ եկին ի գաւառն
արշամունեաց մօտ ի կողմանս հաշտենից . զի դուցէ գըտ-
նէն զվահան . վասն զի անդ եղեալ էր նր ի մտի գնալ . և ի
հասանել նոցա անդր՝ եհաս և վահան . և գտեալ զմիմեանս
ուրախ եղեն . և եկեալ հանդարտեցին ի գիւղ մի արշամու-
նեաց՝ կոչեցեալ երէզ , առ սահմանօք դերջանայ ։

ԿԱՊՈՒՏԻԿԱՆ ։

Յաղագս վանելոյ զապստոյ ի վահանայ . և մահուան պերոզայ
ի հեփթաղս ։

483 ԱՊՈՒՀ մարզպան տեսեալ , թէ չկարաց հասա- Վարդենի ։
նել վահանայ , յանհնարինս կատաղեալ ցնո-
րեր . և նզովեր զբաղդ իւր , և ոչ կարէր
հանդիստ ի քուն մտանել ։ Յայնժամ իշխանն սիւնեաց ու-
րացեալն գԱՀՈՆ այր հսկայ՝ քաջալերս տուեալ շապհոյ՝ փու-
թացոյց զնա վերստին պնդիլ զհետ վահանայ . և չտալ նմա

դադար . գուցէ այսպէս կարասցուք ասէ արկանել զնա ի Ա.Մկ ii
ծուղակս . ապա թէ ոչ՝ նա կրկին զօրացեալ խորտակէ զնա 483
զօրուն մեր . ոչ և դուք ինքնին զփորձ քաջութեան նր առեր ,
մինչ ի դուխին էր . զի անդ եղոյց նա ահ մարեաց զզօրուն իւր .
և այժմ տեսանես՝ զի արք նորա օր ըստ օրէ վատնեն զգունդս
մեր ։ Այլ եթէ այժմ պարապ գտցէ , և այլուստ ևս օգնա-
կանս յինքն գումարեսցէ , փիտաջխիր՝ զի դարձուցանէ զմեզ
սակաւաւորս և ամօթալիցս , միայն թէ թողցէ զաք ի մէնջ
կենդանի ։

Ի բանից աստի գիւհոնայ առաւել զրդռեալ շահկոյ՝ ոչ տայր
դուլ անձին իւրոյ , և ոչ զօրացն՝ որք էին ընդ նմա , այլ փու-
թով և տապնապաւ հետամուտ լինէր վահանայ . և լուեալ
թէ և նա ի կողմանս արշամունեաց , փութանակի հասեալ
անդր՝ մակաղեցոյց զզօրսն յանյայտ տեղիս գետառուճի միոյ
իբր ի թագստի և ի դարանի ։

Ըստեսս առաքեալ վահանայ՝ գիտաց զտեղի թագստեանն նոյ.
և ինքն առեալ ընդ իւր զարս գեղջն երիզայ՝ եկն լռութիւն ի
գիշերի մօտ առ նոսա . և ետ երիզայեաց կանգնիլ անդ յանդի-
ման նոցա՝ վահան ի ձեռին՝ ընդ օրինի կարգի զօրացն , կամելով
այսու կարծիս տալ պարսից , թէ անդ է զօրավարն հայոց վա-
հան հանդերձ գնդաւ իւրով ։ Ո՛վ այս այսպէս կարգեալ՝ եղ
ինքն և իւրքն ընդ զանխուլ ձանապարհ . և անտի յանկարծակի
միաբան յարձակեալ ասցին ի վրայ պարսից ընդ նմանեաւ տեղա-
տարափ շառաչման կարկտի , ահաբեկ արարին զնոսա , և
խռովեցուցին զամենին . մինչև շփոթիլ նոցա յոյժ , և խառնիլ ընդ
միմեանս , աղաղակել և զմիմեանս կոտորել . և լինէր անդ
աղմուկ անչնարին ։

Այնմ վայրկի սեպուհ ոմն գաբեղեան՝ գաբաղ անուն՝ խրա-
խոյս բարձեալ աղաղակեաց , և ասէ . այսօր է ինձ դնել
զանձն իմ՝ ի վրայ սքանչելոյ , և պահակիլ ի քէն . և դիմեալ
՝ի միջ զօրու Թշնամեացն՝ բազում կոտորածս առնէր . և
ինքն խոցեալ՝ անկանէր յերիվարէն . այլ յետոյ եղեալ՝ ի տեղ-
ւոջէ անտի՝ գնաց ՝ի գիւղ մի . և անդ հաղորդեալ սքանչելոյ
հրդոյն՝ զկնի առեալ ինչ աւուրց վախճանեցաւ ։ Այնմ ա-
ւուր անկան ՝ի զօրացն պարսից ոգիք իբր վեց հարիւր . և
մնացեալքն՝ որք էին աւելի քան վերիս հազարս , փախեան
անտի ։

Տեսեալ վահանայ զփախուստ նոցա՝ ոչ սկզբնաց զկնի .
զի գիշեր էր . այլ՝ գնացեալ յամուրն ողին՝ հանգեաւ անդ
գնաց և դադարեցաւ ՝ի գեօղն կոչեցեալ չտեայ ։ Առ շաղուհ
վերատին կարգեալ և բազմացուցեալ զզօրս իւր՝ դարձաւ անդ-

483 483

լէն՝ մխիթեալ և զայրագնեալ սրտիւ, և յանդիմնական պատ-
հու եկեալ մերձեցաւ ՚ի գլուխն յորում էր վահան, եդեալ
՚ի մտի կամ կորնչիլ և կամ կորուսանել։

Օ այն իբրև ետես վահան, փութանակի հրամայեաց տունեալ
կարգեաց և կազմեաց զիմոքրիկ գունդ իւր, և ասէ մեծա-
ձայն. Ուրարուք ինձ եղբարք իմ. թէպէտ և քրիստոնէութիւն
կեալ մեծ իմն է, բայց մեռանիլ վա՛ քրիստոնէութենէ առա-
ւել ևս մեծ է, և վինձակ մարտիրոսութենէ։ Ուրախ ապաքէն
տեսիք, քանի՞ցս փառաւորեաց զմեզ ամէնայն յաղթութիւն ՚ի քրիս-
տոնէութենս մերում. և այժմ եթէ հասանիցէ մեզ մեռանիլ
՚ի վերայ քրիստոնէութեան, առաւել ևս փառաւորեցէ զմեզ.
մի՛ ոք ՚ի մէնջ զանգիտեալ զարհուրեսցի թերեւս առաւօտ՝
զի մեր է՝ որ յաղողէ մեզ։ Եկեք եմք թուով սակաւաւոր՝
ոգիք իբր հարիւր. իսկ նոքա իբր չորս հարիւր ընդ դէմ ե-
կան. բայց մեք ունիմք զամէն հաշտ ընդ մեզ. այլ վայ է նոցա, զի
մերժեալ են նոքա յայմ։

Օ այս ասացեալ՝ բաժանեաց զգունդ իւր ընդ պատշաճի. և
եդ զանձն առաջի՝ յարձակիլ ՚ի վերայ։ Իսկ անդէն ահա հասա-
նէին թշնամիքն անհնարին կատաղութեամբ՝ միակարգ՝ միաշարժ՝
իբրև զթխպագին ամպ կարկտաբեր դիմեալք ՚ի հանդիպայ։
Օ այն տեսեալ հայոց՝ որք ընդ վահանայ էին, դարձուցին ըզ-
թիկունս իւրեանց, և փախեան. և մնաց միայն ինքն վա-
հան, և երեքին կամաւրականքն՝ ներսէհ, հրահատ և վա-
հան. մուշեղ մամիկոնեան, և այլ ևս քանի մի յաղատ ա-
րանց. ընդ ոմանս ոգիք իբր երեսուն։

Իսկ գունդ թշնամեացն առաւել ևս փութացեալ մերձենային
առ նմա. և շապհոյ տեսեալ զայնչափ սակաւութիւն գնդին վա-
հանայ՝ զարմացաւ, և զկայ էառ. և յղեալ առ իշխանն սիւ-
նեաց դդիհոն՝ կոչեաց զնա, և ասէ. ձեռն տուր յիս կողմն,
զի նոր իմն տեսանեմ այսօր. մեք կամ անմոռութիւն ցանկացեալ
են անձնասէրք լինել, և այսպէս աներկիւղ եկեալ են առաջի
մեր. և կամ զօրութիւն իմն աներեւոյթ համարձակեցուցանէ
զսոսա. բայց թէ չքաթիմ, յայլ միտս շրջեալ է դոցա, և
խելագարեալ գան ՚ի մահ. զօրս արդ իսկ մի առ մի ձերբա-
կալ առնեմք, և կապեմք ՚ի շղթայս։

Յայնմ վայրի՝ ընդ գրեթէն զազարու փարպեցւոյ՝ մի ոմն յընկե-
րացն վահանայ տեսեալ զմերձիլ թշնամեացն՝ ասէ ցվահան.
*յուշ ածր յուշ. հնար ինչ է ՚ի ժամուս սեղի տալ, և անձին
,, զգուշանալ ‖։ Իսկ վահան ծնագրեալ զինքն խաչիւ, ա-
սէ բարձրաձայն. * ցիս արդ յուշ մի առնէք ‖. զի ինձ յուսալ
՚ի մարդ, և կամ մարդով պարծիլ՝ չէ արժան, բայց միայն ՚ի
խաչն ածն մերոյ յիսի քրիստ։ Ուր զայս ասացեալ՝ արագաւ և խոյա-

ցաւ հանդիպ եղեսցայ իւրոց ի մէջ թշնամեաց իւրեւ զարծ-
ուխ յերասն թաչնոց. ըստ նմ խոյացան և նիշակակիցք նր.
և հերձեալ զբովանդակ դունդն պարսից՝ հարին և կոտորե-
ցին զբազումսն հրէից և պատերազմող. և անցեալ ըստ միւս
կողմն գնդին՝ հանդարտաքայլ չեմելով գնային առ կողմամբ
քանաքին։

Յայս և ի սոյն յարձակման՝ արք չորք ի գնդէն վահանայ,
քանթ առաւելեան, ներս յովսեպեան, առդէն սեպուհ վա-
նանդացի, և ղերպարդոս աղբաս յոյն, ի մէջ գնդի ուրա-
ցելոյն չհամատակեալ, և ի նա ինքն ի ձորն սիւնեաց ի գիւ-
ղն հասեալ՝ հարին զնա նիզակաւ ըստ անթով մինչ ի թոքն
ընդ անգծելի զբանն նորա. և ընկեցին ի վայր կիսամեռ,
ուր և յետ սակաւու չարաչար փչեաց ղոգին. և ինքեանք քա-
ղաքեալ ձեռաւք գործեալ արեան՝ անկան անդ և նահա-
տակեցան։

Լուռ ազգականք և ծառայք գդիհոնի վաղվաղակի բացեալ
գխոր նր՝ զաղին թաւրեցին և ծածկեցին վր զաղբահոտու-
թեն. և պատեալ զմարմին նր եղեգամբք (զի այլ ինչ ոչ
կարէին գտանել անդ), առեալ տարան զնա յձոն սիւնեաց.
և զօրք նր՝ ըստ սահմանի փարպեցւոյն, * քամակակոտոր խոր-
տակմամբ ցրուեալք և քայքայեալք ընդ այլևայլ ձանա-
պարհս գնացին յերուսաղէմ ||։

Ձ. Այլ հապուհ մարզպան յանհնարինս զամթեի հա-
րեալ յերեսաց վահանայ՝ կոր ի գլուխս մեկնեցաւ ի տեղւոջէ
անտի. և վահան կամեալ ցուցանել, թէ առ ոչինչ համարի
զնա և զբազմութիւն զօրացն նր, մատ առ նուաճ ակն յանդի-
ման գնայր քանևվեց արամբք՝ յանհոգս իբր թևաւիից գնդի
նր։ Եւ ոմն գրե փարպեցին, այնպէս ահաբեկեալ էին ի նմ
և յաքանց նր * գունդք ամ զօրացն շուրջ, զի և հայել ի
նա լոկ ոչ իշխէին . . . քանզի կարծէին ասէ, թէ ի հայեց-
ուածոյ լոկ առն մարդկանէն, և յարանցն՝ որ ըստ նմանն
էին, չզերծանիցին առանց վտանգի ||։ Այսէին ընդ մի-
մեանս, և ասէին. եթէ դոքա երեսուն արամբք զայնպիսի զօր
սիրտս խորտակեցին, և զայնպիսի այր՝ ոյլ էր գդիհոն, տա-
պաստ յերկիր կործանեցին, և վեր ի վայր տապալեալ զայս-
չափ զօրացն բազմութիւն՝ զայնպիսի մեծամեծ գործե-
ցին, զինչ ասպա այժմ ոչ գործեացեն. և մեք՝ որք տակա-
ւացաքս, և սիւնեաց գունդն ի բաց հեռացաւ, ծովպիսի
վտահութեամբ կարասցուք այլ ևս զդէմ ունել այդպի-
սի քաջաց։

Եւ նա ինքն հապուհ տրտմագինս և զայրագինս խօսելով ա-
ռեր. ես արդ զմտաւ ածեալ զարհուրիմ և դողամ, գուցէ

այլոյ այդ ըստ բազմահնար իւրումն խորհրդոյ՝ առաքեալ ի մերձակայ սահմանակից հայս գաւառացն անձամբ և ծուխաց և հաշտենից՝ ծանուցեալ զմեր բեկումն . և քաջալերեալ զնա՝ առնուցու ի նոցէ իւր օգնականս . և մեք չկարեմք և ոչ զապրուման անձանց գտանել ։ Ա.յլ արդ՝ եկայք փութասցուք երթալ յապահով տեղիս , և ձեզով զգացուցուք արքային . և եթէ նա վճարեալ լինի յաջողութիւն զդործ պատերազմին ընդեմ հեփթաղաց յածոյն օգնականութէ , արասցե ոմն և գիտէ . և կամ զայլ ոք ընդեմ առնդ կարդեսցէ . զի ես ցուցանիլեմ զդործն՝ զոր արար դա , ոչ զօրեմ բնաւ և ոչ իսկ խորհել պատերազմ տալ . զի ոչ երբեք լուեալ ես յարեաց , և ոչ իսկ յայլոց , եթէ երեսուն արամբք ոք ի վր երից և ջրից հազարաց այրընտիր արանց այսպիսի օրինակաւ և այսչափ վտահութէ յարձակել՝ հարել լեզէ , և ելել անվնաս ։ Այսպիսի երկիւղ պաշարեալ չապկոյ և զօրաց նորա՝ չուեալ գնացին ի գաւառն բասենոյ . և եկին ի գիւղն՝ որ կոչիւր ալվար . և կային անդ տարակուսեալ և շուարեալ յերկիւղէ գալոցեան վտանգի ։

Ունեալ և վահան յօն արարատոյ՝ եկին ի վաղարշապատ քաղաք . և մտեալ ի կաթուղիկէ եկեղեցին էջմիածնոյ՝ գոհացան զնա . և զի այն եկեղեցի հնոյեալ էր , վաղվաղակի ձեռն ի գործ արկեալ նորոգեցաց ։ Ա.ւ անտի գնացի ի դբեհին . և նստաւ անդ հանդերձ աննենդ ուխտապահ նախատրօքն , ակնկալել այցելուէ փրկչին աճման ։

Ի. Ասկ պերոզ արքայ՝ որ ի նմին ժամուն գնացեալ էր ի վր արքային հեփթաղաց , ի պատերազմի մանանեալ էր յերեսաց նր . զի ըստ գրելոյ փարպեցւոյն՝ առանց խորհրդոյ էլ ի պատերազմ ի վր նր , և ընդեմ երդմանն իւրոյ ։ Որժամ ասէ կամեցաւ նա խաղալ ի մարտ , զօրք նր առհասարակ սասանեալ կային , և կասկածէին կոր ի գլուխս գառնալ , և կամ կորնչիլ . վն ոյժ և բազումք ի նմանէ ասէին . մեք եթէ մահապարտք եմք , և արքայ կամի զմեզ սպանանել , ինքն իսկ աստէն տուր ի վր եղեալ սպանցէ , ք՝ թէ հեփթաղքն տացէ կորուսանել , և զձեզ արեաց վատանուն առնել ։ Ո՞ այն բան և ամ աւազգ դրանն խօսէին . զոր և սպարապետն արեաց վահրամ յանկնջս պերոզի հասուցեալ՝ յորդորէր զնա ի բաց կալ ի կրից անտի . զօրք արեացդ ասէ ամ զահի հարեալ են յերեսաց հեփթաղաց . ոչ այս ահա բաւական է յաղթելոյ նմ մեզ ։ Այլ պերոզ բնաւ ոչ լուաւ նմ , և ոչ ևս յիշեաց զառաջինն անցեան , զորս անցոյց ընդ նա հեփթաղ ։ Ա.յլ՝ առեալ զամ զօրս իւր՝ եկն նախ ի վրկանս , և անտի դիմեալ խաղաց ի մարտ պատերազմի ։

Փարպեցի ։
Ագաթան. ասաջ. ա. 26
Ալեքսանդրա. պատ. ա. 4 ։
Ա.ղանի. ։
Մեհենք ։ և այլք ։

Ա. Ի իբրև մօտ եհաս ի սահմանն նորա , առաքեաց հեփթաղ
հրեշտակս առ պերոզ , և ասէ . քո ընդ իս ուխտ է երդմամբ
և գրով և կնքով , թէ չկռուիմ ընդ քեզ . և կարդեցաք ևս
սահմանս , զի մի իշխեսցուք թշնամութիւն անցանել առ մի-
մեանս . արդ՝ յիշեա զուխտն , և մի մեռանիր զթշնութիւն
իմ , որով ողորմեցայ քեզ զառաջինն ի պաշարման քումմ , և
արձակեցի զքեզ . և այժմ՝ ի բաց դարձիր խաղաղութեամբ .
ապա թէ ոչ լսես ինձ , գիտեա զի կորնչիս . քանզի ուխ-
տազանցութեամբ ընդդէմ գինեալ ես լմնամն ուխտապա-
հութեան ։

Օ այսպիսի բանս լուեալ իշխանացն պարսից՝ աղաչէին զպե-
րոզ դառնալ յետս ։ Եւ պերոզ զայրացեալ՝ ի վէր ինքն յղեաց
առ հեփթաղ պատգամ խաստութեան ։ Ընդ որ ցասուցեալ հեփ-
թաղայ՝ եկ թեթև զօրօք ի վէր պերոզի . և եհար զամ զօրս
և զզօրավարս նորա . սպան և զպերոզ արքայ , և զորդիս նորա՝
բաց յերկուց , որոց մին կոչէր զարեհ , և միւսն կաւատ , որ
և էր ի պատանդի առ հեփթաղս . և որք միանգամ ինեացին
ի զօրացն պարս սակաւք՝ մազապուրծ զերծեալ փախեան ։

Օ այս լուեալ ամենից մեծամեծաց՝ որք էին յՀոնն վերկանայ ,
լուծան և լքան . և շտապաւ խոյս տուեալ անկան յաստրես-
տան . և յղեալ բզմի ինչ առ հեփթաղ՝ զինքեանն զաւրկութեն
նէր . և խոստացան տալ նմա հարկս ։ Եւ ապա առաքեցին
դեսպանս յայլևայլ տեղիս , յորս կային զօրագլուխք պարսից ,
և մարզպանք Տաց . յորոց մի էր և շապուհ մարզպան Հայոց .
և հոչեցին զնոսա՝ գալ ի միասին , և դարմանս տանել խրացն
պատահելոց , և կարգել թիկունս ի վէր պարսից ։

Ե . Եւ մինչդեռ բանակէին նոքա՝ շապուհ մարզպան Հայ- փարպեցի ։
ոց ի գաւառին բասենոյ՝ ի գեղջն ալվար՝ տատանեալ յերե-
սաց վահանայ , եկն առ նա դեսպան յիշեցեալն պարսից . և
եթէր գոյժ դառնութեան , և պատգամ՝ ի գիմաց նոյ , զի փու-
թացեալ ժամանեսցէ ի դուռն ։ Օ այն լուեալ շապհոյ՝ սոս-
կացաւ . և պատասխանի արարեալ առ դեսպանն՝ ասէ . ես և
գունդս իմ՝ թէև այդ լուր չարեաց չէր հասեալ առ մեզ ,
խնդրեաք պատճառս զերծանելոյ ի գործոյ աստի , յորում
եմք . և պատմեալ նմ զիրսն վահանայ , ասէ ցնա՝ ըստ գրելոյ
փարպեցւոյն . Այլդ այդ վահան * զարհուրեցուցէ ասպե-
,, ցոյց և շատ նեղէր աշխատեաց զմեզ . որոյ իւր երք և արա-
,, րածք չէն ոնգ ղայոր ժամանակի մարդկան , զոր մեր տե-
,, սեալ է և գիտեմք , այլ՝ իբրև զառաջինն քաջացն՝ զոր ի
,, վէպսն պատմեն և լսեմք . քանզի թուղ զայլ ժամանակաց
,, զիարա և զարանցն որ ընդ նմ էն՝ յիշել զգործս և զաներ-
,, կիւղութիւն , զոր իմ և կամ այլ աւագորերոյ տեսեալ է ,

,, այլ յառաջ քան զաւուրս տանն՝ Թոռնով երեսուն արամբ
,, ոչ միայն ի վէր այսր բազմութեանէ , որ այժմ աստ են և տե-
,, սանես , յարձակեալ կռուեցաւ , այլ՝ աւելի ևս գնդաւ
,, իշխանն սիւնեաց գդիհոն իւր գաւառին այրուձիով
,, աստ էր . և վահան դէմ յանդիման այն երեսուն արամբ
,, յարձակեալ ի վէր , և նման արծուոյ՝ յորում ժամու ի
,, կաքաւուց երամ սլանայկ , էջէ՝ զոր սպանանիցէ , և զայլ
,, զամենեսեան ընդ ծերպս և ընդ սորս վիմաց տեղեաց ցրուի-
,, ցէ . ըստ նմին օրինակի այսր անդր զայնչափ բազմութիւն զո-
,, րայն արկեալ վեր ի վայր ցրուեցոյն . սպանին և զկայա-
,, նման զայրն զգդիհոն . և այլ բազումս կոտորեալ ի գրն-
,, դէն՝ գնային ինքեանք անվնասաբ՝ չերկուցեալք քնաւ յու-
,, մեքէ ։ Իսկ արդ՝ ոչ անձանաչօղ և արհամարհոտ հպար-
,, տութենն պերոզի էջէ հանեալ զայնպիսի որեաւր և զայս-
,, պիսի մեծ և զօրաւոր զձ յարեաց ի ծառայութիւն . զոր
,, թէ այժմ զայնպիսի այր , ոյզ և յառաջագոյն գիտէի , և
,, այժմ քաջագոյն ևս գիտայի , և զնորուն զընկերան՝ որ առ
,, նմա են , և մանաւանդ զերիս եղբարան՝ որ ի կամաւորականն
,, տոհմէն են , և հնարէի նոճաձել և մեր առնել , ոյզ մեծ
,, մանն միխիթարութիւն համարէի հասեալ ծանր բեկման ի
,, վէր արեալ աշխարհին ։

Ո՛չ այս այսպէս խօսելով շապհոյ ընդ դեսպանին՝ յոգւոյ ելանէր և տխրէր . և ապա առեալ զգօրս իւր՝ գնայր ձեպով ի գուռն հանդերձ դեսպանաւն . նոյնպէս և մեծ սպարապետն հայոց բաւուխտ՝ որ գնացեալ էր ի վէրս , լուեալ զմահն պերոզայ՝ դարձ արար անտի և չոքաւ ի պարսս . ուր միաբանեալ ամ աւագայ՝ որք մնացեալ էին , և առեան խորհրդոյ մեծ կարգեալ , թագաւորեցուցին ի վերայ պարսից զվաղարշ զեղբայրն պերոզայ՝ զայր խաղաղասէր և խոհամիտ , յամի ՌՀՆ .

483 . յամսեանն տրէ , այն է նոյեմբեր ։



ԳԼՈՒԽ ՂԱ։

Հայոցն Բանից Հաշտարարութեայ, և յաղագս գովութեանն՝ զոր
խօսեցաւ շաւղուի Մուրղպան յայնկունն Վաղարշայ
վառն Վանդնայ. և յաղագս գալոյ ի
հայս Ներսէսայ Մուրղպանի։

Յարպեցի։ ԹԱգաւորել անդ վաղարշայ ի վեր պարսից, զար- 483
միրը հաշտարարութեան սպարապետ կացեալ ի մեծի
առենին՝ խօսեցաւ յառաջնում և յերկրորդում ա-
ւուր առաջի արքային և ամ աւագաց նորա բազում ինչ ի վե-
գործոց, զոր արար պերոզ, յուցեալ՝ թէ քանի քննութիւն
վարեաց նա զթագաւորութիւն իւր, որով և պատճառ եղև
ապստամբութեան քոյր Տայ. դուք իսկ գիտէք ասէ, թէ որ-
պիսի մեծ աշխարհ է Ցն հայոց. և ահա այսօր ի ձեր ծա-
ռայութիւն ի բաց կացեալ ենն հայք. և որք ծառայենն ի նմա՝
նենգութիւն վարին. և այլն քաջ՝ որ զՑն ապստամբեցոյց ի
ձէնջ՝ վահան, կայ անպարտելի. և գործէ միասս անհնարին.
զորամբ և ձեր լուծեալ է. և միհրանեանն շապհոյ՝ որ մարզ-
պան կարդեալ էր ի վեր Ցին, զիրաւ առեալ է. ցդա՝ թէ
համիք՝ հարցէք. և դա ինքն ասէ ձեզ զնոսա։
Լինի ի հարցանել թագաւորին զշապուհ յառենի անդ, թէ
զինչ գործ յաշխարհին հայոց գործեցեր, և զինչ միտք են
վահանայ, և այժ. և զիարդ կարաց նա այսչափ ժամանակ
զդէմ ունել արեացս զօրութեան, պինդն արար շապուհ, և
պատմեաց զոր տեսեալն էր։ Լայ ոմն ի յայտնի երևեցաւ,
թէ ծրագիր առանձնացեալ էր վահանայ զզօրութիւն պարսից,
արժան է զբուն բան շապհոյ՝ զոր խօսեցաւ յառենի անդ,
դնել առտնօր՝ ըստ շարադրութեան զազարու փարպեցւոյ, յասելն
* Լրանայ քաջ (՝ի դիտել մեր ընդ սպարապետիդ հաշտարա-
,, ւութեայ՝ ի վերայ գումնայ, և՝ ի պաշարել զայն), եթէ
,, զօրքն բովանդակ առն վահանայ անդ եղեալ էին, թուի
,, թէ տաներ զյաղթութիւնն. այլ թէպէտև յաղթեաք մեք,
,, զայս գիտեմ՝ զի անթիւ բազմութիւնք՝ ի մէնջ կոտորած
,, առնէին. այլ՝ ձեր թագ (մեծաշուք փառաւորեացն. որոյ
,, քաւութեաղաղութիւնք) այնպէս արարին, զի գնդիւն հայոց կէս
,, այրընտիր որեարն այլուր գիտեցան՝ ի գործ. ասկայն սա-
,, կաւ արամբք ծրագիրն ինչ ինձաս արար, գիտէ ինքն հաշա-
,, տակ յորժամ հաշտարարութեան՝ ի վերս գնայ, և զիս անդին
,, բաւութեա, և այլ պարսիկ ոմեան՝ որ անդ էին աւագք։

զօրա-

,, զօրագլուխ եթող գնդին , և յայնմ հետէ զինչ՝ վահան
,, զմեզ աշխատ կալաւ կարի սակաւ ատամբք , զոր երբեմն՝
,, թէ հարիւրօք ասեմ , չատեմ . և վկայեն ինձ գնդիս մե-
,, ծայ աւագորեաք , որ անդ էին , և այժմ ասա են , կարի
,, ծանր է ասել՝ և անհաւատալի բանք , թէ այնքան սա-
,, կաւուք դեմ յանդիման կռուիլ աներկիւղութիւն , և զօր
,, ամ ’ի զակիւն վրայ գալ , և մեծամեծ վնաս առնել . բայց
,, զմիոյ աւուր գործն ես իսկ յիշեմ , որ անդ էի . սակայն
,, նոր համարիմ և ’ի վեր քան զմարդկան իրս , թուղ թէ որ
,, լսէ՝ զիաւրդ կարէ հաւատալ . քանզի թուով երեսուն ա-
,, տամբք ’ի վերայ երից հազարաց յաներկիւղս յարձա-
,, կեալ , և զայնպիսի գործ վճարեալ , զոր ամ՝ որ անդէն
,, էին տեսողքն՝ այսօր յիշեն , թուի թէ երկիւղ գործոյն
,, ելանէ ’ի մտաց . զի և ոչինչ այլ խիք նման էին այն նո-
,, րոշ իրք , բայց եթէ յորժամ ժիր մշակք՝ քաջ սուր մանր
,, գազաս և գերանդեաս զհատ հարկանիցեն , և քազում
,, որայս մօտ ’ի մօտ առ միմեանս կռտեալ թողուցուն . և
,, ինքեանք ուրախալից յինծուխեամբ անհոգ յիւրաքանչիւր
,, տունս գնայցեն , ատոյգ ըստ այնմ օրինակի յարձակեալք ’ի
,, վրայ միհրանայ (այն ինքն է միհրանեանն շապուհ՝ որ խո-
,, սի) , այնքան ատամբք հերձին վեր ’ի վայր զբովանդակ
,, գունդն , և շատ լաւ որեար կոտորեցին ։
,, Նա զահաւոր այրն զգդիհոն սիւնեաց տէրն սպանին . զոր
,, յիմ միտս այսպէս ասէի , թէ լոկ գդիհոն միայն ինքն
,, տասն արամբ յիւր գնդէն պատահէր այնչափ առն , այն
,, միայն առնէր ։ Նա զայնպիսի այր , և զայլ ականաւոր և
,, քաջ արս ’ի պարսիկ մարդկանէ հանին ըստ սուր . և ին-
,, քեանք ոչինչ խոյս տուեալ ’ի բաց վարեցին զձիսանս իւ-
,, րեանց , այլ՝ մօտ ’ի մեզ թևակից երթային յանհոգս ’ի
,, թիմ ժամն ։ Նա ’ի մեր գնդէն ոչ ուրուք իշխեցեալ հայել
,, ’ինձ . վա՛ղ ոչ ածք և ոչ մարդիկ կարծեցեալ այնմ թուինն
,, մեզ ։ Այ և թէպէտ առաջի ձեր յանգգնութի՛ բանս
,, իմ թուեսցին , սակայն յաղագս կարծեաց ժամուս հա-
,, մարձակիմ ասել . զի զաշխարհին հայոց զմեծութի՛ն և զօ-
,, գուն՝ զայն դուք իսկ քաջ գիտէք . բայց այրն վահան՝ և
,, այլ որեարն՝ որ ըստ նմին , եթէ այսօր խաղաղութի՛ ’ի ձեր
,, ծառայութի՛ն էին , մեծ մասն բարւոյ և միխթարութի՛ն
,, կարեւոր հասելոց տրամուն մերոյ համարեի զիրան զայն ։
,, Օ՛ի յորժամ հայք այնպիսի որեարով մեր էին , վիրք և
,, աղուճանք չիշխէին քնաւ թիւրել զանձինս , և այլազգա-
,, գոյնս ինչ խորհել ։

Ա՛ ոճեալ վաղարշայ արքայի և աւագանւոյն զբանս

շապկոյ՝ զարմացան. և զկետին բան նորա ուղիղ համարելով
միաբան ամենեքին զասացեալսն արդարացուցին ։ Այս ան-
դէն վաղվաղակի զնիխոր ոմն վշնասպատ զայր հեզ և զթա-
րեխորհուրդ՝ զարդարակորով և զՅաչէն՝ մարզպան կարգել
՚ի վէր Ծիւն հայոց, արձակեցին զնա անդ բազում ընտիր զո-
րօք՝ ոչ ՚ի պատերազմիլ, այլ հնարագէտ հոգատարութիւք և
բարեյորդոր քաղցրութիւք ՚ի ծառայութիւն պարսից նուճաձել
զքաջն վահան ըստ կամաց նոր, և զՅն առ հասարակ ։
Այլոց պատուէր ևս ետուն նմա՝ մանաւանդ թիշրն և հաղա-
րաւխտ, և ասեն. զգոյշ լեր անձին քումմ. նախ ժողովեա
առ քեզ զզօրս ատրպատական Ծիւ, զի կայցեն մեծ Յն հայոց
ընդ զօրս գաւառին հերայ և զարոնանդայ. գուցէ ՚ի կամիլդ
քաղցրութիւք նուճաձել զվահան, նա պատճառանօք խաբեսցէ
զքեզ, և ինքս ինչ առնիցէ. վասն զի ոչ միայն քաջ է այլն,
այլև բազմադէտ ։ Այլ կարծեմ, թէ արդ չխորհի նա զայդ-
պիսի ինչ առնել. զի զօր համարձակեցաւ գործել, յարհա-
մարհանացն պերոզի էր, որում չկարաց նա տանել ։
՚ի մեղմիլ ապա փոքր ինչ ձմերայնոյ, ելեալ նիխորայ այս- 484
պիսի պատգամաւ և առանձինն հրովարտակաւ արքայի՝ յՅէն
պարսից, դիմեաց գալ՚ի հայս. քայց ոչ համարձակէր մտա-
նել ՚ի միջոյ Ծին, եկն ՚ի հեր գաւառ. և դադարեաց ՚ի
գեօղն՝ որում անուն էր նուճարական. և անտի առաքեաց պատ-
գամաւորս առ վահան և առ ընկերս նր՝ զերկուս յաւագաց.
որոց մին էր շապուհ դպիր խորհրդեան, և միւսն միհր վշնասպ
Ձուճարշացի. և ծանոյց նմա զպատճառ գալոյն իւրոյ ՚ի հայս.
Հրովարտակ ունիմ ասէ յարքայէն վաղարշայ առ ձեզ, և
պատգամ յՅամ նախարքացն պարսից՝ հրաւիրել զձեզ խաղաղութ-
՚ի հնազանդութիւն արեաց. արդ՝ արիք եկայք և լուարուք զպատ-
գամն. և ունի հաճոյ իցէ ձեզ՝ ընտրեցէք, որ բարին է ։
Ձ. Ետեալ վահանայ զպատգամն նիխորայ՝ ժողովեաց
վաղվաղակի առ ինքն զՅամ ուխտապահ նախարարսն և զՅա-
ւատարիմսն. և անդէն հրամայեաց պատգամաւորացն նի-
խորայ՝ խօսիլ նոցա և առաջի ժողովելոցն զպատգամն ։ Այ-
իբրև խօսեցան նր, ասէ ցնոսա վահան. առ վաղիւ արասցուք
պատասխանի բանիցդ ։ Այ ՚ի վաղիւն վերատին ժողովեալ՝ խոր-
հուրդ ՚ի մէջ առին. և ապա կոչեալ վահանայ զպատգամա-
ւորսն՝ խօսեցաւ ընդ նոսա, և ասէ. Ա՛ր ապաստամբուէ իրաց և
յայսպիսի գործ տալոյ զանձինս՝ բազում են բանք և կարևոր.
և չէ հնար գրով կամ լոկ պատգամաւ վճարել. այլ՝ յանդի-
մանն խօսիլ ընդ նմա, որ արեաց տէրն է, և ընդ ձեզ՝ որ գլխանն
աւագանի է ։
Այլ այժմ երթք ինչ միայն ունիմք ասել. և եթէ այս երից

քանիցս պատճենի արասցէ նիխոր՝ ոչ կամիմք , և կատարեսցէ գրով և կնքով Թագաւորն , զնա՝ զոր ինչ և ասէք՝ զպատեհն և զարժանն , առնեմք . և պատգամիդ ձերում լսեմք , ոչ և նախնիք մեր լսէան . իսկ եթէ ոչ հաւանիցիք , ոչ կարեմք և մեք լսել ձեզ . և ծառայութի առնել արեայ ետն չկամիմք . և պատրաստ եմք մեռանել քաջութե , և ելանել յերես խնդութե : Վանդն և յօրէ՝ յորմէ տուաք զանձինս ի վտանգ մահու , զայսոսիկ և եթէ ընտրութե մտաց առաջն ունեաք , ասելով . Եթէ յանձն առցեն պարսիկք Թողացուցանել մեզ զիրսդ , ծառայեացուք նոցա միամիտ սպասաւորութե և հաւատարմութե . ապա թէ չհաւանիցին յանձն առնուլ , այլ խստութե ընդեմ դարձցին , և մեք յաւելի զդէմ կալցուք նոցա . և կամ անձնատացեալ՝ յօտարութի գնասցուք յերես աստի մերմէ . և պարսկի առն երկիր ոչ պագցուք :

Ա. Ըդ՝ առաջին խնդիր մեր այս է . Թողջիք մեզ և քահանայից մերոց՝ զօրինս քրիստոնէութե համարձակութե և աներկիւղ պաշտել , ուր և կամք իցեն . և զհայ ոք՝ մոգ մի առնիցէք . և վն ուրացուէ գահ և պատիւ ոմեք ի հայոց մի տայք . և զկրակատունսն զամ բարձջիք յերես հայոց : Ա. Րկդ խնդիր մեր այս է , զի զիտաջիք ընտրել զլաւն և զոչ լաւն . առ լաւս ունել զպատուականն և զքաջն՝ զօգտակարն և զբարեսիրին , և յոչ լաւս ունել զանարգն և զվատն՝ զանպիտանն և զանտօհմիկն . սիրել և մեծացուցանել զվաստակաւորս և զիմաստունս , և ոչ փառաւորել զանվաստակն և զյիմարսն վն մեխրապաշտութե : Ա. Ղդ խնդիր մեր այս է , զի Թիգրն արեայ ինքն աչօք իւրովք տեսցէ , և ականջօք իւրովք լսիցէ , և գիտասցէ զառն առն լաւուն կամ զվատուն , և մի աչօք այլոց , և ականջօք օտարաց . և մի ևս այլոց ումանց քսու արանց հաւատալով , և միւս կողմանն չլսելով դատաստան արասցէ . ապա թէ ոչ՝ այլընդ այլոց լինիցին ամ իրք , և այլընդ այլոց կատարին . և ծդ իսկ վեր ի վայր տապալի : Ա. Հա այս են խնդիրք մեր . և եթէ այլ ինչ կայցէ , ինձէն իսկ խօսեցայց ընդ նիխորայ , թէ դեպ լիցի ինձ գնալ առ նա . ապա թէ ոչ կարացիս գալ , կայցէ այդ բան :

Ո այս ասացեալ վահանայ՝ արձակեաց յիւրմէ զպատգամաւորսն . և ինքն ևս յղեաց ընդ նմա հրեշտակութե առ նիխոր յուխտակից աւազայն զարս Հինգ . որոց անուանք էին սոքա . Յաշխուր արծրունի . սահակ կամսարական՝ կրաւեր եղբայր նեղսեհի . վասակ ուրտ կարքայիկն . առաւան աղբիւրկացի . և պաձոկ ի մարդպետական գնդէ : Իբրև հասին սք ի հեր պատառ , ընկալաւ նիխոր պատուով մեծաւ , և եցոյց սէր բազում . և զի երևեսցացէ էր օրն , ընթրիս մեծ արար նոցա , և

ուրախ եղիր ընդ նմա . և յառաւելն զուարճանալ՝ քեզմէ բանս գո-
վութեան խօսեցաւ զվահանայ , և յայմ բաժակի յիշէր զանուն 484
նոյն , և այնպէս ըմպէր զգինին ։

Եւ ի վաղիւն անդր ժողով մեծ արարեալ յաւագաց իւրոց ,
և յայլոց անձանց՝ որք էին ընդ նմա , առաջնիկպութիւն նա-
ցին իսկ հրեշտակացն , հրամայեաց պատգամաւորաց իւրոց՝
խօսիլ յայտնապէս ի ժողովն անդ զպատուհասն վահանայ ։
Եւ լուեալ սոցին զբանսն՝ ուղիղ դատեցան . և խօսեցաւ ևս
նա ինքն նախագոյ , և ասէ . ամ բանիդ այդ՝ զոր յղեալ է վահա-
նայ , արդարև աստուածոյ արժանի պատգամք են . և եղեն
ինձ դոքին միխիթարուն ի վերջ մեծի բեկմանն , որ եհաս ինձ
առաջ . այլ տացին ածքն և զօրն տեսանել ինձ , յորում
աւուր յայտնեացի վահան իմոյ միջնորդելով բարեկամ և
հնազանդ արեաց ։

Ե . Եւ ապա գրեալ նիխորայ նամակ՝ առաքեաց առ վա-
հան ձեռամբ առաքին պատգամաւորաց իւրոց , ըստ շապհոյ
խորհրդեան դալոյ , և միտր վշնասպայ ձոճարշայոյ . և բա-
զում քաղցրութիւք հրաւիրեաց զնա՝ ասիպով գալ առ ինքն .
* արի ասէ եկ առ իս վստահութիւք . և զամ խնդիրս քոյ՝ զոր ի
,, ձեռն դուցա յղեցեր առ իս , և զայլ ինչ՝ զոր դու ասես ,
,, ուխտել է արեաց ինն և ամ աւագանուին՝ տալ լիով և կա-
,, տարել . և զքեզ և որ ընդ քեզ են , ոչ քո կամք իցեն , ա-
,, րեաց ինն շքեղ առնել , և արձակել ի հայս ։

Ցորժամ նիխոր զայսոքիսի պատգամն գրեաց՝ և արձակեաց
պատուով մեծաւ զհրեշտակն վահանայ ընդ պատգամաւորս
իւր , տեսեալ ուրացողացն զմեծարանս նոցա լցան ամօթով ,
և յերկիւղ կորացան ։ Այեցեալ յերեսս նոցա հրեշտակքն վա-
հանայ՝ ակնարկիւ առնէին միմեանց , և յուշացանէին զկորանս
նոցա . այլև մի ոմն ի նոցանէ համարձակեալ՝ ասէ ցնո . եթէ
լոկ ի բանիցն խօսելոյ ընդ մեզ սիրով նիխորայ՝ ամոլ ամօթոյ
մեզ ածէ , ապա յորժամ տեսանիցեք փառա-
ւորեալ զվահան , և զայլ ուխտապահն՝ որ ընդ նմա , զինչ
եղիցի ձեզ . խորտակիցիք արդեօք և հերձանիցիք . բայց
դուք և զայն զմտաւ ածջիք , թէ զինչ ոչ խոհեցի ձեզ յառա-
ջին քան ։ Եւ նոցա լուեալ զայս՝ առաւել ևս ամօթալից
մնային ։

Գ. Լ Ո Ւ Խ Ա Ն։

Յաղագս գնալոյ վահանայ առ նիխոր մարզպան վասն հաշտելոյ ընդ պարսիկս։

484 ա. Լսեալ պատգամաւորացն նիխորայ հանդերձ հայ հրեշտակօք առ վահան, ետուն նմա գնամանին. և նորա ընթերցեալ զայն՝ գիտաց, թէ չէմարտուէին են քանքն նիխորայ, և թէ կատարին երեքին այն խնդրուածք իւր։ Ոչ այ առեալ ըէ իւր զամ ուխտապահ նահապարան, և զիոքրիկ գունդն՝ զոր ունէր, գնաց նոքօք հանդերձ ի գաւառն արտազ. և դադարեցաւ ի գեօղն՝ որ կոչիւր եղինդ. և անտի առաքեալ զեկոյց նիխորայ զեկն իւր. և առ անկասկած մնալոյ՝ խնդրեաց ի նմանէ, և ասէ. եթէ հաճոյ թուի քեզ գալ իմ առ քեզ և տեսանել զքեզ, տուր ածել առ իս որս աւագս ի մեծամեծացն պարսից, զի կացցեն աստ ըէ գնդի իմում, մինչև եկեալ տեսից զքեզ. և խոսեցեալ իմ և քո ընդ միմեանս՝ կարգեսցուք զոր ինչ ի դէպ թուի մեզ առնել։

Եւ նիխոր վաղվաղակի եառ տանիլ առ նա զուարճն արս յաւագսացն. այն են՝ բազէ ատրպայականն շահպատ. վեհվեհնամ՝ որ երբեմն հղրապետն էր ատրվէնատպայ մարզպանին հայոց. նեթաշապուհ եղբայր միհրանեան շապհոյ. և այլ ևս հինգ այր երևելի։ Երբև եառես զնոսա վահան, բազում պատիւ ցուցեալ մեծարեաց զնոսա. և ի վաղիւ անդր յանձն արարեալ զնոսին յիւրան՝ պատուէր եառ ի պատուի պահել զնոսա. և ինքն եղ ի ճանապարհ փոքրիկ գնդաւ, և քանի մի երևելի ուխտապահ նախարարօք. և մերձ եղեալ ի գիւղն նուճարական՝ ուր նստէր նիխոր, հրամայեաց իւրոցն վառիլ և կազմ ունիլ զանձինս ըէ օրինի պատրաստուէ պատերազմի, և հնչեցուցանել զպատերազմական փողսն։

Զայն ձայն լուեալ նիխորայ և զօրաց նո՝ զարհուրան, և ասեն. խաբեուէիք եկեն այրն մամիկոնեան, և կորուսանէ զմեզ։ Եւ վուէճանակի առաքեաց նիխոր ընառաջ նո զոմանս յիշխանաց իւրոց, և ասէ. ոչ է օրէն ուսեք յարեաց զայդ առնել ի ջոջել կամ ի մոռանել ուրեք, քայց միայն սպարապետի նոյ. ասա և քեզ պարտ էր զկարգ արեացն պահել։ Զղեաց առ նուա վահան պինդ, և ասէ. նախ արա զիս արեաց ոմն ծառայ, և յայնժամ առանց ուսանելոյ իմ՝ ի քէն՝ պահեցից զայդ կարգ. քանի թուի թէ գիտեմ և ես զօրէնս արեաց։

Յետ յղելոյ վահանայ զպինային՝ եմուտ ի գիւղն, և եկն առ նիխոր ։ Տեսեալ վնաս նիխորայ՝ ցնծալից ուրախութիւն անկաւ ղպարանոցաւ նր, և ողջունեաց զնա. և մատոյց նմա զողջոյն ի դիմաց արքային պարսից վաղարշայ և ի դիմաց աւագանւոյն հայոց. նոյնպէս ողջունեալ և զայլ ախտակիւղ նախարարան՝ որք էր վահանայ էին, և առ զարս գնդի նորա, սէր բազմ եցոյց առ նոսա ։ Ապա վահանայ լուեալ զողջոյն ի դիմաց արքային, խոնարհեցաւ և երկիր եպագ. և շնորհակալութիւն բազմաւ ընկալաւ զայն ։

Յետ այսորիկ առեան մեծ կարդել նիխորայ՝ խօսեցաւ ընդ վահանայ առաջի ամենեցուն, և ասէ. Թէպէտ և չէ իմ կեցեալ ընդ քեզ ի միում ձի, բայց տեսեալ եմ զքեզ բազմ անգամ ի դրան. և լուեալ ևս եմ վասն քո բազմ ինչ. զոր և այժմ իսկ տեսի առաջօք. և ծանեալ աւելին զքաջուն քոյ և զիմաստուն. զքաջութիւն քո ցուցեր ի վանելդ զբազմս սակաւուք. և զիմաստութիւն քոյ յայտնի արարեր՝ գիտելովդ զժամ կռուոյ, և զժամ ի կռուոյ տեղւոյ տալոյ, և անվնաս զդունդդ պահելոյ. զի եթէ երկու այդ իրք չէին ի քեզ լիով, զիարդ հնար էր քեզ ընդդէմ այնչափ բազմութեանդ պատերազմօղ արանց մրցել. երբեմն մեծապէս յաղթել, և երբեմն զարհուրեցուցանել ։

Ապա ծանուցեալ իմ զքոյ այդպիսի արարուճած և զմտաւորուն, վատահ եմ՝ թէ ունիս տալ արժանաւոր պինդ ամենայն բանից՝ զոր ունիս լսել ի մէնջ ։ Ապա թէ զվտարանդութիւդ հարցանեմք, եթէ զիարդ իշխեցեր խորհել թագդ թէ առնել. պինդ տուեալ ասես. յայդ զիս բռնադատեաց չձանաչողուն պերոզի, որ զծառայուն և զվաստակ որպէս զնձծ խնդրեր, և վաստակելոցն հատուցումն առնել քնաւ ոչ խորհեր. և եթէ նա ոչ անձին և ոչ որդւոց իւրոց մարթացաւ հոգ տանիլ, այլ՝ կորոյս զինքն և զորդիս իւր, և զձեն արեաց ի նուաճումն հեթէթաղին ետ, զիարդ մարթ էր նմա բարի ծառայի բարի ինչ առնել ։ Ասաի և յայդմ ոչ ոք յարեաց մեղադիր լինի քեզ՝ և որ ընդ քեզ են. ոչ արքայ և ոչ իշխանք նր ։ Այլ արդ այժմ՝ թէ հաւանեալ դու գաս ի հնազանդութիւն արքային, և որինչ եղև ի մէնջ և ի ձէնջ՝ մոռանաս, տաց ես բերել առ քեզ հրովարտակ ի թագրէ կնքով. և ապա դու ինքնին գնացեալ առ նա՝ խօսեսցիս. և նա արասցէ և կատարեսցէ սիրով և կամաւ զնա՝ որ ինչ արժան է և բարի ։

Ա յսպիսի բանս լուեալ վահանայ, և նախարարացն՝ որք ընդ նմա, ուրախ եղեն յոյժ. և վահան սկսաւ խօսիլ ընդ նիխորայ, և ասէ. Ինչան հաշտութիւն ոչ է, յորժամ տայ աշխարհի պիշխանս բարեսէրս և խնամատարս. ոչ և այժմ է տեսանել ի խաղաղասէրս արքայդ արեաց. զի թէպէտ և իմ է տե-

484 484

սեալ զնա ՚ի գահոյս , սակայն զքեզ տեսանելով , և քեզ լսելով բանս նոր լսելով՝ հաւաստեաւ ծանեայ զբարեսէր կամն նոր :

և ակն ունիմք գտանել խաղաղուի և շինուի յաւուրս նոր :

Լսակ վ՚ս գործոց պերոզի շատ լինի քոյ բանն և լիով առացածն . որով և զնա անաշխատ պահեցեր յերկար պատասխանւոյ : Այլ տրտունջ մեր զնմանէ իրաւացի է . զի զձս մեր յանպիտանութի՚ն գարձոյց՝ վաճառելով զիշխանուի՚ն ՚ի ձեւս խաբեբայ և հայկատակ և վատատոհմիկ մարդկան . և որ ինքն զայս ինաս գործեաց , այպանելով զաղգս հայոց յիւրումն աստենի՚ յօրինակ եթեր վասա ասացոց , և ատորին քան զասորիս եցոյց : Այլ Թէպէտ այն ատք անպիտանք զայսպիսիս լսելով՝ ոչինչ կրէին ամօթ , այլ՝ յաւէտ խնդային և ծիծաղէին , զի չէին իսկ ՚ի մարդկան համարի , այլ սակայն որ միանգամ տիրապէս մարդ երևիս , և ամօթ կայր ՚ի սրտի նոր , կորացեալ՝ գետին մտաներ վ՚ն այնպիսի լրոյ յարեաց ՚ունէին . նա՝ ՚ի դէպ իսկ եր ՚ի ցաւոց անտի բղխմ անգամ մեռանել :

Այլ մեր աւագիկ զդոյն զայդ ածեալ զմտաս , և կամեցեալ քերել յանձնէ զվատ անուն և զայդպիսի ձաղանայ բանս , առ ամօթոյ կամէաք ելանել և խոյս տալ յձէ . բայց և զայս խորհեցաք , Թէ երբ մեք այսպէս գաղտ զարհուրեալ գնամք , առաւել ևս հատուատապէս ժառանգեմք զանուն վատութե՚ն . և այնուհետև ասիցեն զմեզնջ , Թէ մարդիկ՝ որ այնպէս յետին և անպիտան էին , յիրաւի լատ արժանւոյն կորեան , և անհետ եղեալ չերևին ՚ի միջի . զի և լինել նոյ՚ ՚ի միջի և չլինել՝ զնոյն վճարէ : Այլ յաղագս այսորիկ լաւ համարեցաք նախ ծանուցանել զանձինս քաջութե՚ն , և ապա մեռանիլ , կամ գնալ յայլ ՚ս . ապա Թէ ոչ՝ չեաք այնքան խելայնորք , մինչև չմտանալ՝ Թէ մեք ոսկաւ Թուով տառապեալ մարդիկ չկարեմք զդէմ ունիլ անթիւ բազմութե՚ն զօրու արեայ : Այլ այսու ամենայնի՚ եթէ էաք մեք կացեալ միաբան , և չեաք պառակտեալք և քայքայեալք , ծանուցանէաք եկեղեցն ՚ի վերայ մեր , Թէ արդարև արի այր եմք , Թէ ոչ զասորի անպիտան և անարի :

Այլ Թէ կամք իցեն ձեզ , փորձ լինչ փորձեցէք և տեսէք . ՚ի մի խառմբ որոշեցէք զայնոսիկ , որք մոգուե՚ անուանեալք պատրեալ զպերոզ՝ այժմ գահ ունին և պատիւ , և յիւրաքանչիւր գաւառի իշխան են , ձիոյ տէր են , զինու և գնդի . և ՚ի միւս կողմն յանդիմման լիցուք ուխտապահքս Թուով փոքր , որոց ոչ գոյ՝ ոչ գաւնդ և ոչ տանուտէրութե՚ն . իսկ դուք որք արիքդ էք , ՚ի հեռուստ ՚ի զինէն կացեք հանդիսի , և մի լինիք միասի կողման ձեռնտու . և զձս հայոց ՚ի մեզ Թողէք . և որ ոք կարասցէ ՚ի միասին հանել , նի՚ տալիք զձն : Այլ

զայդ վե այն առաջի, զի ծանիջիք՝ եթէ անպիտանք ի հայ-
նէն են, որք յետնեալ գտան յօրինաց մերոց։ Այլ առ քար-
ւոք եկս ունելոյ իրացդ՝ և առ ի գարման տանելոյ վիրաւորդ,
խնդրեմք յարեաց հոնկ՝ զնախկին առաքեալ զերեսին խնդիրս
մեր կատարել. և չնորհեսջիք մեզ զայն գրով և կնքով Թա-
գաւորի. և զայլ ինչ պարզև չխնդրեմք. հայեսջիք առատ ի
վաստակս ծառայութեանէ իւրաքանչիւրոց, և ըստ արժանեացն
հատուսջիք։ Եթէ այսպէս արասջիք, մեր քնիկ տեարք եք,
և մեք ձեր քնիկ ծառայք եմք. ընկալաջուք զմեզ սիրով, և
ծառայեցուցէք խնայելով. և զյանցանս մեր՝ զոր ի բռնու-
թէ եւտուք յանցանել, ներեցէք մեզ։

Ընդ այս բան վհանայ ուրախացեալ նիխորայ՝ ասէ
յատենի՝ անդ. համարձակ և արդար խօսքդ վհանայ փա-
րատեաց զԹանձրամած խաւարն, որ ի՞ջեալ կայր ի վր սըր-
տիս. և ուրախ արար զիս։ Ա՛յժ առա արձակեալ զատեանն՝
ասէ ցվհան. այլ և խօսեացուք ընդ միմեանս յաւուրս քանի
մի, և ուրախասցուք ի միասին։ Ա՛յնմ աւուր յերեկոյի
մեծ ընթրիս տուեալ՝ քզմ խնդուԹիք զուարձանային։
Ա՛յ ի վաղիւ անդր առանձինն առեալ նիխորայ զվհան ի
ներքին իւրում սենեկի՝ խօսեցաւ ընդ նմա զօգուտ ժամն ի
վր կարևոր իրաց ձեռն հայոց. և ապա երկոքեան ելեալ ի միա-
սին՝ եկին ի տեղի ատենին. և հրամայեաց նիխոր, զի ամբիոն՝
որ եկեալ էին ընդ վհանայ, մտցեն յատեան՝ նախարարք և
նոցին արք՝ հանդերձ իշխանօքն պարսից։ Ա՛յլ ուրացողացն
ոչ ետ Թոյլ և ոչ իսկ ի դրունսն մօտիլ. որոյ վր զամօԹի հա-
րան ընդ յոյժ, և կային արտաքոյ դառնացեալ. և ըստ գրելոյ
փարպեցւոյն, կերպարան մխիրոյն՝ զոր պաշտէին՝ ինքեան եր
ի վր երեսաց նց։ * Ժողովեալ նստէին առ առ միմեանս՝ ապ-
,, շեալք՝ քամակաբեկք՝ զարԹուցեալք որպէս յերազոյ ցնո-
,, րից . . . որք և ցանկային բաղում գնոց առնուլ՝ Թէ գոյր
,, հնար՝ զապստամբուԹեն անուն. և ոչ ոք տայր նց ։ Ա՛յ-
եԹէ ոք ի նոցանէ կամէր մտանել յատեանն, հարցանէին
ցնա, Թէ յորո՞ց ես դու. եԹէ ասէր յապստամբաց անտի եմ,
ի՞ յընկերացն վհանայ, Թողուին ի ներքս. և եԹէ ոչ,
մերժէին զնա, և ոչ Թողուին մօտ կալ ի դուրս։
Յորժամ ժողովեցան ամք հրաւիրեալ քն յատեան, սկսաւ վհ-
հան վերստին երկրորդել զամ զբանն, զոր յառաջն ասացեալ
էր։ Ընդ որ հաճեալ և հաւանեալ նիխորայ և իշխանաց նր՝
խոստացան առնել զամ, զոր կամէր. և գրեցին զամ առ վհ-
ղարշ. և յորդորեցին զվհան, զի և նա ինքն գնասցէ ի
դուռն, և յանդիման լինի արքային։

Ընդ այսչափ նք յայսմ խորհրդի էին, եկն դեսպան ի

պար-

պարսից առ նիխոր. և ետ նմա գոյժ ասպատամբութեան, եթէ զարեհ որդի պերոզի կամելով յափշտակել զթագաւորութիւնն ի վաղարշայ՝ զօրաժողով լեալ է ընդդէմ նր. արդ ասէ՝ փութա՛ հասանել ի դուռն հանդերձ զօրօքդ։ Այս լուեալ նիխորայ՝ անդէն յորդորեաց զվահան, և ասէ. եթէ կամիս նախընծայ պտուղ ինչ ծառայութեդ յուցանել արքայից արքայի, կազմեա՛ արդ գունդ մի սակաւաձեռն զօրաց, և արձակեա՛ ի դուռն. և ես ահա գնամ անդր. և ի վճարիլ իրացդ յաջողութիւ՝ յաջողեացին և խնդրուածք քոյ. և նա խոստացաւ առնել։ Եւ ապա հրաժարեալ ի միմեանց՝ նիխոր գնաց ի պարս ի դուռն արքայի. և վահան առեալ զիւրսն՝ կարգեաց գունդ մի այրուձիոյ, և յանձն արար ի ձեռս վրէնայ վանանդայեցոյ, և արձակեաց զնա ի պարս. ընդ որս և զգրիգոր զեղբօրորդի իւր, այն է որդի երանելւոյն վասակայ։

Եւ ինքն վահան չուեաց գնաց ի դուխին. և իբրև եհաս յեզր գետոյն երասխայ, եգիտ զկամուրջն արտաշատու աւերեալ, և զդեռն յեղանակէ գարնայնոյ սաստկացեալ յոյժ. և ի փորձել ումանց յանցանել՝ վտանգեցան, մինչև հազիւ զերծանիլ նոյ։ Եւ վահանայ ետնագրեալ զինքն նշանաւ խաչի՝ եջ ի գետն, և էանց խաղաղութիւ. և այլք զկնի նր ընդ նոյն տեղի. և հասեալ ի դուխին՝ դադարեցան անդէն։

Առ ի սկզբան գնդին փոքուն՝ զոր արձակեաց վահան, հասեալ ի դուռն՝ յանդիման եղեն սպարապետին պարսից հազարապետի, և հրամանաւ նր խառնեցան ընդ այլ զօրս պարսից, և գնացին ընդդէմ զարեհի։ Եւ ի սկսանիլ մարտին՝ ի դիմի հարեալ նոցա սաստկութիւ՝ բզկտ արեան ձախապիս գործեցին ի զօրսն զարեհի. ուր և հօրն նմանն սեպուհն գրիգոր՝ անպարտելի քաջութիւ չհատակեալ՝ զբազումս անդէն յերկիր կործանեաց. ընդ նմին և վրէն վանանդացի առիւծաբար յարձակեալ՝ հիացոյց մեծապես զզօրսն պարսից։ Եւ իբրև իսպառ վանեցան զարեհեանքն, կալան պարսիկք զինքն զզարեհ. և ածեալ ի դուռն՝ փողոտեցին զնա նման անասնոյ։ Եւ վաղարշայ լուեալ զգործս քաջութեանն հայոց՝ ուրախ եղև ի վր նոյ. և բազում պարգեւս տուեալ մեծարեաց զնոսա։

Գ Լ Ո Ւ Խ · ԼԲ ։

Յաղագս գնալոյ վահանայ ՚ի դուռն վաղարշայ, և ջարդելոյ ապարատիս, և ապա մարշպան հայոց · և նորոգումնէ աշխարհին · ուր և առաջի դնին բանք ապէ- նախօսումնէ յովհաննու մանդակունւոյ ։

Վարդենի ։ ՅԱ · ահան մամիկոնեան դադարէր առնել ինչ ՚ի դէմ ին՝ 484
ժողովեաց զիւր ուխտակից նախարարաղունն,
և զարս նոյ · և իբրև էառ զլուր նուճաճունեն
զարեհայ, և յաղթութենն վաղարշայ արքայի, ՚ի չուն անկեալ
իւրայովքն՝ գնաց ՚ի պարսս · և հասեալ ՚ի դուռն՝ պատուե-
յառ ՚ի մեծամեծացն ։ Այս վաղարշայ լուեալ զգալուստ նո՛ր՝
ժամ ետ յանդիման լինելոյ ինքեան · և տեսեալ զնա՝ զուար-
ձացաւ յանձն իւր · և իբր հաւաստարակից բարեկամ քէմ սի-
րով խօսեցաւ ընդ նմ։ և զայն օր ոչ այլ ինչ եհարց ցնա, բայց
միայն ղողջունել նո՛ր, և զանցից ձանձրոյին, և զյաջողութէ
գալստեան նորին ։

Այս ՚ի վաղիւն ՚ի ժողովիլ ամ իշխանաց ՚ի սրահ արքունի՝
հրամայեաց արքայ կոչել անդ զվահան · և իբրև եկն և ե-
մուտ նա ՚ի ներքս, սկսաւ խօսիլ ընդ նմ վաղարշ թէսր, և ա-
սէ · Ո՞ամ զխօսեցեալն քո ընդ նիխորայ՝ լուաք · և ա՛ւ զոր
ինչ պատգամաւորօք և նամակաւ առացեալ էր քո՝ իմացաք ·
և հասու եղեալ ծանեաք, զի ոչ էր քո առեալ ՚ի բանիցն՝ և
ոչ մի · և զնոյն ինդրեալ էր քո արդարութէ · և գիտեմք,
զի ամ միասու ապստամբութէ ձերոյ պատճառ՝ իմ եղբօրս
պերոզէ ամբարաւանութէն եղև · որ թէ առ քեզ միայն էր
անիրաւեալ, և զքեզ միայն էր կորուսեալ յարեւաց, թերեւ
ինչ էր միասն · ծառայ մի կորնչէիր · որում փոխանակ թե-
րևս այլ գտանիւր · բայց նա իւրով հպարտութէ կորոյս զան-
թիւ բազմութէն լաւ արանց · որոց այսօր չիք փոխանակ ։
Այժմ դու ինքնին կամաւ էիր ապստամբեալ, պատուհասի
լինելիր այժմ արժանի · այլ քզի ակամայ մղեցար յայդպիսի
գործ վ՚ն քոնաւորուէ նո՛ր, անիրաւ և դատել զքեզ ։ Ո՞այդ
ձեր գործ նաև այլք յարեաց գնդե խորհեցան առնել ընդեմ
պերոզայ, բայց չիշխեցին առ վատասրտութէ · իսկ դուք
քնաւ առ ոչինչ համարեալ զկեանս ձեր՝ յօժարութէ յանձն
առիք մինչև ցմահ ձգնիլ · ուստի և քաջաբար մեռան՝ որք
մեռանն · և ևս առաւել քաջաբար կեցայք՝ որք ապրեցայքդ
և կայք ՚ի միջի ։ Այլ երանի թէ և այլ մարդիկն՝ զորս ՚ի

զբուր տարաւ և կորոյս պերոզ ՚ի հեփեթաղս, կարացեալ էր
զայդպիսի առնել քաջասրտութեն. որով Թերևս ցարդ կեն-
դանի էին իբրև զձեզ։

Յայնժամ պէնկի եւ վահան յանդիմանն բազմութեն աւա-
դանուէն, և ասէ. խօսիլ առաջի ՚ձեր և առաջի Թագրաց երկայն
բանիւք չէ արժան. մանաւանդ զի ջնմ զխօսս և զկնդիր
մեր և զպատճառս ապստամբութեն մերոյ յառաջնմէ խակ
ծանուցաք և գրով և բանիւ. և զնոյն կրկնել ձանձրուն է.
բայց զայս մի ինչ ստիպիմ երկրորդել. իբր զի՝ պերոզ Թե-
պետ և առ աւելին քննացաւ, այլ առ մեզ և՛ս սաստկապէս.
զի կամեցաւ ՚ի հոգիս հարկանել. որում վտանգի ո՛չ մեր նախ-
նիք և ո՛չ մեք կարացաք տանել. այլ՝ հանապազ բողոքեաք
և բողոքեմք, Թե չէ մեզ հնար հաւանիլ և յանձն առնուլ
զօրէնս օտարս. և որչափ քննադատիմք, այնչափ առաւել
հարկիմք Թշնամանել, և ակամայ կամօք անարգանս ածել
պատուոյ արեացդ. զի Թէև արտաքուստ հաւան ոք ցուցցի,
՚ի ներքս ՚ի սրտի չհաւատայ այնմ. այլ ծաղր առնէ։ Ո՝եք
Թէ ՚ի մեր օրէնս միշտ հաստատուն մնամք, քաջ գիտեմք
ծո՛ւլեն առնել ալքայիդ ալքայիդ. զի և օրէնք մեր հրա-
մայեն ծո՛ւլել Տիրանց և հնազանդ լինել միամտութեն սրտի
որպէս ՚ի. իսկ որք եւանեն արտաքս յօրինաց մերոց, նո՛ք և
քնաւ իսկ չանսան հրամանաց ձերոց, և չգործեն ինչ քաջու-
Թի և ուղղութի ըստ կամս ձեր. այդ հրամանս տուք ասել զօ-
րագլխաց արեացդ, Թէ ո՛ր ՚ի հայոց անտի՝ որք հաւանեալ
պերոզի՝ յանձն առին զօրէնս նո՛ր, վաստակ ինչ ցուցին ըստ
արժանւոյն ՚ի մրցմունս մարտի և կի՛ւ յայլ գործս. և ո՛չ մի
քնաւ։ Ո՝.այլ արդ այժմ կատարեալ ձեր զկնդիր մեր գրով
և կնքով՝ խնդրեցէ՛ք ՚ի մէնջ որպէս ՚ի ծառայից զձեր պատիւ
և զհպատակութիւն. և մեք պատրաստ եմք մատուցանել
ձեզ զնոյն իբրև տեառն։

Ընդ. Ա՝ծէք վաղարշայ և իշխանաց նո՛ր զբանն վահանայ՝ և
զարմացեալ ըն անվեհեր համարձակուե նորին և ըն խմաստուն
ասացուածոն, աւիքին միաբերան գովեցին զնա, և յօժար մտօք
կամեցան կատարել զնմ՛ խնդիր նո՛ր. և Թագրն կրկին խօսե-
լով ըն վահանայ և ըն այլ ուխտակիցս նո՛ր՝ ասէ. զնմ՛՝ զոր ինչ
խորհեալ է ձեր, և զոր ինչ խօսեցաւ աստ վահան, տո՛ւեալ
եղիցի ձեզ մեր գրով և կնքով այսօր մինչև ց յաւիտեան. և
մի՛ ոք ՚ի Թագաւորաց՝ որ ունիցի զայս գահ, իշխեսցէ ջրել
զայդ իմ հրաման և զձեր ուխտ։ Ո՝.և զայս ասացեալ՝ արձա-
կեաց զնոսա։

Ո՝.և յերկրդումն աւուր իշխանք պարսից գիտացեալ զկամս ար-
քայի, Թէ կամի պատիւ ինչ իշխանութեն տալ վահանայ,

առաջի արկին նմա՝ կարգել զվահան՝ որ և իշխան տանն միւ-
միկանէից , վանգամոյն և թագաւորեալ ի վէր ամ հայոց ։ Ա-
իբրև ծանուցին զայս վահանայ , ի յանդիմանս լինել նը վերա-
տին առաջի արքային՝ ասէ վահան . ընդդիմանալ կամայ ձե-
րոց և հրամանի՝ չունիմ իշխանութեի , բայց այդ ձեր հնարհ
կարի մեծ է առ իս և առաւել . ես կամիմ յառաջագոյն գործ
ինչ ծառայութեա յուցանել , և ապա արժանանալ հնարհացդ .
և յայնժամ որ ինչ հաճոյ էր ձեզ առնել , հաճոյ էր նոյն և
ինձ մեծապէս . վայ աղաչեմ , եթէ ձեզ կարք իցեն , առ այս
նոճապ ներեսջիք ինձ ։

Ասակ թագաւորն և իշխանքն լուեցուցեալ զբանս նորա՝ ետուն
նմ զգահ ոտրութե մամիկանէից , և զիշխանութի սպարապե-
տութե . ետուն և ուխտակից նախարարաց նը իւրաքանչիւր
ըստ իւրեանց արժանաւորութե՝ պատիւ իշխանութե և պար-
գեւս ։ Ասէր ապա թագաւորն ցվահան . գոհ ես զմեզ
վահան սպարապետ . բարւոք կալաք , թէ պիտի և այլ ևս ինչ ,
ասա ։ Պինսի ետ վահան , և ասէ . զոր ինչ ձեր բարերարու-
թիդ արար մեզ , այ տեսչութե էր անկ՝ և ոչ մարդոյ . զի
այ է լինել անոխակալ և մարդասէր , պարգեւատու և բարե-
խնամ . դուք աւասիկ անոխակալութ Թոզիք զյանցանս մեր-
սու մերոյ . ցուցիք և զսէրդ առաւել ք զոր մեք արժանաւո-
րեաք . ետուք մեզ պարգեւս առատութ ; և մեծարեցիք
զնուճաստութիս . և զգլորեալ և զկորուսեալ զնս մեր կանգ-
նեցիք . և զիմ մեռելութի ևս կենդանացուցիք ։ Այլ որով-
հետև հարցիք և համարձակեցուցիք զիս՝ զարդարն ասել ,
առացից և ես՝ զոր ունիմ . այլ եղէք կենդանացուցիչ մեռե-
լութես իմոյ , կամիմ Թէ և բովանդակ անձնս յարուցեալ
էր . զի զկնաս գեռևս մեռեալ տեսանեմ ։

Ասէր Թագաւորն , և ասէ . սէրն յայտնապէս ծանօ մեզ
զբանդ , զի դիտացաք ։ Ասէ վահան . եթէ հնար ինչ է ,
արասջիք ընդհարել ներսեհի կամսարականի՝ զտանուտէրութի
կամիսարականաց . նոյնպ և զնորութի արծրունեաց (զոր վրդո-
վեալ էին պարսիկք ի չարախօսութէ բարծումայի) տալ սա-
հակայ արծրունւոյ . ապա բովանդականի ընդհարեալ ի ձենջ
գիտեի զիմ կենդանութի ։ Պինսի ետ Թագն , և ասէ . որով-
հետև նախ և առաջին զայդ պարգև խնդրեցեր ի մենջ , ե-
զինչն վն քո տուճեալ ներսեհի ոտրութի կամսարականաց . իսկ
յաղագս տոհմութե արծրունեաց՝ Թոզ վայր մի , զի իւրեանց
ծառայութէ արժանասցին այնմ ։ Այլ դու այժմ գոհ լեր
մերոմէ պարգեւի . և ջանայ տիրասէր լինել յայսմհետե և
արդարասիրտ , և երբէ բարեաւ ի քոյ ընտանիս և յաշ . և ի
հասանել ի մենջ հրամանի առ քեզ՝ կամք կայ և պատրաստ .

և յառաքել մեր մարզպան յՏիզ հայոց՝ լիակիս նամատետուր և
ձեռնտու :

Օ այս ասացեալ՝ բազում պատուհով յուզարկեաց զնա և
զուխտակիցս նորա : Եւ նոյն ընտրհակալութիւն հրաժարեալ յար-
քունէ և յիշխանաց նոր՝ եկին յՏիզ հայոց օրհնելով և գովելով
զնա : Եւ ընտաւղ նոյ յովհան հայրապետ մանդակունի նշանաւ
խաչն , և սքանչելիք մեծին գրիգորի լուսաւորչին . և օրհ-
նեաց զամենին . և ողջունեալ զնա՝ առ . Յետ այսորիկ անձն
իմ՝ ի տէր , որ զձգնեալ որդւոյ եկեղեցւոյ ընդհաց զքիրան
երեսաց . հանդոյց զաշխատութիւն , մնջրեաց զաչս զնոսա ,
լուծաց զոգիսն հաւատարմաց՝ ուխտապահութենէ ջրոցն , և
զգեցոյց աւգն հանդերձ փրկութենէ . ընդհեցէք բարերարն
բարեխոսութեամբ օգոյ իւրոյ զարդարել զձեզ և զարդու երկ-
նային փառաց :

Եւ ասպա միաբան ամենքին խնդալից ցնծութեամբ եկեալ՝ ի նոր
քաղաք՝ այն է վաղարշապատ , մտին՝ ի կաթուղիկէ՝ եկեղե-
ցին . և մատուցին գոհութեան առ ած , և լնծայեցին քաղցր
նուէրս : Եւ կայել անդ աւուրս ինչ՝ ուրախ լինելին՝ ի տէր ,
հոգաշունչ միանգամայն և լնլուլ զկետս աղքատացն : Եւ
ապա չուեալ անտի՝ եկին և մտին՝ ի դուխին քաղաքն . և հան-
դեան անդ՝ փառաւորելով զաստ :

Ի. Իսկ վաղվղի յետ արձակելոյ զվահան՝ առաքեաց՝ ի
հայս զմարզպան ոմն անդեկան անուն . զորմէ ասէ փարպե-
ցին , Թէ էր * այր խելացի , մտադիր , խնամատահայեաց , որ
,, գիտէր Ճանաչողութեամբ որոշել զիմաստունն յանմտէն , և
,, զլաւն՝ ի վատթարէն ‖ : Որում ասէ՝ * տեսեալ օրըստօրէ
,, զգօրավարին հայոց զնոն մտմիկոնեից վահանայ զիմաստից
,, զառաջատեսութեն , զարդարախոհութեն , զպաշարհահո-
,, գութեն , զքաջութեն սրտի , զդիպողութեն պատշաճ յամ
,, իրս , և՝ ի քնաւս զյառաջադիմութեն ‖ , զարմանայր ընդ-
նա : Եւ հոյեցեալ՝ Թէ յոր ինչ գործ կարգեր զնա , և ս և՝ ի
գժուարինս , այր յաջողեր նմա , և ամ ինչ գիւրաւ և անայ-
խատ վճարեր , խանդաղատեր՝ ի վէր նր , և սիրեր զնա յոյժ .
նաև՝ ի դուռն գրելով ծանուցաներ ատեպ զլաւութենէ նր :

485 Վասն եղև ընդ այն աւուրս գնալ անդեկանայ առ արքայ . զի
կոչեր զնա վաղարշ . և՝ ի լինել խօսից՝ ի վերայ վահանայ՝ ընդ
բանս գովութեն խօսեցեալ զնմանէ անդեկան առաջի արքայի
և ամ աւագանւոյն . զոր ինչ գրեալ է իմ ասէ առ ձեզ վճռն՝
զառաւելն խնամոյնք . ինեանդ դի նա օր ըզօր ածէ՝ ի լաւուն .
որոյ վճռ իսկ համարձակիմ ասել այսօր առաջի ձեր , Թէ նա
միայն է արժանի լինելոյ մարզպան՝ ի վերայ Հայոց . և
Թուի Թէ՝ ի կենդանութե նր զայլ մարզպան յղել՝ ի հայս ան-

դեպ է · քանզի ոչգիտէ ոք մարզպան գնասցէ անդ , չունի զայն ընտրէ՝ զոր նա կրէ յանձին իւրում · զի սակաւ ոք յիշի գտանի համեմատ նմա ։ Ա.Ղ. 485

Այս գրէ՛ զտարր մարզպան յորժամ՛ի հայս գնայ , ըզգի այն երկիր մեծ է յոյժ , ամն երկուս և երիս հազիւ կարէ ձանաչել զնրա ծին , և զդիւրն և զդժուարն · և ապա որոշել ըզմարդիկ՝ զլաւն և զվատթարն · և անդիտութիւնք վարելով՝ խառնիխուռն լինի գործ իւր և ծանր յոյժ · իսկ նա քնիկ յիշէ անտի է , և զնմա յակամէ ձանաչէ · զլաւն առ լաւս ունի , և զանպիտանս առ յետինս ։ Ածող զայս , զի պարսիկ մարզպանք կնաւ գնան անդ՝ և որդւովք , ծառայիւք և աշխանովք , իշխանօք և բարեկամօք , և ուստեն ընտանի ըզհասս աշխարհին · որոյ վ՛ն երբեմն և հարկս՛ի վերայ մարդկան յաւելուն ։ Իսկ եթէ նա ինքն վհատ լինի յայժմուս մարզպան , զիւր տան աւեթ համբարսն ուտէ , և յարքունի գանձուց ոչինչ ծախի ։ Այս ահա հայեցեալ յառն մեծի լաւութիւն՝ արժան համարեցայ զայս խորհել և խօսել առաջի ձեր · դուք գիտէք այսուհետև ընտրել՝ զոր՛ի դէպ ձանաչէք ։

Ուշեալ Թագաւորին և իշխանաց նր զբանն անդրկանայ , նախ գովեցին առհասարակ զուղղութի մտաց նր · որով յաւէտ կամէր վ՛ն բարւոյ հասարակաց՝ զշուք մարզպանութեն , զոր ունէր , այլոյմ ընծայել , քան՛ի նմին կալով՝ զհասարակաց բարին չդիտել ։ Այս ապա զբանն ուղիղ և արդարապէս համարեալ՝ կամեցան կատարել առաւել քան զոր նա խօսեր , վստահացեալ յարդարակորով և յիմաստախոհ միտս վհատնայ ։ Այնմ հրամայեաց Թագաւորն վաղվաղակի միաբանութեամբ՝ ամ աւագաց դրանն հրովարտակ առնել , և կարգել զսպարապետն վհատն՝ մարզպան՛ի վր՛ թովմանգակ Ծին հայոց · և տուեալ զհրովարտակն արքունի՛ի ձեռս դեսպանի՝ առաքեաց՛ի հայս ։

Իբրև հաս վհատն զհրովարտակն արքայի , Թէպետև ուրախ եղև , զի ՚ած յաջողեաց նմ՛ի բարին , բայց խորհելով , Թէ քանի՞ դառն էր այն՝ ուրացողաց և նախանձոտաց , տրտմէր և ծանրանայր ընդ իրսն · այլ զնմն յանձն արարեալ յիշ՛ակն ունելով ելիցն բարութե՛ն և ՚ի նորոգութե՛ն , ընկալաւ զմարզպանութե՛ն · և եղեալ՛ի տանէ իւրմէն հանդերձ զքաւ առ սէր կաթուղիկոսն յովհան · և գնաց նովաւ՛ի մեծ եկեղեցին ։

Այս իբրև հռչակեցաւ այս լուր՛ի քաղաքի անդ՛ի դուռն , գրոհ տուեալ քաղաքացւոցն ուրախութե՛ մեծաւ՝ առ հասարակ ընթացան յեկեղեցին՝ նախատրտաշունք և ազատք ,

Ա. Մ. Ա. Մ. ՊՆ
485 485

իշխանք և ռամիկք , արք և կանայք , ծերք և տղայք . և զի
ոչ տանէր ընարձակ եկեղեցին ընդունել զամենին զնա՛ի ներքս ,
բաղումք կային արտաքոյ , և լցան փողոցք և հրապարակք
շուրջանակի : * Այլ եղև այն օր (ասէ գաղափար վարպետի՝ որ
,, և անդ առաջնակայ էր) անյագ խնդութեի , և անսպառ ու-
,, րախութեի ածմասեր բարեխիրացն , և ողջախորհուրդ մտաց
,, լաւահայեցից . և սուգ թախանձալից և տրտմութեի ան-
,, միխիթար խօթամտացն և խարդախաց ‖ :

Ը . Ապա երանելին յովհան մանդակունի կաթողիկոս հայոց
ցնծալից սրտիւ բերկրեալ առաւծ՝ ետ անդ ասղմոսել . * Ե-
,, կեղեցիս օրհնեցէ՛ք զնա՛ծ , և զնո՛ր յաղբերացն Իսրայէլի ‖ , և որ
զկնի . և կարդալ զընթերցուածս յաւծաշունչ գրոց զտեղի
եւնգն Իսրայէլի՛ ի ծառայութէն փարաւոնի . և՛ի գրոցն երդ թա-
գաւորութեց զբան թագաւորեցուցանելոյ դաւթի զորդի իւր
զսողոմոն : Այլ ինքն կանգնեալ՛ ի տեղի աստիճանին՝ ուր քա-
րոզէր , ետ ամենեցուն զողջոյն խաղաղութէ . և բացեալ
զհոգիաբուղխ բերան իւր՝ խօսեցաւ զատենական քանս և
յորդորակս յառաւելութիւն սիրոյ ուխտապահաց և՛ի ըղ-
գաստութիւն դարձի խօթամտաց . զոր և պատշաճ վար-
կանիմ կարդել աստ՝ ըստ գրելոյ փարպեցւոյն , որ էր մի՛ ի
լսողացն :

* Նաղութ կերպարանօք և ազգի ազգի ցուցակութիւք փրկիչն
,, մեր և ձեր յիս քո զիւրոյ գալստեանն և մարդանալոյն՛ ի սո՛
,, և յաւծածին կուսէն՝ ծրագրեալ յայտաբերեր մեզ զօրի-
,, նակն՛ ի սկզբանէ . մարենեաւն զերանելի կոյսն . եկիպտա-
,, կան նշանագործութիւք զանազատուի հրէական օրինացն .
,, զենմամբ գառինն զազատաբերուինն իսրայէլ . օրոյ ձչմարիտ
,, գառինն զենմամբ փրկելոյ էին ամ արարածք . ծովուն
,, ձանապարհորդութիւն՝ զաւազանին զնորածնուի . հեղձմամբ
,, եգիպտացւոցն զՆոյ մարդոյն մեռելութին . ՚ի յորդանան
,, ձանապարհորդելոյ ժողովրդեանն՝ պատահումն , ըստ գրելոյ
,, ՚ի կարգին երկոտասան քղխեցելոցն աղբերցն , և եօթանա-
,, սուն արմաւենեաց ծառոցն , ընտրեաց ասէ փրկիչն այլ
,, և այս եօթանասունս . զորս և առաքեաց ՚ի քժշկուի հիւան-
,, դաց . որոց թէպետ և պղտոյն ձաշակմունք զհամս քաղց-
,, րութե ունէին յինքեանս , այլ անդէն տնկագործեալ՛ ի տեղ-
,, ւոյն ցուցան աղբիւրս : Ապա ելք երկոտասան աղբերացն
,, յորդաբուղխ ականց՝ ի բացարձակ տեղիս ծառալէ , զբնմ
,, անդաստանս ցուցանեն ծաղկալից և պտղալից և պտղա-
,, բեր . որք զերանելի երկոտասանիցս առաքելոցն ունէին
,, զկերպարանս . զորոց և այսօր ասղմոսերգն յայտնեաց լը-
,, ձչմարտուին՝ ըստ ասելոյն . յեկեղեցիս օրհնեցէ՛ք զնա՛ծ , և զնո՛ր

,, յաղթերայն ինչն ։

,, Ա.յս յորդաբուղխ աղբերաց շնորհ նման եդեմեան դրախ_
,, տին աղբեր · զորմանէ (այս զօրմէ) ասէ՝ ելանէր յերկրէ ,
,, և առդանէր զայմ երեսս երկրի ։ Ծեալ այն առաքելոյն
,, ի կուսածին աղբերէ բանին՝ լցեալ ուրթեցին պայմ երեսս
,, երկրի ։ Ի սոցա քարոզուէ ծովուս մեղք մեռանին · արա_
,, րածք կենդանանան · փարատան ընկղմի · խորտիկ ապրի ·
,, ծառայութի տիրոջ · աղատուէն հաստատի · գառն քաշխի ·
,, աղինք անմահանան · ձաշակօղք գառինն՝ երկնաձանա_
,, պարհօղք լինին · անձաշակօղք ծովածոյղք կորնչին ·
,, հեթանոսք իսրայէլանան · սատանայ փարաւոնակերպ ի

,, յորդանանու յորձանան առեղեալ կիզուս ։

,, Ո՛նոր և անպատուին աքանչելեացդ գործ · երեք անարատ
,, մանկունքն զերոյ հնոցին յօղացուցին · և վտակք երկոտա_
,, սան աղբերցս բարոզուէ՝ զջուրսն սկրտուէ աւազանին հրա_
,, ցոյցին · այլ մի և նոյն բարեձև բաքեղանի հնոյն և բաբե_
,, լացի անօրինացն բոցանայր · և աստ զմանոյ՝ աւազանին
,, ջուրք լուծանել զաղտ զղջոյ սկրտելոյն լուսաղաքդել նո_
,, րոգեն · և զարդարուէ Թշնամին հանդերձ գործովք հինն
,, մարդոյն յայրիչ հուր անանցական փոխեալ կիզուն ։ Ա.կե_
,, ղեցւոյ սիրիչք , առաքելոյն որդիք , քսի արեանն գինք , մի
,, ծառայեցուցանէք զոգիս ձեր՝ երկիւղի մարդկան · տուք
,, զկայսերն՝ կայսեր , և զնոյն՝ այ ։ Զեկեղեցիս օրհնեցէք
,, զնոր , և զնոր յաղթերայն ինչն ։ Ա.հա սիրեցեք (այս սիրե_
,, ցիք) զեկեղեցիս , և սիրեցայք յեկեղեցւոյ · զթագաւորս
,, քաղցրացոյց եկեղեցի , զգաղանս ընդելացոյց , զգայլս՝
,, գառինս արար · զձեզ սրբոյծառացոյց , զթշնամիս ձգմար_

,, տուէ ամաչեցոյց ։

,, Ա.յլ ես այսօր առ ցնծալ սրտիս և ուրախանալ մտացս՝
,, համբարձեալ զձեռս ի յերկինս ըստ ծերոյն դաւթայ՝ աղա_
,, ղակեմ առ այծ , զոր ինչ դրօճառեաց (այս գոլեսակից) գո_
,, հուէ նա յաղագս որդւոյն իւրոյ սողոմոնի մատուցանէր այ
,, բարձրելոյ բան · օրհնեալ այր այծ ինչն , որ ետ ինձ ի գա_
,, ւակէ իմմէ նստել յաթոռ իմ · և աչք իմ տեսանեն ։
,, Ձայնակցելով ըստ մարդարէին՝ ասեմ զնոյն և ես · օրհնել
,, այր այծ ինչն , որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյս՝ որ
,, ինձ հաւատացաւ , պատուհոլ շքեղուքն պայծառացեալ ի
,, քեզ ։ Երեսքն պատանձեացին , ուրացօղք ամաչեցան ·
,, փախեաւ ագռոխս , որ առանց այլ կարծեր թագաւորել ·
,, օգնականացն զգեցեալ զամօթ՝ սաստարեալք ընդ սեղանոյն
,, Թագչին · Թիւրեցին ասէ՝ և ոչ ինև · դաշինս կռեցին՝ և
,, ոչ իմով կամաւ ։ Այլ են առանց այլ գոռոզացեալքն · ոչ

,, են

,, են առանց նոյ իշխանացեալքն . ոմք են արիւնահեղքն .
,, ոմք են պոռնկասերքն . տուր ինձ ասէ զաբիսաք սոմնայի .
,, և զնծծ ոչ խնդրեցին . և զնոր զօրուեց ոչ ձանաչէին ։ Ա՚ր
,, են եկեղեցւոյ Թշնամանիչքն , առատնհարուք օրինացն ,
,, սրբուեն պղծիչք , չինիչք մխրատանցն , մոռացօղք ձըշ-
,, մարտուեն , հայհոյօղք արդարոյն . փախեան , և ամա-
,, չեցին ։
,, Ա՚տայր զգլուխս իմ ՚ի ջուր , և զաչս յաղբերս արտաս-
,, ուչաց . և նատեալ լայի զհիպայեցոյն կոյուստ ։ Ա՚հա տե-
,, սիք , ահա մեռանի իպատեհն . այլ մի տայք մեռանել ։
,, Ասատկի առաջի սեղանոյն արիւնահեղն , այլ օգնել փու-
,, թացարուք ։ Վչխատի սեմէի . այլ ձեռն տուք գԹալոյ ։
,, Ո՚վ ասա՝ ասացէք սողոմանի , և ոչ ՚ի քարեղէն սալս գրեալ
,, անթողութի՚ն օրինացն ։ Վ՚ն է ասա . ծածս հարիք ամ հե-
,, Թանոսք . որ ասէ , եկայք առ իս ամ աշխատեալք , և ոյք
,, ունիք զբեռինս ծանրունս , և ես հանգուցանեմ զձեզ . և
,, դուձ՚ Թէ ոչ եկի կոչել զարդարս , այլ զմեղաւորս յապաշ-
,, խարուի ։ Ա՚յլև ձեզ պատուիրեաց Տէրօրագունից և կարո-
,, զայդ Թէ դուք՝ որ կարօղ էք , զտկարուն տկարացն բար-
,, ձէք ։ Կոչեցեալք դուք ՚ի քոյ և բազմեալ՝ պատրաստեցէք
,, ուտել զՀացն երկնաւոր , կոչեցէք և ընդ ձեզ զկաղան և
,, զկոյրսն և զհիւծանդս . և մի տայք Թոյլ նոցն ըստ ապօնեայ և
,, ընդ յովաբայ զեղջերայ սեղանոյն բուռն հարկանել . որ
,, է անգամ մարմին անբեղուն ըստ բուռոյ , և անհամ ըստ Հա-
,, շակոյ . դնել կաԹն յօժարեցուցէք զագեւտան ՚ի սննդա-
,, կանուն . և յուրախարար բաժակին ընդել ուստցէք՝ յա-
,, նուշարար ուրախուն ոգւոյն փրկուե . յայնմ կաԹնե և ՚ի
,, գինւոյ , զոր յառաջագուշակեալ իմաստասէրսն սողոմոն շը-
,, նարհօք սքի հոգւոյն յերգս երգոցն ասաց . ՔՀղի գեղեցկա-
,, ցան ատինք քո քոյր իմ Հարսն , ՔՀղի գեղեցկացան ատինք
,, քո ՚ի գինւոյ ։ Ա՚յլ ՚ի Թմբրական գինւոյն հրաժարե-
,, ցուցէք զախեջծն և զհիւծանդացեալն ոգւով զընկերսն .
,, զոր ՚ի հրեական ժողովրդոյն արբեալ անառակութ՝ ասա-
,, բած գիրք մեծ մարգարէին յանդիմանէ յիշատակէ այժմ
,, և վինչ ՚ի վախճանն . նատաւ ասէ ժողովուրդն յուտել և
,, յըմպել , և յարեան ՚ի խաղալ . և մի դարձեալ ՚ի գինւոյն
,, յայնմանէ , զոր զովտ և նոյ արբին ։
,, Ա՚յլ մի ընդ սեմէի ելանել տայք արտաքս քան զերուսա-
,, զէմ . և մանաւանդ յածել ՚ի խնդիրս որդւոյ հագարու .
,, զիսահակայ տուք սիրել զաւտակ , և ՚ի նմ խնդրել ՚ի զա-
,, ւակէ զմարդացեալն ամ . ՔՀղի զՀարձորդեգիրն ՚ի քարեղէն
,, գրեալ սալն՝ համակ խաւսէ քարոզէ քարտարտացն և չա-

,, բաց .

Ա.ՖԻ 485

,, բաց · զոր և պօղոս ըմ այլաբանութեն առակախօսեալ ա-
,, սաց · քանզի հագար ասէ լեառն սինայ է յարաբիա · հա-
,, ասար է այսմ եղիմի , և ծառայէ որդւովքն իւրովք հան-
,, դերձ · այլ վերին երկիր աղատ է · և թողութե քնի վարդա-
,, պետունին գրեալ յընդունողացն և միացեալ ոչ ի քարեղէն
,, սալն , այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս ։
,, Խազում են եկեղեցւոյ սքի բժիշկք · եկայք այսր ամ աշ-
,, խատեալք , և ոչք ունիք ըմ յառաջագոյն ասացեալսն զբե-
,, ռինս ծանուննս · և աստ ի բաց ընկեցեալ հանգերուք ։ Խոկ
,, դուք որ այժմդ որ ի նեղըս եք լերուք կոչնականք և հրա-
,, վիրակք արտաքոյ յանցաւորացն · եկեք ի հրապարակս և
,, ի փողոցս · ժողովեալ զնմ ախտացեալսն ոգւովք և ըզ-
,, բեկեալս մեղօք ածէք այսր · և բժշկին ամենեքեան բե-
,, րելով ընդ ինքեան զնոստովանութի , և զարտասուս ·
,, և ըստ իւրաքանչիւր ախտից բժիշկքն յայտնի են և պատ-
,, րաստ ։ Ո մնքսաւորն առ մատթէոս աւետարանիչ ածէք
,, և առ զաքէոս ։ Ո պոռնիկս առ կինն պոռնիկ , որ այսօր
,, դուստր է քնի ։ Ո աւազակս առ աւազակն դրախտաբաց ։
,, Ո ուրացօղս առ պետրոս զոնապանն և փակակալ պետ-
,, րոս ։ Նա գին աբելի ինչ ոք քան զաղօթս և զարտասուս
,, ոչ պահանջէ · բայց միայն ի գոյաւորացն՝ հայէ ողորմա-
,, ծութին առ գատաստանաւն ։
,, Նա արդ՝ ոմ ոք քան զայնպիսին կայցէ հեգ և թշուառա-
,, կան , որ վն խուն արտասուաց յերկինից արքայութին վըն-
,, պեալ գտանիցի · և կամ քան զմիւսն և զերկրորդն և եր-
,, ջանիկ , որ ըմ սակաւ օր ըստ օրէ արտասուաց պայծառենից
,, բարուքեան ժառանգիցէ ։ Վանզի եթէ զկին սիրելի և կամ
,, զորդի և կամ զայլ ոք ի կարևոր բարեկամաց տեսանէիր
,, մեռեալ , ոչ ապաքէն լայիր չարաչար , և լռել երբեք և
,, ոգի առնուլ ոչ կամէիր · և արդ՝ զքոյին իսկ զոգիդ տե-
,, սանես հանապազ մեռեալ առաջիդ · և անշէջ հրոյն եր-
,, կիւղ , և գեհենին սպառնալեացն չիշումն միշտ զքոր-
,, հուրդդ խոցոտե · և դու յորսայս անկել հեղգաս · զիարդ
,, հանդարտել իսկ , և կամ առ վայր մի կարիցես լռել և ոգի
,, առնուլ ։ Նաւաստացէք , ղի ես ըմ բանսս իսկ զարհուրեալ
,, դողամ ։
,, Վա՛յ զձեզ աղաչեմ զքոկս հաստատնոցդ գեռևս և ան-
,, գա՛յթիցդ , մի՛ նմանեցուցանէք զաղօթս ձեր փարիսեց-
,, ւոյն · թէպէտ և բիւր բարեաց զանձինս գտանիցէք եղնել
,, պատճառ · այլ՝ ասացէք , եթէ ծառայք անպիտանք եմք ։
,, Նա մի առանց իւղ բառնալոյ ըմ անմիտ կուսանան ձանա-
,, պարհորդիցէք ի հարսանիսն · գուցէ փակ իցէ դուռնն ·

իէ ,, և

,, և մնայցեք ամենայնիւ արտաքոյ : Եւ մանաւանդ դուք ,
,, որք զնամ ցերեկուընն աշխատուի զտօնիդ և զքրտան , ըզ-
,, վաստակոյ և զհանդուիծ՝ յետ յաճախին այգեգործուիծ տրն-
,, կելոյ յոգւոջ ուրուք , յամէ վրխալիցիք , և զբնաւն կո-
,, րուսանիցէք :

,, Արդ՝ եղիցի ձեզ ըստ այդպիսի զարդու և զերկնից փափա-
,, քելի զգենուլ զգարդն . և ըստ այսպիսի ուրախարար պատկի ,
,, որ Թոռնով աւուրս պայծառացուցանէ զտաճարս իւր , զուր-
,, ատեսիկ և զերկնաւոր պատկին՝ զանապականն և զմշանջե-
,, նաւոր ընդունել յաջոյ փրկչին մերոյ և ձեռն յեի քոյի . լսել ըզ-
,, փառաւորեալ և զերանելի բարբառն , Թէ եկայք օրհնեալք
,, հօր իմոյ՝ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն
,, ի սկզբանէ Ցի : Քանզի լիցի մեզ արժանի լինել և անցն՝
,, ընորհօք և մարդասիրութիւն նորին մերոյ և փրկչին յեի քոյի . ըն
,, դուրս հօր՝ միանգամայն և հոգւոյն սրբոյ վայելէ փառք , իշ-
,, խանութի և պատիւ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-
,, նից . ամէն ॥ :

Ե . Եւ եղև՝ իբրև աւարտեաց երանելին զբանս իւր , ըզմ
լալիւն լինէր անդ յեկեղեցւոջ՝ ոմանց ի խնդուէ , և ոմանց
ի գղջուէ ի վերայ ուրացելոցն . և ապա ամենեցուն ողջունեալ
զվահան՝ մեկնեցան անտի . և վահան եղեալ յեկեղեցւոյ հան-
դերձ հայրապետաւն և նախարարօքն՝ գնաց յապարանս իւր :
Եւ ապա անձամբ անձին շրջելով յամ գաւառս Ցին հայոց՝
եղև քարոզ անցն . և ուր ուրեք եգիտ զկրակատունս , կոր-
ծանեաց զնոսին . և շինեաց ի տեղի նոյ զեկեղեցիս . և որպէս
դրե փարպեցին ի յառաջաբանութեանէ իւրում , * քաղեմ և ան-
,, համար ուղղուեաց Ցիս հայոց եղև աքսորող անձամբ , և
,, զայլս յորդորելով զբարեպաշտութիւն ॥ : Եւ ոչ ոք ընդդէմ դարձաւ
նմա . զի անկաւ երկիւղ ի վրայ անցն . և բազումք՝ որք ծա-
ռայէին կրակի , ոմանք հաձուէք և ոմանք երկիւղիւ , Թողին
զսուտ պաշտամունս իւրեանց . և սկսան համարձակ պաշտել
զօրէնս քրիստոնէութեան :

Յետ այսորիկ ձեռն էարկ վահան և յանապատս և ի վանո-
րայս . և նորոգեաց զնոսին . և յաւել շինել և զայլ բազմս ի տեղ-
եօքն՝ որ սուրբեննայ անապատ կոչիւր առ կողմամբք դերջանայ
և եկեղեցաց գաւառի , ձեռնտու ունելով իւր զյովհան մանդա-
կունի . և բնակեցոյց ի նա զկրօնաւորս , և զբազմութիւն ասպա-
խարողաց , և կացոյց ի վրայ նոյ վերակացուս . և ի վերոյ ասացն
կարգեաց տեսուչ և կառավար զան ինքն զղազար փարպեցի .
ոյ գրե ասողիկ . Ե . 2 . և յանձն արար նմա ի գիր արձանա-
գրուցանել զնմա՝ անցս , որք անցին ընդ այն ժամս՝ յաւէտ ի նա-
հատակութիւն վարդանանց մինչև յօր կարգելոյ իւրոյ մարզպան

հայոց · և նա արար և գրեաց լիով ցոյս վայրը ։ Ա.Մ.
Ա.Մակ. ։ Ա.Մակ. ։ Ա.Մակ. ։

Ա.Տիմ. 4. 8 ասն
486 այն , միանգամայն և տեսել՝ թէ վաղարշ չասնէ զգուշանալ ի
կարդն պահել և զայլ խստութիւնս դնելոյն իւրեանց , գրգռեցին
զմեծամեծս ընդէմ նմին : Եւ նոքա յարուցեալ ի վեր վազարշայ՝
կուրացուցին զնա , և եդին ի դիպահոդ . և ընդբերեցուցին
զկաւատ զորդի պերոզայ , որ յաւուրսն ի պատանդի էր առ
հեփթաթս :

488 Ունէր զայս մեծիմն վահանայ մամիկոնէի մարզպանին հայոց՝ Յովհ.կաթ.
գաւ մեծ եղև նմա . զի այնպիսի այր խաղաղասեր և հանճա- Պատմ :
րեղ զրկեցաւ ի թագաւորէն . այլ զի մի ինչ կասկած թշնա-
մոնե ցուցցէ առ պարսիկս , փութացաւ և գնաց ի դուռն
յողջոյն նորոյ արքային . և իւրովք հաճոյական բանիւք և
հպատակութիւ սիրելի եղև յաչս նոր . որոյ վերս իսկ բնիկ պատ-
ուով մեծարեալ կաւատայ զվահան՝ հաստատեաց զնա անդ-
րէն արքունի հրովարտակաւ ի մարզպանութենէ ՀԱյոց . և
արձակեաց ի տեղի իւր :

Ագաթ. Ագաթ. Ագաթ. Ես . Ոայսու ձեռակաւ թագաւորքն յաշխարհին աղուանից Ագաթ.էջն :
ի հայկազունեաց՝ բարեպաշտն վաչագան՝ որ և վաչագան , Կղեմէս :
որդի վաչէի . զորմէ յիշեցաք ի գլ . ծբ . երես . 122 . թոռն Ագաթ.էջն :
արսավիրենայ արքայի , յորոյ աւուրս ստեղծ գիր աղուանից
տուրքն մեսրոպ : Եւ էր սա ինքն վաչական այր խոհեմ և
բազմահանճար , ճարտն և արդարակորով , միանգամայն և
երկիւղած և բարեսէր : Եւ որ սա քրիստոնէութիւն յերկրին
487 իւրում . և նորոգեալ ամրացոյց զքաղաքս և զաւանս , որք
աւերեալ էին յերեսաց պարսից յաւուրս քոնուե յաղկերտի և
պերոզայ . և յարդարել վայելչացոյց զնմա կարգ քրիստոնէութե ,
որ աղաւաղեալն էր ի ծիսս վրդովմանն ծին : Որոյմանն ետ
ժողով առնել ենկեսաց աղուանից հանդերձ երիցամբք և ժա-
ռանգաւորօք եկեղեցւոյ . յորոց մի էր և մատթէոս երէց դա-
րապետ աւանի՝ աշակերտ երանելոյն յովհաննու մանդակունւ-
ւոյ . և գլուխ ժողովոյն էր շուտիսաղիշէ արքեպիսկոպոս
կղերիկան աղուանից . և սահմանեցին քանն կանոնս յաղագս
բարեկարգութե . զորմէ տես ի կանոնագիրս . գլ . լէ :
Այլն այս վաչական արքայ ցանկալով տեսանել զժողովուրդ
իւր առաւելեալ յաճախապատուե , փափաքեր ի ձեռս բերել
զնշխարս երանելոյն գրիգորիսի՝ որ ասի աղուանից կաթո-
ղիկոս , այն է թոռն սրբոյ լուսաւորչին մերոյ . զի ակն յայտնի
ունելով ժողովրդեան զմարմին սրբոյ հայրապետին իւրեանց՝
ջանասցին ի պահպանութի խրատուցն առաքելոյ ի նմանէ :
Այսպա քանզի գիտեր արքայ յաւանդութէ և ի յիշատակարա-
նաց պատմութե , թէ մարմին սրբոյն գրիգորիսի յետ կատար-
մանն նոր յաղուանս՝ տարեալ և աւանիսպեալ եղև ի փոքր սիւ-
նիս ի գիւղն ամարաս առ եկեղեցեաւ տեղւոյն , ետ կոչել

առ ինքն զերեց պեղջն այնորիկ · և եհարց ցնա , Թէ կայ ինչ
նշան գերեզմանի սրբոյն մեծ յեկեղեցին ։ Եւ նա ասէ · քա-
զում են անդ գերեզմանք · և չինք հնար որոշել , Թէ ո՛ր ի՛նա-
ցանէ իցէ սրբոյն · մանաւանդ զի և յաւուրս արշաւանաց պար-
սից ոտնակոխ լեալ են · և մնատակաց չինուածք վեր ի վայր
շրջեալ · յորոց և գերեզմանք ինչ ծածկեալ են ընդ հողով ։
Յայնժամ խորհուրդ ալարեալ վանականայ ընդ իշխանս իւր՝
կամեցաւ քրել և պեղել զհող տեղւոյն · զի գուցէ իւիք նշա-
նաւ ՚ի յայտ եկեսցէ գերեզմանն երանելոյն գրիգորիսի ։ Այլ
զի մի ըստ մարդկային ջանից վաստակեալ ընդունայն լինի աշ-
խատուէն իւր , լաս համարեցաւ ընդ իւրումն քարեպաշտութեն
հաստատուն հաւատով դիմել նախ աղօթիւք առ Յն · ամին
իւրմ գրեաց Թուղթ յայմ երկիր տրուեցեալ իւրոյ առ Եւդիկուսն
և երիցունս՝ գալ առ ինքն հանդերձ ուխտի մանկամբք , և
աղաչել զնծ հոռոմական սպաղատանօք ։

48ա Ի գալ Թողուվիլ ապա բազմաւ՝ ոչ միայն յաղուձանից ,
այլև ՚ի հայոց , և մանաւանդ յԵՂՆ ուսեալոց՝ որ էր յայնժամ ընդ
մասին ընդ Տրուեցեալ աղուձանից , խմբեցան զառաջինն յաւանն
դուռական՝ ուր էր բանակն վանականայ · և անդ կատարե-
ցին զաւուրս երիս զյիշատակ սրբոյն գրիգորիսի աղօթիւք և
պահօք · յորս էր տեսանել զբազումս՝ որք անսուձալ անցուցա-
նէին զօրն ողջոյն · և բազումք ՚ի գիշերի տքնութէ հակելով՝ ոչ
դադարէին կարդալ առ Յն ։ Եւտ այսորիկ կոչեաց Թէոդոս
զնախասացեալ մատենադրս երից դարահոգւոյ , առ որումն կայր
մասն մի ինչ ընչաբաց սրբոյն գրիգորի լուսաւորչին , և ընդ ասելոյ
ունոյց նաև մասն մի ինչ ՚ի հռիփսիմեանց , տուեալ նմա ՚ի յոյժ
հանդէս մարդակուսուց · և ետ բերել զայն ՚ի բանակն ։ Եւ
ապա խորհուրդ կալաւ ընդ երիցունս՝ Թաւրոր մեծ կազմել , և
առաջի ունելով զայն սրբ նշխարսն՝ երթալ յաւանն ամենեքեան
՚ի գերեզման սրբոյն գրիգորիսի , ակնկալեալ հաւատով՝ Թէ ձեռն
միջնորդեսցէ սրբոյն լուսաւորչին հասանել փափաքի նշխարաց սրբո-
յդ Թաւրին նորա ։
Յայնժամ բարձին երիցունք դեսպակաւ յիւրեանց գահանձէ գաւա-
ղանս զնշխարս լուսաւորչին և զայլ ևս մասունս ինչ սրբոց , սպա-
տեալ մեծագին հանդերձիւք և անուշահոտ ծաղկօք · և խաչ
ոսկի ականակապ ՚ի վէր դեսպակին · և զինի ևր գնաց պաշ-
տօնեից՝ եպիսկոպոսաց և քահանայից , սարկաւագաց և դպրաց
խաչիւ և աւետարանաւ , և բազմութիւն բազում ժողովրդոց ։
Եւ ՚ի գնալ իւրեանց հնչեցին ՚ի Հանապարհին անհատ բարբառով
զերգս և զօրհնութիւն · գնացեր զհետ բազմաւեալ և ինքն Թէոդոս
և Թագուհին և իշխանք առ հասարակ և ասմունք ժողովրդեան ։ Եւ զի գարնանային էր ժամն , յանկարծակի մեծա-

ցան երկինք ամպով , և տեղաց յորդ անձրեւ ։ այլ բարեպաշտ
489 արքայն քաջալերեր զամենին մի ինչ վհատիլ ։ և իջեալ ինքնին
յերիվարէն՝ ընկեր ի մէջ բանակի պաշտօնէից , և հրամայեր
պնդել հանդարտիկ և ընդ կարգի ։ մինչև եկեալ հասին մօտ ի
գիւղն ամարաս ։ և բանակեցան յընդարձակ հովտի միում ,
և հանգեան անդ ։ Եւ յայնմ գիշերի բազմօրինակ տեսլեամբ
յայտնեաց սբն գրիգորիս զտեղի նշխարաց իւրոց մնալոյ ի
երիցու և այլոց ոմանց ի բարեկրօն երիցանց , և նմին խակ
արքայի ։

Ե ։ Այսպա ի վաղիւ անդր գնացեալ բազմութեանն հան-
գերձ Թագաւորաւ՝ բրեցին զտեղի գերեզմանացն ։ և հան-
գիպեցան յանկալի գանձուն ։ և ընդ որում գրի ի հին ձառ-
ընտիրս , * ի բանալ անդ գերեզմանի սբոյն , և յերևել նշխա-
,, րացն , անընդելական ի՛մն բուրեաց անուշից հոտ ։ ընդ որ ի՛
,, զարմացման լեալ արքայ՝ հարցանէր որ մերձն կային , թէ՝
,, և ձեզ հարկանի՞ անուշից այս հոտ , որպէս և ինձս ։ որոց
,, պէսպէսեալ , թէ նոյնդ և մեզ ։

Յայնմ վայրի միաձայն բարբառով երգեցին առհասարակ օրհնաբանի ի բարձունս ։ և նստեալ Թագաւորն առ գերեզ-
մանի սբոյն ի վէր գետնոյ , հրամայեաց եւս բերել ազնիւ սպաս
և զգեստս արքայական ։ և սիրեալ զոյն ի վէր մաքուր տապա-
տակի (որ բարակ սեփհեայ) կալաւ ի վէր ծնգաց իւրոց ։ և
երիցանքն հանեալ ի տապանէ զնշխարան՝ հաւաքէին ի տա-
պան յայն ։ Ոտին առ մատնոյ սբոյն և գերկու ապակի ա-
նօթս ։ որոյ ի միում կային նշխարք ինչ սբոյն պանդալեանի
բժշկին ։ և ի միւսումն կաթիլք արեան սբոյն զսքարիայ զորս
ամփոփեալ էին անդ աշակերտաք սբոյն գրիգորիսի՝ նշանակել
զնոսին յանուանէ ։

Յետ այսորիկ եւս արքայն լուծանալ անոյշ գինւով զսբ նշխարս
երանելւոյն գրիգորիսի , և օծանել մեծագին իւղով ։ և ժո-
ղովուրդք առ հնարիկ յառաջ մատուցեալ՝ եառնուն համբոյր սբոյ
նշխարացն ։ Յայնժամ հրամայեաց Թագաւորն՝ տալ մանր իւրա-
քանչիւր եպիսկոպոսաց ի նշխարաց անտի երանելւոյն հայրապետին
իւրեանց գրիգորիսի՝ առ ի միխիթարութենի վիճակելոց իւ-
րեանց ։ և զմի մեծ մասն անդէն յամարաս եձոդ ։ ուր և
էարկ հիմն շինուածոյ նորոյ եկեղեցւոյ ի վէր գերեզմանի սբոյն ։
զոր և կոչեաց սբ գրիգորիս ։ Ետեալ անտի սրբոյն ամ բազ-
մութեան՝ դարձաւ անդրէն յարքունիս աւանն դաւռական ։ և
անդ հանգոյց զնշխարս սբոյն , ի բաց առեալ ան-
տի և զերկուս այլ փոքրիկ նշխարս ։ որոց զմին եդ ի մատ-
րան դաստակերտին , զոր շինեալ էր յանուն դստերն իւրոյ ,
որ կոչիւր խնձիկ ։ և զմիւսն առեալ ընդ իւր շրջեցուցանէր

միշտ ՚ի բանակին ։ Եւ այնուհետեւ ըստ սահելոյ ձառընտրուց՝ երկիցս ՚ի տարւոջ կատարեր վաչկան արքայ զՀանդիսաւոր ժոմ մեծ սքանչելի գրիգորիսի զաւուրս երիս . և անձամբ յոլեր պարապեր աղօթից և պահոց և ՚ի տուրս ողորմութեան ։

Ոչհաս լուր յայտնութեան նշխարացն սքանչելի գրիգորիսի և ՚ի մեծն Հայս. և հաստատեցաւ կատարել զժոմն յիշատակի նոր ամ յամէ. և թէպէտ նաեւ յառաջնմէ իսկ գոյր ՚ի Հայս յիշատակ սքանչելի , բայց ոչ երեւէր՝ զկնի այնորիկ կարգեցաւ առնել ժոմ՝ մատ յաւուրս գիւտի նշխարացն նորա . ըստ որոյ և ՚ի ժոմացուցի ոչ գնի պարզապէս , ժոմ գրիգորիսի , այլ՝ գիւտի նշխարացն գրիգորիսի աղուհանից կթիշկի ։ Ո պատմութեի գիւտի նշխարացն այսր սքանչելի՝ որ եղեւ ՚ի ՃՄԿս կայսերութեե զենոնի , խառնեմն ոմանք ըստ պատմութեե գիւտի նշխարացն սքանչելի գրիգորի լուսաւորչին մերոյ . և պէսպէս բանս խօսին . զորմէ տես ՚ի ծանօթ. Ե . Յետ այսր գիւտի յաւուրս նորին վաչկանայ արքայի՝ ըստ գրելոյ կիրակոսի ՚ի պատմութեէ աղուհանից՝ եղեւ և գիւտ նշխարացն սքանչելի եղիշէի , որ էր աշակերտ Թադէի առաքելոյն , և կատարեցաւ ՚ի կողմանս աղուհանից . ըստ որում յիշեցաք .

Ե . 19 . երես . 298 ։

Ա՛սքնիւ ։ Արեւելի էր ՚ի Հայս յաւուրս սորին վաչկանայ աբգարհատ եղեկս մամիկոնէից . որ ՚ի խնդրոյ արքային սուրբ Հաւս ՚ի վէր պէսպէս իրաց , և մանաւանդ վասն յարգելոյ գնշխարս սքանչ , և զս և զ՚ն ընդհեցելոց , ցուցեալ՝ թէ կարևոր է և օգուտ աղօթս և պատարագս մատուցանել զ՚ն նոքա . ըստ որում է տեսանել ՚ի Ձառընտիրս . զոր և յիշէ վանական վէրպ ՚ի Ձառս ինչ Հարցմանց իւրոց ։ Այնպէս երևելի էր ՚ի Հայս յաւուրս այսր վաչկան արքայի և մնուշէ եղեկս սիւնեաց յաջորդն առեփաննոսի . և առաւել ևս երևելի եղև յաջորդն մնուշէի պետրոս եղեկս սիւնեաց այր բանիբուն , և հզօր ՚ի գրուածիս , քերթօղ սասցեալ . և սա ևս ՚ի խնդրոյ վաչկանայ գրեաց առ նա բանս ՚ի վէր պէսպէս իրաց ։ Զորս սա և բազում Ձառս գեղեցիկ յօրինուածով . և ներբող սանծալի ՚ի ծնունդ քրկչին , և յարեւնօրհնեալ մայր նոր ՚ի սքն ածածինն ։

Ա.Մ. Ա.Մ. պն
489

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաշտիս զիմաստունէն պատճէրսն ի հայս ի վէր սբ ժողովոյն
գաղիէդոնի. որով վճռ գտաւ եղեալ ժողովին
վաղարշապատու :

490 ԱՅսպէս վայր դեռևս չէր հասեալ ի հայս համբաւ չիմաստունէն քանից հակառակորդացն քաղկեդոնի սբ ժողովոյն. և եթէ զրոյց ինչ եկեալ ևս էր, և կիմ թուղթ ինչ ի դէսակոպեանց, ոչինչ կարէր ներգործել. զի ազգն առ հասարակ ի տառապանս մեծի հալածանացն լինելով յերեսաց կրակապաշտից՝ չունէին պարապ՝ տեղի տալոց այնպիսի զրուցաց, և ի նոսին զբաղելոյ : Ա.ՀԼ յորժամ փոքր ի հանգիստ էառ հայաստան յայնպիսւոյ հալածանաց, սկսան տարածել անդր չիմաստունէն քանք վն սբ ժողովոյն քաղկեդոնի ի Յունս կայսերուէ զնոսին, և յաւուրս կաթուղիկոսութեան բաբկենի յետ երբ քառասուն ամաց այնր ժողովոյ :

Վանզի ոչ գրեցաք ի գլ. ձե. բաղումք ի ջատագովաց դեռս կորսան և յաշակերտաց պարապայ եկեալ ի հայս՝ քարոզէին. ոչ լռէայք ասեն, թէ զնոյրդ յոյնք ժողով մեծ գումարեալ ի քաղկեդոն՝ ընկալան զդիւրն թէոդորոսի մոպսուեստացւոյ, (զոր սբն ահաւակ արդէն երկիցս մերժեալ էր), և հաղորդեցան ընդ նեստորականս, և բաժանեցին զքն յերկուս դէմս և յերկուս բնութիս : Ի չիմաստունէ ասացն զայս, ըստ առանդելոյ ձառընտրոյ, և ըստ գրելոյ նոցա տաթեւացւոյն. ի. 7. երես. 543. բերեալ եղեն և քանի մի թուղթք գրեալք յառաջագոյն ի դէսակոպոսէ և ի համախոհից նր ի պատասխանի և ի պետրոսէ կնափեցւոյ և ի պետրոսէ գաղացւոյ ի ջատագովութիւն եփեսոսի, և ի հարախօսութիւն ժողովոյն քաղկեդոնի :

Ա՛ի ի խուսլաց եկելոց ի հայս եղև շմուել աշակերտ նորին պարապայ. ըստ որում գրէ զանձն նա ինքն շմուել ի պատմութիւն հրաշից իւրոց. զոր և ի մեջ բերէ գրիգոր բարեբերոյս ասորի պատմիչ ի ծննդոց իւրում առ ասսեմանեայ. հատոր. ը. գլ. 42 : Այս յիշի և ի ձառընտիրս. ուր և ասի՝ թէ պարապայ ի մեռանիլ իւրում զաշակերտիւքն զնա գնալ ի հայս, և քարոզել հակառակ ժողովոյն քաղկեդոնի : Այլ զի սոյն այս շմուել՝ որ եղև խուսլաւարար հայոց, անկաւ ի պեսպես մոլորութիւնս, ասորիք չարաիսասէին՝ թէ

Նա

Ղաւանդ :
Ա.տաղ.ը.6.
Փոփ. Խրն :
Աբեն գերմանուս ի Խուսլուս հայս :
Գլուխ. 14 :
Յիշատ :
Յաղագ :
Պատմ :

Նա զայնպիսի յաւելուածս ուսեալ էին ի հայոց։
Ք. Ա. Այլ ի յուզիլ այսպիսի խռովուեց ի կողմանէ դեռ-
կորեանց՝ առաւել ևս յուզիւր և տատկանայր ի նմին աւուրս
աղմուկ շփոթի նեստորականաց. զորոց զաղանդ սերմա-
նեաց յԱ՝ ներուեթեան պարսից բարձումս մծբնացի. որպէս
ասացաք ի գլ. Ե. երես. 152. և 153. զի թէպէտ նա ինքն
բարձումս մեռեալ էր ի յետին աւուրս պերոզի, այլ ար-
քանեակք նր և նոցին գործակիցք ոչ դադարէին ի տարա-
ծելոյ զչար զայն աղանդ ի կողմանս արևելից. և ոչ զի ա-
ռաւել ընդունելի լինցի քարոզուի մոլորութիւն իւրեանց, հմա-
բաւէին ստուերք՝ թէ նաև ժողովք քաղկեդոնի բազմութիւք
վեցհարիւր եպիսկոպոս ընկալեալ էին զվիճակուն նեստորի։
Այլ քզի բազումք յասիացւոց՝ մինդ յասորւոց՝ յառաջնմէ
իսկ չէին հաւան ընդ ժողովն քաղկեդոնի, ի մտոտիապատիր
բանս սմ հայեցեալ՝ սկսան զինիլ ոչ միայն ընդեմ այսոցիկ ա-
ղանդաւորաց նեստորականաց, այլև ընդեմ քաղկեդոնակա-
նաց իբրև համախոհից նոցին։
Իսկ այլք յարևելեայց կային չաշարեալ և վարանեալ ի վե-
րայ իրացս այսոցիկ. քանզի եւտիքեանք և նեստորականք ընդ
իրեարս մաքառէին. և երկոքին կողմանք զժողովն քաղ-
կեդոնի հաւան նեստորի մոլորութիւն ցուցանէին. իսկ քաղ-
կեդոնականք ընդ երկաքանչիւրսն վիճէին։ Այս աստի յայսմա-
նէ՝ բազումք փոյն զերիս նախընթաց ժողովս, և ոմանք
միայն զնիկիայն յիշատակեալ՝ զայլ ինչ ոչ կամէին ընդունել.
և ամ ոգւով խորշէին յայնցանէ՝ որք այլ ինչ քարոզէին. և
զի այսմ կարծեաց իւրեանց համաձայն տեսանէին զհրովար-
տակն զենոնի, ընդ այն հաւանեալ՝ ընդ այլս հակառակէին։
Այս իբրև տարածեցաւ այս ամ համբաւ և ի հայս, եպիսկոպոսք
հայոց ոչ դիտելով զստուգութիւն իրացն եղելոյ՝ տարակու-
սեալ էին. զի յերկուց կողմանց բարի ինչ ոչ լսէին զնր ժո-
ղովոյն քաղկեդոնի, այլ զոր ինչ միանգամ լսէին, չար էր.
և զի ոչ գտան եպիսկոպոսք մեծին հայոց առաջնկայ ի ժողո-
վին անդ, ոչ կարէին հաստ լինել՝ թէ յինչ միտս եղև սահմա-
նադրութիւն այնր ժողովոյ։ Յերին ոմանք յայն աւուրսն՝ ոմ
յայտնի ցուցանէ բան յովհաննու կիթիկոսի՝ զպատճէն հրո-
վարտակին զենոնի ի հայս. զոր ընթերցեալ բազկենի կա-
թուղիկոսի, և տեսեալ՝ թէ բազում եպիսկոպոսք ստորագրեալ
են այնմ, հաւանեցաւ և ինքն ընդ այն իբր ընդ ողջամիտ վիճակ
թի հաւատոյ. քզի արդարև վիճակութիւն այնր նամանկի յին-
քեան նկատեալ՝ ուղղափառական էր, և համաձայն դաւանութե
քաղկեդոնի, ոմ յայտնի ցուցանէ նատաղիս աղեքսանդր հա-
ռոր. Ե. գլ. 3. երես. 96. և 97. և սակայն մերժելի ևս էր, զի

490

իբրև

իբրև դատաւոր եկեղեցւոյ ինքնիշխանաբար էր գրեալ, և միայն զերիս ժողովս յիշատակեալ էր, զնիկիայն, զկոստանդնուպօլսին և զեփեսոսին. իսկ զժողովն քաղկեդոնի անտրոշ թողէր. մինդ թէ լռելեայն և իբր թէուբը դատապարտել, եթէ չիցէ այն հատուածոյն խորհուրդն վիշապուէ՝ որ ի հրովարտակի անդ յաւելն. * Իսկ որ միանգամ այլազգ խորհի, (քան զոր գրեցիք), կիմ խորհեցաւ, եթէ այժմ և եթէ յայլում նոճագի երբ և իցէ, կամ՝ ի քաղկեդոն, և կիմ յո՛ և իցէ ժողովս, զայնպիսին նզովիմք. քայց մանաւանդ զնեստոր և զեւտիքէս, և զայնոսիկ՝ որք համախոհ են նոցա ||։ Այլ թէպէտ դիտումն զենոնի ոչ էր մերժել զժողովն քաղկեդոնի՝ զոր յայլում թղթի առ փեղիքս պապ յայտնի ծանոյց, քայց այսպիսի վտանգաւոր երկդիմի նամակաւ պատճառ եղև բազմաց երկբայել՝ ի վերջ ժողովոյն՝ կիմ մերժել։

491 Ճ. Այլ արդ քանզի՝ ոմն ասացաք, բաբկէն կաթողիկոս հայոց քազում չարախօսութիւնս լուեալ էր զնէ ժողովոյն քաղկեդոնի, իբրև ետես՝ թէ նաև այն հրովարտակ առորագրութիւնք բազմաց ընդ թէուբէ մերժէ զայն ժողով, ինքն ևս կամեցաւ մերժել։ Այլ զի մի ինքնին միանգամ համարձակեսցի յայդ գործ, գումարեաց ժողով եպիսկոպոսաց ի նոր քաղաքն ի կամբուրղինկէն հայոց, այն է էջմիածին ի վաղարշապատ՝ որ ի քաղաքուդաշտի. յորոց մի էր և մուշէ եպիսկոպոս սիւնեաց՝ յաջորդն ստեփաննոսի. կոչեաց և զկաթուղիկոսն վրաց, որում անուն էր գաբրիել՝ հանդերձ եպիսկոպոսք իւրովք, ևս և զկաթողիկոսն աղուանից, և զոմանս ի կողմանցն յունաց։

(1) Այ գումարիլ այսր ժողովոյ՝ նախ նզովեցին զնեստորականսն, զբարծումա և զակակ պարսիկ, և զհամախոհս նոցա, և զմոլորութիւն նոցին. և որս և զմոլորութիւն եւտիքեանց։ Այս ապա ընթերցեալ զպատճէնն հրովարտակին զենոնի, որ ասի հենոդիքոն կիմ հենաստիկոն, հաւանեցան ընդ այն. և ըստ մտաց այնր հրովարտակի՝ բացայայտ մերժեցին և զնէ ժողովն քաղկեդոնի, համարելով նախ՝ ըստ չարախօսութեան եւտիքեականաց և նեստորականաց՝ թէ այն ժողով ընկալեալ էին զդիւրս թէոդորոսի մոպսուեստացւոյ, և զնեստորականացն՝ երկիդ՝ թէ բաժանեալ էին զնէս յերկուս դեմս և յերկուս որդիս ըստ մտաց նեստորի։ Այս ոմն գրի ի պատմութենէ այսր ժողովոյ բաբկենի՝ սահման եդին ի վէճուս իւրեանց, և ասեն. * Մեք հայք և հռոմք, վիրք, և աղուանք, մի խոստովանիմք, նուէք եմք՝ հաստատեալ ձշմարիտ հաւատով ի լաւ անդր, զոր աւանդեցին մեզ ըստ հարքն յերիս ժողովս. ոչ ընդունիմք զայդպիսի բանս հայհոյութիւնք, այլ՝ նզովիմք միաբան զնմանեսն ||։

Ընդդէմ Եւտիքեայ և Նեստորի։

Ի նմին ամի յորում եղև ժողովն վաղարշապատու , նստուա-
ան[ն]աստաս կայսր · և տեսեալ թէ չեմ արևելս շխոթաւթի
մեծ կայ ի վր ժողովոյն քաղկեդոնի , արգել մի և խօսիլ ի
վր այնր ոչ բարի՝ և ոչ չար ։ Ո՛ այն լուեալ հայոց՝ քնաւին ի
քաց թողին զայն սր ժողով , ասելով · եթէ նոքին խոկ յոյնք
ոչ ընդունին զայն ժողով , զոր ինքեանք արարին , մեք զիարդ
ընդունիցիմք զայն ։

Եւ ահա այս եղև առաջինն՝ յորում մերժեցին հայք զսր
ժողովն քաղկեդոնի , ոչ եթէ գիտելով թէ ուրախի էր այն
ժողով , այլ՝ առանց ուսանելոյ զստոյգ տեղեկութի · կի ըստ
հասարակ ասից , անգիտութիք գործոյ , և ոչ անգիտութիք
իրաւանց ։ Եւ այսմ՝ ոմք ասացաք , պատճառ եղեն ասորիք
քատագովք պարսամայ և դեոսկորոսի , որք անհնարին չա-
րախօսութիք առելի արարին յաչս հայոց զայն սր ժողով · ա-
պա թէ ոչ՝ ապդ մեր ոչ երբեք մերժէր զայն ։ Ո՛ այս քազմօք
հաստատէ միխիթար կաթողիկս հայոց՝ ի էսրեքտասաներդ դա-
րուն՝ ի պ[ա]ինեն առ հաւանմանեցիս , ի հաւաքմունս ժողովոյ ·
գաւոռ · էջ · երես · 1190 · * Ո՛ ժողովն քաղկեդոնի ասէ վ[ա]ս այ-
,, սորիկ մերժեցին ոմանք ի հայոց , զի յոմանց վատ արանց
,, (յատորուց) և ի ստաբանից զխռովուիթն սերմանողաց
,, յեկեղեցի՝ յորոց խորչի հոգին սր , չարաչար համբաւե-
,, ցաւ ի հայս , էբր թէ սր և փառաւոր ժողովն քաղկեդո-
,, նի ընկալեաւ իցէ զպաղանդն նեստորի · և այսմ համբաւոյ
,, հաւատս ընծայեալ ոմանք ի հայոց յանգէտս պատրելոց՝
,, հերքեցին զսր ժողովն , և համարեցան մոլորեալ ։ Եւ
յերես · 1222 · ասէ , * Ի գումարիլ ժողովոյն քաղկեդոնի՝
,, հայք ոչ գոլով անդ առաջնիկայ , ոչ մարթացան ի վր հա-
,, ատնել ձշմարտութիե · և զի լուհան յաւորուց , թէ զաղանդ
,, նեստորի հաստատեցին հարք ի քաղկեդոն , վ[ա]ս որոյ սկսան
,, խորշիլ ի ժողովոյ անտի իբրև ի պաշտպանէ աղանդոյն
,, նեստորի ։

Եւ թէպէտ մ[ա]րթ էր յետոյ զատոյգն տեղեկանալով ընդու-
նիլ զայն , ոչ արարին վիրք , զորմէ խօսեացուք յիւրում տեղ-
ւոջ , քայց քանզի միանգամ տարածեալ հաստատեցաւ յամ-
տեղիս առաւ պատմուիչ այնր ժողովոյ , այն միայն մնաց հաստա-
տուն · և որ լինչ յետ այնր պատմիչ լինէր , ոչ ոք հաւատայր ,
ապաստանէր յայն՝ թէ ի հարկէ նախնիքս մեր ի ձմկս բաբկե-
նի քննեալ իցեն զայն , և ըստ այնմ հերքեալ · ոչ յայտնի տեսանի
այս ի թուղթս աթթահամու կաթողկոսի առ կիւրիոն ։ Եւ դար-
ձեալ , զկնի ձմկայ վ[ա]ս պէսպէս իրաց յառաւելուլ առելութե
ընդ յոյնս և ընդ հայս , և ի կարի լինն եպերանօք վարիլ ընդ ազ-
գի մերում , այնուհետև երկաբանչիւր կողմանք ոչ միայն

չկամէին խմանալ զուղիղ միտս իրերացդ , այլ նաև պիտէին զուղիղն ի թիւրս ընդել :

Ճ . Ստանօր գիտել արժան է , զի որովհետև հայք ի մերժել անդ զառաջինն զայն ժողովն քաղկեդոնի՝ իբրև զջատագով վիշապութե նեստորի մերժեցին զայն , զվիշապութի ժողովն և համարեցան նեստորական մնօք սահմանեալ . բայց յետոյ ընթերցեալ զսահմանն , և տեսեալ թէ ոչ զայնպէս վիշապաբի ինչ նեստորական , այլ՝ մեծաւ ներհակն , զատմանային . այլ զի դնի անդ ի վէհս ժողովոյն բառդ *յերկաքանչիւր բնութիս ‖ , կամ *երկու բնութիւք ‖ , կամ *յերկուց բնութեց ‖ , (ըստ սէպսիսութեան Թարգմանութեց հին օրինակաց) , համարեցան՝ թէ այս բառք եդեալ են՝ ոչ ըստ ուղիղ մտաց սբ հարց , այլ՝ ըստ մտաց նեստորի . իբր թէ զայն բաժանաբար իցեն ասացեալ՝ փոխանակ երկուց անձնաւորութեց կամ դիմաց . որովհետև այնպէս լուեալ էին յատորոց . վասն զի թէպէտ և ողջամիտ տեսանէին զվէհս ժողովոյն , բայց կասկածեալ ի բառից անտի ըստ գրգռելոյ նոցին ատորոց , խորշէին անտի . և երկնչէին ասել երկու բնութի ի քս . այլ՝ սովորեցան ասել մի բնութի , առեալ զբնութին փոխանակ լրացեալ դոյացութե կամ անձնաւորութե . յոր միտս առհասարակ ամենեքեան նը մի բնութի ասելով՝ ոչ այլ ինչ խմանային՝ և ոչ այլ ինչ խմանան , եթէ ոչ զայս , թէ քս մի է , չշմարիտ ձև և չշմարիտ մարդ , ունօղ կատարեալ ածութե և կատարեալ մարդկութե , միաւորեալ առանց շփոթութե և առանց բաժանման . չարչարեալ և մեռեալ ըստ մարդկութե , այլ՝ անչարչարելի և անմահ ըստ ածութե :

Ի . յո եր և այս է նոցա համօրէն կարծիք . ըստ որում տեսանի յայմ գրուածս նոցին . ոչ և ի Թուղթս սրին Նեստեսի չնորհալոյն . զորոց զմին տպագրեալ են ի կոստանդնուպօլիս ի Թուին հայոց . ռՃՀ . զդրեալն առ ալէքս . ուր յետ բազմաբնիւք յուցանելոյ երանելոյն զչշմարտութի խորհրդոյ մարդեղութե , և զերկուց բնութե ի քս՝ առանց բառիս երկու , առարկեալ ի դիմաց յունաց՝ թէ ընդ ասպա ասէք մի բնութի , պէսպէս չերեսս . 49 . 50 . և 51 . * Ի սեմք մի բնութի ,, թէ ի քս՝ ոչ շփոթմամբ ըստ եւտիքեայ . . . . և ոչ ըստ չա,, րախառացն կարծեաց՝ շփոթումն կամ չեղչեզումն կամ այլ ,, այլութի արկանելով ի միաւորութէն քսի՝ մի ասելով ,, բնութի , այլ՝ փոխանակ մի անձնաւորութէն , զոր դուք ,, ասէք ի քս . որ է ուղիղ և խոստովանելի ի մեզ . է և ,, մերս մի բնութի ասել զդէմ և նման , և ոչ հերձուածողա,, կան կարծեաց աղագաւ : Այլ յայտ է յայնմանէ , զի յոր,, ժամ բանիւ խոսիմք վասն նորին իրի , ոչ ի նմին միայն դա,,

,, դարիմք , այլև զերկուցն յատկութիւն ցուցանեմք ։ ։ ։ Ա. Տ*
,, Կանգն մի քնութիւն ոչ վն այլ իրիք ասի ի միջնէ , այլ յա- 49 ա
,, զագս անբաժանելի և անձառ միաւորուն քանին և մարմ-
,, նոյն ։ Նաև յերկու քնութիւն ասելոյն , յորժամ ոչ վն բա-
,, ժանման լինին ասացեալքն ըստ նեստորի , այլ վն անշփո-
,, թութիւն ցուցանելոյ ընդեմ չարափառացն եւտիքեայ և ա-
,, պողինարի , ոչ փախչիմք ։ ։ ։ Արդ՝ եթէ մի քնութիւնն
,, վն անբաժանելի և անբաժանելի միաւորութեն ասի , և ոչ
,, վն շփոթման ։ և երկու քնութիւն՝ վասն անշփոթ և անայ-
,, լայլելի լինելոյ , և ոչ վն բաժանման , երկաքանչիւրքն են
,, ի սահման ուղղափառութե ։ Նա զկնի բազմադիմի քա-
նից աւարտե չնորհալին զբան իւր յերես · 77 · այսպէս ·
* եդաք սկ առաջի պատուհասիրութեն ձերոյ համառօտ քա-
,, նիւ զեկեղեցւոյ հայաստանեայց ձշմարիտ դաւանութե ։
Նա երդմամբ հաստատե անդ , թէ աւելի կիս պակաս ինչ ոչ
եդի՝ քան զոր հայք ի սկզբանէ հետե խոստովանին ։
Բազում և այլ ինչ ի բանից չնորհալւոյն և այլոց վկայ
մարթ էր աստ յաւելուլ , բայց զի մի զարտուղեացի ընթացք
պատմութես , թողցուք ի բաց · և բերցուք ի մէջ միայն ըզ-
բան լամբրունացւոյն , զոր գրէ առ ոսկան ձգնաւոր՝ այսպէս ·
* Ի քնութի՝ յոր և իցէ ժամանակ՝ որ ասացաւ ի հայոց
,, եկեղեցի , ոչ թէ ի ստուգաբանելն ձգրտեցաւ , որ ի մի
,, քնութի ասելն՝ ուրացան ի քէս կամ զմարմինն կիս զնծու-
,, թին , այլ՝ զերկուսն դաւանեն ամ ամծաչունչ գրոց ըն-
,, թերցողութե · և մի քնութին՝ ե բացատայնութի , և ոչ ձչգը-
,, տուն · (կամ ասել · մի քնութի ասելն՝ բացայայտե զմիութի
,, անձնաւորութե , և զանբաժանելի միաւորութի · և ե բացա-
,, ձայնիլ բառիւ , և ոչ մտօք · ոստի և յաւելու) ։ ։ ։ բայց
,, բառն ասե ոչ զստուգութի իրին յանդիմման կացուցանե ·
,, այլ՝ի ստուգելն ամծ և մարդ ասելումն՝ հաւաստի երկուքն ·
,, ոնզ և վկայեն այն հարքն , որոց դուք աշակերտիք և մեք ։
,, Արդ՝ եթէ խաղաղութե սիրօղ էք , վն ոսկ բառի վնաս-
,, վութի ընդէր նիւթէք ։ Կենիք ասել , թէ զի առաքելոյն
,, (բանն) զտեղի առեալ , որմէ հաւաստալ յարդարութի ,
,, և բերանով խոստովանել զփրկութի ձշմարտութե ։ Ա՛հա-
,, ւասիկ և բերանով խոստովանին (հայք) ամծ և մարդ · և ա-
,, շակերտին պօղոսի և պետրոսի , աթանասի , գրիգորի , և
,, որոց ըստ նոն , որք զայսոսիկ այսպէս վկայեն ։ Նա ի վեր-
ջոյ յաւելու ասել և զայսպիսի ինչ · * Ասա գուեհիկ բանին՝
,, ի միոյ բանի վն ունիմք զմերոյսն · և ի ծաղկելոյն իմաստ-
,, նոյ առ իմաստուն՝ զմի և զնոյն դաւանեմք ։
Ե · Ասէ որք երբեմն ասէին զհայոց , թէ նք մի քնութի

ասե-

ասելով զեւտիքեայ կարծիս ունին , զայս յայտ դարս մերժե-
ցին հայք , և ցուցին՝ թէ ոչ ըստ մտաց եւտիքեայ , այլ՝ ի ցոյց
միոյ անձնաւորութեան ասեն և վն անբաժանելի միաւորութեան
երկուց բնութեանց . ոյք տեսանեն այս յայտ գրոհածս նոցա . զորմէ
յետ բազմ ինչ խօսելոյ վէպացն հայոց՝ ի ձեռս խաչիկ կաթողիկոսի
՝ի տաճարորդ գարուն՝ ի Թուղքն առ մետրապոլիտն սե-
բաստիոյ , առ ասողկայ . գ . 21 . յաւելուն . մի կարծէք ըզ-
մէնջ ասել , թէ * միաւորութիք (բնութեց՝) յեղումն կամ շիտ-
,, լութիւն եղև , և կամ՝ ի բաց բարձումն ասել միոյն վմիւսն .
,, և ոչ դրձել անյեղութիքն և անշփոթութիքն կամ մարմնաւո-
,, րութեն էնմարտութիք՝ քակտումն բնութեց ասել ‖ : Այս
այս բան ամենևին նոյն է ընդ այնմ , զոր գրէ սքէն լևոն յերդ
ձառին՝ որ յաղագս չարչարանացն տեն . յերես . 53 . թէ * միա-
,, ւորութենն ոչ եմոյծ զշփոթումն . և ոչ յատկութի (բնու-
,, թեց) ՝ի բաց եբարձ զիաւորութին ‖ : կամ ընդ այլում թարգ-
մանութե . * ոչ՝ ի մէջ բերե զշփոթութի և ոչ՝ ի բաց բառ-
,, նայ զմիութենն՝ յատկութի (բնութեց) ‖ : Զարեն զկնի այ-
դոքիկ վէպդ և զայս . * Այսոքիւք բաւականապէս՝ ի նանիր
,, գայթակղէլոյն՝ ի մեզ լուծցին կարծիք՝ զմի բնութի եւ-
,, տիքեայն ասելով . զորս նզովեմք և օտար վարկանեմք յայ-
,, և յընդհանրական եկեղեցւոյ ‖ :

Այսպէս և՝ ի ձեռս միխիթարայ կաթողիկոսի՝ զոր վերագոյնդ յի-
շեցաք , ՝ի լինել այսպիսի խնդրոյ՝ գրեցին վէպք հայոց պէտի
առ հռոմայեցիան . ուր յերես . 1214 . ասեն այսպէս . * Ար-
,, պետ և ոմանք՝ ի հայոց երբեմն մի բնութի ասացին՝ ի քո ,
,, բայց այդու յայտ առնեն զանբաժանելի և զանձառ միա-
,, ւորութի բանին և մարմնոյն և հոգւոյն բանականի՝ ընդեմ
,, բաժանման նեստորի և նմանեաց նորա . զի՝ ի մեր լեզու
,, բնութենն հոմանուն է , և երբեմն զանձնաւորութի նշանա-
,, կէ . . . այլ ըստ կարծեաց հերետիկոսաց՝ շփոթմամբ և այլ-
,, այլութբ կամ փոխարկութբ ոչ ոք ասաց . ոյք ստութբ ամբաս-
,, տանեալ են զմէնջ՝ ասելով , թէ հայք մի բնութի միայն
,, ասեն՝ ի քո , և այն՝ ածային , և ոչ մարդկային . . . այլ
,, այնք՝ որք զայդպիսի ստութիս խօսին զմէնջ , և այլք նմա-
,, նիք նոցին , զորս ոչ ճանաչեմք , ամ իրօք մոլորին . որ թէ-
,, պետ և հայ իցեն ազգաւ , բայց ոչ էին յեկեղեցւոյ հայոց ,
,, այլ՝ ի ժողովրդանոցէ սատանայի . որպէս ասէ յովհաննէս ,
,, ՝ի մէնջ ելին , այլ ոչ էին առ՝ ի մէնջ . քանզի եկեղեցի հայաս-
,, տանեայց զայնպիսի մոլորութիս միշտ հերքէ և նզովէ՝ հան-
,, դերձ համախոհ եղելոքըն . և եղիցին նզովեալ ‖ : Այս դար-
ձեալ յաւելուն ասել . յերես . 1265 . * Աստ հաւատոյ հայոց՝
,, ոչ մարդկային բնութին փոխեցաւ յածային , և ոչ ածայինն

,, ՝ի

,, ի մարդկային. այլ՝ աճմային և մարդկային բնութիք միաւո-
,, ըեցան ի մի քո անշփոթ և անբաժանելի միաւորութիք.
,, ուստի և տառիք մեզ դնեն ի վէր ազգիս Հայոց ‖։
Ա. յերես. 1232. Ծանուցանեն, թէ Հայք յայնժամ խորշին
յերկու բնութի առողաց՝ յորժամ ըմ մտաց նեստորի լինին ա-
ացեալքն. ապա թէ յուղիղ միտս ասիցե ոք երկու բնութի,
յայնմանէ ոչ երբեք փախչին. * Այլ թէ ասէն առօղքն երկու
,, բնութի ի քո՝ բաժանաբար ասիցեն ըստ օրինակին նեստո-
,, րի, զայնպիսիս իբր անհաւատս համարիմք. իսկ եթէ
,, զերկուս բնութիս ասիցեն միաւորեալս ի մի անձն որպէսյն
,, ես, զոր Հաւատաց եկեղեցի մեր և Հաւատայ Հաստատուքն,
,, զայս ոչ եթէ մոլորուի համարիմք, այլ ինձէդ՝ արդարուի,
,, արբունի և ճշմարտուի ‖։ Օ տյն կրկնեն և յերես. 1249։
տես և ի ծանօթ. գիր. (1)։ Օ այսոսիկ հարևանցիկ եզեալ
աստ՝ դարձցուք ի մեք ի կարգ պատմուե մերոյ։

Գ Լ Ո Ւ Խ Լ Ա։

Յաղագս Տանուան բաժնէնի. և խոնարհնիսոնէ առմուելի.
ոսր և յաղագս գործոց կաւարտոյ ազգային պատմի
և առաքան ասդաց։

Ա. Ռաքինն կաթուղիկոս կացեալ ի Հայրապետուե 492
տաս. է. մեռաւ ի յաջորդ ամի ժողովոյն վա-
ղարշապատու. և յաջորդեաց զաթոռն նոր սամուել
ի դաւառէն բզնունեաց ի գեղջէ արծկէոյ։ Յաւուրս սորա
ի շինանել շինութեանց վս բանի քաղկեդոնի ժողովոյն, միա-
նգամ սկսաւ արծարծիլ հրդեհ հալածանաց ի կողմանէ
պարսից. քանզի կաւատ արքայ՝ որ նստեալ էր յաթոռ նոր-
ուե սատարութե մոգուց, գրեթէ չամի նմ իրօք անսպայր խոր-
հրդոյ և խրատու նոցուն. ուստի և ի գրգռել նոյ զինս ընդ-
դեմ քրիստոնէից՝ կամակար ձեռն էարկ տառապեցուցանել
զնոմ Հաւատացեալս, և ստիպել զնոս՝ առ ի ընդունելոյ զօ-
րինս պարսից։
Ա. պա հրամանաւ կաւատայ եկեղ մոգուց քաղցեաց նաև յԱն 493
Հայոց՝ Հանգերձ պարսիկ մարզպանաւ և բազմ զօրօք, չինեցին
դարձեալ ի տեղիս տեղիս զկրակատունս. որոց ձեռնտու լեալ
և այլոց պարսից՝ որք աստ և անդ բնակեալ էին ի միջոց աշ-
խարհին Հայոց, արծարծեցին զչարիս հրապարտուե. և որ-
պատճան զոմանս ի ի Թուլատմեաց ի կողմն խորենաց։ Այ զի
ընդեմ դարձան նոցա քաղուքք ի Հայոց, վերստին անկաւ բո-

Յովհ. կաթ. Ա. տող. Ե. 22

Գիտաւ առաքեալոյ. Ա. 26։

վան-

վանդակ աշխարհն 'ի ծուփս և 'ի վիշտս հալածանաց վասն հաւատոյ։

494 Ելեալ յոյժ ընդ այս մեծին վահանայ մամիկոնէի՝ խորհեցաւ և պատրաստեցաւ խորտակել զլուծն պարսից, և վտարանջել 'ինոցանէ. և սպասէր պարապոյ։ Իւ քանզի ընդ այն աւուրս անկաւ գժտուի 'ի մէջ ազգին յունաց և պարսից, զայն առիթ առեալ վահանայ՝ նշկահեաց զնշխանուի կաւատոյ. և միաբանեալ ընդ իւր զնախարարս՝ յորդորեաց զնա դիմել 'ի վրէ նորեկ պարսից, և պաշտպանել զեկեղեցի 'ի վտանգէ չարեաց։ Յայնժամ ապա խրախոյս բարձեալ հայոց առ հասարակ՝ յարձակեցան 'ի վրէ պարսիկ մարզպանին, և հարին զնա և զզօրս նորա. նոյնպէս սպանին և զՇամ մոգս և զայլս բազումս 'ի պարսից 'ի բերան սրոյ. և քանդեցին զկրակատունս նոցա։ Օ այս գրե Ամմիանոս յեսու ասորի եդեսացի, առասելմանայ. հատոր. ա. գլ. 26։

495 Յետ այսորիկ հրեշտակս արձակեաց վահան առ անաստաս կայսր յունաց, և խնդրեաց 'ի նմանէ ձեռնտու լինել հայոց՝ խոստանալով մտանել ընդ իշխանութիւն նորա. այլ անաստաս ունայն յետս դարձոյց զհրեշտակսն վահանայ, զի մի առաւել գըրգռեսցէ զթշնամութիւնն ընդ պարսից, և քայցէ գուռն մեծի պատերազմի, ընդ գրելոյ նորին յեսուէայ եդեսացւոյ։

496 Իսկ կաւատ արքայ՝ որ մեծապէս ոխասցեալ էր ընդ վտարանջել հայոց, պարապ առեալ պատրաստեցաւ գալ խնդնին 'ի վրէ նոյ, և առնուլ վրէժ 'ինոցանէ. բայց խափանեցաւ յայնմանէ խնամոյ՝ 'ի յառնել 'ի վրէ նոր բազում խռովմանէ յայլևայլ կողմանց. քանզի նեղեալ ազգաց եղելոց համօրէն ընդ ձորուբէ նորա՝ 'ի բռնութէ նորին, ասպատակութեբ արշաւեցին յաշխարհն պարսից, և նեղեալ տագնապէին յոյժ։ Վասկուժ առեալ կաւատայ, թէ նախարարքն իւր ձեռնտու են թշնամութեաց՝ սկսաւ տատապեցուցանել զնոսա, և յաւել զայլևայլ անկարգ օրէնս հաստատել։

497 Ընդ որ դառնացեալ նախարարացն՝ ընկեցին զնա յաթոռոյ. և աքսորեալ զնա 'ի բերդն անյուշ կոչեցեալ՝ թիւրեցուցին 'ի տեղի նորին զՋամասպ։ Իսկ կին կաւատայ թագուհին պարսից, որ անուանգ սիրով սիրեր զայր իւր, զանձն 'ի վտանգ մահու եդեալ՝ գնաց յանծանօթս 'ի բերդն անյուշ. 498 և բազում հնարիւք ընտելացաւ բանտապետին. և հրամայեաց նմա զայր 'ի բանտն առ կաւատ այր իւր, և հոգայր ըզպետս նորին. և յանչափ գթոյն իւրոյ ոգւով չափ Ջամասպ զերծուցանել զնա անտի։ Յաւուր միում մտեալ առ կաւատ՝ զգեցոյց նմա զկանացի հանդերձ իւր. և ինքն զգեցաւ զհանդերձս նորին. և յորդորեաց զնա ելանել և փութով մեկնիլ

անտի.

Ագաթանգեղոս. պարս. ա. գլ. 6. և 7։ Ղազարէ. ք։ Մովսէս։ և այլք։

անտի · և ես ասէ մեռայց վասն քո · Թէպետև ինքն յետոյ
հնարիւք ինն զերծաւ ։
Իլեալ անտի կաւատայ՝ գնաց անկաւ առ Հեփթաղա · և էառ 500
՚ի կնուէ զդուստր Թագաւորին նոցա · և զօր բազում ժողովեալ
՚ի նոցանէ՝ եկն յաշխարհն պաղտից · և վանեալ զՋամասպ՝ տի-
բեաց միւսանգամ Թիկրուէ · և յղեալ պատգամ առ անաստաս 501
կայսր յունաց՝ խնդրեաց ՚ի նմանէ զբաշխումն դրամոց՝ առ ՚ի
տալ արքային Հեփթաղայ փոխարէն երախտեաց նոր ։ Ի՚ս յոյժ
կասկածեալ անաստասայ , Թէ կաւատ այնու դրամովք կա-
մի օգնական իւր առնել զՀեփթաղս ընդդէմ յունաց , ա-
նարգանօք յետս դարձոյց զպատգամաւորսն ։
Ընդ որ զայրացեալ յոյժ կաւատայ՝ եդ ՚ի մտի ամ զօրուք 502 Յետս առ
ելանել ՚ի վրէժ յունաց · և յաղագս այսր պատճառի խօսեցաւ ասէ Ղազար
նախ խաղաղուի ընդ ամ շրջակայ ազգս , մանաւանդ ընդ Փարպ. գ. 26 ։
Հայս և ընդ այլ քրիստոնեայս , Թողլով զնոսա կալ յազա-
տութեան քաջական օրինաց , ըստ որում յիշի
այս և ՚ի Թուղթն Հայոց առ յոյնս յաւուրս ներսեսի շնորհղի ։
Իւր ապա գումարեալ զօր բազում յայն ամ ազգաց , ըստ որս
և զտարաւսեան Հայոց գվարդ զեղբայրն վահանայ ընդ իւր
առեալ՝ եկն և եմուտ յՃն ծովից ՚ի ջրիդ Հայս · որում իշ-
խեր Թէոդորոս նախարար Հայոց ընդ իշխանութիւն յունաց , որ
և նստէր ՚ի նախկերտ քաղաք ։ Այս զգհի հարեալ յերե-
սաց կաւատայ՝ եղ ըստ առաջ նոր բազում ընծայիւք , և պատ-
ուով տարաւ զնա ՚ի քաղաք իւր · և խոստացաւ կալ ՚ի ծա-
ռայութեան նոր · և կաւատայ մեծարեալ զնա՝ հաստատեաց կրկին
յիշխանութիւն , զոր ունէր ։
Ը · Կիմէ անտի կաւատայ՝ եկն և պաշարեաց զամիդ քա- Յետս առ
ղաք՝ այն է տիարպետքիր , ՚ի հինգերորդ աւուր հոկտեմբերի , ասէ Ղազար
յամի տեառն · 502 ։ Այլ քննակիչք քաղաքին Թէպետ և չունէին Փարպ. գլ. 26։
բաւական զօր , և ոչ ամբարս կերակրոց , զի յանակնկալ Ագաթ. գ. 21։
պահու պաշարեցան , սակայն չառին յանձն՝ տալ զքաղաքն , Պրոկոպիոս
այլ՝ արիական քաջութեամբ մարտ եդեալ պատերազմէին ։ Յղեաց պարս. ա. 7։
անաստաս կայսր առ կաւատ զիշխանն Հռուփինոս հանդերձ Ագաթ. գ. գլ. 37։
բազում ընծայիւք · և ազաչէր զնա մեկնիլ ՚ի սահմանաց Աղաթանգ.
իւրոց · այլ կաւատ կալեալ էարկ զՀռուփինոս ՚ի կապանս · Ցովհաննէս
և սկսաւ առաւել ևս մարտնչիլ ընդ քաղաքին ։ Եփեսեցոց։
Որ յայնժամ ՚ի յաւիտ ձգնաւոր ոմն յովհաննէս անուն , կիմ
ըստ այլոց յակոբ , այր առաքինի · և էր նա առանձնացեալ ՚ի
միում փոքրիկ բարձր աշտարակի բերդին · և քաղաքացիք
սրտաբեալ եին նմա անդ բնակաբան՝ երկաթի վանդակաւ պա-
տեալ · զի դիւրին իցէ տեսանել զնա և խօսիլ՝ որք յայց է-
լանէին նմա · ուր և մեծապէս ձգներ նա տքնութիւք և անսուա-

ղուԹիւ։ Եւ ի պաշարիլ անդ քաղաքին՝ ոմանք ի զօրուէնն
պարսից, որք շրջէին զպարապաւ, իբրև եկին յանդիման աշ-
տարակին, տեսեալ զնա՝ կամեցան նետաձիգ լինել ի նա. բայց
անդէն վաղվաղակի գօսայեան ձեռք իւրեանց։ Իբրև եհաս
այս լուր առ կաւատ, տեսեալ նոքա զգօսայեալ ձեռանն՝ զարմա-
ցաւ և զահի հարաւ. և եկեալ ինքնին աղաչեաց զնոքա ձգնա-
ւորն՝ ներել նմա. և նա աղօԹիւք ողջացոյց զգօսացեալ ձեռանն։
Ապա և կաւատ ի փոխարէն այսր խոստացաւ զաղատուԹիւն
ամի, որ ապաւինեսցի ի քնակարան նոր։

Յետ այսորիկ տեսեալ կաւատայ, ԹէԹ ի զուր է նմա աշխա-
տիլ մեքենայիւք փոքումբք ի կործանել զպարիսպ քաղաքին,
զի էր ամրաշէն, հրաման ետ կանգնել զայլ մեքենայ մեծ
յոյժ և բարձր ի վէր հողաբլրոյ. զի ելեալ անդ զօրաց իւրոց՝
պատերազմեսցին անտի ընդ քաղաքն։ Տեսեալ քաղաքացւոցն
զայնպիսի ահաւոր կազմուած՝ փոյԹ ի մէջ առին կործանել
զայն. ամին իւրն վաղվաղակի սկսան ականս հատանել ընդ երկիր.
և հասեալ ի ներքոյ մեքենային՝ պեղեցին անտի հող բազում
յոյժ. որով և տկարացաւ հիմն մեքենային. և ապա ելեալ ի
պարիսպն՝ սկսան ի մարտ գրգռել զպարսիկս։ Այն տե-
սեալ պարսից՝ խուռն բազմութիւք դիմեալ ելին ի մեքենայն,
հարկանել և վանել զորս կային ի վէր պարսպին։ Այլ իբրև
ծանրացաւ մեքենայն մարդկամբք, առ ի չգոյէ հաստա-
տուԹեան երկրին՝ յորոյ վէր կանգնեալ էր, յանկարծակի կործա-
նեցաւ. և ծածկեաց ընդ իւրև՝ զորս ի վէր իւր եին, և զորս
զիւրև։ Ընդ այս ձախող պատահար լուծաւ լքեալ կաւատ.
և խորհեցաւ ի քաց մեկնիլ անտի. մինչդ զի կորուսեալ էր
և զայլ բազմուԹիւն յոյժ ի զօրաց իւրոց՝ ընդ ամ իւր չիտուն հա-
զար ոգիս՝ ընդ ասելոյ ոմանց՝ ի պաշարել անդ զքաղաքն զա-
միս երիս, և ի մարտնչիլ ընդ այլս։

Իբրև տեսին քաղաքացիք, Թէ պարսիկք պատրաստին չուել,
սկսան ամբարտաւանութիւ ի բանս նախատանաց Թշնամանել
զնա ի պարապայ անտի. նաև կանայք նոցա դժնդակագոյն ևս
քան զարս իւրեանց նախատակօծ առնէին զզօրս պարսից զառն
և խիստ բանիւք։ Ո՛վ այսպիսի մեծ ապիրատուԹի նոցա տեսեալ
մոգուն՝ որք ի բանակին անդ էին, մատեան առ կաւատ, և
ասեն. այսչափ անագորոյն յանդգնուԹիւն նոցա ոչ միանգամ յայն
իւրեանց անպատիժ. և եԹէ պատերազմեսիս ընդ նոսա, ամօԹ նոցա
մնասցէ զնա ի ձեռս քոյ։ Ընդ այս հաւանեալ կաւատայ՝
մնաց անդ այլ ևս աւուրս քանի մի։

Ձ. Յաւուր միում այր ոմն ի բանակէն պարսից շրջեալ
զպարապաւ՝ եգիտ ուրեք առ աշտարակաւ՝ ստորերկրեայ անցս
շինեալ ի վաղ ժամուց. այլ դուռն անցից փակեալ էր քա-

բամբք ։ Ի բաց առեալ նորա զքարինս, և մտեալ դիշերապն
ի նեղքս՝ եւ ի քաղաքն, և գարձաւ անդրէն. և ի լուսանալ
աւուրն երթեալ պատմեաց կաւատայ ։ Ո՞այս լուեալ նորա՝
հաւ զամանս յիւրոց առաւ, և եկեն ի տեղին յայն. և ոչ ոք
ի քաղաքացւոց իմացաւ զայս ։ Նա թէպէտ կային յայնմ գի-
շերի յաշտարակին անդ կրօնաւորք ոմանք իբրև դեսք, բայց
քանզի նոքա գնախընթաց գիշերն անցուցեալ էին հակամարտ
առ ի կատարելոյ զպաշտամունս մեծի տօնին՝ որ դիպաւ ի
նմին աւուր, ծանրացեալ ի քնոյ՝ ննջեալ էին. և ոչ գգացին՝
մինչ առ նոքօք գործիցի ։ Յայնժամ մտեալ պարսիկ ընդ այն
գաղանի անցս՝ սպանին զկրօնաւորան զայնոսիկ՝ որք ննջէին,
և տիրեցին աշտարակին ։ Նմուտ և կաւատ ի նեղքս ի պա-
րիսպն, և հրամանն ետ զօրաց իւրոց վաղվաղակի սանդուղս
կանգնել արտաքուստ. և զայն արարեալ ի վեր ելին քա-
զումք ։

Նորև իմացան զայս պահապանքն, աղաղակ բարձեալ ի զէն
ընթացան. ընդ որս և այն սակաւ մնարեկ զօրք քաղաքին փու-
թացեալ քաջուբք մեծաւ սկսան հարկանել և վանել զպար-
սիկան. մինչև բազմացեալ ի նոցանէ ստիպել յետս ընդ կրունկն
դառնալ և իջանել ի վայր ։ Նայց կաւատ աղաղակեալ ի
պարսպէ անտի ի վայր՝ հրամայեաց սպանանել զնոսին, որք
կամիցին իջանել անտի. և անդադար խրախոյս քաջալերուէ
մատուցանէր իւրոցն ։ Տեսեալ սպա պարսից եղելոց ի վէր
պարսպին, եթէ չիք նոցա կնար զերծանելոց ի մահուանէ՝ բայց
եթէ յաղթելով թշնամեաց իւրեանց, մնեցին կատաղու-
թեամբ մարտեան ընդ նոսա, և առին զքաղաքն ի տասնե-
րորդ աւուր յունվարի. և կոտորեցին ի նմա ութասուն հա- {503}
զար ոգիս. Թուղ զայնս՝ որք կամելով փախչել ընկղմեցան ի
տիգրիս գետ. Թուղ և զայնոսիկ՝ որք անկան ի ջրհորս. իսկ
որք ի գերութիւն վարեցան՝ էին ոգիք ութ և տասն հազար և
հինգ հարիւր ։

Այլ որք փախուցեալ անկան յաւազ եկեղեցին սրբոյ քառաս-
նից, զերծան նոքա ի խնդրոյ սպարապետին Հայոց վարդայ.
զոր զաքարիա հռետոր ժամանակագիրն. գլուխ · Է · կոչէ փոք-
րիկ Թագաւոր արանայ, փոխանակ դնելոյ իշխան տարոնոյ ։
Յաւելուն այլք, Թէ մի ոմն յեկեղեցականաց եկեալ անկաւ առ
ոտս կաւատայ. և աղաչեաց խնայել յարիւն այնչափ քաղ
քաղաքացեաց, որոց ոչինչ այլ յանցանք գործեալ էր, բայց
միայն զի հաւատարիմ գտան առ իշխան իւրեանց, և պաշտ-
պան եղեն աղատուէ անձանց ։ Ա՛տեալ յայնժամ կաւատայ
եկեղեցին յայն, և տեսեալ զպատկերն փրկչին՝ եհարց, Թէ
որոյ է. և նոքա ասեն, Այն մերոյ. և նա ասէ. սա պատուհա-

սեաց զձեզ, և մատնեաց զքաղաքդ 'ի ձեռս իմ վասն ապիրա-
տութեան ձերոյ։

{503} Ե. Յետ այսորիկ թագաւոր կատաղեաց մի 'ի զօրաց իւրոց 'ի պահպանութեան քաղաքին՝ մեկնեցաւ անտի. և դի-
մեալ 'ի վերայ այլեայլ քաղաքաց 'ի միջագետս՝ էառ զայնս. և անտի արձակեաց զկապեալ իշխանն զՀռուփինոս՝ երթալ պատմել անաստատայ կայսեր. և ինքն կատաղի դարձաւ յաշ-
խարհ իւր։ Ընդ այս դառնացեալ անաստատայ՝ առաքեաց զօր բազում 'ի միջագետս. որք եկեալ առին վերստին զա-
միդ։ Եւ այնուհետև անդադար պատերազմ էր 'ի մէջ պար-
սից և յունաց ամս իբր երկու։ Յորում ժամանակի և մին 'ի զօրավարաց կայսեր արուվբինդ անուն դիմեալ 'ի կողմանս չորրորդ հայոց՝ կոտորեաց 'ի պարսից և 'ի հայոց տասն հա-
զար այր. և դերեաց զբազումս։ Եւ մուշեղակ իշխան հայոց՝ որ տիրէր մծթ յայնոսիկ կողմանս, երկուցեալ 'ի յունաց՝ անձ-
նատուր եղև նոցա, և եմուտ ընդ հպատակութիւն կայսեր. որպէս գրեմ յետոյ ասորի ժամանակակից։

Յետ այսորիկ եղև խաղաղութիւն, և հաստատեցաւ եօթնա-
մեայ հաշտութիւն 'ի մէջ պարսից և յունաց։ Եւ անաստատ կայսր՝ որ բազում ուղղափառաց լեալ էր ատելի, առ հա-
ճոյանալոյ յաչս ռամկին՝ արար բիշմ շինուիս քաղաքաց. ըստ որս չինեաց կիմ նորոգեաց 'ի հիմանց զաւանն դարա՝ աւուրբ միով հեռի 'ի մծբնայ, կանգնել 'ի նմա շինուածս հիանալիս, և կոչեաց զայն յանուն իւր անաստատասուպոլիս. Թէպետև մինչև ցայսօր դարա կոչի այն. զի ասեն պատմիչք յունաց և հռով-
մայեցւոց, որպէս և յոստոսինոս. գէր. ծա. գլ. 15. Թէ որով-
հետև դարեհ աբքայ պարսից յաղթեալ եղև անդ 'ի մեծէն աղեքսանդրէ, վնակ և առաջինն արշակ պարթև՝ զայն քաղաք 'ի պատիւ դարեհի՝ կոչեալ իսկ դարա։ Այս քաղաք այժմ աւերակ է, և սակաւ բնակիչք գոն 'ի սմա. ըստ որս և քանի մի տունք հայոց, որք պատմէին մեզ, Թէ զայն քաղաք շի-
նեալ իսկ տիգրանայ աղբայի հայոց, և կոչեալ իսկ՝ զար-
մանազան. ըստ որում աւերակքն՝ որք մնացեալ են ցայժմ, զարմացուցանեն զտեսօղսն։

Գ Լ Ո Ւ Խ Լ Զ.

Յաղագս հաշտութիւնսն Տրդատի, ասպատակ, գրիգորիսի, ղեռնդի, եւ ներսեհի աշտարաչեցւոյ, որ արար զերկիրդ ծաղոցն գոռնայ, եւ յովհաննու. ոսք եւ յաղագս Տաճրատան վահանայ, եւ մարզպանութեան վարդայ եւ մխեճայ։

Յաղագս հաշտութեանն Տրդատի, ասպատակ, գրիգորիսի, ղեռնդի, եւ ներսեհի աշտարաչեցւոյ, որ արար զերկիրդ ծաղոցն գոռնայ, եւ յովհաննու. ոսք եւ յաղագս Տաճրատան վահանայ, եւ մարզպանութեան վարդայ եւ մխեճայ։

Ցայնժամ սամուէլն հայրապետն՝ ի կաթուղիկոսութեան . ճ . վախճանեցաւ. և նստաւ՝ ի տեղի նորա մեծն՝ ի ներսէհ՝ ի նահանգէ կոտէից, ՝ի գեղջէ աղբերից կամ այլաբերից, ՝ի սահմանացն երևանայ . ամն . իե : Այս յետ նորա սահակ երկրորդ՝ ի գաւառէն Հարքայ՝ ի գեղջէ ուղկայ : Ի սորա առաջնում ամի մեռաւ մարզպանն Հայոց մեծն վահան մամիկոնեան՝ ի բարւոք ծերուէ՝ կացեալ յիշխանութեան քաջութ և բարեպաշտութ ամն . իշ . և զի չորս ամ ևս յառաջն եկայ ինքնիշխան, իբ ամ՝ երեսուն ամ հաշուի տևողութեամբ իշխանութեան նորին : Այս եառ զմարզպանութիւնն Հայոց կրտսեր եղբայր նորին սպարապետն վարդ՝ հրամանաւ կաւատայ սրքային պարսից :

Այլ սակաւ տևեցոյ իշխանութիւնն վարդայ . վ՚որ գի գրդռեցան բազումք՝ ի թշնամութեն ընդդէմ նմա, և գնացեալ առ կաւատ՝ ամբաստան եղեն զնմանէ : Այս Թէպէտ գիտեր կաւատ զբարեմտութիւնն վարդայ, զորոյ և զփորձն առեալ էր՝ ի դժուարին իւրում՝ ի վերայ յոնաց . բայց՝ ի բազմանալ ամբաստանութեանն, և՝ ի խնդրել ամանց՝ ի նախարարաց զվերակացու պարսիկ, կոչեաց արքայ զվարդ առ ինքն . և ընկէց զնա՝ ի մարզպանութենէ Հայոց՝ յետ կալոյ նորա յայնմ իշխանութենէ . ամն . ջ . և առաքեաց՝ ի տեղի նորա՝ ի Հայս զմարզպան մի յազգէ պարսից քուրզան անուն՝ զայր անպիտան և անարի : Յակ վարդ հիւանդացեալ վախճանեցաւ յօտար երկրի . և զմարմին նորա առեալ աղգականաց նորուն՝ ետուն և թաղեցին ՝ի տարսն :

Ի նոյն աւուրս վախճանեցաւ և տէր սահակ կաթողիկոս, կացեալ՝ ի Հայրապետութենէ ամն . է : Այս նստաւ՝ ի տեղի նորա տէր քրիստափոր երկրորդ՝ ի գաւառէն բագրեւանդայ՝ ի գեղջէ տիրատնից : Յաւուրս սորա բազմութիւք հնդաց անցեալ ընդուն ձորայ՝ յարձակեցան՝ ի մեծն Հայս . և անտի յաշխարհն փոքուն Հայոց . և աւար հարեալ տրծից արարին զայլեայլ տեղիս, և կոտորեցին զբազումս մինչև՝ ի կապադովկիա և՝ ի պոնտոս . և ասպատակ սփռեալ՝ ի կողմանս կողմանս՝ աւե-

ըրեին և քանդէին , և ժողովէին կողոպուտ բազմ ։

517 Այլ ի դիմել նոցա ի կողմանս սահմանի , նախարարն գնաւնեաց մեծ այր երևելի և հզօր զօրուք՝ ընդէմ ելեալ նոցա իբրովքն ի տուր տուսերի եհար զբազումս ի նոցանէ . և զայլսն վանէ վախճատական արար յՅեկ անտի ։ Ի հաբանեցւոյց ապա ընդ իւր և զմանս յերևելն նախարարացն Հայոց . որով առաւել զօրացեալ ի վերայ Թշնամեաց շուրջ եղելոց՝ խաղաղացոյց զաշխարհն ։

502 518 Ձ . Ուճեալ ղգործս մեծաժայռ արքային պարսից կաւատ , և ի վեր հանեալ հաւատարմութեանն նորա՝ կարգեաց զնա մարզպան Հայոց , փոխանակ բուրզանայ պարսկի՝ յետ կալոյ նր ի մարզպանութենէ ամն . Ձ ։ Յորս եհաս մեծ զմարզպանուն Հայոց , փոյթ կալաւ ի յանդորրու պահել զնոսն . արար բազում շինուածս , և նորոգեաց զբազում աւերեալ տեղիս ։ Կալաւ և քարեկամութի ընդ այլ Թագաւորս և իշխանս , և ևս ընդ կայսրն յունաց հնարեաց Թրակացի , որ նստաւ ի նմին ամի . յորմէ հպատակ գոլով կաւատայ . որոմ և տայր զՀարկս աշխարհին հաւատարմութեամբ ։

511 521 Ի սր չորրորդ ամի վախճանեցաւ քրիստափոր կաթուղիկոս , կացեալ յաթոռ Հայրապետութենէ ամս . Ձ ։ Ընդ յաջորդեաց նր զևնդ ի գաւառէն առբերանւոյ ի գեղջէ փոքր եռատոյ (կիմ առեատոյ) , ամս . Ձ ։ Ի սկ , թէ յաւուրս տորա եղև սով սաստիկ ։ Ընդ յետ զևնդեսոյ նստաւ նր ներսէս երկրորդ ի գաւառէ քաղբևանդոյ ի գեղջէ աշտարակաց , յեօթներորդ ամի մարզպանուե մեծաժայռ , յամի նոն . 524 ։

527 Ձ . Ոյն այս ներսէս կնքէկս տեսեալ յոմանս ի քահանայից և յայլոց եկեղեցականաց զանկարգութիս լինել՝ մանաւանդ ի գիւղօրայս , ջանայաւ ուղղել . որոյ վճռ արար ժողով ենկաց ի դուքին քաղաք ի Հայրապետական աթոռն . և էին երևելի ի մէջ ժողովելոցն ներշապուհ եպիս մամիկոնէից՝ յաջորդն առբրահամու , և պետրոս քերթող՝ եպիս սիւնեաց՝ յաջորդն մուշէի ։ Յայս ժողով սահմանեցին երեսուն և ութն կանոնս , առեալ բազում ինչ ի կանոնաց մեծին սահակայ պարթևի . զորս համառօտեալով դիցուք առաջի ։

515 Ա . Ո տուրս քահանայից տարցին յեկեղեցին , և մի ի տուն միոյ ուրուք քննի ևեթ ։ Բ . Ո տուրս ողորմութենէ պատրաստի առանց ջնջաքաղութենէ առցեն քահանայք ։ Գ . Տուրք եկեղեցւոյ մի տացին վաշխուք ։ Դ . Մի վաճառեսցի ումեք ընտրք քննյութենէ . և մի իշխեսցեն Տականք առնել զգործ քննի ։ Ե . Ընդկնի պաշտօնեայք որոշեալ կայցեն յեկեղեցիս կան կարգէ . և մի վայելեսցեն ի հասս եկեղեցւոյ ։ Զ . Վհանայք մի խափանեսցեն զպատարագն յաւուրս շաբաթու

և

և կիւբակէի. և մի ծուլասցին ՚ի պաշտամանց յաւուրս տո-
նից. և եթէ անփոյթ լիցին, ՚ի հասից աւուրն զրկեսցին։
Ե. Ա՛ահանայք մի իշխեսցեն նուիրագործանել զբաժակ սէր
հաղորդութեանն պատճառաւ չքաւորութեան։ Ը. ՚Ի մատակա-
րարել քահանային ՚ի ձեռն բաժակի առ ժողովուրդն՝ մի խառնեսցեն ՚ի նոյն նորոգ գինի։ Թ. Ա՛վարագոյրս խորանին մի տա-
ցեն ՚ի տունս վաճառի և հարսին։ Ժ. Ա՛ահանայք մի տացեն
այլոց՝ մինդր կանանց՝ զջուր մկրտութեանն, տանիլ ՚ի տուն, և
մկրտել ընդ ներեխայս։ ԺԱ. ՚Ի քահանայս նախագահ համարես-
ցի, որ ինչ ձեռնադրեալ յառաջագոյն։ ԺԲ. Ա՛ռանց քահա-
նայի մի իշխեսցեն գալիրջ յեկեղեցւոջ պաշտամունս կատա-
րել։ ԺԳ. Ա՛ահանայք մի զգեցցին զզգեստ Ճականի կիմ գին-
ուոր։ ԺԴ. Տուրք եկեղեցւոյ ըստ օրինի բաժանեսցին. ա-
ւագերիցանց՝ երկու և կէս մասն. հասարակ քահանայից՝
երկու մասն. սարկաւագաց մի և կէս մասն. դպրաց և այլոյ
կանանց՝ եթէ իցեն կարօտ՝ մի մասն։ ԺԵ. Ալսպէս եկեղեցւոյ
՚ի ձեռս աւագերիցուն լիցի. և ինքն աւագերիցն միշտ ՚ի տան
եկեղեցւոյ կացցէ. և քնաւ չՃական իցէ մի զբաղեսցի։ ԺԶ.
Ալկրտութիւն յեկեղեցւոջ լիցի հանդերձ ամ ապատուք յաւա-
զանն ՃԲ. և եթէ վտանգ կայցէ, ՚ի տան կատարել։ ԺԷ. ՚Ի
մկրտել քահանային մի կայցեն առ նմ կանայք՝ ոչնեալով զբ-
տեղի սարկաւագաց։ ԺԸ. Ալարկաւագունք մի իշխեսցեն մկրտ-
տուի առնել առանց հարկի։ ԺԹ. Ա՛ահանայք մի իշխեսցեն
տրոփք կատարել զնորհուրդ ապաշխարութեան։ Ի. Լ՚եթէ
քահանայն յայտնեսցէ զնոստոփանութիւն ապաշխարողաց,
նզովիւք լուծցի։ ԻԱ. Ալի լիցի հնարիկ դերեզմանս յեկեղեցւոջ։
ԻԲ. Ա՛ահանայք մի իշխեսցեն առնուլ վաշխս։ ԻԳ. Ո՛ա-
գապա՝ ՚ի գնուիչս, որք չՃա աղքատաց ընծային, մի քաժա-
նեսցեն քահանայք ըստ հաճոյս, այլ ՚ի նախն ժամուս յանդիման
ընծայողին բաշխեսցեն աղքատաց։ ԻԴ. Ալրք հաղորդեցոյն
են, մի Ճաշակեսցեն ինչ նախ ՚ի տան. և եթէ գիտասցեն
զայս քահանայք կիմ կղերիկոսք, մի Ճողցեն հաղորդել։ ԻԵ.
Տղայոց պատկ մի լիցի. և որք ՚ի չափ հասեալ իցեն՝ առանց
տեսանելոյ զմիմեանս մի պատկեսցին։ ԻԶ. Կոյս ըստ այրոյ մի
պատկեսցի, և ոչ այրն ըստ կուսի՝ առանց հարկի։ ԻԷ. Ա՛ահա-
նայք մի իշխեսցեն երթալ և ընտրել ըստ հաճոյս իւրեանց զար-
ջառ վտ ողոմմութեան նուիրատց։ ԻԸ. Ա՛ահանայք մի իշխես-
ցեն գնուիրեալ անասունս պահել կենդանի, այլ՝ տացեն զե-
նուլ և բաշխել աղքատաց։ ԻԹ. Ո՛ աւուրս պահոց քառասնոր-
դաց կիմ պատաճառութեան մի ոք իշխեսցէ լուծանել։ Լ. ՚Ի մե-
ծի շաբաթու Ճրագալուցի մի ոք յառաջ ըզպատարագն հա-
ղորդեսցի օրինաց. քայց եթէ վտ հարկի ստիպութեան։ Լ՚.

Ա.մխ. ոն Ա.մխ. ոն
527

Յողովրդականք հակառակ հրամանի քահանայից մի իշխեցին հրամայն տալ : լբ. Ա՝ի գաղի քահանայ արքեցօղ կիմ՝ հանգանակող. և մի ունկնկի արծաթաձոյն աղախին, և մի առնուցու ինչ՝ ի կապենից : լգ. Ա՝ի բնաւ մնացե կին՝ ի վանս աբեղայից վ՚ն հայ եփելոյ կիմ՝ կով կթելոյ, և մի վ՚ն ս և իցէ գործոյ : լը. Ընտատաւորք յառաջք զմուտս արեւու գարձցին յանապատ իւրեանց : լե. Անականք մի օթեցին՝ ի տունս աշխարհականաց, այլ՝ ի մերձակայ վանս. և եթէ չիցէ՝ ի տեղւոջ վանք, ՚ի տուն աւագերիցու կացցեն : լզ. Անականք մի իշխեցեն վաճառականութի առնել, և մի պահեցեն առանձին զերիվարս և զայլինչ այսպիսի : լէ. Ընդաւորաց բնակութի մի տացի՝ ի տան : լը. Յամ՝ ամիսս՝ շաբաթ մի պահք պահեցի :

Այս շաբաթապահք ցարդ իսկ անխափան պահին՝ ոմանք շարժականապէս և ոմանք անշարժ. և են սոքին. ա. պահք եղիսական : բ. պահք ամարայնոյ, որ ասի պահք լուսաւորչի : գ. պահք վարդավառի : դ. պահք ասծածնայ : ե. պահք խաչի : զ. պահք վարագայ խաչի : է. պահք յիսնակաց : ը. պահք ձմերայնոյ, որ ասի պահք նը յակոբայ : թ. պահք յայտնութեան : ժ. պահք առաջաւորաց. որ և ասի պահք նը սարգսի : այլ վասն երկուց ամսոց՝ պահք յաւուրս քառասնորդաց :

533 Է. Իսկ ինքն ներսէս կաթուղիկոս կացեալ՝ ի հայրապետուեան ամս. Թ. և փոքր ինչ աւելի, մեռաւ. և ետաւ՝ ի տեղի նր՝ ի դուքին ներ յովհաննես երկրդ՝ ի գաւառէն գաբեղենից՝ ի գեղջէ սիւնձեղնոյ կիմձեղուձան. որ և էր վանական Թաղելոյ վանից : Նա՝ ի նմին ամի՝ ի սկիզբն. 533. Թուականութեն քսի աւարտեալ լցաւ շրջան հինգ հարիւրեկին, որ քառանդակ յինքեան զոմն. 532. և յայնմհետէ սկսան խախտիլ տումարական տոնք զատկի, և որք՝ ի նոյն հետևանան : Նա Թէպետ ոմանք խնամուտարութի յովհաննու հայրապետին ջանացան ուղղել, ոչ և առաջնորդն գլուկայ վանից աԹանաս, և ուղղեցին իսկ իւիք մեսամբ, այլ ոչ տիրապես, մինչև ցամ՝ ՈՀԱ. 551. զորմէ խօսեցայք՝ ի գլ. ին :

{531} Ա՚յս յաւուրս քան զվախձանիլ ներսիսի հայրապետի՝ մեռաւ արքայն պարսից կաւատ. և Թիգրեաց փոխանակ նր որդի նորին խոսրով՝ այր հզօր և պատերազմասէր, միանգամայն և հնարամուտ գիտութեց և փիլիսոփայական վճռութեց. զոր մէ հնչէր համբաւ ի (ասէ ազաԹիաս յոյն պատմիչ ժամանակիս. գլխ. ե. Ե. Հ) , ոչ Թէ՝ ի բերան ունկնէ նման զբանս պղատոնի և արիստոտէլի, և տալ Թարգմանել՝ ի պարսս բզգիրս իմաստասիրաց. որ և յաւելու ասել՝ Թէ քաջ ինք զոր

ծոց նէր ոչինչ պակաս գտան քան զկիւրոսին և զդարեհին և զայլոց նախնի Թէոդոսեան պարսից ։

Գ Լ Ո Ւ Խ · Լ Դ ։

Յաղագս գործոց եղբայրացն հայոց յատուրս յոստինիանոսի կայսեր · որ և յաղագս յայտնութեանն գաւառացին ։

Պրոկոպիոս շին. յոստ. ա. է. լիգ ։ Լատգբիոս. ե. գլ. 31 ։ և այլք ։

Ռազաւորէր ի սմին ժամանակի , սկսեալ յամէն ։ 527 · կայսրն յոստինիանոս մեծ լիւրիկեցի՝ քեռորդի և յաջորդ յոստինոսի Թրակացւոյ , այր մեծագործ և հասարակաչէն · որ և ըստ պատմելոյ պրոկոպիոսի ականատես վկայի՝ կանգնեաց քիչ քաղաքս և ամրոցս առաւել քան զոր մարթ իցէ կարծել · և եկեղեցիս հոյակապս քիչ յոյժ · ընդ որս և զհրաշակերտն յեկեղեցիս զանձն սոփիա , այն է՝ այս սոփեա · որ շինեալ էր յառաջնմէ ի մեծէն կոստանդիանոսէ , բայց յայրիլ նէր յաւուրս սորին յոստինիանոսի մեծի՝ սոյն սա ժողովեալ զձարտարապետս ի հեռաւոր տեղեաց , և ոչ ինչ այնպէս լինէր՝ ի հիմանց կառոյց զայն՝ շինուածս աքանչելի ։

Ագաթիաս Պաղշծ։

Էր յայն ժամանակն պատերազմ ի մէջ յունաց և պարսից · յորմէ բազում վնասուվմունք լինէին ի կողմանս հայոց ի մասն բաժնին յունաց · և յոստինիանոս կայսրն կամեցեալ զայն կողմն յապահովի ունել՝ կարգ եդ ի նախարարս հայոց , որք էին յՏին յայնմիկ · և կացոյց ի վէր նոյ իշխան և զօրավար զտաճատ նախարար՝ զայր հմուտ պատերազմն և ի քիչ իրս յաջողակ · որոյ և քիչ գործ քաջութիւն ցուցեալ էր ի դրան կայսեր · և ետ նմ կայսր ի կնուն զքոյր Թէոդորայ Թագուհւոյն զկամեստոսէ · և հաստատեաց ընդ ձեռամբ նոյ զգօրս հայոց այնց սահմանաց · յորոց մեծ պաշտպանուի և աներկեւան զգուշութեամբ էր յունաց յարևելեան կողմանէ ։

Պրոկոպիոս շին. յոստ. գ. 2. և 3 ։

Այնպէս և ի կողմանս ջորջոյ հայոց , որոյ իշխանք տակաւին զդէմ ունելոյ Թէոդոսեան Թագուհւոյն զկամեստոսէ և անպիտանութիւն իւրեանց , կարգեաց երկուս զօրավարս հանդերձ զօրօք ի պահպանութիւն Տին · և սահմանեաց երկաքանչիւրոցն քաղաք բնակութիւն , միումն զնփրկերտ , և միւսում զամրոցն կիւխառիձ , որ և կիթառիձ կոչի ի կողմանս հաշտենից · և ետ նոցա հրաման շինել և նորոգել զքաղաքս և զբերդս այնոսիկ զաւառաց · յորս և կանգնեաց ինքն զեկեղեցիս և զկրօնատուն քաղուման ։

Ագաթիաս Պաղշծ։

ի · Յաւուրս սորուն յոստինիանոսի էր ի դրան արքու-

533 նի համբաւեաղն ներսէս պատրիկ յազգէ նախաթարոմեան մեծին հայոց, զորմէ ունիմք խօսիլ ի գլ. ԽԲ։ Այլն առ սա ի կոստանդնուպօլիս ներսէհ նախարար հայոց ի քաղքերդոյ յերկրէն բասենոյ՝ այր քաջ և զօրաւոր՝ հանդերձ երկու եղբարբք, որոց անուանք էին հրահատ և սահակ։ Այսպէս կարգեաց ընդ ներսէհ կուռապալատ կայսրն աղեքսանդրիոյ հանդերձ զօրօք հայոց. զի էր այրն երևելի յոյժ, որ և ցուցեալ էր բազմ քաջութիւն ի բազմ իրս։ Սա եթարձ և քանդեաց զերևելի մեհեանն, որ կայր մինչև ցայնժամ ի մէջ նեղոս գետոյ յաւուրց անաւ դիոկղետիանոսի. և ի քանտ արկեալ զքուրմս մեհենին՝ առաքեաց զարձանս կուռոյն ի կոստանդնուպօլիս. և ինքն կայր հաւատարմութեամբ ի գործակալութեան իւրում։ Պրոկոպիոս պատ. Բ. 30

534 Այր յայսմ ձեռն և շնաւոն նախարար ոմն հայոց կարգեալ ի լուսաւորչայ յաղթայէն պատրիկ ի վերակացութեան արքունի հանքաց. սա նշկահեալ զպարսիկս՝ անձնատուր եղև ի յայնս, և ընկալաւ իշխանութիւն ի կայսերէ չՀին քարձր հայոց՝ յայնմ մասին, որ էր ըստ իշխանութեանցն։ Այլ ապա ի թշնամութիւն գրգռեալ ըստ երկու իշխանաց հայոց, որք էին որդիքն վահրամայ ոստայ, բռնացաւ ի վրէ նոցա, և էառ զկալուածս և զաւանս նոցա հրամանաւ կայսերն. բայց չկարաց վայելել ի նոս. զի ի գալ նոր յոյն աւանն՝ յարեան ի վրէ նորա երկոքին եղբարքն, և սպանին զնա, և փախստեայ անկան ի պարսս։ Պրոկոպիոս պատ. Բ. 30

535 Ո՛յս լուեալ կայսերն յուստինիանոսի՝ ետ զայնոսիկ աւանսն Համազասպայ քեռորդւոյ շմաւոնի. և կացոյց զնա իշխան հայոց եղելոց ի բարձր հայս ի կողմանս կարնոյ։

536 Ա՛ռաքեաւ ընդ այս ակակիոսի ուրուն իշխանի՝ որ մտերիմն էր կայսերն, չարախօս եղև զՀամազասպայ, իբր թէ նեղէ նա զհայս, և խորհի մատնել պարսից զԹէոդոսուպօլիս և զայլ քաղաքս. և այնչափ գրգռեաց զկայսրն, մինչև թոյլտուաւ նմա սպան նա զՀամազասպ. և ինքն կարգեցաւ փոխակ նորին իշխան հայոց այնր կողման։ Այլ քանի այս ակակիոս էր այր ժանտ և անօրէն և անագորոյն քան զամենայն մարդ՝ ըստ ասելոյ պրոկոպիոսի, ընդարձակութեամբ գտեալ այնու իշխանութեամբ՝ բազմ չարիս գործեաց, և անողորմութեամբ ծանրացաւ ի վրէ հպատակաց իւրոց, և առնոյր հարկս մեծամեծս։ Յորում ոչ կարացեալ տանել հայոց, ոմանք ի նոցանէ փախստեայ գնային ի մանս պարսից. իսկ այլք միաբանեալ ի միասին՝ վտարանջեցին ի կայսերէ. և էր նոցա գլուխ յովհան արշակունի, և արտաւան որդի նորա՝ մանուկ հզօր և յաջողակ յամի. որոց դիմեալ ի վրէ ակակիոսի՝ բարձին զնա ի կենաց. և դիտացեալ՝ թէ ոչ ներէ այսմ կայսրն յուստինիանոս, եկեալ

'ի սահմանաց անտի՝ ինքեանք ևս չոքան 'ի մեռն քաժնի պարսից ։ Եւ էր շիտեղ աղվիկ 'ի ժողովրդեանն 'ի կողմանն յայնմանիկ 'ի քարձրն հայոց ։

Ա. Ռաքեաց անդ կայսրն զսիդդա զօրավար՝ զայր ե- րեւելի արուեստիւ , զորմէ քիչ դուռեւ խօսի պրոկոպիոս , խա- դաղել զնուռուվուին . և նա ամեն բանիւք ջանացաւ շահել զի- սիրտս հայոց՝ կալ հանդարտ ընդ հնազանդութեան կայսեր . և կամելով առանց կռուի զնոսն 'ի գլուխ տանել՝ պատգամա- ռաքեաց առ փախստեայս՝ գալ և նստիլ յերկրի իւրեանց , խոստանալով միջնորդ լինել առ կայսրն , և թեթեւացուցա- նել զաւելորդ հարկն ։ Ապա ընդէռ նա այսու օրինակաւ հնա- րեր զնաղաղութի , ազովզ որդի ակակիոսի չարախօս լեալ զսիդդայէ՝ իբր թէ յուզուի դեգերի նա յՀռի անդ , և ոչինչ վնաս , գրգռեաց զյուստինիանոս վրէժ առնուլ պետրմաւ 'ի հայոց ազանոզաց հօր իւրոյ . որոյ վրէ և կայսրն առաքեաց պատուիրեր հրամանի առ սիդդա՝ մարտիւ պետրզմի նուճաձել զնիշխանն հայոց ։

Ո այն իբրև գիտացին հայք , խումբ արարեալ ժողովեցան 'ի 537
մի . եհաս առ նոսա և յովհան արշակունի հանդերձ ոյդուսիւ իւրով արտաւանաւ ։ Ապա ընթանեցան ամենքին , և եկեալ բանա- կեցան մծոն յաւբնակայ , կիր ըստ պրոկոպիոսի՝ յենոքաղաք . խաղաց և սիդդա 'ի վէր նմ զօրօք յոմնաց ։ Եւ իբրև յանդէ- մանն եղեն միմեանց , սիդդա առանձին յառաջագրաւ դիմել էանց ընդ ձորն . և հուպ եղեալ առ հայս՝ զկայ էառ . զի ոչ իշ- խեաց 'ի դիմի հարկանիլ նմ . և միեալ զնիզակ իւր 'ի գետին՝ մնայ գալաւեան զօրաց իւրոց . և իբրև հասին նոքա առ նա , մի ոմն 'ի զօրաց անտի յոմնաց յանդուգն արշաւեալ էանց առ սիդդայիւ , խրախուսելով զնա յարձակիլ 'ի վէր գնդին հայ- ոց . և ընդ դիպաց քերեալ երիվարի նր առ նիզակաւն սիդ- դայի՝ խոցոտակեալ փշրեաց զայն . և 'ի տագնապիլ սիդդայի վնն նիզակին՝ զի չունէր այլ 'ի պատրաստի , և 'ի շարժել ըզ- գլուխ իւր բարկութի՝ անկաւ սաղաւարտն 'ի գլխոյ նր ։ Այնմ պահու դիմեցին և հայք 'ի վէր գնդին յոմնաց . և մի ոմն 'ի հայոց անտի նշմարեալ զսիդդա , զի կայր շուարեալ առանց նիզակի և սաղաւարտի , յարձակեցաւ 'ի վէր նր . և 'ի հարկանել սուսերաւ զգլխաթեն նր՝ եհատ զմօրթ ձակա- տուն ։ Եւ 'ի շաւալիլ սիդդայի և յաձախապատել երիվարաւ 'ի փախուստ՝ հասեալ 'ի յետուստ արտաւան որդի յովհաննու , եհար զնա նիզակաւն , և դիմաթաւալ տապալեալ յերկիր կոր- ծանեաց յերիվարէն ։ Եւ այլ զօրք հայոց այլ ևս ընթացիւք զախոյեան իւրեանց վանեալ առաջի երեսաց՝ հալածականս արարին . և ինքեանք գնացեալ ամրացան յիւրաքանչիւր

քերդս ։

Իբրև ազդ եղև այս յականջս յուստինիանոսի կայսեր , առաքեաց զբուզ ոմն իշխան՝ ըմբռնել հնարիւք զսպանօղն սիդդայի ։ Իսկեալ նորա ՚ի քարձր հայս՝ պատգամ յղեաց առ մեծամեծս հայոց՝ գալ առ ինքն և հաշտութիւն առնել ։ այլ նոքա ոչ հաւանեցան նմա՝ կասկածելով ՚ի նենդութենէ առն ։ բայց քանզի յովհան արշակունի հայր արտաւանայ քարեկամէր բուզայ , եկն առ նա անկասկած , առեալ զնա իւր ընդ վտակ փեսայ իւր և զայլս ոմանս ։ Իսկ եղև ՚ի մէջ դիշերի՝ յորժամ խրախճանս առնէին նոքա յօթևանս բուզայ , զորք նոր պաշարեցին զտունն ։ զոր խմացեալ հայոց՝ սկսան յորդորել զյովհան , զի փութասցի փախչիլ ։ այլ յոչ առնոյր նոր՝ վտակ փեսայ նորին միաբանեալ ընդ այլ հայս՝ խոյս ետ առնոյ ՚ի ծածուկ ։ և բուզ միայնակ գտեալ զյովհան՝ սպան զնա , ոչ խնայելով ՚ի մտերիմ բարեկամութիւն նր՝ յոր վստահացեալ էր

յովհաննու ։

538 Զետ այսորիկ տեսեալ հայոց՝ թէ յոյնք հնարին ունիլ զինքեանս , և նշան ինչ հաշտութեան ոչ երևի , ըմբռնեցան ՚ի
537 վարանս ։ և զի ոչ իշխէին միւսանգամ զինուք զդէմ ունիլ նմա , զի սակաւս գտանէին գործակից և ձեռնտու իւրեանց , միաբանեցան ընդ վտակայ և անկան առ խոսրով արքայ պարսից ։ ընդ որս և արտաւան արշակունի որդի յովհաննու ։ և խօսելով ընդ նմա ինչ առ խոսրով՝ դրդեցին զնա ՚ի պատրուակ ընդդէմ յունաց խոստանալով ձեռնտու լինել նմա ։ զոր և արարին իսկ ։ և յոյնքն ընդ գործս քաջութեան ։ մնէնդ արին արտաւան ։ Օ այսմ պատճառաւ , որ սկսաւ յերեքտասաներորդ ամի յուստինիանոսի մեծի , երկար գրէ պրոկոպիոս յերկդ գիրս ։ ընդ նմին և այլ

պատմիչք յունաց ։

539 Ջ ։ Ի դիմել ապա խոսրովու պարսից արքայի ՚ի վրէժ յունաց՝ յաւարի առնին զօրք նր զբնդմ տեղիս ։ յորոց ժողովեաց խոսրով գանձս յոլովս ։ Ի ոճաւ սա զերեսացւոց պարծիլ յանձինս , թէ քաղաք իւրեանց ոչ երբեք անկցի ՚ի ձեռս այլոցգեաց ։ զի ունէին աւանդութիւն իւրեանս , թէ քնի գրեալ էցէ ՚ի Թղթին առ աբգար , այդ քաղաք ձեռացէ անմխաս և անառիկ ՚ի Թշնամեաց ։ և յայս միտ իմանային զբան սբոյն եւրեմոյ , զոր գրէ ՚ի կտակի իւրում ։ * քաղաք օրհնեալ , երես՝ ,, սիա մայր խմաստութեան ։ որ ՚ի կենդանի բերանոյ որդւոյն ,, (այ) ընկալաւ զօրհնութիւն ՚ի ձեռն աշակերտի նր ։ արդ ,, մնասցէ ՚ի նմա օրհնութիւնն այն , մինչև սբոյն երևեսցի ։ ։

Ընդ այս համբաւ դժուարացեալ խոսրովու՝ խաղայ ամ զօրութիւնն ՚ի վր եդեսիոյ , և պաշարեալ զայն ։ և մնայր սաստիկ եղեալ՝ գուն գործեր մեքենայիւք կործանել զպարիսպն ,

Վրկոպիոս պարս. Բ. 12։
Ագաթիոս Ե. 27 ։
Յոսեպոս Վեդրենոս ։

և զգրուհան խորտակել ։

Լ.Ա 539

Լսակ քաղաքացիքն առհասարակ յահէ մեծի ըմբռնեալ վա-
րանէին . և ՚ի յետին վտանգս անկեալ՝ միաբան դիմեցին առ
նա ։ Նրևեցաւ յայնմ գիշերի եւզաղեայ եպիսկ քաղաքին
տիկին մի փառահեղ դիմօք և շքեղ զարդուք . և ազդ արար
նմա, թէ գոյ ՚ի վէր գրան քո՛ քիդ ամենապատիճ պատկեր փրկ-
չին՝ այն է անձեռագործ սո՛ր դաստառակն , ծածկեալ ՚ի ներ-
քոյ կղմնտրին . առ ոչինչ ասէ զայն անտի , և նովաւ գաղիք ըն-
փրկուելոյ ։ Ցեալ եպիսկին եւզաղեայ անպատում խնդութեա՛
վաղվաղակի ինդրեաց զտեղին զայն . և բացեալ եգիտ զնա՛
այնին զայն պատկեր անեղծ և անարատ . եգիտ և զձրագն
դեռ անշէջ պահեալ յայնչափ ամաց , յաւուրց անտի ադդեի
Հայրապետի . զրմէ գրեցաք · գէդ · Ը · փլ · 19 · էջե · 29.5 · և ոչ
այլչափ միայն , այլև ՚ի կղմինատրն՝ որ եդեալ էր հանդէպ ձրագին
՚ի պահպանուհի , ձև կենդանագիր պատկերին տպաւորեալ էր ։
Լ՚ուեալ զայն եպիսկին ցնծութեա՛ բազմաւ , և գոհացողական
փառաբանութեա՛ և օրհներգութեա՛ գնաց հանդերձ ամենայն
՚ի տեղին՝ ուր սկսեալ էին պարսիկք ական հատանել , և հաւր
՚ի նոյն արկանել ։ Ի՛ օտ հասեալ առ նոսա՝ կաթեցոյց շիթ
մի յիւղոյ ձրագին ՚ի հուրն պատրաստեալ . և նոյն ժամայն
սաստկապէս բորբոքեալ հրոյն՝ այրեաց զամ՛ ականահատ թշ-
նամիս ։ Լ՚ւ զի նաև այլոք խարդախ արկեալ էր պարսից՝ ձգել
զայն մեքենայիւք ՚ի քո՛ղքն կարծատծիլ նոցին՝ հուպ անդր մա-
տեալ եպիսկան հանդերձ ածային պատկերաւն . և ՚ի մօտիլ ՚ի
տեղին՝ յանկարծուստ ուժգին հողմ շնչեալ՝ դարձոյց զհուրն
՚ի վէր այնոցիկ , որք վառեալ էին զայն , և այրեալ կորոյս
զնա ։ Որով և ՚ի բազումս վաստգեալ պարսից՝ Թողին զքո՛ղքն
և դարձան դլխակոր ։

Նաւ. Ե. 28 ։

Ե . Ի՛նտի յարձակեալ խառնուիլ ՚ի վէր քաղաքին՝ որ կո-
չիւր սարգսապոլիս՝ վէն լինելոյ անդ նշխարաց սո՛ր սարգսի
փառաւոր վկային պարսից , պաշարեաց զայն . և սաստիկ
պատերազմաւ սկսաւ քանդել զպարիսպ նո՛ . յորմէ զահի հա-
րեալ քաղաքացւոց՝ խորհեցան հաշտութեի խօսիլ . և խոսրով
էր , Թէ բո՛ղմ գանձք են և մեծագին անօթք կե-
կեղեցւոջ սո՛ր սարգսի , խնդրեաց զնա . և նո՛ք յանձն առեալ
եառնն զամ՛ . յորոց միջի էր և խաչ մի ոսկի ականակապ , զոր
յուստինիանոս կայսր և Թեոդորա Թագուհին նուիրեալ էին
՚ի տաճար սո՛ր ։

Լ՚ըրև եառեալ խոսրով զայն. ամ՛ , եհարց ցքերօղն , Թէ՞նց և
այլ ինչ . ասէ մի ոմն ՚ի նոցէ . ոչինչ այլ Թէնց անօթ ոսկւոյ և
արծաԹոյ , այլ միայն սրբազան նշխարք սո՛ր սարգսի յար-
ծաԹապատ արկեղ ։ Լամեցեալ խոսրովայ զայն ևս քառնալ՝

հրա-

հրաման եւտ զօրաց իւրոց՝ մտանել ի քաղաքն , և յափշտակել զամենայն ինչս նոցա : Եւ ահա յանկարծակի երևեցան ի վրայ պարսպին անհամար բազմութիւնք վահանաւորաց զօրաց սպառազինելոց . զոր տեսեալ խոստովան՝ առնկայաւ յոյժ , և գիտաց՝ թէ սքանչելիք են անյաղթ վկային սարգսի . որոյ վասն ոչ ևս համարձակեցաւ առնուլ զայն . և գոլեալ զհաւատս քրիստոնէից՝ եւ կեցաւ առնուլ զայն . և դարձաւ յիւր իւր :

Ա. Մակ. պատ. 539

Պատմի յայսմհետուստ ի ութսներեքերորդ . 7 . Թէ ի դառնալ խոստովանողն ի գերութենէն պարսից՝ ի հայոց աշխարհ , ոչ միայն ի յունաց , այլև ի հայոց քրիստոնեից կայսեր : Ի մէջ գերելոյն կային և բազում կուսանք և օրիորդք . յորոց ընտրեաց խոստովանողն զհաղարս՝ կամ ըստ յայսմհետուստ զհինգհազարս . և առաքեաց զնոսա հանդերձ զօրականօք ի Թուրքաստան առ Թիւրն Թուրքաց ի պարսիկս , առնուլ ի նմանէ զօրս յօգնականութի ընդեմ յունաց :

Ալեպ . 7 : Պապ :

Յուղի անկեալ կուսանացն՝ ողբս առեալ լային ի վրայ անձանց իւրեանց . զի անդարձ մատնելոց էին ի ձեռս անհաւատից . և ոչ էր նոցա հնար զերծանելոյ : Այլ իբրև հասին նոքա ի գետ մի մեծ , խորհուրդ արարեալ ի մէջ իւրեանց՝ աղաչելոյն ընդ զինուորսն՝ փոքր մի մեկնիլ անտի , զի լուացցուք ասեն ի գետս : Եւ իբրև մեկնեցան նոքա , ելին կուսանքն ի վրայ մեծի կամրջին . և յաղօթս կացեալ միաբան առ Աստ՝ արկին զանձինս ի գետ անդր , և հեղձան : Այն իմացեալ զօրացն ի Հզիմանէ ջուրց՝ դիմեցին ի գետն , և ոչ ոք գտին կենդանի . զի մինչ զահի հարեալ մեծապէս , դարձան և պատմեցին խոստովանողն . և նորա լուեալ զայս՝ զարմացաւ և տրտմեցաւ . այլ ոչ պատուհասեաց զզօրականսն :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ը :

Յաղագս հրեշտակապետին յովհաննու հայրապետի առ յոյնս . և գալոստենէ եկեղեցւոյն հայոց , արուեստից , յովհաննու դպրի , և նեբսեհի :

Պրոկոպիոս պատ. 2 . 21 :

542 Ա. միւսանգամ սաստկանալ պատերազմաց ի մէջ պարսից և յունաց , իբրև տկարացան պարսիկք , բռնի ի նախարարացն հայոց՝ որք զառաջինն գժդեցին ընդ երեսս յոյնս՝ անկեալ էին առ խոստովանողն , արհամարհուի կրեալ ի նմանէ՝ վերստին դիմեցին առ յոյնս . և դարձեալ հաստատեալ էր նա՝ եկին ի կոստանդնուպոլիս հանդերձ ընտանեօք և զօրօք իւրեանց . և ընկալեալ եղեն ի կայսերէ մարդասիրու-

Թէ .

Ա.Տիմ. Ա. 542

Թէ. և էին՝ ի մէջ նոցա արք անուանիք՝ արտաւան արշակունի որդի յովհաննու, և վասակ քեռայր նորա, զորս յիշեցաք ի նախընթաց գլուխդ. որք և կարգեցան ի գործ արքունի. և վն քաջութեն իւրեանց՝ զոր գործեցին յայնժամ ընդեմ պարսից և այլոց ազգաց, եղեն երևելի ի դրան կայսեր։

Ագաթոպէոս պատ. Բ. 24։

Յառ խոսրով արքայ յետ բազմադիմի պատերազմաց նեղեալ յոյժ ի յունաց՝ կամեցաւ հաշտութեի խօսիլ ընդ կայսերն. և խորհեցաւ միջնորդ կարգել ի սոյն պատերազմին կաթուղիկոս հայոց, զոր պետրոսիոս կոչէ կիթղիկս գոնէսայ՝ վ'ս նստելոյ նմ ի գոնէին։ Կոչեաց զնա առ ինքն, և ետ նմա պատուէրս գնալ ի փոքրն հայս առ վաղերիանոս զօրագլուխս յունաց, և հնարիւք հաձեցուցանել և համոզել զնա ի խաղաղութեի ողջ և օրինակաւ։

Ընդեալ ընդ ինքեան յովհաննու հայրապետի զեղբայր իւր ըզգէորգ իշխանն՝ եկն առ զօրագլուխն վաղերիանոս. և առաջի արկեալ նմա զբան միջնորդ լինելոյ իւրոյ վասն հաշտութե՝ խօսեցաւ քաղցրմ ինչ. իմ ասէ հաւատակից գոլով ձեզ՝ զօգուտ ձեր յունացդ խնդրեմ, և ի նոյն ջանամ. և վստահ եմ, թէ նաև խոսրով անսասցէ խորհրդոց իմոց. արդ եթէ ոչ անհաձոյ ինչ թուիցի ձեզ, առաքեսջիք զուք առ նաս պատգամաւորս ընդ իս. և ես գիտեմ, զի նա ընդունի սիրով. և զամ պայման ձեր յանձն առեալ՝ հաշտ ընդ ձեզ։ Յետ խօսելոյ կաթուղիկոսին զայսոսիկ ընդ վաղերիանոսի, եղբայր նի գէորգ առանձինն խօսեցեալ ընդ նմին վաղերիանոսի՝ ասէ. խոսրով յիրաւի կամի այժմ հաշտիլ ընդ ձեզ, զի կայ ի մեծի նեղութե, և է ի կասկածի՝ թէ որդի իւր քնդ հուսկ իսկ ապստամբեսցի յիւրմէ. նաև աշխարհ նորա պաշարեալ է ի սաստիկ բոցոյ ժանտամահու։

Ընդ. Այսոսիկ լուեալ վաղերիանոսի զօրավարին՝ արձակեաց յիւրմէ զհայրապետն՝ ասելով, գնա՛ դու, և ես առաքեմ փութով դեսպանս առ խոսրով։ Ընդ ինքն վաղվաղակի գրեալ ծանուցց կայսերն յուստինիանոսի, եթէ խոսրով ի վատ բան տարակուսի կայ բազում իրօք. և յայնմհետ նմա զբանն գէորգեայ։ Եւ դիպող համարեալ զայն կայսեր՝ յղեաց հրաման առ նա առանց յապաղելոյ յարձակիլ ի վր պարսից։ Եւ վաղերիանոս նոյնժամայն ընդ առնուլ զպատուէրն կայսերն՝ հոգան ետ զօրացն, որք էին երեսուն հազար. և խաղաց ի վր պարսից։ Եւնաց ընդ նմա և քաջն ներսէհ բասենցի՝ ընդ իւր առեալ զգունդ մի ի քաջացն հայոց. ընդ որս էր և արտաւան արշակունի։

Իրրև հասին նք ի սահմանս դունայ, միւժ գնունի՝ որ կարգեալ էր ի պարսից մարզպան ի վր մեծին հայոց, և նաւեր

ի.

542 542

'ի գունն , երկուցեալ յարշաւանայ վաղերիանոսի՝ առաքեաց առ նա ընծայս , աղաչելով զնա մի ինչ վնասել ումեք 'ի քրիստ-
ջաց Յին ։ Եւ նորա սիրով ընկալեալ զպատգամն մեծաց՝
պատուէրս ետ զօրուն խաղաղութիւն անցանել ընդ երկիրն ։
Յովհ սպարապետն պարսից նաբատ՝ որ բռնակեալ էր մերձ 'ի գիւղաքաղաքն անդր , առեալ զզօր գալստեան յունաց՝ զա-
հի հարաւ . և ամենպարել կարգեաց զզօրս իւր 'ի պատերազմ։
Եւ եղև 'ի հասանել զօրացն յունաց , քաջն ներսէհ նախա-
գրաւ յարձակիլ քաղաքացւոց զկազմուն գնդին պարսից . դի-
մելին զկնի նորա և այլ զօրավարքն յունաց խուռն . և առ
յանդուգն յարձակման՝ թէպետև բազմ նախձիրս գործեցին ,
այլ վակեալ պաշարեցան 'ի մէջ խմբին պարսից և վտանգե-
ցան . և որք վատասիրտքն էին յետս ընկրկեցան . և նա ինքն
ներսէհ առանձինն մնացեալ՝ ընկալաւ վէրս . փութացեալ
յայնժամ եղբօր նոյ սահակայ՝ եհան զնա 'ի պատերազմէ . ըստ
այն առաւել և՛ւս չիսթեալ յունաց՝ ցրուեցան և 'ի փախուստ
ձգեցան . զորոց զհետ մնեալ պարսից՝ կոտորեցին զբազ-
մութս , և առին զաւար նոցա , և դարձան 'ի տեղիս իւրեանց .
և յոյնք նկուն եղեալ նոճաձեցան ։

Պրոկոպիոս գրք . ը . 8։

Ը . Յետ այսր պատերազմի առաքեցաւ 'ի խոսրովայ այլ
ոմն զօրավար պարսից խոռհան անուն զօրօք բազմօք 'ի կող-
մանս եգերացւոց . որոց օգնականուն առեալ 'ի յունաց՝ ելին
ընդդէմ խոռհանայ . և էր սպարապետ զօրացն յունաց դադիս-
թէոս . և զօրավար հեծելազօրու նոցա յովհան թումմայեան՝
հայ աղգաւ՝ այր անհնարին պատերազմող , զոր քոշ կամ գու-
շազ անուանէին . որոյ ըստ ձեռամբ էր և առանձին գունդ մի
հայոց , և գլուխ կարդեալ էր նոյ արտաւան արշակունի ։ Եւ
եղև 'ի բաղխել երկոցունց կողմանց ընդ միմեանս՝ վտանգե-
ցան զօրք եգերացւոց . ըստ նոսին վտանգեցան և զօրքն յունաց
և ընկրկեցան . բայց յետոյ կրկին զօրացեալ՝ վերստին կար-
գեցան 'ի ձեակատ մնալոյ յընդարձակ դաշտի ։
Եւ իբրև յանդիման եղեն միմեանց երկոքին կողմանքն , մա-
տեան յառաջ հազար արք 'ի զօրաւորացն պարսից , և գրգ-
ռեցին զյոյնս 'ի սկզբնամարտուն ։ Եւ եկաց ընդդէմ նոցա
արտաւան արշակունի՝ առեալ ընդ իւր և զերիս արս 'ի յու-
նաց . յիշ մնացեալ և 'ի հազարացն անտի պարսից՝ այր ոմն
վիթխարի և կորովի՝ հանդերձ երիս ընկերօք իւր թիկնա-
պահօք , և դիմեաց 'ի վեր արտաւանայ ։ Եւ արկն արտաւան
աձապարեալ հանգոյն դաւթայ՝ եհար զոյզն նիզակաւ , և
ընկեցեալ յերիվարէն՝ յերկիր կոտծանեաց զնա ։
Այն իբրև տեսին թիկնապահք պարսկին՝ յիմարեցան .
և մին 'ի նոցանէ կատաղեալ՝ վերայոյց զսուրն՝ հարկանել

զգլուխս արտաւանոյ. այլ որք ընդ արտաւանոյ էին՝ ասացին զպարսիկն, և ապրեցուցին զարտաւան։

Ա.Մ. ՈՒ. 542

Ը. Ընդ ապա կուշաշ արքայ եգերացւոց և դադիմեթոս և յովհան քոշ յիշՂ խաղացուցեալ զզօրսն՝ դիմեցին ի վերայ Ձակատուն պարսից ամ զօրուքՋ. և սաստկացաւ պատերազմՆ. և անկան բազումք յերկուց կողմանց. ՀՂ որս և նա ինքն խոռհան ոպարապետ պարսից. և զօրք նր զահի հարեալ ի փախուստ դարձան. և յոյնք պնդեցան զհետ նց, և կամէին հասանել ի բուն բանակ նոցին։

Պոյր ի Ձանապարհի կերՃ մի անձուկ. և մի ոմն ի զօրացն պարսից այր հաւժկու արձանացեալ անդէն՝ միայնակ զդէմ կալաւ խուռն յարձակմանն յունաց, և ոչ թողացուցանէր նց խաղալ ի նեղքս։ Ոլիմեաց ի վերայ նր առանձին զօրավարն քաջ յովհան քոշ՝ այրն կորովի, եհար և սատակեաց զնա. և յունաց գտեալ անցս՝ հասին և առին զբովանդակ բանակն պարսից, և կոտորեցին զբազումս. և յաղԹուՂՔ դարձան յՃիւբեանց։

Ակտ. Ա. Ղուկ. Ը. 9։

Ը. Ի նմին ժամանակի ապստամբեցան ի յուստինիանեայ կայսերէ ափխազք. և կայսրն առաքեաց ի վր նց զյովհան քոշ գնդաւ զօրու հայոց, ՀՂ նմին և զողիգաս զօրավար յունաց։ Ոյն իմացեալ ովսեդ Ձիր ափխազաց՝ եՂ ընդ առաջ նց, և կալաւ զանցս Ձանապարհացն։ Ուակ յովհաննու քոշն առեալ զկէս զօրացն՝ չոքաւ ՀՂ այլ Ձանապարհ. և պաշարեցաւ ի յետուստ զափխազն. և վանեալ զնա՝ հալածականս տարաւ առաջի իւր մինչև ի մօտաւոր քաղաք մի. ուր փակեալ և ի նեղ արկեալ զնա՝ էառ զքաղաքն. և գերի վարեալ զբնակիչսն՝ դարձաւ և եկն առ ողիգաս յաղԹուՂՔ. և երկոքին ի միասին դարձան ի կոստանդինուպոլիս, և պատուհեցան ի կայսերէ։

Ակտ. Ա. Ղուկ. Ը. 11։

Ը. Ետ այսորիկ սա ինքն յովհան քոշ և վեստա մեծ զօրավար յունաց գնացին վերստին ի պատերազմ ընդդէմ պարսից. և պաշարեալ զպետրա քաղաք՝ կործանեցին զմի կողմն պարսպին. բայց ի հորդան տալ ի նեղքս, զդէմ կալան նոցա ի նեղքսատ պարսիկք։ Սոքա ԹԷպէտ և հարին զբազումս ի նոցանէ, և գուն գործէին ի նեղքս մնկանիլ, այլ ոչ կարացին. և ընդ այլ կողմն պարսպին չէր հնար անցս գտանել։ Յայնմ վայրի կորովին քոշ առեալ ՀՂ իւր զօրսն ի հայոց ի գնդէ իւրմէ՝ զիմեաց համարձակ ՀՂ միւս այլ կողմն պարսպին, և հարեալ զպահապանսն՝ եՂ ի վեր յաշտարակ մի ամուր, ուր կային բազում զօրք պարսից. և մին ի նոցանէ այր հասատարուվ. այլ երագեալ յովհաննու՝ եհար և շամփրեաց զնա ի

Ա.մխ
542

Ա.մխ ամն

նիզակ իւր , և ընկէց ՚ի վայր . և վանեալ անտի զպարսիկան՝
Ձանապարհ արար յունաց մտանել ՚ի ներքս :
՚Ի խուժել նոցա ընդ քաղաքն՝ լուցին պարսիկք հուր սաստիկ ընդ-
դէմ նոցա առ ՚ի խափանելոյ զյարձակումն նոցին . բայց ՚ի
չնչել հողմոյ՝ յետս դարձեալ բոցոյ հրոյն՝ այրեաց զբազումս
՚ի պարսից . և յոյնք մտեալ ՚ի ներքս՝ առին զքաղաքն . և
ձերբակալ արարին յարանց պատերազմողաց եօթն հարիւր
երեքտասան ոգիս . յորոց ուրեքն և տասն միայն գտան ողջ ա-
նարատ . զի այլք առ հասարակ խոցոտեալ էին : Եւ ՚ի
յունաց կողմանէ բազում երևելի արք . յորս ՚ի սաստիկ խու-
ճապել յովհաննու քոշի՝ մի ոմն ՚ի պարսից քարամբ եհար ըզ-
գլուխ նոր ՚ի բարձր աշտարակէ՝ և խորտակեաց . և եղև այն
ասուգ մեծ զօրացն հայոց և յունաց , և կայսեր իսկ :

Գ Լ Ո Ւ Խ Լ Ա :

Յաղագս գործոյ եկեղեցւոյն հայոց , արուսաւանայ , արծաշրէ և գրիգորէ . զոր գործեցին յօժարութիւն ընդդէմ գոնեառայ :

545 Ա. Ինի այսորիկ իբրև հաշտութիւն եղև առ Ձիմ-
սկի ՚ի մէջ պարսից և յունաց , ապստամբեցան
՚ի յուստինիանոսէ կայսերէ ամիրիկեցիք , ա-
ռաքնորդ ունելով ինքեանց զգունթար անուն զօրավար յու-
նաց , որ կայր անդ ՚ի պահպանութի երկրին յերեսաց Թշնա-
մեաց . զորս և փոքր ի շատէ նուաճեալ էր մեծ սպարապետն
յունաց բեղիսարիոս : Այն իբրև լուաւ կայսրն , Թէպէտ և
կամեցաւ վերստին առաքել ՚ի վէր նոցա զնա ինքն զբեղիսա-
րիոս , բայց քանզի նա ՚ի մեծամեծ երս զբաղեալ էր յարև-
մտեան կողմանս , փոխանակ նոր առաքեաց զարտաւազդ զօրա-
պետ բազում զօրօք յունաց . և նմին և գունդ մի ՚ի հայոց ,
որոց զօրավար էր նախասացեալ արին արտաւան որդի յով-
հաննու արշակունւոյ . որոյ էին ընկերակից՝ վահան եղբայր
նոր , և գրիգոր եղբօրորդի , և արտաշիր աղգակից նոցին :
Ոչեալ ապստամբին գունթարայ զգալուստ արտաւազդայ՝
միաբանեաց ընդ իւր զբազում երևելի մարդիկ ՚ի մովրիտա-
նայեաց , որք են միջերկրք . և էլ ընդդէմ արտաւազդայ . և պա-
տերազմեալ ընդ նմա՝ վանեաց զնա և զզօրս նորա . յորում մարտի
քաջաբար մեծ եղոյց վահան՝ առ պրոկոպիոս , և անկաւ : Ո՛չ մի
գունթար յետոյ ուրեմն ներկուզէ հաշտութեն խոսեցեալ ընդ ա-
րտաւազդայ ՝ կոչեաց զնա առ ինքն . եդ սեղան առաջի նոր , և
անդէն խողխողել սպան զայրն . և առաւել ևս քառնացաւ :

Պրոկոպիոս. վանդ. Բ. 24. մինչև ՚ի 28։

Ա.Մ. 545

Ո՜այս տեռեալ արտաւանայ՝ խորհեցաւ հնարիւք դաւաճանել զգունեցար ։ յայս սակս ընդրեաց՝ ինամանէ հրաման և երդումն՝ աներկիւղ և անկասկած գնալ առ նա, յուցանելով թէ և ինքն ապստամբիլ կամի՝ ի կայսերէ ։ և իբրև ընկալաւ՝ ի նմանէ զհաստատուն երդմանն, առեալ ընդ իւր զգրիգոր և զարտաշիր հանդերձ քանի մի զօրօք՝ գնաց առ նա, և խօսեցաւ ընդ նմա բազում ինչ ։ և իւրով քաղցրամտիւք լեզուաւ և զուարթ բանիւն յանկոյց զսիրտ նր ։ և պատիր խոստմամբ խոստացաւ նմա զհնազանդուն ։ մինչև ամենևին հաւատալ նմա գունեցարայ, ոչ դիտելով՝ թէ խորհի արտաւան բառնալ զինա՝ ի կենաց ։

Յաւուր միում իբրև առանձին եղեն արտաւան և գրիգոր և արտաշիր, սկսան խօսիլ՝ ի վերայ կորստեան գունեցարայ և նուիրաձուէիցն ափրիկեցւոց ։ այլ արտաւան կամելով առաւել գրգռել զինն և հաստատել զմիտս նր՝ խորագիտութիւն լինի քեզմ դժուարութիւս և վտանգս առաջի արկանել, և զանձն անբաւական ցուցանել ։ Յայնժամ ասէ ցնա գրիգոր ։ լուր լինձ արիդ արտաւան, ոչ ապաքէն այր զօրաւոր ես դու՝ ի մանկուէ ։ քանի՛ քանի՛ քաջուն ցուցել ես քո ընդդէմ յունաց և այլոց ազգաց ։ և արդ՝ ելկ դու բնաւն հար և յայդ գործ՝ բառնալ զապստամբդ՝ ի կենաց, զի արասցես քեզ անուն մեծ առաջի ձերում յունաց ։ զի թէ բեղխարիոս բազմութիւք զօրայ գրաւեալով զափրիկէ՝ քաջ անուն ժառանգեաց, քանի՛ և դու՝ եթէ սակաւուք արասցես զայդ ։ փութա՛ արդ և մի յապաղեր ։ և ես, և արտաշիր ձեռնտու լիցուք քեզ ։

Ճ ։ Յայս խորհուրդ հաստատեալ արտաւանայ՝ առաւել և մտերմացաւ գունեցարայ, և իսպառ գրաւեաց յինքն զսիրտ նր ։ և զի՝ ի նմին ժամանակի Թշնամացեալ եղեն բազումք՝ ի մովրիտանացւոց ընդդէմ գունեցարայ, առաքեաց գունեցար զարտաւան՝ ի վէր նց, ոչինչ կասկած ունելով զհաւատարմութէ նորա ։ Եւ նր պատերազմեալ ընդ Թշնամիսն՝ դարձաւ՝ ի կարթագինէ, որ է Թունուզ ։ առաքեաց անտի դեսպան առ գունեցար, և ասէ ։ հարկ է՝ զի և դու բազում զօրօք եկեսցես այսր, ընդի զօրացան Թշնամիք մեր ։ Եւ նր առեալ զզօրս իւր՝ եհաս առ արտաւան ։ և անդ կարգեալ պատրաստեցան դիմել՝ ի վր Թշնամեաց ։

Ի՛ւր աւուրք միով յառաջ զուարձացեալ գունեցարայ՝ ի միտս իւր յաղթօղ լինել ձեռամբ արտաւանայ, հրամայէր խնջոյս կարգել համօրէն իւրոց մտերմաց և ծառայից ։ Ո՜այս ժամ խրախուճ առնէր դիտօղ առեալ իւր արտաւանայ սպանանել զգունեցար՝ խորհեցաւ յինքագոյն ընդ գրիգորի և ընդ արտաշրի և ընդ այլ երիս Թիկնապահս իւր, և կարգեաց զնմա ըստ խոր-

հրդոց իւրոց : Պատուէրը ետ Թիկնապահացն , որոց օրէնն էր յոտին կալ ի Թիկանց նոն իւրեանց ի ժամ ձաշուն , զի ի խնջոյս անդ զդաստ կայցեն . ոմն զի յակնարկել իւր առնն կատարեսցեն զհրամայեալսն : Հրամայեաց և գրիգորի առնուլ ի քաջացն հայոց ընտիր , և քերել զնա ի պալատն , և ձաղկել ի գաւթի ընդ ծառայսն գունդարայ . և տալ նմ հրամանն , զի ի ժամ սեղանոյն արասցեն ինչ գործ խաղարկուք ընդ ծառայս գունդարայ . իբրպի առեալ զվահանս նմ ընդ խաղ բաղխեսցեն զմիմեամբք . և եթէ լուիցեն աղաղակ ինչ և աղմուկ ի ներքս՝ նովին վահանօք ընթացցին անդր . իսկ թէ ասիցեն ընդ , զգացուսցէ նմ , թէ վասն զի կասկած ունիմք ի գունդարայ , գուցէ անպատեհս ինչ գործեսցէ և դաւաճանեսցէ զմեզ : Այնժամ և արտաշիր՝ որ առաջին ցանկայր լինել յայն գործ , կամելով իւր վահանաւ ինն ամրացուցանել զինքն ի ներքուստ , խորտակեաց զքանի մի նետս , և ի կոտորոց նոցա պնդեաց փոկով ի վէր ձախու բազկին մինչև ցարմունկն . և պատեաց զգեստովն . զի նովին կարասցէ փոքր մի զդէմ ունել ձգման և բաղխման սուսերաց : Օ այս արարեալ արտաշրի՝ ասէ ցարտաւան . յանձին կալեալ է իմ անյապաղ ի գլուխ տանիլ զիրդ . և ակն ունիմ ի մի հարուածէ սատակել զայրն սուսերաւս . այլ չունիմ ասել , թէ յինչ ելս վճարեացին այս գործք . զի թէ արդարև հասեալ լիցէ ի վէր բռնաւորին քարկուճն , անշուշտ զօրացուսցէ տէր զբազուկ իմ . իսկ եթէ ոչ յաջողեսցի , համարիմ զայն ինձ ի պատիժ պատուհասի վէն յանցանաց իմոց . քայց դու թէ տեսցես , եթէ չէ իմ խոցեալ զայրն առ ի մահ , անդէն սպան զնա սրով իմով . զի գուցէ մատնեալ նէր զնա ի տանջանս , ակամայ հարկ լինի ինձ խոստովանիլ , թէ խորհրդով քով արարի զայն . որով լինի ինձ և քեզ միանգամայն ի մահ մատնիլ . իսկ եթէ դու սպանցես զնա , մեծասցի անուն քոյ առաջի նորա , և յուցցի քոյդ հաւատարմութիւն :

Ձ . Ապ՝ իբրև ժամ եղև խնջոյից , և զաղթութեան հրաւիրեալքն , բազմեցաւ և արտաւան առընթեր գունդարայ՝ իբրև սիրելի բարեկամ նէր . և երկու Թիկնապահք կային ի յետուստ նէր . մինն յետոյ և գրիգոր և արտաշիր . ընդ որս և մին յերից Թիկնապահացն . իսկ զօրքն հայոց կացին արտաքոյ ընդ ծառայսն գունդարայ՝ կատարել զհրամայեալսն : Այն ինչ նորոգ ընդ գինի մտեալ էր նմ , եւայր սիրտ արտաշրի ձեռն ի գործ առնել վաղվաղակի սպանուճ գունդարայ . և ոչ սպասեալ գիտող ժամու՝ իբրև մօտ տարաւ զաջ իւր ի վաղակաւորն , նշանացի արարեալ կատեցոյց զնա գրիգոր . և

խօսեցաւ ընդ նմա հայհոյելն . չև է ասել բռնաւորին հարեալ՝ ի գինւոյ , և դեռ իշխէ մնալոյ իւրոյ ։ Ցուժուռ հայեցեալ արտաշրի ընդ դրիսդոր , և զուսպ կալեալ զհառաչանս սրտի իւրոյ , ասէ ցնա . այր դու՝ չարութիւք նահանջ արկեր քաջի ձեռին , որ արդ իսկ զոգիս կորզեալ էր դորա ։ Եւ զայս ասի պիսի օրինակաւ խօսէին , մինչև ոչ ումեք՝ ի բազմականաց իմանալ ինչ ։

Եւ իբրև կարի ինն զուարթացաւ գունթար՝ ի գինւոյ՝ հրամանեն ետ և թիկնապահայն կերակուր առնուլ . և յելանել ընդ արտաքս՝ պատճառանօք ինն գնաց ընդ նմա և արտաշիր . և յառանձին տեղւոջ ուրեք՝ ի բաց եդեալ զպատեանս սրոյն՝ ծածկեաց զսուրն՝ ի ներքոյ զգեստուցն ընդ անթովք՝ առ՝ ի պատրաստի ունել զայն . և ձեպով անդրէն՝ ի ներքս մտեալ՝ մատեաւ առ գունթար , իբր թէ ունիցի ինչ գաղտ խօսիլ յանկնջս նր ։ Ցեսեալ արտաւանայ զմուտ արտաշրի շտապաւ , զոյն երեսաց նր շրջեցաւ առ վարանելոյ սրտին իւրոյ , թէ գիարդ յայդուցեալն այն իրք . մինչև յայտնի տեսանել ոմանց՝ ի բազմականաց՝ թէ տապնապ մեծ կայ՝ ի սրտի առն . թէպետև ոչ հարցին ինչ զպատճառն ։

Եւ եղև՝ ի մատչել արտաշրի ստիպաւ առ գունթար՝ ի ծունկին գունթարայ խօսեցաւ ընդ նմա , և ասէ . գիարդ քան է քո ընդ գունթարայ . և՝ ի կասիլ անդ արտաշրի՝ տեսեալ ծառային , թէ սուր մերկապատեան կայ ընդ անթովն նր , աղաղակեաց և ասէ . գինդ է այդ ։ Յայն քարքառ և գունթար՝ որ յեղեալ էր՝ ի սեղանն՝ զաջ ձեռն իւր՝ ի ծնօտս ունելով , իբրև գարձաւ հայիլ՝ ի ծառային , աձեռնարկեալ արտաշրի՝ եհար սրովին զգլուխ գունթարայ . և ընկեց՝ ի բաց զմահն ձեռակատուն հանդերձ մատամբք ձեռինն ։ Այն տեսեալ միոմն՝ ի բազմեցոց՝ որ և՝ ի սրտէ զմահն կամէր գունթարայ , ձայն եքարձ և խրախոյս ետ արտաշրի՝ կրկնել գհարուճածն , և՝ ի մահ վիրաւորել զայրն ։ Այլ իբրև՝ ի վեր ոստեաւ գունթար՝ կամելով զդէմ ունիլ հարկանողին , հանեալ արտաւանայ զվաղակաւոր իւր մեծ և երկայն՝ զոր կրեր յազդեր իւրում՝ , միեաց ուժգին՝ ի ձախու կողս գունթարայ մինչև ցերախակալն , և եթող՝ ի վիրին ։ Եւ մինչդեռ ոգիքն գունթարայ՝ ինամս էին , թէպետև ջանացաւ խլրտիլ և առնուլ վրէժ յարտաւանայ , քայց քանզի կարեվէրն խոցեալ էր , անդէն անկաւ և եհան զոգի ։

Ձ · Յայս շիտակ ամբոխեալ՝ ամ բազմականաց , որոց կէսք՝ ի կողմն գունթարայ էին , և կէսք թշնամի նր՝ ի ներքուստ , անկան՝ ի խուճապ տապնապի . և ուղեղեցոս ումն մտերիմ գունթարայ յարձակեցաւ սուսերաւ՝ ի վր արտաշրի . և նորա

ձախու բազկաւն՝ որ ի ներքոյ պատեալ էր , իբր վահանաւ
545 ի քաց վանել զսուրն՝ եհար աջովն զնա ինքն զուղիթէոս , և
սպան անդէն ։ Եւ յորժամ տապաստ անկան երկոքին սոքա՝
գունդքն և ուղիթէոս , զէն վերացոյց արտաւան և յարձա-
կեցաւ ի վերայ Թիկնապահացն գունդարայ , որք ընդ-
էին ի ներքս . ընդ որում յարձակեցան և քանի մի իշխանք ։
Յայն տագնապ հասին ի ներքս և զօրքն հայոց՝ ըստ հրամա-
նին , զոր առեալ էին ի գրիգորէ . և սրախողխող կոտորեցին
զնոսա ծառայս և զբարեկամս գունդարայ ։
Յայնժամ միաբանեալ ընդ զօրս հայոց քաղցրմք ի զօրացն
գունդարայ՝ որք ակամայ կային ի հնազանդութեն բռնաւորին,
սիրեցան շուրջ յիւրեանց տեղիս . և վանեցին զամենեսին՝ որք կամա-
կից էին յասպետամբութեն գունդարայ ։ Եւ այսպէս վերատին
նոճաձեալ քաջին արտաւանայ զկողմն սիրե-
կոյ ըստ հրամանի յուստինիանոսի , եկաց անդէն ի զգուշութի պահ-
պանութեն երկրին . և առաքեալ հրեշտակս՝ ծանոյց կայսեր
զնոսա եղեալսն ։
Ընդ այս գործ արտաւանայ ուրախացեալ յոյժ յուստինիա-
նոսի , և գովեալ մեծապէս զհաւատարմութի նր , կացոյց զնա
դուքս սիրեկոյ . և այնուհետև մեծացաւ անուն արտաւա-
նայ յոյժ . և փառաւորեալ լինէր համբաւ քաջութե նորա ի
դուռն կայսեր և յամենայն տեղիս ։ Եւ յետ կալոյ նր զմիկ ինչ
սիրեկոյ՝ հրամայեաց առեալ ի կայսերէ՝ դարձաւ ի կոստան-
դնուպօլիս . և կայսրն կրկին փառաւորեաց զնա՝ տուեալ նմ
պատիւ հիւպատոսութե ։
546 Ե . Եւ այս արտաւան հաւանութե կայսերն խօսեցաւ իւր ի Պրոկոպիոս
կնութի զդուստր քեռ նր զոզրեկտիա , որ էր լեալ կին արով- գոթ. գ. 31.
քինդայ զօրագլխի սպանելոյ ի գունդարայ . և մինչդեռ ի և 32 ։
պատրաստի էր կարգել զհանդէս հարսանեացն, լուաւ կայսրն
մեծ արտաւան քաղցրմ ամօք յառաջ ամուսնացեալ է ընդ այ-
լում յաղին հայոց , և թէ ոչ հաճեալ ըստ կին իւր՝ արձակեալ
է զնա ի քաց ։ Օ այս իբրև լսեցաւ , ոչ արժան համարե-
ցաւ տալ նմա զոզրեկտիա զմեծարժան ազգական իւր ։ Եւ ի
տարածել այսր համբաւոյ , առաջին ամուսին նր եղեալ յաղին
հայոց՝ եկն ի կոստանդնուպօլիս . և յանդիման եղեալ թա-
գուհւոյն՝ ծանոյց նմա զիրան ։ Որոյ վասն զայրացեալ թա-
գուհւոյն ի վր արտաւանայ՝ ետ նմա սակամայ կամք առ-
նուլ առ ինքն վերստին զառաջին կին իւր ։ Նայր ոչ յետ
քաղցրմ աւուրց կրկին արձակեաց զնա արտաւան . և զի
սրեկտիա ամուսնացաւ ընդ այլում, ընդ այս դժուարեալ յոյժ
արտաւանայ՝ վառեցաւ ատելութե ընդդէմ պետուէ յուստաց ։
Եւ ընդ այն ժամս ի կոստանդնուպօլիս ազգական ոմն ար-

տաւա-

տաւանայ ապշակ անուն ՚ի տանէ արշակունեաց · սա յառաջնմէ դաւաճանութի խորհել ընդդէմ կայսեր՝ դաշնադիր եր լեալ ՚ի ծածուկ ընդ խոսրովու պարսից արքայի · որոյ վճռ հրամանաւ յուստինիանոսի կալեալ էին զնա , և գան հարեալ ընդ Թիկունս , և առ առակս շղթեցուցեալ ՚ի մէջ քաղաքին ՚ի վէր ուղտու · և ապա Թողեալ էին զնա անվնաս ։ Եւ նա վճռ այսպիսի առնարգանաց դառնացեալ յոյժ ընդդէմ յունաց՝ միշտ չարիս խորհէր զնոցանէ ՚ի սրտի իւրում , և սպասէր դիպող ժամու առնուլ զվրէժ նախատանացն ։

Եւ իբրև իրազեկ եղև , Թէ նաև աղգակից իւր մեծն արտաւան գժտեալ է ընդ կայսեր և ընդ Թագուհւոյն , եկն յարեցաւ ՚ի նա , և առաւել ևս բորբոքեաց ՚ի սիրտ նորա զխուր թարկուէ ընդդէմ յուստինիանոսի · առ ինչ է ասէ այդչափ քոյ պատիւ զօրագլուխ և հիւպատոսութե ընդ այդչափ անարգանաց և վատանուանութե ՚ի պատճառս կնոջ · ես վնմանարգանս մեծ ինչ համարեի , այլ քոյդ առաւել եղև · և ես ընդքոյդ տեսեալ՝ զիմն մոռացայ · և արդ՝ մինչև յերբ իցէ մեզ տառապիլ ՚ի ձեռաց ագգիս Հոռոմոց · ոչ տեսանես զնա մեր հանապազ լլկել ընդ իշխանութե սոյ , և ձնշել ընդ բեռամբ հարկատուութե · ինձ ոչինչ անդէպ Թուի վտարանդել մեզ , և գործ մեծ գործել ընդդէմ սոյ · և արդ զի յապաղես · զոր դիւրաւ կարես վձարել · ոչ ապաքէն յուստինիանոս առանց զգուշութե պահապանաց յառանձին սենեկի ընդ ալեւոր քահանայս նստի զցայգ յընթերցումն գրոց · և եԹէ ձեռն միեսցես ՚ի նա , ո՛ կարասցէ զդէմ ունել քեզ · ահա և գերմանոս մտերիմ քո և սիրելի՝ եղբօրորդի կայսեր՝ գժտեալ է ընդ նմա · և գիտեմ , զի ձեռնտու լինի և նա քեզ ։ Եւ այլ ևս բազմ բանս խօսելով արշակայ՝ գրգռեաց զարտաւան ՚ի սպանուլ կայսերն ։

Եւ իբրև դիւրահաւան եգիտ զնա , յայտնեաց վնորհուրդ իւր և այլսւմ ոմանք իշխանաւորի հոյոց , որ էր երիտասարդ փառացի և կորովի · և որոց զնա ևս ՚ի կողմն իւր ։ Եւ ապա գտեալ առանձինն զերեց որդի գերմանոսի զյուստինոս սպատանին , էառ նախ երդումն ՚ի նմանէ՝ ոչ յայտնել ոմանք , զոր ինչ ունիցի ասել նմ. և ապա ՚ի վեր եհան զբանն ։ Իսկ նա այլայլեալ ՚ի ներքուստ , և ոչինչ ցուցեալ արտաքուստ՝ պատ ՚ի պատ բանիւք արձակեաց զնա · և գնացեալ պատմեաց հօր իւրում ։ Եւ ՚ի բազմ շնջմանէ հուսկ յետոյ իբրև եհաս բանն յականջս կայսեր , կալաւ զարտաւան , և ընկեցեալ զնա յիշխանութե՝ եդ ՚ի գիպահոջ յարքունիսն · նոյնպէս և զարշակ և զայլ համախոհս նոցա արգել ՚ի բանտի ։

Ագաթիաս. գրն. Գ. 39։ և Ե. 24։

Ա.Տէ զկնի ժամանակաց իբրև սատակացաւ պատերազմ յունաց և գոթացւոց , որոց յարձակեալ ՚ի սիկիլիա՝ յաղարտ

վարեին զայն, կայսրն յուստինիանոս յետ առաքելոյ անդ ըզբազմուն զօրայ՝ խորհեցաւ յանձնել արտաւանայ զայն գործ. նա ասէ միայն կարճ դիւրաւ վանել անտի զգօթացիս. վայ վերստին հանեալ զնա ի պատիւ՝ կայոյց զօրավար զօրացն Թրակիոյ, և առաքեաց ի սիկիլիա : Ի չոքել արտաւանայ՝ ալեկոծութեանն պատահեալ՝ անկաւ ի կղզի մի. և յետոյ հասեալ ի սիկիլիա՝ առաջնորդեաց խմաստութեամբ և քաջութեամբ յունական զօրուն. և ի հնել արկեալ զգօթացիս՝ վանեաց զնա. որով և միւսանգամ ժառանգեաց զանուն յաղթութեան. և փառաւորեցաւ առաջի յունաց մինչև ցվախճան կենաց իւրոց :

ԳԼՈՒԽ ԽԸ :

Յաղագս մահուան Մխիթայ, և Տրդատայ պետութեանն և վճռաւոր եղանակութեանն Տովմասի երէցդրէ, որ ապար զերդուդ ծողմէն գոռնայ, և նորագեայ պատմչին. յորմէ սկսանի ընդհանուր հայոց :

548 ՈՒ. Ետ մեծ գնացի՝ որ էր կարգեալ մարզպան մեծին հայոց՝ կացեալ յիշխանութեանէ ի դուինն քաղաք՝ ամս. Ը. վախճանեցաւ. և ի տեղի նորա առաքեաց խոսրով արքայ պարսից մարզպան հայոց զդենշապուհ ոմն պարսիկ, այր անողորմ և անամօթ. որ ըստ գրելոյ առողկայ տարոնեցւոյն, * զչնմոլութիւնն շատացոյց, և զոր
,, մկդական հուրն վառեաց ի ռշտունիս. և ստիպեր զքրիս-
,, տոնեայս՝ կրակի երկիր պագանել. յաղագս որոյ ասէ բա-
,, զումք մեռան ‖ : Այս կամելով տարածել զհրապաշտութիւնն, ոչ շատացեալ միով կրակատամբ՝ զոր պարսիկք ունէին ի դուինն քաղաքի, կանգնեաց և զայլ բազմ մսխրանոցս. և շինեաց զայլ միւս ևս մեծագոյն կրակատուն մերձ յապարանս ուրումն պարսիկ իշխանի, որոյ անուն էր Համամկար. կոչեաց և յօժէն պարսից զբազում մոգս. և ձեռամբ նոցին ստիպեր զհայս՝ դառնալ ի հաւատոց. և բազմացոյց զկըրծուածս ի քաղաքին :

Լուր ի քաղաքի անդ ի դուինն այր ոմն աղքատ ոտժիկ՝ մանաւանդ ի հրէից անուն. որ և լեալ էր քրիստոնեայ, և կոչեցեալ դրիգոր : Ոմանք տեղեկուն առեալ դենշապհոյ՝ կոչեաց առաջի իւր. և յետ բազում տանջելոյ՝ տեսեալ թէ հաստատուն կայ նա ի հաւատս, եւ սպանանել զինա. և ապա ձեռն

Ընդ. 2 :
Ամոս. 3 :
Արդան :
Ենոխ :

Յովհ.կաթ։ Յովսեփ ։ Յովհաննէս ։ Յակոբոս ։ Յովհաննէս ։ Յովսէփ ։

Ի տարի տէրունական · ՌՆ · եւ ի թագաւորութեան Հայոց · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Տրդատայ · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Յովհաննու · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Գրիգորի · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Ներսիսի · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Սահակայ · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Մովսէսի · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Եղիայի · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Յովսէփայ · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Յովհաննու · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Գէորգայ · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Ստեփանոսի · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Ներսիսի · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Ստեփանոսի · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Յովհաննու · ՃԽԲ · եւ ի կաթողիկոսութեան Գրիգոր

երկուցեալ՝ թէ գուցէ առաւել ևս Ձարաւկեացի հուրն ընդ քիւքն , վաղվաղակի աղբ արար քահանայից թերել զոք խաչն և զաւետարանն , և ձեռնագրել նովաւ ի վերայ ապարանիցն .

և զայս իբրև արարին , խակոյն շնջաւ հուրն :

Օ այս տեսեալ որդւոյ մոգպետին , որոյ անուն էր Մախուժ , ի քեշապուհ գաւառէ ի քուրաստան գեղջէ , գնաց ընդ հետ քահանային . և թողեալ ի բաց զօրէնս մոգուԹե՝ կամեցաւ լինել քրիստոնեայ : Իբրև գիտացին զայս մոգքն , կալան զնա և կացուցին առաջի մարզպանին . և յետ յորդորելոյ զնա Թողուլ զքրիստոնէուԹիւն , իբրև տեսին՝ Թէ ոչ առնու յանձն , եդին զնա ի բանտի , ուր կայր ներսէս աբեղայ և սահակ . յոյժ և ուսաւ մախուժ զնամ կարգաց քրիստոնէուԹեան . և յետ երից ամսոց մկրտեալ անդէն ի բանտին՝ կոչեցաւ յիշատակ բուզտ , որ Թարգմանի ածատուր . և անդէն զգեցաւ զգեստ կրօնաւորի :

Ը . Տեսեալ հայրապետին մովսեսի , Թէ չէք հանգիստ յերեսաց մոգուցն , մանաւանդ յերեսաց գենշապհոյ մարզպանին , առաքեաց հրեշտակս առ խոսրով արքայ պարսից հանդերձ ընծայիւք և ԹղԹովք . և բազմ աղաչանօք խնդրեաց ի նմէ՝ տալ փոքր մի դիւրուԹիւն ցիս հայոց յոյժ առնելովնմա զնամակ հաշտուԹեն վաղարշայ պարսից արքայի , զոր ետ յաւուրս վահանայ մամիկոնէի՝ մի երբեք նեղել զհայս վն հաւատոյ : Նա խոսրով ընկալեալ զաղաչանս նորա՝ առաքեաց փխկ գենշապհոյ զայլ ոմն մարզպան վչնաս վահրամ առնուն , հանդերձ երկոքումբք ընկերօք իւրք խորհրդականօք . զի կարգեացեն սահման խաղաղուԹեան ցհին , և արդելցեն զմոգան ի բռնադատելոյ զհայս . և մի ստիպեացեն զոք ի հայոց ի պաշտօն հրոյ և արեգական . և մի և Թողցեն զոք ի պարսից դառնալ ի կրօնս քրիստոնէուԹեան . և եԹէ ոք դարձեալ լիցէ ի քրիստոնէուԹի , դարձցի վերստին յօրէնս պարսից . և եԹէ ոք ի հայոց դարձեալ լիցէ յօրէնս պարսից , ի կամիլն վերստին դառնալ ի քրիստոնէուԹիւն՝ մի արգելցեն մոգքն :

Իբրև եհաս մարզպանն վչնաս վահրամ ի դուին , բազում պատուով ընկալեալ եղև ի հայոց . և ըստ պատուիրելոյ արքային՝ կալաւ զնա ի բազում խաղաղուԹե : Այլ սակայն իբրև ազգ արարին նմ մոգքն վն յիշտիբուզտայ , Թէ ի մոգուԹէ է դարձեալ , կոչեաց զնա յատեան իւր . և յետ բազմ յորդորանաց և սպառնալեաց՝ իբրև ոչ եԹող նա զքրիստոնէուԹին , ետ խաչել զնա . ուր և նեռահար արարեալ սպանին զերանելին : Նա կաԹուղիկոսին հրամանն առեալ ի վչնասայ՝ եբարձ զմարմին նր . և տարեալ Թաղեցին պատուով յաւագ նկեղեցին . և գնաչն ի բզմ մասունս բաժա-

ներալ՝ քաղքենին հաւատացելոց ։ Օ՜ այս պատմեն քաղցրագ
և նա ինքն ներքսագ աբեղայ՝ որ բանտակից եղև նմա , յայտ
առութեան ՚ի ՓԻԼԻՊՓԻ · 25 ։ ՚Ի նմին ամի կատարեցան ՚ի պարսս
և երկու վկայք յաղթեն հայոց՝ սահակ և սամուէլ ։

Ե · ՚Ի նմին ՃԻԷ ՚ի սկզբան Թուականութեն հայոց՝ սկսաւ
եւտրոպիոս եպիսկոպոսի արծարծել զաղանդ յունականաց
զսերմանեալն ՚ի յունականեայ աղիկառնացւոյ , որ անչարչա
րելի ասէր զմարմինն քրիստոսի , և առաջօք համարեր լինել զնմա
մարդկային կերպս և զաւրանս փրկչին · և սիրեալ զայս
մոլորութիւն ՚ի ձեռն եպիսկոպոսացն յայնեալ տեղիս մինչև ՚ի սահ
մանս հայաստանեայց · ՚Ի որում գրէ ՃԻԼԱԿԻՆ յովհաննէս
ասորի եպիսկոպոս ասիոյ առ ասսեմանեայս · կատոր · Ը · գլ · ԻԱ ։ Օ՜ այն
իմացեալ մովսիսի կաթողիկոսին հայոց՝ իսկ և իսկ ետ արտաքսել
զաղանդաւորսն ՚ի կողմանց վիճակին իւրոյ · և ոչ թողացոյց
ումեք յարել ՚ի վիճակն նոյ · զոր և յետ ՃԻԿԱՑ ՚ի կրկին
սերմանել ոմանց՝ ժողովել դատապարտեաց զայն յովհան ի
մաստասեր · ոչ ունիմք յետոյ պատմել ։

Ահաւադիկ այսու ամենայնիւ ասորիք վրդովիչք և չարախօսք ազգիս մե
ղոյ համարեցան և համարիչին , թէ զայն մոլորութիւն ընկա
լեալ իցեն հայք · որոյ վասն և ՚ի գիրս իւրեանց մեղադիր լինիին
հայոց · ընդդէմ որոյ պատասխանեն սքանչելագոյնքն ՚ի
թուղթն առ միխայէլ կաթողիկոս ասորւոց՝ գրելով այսպէս ։

* Յառաջացաք և զոր ՚ի բանից ծանոյց մեզ՝ զամանց , որ ա
,, սացեալ են առաջի ձեր , եթէ հայք զյուլիանեայ աղի
,, կառնացւոյ ունին զխոստովանութիւն , որ առ աչօք առաց
,, զմեռելութիւնն քրիստոսի և ոչ ՃՇմարտութիւնք · զոր նզովէ կա
,, թուղիկէ եկեղեցի զայսոցիկ ասացողն և զընդունողն ,
,, այլև զանիրաւ զրպարտողն զմեզ ։ Օ՜ նոյն գրէ նա ինքն
հնարհալին և առ յակոբ վիճպ ասորի՝ յասէն · * ՚Ի շատա
,, կեալ էիր ՚ի գրեցեալս և զյուլիանէ աղիկառնացի · · · ·
,, յուլիանէն այն որոյ ՚ի մէնջ իբրև զմի ՚ի չարափա
,, ռացն ։

ԳԼՈՒԽ ԽԱ։

Յաղագս երիցորդ ժողովոյն Կոստանդինուպոլսոյ, որ ասէ հինգերորդ ընդհանուր ժողով։

ՅԱտմուրձի այսր ժողովոյ թէպէտ և ոչ վերա-
բերի ուղղակի յայս մեր գործ, բայց քանզի
տեղեկութիւն սոր կարևոր է ազգի մերում, միան-
գամայն և հայի՝ ի պարծանս ազգին, ըստ որում՝ ի սմա հան-
դիպիմ բերեալ եղև՝ ի վկայութիւն նամակին Հայոց գրեալ առ
պղոկղ, և եղև այն զկնի այսր սքանչ ժողովոյս ընդդեմ մոլորութեան
Թէոդորոսի Մոպսուէստացւոյ՝ զոր նզովեալ էին Հայք, պատ-
շաճ վարկաք առանձին գլխով աւանդել զսա առաջ, համառօ-
տելով՝ ի մատենագրութենէ ժողովոյ. կոչի. ըստ. երես. 157.
մինչև՝ ի 400. և յայլոց հեղինակաց։

Յետ սքանչ ժողովոյն քաղկեդոնի, որպէս ուրեք ուրեք յիշեցաք
յընթացս այսր պատմութեան, յուզիւր անդադար խռովութիւնք յե-
րեսաց նեստորականաց և եւտիքականաց. երբեմն ստատակ-
նայր, և երբեմն թաւալանայր։ Ունակ յաւուրս ձմռացս այսոցիկ
՝ի Թէքրութ յուստինիանոսի մեծի առաւել սկսաւ բորբոքիլ՝ ի
կոստանդինուպոլիս և՝ ի պաղեստին, ևս և յափրիկէ. զի
նեստորականք առ ջատագովելոյ զիւրեանց մոլորութիւն՝ հաս-
տատէին ատութիք, թէ ժողովն քաղկեդոնի ընկալեալ էին
զդիրս Թէոդորոսի Մոպսուէստացւոյ, ևս և զմոլար գրուածս
ինչ Թէոդորետոսի կիւրացւոյ, և իբրեայ եդեսացւոյ. որով
և եւտիքականք զօրանային ցուցանել, թէ ժողովն քաղկեդո-
նի էին մոլորեալ. որովհետև ընկալեալ է ասեն զայնպիսի
գիրս. և էր շիտիք մեծ՝ ի նոսա։ Եւ այսր պատճառի աղագաւ
յուստինիանոս կայսր դատապարտեաց հրովարտակաւ զե-
րեցունց գիրսն. միանգամայն և եցոյց՝ թէ ժողովն քաղկե-
դոնի ոչ իւիք հաւան գտաւ մոլորութեանն։ Ոյոր և այլ ինն
աղմուկ՝ ի միայնակեացս պաղեստինոյ. զի ոմանք՝ ի նոսա ջա-
տագովէին ընդեմ այլոց զմոլորական բանս ինչ որոգինեայ և
զաշակերտաց նորա։

Եկն ըստ այն աւուրս պապն Հռովմայ վիգիլիոս՝ ի կոստանդի-
նուպոլիս. և յուստինիանոս խնդրեաց՝ ի վիգիլիոսէ քննութի
առնել՝ ի վերայ այսոցիկ երից. որոյ վրդ ժողովեցան անդ եօթա-
նասուն եպիսկոպոսք. և յանկանիլ տարաձայնութենէ՝ ի մէջ նոցա
պապն վիգիլիոս յետ զգուշաւոր քննութե արար վէճս դատա-
պարտութե՝ ի վերայ այնց երից գրոց, որք և ասին երեք գլուխք։

Յիշատակ ոմանց ուրուց։

Լ. Ֆ
Լ. Ֆ

Ի տարածիլ համբաւոյ այսր վճռոյ յայլևայլ տեղիս այլևայլ
քանիւ՝ ծագեցան և այլ քաղում յուզմունք խռովութեց ,
մանաւանդ յափրիկեցիս և ի լիւբիկեցիս ։ Զաղաչս այսորիկ
խօսեցաւ վիգիլիոս ընդ կայսերն՝ գումարել ընդհանրական ժո-
ղով ի հռոմ . իսկ կայսրն աղաչեաց զնա գումարել ի կոս-
տանդինուպոլիս արևելեայ և արևմտեայ եպիսկոպք՝ յերկուց
կողմանց հաւասար թուով . և եդ արգել մի՛ քնաւ յայն ա-
ւուրսն վիճաբանել ումեք ի վէր այնց իրաց , մինչև ժողովն
որոշեսցի ։

Կայր քանզի յապաղեալ լիներ գումարումն ժողովոյն , զի ա-
րևմտեայքն ի հեռաստանէ անագանելին գալ , ոչ համբերեալ
յուստինիանոսի՝ ինքնին վերաւին հրովարտակ եհան ընդեմ
այնց երից գլխոց . և հրամայեաց կախել զպատձէնս նոր յե-
կեղեցիս ։ Ընդ այս դժուարացեալ վիգիլիոսի պապին , զի
չէր անկ յուստինիանոսի զայս առնել ինքնին , ժողովեաց զե-
պիսկոպոսունս՝ որք ի քաղաքի անդ էին , և արգել զանձինն
ի հաւանութենէ հրովարտակի կայսերին . և ինքն խոյս ետ ի
քաղկեդոն . և ապա զնչեալ կայսեր՝ յետս դարձոյց զհրովար-
տակն , և եթող զկրան ընդհանուր ժողովոյ ։

Ը . Կեալ ապա հարիւր վաթսուն և հինգ հայրապետացն՝ 553
գումարեցան ի կայսերական քաղաք անդր ի կոստանդինու- Ը
պօլիս՝ յամի տեառն . 553 . յերկրորդ ամի թուականութենէ հայոց ։
Ընդ աքեաց հրովարտակ յայս ժողով յուստինիանոս կայսր ,
առ ի յորդոր լինել հարց անաչառ քննութեամբ հայիլ յա-
ռաջեգեալ գլուխս բանից , և հաստատել զխաղաղութենէն ի
մէջ եկեղեցւոյ . ուր և յետ յիշատակելոյ զչորեսին սբ ժո-
ղովս , և թէ զնոյրդ իւրաքանչիւր կայսերք՝ որք էին ի նոյն
ձիկս , փոյթ կալան վասն նոցունց իրաց , յայտ առնէ և զիւր
ջանս ։ Ո՛չնի մարկիանոսի և լևոնի կայսերաց՝ ասէ , * եթէև
,, ի վերայ անցին դոյզն ինչ ժամանակք , դարձեալ յարեան
,, հետևողք նեստորի և եւտիքեայ . և այնչափ աղմուկ գրգը-
,, ռեցին ի սբ եկեղեցիս այ , մինչև պատուակտումն և հերձ-
,, ուած լինել ի նոսա , և չառնել քնաւ հաղորդութենէն եկե-
,, ղեցեաց ընդ իրեարս . զքո ոչ իշխեր օք ի դնալն ի քաղաքէ
,, իւրմէ յայլ քաղք՝ հաղորդիլ անդ , և կամ կղերիկոսի ուրուք
,, յայլ քաղք գնալ՝ և յեկեղեցի մտանել ։ Ո՛յլ օրժամ ուած ըն
,, մարդասիրութենէ իւրում հաւատաց ի մեզ զԱդ իշխանու-
,, թեա , ակիզբն և հիմն մերոյ ինքնակալութեա արարաք ի
,, մի միաբանել զպատուակտեալ քահանայս սբոց եկեղեցեացն
,, այ յարևելից մինչև յարևմուտս ։ Ո՛ւ ի բաց հատեալ զնմ
,, յոյզ և խնդիր , զոր գրգռէին ընդեմ սբոյ ժողովոյն քաղ-
,, կեդոնի հետևողքն եւտիքեայ և նեստորի , տուաք քարո-

,, զել

,, զել զնոյն սբ ժողովն ըստ նախակարգեալ այլոց երից սբ ժո-
,, ղովոց եկեղեցեացն ամ , ստուգապէս գիտացեալ՝ զի որ
,, միանգամ՝ ի նմին կարգեցան զհաւատոյ բանք , համաձայն
,, են ամիւք այլոց երեցունց սբ ժողովոց • և բազում իրօք շի-
,, նեցաք և հանդուցաք զմիտս հակառակողացն առ այն սբ
,, ժողով • իսկ զորս միանգամ յամառ գտան յընդիմակացու-
,, թեն առ այն սբ ժողով , ՚ի բաց մերժեցաք՝ եթէ ՚ի սբ ե-
,, կեղեցիս ամ և եթէ ՚ի վանորայս • ոմ զի պահելով զմիա-
,, բանութեն և զհաղորդութեն սբ եկեղեցեաց և քահանայից
,, նոյ , մի և նոյն հաւատք՝ զոր չորեքին սբ ժողովք դաւանե-
,, ցին , ՚ի սբ եկեղեցիս ամ քարոզեացի ‖ ։

Ա.րդ՝ յայս ժողով յետ բազմ իրաց և քննութեց , ՚ի մէջ բե-
րին հարք ժողովին ՚ի չորրորդ գումարման զմոլորական գըր-
ուածս Թէոդորոսի մոպսուէստացւոյ , և զհանգամանակ գա-
ւանութեն նորին • և գտեալ զնմին հաւանձայն վիճպութեն նես-
տորի՝ և իբր արմատ դառն տնկոյ նորին , միաբան հերքեցին
և նզովեալ դատապարտեցին , և ասեն • * զայդ հանգամանակ
,, ատանայ է յօրինեալ • նզովեա՛լ եղիցի յօրինօղ այդր հան-
,, գամակի • • • զԹէոդորոս մոպսուէստացի ամենեքեան նզո-
,, վեմք • (և դրձ՛ել կրկնեցին) • զԹէոդորոս և զգրուածս նր
,, աւքին նզովեմք ‖ ։

Ե • ՚Ի հինգերորդ գումարման հրամայեցին հարք ժողո-
վոյն ՚ի մէջ բերել նաև զվիճայուԹիս նախնեաց ընդեմ նորին
Թէոդորոսի • * Ա.նեՀերցեա՛լ լիցի ասէն և զոր ինչ միանգամ
,, գրեցին սբ հարք ընդեմ Թէոդորոսի մոպսուէստացւոյ և
,, ընդեմ հայհոյուԹեց նր • և որ ինչ գտանի յարքունի գի-
,, ւանս և ՚ի պատմական Ճառս ‖ ։ Ա.յս նախ յառաջ բերին
զբազում գրուածս սբոյն կիւրղի • յորս բացե ՚ի բաց հերքեալ
լիներ վիճպութի Թէոդորոսի ։ Ա.յս զինի այնորիկ յառաջ բե-
րին զԹուղթն կիւ զնաժանին հայոց , զոր գրեալ էր սբն սա-
հակ պարԹև ընդեմ Թէոդորոսի առ պրոկղ՝ հաւանձայնուԹի
հարցն հայոց , որք գումարեցան յերրորդ ժողովն աշտիշա-
տու • ըստ որում յիշեցաք • է • 59 • երես • 527 • զորոյ զհատ-
ուածք բանիսն գտանեմք ՚ի գործս այսր սիւնհոդոսի•կոփ • ը •
երես • 240 • ուր նախ իբր վերնագիր առաջի գնէ վերծանող
նամակին զայս բան • * Ա.նամակէն՝ զոր մատուցին երիցունք
,, և սարկաւագունք առաքեալք յեպիսկոպոսացն և ՚ի կղերիկոսաց
,, և ՚ի միաբնակեցաց հայոց մեծաց , և պարսից և այլոց աշ-
,, գաց՝ առ պրոկղ որբազան եպիսկոպոսն քաղքին կոստանդ[illegible]
,, սոյ ‖ ։ Ա.յս ապա սկսաւ կարդալ զբանս նամակին հայոց •
յորում գրեալ էր այսպէս •

* Ա.տաւ այր ոմն ժամանա , և՛ս առաւել գազան գիւանմամբ ,

,, առա-

,, սուտանուն Թէոդորոս , զեղկսուԹԵ ունելով զձև և զա-
,, նուն յանկեան ուրեք և յանծանօԹ վայրի զօղեալ՝ի յերկ-
,, րի , յանաւազ աւանի միւսմ կթուկեցւոց՝ի մտպտՀես-
,, տիա · որոյ սկիզբն և ծագումն առեալ Հերձուածոյ՝ի պօ-
,, ղոսէ սամոստացւոյ , և՝ի նոյն յարեալ և զիրտինեայ զա-
,, ղանդս և զայլոց Հերեսիովտապետաց՝ի գիրսն յաղագս
,, մարդեղուԹԵ նոն մերոյ յիսի քնի , նոյնն Հետևօղ գտանի
,, բանից յՅամ՝ի գրուածս իւրսմ · և ևս չարագոյն ։
,, Ա պատիր մեքենայիւք և յանդուգն լրբուԹԵ և սատա-
,, նայական աղանդով գոն գործերը յօգիս Հարկանել զմար-
,, դիկ՝ի սլաք դեղեալ նետից իւրոց Հրով լեզուաւ իժի և
,, ԹունաւոՎ քարբի · այլ առ ՅԺմկ մի արգելեալ փակեալ գա-
,, ղեր յարՂ իւր , զանգիտեալ յերեսաց իշխանուԹԵ նոցա ,
,, որք՝ի մեծէն Յայ և՝ի փրկչէն մերմէ յիսի քնէ Հրամանն ըն-
,, կալան կոխել զօձս և զկարիաս և զՅամ զօրուԹիս ԹշնամՀ-
,, ւոյն · զբերդն ասեմ զառաքելոց , և զնոցին Հետևողաց՝ ըղ-
,, նահատակս և զեռատովանողաց և զՅայրապետաց , և որ
,, այլ ևս սրՂք իցեն ։ Ա յլ չգիտեմ զիարդ ժամ պարապոյ ա-
,, ռեալ՝ սկսաւ սողել նաև արտաքոյ իւրոց սահմանաց , Հա-
,, մարձակեալ և՝ի վիՃակին՝ որ ոչ իւրն էր , իբրև զնեը-
,, Հուն ձարտարաբան · և՝ի խօսիլ անդ իւրսմ յեկեղեցւոջ
,, անտիոքայ աստրւոց՝ այսպէս ասաց · մարդ յի , ևՃ · · · · (և
աստ առաջի դնեն զմնալս վիՃպուԹիս Թէոդորոսի · և ա-
պա յարեն) ·
,, Ա.զմուկ անՀնարին յարուցեալ դորա՝ի մէջ եկեղեցւոյ
,, իւրովքն ապիրատ բանիւք՝ յայտնի ծանուցաւ խոտորեալ
,, յուղղուէ շաւղայ վիՃպուԹիե · զի ոչ ուզիղ է ձանապարՀ
,, նՂ , որ ԹիւրեաՆն է ։ Ա՝ո որոյ բաղումք՝ի պաշտօնէից ե-
,, կեղեցւոյ Համարձակեալ՝ ընդեմ նորա՝ յայլԹօղ գտան նմ ,
,, ցուցեալ՝ ԹԷ՝ի նմանէն շարժեալ է ԹշնաՌաացեալն նեա-
,, տոր , և զնոցկալն զնՂ առացուՃածս ընկալեալ · որով և այլ
,, քՂմ աղմուկ գրգռեցաւ՝ի ժողովրդեան՝ի սակս տարա-
,, ձայնելոյ բանից նՂ յեկեղեցւոյ · ոՂ է տեսանել՝ի ԹուղՂն
,, յովՀաննու անտիոքացւոյ առ նեստոր ։
,, Օ քաղում ժամանակս՝ի սոյն գեղերեալ Թէոդորոսի՝
,, Հաւանեցոյց բազմաց և նմին նեստորի , ԹԷ քՂ՝ որդի Յայ
,, կենդանւոյ՝ որ ծնաւ՝ի սրՂ կուսէն մարիամայ , ոչ է՝ որ
,, ՅիՀօրէ ծնեալն ՅաՃ բան՝ Համագոյակից ծնողին , այլ
,, մարդ ընկալուչ գործակցուէ բանին ՅայՂ ըստ չափու իւրումն
,, կամաւորուԹԵ · որուսմ առ՝ի արժանաւոր լինելոյ լծակից
,, գող բանին՝ յառաջագոյն անկ էր սրբոյ յարատոյ · զի մար-
,, Թասցի Հաղորդ լինել սրբուԹԵ , լծոյ անուՃան որդիուէ

,, և

,, և տիրութեան . քզի զիարդ ասէ Հնաբ իսկ ես այ և մարդոյ մի
,, լինել ի ձեռն միաւորութեան . որ փրկէն՝ և որ փրկի . որ
,, նախ քան զյաւիտեանս , և որ ի մարիամայ երևեցաւ .
,, տէրն և Ծառայն . արարիչն և արարածն ։ Ո՛վ այդոսիկ և
,, զդողին նմանս ժպրհեցաւ ասել նա ինքն Թէնաւին քրիս-
,, տոսի Թէոդորոս , և ի գիրս իւր արձանացոյց . կեղծիս իմն
,, յօդեալ՝ իբր Թէ ընդեմ հնարի վինել արիոսի և եւնոմեայ
,, և ապողինարի . և չետ քնաւ բանին այ ծնեալոյ ի գոյացու-
,, Թէ այ հօր՝ զոր մարմնոյ ծնունդ ի սըջ կուսին մարիամայ ,
,, և կիս զայլ ինչ ի սակս մարդեղութեան . այլ զայս ետ լուկ
,, յոմն քսի , որ օծաւն ասէ և հաղորդ գտաւ փառաց , որում
,, կցորդն է վանն կանխելոյ առ նա ջնորհաց յայ բանին՝ ի
,, ձչմարիտ և ի համագոյակից որդւոյ՝ առ բարւոք կեալ
,, ընդ նմա ։
,, Այլ իբրև որսացեալ եղև ի սոյն հաւանութեն նեստոր այ-
,, լոլքն հանդերձ , խնդալից լիներ սատանայ . զի ի ձեռն
,, որդւոյ իւրոյ Թէոդորոսի ամրքեաց յոգունց և նեստորի՝
,, արբանեկել այնմ մոլորուե ։ Այլ ոչ չատացաւ կորստեամբ
,, ումանց՝ որ յերկրին ասորւոց , այլ գուն գործեր , զի և՛ա
,, առաւել սիրեա աձեցեալ՝ ընդ երկիր տարածանիցի ։ Այլ
,, զի (զայնու ժամանակաւ) դիպաւ այրի մնալ եկեղեցւոյդ
,, (կոստանդինուպօլսոյ) , չգիտեմք՝ վա որոյ մեղանաց , և
,, կամ զիարդ կալաւ զաԹոռ եպիսկոսուե նեստորիոս՝ ի ձեռն
,, մեքենաւոր հնարից ումանց ապաշնորհաց , որք ոչ այլ առ-
,, նուն պշնորհս . և չարաչար ի գործ արկեալ զիշխանութի
,, իւր՝ պանծանօք խայտայր իւրովն ամպարշտութե յաղԹօղ
,, գտանիլ քան զվիշապ իւր զԹէոդորոս ։
,, Այլ գԹասիրեալ այ յեկեղեցիս՝ յարոյց ընդդեմ նր զաս-
,, զումն . յորոց սակի գտեալ և մեք նուաստքս՝ ոչինչ անփոյԹ
,, արարաք՝ մինչև ցմահ պատերազմեալք վա ձչմարտութե .
,, որպես յանդիման կացուցաք ի նամակի անդ մերում՝ զոր
,, գրեցաք առ բարեպաշտ եպիսկն աղեքսանդրացւոց կիւրեղ
,, ընդդեմ Թէոդորոսի և գրուածոց նորա . և ես և ի նամակի
,, աստ՝ զոր առ ձերոյինդ ուղղեմք գերապատուութե ։ Այ
,, խնդրեմք , զի յետ ընԹռնլոց ձեր զայդ՝ ընԹերցիք և
,, զայն . ոչ զի միաբան լինի դիմադրուի ընդեմ Թէոդորո-
,, սի , և ընդեմ պիղծ գրուածոց և վիշապե նր , և որոց ըզ-
,, նորին նմանն խորհին և ուսուցանեն ։ Այ ոչ հաձոյ Թուե-
,, ցաւ ձեն դատապարտել յայտնապես և յանուանէ զպիղծն
,, նեստոր՝ ի տիեզերական ժողովն եփեսոս , ասկնպես եղիցի՝
,, և զոր յառաջնմէ առ ի ձէնջ առանց անուանն դատապար-
,, տեցաւ , դատապարտել յանուանէ զԹէոդորոս զիս գար-

,, շելի գտեալն ՚ի պեսպես ամպարշտուԹիս · ըստ նմին և զորս ըստ
,, անօրէնն վՀպուեէ նՀր խորհին և ուսուցանեն ցայժմ յերկիրին
,, ասորւոց և ՚ի կիւլիկիա ։

Ո այս ամ բանս նամակին հայոց յառաջ բերեալ ընԹերցան ՀանՀք ժողովոյն ՚ի վկայուԹիւն ՀաստատուԹեաՀ առաջիկայ խնդրոյ իւրեանց՝ իւրև Հզօր ջաղխիչ մոլորուեէ Թէոդորոսի · զորև ինքեանք դատապարտեցին ՚ի ժողովի անդ ։ Զոյնպէս յառաջ բերին և զբանս նամակին պրոկղի գրելոյ առ Հայս · ուր առանց յիշատակուեէ անուանն Հերքի մոլորուեէ Թէոդորոսի · յառաջ բերին և զայլ բազում բանս գրեալս յառաջինն ժամանակս ընդդէմ նՀր ։ Իսկ զԹուղթն՝ որ յօրինեալ էր ՚ի Թըշնամեաց ՚ի դիմաց կիւրղի ՚ի գովուԹիւն Թէոդորոսի՝ բազում իրօք յայտնի ցուցին լինել սուտ և կեղծիք · ոչ է տեսանել յերէս · 263 · ինձէ ՚է 266 ։ Զ ապա դատապարտեցին և զմոլորուին որոգրականն գրուածս Թէոդորետոսի և Իբասայ՝ առանց դատապարտելոյ զանձինս նՀր · զի նՀք յայտնի նզովեալ էին զնեստոր ՚ի ժողովն քաղկեդոնի ։ Դատապարտեցին և զմոլորուին որոգինեալ , նոյնպէս և զաշակերտս նՀր՝ որք գրեալ էին զՀերձուսնական բանս ։

Ը · Յետ այսորիկ ՚ի յուԹերորդ գումարման կամեցուալ կանոնս սահմանել ընդէմ սՀգ և ընդէմ ամ նեստորականաց և եւտիքեանց՝ խօսեցան նախ Հարք ժողովոյն, և ասեն· * Զ երստին
,, կրկնելով զոր միանգամ գործեցաւս ՚ի ժողովի աստ, դարձեալ
,, խոստովանիմք ընդունիլ զչորեսին սրբազան ժողովս , այն՝
,, զնիկիայն , զկոստանդնուպօլսին, զեփեսոսի զառաջինն , և
,, զքաղկեդոնինն Զ զոր ինչ միանգամ ՚ի նոսին սահմանեցին
,, ՚ի վՀր մի և նոյն Հաւատոյ , քարոզեցաք և քարոզեմք · և
,, զորս ոչ ընդունէին զնոսա՝ օտարս դատեմք լինել ՚ի կա-
,, Թուղիկէ եկեղեցւոյ ։ Զ և ըստ այլ ամ Հերեսիարխս , որք
,, դատապարտեցան և նզովեցան ՚ի նախասացեալ չորից սՀգ
,, ժողովոց և ՚ի սՀգ կաԹուղիկէ և յառաքելական եկեղեց-
,, ւոյ · · · դատապարտեմք և նզովեմք զերեսին նախայիշա-
,, տակեալ գլուխս · այն է զԹէոդորոս զամպարիշտ մոպսուէս-
,, տացին՝ Հանդերձ պիղծ գրովք նորին · և զայնոսիկ գըր-
,, ուՀածս՝ զորս ամպարշտօրէն գրեաց Թէոդորետոս · և զամ-
,, պարիշտ ԹուղԹն՝ որ ասի գրեալ Իբասայ · նոյնպէս և
,, զՋատագովս նոցա , և զայնոսիկ՝ որք գրեցին կամ գրեն ՚ի
,, Ջատագովուէ նոցա , և կամ յանդգնին ասել զայնս ուղիղս
,, գՀ, և զամպարշտուէնս նՀր պաշտպանեն կամ գաւն գոր-
,, ծեն պաշտպանել , ոչ ԹԷ Համձայն իցեն վՀպուԹԷ սՀգ
,, Հարց՝ կամ սՀգ ժողովոյն քաղկեդոնի ։
Զ ապա սահմանեցին զչորեքտասան կանոնս , որք կարգին

ընդդէմ մոլար վիպուէ այնց երից գլխոց , և ընդդէմ աղան-
դոյն նեստորի և եւտիքեայ ։ յորոց զչորս կանոնսն համառօ-
տելով՝ պատշաճ համարիմք դնել առ առաջի ։ որովհետև
այն կանոնք յարմատոյ ջնջեն զվէճ և զհակառակութի ծա-
գեալ ՚ի մէջ բազմոց՝ ոմն և ՚ի մէջ հայոց՝ ՚ի վէր սահմանա-
դրեալ քաղկեդոնի սէր ժողովոյն ։ կանոն ։ է ։ Լթէ ոք յասէն
յերկուս բնութիս՝ իմանալ զբաժանումն բնութեց , և ոչ խոս-
տովանի զմի սէր մեր յիսուս քրիստոս կատարեալ աճծութիւ և կատարեալ
մարդկութիւ՝ անշփոթաբար միաւորեալ՝ առանց փոփոխելոյ
աճծութիւ ՚ի մարդկութի , և մարդկութի յաճծութի , այնպիսին նզովել
լինի ։ կանոն ։ ը ։ Լթէ ոք ՚ի խոստովանիլն՝ Թէ յերկուց բնութեց
եղև միութի , և կամ յասելն՝ մի բնութիի բանին մարմնացելոյ ,
ոչ իմանալ այնպէս՝ ոնգ հարքն ուսուցին , այլ Թէ՝ յաճծայինն
բնութէ և ՚ի մարդկայինն բնութէ միով անձնաւորութիւ է մի քրիս ,
այլ՝ իմանալ , Թէ այնու եղև մի պարզ էութիի աճծութիւ և
մարմնոյն , և կամ շփոթմամբ մի գոյացուի , այնպիսին նզո-
վեալ լինի ։ կանոն ։ ը ։ Լթէ ոք ասիցէ զքն երկրպագելիսն
կուս բնութիս երկու երկրպագութիւ , որոշակի այ՝ և որոշակի
մարդոյ , և կամ ՚ի մի բնութի շփոթիլ , նզովիլ լինի ։ կանոն ։ ժ ։
Լթէ ոք ոչ խոստովանի զայր մերոյ քն՝ որ խաչեցաւ մարմնով
լինել աճծ ճշմարիտ և աստուած , և մի ՚ի սուրբ երրորդութենն ,
նզովեալ լինի ։ Օ կնի այսոցիկ կարգեցան և այլ հնգետա-
սան կանոնք նզովից ընդդէմ մոլորութիե որոց կնեալ , և ջատա-
գովաց նոր ։ և աւարտեցաւ ժողովն ։

Է ։ Պատճառաւ այսր ժողովոյ բզմի շփոթութիք ծագեցան
յեպիսկոպոսունս արևմտեայց ։ զի յոլովք ՚ի նոցանէ ընդդէմ
կինէին սէր ժողովոյն՝ ջատագովելով զբան երից գլխոց ։ զորս
կանացաւ զկնացուցանել Ցակոբ իշխանութե նեստոր մեծ պատ-
րիկ հայկազն , զորմէ ունիմք խօսիլ ՚ի յաջորդ գլուխ ։
Վրեցին առ հակառակողն և քահանայապետք հռովմայ
բազում թուղթս ։ և յետ բազում ամաց հայրք մարթացան
խաղաղել զնոսա ։ ՚ի մէջ որոց պեզապիոս երկրորդ՝ արքային
քահանայապետն հռովմայ գրեաց Թուղթ առ եղիա սբուհե-
ցացի և առ այլ եպիսկոպոսունս իտալիոյ , որք ոչ հաւանէին
գատապարտել զերիս գլուխսն։ և զայս Թուղթ ետ շարադրել
գրիգորի սարկաւագի իւրում , որ և եղև յետոյ քահանայա-
պետ , այն է մեծն գրիգոր պապ ։ Այսմ Թղթի գեղեցիկ
բանիւք և քաղցր ոճով և ձախ վիպուէ առաջի դնե քահա-
նայապետն , Թէ պարտ է նզովել և հերքել զերիս գլուխսն
զայնոսիկ՝ գոլով այնց հակառակ ջորից սբ ժողովոյ և համո-
րէն սբց հարց ։ Այլ զի մի ոք ասէ կարծեացէ , Թէ այն մոլո-
րական գիրք՝ որք ասին Թէոդորոսի , Հիերեևնի , * Գրուածս

,, հարց՝ Թէ հաձի՞ք՝ ի մեջ բերցուք առ այդ ... և վկայիւք
,, հաստատեսցուք ։ Ընդունիմ եպիսկոպոսութիւնք հայաստանեայց
,, նամանաւ արարիչ առ պրոկղ եպիս կոստանդիական քաղաքին
,, ընդէմ Թէոդորոսի՝ ասէն · Գտաւ այր մին ժանտ , ևս ա-
,, ռաւել գազան դիմանման , սուտանուն Թէոդորոս , ||
և աստ գրէ պատն ըմ մասին զբանս նամակին հայոց՝ զոր ե-
դաք ի վերոյ · և նովիմբ ցուցանէ զդարչուն աղանդն Թէո-
դորոսի ։ Եւ ապա յաւելու , Թէ նաև պրոկղ գրեաց պինդ
առ հայս՝ ի հաստատուն բանից նոցա և ի հերքումն Թէոդորո-
սի · ոյր է տեսանել · հատ · ըն · ձող · երես · 444 ։ Եւ զկնի այսորիկ
առ սահակ սակաւ եղև խաղաղուն ի վրայ այսր յարևմտեայս ։
Յայսմ ամի՝ ոյր յայտնի տեսանի , բանք սրբոյն կիւրղի և ա-
ռաւել ևս բանք սրբոյն սահակայ եղեն զօրաւոր գործիք սրբոյ
ժողովոյն և առաքելական աթոռոյն ընդդէմ ջատագովացն
Թէոդորոսի ։ Զսացն առաւել ևս , զի մինչև ցայնժամ ոչ ոք
ի հայրապետաց այնպիսի օրինակաւ և այնպիսի բանիւք և
ժողովով դատապարտեալ էր զժանտն Թէոդորոս , ոյր արա-
րեալն էր սրբոյն սահակ՝ գործակցութիւք երջանիկ լծակցին իւրոյ
սրբոյն մեսրոպայ և այլոց հայրապետաց հայոց ։ Այր և զայս մի
ինչ արժան է ածել զմտաւ · զի ի ինդրել սրբոյն սահակայ
և յամ հայոց՝ ի պրոկղէ և յայլոց՝ յայտնի դատապարտել յան-
ուանէ զԹէոդորոս ոյր գնեստոր , ոչ յաջողեցաւ յայնմ ժա-
մանակի · այլ ընդ եղից զվնդիր հարցն մերոց յայսմ և ի սոյն
սրբ սիւնհոդոսիս , այն է հինգերորդ ընդհանուր ժողով ։

Գ Լ Ո Ւ Խ · ԽԲ ։

Յաղագս գործոց ներսեհի պապրկի հայկազնոյ · և յաղթելոյ նորա
պարսից գոռնացոյ · ուր և յաղագս չաղոնեց ոմանց ի հայոց
գինուորելոց ի դուռն կայսեր ։

Պրոկոպիոս։ Ագաթիաս։ Ագաթիոս · ե · գլ· 24։ Ղազարէ · և այլք ։

Ա ՌԱՂՈՒՄ բանք են ի պատմագիրս յունաց և լատի-
նացւոց ի վերայ ներսեհի պատրկի հայկազնոյ ·
որովհետև անուանի գտաւ նա յոյժ ի վեցերորդ դա-
րուն ի բազում գործս՝ ոչ միայն ի յունաստան , այլ և ի կող-
մանս խաղիոյ ։ Այս՝ ոյր և յիշատակեցաք ի գլ · լէ · երկորդ-
ւոց նախարարութեց մեծին հայոց՝ որ ի քաժնին պարսից , և
ի աղայութիւնէ եկեալ մնաւ ի դրան կայսեր ։ Ի չափ հասեալ
սր՝ եղև երևելի ի վերայ քաջահանձար ուշիմութե , հնարա-
գիտ մտացն , անսոգտանելի վարուցն , աննենգ հաւատարի-
մութեն , աչալուրջ զգաստութեն , անխոնջ վաստակասիրութեն ,

աքանչելի վերհանձնումն , անբնակելի երկայնմտումն , զարմանալի մեծագործումն , անպարտելի զօրութիւնն , և այլ ևս քեզմ ձրիւ եթէ բնութ և եթէ առաքինութ , զորս ի մէջ բերեն մատենագիրք յունաց և լատինացւոց ի գովուն սորա . որովք գտաւ սա իբրև ամէն պատուական ի մէջ ՅԻնն յունաց . և եղև յարդոյ յաչս մեծամեծաց և փոքունց , մինչդ յուստինիանոս Նոսի կայսեր . և կարգեցաւ ի նմանէ գանձապետ արքունի և հիւպատոս , պատրիկ և խորհրդական . և պատուեցաւ ի նմանէ ի բազում իրս :

Ագաթոպիոս գրք . Բ . 13 . 16 . 18 . ևայլն :

{537} Յաւուրս սր երևելի էր և մեծ սպարապետն յունաց բեղիսարիոս , որ եղև մին յանուանի քաջաց ի գարս գարս երևելոյ . և այն աւուրս տայր սա պատերազմ ի կողմանէ կայսեր ընդ գեթաց՝ որ են գոթացիք , որք բունացեալ էին ի կողմանս Իտալիոյ . և էր յայնժամ խորհրդական և նստաւր բեղիսարիոսի սրոկոպիոս հռետոր , որ և պատմէ զաւուրս զնացից և զգործս զորս գործեաց ընդ նմա ի պատերազմին վանդալաց , առաքեալ կայսրն յուստինիանոս յօգնական պատերազմաց , առաքեալ նմա զնաև զպատրիկ հանդերձ հինգ հազար սպառազինօք . և որս և գունդ մի ի զօրացն հայոց , որոց զօրավարն էր ներսէհ բասենցի . զորմէ յիշատակեալ եմք ի գլ . լէ :

Ագաթոպիոս գրք . Բ . 27 . եւ 29 :

{539} Եւ հասանել ներսեհ պատրիկի Իտալիա առ բեղիսարիոս , երկոքին ի մի կամ միաբանել՝ հրամանն ետուն ժողովիլ ամ զօրսն ի քաղաքն փերմոն . և առնէին խորհուրդ ի միասին հանդերձ ամ զօրավարօք յունաց , թէ ընդ որ կալցին ի դէպ իցէ յարձակիլ ի վրայ թշնամեաց : Եւ զի յայն աւուրսն պաշարեալ էին գոթացիք զքաղաքն արիմենոն , յորում էր զօրավարն յունաց յուլիանոս , ներսէս պատրիկ՝ որ սիրէրն զյուլհաննէս , խորհուրդ եւս բեղիսարիոսի զառաջինն գնալ յօգնուն նմա . և յայն քան եհաս պատգամաւոր և ի նմանէ խնդրել զյուլհաննէս , և խնդրէր ձեռն օգնականուն ի բեղիսարիոսէ : Եւ նա ըստ խորհրդոյ ներսեհի առաքեաց գունդ մի զօրաց . որոյ հասեալ յարիմենոն՝ վանեցին զգոթացիս : Եւ յուլհաննու ողջանդամ և անվնաս զերծեալ իւրովքն հանդերձ , և եկեալ առ բեղիսարիոս՝ շնորհակալ լինէր , և գովէր զներսէս վասն փութացուցանելոյ նորա ձեռն կարկառել ինքեան : Ընդ այս դժուարացեալ բեղիսարիոսի՝ իբր թէ ոչ իւրով հրամանաւ , այլ՝ խորհրդով ներսեհի եւեթ յաջողեալ էին իրք յուլհաննու , սկսաւ ընդ ակամբ հայիլ ի ներսէս . որոյ աղագաւ անկաւ փոքր մի գժտուի ի մէջ բեղիսարիոսի և ներսեհի :

Եւ իբրև դարձաւ ներսէս ի կոստանդինուպոլիս , գիմեաց բեղիսարիոս ի վրայ գոթացւոյ , և եւս պատերազմ ընդ նմա ի կողմանս անքոնայու . յորում մարտի վտանգեցան յոյնք . զի գո-

Ա.Տմ. ՟ա.

թաղիք կացեալ՝ ի բարձանց՝ դիւրաւ հարկանէին զյոյնս նեաւիւք. յորոց մին եհաս ուղղակի՝ ի գոգ լեզիսարիոսի. այլ մի ոմն՝ ի Թիւինապահայ անտի նը՝ անիգամ անուն ձգեալ ըզձեռն իւր՝ արգել զնետն. որով Թէոպհտ և զերծաւ բեղիսարիոս, բայց ջիլք ձեռաց առնն խզեցան՝ ի սլաքէ։

Ա. առտիանալ պատերազմին յառաւօտէ մինչև ցմիջօրեայ՝ պարտասեցան մեծապէս զօրք յոյնաց։ Այն տեսեալ զօրացն Հայոց, որք էին ընդ ձեռամբ Ներսեհի բառնցուց, եօթն՝ ի նոցանէ արք քաջակորովք յառաջ անցեալ արձանացան՝ ի տեղւոջ մի ապառաժուտ և անկոխ. և՝ ի դիմի հարան գոթաց. և քաջութիւն վանեալ զթագմուն նոցա՝ զառնդն առին պեղին ընկղմիլ յետս ընդ կուրնկն. ընդ որ ապշեալ բեղիսարիոսի, և ոչի առեալ յօնաց՝ զօրացան՝ ի վէր թշնամեաց, և փախստական արարին զնոսա։

Ընդ այսորիկ և զայլ բազում պատերազմունս մղեալ յունաց ընդ գոթաց՝ ձերբակալ արարին զԹէդեր նոցա զվիտիգիս, և ածին՝ ի կոստանդինուպոլիս. և Թէդերեաց՝ ի վերայ գոթաց դեբախտ. յետոյ եթարիկ. և ապա անուանին տոտիղաս՝ այր հզօր և բազմահանձար. որ լըմն անգամ վանեալ զյոյնս և զհռովմայեցիսն՝ էառ զհռովմ յամի հին. 546. զոր՝ ի յաջորդ ամի Թատիեաց՝ ի ձեռաց նը բեղիսարիոս. և յետ երկուց ամաց՝ ի մերկնել անտի բեղիսարիոսի յարևելս՝ վերստին էառ զայն տոտիղաս, յամի հին. 549։ Որում ժամանակի և ներ՝ ած՝ զ բանեցեալ զօրավար Հայոց դարձաւ՝ ի կոստանդինուպոլիս. և կարգեցաւ՝ ի տեղի նը՝ ի վէր գնդին Հայոց արտաւազդ։

{546}

Պրոկոպիոս գոթ. գ. 3»

{542}

Ա. յսոյիկ այսպէս եղելոյ՝ ժողովեալ յունական զօրուն՝ ի հռաւենա՝ խորհուրդ արարին դիմել զառաջինն՝ ի վէր վերոնայ քաղաքի՝ որ էր՝ ի ձեռս գոթացւոց, և սահմանս վերնեաւկոյ. և եկեալ բանակեցան յանդիման՝ ի դաշտի։ Այնժամ մի ոմն յազնուականացն վենետիկեցւոց մարկիանոս առնուն բարեկամ կայսերն՝ բանս եդեալ դաշտ և միւմ՝ ի պահապանաց քաղաքին վերոնայու՝ հաւանեցոյց զնա մատնել զքաղաքն՝ ի ձեռս յունաց. ազդ արար և զօրապետացն յունաց, փութասցին ասէ դիմել գնդերայն՝ ի վէր քաղաքին, և զդռնիկ մուտ՝ ի ներքս անտարակոյս։ Սակ նը ոչ համարձակեցան զնամ զօրաւն առաքել միանգամայն, զի մի դաւ լինէր գործեսցի, խորհեցան գունդ մի սակաւաձեռն արձակել անդ. զի թէ դացեն մատնուք մուտ՝ ի ներքս, ազդ արասցեն և ինքեանց։ Այլ քանզի ոչ ոք՝ ի զօրապետացն իշխեր յառաջել անդ՝ կասկածեալ զիրացն, զօրավար գնդին Հայոց արտաւազդ՝ այր արիասիրտ՝ յառաջ մատուցեալ ընտրեաց՝ ի հայկական զօրացն

իւրոց հարիւր արս կորուիս . և դիմեաց նոքօք գերեզմանն ՚ի
քաղաքն : Եւ երբեմն եբուց պահապանն զդուռն , մտեալ որ-
տուաղայ իւրովքն ՚ի ներքս՝ սպան զայլ պահապանսն . և ետ
ազդ առնել յոննայ՝ փութալ գալ և մտանել ՚ի քաղաքն :
Ւմայեալ զայն գոթայ՝ խռովեցան յոյժ , և կարծելով՝ թէ
յոյնք ամ՛ մտեալ տիրեն քաղաքին՝ յաւաստատ եղեալ եկին ընդ
այլ դուռն , և վախեան :
Ւսկ զօրագլուխք յոննայ խմայեալ՝ թէ առաւ քաղաքն , զայն
ա՛ դանդաղեցան գալ . և սկսան վիճել ընդ միմեանս՝ ընդ գրեալ
պրոկոպիոսի , թէ ո՞ւմ առաւել անկանի առաջ քաղաքին :
Տեսեալ գոթացւոց՝ թէ գունդն յոննայ յամէ մտանել ՚ի
քաղաքն , դարձան յետս փութանակի , և եկեալ մտին անդ-
րին ընդ նոյն դուռն . զի գիտէին՝ թէ այն ասկաւառաւք՝ որք
էին ընդ արտաւաղայ , ոչ կարէին խափան տիրել քաղաքին :
Ւմէ գիտացեալ գնդին յոննայ զեղեալսն՝ տակաւ մեձենային
՚ի քաղաք անդր . և գոթացիքն յետ մտանելոյ ՚ի ներքս՝ դի-
մեցին ՚ի վէր արտաւաղեանց . և որք քաջութիւն մարտ եղեալ
կռուէին ընդ նա . և միանգամայն ձայնէին առ արտաքս ՚ի
գունդն յոննայ հասանել յօգնութիւն : Ւյն ինչ հուպ եղեալ ,
{548} և տեսեալ՝ զի փակեալ է դուռն քաղաքին , դարձան յետս :
Ւսկ արտաւաղ՝ և որ ընդ նմ՝ անձարացեալ այնչափ բազմութ
գոթաց խափան զդէմ ունել , դիմեցին յաշտարակս պարսպ-
պին , և ընկեցին զանձինս ՚ի վայր . յորոց ոմանք զքարւի հա-
րեալ՝ խորտակեցան . և ոմանք ՚ի տեղւոյ տափարակ անկեալ՝
անվնաս զերծան . ընդ որս և նա ինքն արտաւաղ . որ և հա-
սեալ առ զօրս յոննայ՝ մեղադիր եղև նմ յոյժ . զի այնպիսի
{549} վատասրտութիւն յետս կացին յառմանէ քրիստոնէից . և զընկերս
իւրեանց ՚ի վտանգի թողին :
{550} Ձ . Տոտիղաս արքայ գոթաց խմայեալ զանցս վերոնայոյ՝ Պրոկոպիոս
ուրախ եղև . և ժողովեալ զգօրս իւր՝ դիմեաց գալ ՚ի վէր յո- գոթ . գ . 4 :
նական գնդին : Ւսկ զօրագլուխք յոննայ վհերոտեալք՝ ոչ
իշխէին ՚ի դիմի հարկանել նմ : Ո՛ այն տեսեալ քաջին արտա-
ւաղայ՝ սկսաւ խօսիլ ընդ նս , և ասէ . զի՞ վատթարեալ կայք ,
և զի՞ յընտանի կասկածս վարանիք . յանցանել կիսոյ գոթաց
ընդ գեան՝ ունք ՚ի դիմի հարցուք նմ , և կարեմք վանել զնս .
քզի ՚ի մտոյ իսկ առեալ է իմ ՚ի մարտ զիմոյձ զօրութիւն նմ .
զի ՚ի մրցմունս երեւի քաջութիւն առն , եթէ շատ՝ և եթէ սա-
կաւ : Եւ մինչդեռ յոյնք յօրութիւն դեգերէին և լքեալ սըր-
տիւ խօսէին , անցին թշնամիք աներկիւղ ընդ գեան . և ե-
կեալ ձակատեցան ընդդէմ նմ :
Ընդ միում ՚ի գոթացւոց անահ վիլատ անուն՝ հեծեալ յերի-
վար ամենի՝ այլ բարձրահասակ , ծանրամարմին , ահագնա-

տեսիլ

տեսիլ և ուժեղապատում՝ կուռ վառեալ զինու, և պատեալ երկաթի պահպանակօք, յառաջ մատեաւ ի մէջ ձակատուն, և ասէ. Հանի՞ք հուժկոդ ինձ ընդդեմ ախոյեան, որ կարող իցէ կռուիլ ընդ իս։ Այսմանեցան յոյնք յառնել անտի, և ոչ ոք գտաւ ի նոսա, որ իշխեացէ ելանել ընդդեմ զօրութեանն այնպիսի առն։ Յայնժամ արիւն արտաւազդ անվեհեր սրտիւ յառաջ արձանայեալ՝ քաջութիւն եղ և եկաց յանդիման նորա ի մէջ դաշտին։ Եւ անդ էր տեսանել զերկուց անպարտելի քաջաց իբր երկուց ամենեն առիւծուց մունչելով խրոխտալ ահագինս ի վէր միմեանց։ Եւ այն ինչ ի յարձակիլ նոցա ի վէր՝ կռռէին զնիզակս հարկանել զնոսա, աձապարեալ յաջողաձեռնն արտաւազդ, և մօտ հասեալ յայրն՝ ի խոր անցոյց զնիզակն յաջ կող վիլարայ. որոյ կարեվէրս խոցեալ՝ իբրև տապաստ յերկիր գլորեր յետս կոյս յերխարէն, բուն նիզակի նը՝ զոր բռնեալ կալեալ էր, յեցեալ ի քար մի ոչ թողացոյց զնա անկանիլ ի գետին։

Կարծելով արտաւազդ՝ թէ չէ ի մահ վիրաւորեալ այրն, դարձաւ անդրէն շտապաւ, և սկսաւ նմա առտկուածք խորագոյնս մխել զնիզակն՝ որ խրեալն էր ի կողս վիլարայ. այլ ընդ ժամանակն դիպելոյ ի թեքիլ հուրսմ ուժգին ի վէր առն, սլաք նիզակին վիլարայ՝ որ ցցեալ էր ի վեր, կռռճեցաւ ընդ մի կողմն ի զրահս նորուն. և սահեալ առ նովաւ՝ դիպաւ ի պարանոց նորա. և պատառեալ զմորթն՝ եհատ ըզնեարդսն. և թէպէտ առ շտապ տապնալին ոչ զդաց նա ըզցաւն, բայց տեսեալ յետոյ զյորդ հոսումն արեան՝ դալճաւ երիվարաւն ի ձակատ յունաց. իսկ վիլար մնաց անդէն մեռեալ։ Եւ քզի չեղև հնար զադարեցուցանել զհոսումն արեան արտաւազդայ՝ յետ երից աւուրց եհան նա զոգի. և եղև տրտմութի՛ մեծ ամ յունական և հայկական զօրուն։ Եւ ապա իբրև ի մարտ ձակատեցան ընդ գոթաց, յաղթեալ ի նոցէ կոտորեցան, և բազումք ձերբակալ եղեն, և այլք մազապուր փախեան։ Իսկ կայսրն յունաստնիանոս փիսկ արտաւազդայ կարդեաց ի վէր գնդին հայոց զայր ոմն ի հայոց անտի գրչակ անուն։

{551} Յետ այսորիկ ի միւսանգամ պնդրմիլ ընդ արքային գոթաց տոտիղայ՝ դրձէ ի պարտուի մատնել ցիր և ցան եղեն յոյնք. և ի փախստի անդ յառանձինն վայրի ուրեք անկաւ ի ձեռս գոթաց զօրսաւար գնդին հայոց գրչակ. զոր ոչ ճանչելով գոթացւոյ՝ քզի և մուճն գիշերոյ ի վէր հասել էր, հարցին՝ թէ ո՞վ ես դու։ Իսկ նա՝ քզի ոչ գիտեր զլեզու նոցա, և ոչ իսկ քաջ յունարէն, ասաց, գրչակ տուքս. իմացեալ նը՝ այսու, թէ նա մի ոմն ի յունաց զօրավարացն է, կողոպտեցին զնա յոյժ զար-

(Պրոկոպէոս գոթ. գ. 26։)

դուց,

դուց , և սպանին :

Պրոկոպիոս գոթ. գ. 21. և 26: Ագաթանգէս : Նաւսպաս : Եղբենոս : և այլք :

ԻԳ . Տեսեալ յուստինիանոսի կայսեր , թէ իրք յունաց ղօրուն ձախողակի գնան , և տոտիլաս արքայ գոթաց օրէցօրէ զօրանայ , կարգեաց ընդհանուր սպարապետ զՀաւատարիմն ներսէս պատրիկ Հայկազն , և առաքեաց զնա բռնմ պատրաստութեամբ ի վր գոթաց : Հասեալ ներսեսի ի Թրակիա՝ զտեղի էառ , և նստաւ առ ձիվ մի ի փիլիպուպօլիս . և ապա խաղաց յիտալիա . և էին ընդ նմ բազմութիւնք զօրաց ի բռնմ ազգաց և ի թագրութեց . և էր ինքն սիրելի յաչս նոյ յանկուցեալքինքն զսիրտս ամենն առատ պարգևօք և մարդասէր բարուք : Այլ իբրև մերձ եղև ի հռոմ ի վենետիկեացոց , նոքա ոչ ետուն նմ անցս . զի ունէին ասեն ի զօրս քոյ օտարազգիս , որոց բզնք թշնամի են մեզ . վասն և ներսէս ըստ խորհրդոյ սիրելոյն իւրոյ յովհաննու զօրավարի դիմեաց ընդ այլ ճանհ ի հռաւենա :

Պրոկոպիոս գոթ. գ. 29. Ագաթ. ի 32:

{552} ա Առեալ տոտիլայ արքայի գոթաց զլուր դալստեան ներսեսի՝ եկն և բանակեցաւ բաղմութիւնբ զօրաց մերձ յապենինիոն լեառն . անդր խաղացոյց և ներսէս զնմ զօրսն . և առաքէզ պատգամաւորս առ տոտիլաս՝ ասէ . չէր քեզ արժան ընդեմ կայսեր այդչափ յոխորտալ և զնա վրդովել . և յորդորեաց զնա գալ ի հաշտութիւն : Ետկ յարհամարհել տոտիլայ զպատգամն նորա , պատգամաւորքն ներսեսի խնդրեցին ժամ տալ աւուր պատերազմի : Եւ նա ասէ . յետ ութն աւուր ճակատիմ ի պնրմ : Այլ ներսեսի գիտացեալ՝ թէ պատրանօք խօսի տոտիլաս , կարգ եդ ի զօրս իւր ; և խրախոյս տուեալ նոյ՝ ասէ . ոչ բազում բանից կարօտ զձեզ տեսանեմ՝ ի յորդոր քաջալերութիւն ընդեմ ապիրատ թշնամեացդ . այլ կարևոր դատիմ յորդորել զձեզ ի սոյն ևեթ , զի պայս պնրմ սկսանիջիք՝ յուսալով յօդնականութիւն նն . զի նովաւ անվեհեր վանեջիք զդոսա իբրև զխուիս անասատի :

Եւ իբրև ճակատեցան հանդէպ միմեանց երկոքին բանակքն , սքանչելի լինի դասաւորութիւնբ կարգեաց ներսէս ըստ զօրս յունաց՝ յայլևայլ թևս որոշեալ . և պատուիրեաց իւրաքանչիւրոյ՝ որպէս և զիարդ պարտ էր նմ դիմել ի վր թշնամեացն : Տեսեալ տոտիլայ զկարգ զօրացն ներսեսի , յորմէ զահի հարեալ երևէին իբրն , այլ գոթացիք , ինքն ևս սկսաւ կարգել և յորդորել զնս պատերազմիլ քաջութբ :

{551}

Յայնմ վայրի այր մի կոկաս անուն , որ ի յաւնաց զօրուէն փախստեայ անկեալ էր առ գոթացիս , անուանի ի քաջութբ և զօրաւոր յոյժ , յերիվար աշտանակեալ՝ եկ ի ճակատն տոտիլայ . և յառաջ մատուցեալ՝ ձայն ետ ի ճակատն յունաց , և ասէ . Հանկք ի ձենջ այր որ՝ այր , որ եկեալ մարտ

դիցէ

դիցէ ընդ իս առանձին, և տեսցուք՝ զոր լցեի յաղթուն։ Այն-
ժամ՝ի վեր ոստուցեալ միմն՝ի Թիկնապահայն ներսեսի՝ աղ-
գաւ հայ՝ ընձուղ անուն, էառ հրաման՝ի ներսիսէ. և ե-
լեալ փութանակի յերիվար՝ արձանացաւ հանդէպ ախոյեա-
նին։ Նոցին ամենայնի ակնարկեալ կոկառայ՝ արագաձիւղ սլացմամբ
խաղայ՝ի վր նր նիզակ՝ի ձեռին՝ ուղ եդեալ՝ի տեգ նիզակի
հարկանել զնա ընդ որովայնն։ Նակ արին ընձուղ՝ի թարթափ
ական առ՝ի շեղ թեքեալ յերիվարէն՝ կորացաւ՝ի վայր. և
ընդ օդս էանց նիզակն։ Նա՝ի քերել առ նովաւ կոկառայ թա-
փով յարձակման երիվարին իւրոյ, նա ինքն ընձուղ մեհեաց
անդէն զնիզակ իւր՝ի ձախու կող նր, և շամփրեալ խլեաց
զնա յերիվարէն, և յերկիր հարստեաց զայրն քաջ։ Այն
տեսեալ յունաց՝ ամ բազմութեի նց իբրև՝ի միոջէ բերանոյ
յերկինս՝ի վեր աղաղակեցին՝ի ձայն ցնծութե։

Օ արհուրեալ ընդ այն տոտիղայ, և կասկածեալ՝ թէ բեկա-
նիցի սիրտ իւրոցն, մանեղ զի չև էր քոլորեալ զամենայն իւր՝
և սպասէր գալստեան և այլ ևս զօրայ, հնարս հնարեցաւ
առ գտանելոյ պարապ ժամի. էլ առանձին՝ի ձակատ իւր-
մէ, և եկայ՝ի մէջ երկուց ճակատացն. և էր ինքն զրա-
հաւորեալ աքանչելի զինուք և ականակապ զարդուք, հե-
ծեալ յերիվար ահիպպարանոց. որոյ և զարդն զաչս խոտղեր
տեսուզաց. և ձգեալ ընդ օդս զնիզակ իւր, խաղայր և ձեմէր
անդէն, կամելով ցուցանել յունաց զիւր արուեստ քաջութե
և զձեռայն ճարտարուե. և այնպիսի խաղուք զպատեհաւոր
ժամ մատուին ծախեր ընդ վայր, մինչև ամ զօրք իւր հաւաքես-
ցին և յարդ արեսցին։ Նա՝ի դժոխարիլ և յարհամարհել յու-
նաց զայն խաղ նր, պատգամ յղեաց առ նա, և ասէ. ունիմ
ինչ ասել ձեզ յառաջ քան զմարտդ. և վ՛ն այն ձեմեմ աստ։
Նակ ներսէս ոչ ետ տեղի բանից նր. ժամանակ խօսելոյ ան-
ցեալ է ասէ. ժամ է արդ պատերազմի. զի գործեիր ցայդ-
վայր. և ընդէր յառաջնմէ ոչ ծանուցեր զբանդ. և արդ՝ի
մէջ ճակատու պատգամախօս լինիս։

Ա՛պա իբրև հաւաքեցան զօրքն տոտիղայ, հրաման ետ նց կե-
րակուր առնուլ, խորհելով՝ի մտի՝ թէ տեսցէ զայն յունաց՝
ինքեանք ևս հանգիստ տայցեն անձանց և անդոգ լինիցին, և ինքն
յանկարծ դիմեսցէ՝ի վր նց. զի ոչ ունէր ակն օրինօք ձա-
կատու յաղթել քաջին ներսեսի. նմին իրի կամէր այսուհետև դա-
ւել զնա։ Նմանեալ խմաստնոյն ներսեսի զդաւաճանութե նր՝
պատուէրն եհան առ իւրան՝ ամ բանակն, և ասէ. մի և մի
ոք թուլասցի՝ի կատմ պատրաստուեէ. մի ոք զգենուն յանձնէ
՝ի քաց դիցէ. մի ոք զսանձս երիվարի լուծցէ. և մի ոք նստէ
կերակուր առցէ. այլ յոտին կալով սակաւ մի ձաշակեսցեն,

զաչս ի թշնամին ունելով։

Տեսեալ գոթացւոց՝ եթէ կայմ կան յոյնք, կատաղեալ հոր-
դան ետուն սաստկութիւն ի վր նց. և խառն կարգօք չիո-
թեալ՝ զհետևակս իւրեանց յետս թողին. և հեծելազօրք նց
յառաջ անցեալ՝ սուսերամերկ դիմեցին ի վր յունաց. բայց
քանզի սք կարգաւ պատերազմէին, ահաբեկ արարին զթշն-
նամիսն. և շուրջանակի պաշարեալ՝ ի ծուր սուսերի մաշեցին
զնս. որոց և զոմանս ձերբակալ արարին. և մինչև ցմուռթ
գիշերոյ զհետ սպառեալ նց՝ չարաչար հարին զնս։

Ա. Լոկ տոտիղաս հինգ արամբք մաղապուրծ զերծեալ գնայր ի մէթան. որոյ զկնի հասեալ յունաց, և ոչ գիտելով՝ թէ նա ինքն տոտիղաս էր, վիրաւորեցին զնա, և թողին կիսամահ. զոր և յետ սակաւուց գտեալ ծառայից նր տա-
պաստ անկեալ՝ փութացան դարմանել զնա. բայց ոչինչ օգ-
տեալ նր՝ մեռաւ. և թաղեցին զնա ի դաշտի։ Լոկ ներսեհ ոչ դիտացեալ, թէ մեռեալ էր տոտիղաս, զհետ եր գտանե-
լոյ զնա. և իբրև լուաւ՝ թէ մեռեալ է, ոչ հաւատաց. մին-
չև առաքեաց սրս ստուգել զկորն. և նց գտեալ և բացեալ զգերեզման նր՝ հանին զդի նորին. և ի բաց առեալ ի նմ-
ցարիւնաթաթաւ պատմուճանն՝ անդրէն թաղեցին ի գե-
րեզմանի. և եկեալ պատմեցին ներսեհի. և ներսէս փու-
թանակի առաքեաց առ կայսրն յոստինիանոս՝ հանդերձ պատմուճանաւն տոտիղայ։ Լ. ինքն առաւել ևս զօրացեալ՝ յառաջիկայն ուշադիր լինէր։ Լ. զի կայսրն ի զօրս իւր գտնդք ի լոնգոբարտացւոց՝ արք գազանամիտք և տմարդիք, որք քշմ անողորմութիւն արարին յայմ տեղիս ան-
մեղ անձանց, տուեալ նց ինչս՝ արձակեաց յիւրմէ ի պան-
նոնիա. զի մի ևս այլ տեսցէ զչարիս նց։

Լոկ գոթացիք եղեալ իւրեանց թգւր զտէյաս՝ վերստին զօ-
րաժողով եղեն, կոչելով յօգնութիւն և զգերմանացիս, ոյ զնեմ-
ցես։ Ո այն լուեալ ներսեհի՝ հրամայեաց ետ վաղերիանոսի զօրա-
վարին, զի իւրով գնդաւն երթեալ պահապան կացցէ առ պա-
դոս գետով՝ չաալ անցս գոթաց. և ինքն զօրօքն մնացեալք դի-
մեաց ի վր հռոմայ, զոր առեալ էին գոթացիքն յաւուրս տո-
տիղայ. և զՆիկոյն էառ և ամրեաց քշմ քղքաց. և ուր ուրեք
ետես զպարիսպս քանդեալս ի գոթաց՝ առժամայն ետ նորոգել։
Լմնացեալ գոթացւոց զնաղալ ներսեհի ի վր հռոմայ՝ դիմե-
ցին անդր պաշարանել զքաղաքն. իսկ ներսեհ վանեալ գնն,
և մարտ եղեալ սաստկութիւն ընդ քաղաքին՝ էառ զայն ի նզ
երորդ ամի յոստինիանոսի կայսեր, յամի տն. 552. յառաջ-
նումն ամի Թուականութեն հայոց. և իսկոյն առաքեաց զբա-
նալիս դրանց քաղաքին առ կայսրն։

Պրոկոպիոս գոթ. գ. 32.
Ագեդինես։
Ա՛աղաթը և այլ։

Պրոկոպիոս գոթ. գ. 33.

Գ Լ Ո Ւ Խ · ԼԶ ։

Յաղագս այլոց գործոց յաղթուածէ Ներսեսի հայկազնւոյ · և խոհեմական խառնուածոյ նորին · և վախճանի նորին ։

Ա Ներսէս պատրիկ յետ առնլոյ գՀռոմ՝ նուճաձեաց ընդ իւրև և զայլ բազում տեղիս , և զօրացաւ յամ սահմանս իտալիոյ · և անդադար պատերազմեալ ընդ գոթս՝ սպան և զթագաւոր նոցա զտէյաս · և եհար զնոս բազմ անգամ՝ ի հարուածս սաստիկս · մինչև՝ ի ներ անկան նոքա , և խնդրեցին՝ ի նմանէ զհաշտութիւն ։ Յանձն առեալ զայն Ներսեսի՝ եդ ընդ նոս գաչն խաղաղութեան՝ այսու պայմանաւ , զի ամ՝ որ միանգամ լիցէ յարգել գոթից՝ ի կողմանս իտալիոյ , մեկնեսցի անտի վաղվաղակի ։ Պրոկոպիոս. գլխ. իբ. 36։ Ագաղիաս. գիրք · ա ։ և այլք ։ 553 ք

Նոյն գոթացիքն դաչնադիր եղեալ ընդ գերմանացւոց և ընդ այլոց ազգաց՝ վերստին զինեցան ընդդէմ յունաց · և ժողովեալ՝ ի նոքէ եօթանասունն և երկու հազար այր , խաղացին միաբանգամ՝ ի վր ներսեսի ։ Նա ոչ ներսէս՝ որ ընդ գրելոյ աղաթիասայ՝ չէր բնաւ խնդրող հանգստեան յերեսաց աշխատութեան , այլ՝ երկայնամիտ և տևօղ՝ ի գործ պատերազմի , ասպարեալ դիմեաց զօրաք իւրովք՝ ի վր քաղաքին՝ որ կոչիւր կոմսս · և մարտեաւ ընդ նմ ։ Նա՝ ի քաղաքի անդ և ազիզերնոս կրեալ եղեալ նախայիշատակեալ տէյասայ թագաւորին գոթից յաջորդեալ նմ յիշխանութեն նորին · և էր նա այր զօրաւոր յոյժ · որ և ինքնին՝ ի ներքուստ արտաքս անհնարին զօրութիւն ներսեսի ընդդէմ լինէր · և այնչափ սաստիկ էր յարձակումն նորա՝ մինչև զվէմս խորտակել ։ Տեսեալ ներսեսի՝ թէ երկարի առնուն քաղաքին , եթող անդ հէս մի՝ ի զօրաց իւրոց · և ինքն խաղաց՝ ի վր այլոց քաղաքաց , և էառ զնա · ձրի և նոքա յահէ նորուն ինքնին իսկ անձնատուր լինելին նմա ։ Նա՝ ապա և՝ ի վր քաղաքին լուկայ · որոյ բնակիչք յառաջնմէ դաչն հաստատեալ էին ընդ նմա , և պատանդս ևս տուեալ էին , զի եթէ յետ երեսուն աւուրց ոչ գոցեն յայլոց օգնութի , տացեն նմա զքաղաքն · և զի՝ ի ընդ ժամադրութեն չէր նոցա դեռ օգնութի լինել , պարտ էր նոցա ընդ պայմանին մատնել ներսեսի զքաղաքն · քայց նոքա դանդաղէին առ ։

Իբրև եառ ներսէս , եթէ դժրեն նոքա դաչինն իւրեանց , զայրացաւ յոյժ · և հրամայեն ետ մարտ սաստիկ դնել ընդ քաղաքին ։ Նա՝ ոմանք՝ ի խորհրդակցաց նորա խրատ ետուն նմա

սպա-

554 ՚Ի ապականել զպատանդս առեալս ՚ի քաղաքացւոց անտի՝ առ ՚ի զկծեցուցանելոյ զսիրտս նոյ ։ * ՚Ա՛յլ ներսէս՝ որ (ըստ ասելոյն
,, աղաքիւտաց) զամ ինչ իմաստուԹիւնք գործեր, և ոչ ներեր
,, սրտմտուԹեան տիրել անձին, ոչ ուղիղ դատեցաւ զանմեղս
,, ըստ մեղաց քաղաքացւոց ՚ի մահ մատնել ։ ՚Ա՛ն օրոյ և այս-
պիսի իմն հնարեցաւ հնարս. հրամանն ետ դահձացն ՚ի ծա-
ծուկ պատել զպարանոցս պատանդիցն շերտիւք տախտակաց
առ ծոծրակաւն, և ծածկել լայն ձորձով. և ետ կապել ըզ-
ձեռս նոյ յետս իբրև զմահապարտաց, և ածել մօտ առ պա-
րիսպան յանդիման քաղաքացւոց. և ինքնին եկեալ անդ՝ զայ-
րագին դիմօք հրամայեաց դահձաց, և ասէ. սպանէք զպա-
տանդս անօրէնն և ուխտադրուժ քաղաքացւոցդ այդոցիկ։ ՚Ա՛յն
դահիճքն հարին զպատեալ պարանոցս նոյ, ոչ Թէ սպանա-
նիցեն. և ՚ի՛նքն ըստ յառաջագոյն խրատելոյ ՚ի ներսիսէ՝ անկան
յերկիր իբրև վճռեալս։

Օ այն իբրև տեսին ՚ի վերուստ քաղաքացիքն, համարելով
զնոսա իբրև ստոյգ մեռեալս, սկսան գոյժ տալ միմեանց, և
աղաղակ բառնալ. ՚Քղի ՚ի մեծամեծաց և յերևելեաց էին պա-
տանդքն։ ՚Ա՛յն ծնօղք նոյ և աղգատոհմք հասեալ ՚ի վերն պարս-
պին՝ սկսան կսկանօք լալ, փետել զհերս, բաղխել զկուրծս,
և զամ գործ կոծոյ կատարել ՚ի վերն պատանդիցն։ ՚Ա՛յն բար-
բառեին ընդ քանս նախատանաց առ ներսէս, ասելով, այր
անգութ և անողորմ՝ որ ՚ի զուր կորեա յանձին զանուն քա-
րեպաշտուԹեան. օրպէս իշխեցեր ըստ վայր տարապարտուց կո-
տորել զանձինս անմեղս և աղնուականս։

Լսեցաւ ըստ նմա խմաստունն ներսէս, և ասէ. ոչ է իմ ինչ մե-
ղս ՚ի վերն մահու սոցա, այլ՝ ձերումդ անլսողուԹենէ, որ ոչ եռուք
ինձ զքաղաքդ լսոտ պայմանին՝ զոր եդիք. այլ եԹէ գո՛նէ
յայսմ հետէ զպատահացեալ անսայք ինձ, բարի լինիցի ձեզ.
և արդ ասեմ իսկ. ոչ է իմ սպանեալ զդո, այլ՝ հնարս գոր-
ծեցի, զի զսիրտս ձեր ձմլեցուցեալ ՚ի հաւանուԹիւն ածից.
ըզի կենդանի են նոքա, և չեն մեռեալ. ապա մի՛ ինչ խռովիք.
թոյլ միայն տուք զքաղաքդ, և ես ոչինչ արարից ձեզ չար.
ապա Թէ ոչ՝ յիրաւի սպանանեմ զսոսա, և զքաղաքդ առեալ
ուժգին՝ զնոյն անցս և ըստ ձեզ անցուցանեմ.

Ա՛յն իբրև առ սաստիկ խնդուԹենն ոչ հաւատային քաղաքա-
ցիքն բանիցն ներսեսի, հրամանն ետ ներսէս կեղծեալ մեռե-
լոցն կանգնել յոտս. և ածեալ կացոյց զնոսա յանդիման քաղա-
քացւոցն։ Օ այն տեսեալ նոցա՝ ուրախ եղեն յոյժ. և խոստա-
նային տալ զքաղաքն։ ՚Ա՛յդ ամենք անդրէն ծանրասրտեալ՝
ընդեմ դարձան. և ոչ կամէին յանձն առնուլ զդահճին։ ՚Ա՛ռ
ներսեսի ցուցեալ նոցա զվերհանձնուն հոգւոյ իւրոյ՝ արձակեաց

զպատանդան ոգի անարատ գնալ ի քաղաքն . զի գուցէ ասէ
այսու մեղմասին սիրտք նոյ , և հաւանեսցին բանիւ իմով ։
Յայնժամ ակնան քաղաքացիք խօսիլ ընդ միմեանս՝ պարանչանալ ընդ մարգասիրութեան ներսեհի . և կապէին ի մէջ իւրեանց . ոմանք ասէին տալ զքաղաքն , և ոմանք ոչ կամէին ։ Ապա բարբառեցաւ ներսէհ ի վեր առ նոսա , և ասէ . ոչինչ է այսու հետեւ լինել փոյթ , թէ ոչ շահեցայ զսիրտ ձեր , և ոչ կարացի զխստութիդ խորտակել . և ապա ձգեալ զձեռն իւր դէպ առ նոսա՝ եցոյց զնիզակ իւր , և ասէ . ոչինչ այլ , բայց սա միայն խոնարհեցուցանէ զձեզ ։ Եւ այնուհետեւ և եւս սաստկացուցեալ զպատերազմն՝ տագնապէր յոյժ զքաղաքացիսն ։
Նոյն աւուրս և այլ ևս զօրք յունաց՝ որք գնացեալ էին այլուր , դարձան անդր յետս ամօթով և տրտմութեբ . և քեկեալ էր յոյժ սիրտ նոցա ։ Ուստի իմաստունն ներսէհ լուեալ զձախողակ անցս նոցա՝ ոչինչ խոովեցաւ , այլ՝ քաջալերեալ զօրացոյց զնոսա . ոչ է ասէ առն քաջի ընդ ձախողս դառնանալ և վհատիլ , այլ՝ յաւէտ այնու զօրանալ առ այլ նուիագս զգուշութբ կռուիչ ընդ թշնամիս . այլ վատասիրտ երկնչի ի ձախողութեց , զի չունի յոյս այլ ևս յաղթանակելոյ . բայց քեզի յոյս մեր ասծ է՝ որ զօրացուցանէ զմեզ , մի ընկձեսցուք . զի նովաւ յաղթեմք և վանեմք զթշնամիս մեր . և այլ ևս երկար բանիւք արտասպդեաց զնոսա ։ Եւ ապա սաստիկ մարտիւ բռնացեալ ի վերջ քաղաքին լուկայ՝ էառ զայն յետ երից ամսոց պաշարմանն . և թողեալ անդ զօրս յիւրոցն՝ գնաց ի հռաւենա ձմերել անդ . և զզօրսն սիրեաց ի ձմերոցս ։
Յայնմ ձմեռի եկին առ նա անդ ի հռաւենա աղիգերնոս , զոր յիշեցաք ի վերոյ , արքայ գոթաց , և ետ զբանալիս քաղաքին կոմսայ ի ձեռս նոր . և թոյլտուին անձնատուր լեալ նմ՝ քիմ պատուով ընկալեալ եղև ի նմ . և ներսէհ յղեաց հրամանս զօրաց իւրոց՝ որք պաշարեալ էին զկումաս քաղաք՝ մեռանել ի ներքս , և սիրել քաղաքին և գանձուց նորա , և պահպանել զայն ։ Եւ ինքն ներսէհ վճռ այսպիսի օրինակաւ սիրելոյ գոթացւոց՝ համարեցաւ ի կարգս թիւրացն նոյ ։
Նոյն աւուրս ձմերայնոյն եկն ներսէհ ի քաղաքն արիմինոն . և մինչդեռ նստեալ էր ի թաղի ինչ դիտանոցի զննել զերկիրն , ետես զգունդ մի գերմանացւոց իբր երկու հազար արանց , որք առպատակէին ի մերձակայ գիւղս ։ Ընդ որ կարի լիաւ սրտմտեալ՝ էառ վազվազակի ընդ իւր երեք հարիւր այր , և հեծեալ երիվար՝ յարձակեցաւ , և իբր արծիւ խոյացաւ ի վերայ առպատակացն . և ահաբեկս սարսեալ զնոսա՝ էարկ առաջի իւր հալածականս յանտառախիտ վայրս . ուր առպատան եղեալ գերմանացւոց՝ սրոյն անդէն ։ Ուստի ներսե-

սի կամելով դաւել զնա և հանել յանտառէ անտի՝ հրամանն
ետ իւրոյն ՚ի փախուստ դառնալ :

554 Ո այն փախուստ նոցա տեսեալ գերմանացւոց , և հայեցեալ՝
ձ թէ սակաւ ազգ են ընդ ներսեսի , յորդորեցին զմիմեանս ,
և ձեռով պնդեցան զհետ նոյ՝ ՚ի մտի եդեալ կոտորել զերեք
հարիւրսն , և զներսես ձերբակալ առնել : Եւ եղև ՚ի հա-
սանել նոյ ՚ի դաշտավայր տեղւն՝ գարձոյց ներսես զսմանձ երի-
վարին իւրոյ , և դիմեաց իւրովքն ՚ի վեր նոյ . և անհնարին
սաստկութեք խորտակեալ զնա՝ աւելի քան զինն հարիւրսն առ
ետեղ ՚ի դաշտին տապալեաց էարկ . և զայլսն ցիրևցան փախս-
տական ազգաւ . և դարձեալ յաղթութեք՝ գնաց ՚ի հռոմ . և
ձմերեաց անդ :

555 Ա հասանել գարնան՝ ժողովեաց ներսես զամ զօրս իւր ՚ի Ա ղթիա ո.
ձ հռոմ . և անդրէն նորոգ սկսաւ մտորել զնա ՚ի պատերազ- փերդ . Ը :
մական վարժութիւնս . զի գուցէ ասէ յաւուրս ձմերայնոյ ՚ի
հանգիստ պարապելով՝ թուլացեալ լիցեն ՚ի զինուորականն
կրթութէնէ . տայր նմ յասպարիզին գեմ ընդդէմ միմեանց ՚ի
մարտ մաքառիլ , յանկարծուստ առեալ յերիվար աշտանակել ,
զնա շարժել , ՚ի ձայն փողոյ համապատասխ յառաջ խաղալ . և
զայլ ամ կարգ պատերազմի կառուցել առ ՚ի կիրթ լինելոյ
նոցա :

Ը . Ա ղդ եղև ներսեսի , թէ գերմանացիք զօրու ծանուց
շրջին ասպատակօրէն ՚ի սահմանս տիրութեն հռոմայեցւոց ,
և թէ բազում ՚ի նմանէ ՚ի մերձակայ տեղեաց համբարս ժո-
ղովեն : Ո այն լուեալ նոր՝ խորհուրդ նախ զօր քշմ՚ի վր նոյ .
և ապա հոչեաց զգօրավար գնդին հայոց , զոր յոյնք խանաս-
րանգ կոչեին՝ փիլկ առելոյ նախարար , զայր քաջակորով և
հնարագէտ . և հրամայն ետ նմ դիմել ՚ի վր համբարակրացն :
Ա ռեալ նոր զարս սակաւս թուով , այլ ընտիրս յիւրմէ գնդէն ,
իսկ և իսկ եհաս ՚ի վր նոյ . եհար և ատտակեաց զբազումս ՚ի
նոցանէ . և զայլսն , որովք կրեին զպաշարս , յափշտակեաց . և
զվին ՚ի սայլից՝ որ կարի իմն լցեալ էր ցամաք խոտով ՚ի կեր
անասնոց , տարաւ հուպ յաշտարակ մի գերմանացւոց , զոր
չինեալ էին նոք իբր տեղի ապաստանի . և յարկանել զհուր
՚ի խոտն , ՚ի վեր ցոլացեալ բոցոյն՝ այրեաց զփայտակերտս
աշտարակին : Եւ արքն՝ որ անդ պահապան կայր , ոչ կա-
րացեալ շինուցանել զբոց հրոյն՝ փութացան զանձինս ձեր-
ծուցանել . և իջեալ յաշտարակէ անտի՝ փախեան և անկան
՚ի քուն բանակն իբրեանց . և խանարանգ տիրեաց տեղւոյն :
Ա նդ այս դառնացեալ գերմանացւոց առ հնարկ վաւերացան բոր-
քեցան իբրև զհուր . և ՚ի նմին աւուր կազմեցան և պատրաս-
տեցան դիմել առաւիկ պնդզմամբ ՚ի վր զօրացն յունաց : Ա մա-

ցեալ ներսեսի զյանդուգն շտապ տագնապն արշաւանաց նոցա՝ Ա. մխ. ե
խաղաղացոյց զզօրս իւր ընդ Եդեմնոցին ։ Եւ յորժամ մերձ եկին յա- և կայ
ձակիլ՝ի վր , ազդ եղև ներսեսի՝ թէ իշխան ոմն յիւրոց ան- 555
ուն սպանեալ է զպատասուոր իւր վ դ զն յանցանաց . զայն
լուեալ նո՝ կալաւ զամն երիվարին իւրոյ և եկաց . մինչև է-
առ զվրէժս յանդուգնն առնն՝ և ելից զօրն արդարութե .
և ապա ուշ եդ առաջնկայ պատրզին ։

Յաժանեաց անդէն զզօրս իւր կալոյաւ յայլևայլ թևս , և
եդ զոմանս՝ի դարանի յանտառախիտ տեղիս . և ինքն յառա-
ջեաց ընդեմ թշնամեացդ ։ Եւ գլուխ տուեալ՝ի վր նոցա առ
քաղաքաւն կապուճայ՝ մղեցաւ՝ի մարտ ահեղ զօրութե , և
հիանալի կարգաւ ։ Եւ՝ի շփոթիլ գերմանացւոց և՝ի խըռ-
նիլ նոցա՝ զօրք ներսեսի պաշարեալ զնո՝ զգազդս նետաձիգ
կօրուսին , և զգազդս՝ի սուր սուսերի և՝ի տէգ նիզակի
հարին չարաչար ։ Եւ էր անդ ողորմ կոտորած սաստիկ յոյժ .
զի՝ի քաջահնար մարտադրութե ներսեսի մատնեալ գեր-
մանացւոց անզերծ՝ի ձեռս սրանց նո՝ անհամարք՝ի նո՝ի
դաշտին տապալած անկանէին , և փախստեայք՝ի վարատիլ
իւրեանց սատակէին . և՝ի յորդուէ սրեան սպանելոցն՝ դաշտք
վայրացն իբր հեղեղաւ ողողէին . և գետն՝ որ անդ կայր ,
՝ի վեր դիպանայր՝ի բազմութե դիականց ։ Եւ անկանէր
և բուտիղինոս մեծ սպարապետ գերմանացւոց . և զօրք նո
քննջինք եղեն . մինչև ոչ ումեք՝ի նոցանէ դառնալ ողջ՝ քան
՝ի հնդից սրանց ։ Եւ ոկ՝ի զօրուէն ներսեսի կոտորեցան միայն
ութսուն արք նախագրաւ նահատակեալք ։

Վարձ արարեալ ներսեսի յաղթութե՝ի պտրզմէ անտի՝ եկն
իւրովքն հանդերձ՝ի հռոմ՝ փառս տալով ասյ զօրացուցչին
իւրում . և ամ զօրք նո իբրև՝ի միջէ բերանոց գոլէին ըզ-
նա ինքն գներսէս ։ Եւ թէ քանի՞ մեծ եղև այս գործ արուե
ներսեսի , * գժուարին է ինձ հաւատալ (ասէ աղաթիաս),
„ թէ երբէք՝ի քաջաց ոք յառաջին դարս այսպիսի փառա-
„ ւոր՝ հրաշալի և մեծահռչակ յաղթութե՝ի գլուխ տա-
„ րեալ իցէ ։ Եւ ոկ զօրք ներսեսի առաւել ևս զուարճացեալ
ընդ այնպիսի յաղթանակուն՝ թուլացան յանձինս , և սկսան
՝ի խրախուսն և՝ի շռայտութե զեղխել . մինչև փոքր մ
ևս և զինն և զզարդս պատրաստ էին տալ ընդ գինւոյ , խա-
պաս մուսացեալ զթշնամիս իւրեանց ։

Այն տեսեալ մեծախորհուրդն ներսեսի՝ հանդէս արար
համօրէն բազմութե նոցա . եւ եկաց՝ի մէջ նո , և սքանչելի
առենախօսութե կշտամբեաց զհեղգասիրուն նոցին . Եւ ա-
պիսի անդորրութե և ընտանեաց զուարճութե նոցա է ասէ ,
օրք՝ի կեանս իւրեանց միանգամ միայն յաղթանակեն՝ի վր

Թշնա-

555 Ե

թշնամեաց . այլ ձեր քաջացդ բնուն լեալ է յաղթօղն լինել
այլոց . և զի իբրև տղայք ըստ պարտեն ձեր՝ պարտիք ի ին-
դունէ . և թէ արդարև որդիք զօրութեան եք , և անուն
քաջութեն կամիք ժառանգել , մի ըստ մարմնոյ ևեթ կորովի
հանդիսանայք՝ թշնամեաց յաղթելով , այլ՝ և առաւել ան-
ձանց ներքուք իշխեցօղք՝ զսանձարձակդ բնութեի ընդ բռամբ
նուճաձելով ։ Եւ միանդամայն ըստ յաղթութեդ հանապազ յա-
ռաջիկայսն ուշադիր ներքուք , յամ ժամ կազմ ունելով զձեզ
ի մարտ՝ թէ դեպ լինի . զի որ անկազմ մնայ՝ բազում ան-
գամ և յաղթի . իսկ որ հանապազ ի պատրաստի կայ , թէ ի
մարտ ելցէ՝ յաղթօղ գտանի . և թէ մարտ չգուցէ՝ յասպարէ-
զի վայելէ ։ Օ այս և առաւել քան զսոյն խօսեցեալ նր ըստ ամ
զօրս իւր՝ վառեալ պատրաստեաց զինս . և ինքն հանապազօր
մտադիր և զգայլ կայր ։

Ե . Լուաք յայն աւուրսն , թէ եօթն հազար արք պատե-
րազմօղք ի գոթաց ամրացեալ կան յանմատչելի բերդն
կամսպայ . խաղաց փութանակի ի վերայ նոցա . և եկեալ
պաշարեաց շուրջանակի զամրոցն . մինչև անձարացեալ ամ-
բարհանայն՝ խորհեցան հաշտութի խօսիլ ։ Եւ եկեալ հռեփ-
նարայ զօրավարի նմ՝ յանդիման եղև ներսեհ , և բանս ա-
ռաջի դներ խաղաղութե . բայց ըստ կարի իմն յոխորտս և
ամբարտաւանս խօսեր , ոչ զիջաւ ներսեհս ի բանս նր . այլ
ալձակեաց զնա յետս . ոչ այդպէս է ասէ , այլ՝ նախ խոնար-
հեցուցից զձեզ յամբարտաւանութէ ձերմէ , և ապա առից
զամրոցդ ։

Ա եկնեալ անտի հռեփնարայ , և մերձ լեալ յամրոցն , առ զայ-
րոյթ սրտին վրէժ առնուլ կամելով ի ներսեհ՝ լարեաց զա-
ղեղն լայնալիճ , և ձգեաց կշռակի ասստկութե ի վր ներ-
սեհ . բայց վրիպեալ նետին՝ ինչ ոչ վնասեաց ումեք ։ Այն-
ժամ և ծառայքն ներսեհի նետաձիգ լեալ զկնի առնն՝ չարաչար
խոցոտեցին զնա . և նր զերծեալ յամուրն՝ յետ երկուց ա-
ւուրց եհան զոգի ։ Եւ ներսեհս այնչափ ի նեղ հարկ զկամպ-
սայ , մինչև առանց պատերազմի անձնատուր եղեն նմ ամրոյ-
կանքն . և նր իմացեալ յանձինս նց՝ առաքեաց զնս ի կոս-
տանդինուպոլիս առ յուստինիանոս կայսր ։

556 Եւ ինքն ներսեհս ահաբեկ արարեալ այնուհետև զամ գոթա-
կիս և զայլ թշնամիսն կայսեր , և քաջ անուն ժառանգեալ՝
տիրաբար իշխեր յետալիա , և ոչ թողացուցանէր երբէք
խլրտիլ թշնամեացն . և կայր խաղաղութէ և յանդորրու ի
կողմանս հռոմէից զքեշմ ժամս ։ Եւ յորչափ եկայ նա անդ՝
ասէ անատոլաս գրապետ , * բոլմնդակ իտալիա էր ի յարա-
,, զուարճ խնդութէ ։ Եւ էր ինքն սիրեցեալ յաչս ամենե-

յուն , մանաւանդ քահանայապետին Հռոմայ ։

Ե . Այլ եղև իբրև մեռաւ մեծն յուստինիանոս , և նստաւ կայսր փոքրն յուստինոս , որք նախանձոտք չարաչաւ եղեն առնա զնեսրսիսէ . նստի ասեն հանդարտ ի Հռոմ իբրև ինքնիշխան և բացարձակ տէր . և զնմա ինչ ըստ կամս իւր գործէ . և եղեալ է ի մտի Թագաւորել գոթացւոց . և վնաս խորհի մատնել զիտալիա վերստին ի ձեռս նոցա ։ Նաւատաց յուստինոս այսպիսի չարաչաւութիւն՝ առաքեաց առ ներսէս պատգամ խիստ , և յետս կոչեաց զնա ի պատուոյ իշխանութիւն նորին ։ Նա եւ սոփիա Թագուհին գրել առ նա , և ասել . դարձ դու ի գործ մանելոյ զաւուրն ըստ նախայ ։

Ներսէս՝ որ ոչն գիտեր զանձնէ խիղճ , իբրև լուաւ զայն , ուրտիւեցաւ և ասէ . եթէ չար ինչ գործեալ է իմ ընդդէմ հռոմայեցւոց և յունաց , հասցեն չարիք ի գլուխ իմ ։ Այլ ոչ կարացեալ տանիլ այսպիսի նախատանաց Թագուհւոյն՝ առաքեալ պինդ , և ասէ . այո զայնպիսի մանածս մանեցից նմա , զորոյ ոչ նա և ոչ կայսր կարողացին երբեք գտանել զծայր , և քակել ։ Այլ եղեալ զայրագին ի հռոմայեցիսն եկն ի գաւառն կամբանիա՝ ի նեապոլիս . և ազդ ազդ լինգոբարտացւոց , որք էին ազգք վայրենամիտք և անողորմք , գալ և տիրել իտալիա անկասկած ։ Այլ նոցա յարձակեալ կառաջադրեալ իբրև երկու հարիւր հազար արամբք՝ առ հասարակ վրդովեալ վերի ի վայր արարին զբովանդակ զայն ։

Փութացեալ եհաս առ ներսէս ի նեապոլիս քահանայապետն հռոմայ յովհաննէս երրորդ , և աղաչեաց զնա քաղցր և ամոքբանիւք՝ դառնալ ի հռոմ , և դարման մատուցանել իրացն , և խաղաղել զնոսն ։ Այլ նա թէպէտ և եկն անդ , բայց քանզի լինգոբարտացիք առաւել զօրացեալ էին , ընդարձակուն գտեալ բռնացան իտալիա , և տիրեցին համ քաղաքաց՝ բաց ի հռոմայ և ի հռաւենայ ի հնուրս ներսիսի . և կացուցաւ առաջինն Թէդր նոցա իտալիա ալբոնիոս յամի տեառն . 571 ։ Ներսէս կայեալ ի հռոմ մինչև յովհաննու կենաց իւրոց՝ մեռաւ անդ յամի տեառն . 572 . ըստ պետաւեայ . կամ . 569 . ըստ կալմեթի . և մարմին նորա եդաւ յարձանեայ տապանի , և դարձուցաւ պատուով ի կոստանդինուպոլիս՝ հանդերձ ամ ընչիւք նորին ։ Ո՛ամանակ կարծի յոմանց՝ Թէ էր ներքինի . իսկ յոմանց ասի , Թէ այդ համբաւ էր միայն , և ոչ ճշմարիտ բան ։

Յայսմ ինչ աստանօր համառօտեցաք ի մեծամեծ և ի քաջմարտական գործոց մեծի հայկազնին ներսեսի . զորմէ ձեռագոյնս գրեն պատմիչք յունաց և լատինացւոց . և քիչ գումարք դրուատեն զնա և զգործս նորին , ոչ միայն ըստ իմաստութեան և

Ա. Տիմ. ա. Հայոց {566 ժե}

{568 ժէ}

Ա. Նահապ. Ե։ Ալ արնեթ · Ե՝ · 25 ։ Ալօղին. ասր Հառափ. Էջր Է. Գլ. 5 · 6 ։ Ալեքսենոս ։ Ո՛ նահապ. և այլք ։

ըստ քաջուձեն, այլև յաւէտ ըստ բարեպաշտուձե մասին. յայմ
ի գործս իւր ասեն ապաւինեալ էր նա յայծ. և ըստ վկայելոց
եւագրեայ. գ. 24. մինչ եւանդագին պատիւ և պաշտօն ընծայէր սմա ածաձնին. և ոչ երբեք ասէ կանխէր ի պատրզմ առանց առնլոյ ի նմանէ զազդուձուն ինչ ի հոգի իւր. և նովաւ զօրացեալ յայմի՝ եղև այնչափ երևելի. թէպէտ և ազգն՝ որոյ ի՞ աչխատ եղև նա, ոչ գիտաց զարժանի պատիւ ընծայելնմա. այլ՝ հատոյց չարիս։

Լսակ ներսէհ բասենցի՝ եկեալր հրահատակ և սահակայ, զորմէ յիշեցաք ի վերոյ, ի պատերազմիլ յունաց ընդեմ պարսից սակաւ ինչ յառաջ ի կենդանուձե յուստինիանոսի մեծի՝ առրուձ մարտուցեալ անկաւ, և ժառանգեաց զանուն քաջի ի մէջ նոցին իսկ յունաց։ Լ՚ել զօրացանէ ոմնիմք առնել քննուձի ինչ ի ծանօթուձիս։ Լ՚յժմ մեք դարձցուք ի պատմուձի գործոց եղելոց յարևելս յառաջ քան զմեռանիլ յուստինիանոսի։

Գ Լ Ո Ւ Խ · Խ Գ ։

Յաղագս մեծի հալածուձեն, որ եղև ի մէջ յունաց և պարսից, և դադարեցաւ յառաւրս վարդանայ երէցդրէ. եւս և յաղագս ապականելոյ նը զաւրէն, և վանելոց զպարսիկս։

Ա. Գանզի երկոքին հզօր թագքն ի միում դարու երկար ամօք կալան զիշխուձի իւրեանց, այն՝ մեծն յուստինիանոս կայսր յունաց, և խոսրով որդի կաւատայ արքայ պարսից՝ մանկանձամբ նուաչիրուձան կոչեցեալ, ոչ կամելով խոնարհիլ իրերաց՝ զբաղում ձիւկս յուզեին ի կռիւս. որոյ պատճառաւ հայք և այլ սրևելեայք ոտնակոխ լինէին, և չունէին զհանգիստ. մինդ ի ջանալ երկաքանչիւր թագաւորաց յինքեանս կորզել զձեռն հայոց, ըստ նմին և զձեռն վրաց և եգերացւոց և զկողմանս միջագետաց։ Լ՚ել զկնի բազմապիսի պատերազմանց, յորս հաղթութիւնք և թիւրաւորք անկան և կորեան յերկուց թագաւորաց, իբրև փոքր ի նուճաձեցան յոյնք, ձանձրացեալ այնուհետև յուստինիանոսի՝ խորհեցան հաստատուն հաշտուի առնել, և դադարեցուցանել զնմա զմուկ. որոյ վ՚ը դեսպան առաքեաց առ խոսրով զսեպուհ ջ-ր-բ-ա-վ՚ զայր ձարտարաբան, խնդրել զհաղաղուի, և ի բաց դնել զգէն և զասպար՝ խնայելով յարիւն այնչափ անմեղաց։

555 Ե Լ՚կեալ դեսպանին ի դարս քաղաք՝ աղդ առաջ խոսրովու. և խոսրով առաքեաց անդ զմի ոմն յաւագաց՝ զիւր առաջեակ, որ և էր սենեկապան արքայի։ Ի գալ երկոցունց դեսպանացս

Ա՚ենանդ դեսպան։

այսոցիկ առ միմեանս, և այլոց իշխանաց ժողովելոց յերկուց կողմանց, խօսիլ սկսաւ պետրոս՝ հռետորական քանիւք և վայելչահնչիւն նկարագրութիւք, թէ քանի՛ փառաց լինին՝ ի պատերազմից. և՝ ի խօսիլն ձարտարութիւք՝ բերանաբաց հայէին՝ ի նա՝ ոլոք ունկնդիրն լինելին նմա։

Ա.Մէ յաւարտիլ քանիցն՝ պինդ եաց զնիկ, և ասէ. չարժեմին զիս արդեօք յօրինուածոց քանիցդ, թէ դուք չէիք հոռոմ, և մեք չէաք պարսիկ. այդ բանք՝ նկարք են գեղեցիկ գունոց՝ ի ծածկել զամօթ պարտուեր, և են զրոյցք նկուն եղելոց. զոր մնրթեր ինձ դոյն բանիւ յայտ առնելոյն անպատեհ է առն պարսկի աւելորդ շատախօսութիւք երկարել զձառս, և՝ ի վէր մեծամեծ լսոց զարմանալ և մեծամեծս խօսիլ։ Ա՚ն ապաքէն հոռոմքդ զարմացեալ ապշեցայք ընդ տիրել մեր քաղաքին անտիոքայ և այլոց քաղաքաց. այլ մեք չհամարեցաք՝ թէ գործեցաք ինչ. զի ոչ եթէ նոր իմն համարիմք տիրել քաղաքաց, և յաղթել թշնամեաց. քանզի քաջ ուսեալ եմք յաղթել, ոչ և ամ ազգ մարդկան ուսեալ են՝ ի միջնջ յաղթիլ։ Ա՚ռայդ յայդմ ևեթ գովեմ զձեզ, յորում մեզ յաղթական երևեցայք՝ ի կանխելդ ձեր թոնարհուիք խնդրել յարքայից արքայէ զհաշտուի։

Ձետ բազում՝ բանից երկարելոց՝ ի վերջոյ հաստեցաւ լինել հաշտուի խաղաղութեան մինչև ցչիսուն ամ՝ ընդ ամ սահմանս աբեւելից և հայաստանեայց՝ պէսպէս պայմանադրութիւք. որոց զլխաւորն եղև այս. զի պարսիկք տացեն յունաց զերկիրն լաղիկիացւոց. և յոյնք տացեն պարսից ամ յամէ երեսունն հազար ոսկի, յորչափ տևեսցէ այն խաղաղութի։ Ձաւելաւ և այս պայման՝ զի մի՛ նեղեսցեն պարսիկք զքրիստոնեայս՝ դառնալ՝ ի հաւատոց, և մի՛ խափանեսցեն զնա երթեկ յայտնի կատարել զպաշտաւնս եկեղեցւոյ. նոյնպէս և քրիստոնեայք՝ մի՛ իշխեսցեն զպարսկատեացս ձգել հնարիւք յօրէնս իւրեանց. և գրեցին վճռեալ այսորիկ հրովարտակս խոստով և յուստից նիստոս կրկին լեզուաւ՝ յունարէն և պարսկերէն։

Ը. Ա՚ւ իբրև հանդերձեալ էին դեսպանքն պետրոս և զնիկ մեկնիլ յերեսաց, սկսաւ զնիկ մեծացուցանել զՔ՚ն իւր զհոռոմ, իբր թէ յաջողեալ է նմա ամ ինչ. և ամենայն իշխէ և փառաւորի. ընդ որ զարեալ պետրոսի, և չկարացեալ ընդդեմ ինչ ասել, ընդ քօղով ինն աղջեաց նմա չարձրամտիլ ընդ այն, պատմելով զմեծուէ սեռոստրի (զոր յիշեցաք. գէր. ա. գլ. 7. երես. 82.) զայսպիսի ինչ. Ա՚ր ասէ երբեմն յառաջին ժամանակս Թ՚ր ոմն եգիպտացւոց սեռոստր անուն. որում դեպ եղև ձնհանալ յամի յաջողուածովք, և բարձրանալ՝ ի փառս և՝ ի մեծութիւս. տիրեաց Թ՚ր ութ, և նկուն արար զամենին. և գերի վարեալ զերկիր Թադաւորս՝ յայն չափ եհաս բարձրա-

մտուէ,

մտուէ, մինչև ՚ի նստիլ իւրում ՚ի կառս ոսկեզէնս՝ փոխանակ
կառաձիգ երիվարաց ետ լծել զթագաւորս. և այսպէս ըն-
թանայր շքով ՚ի Ճանապարհս։

Ա՚ն եղև յաւուր միում, զի մին ՚ի թագաւորաց անտի՝ որ
լծեալ ՚ի այլս ձգեր զկառն, դարձուցեալ զդէմս իւր ՚ի թի-
կունս կոյս՝ ուշդիր լինէր յանիւն, որ հոլովէր անդադար զկնի
նր։ Օ այն տեսեալ սեստորն արքային՝ որ նստեալ էր ՚ի կառս
անդ, ասէ ցնա. զի գործես այր դու. և ընդէր ոչ հայիս ՚ի
քեզ, թէ ո՞ իցես։ Ա՚ն նր պէնտի տուէեալ՝ ասէ. մնասխոյ լի-
նիմ՝ որ իմ ՚ի վերայ անուանոյս, որ միշտ փոփոխ շրջանաւ հոլովի
յիւր վիր, և ոչ մնայ երբեք ՚ի միում տեղւոջ. Հանապազ տա-
րաբերի վեր ՚ի վայր. ստորին կողմն ՚ի վեր ելանէ, և վերինն
կողմն ստոր իջանէ։

Օ այս իբրև լուաւ սեստոսն, դարձաւ յանձն, և խորհեցաւ
ինքեանում, եթէ քանի՞ փոփոխական են անցաւոր ձևսունք և
յաղողուածք բաղդից, և թէ ամարաւք կենցաղոյս միշտ հոլով
ընթացիւք յածին ՚ի բազմագիմի պատահարս՝ ըստ օրինակի ան-
ուոյ։ Ա՚ն զմտաւ ածեալ, թէ իցէ՝ զի և ինքեան դիպեսցին
ձախողակի եղք, ոչ ևս այլ կամեցաւ յայնմհետե յայնպիսի
կառս նստիլ. արձակեաց և զթագաւորն յիւրաքանչիւր ՚ն՝
տիրել երկրի իւրեանց. և ինքն ՚ի վախձան կենաց իւրոց Թըշ-
ուառութեամբ եկն։

Ա՚յսու պատմութիւն խնդացաւ զինչ գեղոյն, թէ զինչ կամի ա-
սել պետրոս. այլ առ ոչինչ գրեաց զբանս նր. և զինչ այլոց
բանից մեկնեալ գնացին ՚ի միմեանց։ Օ այս մեծ հաշտուն
յունաց և պարսից յայն ատեն կամ եղև մեղ յիշատակել աստ,
զի յետ ատենաւոյ՝ ՚ի յետ իբր հնգետասան ամաց քակտե-
ցաւ այն ՚ի պատճառս հայոց. այլ թէ զինչ, ունիմք պատ-
մել այժմ։

Ջ. Օ կնի երկուց ամաց հաշտուենն առաքեաց խոսրով ՚ի 558 Ջ
մեծն հայս մարզպան փոխանակ վշնաս վահրամայ զվարազդատ
անուն ոմն. որ վարեաց զիշխանութիւն իւր ամս. Ջ։ Ա՚ն յետ այ-
նորիկ յինեներորդ ամի հաշտուենն առաքեաց ՚ի տեղի վարազ-
դատայ զմի ոմն յազգականաց իւրոց տուրէն անուանեալ. որ և ան- 564 ԺԴ
ուանիւր ձիրն վշնասպուհին։ Ա՚ա քաղցր հալածանս յարոյց
՚ի վեր ազգին հայոց, ստիպելով զնուազումն յերկրպագուէն հրոյ
և արեգական ըզդէմ պայմանին դաշինն. և էարկ զազգն յան-
հնարին տառապանս. և յոգիս արար ապստամն. և գոլ-
ծեաց ևս բազում պղծութիւնս։

Ա՚ր յայնմ ժամանակի ՚ի մէջ նախարարացն հայոց երևեցաւ 570 ԺԶ
վարդան երկրորդ մանկունեան՝ որդի վասակայ որդւոյ վար-
դայ. զոր և բազմօք գովէն պատմիչք յունաց։ Օ որում եղև

(Ա) Ոմն ։

(Ա) Ոմն ։

(Ա) Ոմն ։

միչ ։ Օ այն տեսեալ աւագանեացն յունաց՝ համարեցան թէ
ինչ այն նշանակ բարեբախտ և յաջող ելից կայսեր . որոյ վ՛ը
դրդեցին զնա անտի բանիւք՝ չընդունիլ զնորոգուն հաշ-
տութեն . այս է ասեն ժամանակ , յորում պարսիկք ունկին
խնարհիլ և նուճանձիլ ձեռամբ քով , ոչի երբեք չիցէ լեալ ։
Յորմէ բարձրամտեալ յուստինոսի՝ արհամարհեաց զբանս
պատգամաւորին , և ասէ . այդ հրեշտակուն քոյ չէ առ բա-
րեկամութեն , այլ գնելոյ զբարեկամութեն մեր արծաթով .
զոր առ ձեզ մի ակամայ տային ձեզ յոյնք . բայց դիտասջիր ,
զի այդպիսի բարեկամութեն պայման յայամ հետէ վճարեալ է
առ՛ի մէնջ ։
Այլ ապա եհարց ցնա կայսրն , և ասէ . ունի՞ ինչ բանս հիւպատո-
լեն ազգային պարսից ընդ քեզ առ այժմ անցիկին Հայաստանու , որ ընդ
իշխանութեբ նոր էր , և այժմ եմուտ ընդ իմով իշխանութեբ ։ Ոչ
սեբոխտ իբր յանգետս . ես այլազգի ինչ միայն գիտեմ , զի
շփոթութեն ինչ գոյ յոնի անդ . զորմէ չունիմ ինչ խօսիլ առ
ձեզ ։ Յայնժամ ասէ յուստինոս . ես գնայս՝ որք նշկահեցին
զպարսիկս , արկի ընդ բազկաւ հզօր ձեռինն իմոյ . և ոչ թո-
զացուցից ուժեբ այսուհետև նեղել զնա . զի հաւատակից մեր
են հայք ։ Ոչ սեբոխտ՝ որ էր այր իմաստուն , խաղաղական
բանիւբ աղաչեաց զկայսրն՝ ամիփոփել զձեռն իւր՛ի հայաս-
տանեայց , և մի բանալ դուռն մեծի խռովութեբ և պատե-
րազմի ։
Այլ կայսրն սաստկութեբ սկսեալ արարեալ՝ ասէ . եթէ և մի
՛ի մատանց խաբուիս մխեցի՛ն հայս , ելանեմ՛ի մարտ ամ-
զօրութեբ իշխանութեբ յունաց . և կալեալ զնա ինքն զխոտորմ՛
զայլ ոք կարդեմ թագաւոր՛ի տեղի նր ։ Այս այսպէս՝ անար-
գանօք դարձոյց նա զպատգամաւորն . որով և սկիզբն եղև
անհաշտ թշնամութեբ և մեծամեծ պատերազմանց՛ի մէջ յու-
նաց և պարսից ։ Այլ յուստինոս՝ որ այսպիսի խրոխտ բանիւք
խոստացաւ պաշտպանել հայոց , ըստ գրելոյ եւագրեայ . է . 7 .
ամենևին անփոյթ լեալ զպատրաստութեբ պատերազմի՝ պա-
րապեր՛ի զբօսանս և՛ ի զեղխութիս ։
Այլ երբև դարձաւ սեբոխտ՛ի պարս , և ծանոյց խոստովա-
նութեբ յունաց , յանհնարինս զայրացաւ թագաւորն ։ Այլ
սեբոխտ՝ որ կատեցօղ լեալ էր խաղաղութեբ , փոքր ի հան-
դարտեցոյց զնա . և հրամայն առեալ՛ի նմանէ գնաց հրեշ-
տակութեբ առ հայս՝ յորդորել զնա յետս կալ՛ի հնազանդու-
թեբ յունաց ։ Այլ սակայն լուեալ վարդանայ զգալուստ նր՝ և
ոչ իսկ եթող նմա մտանել՛ի դուռն քաղաք ։ Այնդ այս դառ-
նացեալ սեբոխտայ , հակառակ իւրումն խաղաղասէրն բարուց
դարձաւ՛ի թշնամութեբ մեծ . և գնաց բոլոր բոլորեցոյց զբ-

խոս-

խոսրով՝ի վը հայոց ։ Որոյ վ՚ն հրամայեաց խոսրով ժողովել զօր բազում, և պատրաստել զպատերազմական միջոց, և յարձակիլ՝ի հայս, և սպառել զնա սրով ։

Ե. Իբրև լուաւ վարդան զպատրաստուածն խոսրովու, ժողովեաց և ինքն զիւր զօրս հայոց. և առաքեաց լրտեսս և դէտս յայլևայլ կողմանս՝ տեսանել, թէ ըր՞ ձանապարհ գան պարսիկք. և ինքն զհետ լիներ վառել և կազմել ըզգունդս իւր ։ Այլ ապա տեղեկացեալ՝ի լրտեսաց և՝ի դիտաց, եթէ հասին զօրք պարսից՝ի դաշտն խաղամախու, և բանակեցան անդ, ՚ի նմին աւուր և ինքն բաժանեաց զզօրս իւր յերիս գունդս. միոյն պատուիրեաց կալ՝ի պատրաստի իբր՝ի դարանի յառաջոյ կողմանէ պարսից, զի՝ի սաստկանալ պատերազմին յարձակեսցին՝ի վր. զերկրորդն կարգեաց դիմել՝ի վերայ նոցա՝ի ձախմէ. իսկ զերրորդն էառ ինքն՝ խաղալ յաջմէ ։

Այլ՝ի վաղիւն անդր՝ի ծագել առաւօտու՝ այն ինչ զօրք պարսից սկսեալ էին պատրաստիլ, յանկարծակի անկաւ վարդան՝ի վր նոցա. և էարկ ահ մեծ՝ի բանակ նոցա, և շփոթեցոյց զնոսա յոյժ ։ Այլ մինչդեռ էր նոքա՝ի դիմի հարեալ՝ անկաւ՝ի վր և երկրորդ գունդն հայոց՝ի ձախմէ նոցա. և եղև աղաղակ մեծ. և՝ի խուճապիլ անդ պարսից, և յաղմիլ զօրավարաց նոցին, և՝ի կատաղիլ դազանացն՝ սկսան զօրքն հայոց անհնարին հարուածս հասուցանել նոցա, և վանել յետս ։ Յայնմ վայրկեանի զերիվն սպարապետն պարսից տագնապեալ յոյժ՝ ինքնին առանձին իբրև գազան ամեհի յարձակեցաւ՝ի վր գնդին վարդանայ, և արար մեծամեծ կոտորածս. յորմէ զօրացեալ և զօրաց նոր՝ ինքեանք ևս սկսան չարաչար հարկանել զհայս ։ Այլ կորովին վարդան անցեալ՝ի յետին կողմն զօրացն պարսից, և իբրև հողմ փոթորկեալ զնոքօք՝ հանդերձ գնդաւն յառաջ վանեաց զնոս՝ի վր գազանացն. և կոտորեաց՝ի նոցանէ զբազումս. և վերստին շփոթեաց զզօրսն պարսից ։

Ինչդեռ յայս տագնապ շփոթի էին նոքա, հասին և օրք՝ի պատրաստի էին՝ ճնշեալ զօրք հայոց. և յարձակեալ սաստկութիւ՝ի վր պարսից յառաջոյ կողմանէ՝ կոտորէին զնոսա ։ Այլ զբեզեակ անձարացեալ զօրացն պարսից, և տկարացեալ առաջի հայոց՝ սկսան փախչիլ. այլ զօրքն հայոց մնեալ զհետ նոցա՝ հարին՝ի նոսա ոչ սակաւ ։ Այլ՝ի տարաժամիլ աւուրն յետս դարձեալ՝ ժողովեցին զառաջ անկեալսն. և գտեալ նաև զդիակունս հայոց՝ օրք անկան՝ի պատերազմի անդ, թաղեցին ըստ օրինի քրիստոնէից ։

Առեալ խոսրովու զգոյժ պարտութեան զօրացն իւրոց՝ դառնացաւ և կատաղեցաւ յանձն իւր. և դարձեալ գումարեալ զօր

571 ե

քշեմ առաւել քան զառաջինն յայլևայլ աղգաց՝ ետ ի ձեռս
վահրամայ մեծի զօրավարին իւրոյ, և արձակեաց միւսան-
գամ ի վէր հայոց ։ Եւ ըն անկաւ խռովութիւն անմիաբանութե
ի նախարարս հայոց, չկարաց վարդան վերստին կարգել ըն-
զօրս իւր ընդեմ պարսից ։ և երկուցեալ յերեսաց նոյ՝ մինչև
եկեալ էին նոքա, էառ զընտանիս իւր, և գնաց ի կոստանդի-
նուպօլիս ։ ըստ որում գնացին և այլ քանի մի նախարարք ։ որոց
և յանդիման եղեալ կայսերն յուստինոսի՝ մեծարանօք պատ-
ուհեցան ի նմանէ ։ և հաղորդեցան յեկեղեցւոջ սըջին սուրբոյ՝
ըն մի յերից դրանց աւագ խորանին, որոյ վասն ասի՝ Թէ կոչե-
ցաւ այն դուռն հայոց ։

Այսպէս անցք անցին ի նմին ամի և ըն աշխարհն վրաց ։ զի և
նոքա նեղեալ ի բռնութենէ պարսից վճռ հաւատոյ՝ վտարանդեցին
ի նմանէ ։ և գուրգէն մեծ իշխան նոցա՝ որ նստեր ի տփխիս,
փախուցեալ անկաւ առ կայսրն ի կոստանդինուպօլիս ։

Գ Լ Ո Ւ Խ · ԽԱ ։

Յաղագս պէսպէս պատերազմաց, զոր եղեալ էին ընդ հայս ընդ
պարսից ։ և յաղագս մարդպանութենէ Դիմրանայ ։

572 ի ա

Ընդ այնմ ժամանակի երկիդի մամիկոնէի առ ձեռն մի
ի կայսերական քաղաքէն անդ ի կոստանդինուպօլ-
սիս, և զօր ոմն վարանեալ ի միտս վճռ ծին իւրոյ՝
ազաչեաց զկայսրն հատուցանել ի հայս զյունական գունդս ։
զի միաբանեալ ըն մեզ ասէ՝ ի միասին վանեսցուք զպարսիկս ։
Եւ յուստինոս կայսր կարգեալ սպարապետ արևելից զմար-
կիանոս զհօրեղբօրորդի իւր՝ արձակեաց զնա զօրու ծանու
հանդերձ վարդանաւ ի հայս ։ եկն յօգնութիւն նոցա հրամանաւ
կայսեր և յոլհան նախարար՝ իշխանն փոքրուն հայոց ։ միաբա-
նեցան ըն նմա և եգերացիք և ափխազք, ըն որս և զարեհ ար-
քայ ալանաց գնդաւ իւրով ։

Ո աուցեալ նոցա յերկուս մեծամեծ բանակս՝ կէսք մնային ի
կոզմանս միջագետաց, և կէսք անցին ի մեծն հայս ։ և ի
մէջ փակեալ զվահրամ զօրագլուխ պարսից հանդերձ գնդաւն՝
հալածական տարան զնա մինչև ի դուռն մծբնայ ։ և հա-
րին ի նմանէ ոգիս հաղար երկերիւր ։ և զինացեալն՝ կէս մի
փախստեայ արկեալ հալածեցին յՆէ անտի, և կէս մի փա-
կեալ պաշարեցին ի մէջ մծբին քաղաքի ։ և նստեալ շուրջ
պահ եդին զնոքօք ։ Եւ զի մի դատարկ նստցին անդ բազ-
մութիւնք զօրաց այլևայլ աղգաց, արձակեաց զնոսա իւրաքանչ-

կիա-

Ա՝ էնանդրը ։
(ա՝ էոփանէս
բռ՝ պանդոսդ
(ա՝ էոփ՝ վանու
Ա՝ ոփը ։ ե ։
և այլ ։

կիանոս զօրավար . և ինքն յունական գնդաւն ևեթ կայր ՚ի պաշարել զքաղաքն ։ Ոսկ վարդան դարձ արարեալ ՚ի հայս՝ ոչ իշխեաց կալ անդ , զի մի՝ նենգութիւք մատնեսցի ՚ի ձեռս խոսրովու . եւ ասպա անտի , և միւսանգամ գնաց ՚ի կոստանդինուպօլիս . և մնաց անդէն ։

Նահապան ուրեմն լուեալ խոսրովու զպարտութիւնէ զօրացն իւրոց՝ փութացաւ և էառ քառասուն հազար հեծեալս , և հարիւր հազար հետեւակս . և խաղաց ինքնին սրտմտութիւք մեծաւ ՚ի վրէ յունաց և հայոց . և նախ դիմեաց ՚ի վրէ դարպաս քաղաքի ։ Եւ մինչեւ եկեալ էր խոսրովու , անկաւ խռովութիւն ՚ի գնդին յունաց . և ամբաստանեալ եղև մարկիանոս զօրավար առաջի կայսեր , և ընկեցաւ յիշխանութենէ . և փոխան նորա կարգեցաւ Թէոդորոս ոմն . որոյ լուեալ զդիմել արքային պարսից՝ եթող զպաշարումն մեծ քնայ , և փախեաւ . և զօրականք պարսիկք՝ որք ՚ի քաղաքի անդ էին , եկին յարեցան և նոքա ՚ի խոսրով . և նովաւ չանդերձ մարտ եղեալ ընդ դարպաս քաղաքի՝ առին զայն ։

Ետ այսորիկ սիրեաց խոսրով զզօրս իւր ՚ի քէմ առաջս ՚ի սահմանս ներոլեանն յունաց . որոց աստիճանակութիւն արշաւեալ այսր և անդր՝ մինչեւ ՚ի փոքրն հայս , յաւարի առին և քանդեցին զձեն հրով և սրով . զորոց երկար գրեն պատմիչք յունաց . մինչեւ եւագրիոս . գլխ · Է · գլ · 8 · 9 · 10 · և 12 ։ որ և ՚է 14 · գլ · ասէ , թէ անգամ մի ևս գիշերային պատերազմեալ պարսից ընդ յոյնս՝ այրեցին զմեքենայսն ։ Եւ եղ յայնմ ամի անդադար մարտ սաստիկ ընդ յոյնս և ընդ պարսիկս . որով և խռովեալ և վրդովեցէ եր գրեթէ համօրէն ասիա ։ Եւ ահա յայս հայի այն քան սաղկայ ստեփաննոսի , որ ասէ . գլխ · Է · գլ · 2 · թէ * Ա՚յս են ձիկք մարտից երկպառակութենէ , ան՚՚ թիւն սպանմանց , գերութեց , առից , խռովից , կապանաց , ՚՚ նեղութեց , պակասութեց , խիստ սովոյ , սրոյ , և մահ՚՚ դամահու , աւերելոյ աւանից , հրդեհից շինուածոց , և ամ՚՚ ենասուց քէմ ցաց՝ որ յերկուց կողմանց հասաներ , մո՚՚ ռայեալ ընդպատերազմէ ։ Յայսչափ աղետից և չանհնարին կոտորածոց՝ որ եհաս ՚ի զօրս յունաց , թախծէր սաստիկ տիրութիւն ՚ի յոգի իւր կայսրն յուստինոս՝ անկաւ յախտ մոլեգնութիւն և յանբժշկելի խօթութի . և կառավարութիւն կայսերութենէ յանձն եղև տիբերեայ երկդի՝ առ ՚ի զդեմ ունել պարսից ։

Այս ինքն տիբեր առաքեաց վաղվաղակի զբազմութիւն յունական զօրուն ՚ի կողմանս միջագետաց և ՚ի սահմանս փոքուն և ևս ՚ի հայոց՝ չթողացուցանել զպարսիկս՝ խոռչալ յառաջ ։ Ոսկ զօրք խոսրովու բազում անգամ ՚ի դիմի հարեալ վանե-

ցին զյոյնս, և կոտորեցին ի նոցանէ զյոլովս. և հրձիգ առ
նեն զբերդն. այլ այսու ամենայնիւ չկարացին տիրել մեծին
Հայոց՝ ոչ յաւուրսն. զի անդ հայք և յոյնք միաբան զդէմ ու
նէին նմա։ Եւ այնուհետև սուղորութիւն եղև, զի ամի ամի դի
մեալ յարձակէին պարսիկք ի մեծն Հայս յամենայն օգոստո
սի. և անդ մարտ եդեալ ընդ Հայս և ընդ յոյնս՝ երբեմն յաղթու
թիւն և երբեմն պարտուիջ, անցանէին ի սահմանս յունաց,
և գործէին բազում վնասս։

57⁶ Ի տևել այսպիսի աղետալի անցից պատերազմաց՝ խոր
հուրդ արար տիբերի փոխանորդ կայսերն ընդ Թադուհւոյն սո
փիայ՝ հնարս գտանել վն՛ զինջացանելոյ զպատուհասն խոսրովու։
Եւ երբ գիտաց խոսրով, թէ յոյնք նկուն եղեն, և ինքնակամ
յօժարին ի հաշտութիւն, փութացաւ նախ ինքն առաքել առ
նն դեսպանս խաղաղութիւն. զի գիտէր՝ թէ նք ամենեն իբր
պարտեալ՝ հաշտութիւն խնդրել. ոչ գրէ մենանդր պատմիչ
յունաց. և յղեաց զյակոբ ոմն քաջ թարգմանն յազգէ հայոց
հրեշտակութիւն առ կայսրն՝ հանդերձ հրամարտակաւ։
Եկեալ յակոբայ ի կոստանդինուպոլիս՝ չկարաց յանդիմանն
լինել յուստինեայ կայսեր վն՛ խօթութիւնն նորա. մատեաւ առ
տիբեր և առ Թադուհին, և ասաց նմա զպատգամն. և նա ու
րախացեալ յոյժ ընդ այն՝ յղեցին վն՛ այր բանի զզաքարիա ար
քունի բժիշկ, և զայլ արս աւագս՝ երթալ և խօսիլ ընդ պար
սից, տեսանել զիրան՝ և հաստատել զդաշն. առաքեաց և
խոստում ընծառաջ նմա զերկուս ի մեծամեծաց իւրոց՝ զնահգուշ
և զմեհրոդ։ Ընտեալ սմա և նմա ի միջագետս, իբրև յանդի
ման եղեն միմեանց, ուրան խօսիլ բազմ լինէր, և ի վեր իրերայ
արկանէին զվնաս եղելոցն։
Յետ այսորիկ եդ մեհրոդ առաջի և զայս, թէ պարտ է՝ զի
յոյնք տացեն պարսից ամ յամէ զայն պայմանեալ երեսուն
հազար ոսկին, որ հաստատեալ էր յաւուրց յուստինիանոսի՝
մինչև ցյիսնամեայ ժամ. և զոր գունց արարին ցայն վայր՝
համանգամայն վճարեացեն. և ևս ի բաց կացցեն յերկն հայ
ոց մեծաց և վրաց, և ի ձեռս տացեն արքային պարսից ըզ
գլխաւոր ապստամբան՝ մահու դատել զնա, այր զվարդան և
զգուրգէն և զգործակիցս նմա։ Եւրակ իշխանք յունաց յորժամ
լսէին զայս, ասեն. չէն մեզ կամք խնդրել զբան այդպիսի
հաշտութիւն. զի պատուիրեաց մեզ կայսրն. եթէ ասէ ակն
ունին պարսիկք առնուլ զտուրս և զհարկս, դիմակալ դի
տասցեն ինքեանց զհոռմն։ Յուսկ յետոյ եհան մեհրոդ զկրո
վարտակ խոսրովու գրեալ առ ինքն. յորում առանց ինչ յի
շելոյ զնակ հարկաց՝ յօժարեր հաստատել զհաշտութիւն ար
դար պայմանադրութիւն. և իշխանք յունաց փութացեալ ծա

նուսկին զայս առ տիբեր ։

Ճ · Իբրև եհաս այս լուր ՚ի կայսերական քաղաք (ասէ Մենանդր՝ որ էր յայնժամ ՚ի քաղաքի անդ ՚ի հասանելն պատանեկութեանն) , ամենեքեան առ հասարակ լցան խնդութեամբ՝ իշխանք և ռամիկք . ահա արդ ասեն հանգչիմք ՚ի կռուոյ . և յօժարութեամբ յանձն առին յետս կալ յՀայոց , և նմին և յՀէն վրաց . քանզի ՚ի վեր հասեալ էին (ասէ) թէ պարսիկք յօժար են զնմա՛ լինչ կորուսանել և տնանկանալ , քան տեսանել զինքեանս զրկեալս յայնպիսի մեծ ՚ճէ Հայոց . և զայս գիտեալ յունաց՝ հաճեցան ընդ այն հաշտութեան . բայց այսու դաշամբ , զի մի լիցի ինքս լինչ վարդանայ և այլոց գնասուրեայ Հայոց և վրաց , և ոչ այլուստ ումեք ՚ի բնակչաց ՚ճանն այնոցիկ , որք թողեալ զբնակութեի իւրեանց՝ անցեալ էին ՚ի կողմանս Հին յունաց . վա՛ զի յայն սնդեալ էր տիբերն , թէ նա և յաւուրց անտի մեծին յուստինիանոսի երդմամբ խոստումն լեալ է առ Հայս և առ վիրս՝ պաշտպան լինել նոցա ։ Յանձն էառ և հաճեցաւ խոսրով ընդ այս դաշն պայմանիւ , երթ ետես՝ թէ ՚ի նա թողուն յոյնք զՀն Հայոց , ընդ նմին և զվրաց . և խոստացաւ չինասել ապստամբելոցն այնոցիկ . ոչ զի յօժարասիտս արասցէ զայլ բնակիչս ՚ճին՝ այլ զի յօժարասիտս արասցէ զայլ բնակիչս ՚ճին՝ անվրդով կալ և անխափան վճարել զՀարկն յարքունիս ։

՚ի լինել այսր հաշտութեան յաւել կայսրն խնդրել ՚ի խոսրովայ զդարպաքեղբ , զի միխիթարութի՛ն լինչ լիցի յունաց , թէ՝ և ինքեանք ընկալան լինչ փոխարէն , և ոչ նուճատութե՛ զկնի ՚ի հաշտութեի ։ Ոսկ պարսիկք ասէին , թէ նախ հաստատուեսցի և ձեռամբ մերով Հայք և վիրք , և ՚ի բաց մեկնեսցին անտի զօրքդ յունաց . և ապա զայլ ինչ խնդրեցէք ։ Եւ իբրև ոչ էառ վախճան այս գործոյն , միաբանեցան գրգռեցաւ կռիւ մարտի . և եղե պատերազմ ընդ յոյնս և ընդ պարսիկս յՀայոց * յորում մարտի (ասէ մենանդր) բազմաց ,, յետնեալ գտան հոգւովք ՚ի յաւուց իւրեանց . և ՚ի պարտուց ,, թէն մնացեալ խորտակեցան ։

Եւ իբրև այսպէս յաջողեցան իրք ՚ի ձեռս պարսից , ամբարձաւ սիրտ խոսրովայ , և ասէր . ոչ զղջարա , և ոչ մի ինչ տամ Հոռոմոց , եթէ կամիցին Հաշտել . և յաւել խնդրել ՚ի յունաց անտի զՀարկս առաւել քան զառաջինն ։ Ի վեր այսր բազում աւուրբք խօսեցան ընդ միմեանս առանձինն մեծոդ դեսպան խոսրովայ , և զաքարիտ դեսպան կայսեր ։ Պա առաքեցին սուիւնա Թագուհին և տիբեր առ խոսրով քառասուն և հինգ հազար ոսկի ՚ի ձեռն եւսեբի դեսպանին . և աղաչեցին զնա՝ զամ մի ևեթ հաստատել ՚ի միջի զխաղաղութիւն . ապա ետ ինքն զերդումն ՚ի վերայ

577 ԼՂ

իբացդ ։ Այլ ՚ի կատարիլ տարւոյն դրձել առաքեցան պատգամաւորք յերկուց կողմանց՝ հաստատուլթիւն առնել զհաշտութեանն . բայց չեղև հնար . զի պարսիկք անթերի խնդրէին յայմ ամի զերեսուն և հինգ հազար ոսկի . զոր ոչ կամէին յանձն առնուլ յոյնք , զի մի ինքնակալ կայսերուհին՝ որ պանծայր անուամբ հռոմայեցւոց , հարկատու երևեսցի առն պարսկի ։

578 ԺԴ . Ա եռաւ յայն աւուրս կայսրն յոստինոս . և Թէրեաց առանձինն փոխանորդ նր՝ տիբերիոս ։ Ո այն լուեալ խոսրովու՝ յանկարծակի յարձակեցաւ ամ զօրուլթիւ ՚ի միջագետս ՚ի սկիզբն գարնան . և զի կարծէին յոյնք , թէ յառաջ քան զօգոստոս ամիս ոչ դիմեն պարսիկք՝ ըստ նախասացեալ սովորուլթե իւրեանց , կային անպատրաստ . ուստի և յանկոպս գտեալ զինք խոսրովու՝ եկար և վանեաց անտի զամ զօրս յոնաց . և ապա խաղաց զայրագին ՚ի մեծն հայս . զորոյ զգալուստն լուեալ զօրաց կայսերն՝ որ անդ կային , Թողին զձեն , և անձնապուր գնացին փոխստեայ ։ * Այ այսպէս (ասէ մեհանդր) էառ խոսրով զհայաստան առանց աշխատուլթե և ազատ յամ երկիւղէ . զի ոչ ոք գտաւ դիմակալ նմա ։

Վանզի և նախարարք հայոց պատակտեալ յիւրեանս , և ոչ համարձակեալ զդէմ ունիլ պատերազմաւ , ոմանք ՚ի նմէ եկին յոստս նր մեծամեծ պատարագօք , և խնդրեցին զներուումն և զխաղաղուն . և այլք կուտեցին համբարս և եռուն բազմուլթե պարսկական զօրուն ՚ի պետս . և յամի հպատակ յուցին զանձինս խոսրովու ։ Ոակ բնակիչք երկրին տարոնոյ և բագրեւանդայ վաղագոյն առնապարեալ՝ փախստական անկան ՚ի բարձր լերինս և յանմատչելի ամուրս հանգերձ ընտանեօք և աղխուք իւրեանց . զնոյն արարին և այլք բազումք ՚ի քնակչաց Ծին . և զօրք խոսրովու սփռեալ ՚ի գաւառսն յոյնս սիկ՝ հրձիգ արարին զբազում շէնս և գաւառս և գանգատանս կալուածոց նոցա ։

Այլ հուսկ յետոյ զիջեալ խոսրովու ՚ի սրտմտուլթէ իւրմէ՝ մինդ յաղաչանաց ետն մնլեսեի հայոց կաթուղիկոսի՝ առաքեաց պատգամ խաղաղուլթե առ ամսին , զի դարձցին այր իւրաքանչիւր ՚ի տեղիս իւրեանց . և հպատակ կալով տիրուլթե պաքսից ըստ առաջնումն կարգի՝ վճարեացեն լիով զտակ յարքունիս . և այսպէս հանդարտեցուցել զձեն՝ եդ մնրզպան ՚ի դռինն զմի ոմն յիշխանաց իւրոց , որում անուն էր ձիհր վղոն միհրան՝ զկնի եօթն ամաց վտարանջուէն վարդանայ ։

Այ ՚ի կատարիլ աւուրց գարնայնոյ՝ խաղաց խոսրով բազմուլթե զօրաց իւրոց ՚ի կողմանս փոքուն հայոց ՚ի մասն բաժնի յոնաց , նուճաձել և գնա . և եհաս մինչև ՚ի կողմանս կար-

նոյ ։ Ընդ առաջ եղեն նմա անդ իշխանք յունաց , և բազմ ընծայիւք և աղաչանօք հաձեցուցին զերեսս նորա . զի թեպետ իբրև զառիւծ սեդ և խրոխտ էր խոսրով , այլ փութացուն զինքեանք որոց խնամարհեինն ի նա . որոյ աղաչեաւ դադարեաց նա ուրեք ի կողմանն յայնմանիկ աւուրս քառասուն , մինչև տեսցի՝ եթէ առ ինչ խնամարհի կայսրն ։

Յորժամ ազդ եղև տիբերեայ կայսեր , եթէ աւադիկ յայն վայր հասեալ է խոսրով , փութացաւ առաքեաց առ նա դեսպանս զղաքարիա և զԹէոդորոս հանդերձ թղթով և երևելի պատարագօք . արձակեաց և զամ գերին՝ զորս առեալ էին յառաջնմէ յոյնք ի պարսից . և խնդրեաց խնամարհական բանիւք զհաշտութի ։ Այլ մինչև էր ժամանեալ սոցա , առաքեաց խոսրով հրովարտակ առ տիբեր ի ձեռն վրդհատայ դեսպանի . յորում գրեալն էր . եթէ արդար իրաւունս կամիցիս առնել արքայդ յունաց , տուր ի ձեռս իմ զհայ մարդիկդ՝ զվարդան և զայլս , որք եղեն պատճառ այդչափ վնասմանց ապստամբութե իւրեանց . և ես առից զվրէժ իմ ի նոցանէ՝ պատուհասելով զնոսա ըստ արժանեաց նոցին . և միանգամայն լի վճարեալիր զսակ ինառուց եղելոց ի պարսս ։

Զինչդեռ այսպիսի պատգամաւորութիք երթային և գային , անկաւ խոսրով ի յեղակարծ լուծ հիւանդութե . որում պէս պէս պատճառս տան այլևայլ պատմիչք յունաց ։ Յայնժամ վաղվաղակի չոք արարեալ խոսրովու՝ դարձաւ յԱ իւր . և ի սակաւ աւուրս վտանգեալ՝ մերձեցաւ ի դրունս մահու ։ Ուր տեսեալ՝ եթէ մեռանի , սկսաւ տխրիլ և ասել . աւաղ իմոյ ձոխութե և փառաց և յաղթութե , որք իբր երազ անցին . կալայ զնա , և նը թողին զիս ։ Ուստի աւանդէ յուհաննէս կիլիկա՝ և այլ մատենագիրք մեր , զոր և յիշէ եւագրիոս պատմիչ յունաց . գԷր · ը · գլ · 28 · ի ծագել ածային լուսոյ հնարհաց ի սիրտ նը՝ ծանեաւ զմոլորութի հեթանոսական սուտ կրօնիցն , և հաւատաց յԱծ Ճշմարիտ . և ի միտ եառ զաքանչելի խորհուրդ փրկութե ի ձեռն միածնի որդւոյն նոյ , զորմէ լուեալ եր քազմ ինչ ։

Ա՛ր որոյ և ըստ գրելոց վարդանայ պատմագրի՝ կոչեաց առ ինքն զեպիկա ումն՝ որ էր ի կողմանս պարսից , և ընկալաւ ի նմանէ զմկրտութի սքոյ աւազանին . և ետ պատարագ մատուցանել ի սեռեկի իւրում . ումք գրե սաղմոսն ստեփաննոս . գԷր · Ը · գլ · 3 · և արժանացեալ ձեռամբ նը կենդանարար սքի խորհրդոյն՝ յետ երից աւուրց փոխեցաւ յաստեացս ուրախութե , յամի տեառն · 579 · և ի թուականութե հայոց · ՀԻԸ · կայեալ ի թագրութե ամս · խը ։

Է · Յետ խոսրովու յաջորդեաց ի թագրութե պարսից որ-

դի նորին որմիզդ երկրորդ։ Եւ սա հասին նախասացեալ
դեսպանք կայսերն՝ զսքարիա և Թէոդորոս. և որմիզդ յետ
ընդունելոյ զընծայսն նոցա և զբերեալ դերիան, արար նոցա պինդ,
և ասէ. եթէ կամին յոյնք զհաշտութիւն, վճարեսցեն զնամ
հարկս դրամոց, զորս խոստացաւ տալ մեզ յուստինիանոս մին-
չև ցյիսուն ամն. զի այդու պայմանաւ եդաւ յայնմ ժամուի
դաշն խաղաղութեան։ Օ այս լուեալ տիբերեայ կայսեր, և ի-
րացեկ լեալ՝ թէ չուանի որմիզդ զարութիւն քաջութիւն հօր իւ-
րոյ, յղեաց պատուհեր առ մեսրիտոս արևելեան սպարապետ՝
որ և մօրիկ կոչի, վաւել կացմել զգունդս զօրաց, և պատ-
րաստ կալ՝ի կռիւ ընդեմ պարսից. և ինքն յաւել արձակել
միւսանգամ հրեշտակութիւն առ որմիզդ զզաքարիա. առա-
քեաց և որմիզդ ընդ առաջ նորա զանդեկան դեսպան։
Լուեալ երկոցունց դեսպանացս այսոցիկ՝ի դարա՝ հանդերձ այլ
ևս իշխանօք յերկուց կողմանց, սկսան խօսակցիլ ընդ մի-
մեանս. և անդեկան առաջի առնէր զայս միայն, թէ չէ՛ մեզ
հնար հաշտիլ ընդ ձեզ, եթէ ոչ տացիք զտայմանեալ հարկն։
Իսկ դեսպանն կայսեր պնդէր, թէ՝ և մեզ չէ՛ հնար զայդ
առնել. զի այդու կարծիք արծաթոյ գնել զհաշտութիւնն։
Ընդ յետ բազում կապելոյ՝ իբրև ոչինչ վճարեցաւ բանիւք,
հրամայեաց երկուց կողմանց մարտի։ Օ ինեալ և պատրաս-
տեալ կայր գունդ պարսից՝ի կողմանս մծբնայ, և էր զօրա-
վար նոցա դողըվճ անուն. նոյնպէս և մօրիկ յունական զօրօք
մօտ առ նմա։ Որոց յետ բազում անգամ բանսիելոյ ընդ մի-
մեանս՝ հուսկ յետոյ հաւանեցան տիբեր և որմիզդ, և ա-
րարին խաղաղութեան հաստատուն դաշամբ։
Նայց որմզդայ չկացեալ՝ի դաշին՝ վերստին զօրաժողով ե-
ղև, և յանկարծուստ յարձակեցաւ ինքնին զօրու ծանուռ՝ի
մնան բաժնի կայսեր. որոյ ընդեմ երեալ յունաց հանդերձ
զօրօք փոքուն հայոց՝ հարին և վանեցին զպարսիկս չարաչար
յոյժ. և առին՝ի նոցանէ առաւ բազում. և որմիզդ փախա-
տեայ անկաւ յԱծ կուր։
Իւսանգամ դիմեալ մօրիկայ ահագին սաստկութեբ՝ի վե-
րայ պարսից՝ եաւ զբազում քաղաքս, յորս բռնութեբ տիրեալ
էին նոքա. և եհան գրեթէ զնամ պարսիկս յԱծն փոքուն
հայոց. և դարձաւ յաղթութեբ մեծաւ. զոր և փառօք մե-
ծարեալ տիբերեայ կայսեր՝ փեսայացոյց ինքեան. և՝ի նմին
ամի՝ի մեռանիլ նորա՝ եառ նմա զկայսերութիւնն յունաց.
քանզի գիտեր՝ թէ էր նա այր կորովի և խոհական. որ և՝ի
նախկինսն յաճախ իշխանութեբ՝ առաւել ևս եցոյց՝ի բազմ
իրս զարութեբ քաջութեբ և զառաքինի գործս գովելիս. և
ըստ վկայելոյ չոմխատասէր, * վերկուս իրս իրերայ ներհականս,

,, զորս յանձին կրեր , ըստ միմեանս գեղեցիկ յարմարեալ շա-
,, բաւեաց · զգերապանծ վեհանձնութեն ոգւոյ , և զբարե-
,, գործով գթասիրութեն , զերծ յամ ամբարհաւաճութեէ և
,, ի բարձրայօնութեէ ։

Լ՚ս սա յաղագն հայոց · ըստ որում վկայէ և յունէլ ժամագիր յոյն · յերես · 173 · կիմ 136 · զնոյն ասանդէ և ստեփաննոս տարօնեցին · է · 6 · որ և յաւելու գրել , թէ էր յարտագածոտն գաւառէ յօշականն գեղջէ · իսկ կիրակոս գանձակեցի ասէ , թէ ոմանք ասեն յօշականայ , և այլք՝ ի տարօնոյ · որպէս և ոմանք համարին զնա ծնեալ ի կապադովկիա ։ Արէթ գրէ՛լ ասողին , թէ ի կոստանդինուպոլիս գալով նէր՝ * խնամ ածէը
,, գեղջն իւրում (օշականայ) · և այս ասէ արդարացուցանէ
,, զառաքելին՝ որ ասէն , աստի յօշական խունկ առաքի ։
Ի մէջ բերէ կիրակոս և զայսպիսի ինչ · Լ՚ասէն ասէ զամանէ , թէ առաքեաց արս ոմանս առ հայր իւր՝ գալ և վայելել ըղ-
փառս որդւոյ իւրոյ · և թէ ոչ , գոնէ խրատ ինչ յղել նմա՝ ի անկասկած վարելոյ զտիրութիւն ։ Արթեալ պապասւորայն՝ գտին զծերունին ի պարտիզի · և առաջին նմա զկրամանն կայ-
սերն ։ Ա՚յս պատասխանի եա , և ասէ · ինձ չէ վայել իբրև հայր ինքնակալի պերձանալ ։ Ո՚յս առաջեալ՝ սկսաւ զմե-
ծամեծ կաղամբան որ ի պարտիզն անդ՝ արմատախիլ առ-
նել , կտրել զգլուխս և ծածկել ը հողով · և վճիռ այնոցիկ դարմանեաց զնորատունկան և զվխտս ։ Իակ արքն իբրև տեսին զայն , հաւարեցան զնա բախած · և եկեալ պատմեցին կայ-
սերն ։ Ո՚յս լուեալ մօրկայ՝ ժպտեցաւ , և ինչ ոչ յայտնեաց ումեք · և այնուհետև հետամուտ եղև բառնալ ի միջոյ զո-
մանս յաւագաց , որք մեծացեալ ի ձախսութէ՝ գաւաճանու-
թիս ենթէին ընդեմ իւր · և ի տեղի նոցա կարգեաց զայլ ըն-
տիր արս ցածունս և հաւատարիմս · և ապա կոչեալ առ ինքն
զպապասւորս իւր՝ ասէ ցնո · ահա այս էր խրատ հօրն իմոյ ,
զոր եցոյց ի պարտիզին · և դուք չառիք ի միտ ։

ԳԼՈՒԽ ԽԸ ։

Յաղագս կարճելոյ մօրիկայ պնուշեղ գուսան հայոց ։ և պատերազմելոյ
յունաց ընդ պարսիկս ։ և նահատակելոյ Խոսրովա
երիցուդւոյ օփնակեանաւքն յունաց ։

ՅԱ ։ Օրիկ կայսր հայկազուն՝ ի թագրել անդ իւրում ,
ոյր երևի և՝ ի գրելոցդ՝ ի վերոյ , արար բազում
բարեկարգութիւնս ։ և քաջութիւնք և իմաստութիւնք
խաղաղացոյց և հանդարտեցոյց զաշխարհն յունաց , ևս և զնն
հայոց՝ որ՝ ի բաժնի իւրում ։ և այս այնչափ , մինչև յառակս
առնուլ՝ ի հայս , և ասել ։ * երբև՝ ի ժամանակս մօրիկայ նըս-
տեալ ես յանհոգս ‖ ։ ըստ որում աւանդի՝ ի հին ձառընտիրս ։
ոյր և յայսմաւուրս՝ յոպրիլի ։ 29 ։ զոր և՝ ի գործ ածէ առաքել
պատմիչ ։ գլ ։ ե ։ երես ։ 46 ։

Այլ յայն աւուրս իշխան տարօնոյ մուշեղ մամիկոնեան՝ այր
հզօր և երևելի ։ որոյ քաղցում քաջութիւն ցուցեալ էր՝ ի դրան
կայսեր և յաճին հայոց ։ զոր և յոյն պատմիչք յիշատակեն ։ այլ
չկարելով ուղիղ արտասանել՝ մուսլակ կամ մուստակ կոչեն ։
Սա տուեալ էր զդուստր իւր զմարիամ՝ ի կնութի վարդայ ար-
ծրունւոյ ։ յորմէ ծնաւ ստեփաննոս ։ որ յետոյ եղև առաջնորդ
իննակնեան վանացն գլակայ ։ Ոյ այս մուշեղ կարգեաց մօրիկ
կայսր դուքս հայոց եղելոց՝ ի բաժնին յունաց ։ զի մնացեալ էր
յովհան նախարար՝ իշխան այնր կողմանց ։ և գուցէ յայս սակս
պատմագիրք յունաց՝ յովհաննէս ևս կոչեն զմուշեղ ։ և կամ
թերևս վասն լինելոյ նմա իշխան երկրին յովհաննու կարապետի՝
որ՝ ի մուշ տարօնոյ ։

584 Տուեալ՝ ի ձեռս սորա մօրիկ կայսեր զյունական զօրս՝ հան-
ԼԴ դերձ զօրավարաւ նոցին , որոյ անուն էր կրոս , և զայլ գունդ
առանձին հայկական զօրաց , առաքեաց՝ ի պատերազմ ընդեմ
պարսից ։ Եւ մուշեղայ դիմեալ քաջութիւք՝ ի վերայ թշնամեաց՝
մնայր սաստիկ եղեալ առ նմին գետով՝ որ իջանէ՝ ի տիգ-
րիս , և զօրացաւ՝ ի վերայ նոցա ։ այլ կրոս զօրավար նահանձեալ
ընդ յաղթուն մուշեղայ՝ ըստ աւանդելոյ Թեոփանեայ , թի-
կունս դարձոյց , և եղ՝ ի պատերազմէ ։ յորմէ շփոթեալ և այլ
յունական զօրաց՝ ի փախուստ դարձան ։ Եւ յետ այսորիկ՝ ի
586 ձեռս միւսանգամ ընդեմ պարսից՝ յաղթեցան չարա-
ԼԶ չար , և բազումք անկան՝ ի նոցանէ ։ Ոյ սաստկանալ պատե-

հաս-

նականուի ՚ին՝ էառ ՚ի ձեռա ՚ի ժամ պնդրզմին զանձեռագործ
դաստառակն · և նովին յաղթեաց պարսից · բայց յետոյ յիշու-
նայն երկիւղէ փախուցեալ՝ ոչինչ կարաց վճարել ։

Ե. 3 Ետ բազում պատերազմաց առաքեաց որմիզդ արքայ պարսից զվարհամ՝ որ և վհռրամ զօրավար , նիխորձէս կոչեցեալ՝ զայր խրոխտ՝ զօրու ծանուս ՚ի վէր յունաց · բայց վտանգեալ զօրաց նոր յերեսաց զօրավարացն յունաց և քաջին մուշեղայ՝ տկարացան · և բազումք ՚ինքեանք խորտակեցան ։ Ո՛յն լուեալ որմիզդայ՝ զայրացաւ ՚ի վէր վարհամայ · և առաքեալ առ նա յանարգանս նր կանացի զգեստ՝ ընկէց զնա ՚ի զօրավարուէ ։ Ւսակ վարհամ՝ որ նեղեալ էր ըստ կոտորած իւրոցն , առաւել դառնացեալ ՚ի վերայ որմիզդայ՝ գրգռեաց զամ զօրս պարսից ընդէմ նր · և գրեաց նամակ խիստ առ որմիզդ արքայ · յորոյ վէր այսպիսի եդ շքոյ անուն · * Որմզդայ դաւեր խոտրոմու խնդալ ։ ՚Ինդ որ յանհնարինս սրտմտեալ որմզդայ՝ առաքեաց զզօրավարն ոմն ընդէմ նորա զօրօք բազմօք · բայց վարհամ որոացեալ և զսիրտ այնոցիկ զօրաց՝ ետ սպանանել զնոր զօրավար նոյ ։

Գ. Ա Ւ մինչդեռ վարհամ յայսպիսի ապստամբութի՛ էր զինեալ , անկաւ աղմուկ չիոնի ՚ի պարսս · և ընկեցին զորմիզդ ՚ի թագաւորուէ , և եդին զնա կապանօք ՚ի բանտի · և ՚ի տեղի նր թագրեցուցին զխոսրով եկիդ զորդի նորին ։ Ւսակ որմիզդ աղաչեաց զաւագանին թոյլ տալ ինքեան իւրովք կապանօքն գալ յատեան , և բանս ինչ խօսիլ ընդ նոսա · և իբրև եկն նա անդ և խօսեցաւ , յաւարտիլ բանից նր առաւել ևս զայրացեալ իշխանացն պարսից՝ խողխողեցին նախ առաջի նր զորդիս նորին և զկինն · և ապա կուրացուցին զնա , և դարձեալ եդին ՚ի բանտ ։ Ա՛ռաքեաց առ նա յայնժամ խոսրով որդի նր պարգեւս ինչ ՚ի միխեթարուէի նորոն · այլ յարհամարհել նորա զպարգեւսն՝ քարկոծեալ խոսրովու՝ հրաման ետ սպանանել զնա ։

Ե. Ւնդ այս հայրապետութի՛ խոսրովու գժդմնեալ զօրաց նորա՝ զայրանային ՚ի սիրտս իւրեանց · և իբրև գնաց նա ընդդէմ վարհամայ՝ լքին զնա , և միացան ընդ վարհամայ ։ Ա՛յլ խոսրով մնացեալ սակաւուք , և յանհնարինս մտեալ՝ խորհեցաւ առ այլ թագրուէ դիմել վն օգնութի՛ գտանելոյ ։ Ւսայց ոչ վստահելով յոք , տարակուսեալ կայր · և ապա գնացեալ յանծանօթ ինչ վայր՝ էջ յերիվարէ իւրմէ , և եթող զնա սանձարձակ , զի ուր և երթիցէ նա՝ ինքն ևս զհետ լիցի նր , հոչելով ինքեան օգնական զնոյն քրիստոնէից , զի յաջողեացէ զնոցին երիվարին իւրոյ · միանպամանն և զնոյն սարգիս վիրաւորուն վկայն պարսից · զորմէ լուեալ էր , թէ յամի երրորդ հայոց յօգնուէ ժամանէ՝ որոց կարդան առ նա ՚ի նեղութի ։

Ղեւոնդ. Ը. 17.18.19։
Ագաթան. Ը. Ա Ե։
Ագաթանգ. Ա Ե։
Ագեթիոս։
Ագաթիաս։
Ոսոր. Ը. 12։
Յովհ. Ֆար.։
Ա՛ռիւռն։
Ա՛ստղ. Ը. 3։
և այլք։

589 Ը

590 Ը

Եւ ի կալ նէր վարանեալ մտօք , դիմեաց երիվար նէր ընդ
փոքուն հայոց ի սահմանս յունաց : Յայնժամ եկեալ խոսրո-
վու առ յոյն իշխան ոմն՝ ծանոյց նմա զինքն և զեղեալսն . և
աղաչեաց զնա՝ ազդ առնել վաղվաղակի կայսերն մօրիկայ :
Եւ մօրիկ հրամանն ետ ի պատուէր ունել զնա ի հերապօլիս
քաղաքի . և առաքեալ առ նա բազում պարգևս՝ խոստացաւ
օգնել նմա իբր իւրում որդւոյ :

Ձ . Իր յայնժամ՝ ի դրան կայսեր ներսեհ ոմն հայ իշխան
ըստ ոմանց որդի ներսեհի բասենցւոյ՝ ներսեհ կրսեր ասացեալ .
որ և զաւազինն կարգեալ էր զինակիր յուստինոսի փոքու , և
պատուեալ ի նմին իսկ ի մօրիկայ , այր շքեղաշուք տեսլեամբ՝
և հանճարեղ մտօք . զոր ժամակիցն կորիպպոս բանաստեղծ՝
յոտանաւոր բանս իւր կոչէ՝ ձոյլ ոսկի : Ի ձեռս սր գումա-
րեալ մօրիկ կայսեր զօր բազում՝ առաքեաց առ խոսրով . զի
նոքօք գնացեալ խոսրովու ընդէմ վարհամայ նիխորձեսի՝ վա-
նեսչէ զնա , և թագաւորեսցէ : Ղղեաց մօրիկ պատգամ և
առ մուշեղ մամիկոնեան , զի զօրս ժողովեալ ի հայոց՝ լեցէ
զօրավիգն խոսրովու :

Ի հասանել ներսեհի զօրօք առ խոսրով՝ եհաս առ նա և մու-
շեղ գնդաւն հայոց , առեալ ընդ իւր և զսմբատ բագրատունի՝
բազմայազգն կոչեցեալ , և զխուաթայ իշխանն սասնոյ : Ո-
զովեցան առ նա և ի պարսից զօրք ոչ սակաւ՝ մեկնեալք ի
վարհամայ . և եղեն ամ զօրք խոսրովու ըստ աւանդելոյ յով-
հաննու մամիկոնէի՝ երեսուն հազար , կամ ըստ սիմէոնաս-
տեայ թէոփիլակտոսի՝ վաթսուն հազար : Եւ որպէս գրէ նա
ինքն յովհան մամիկոնեան , եկեալ խոսրովու նոքօք ի դուինն՝
գումարեաց և յօժ մեծին հայոց ի ձեռն միհրանայ մարզպա-
նի զաբս իբր երեսուն հազար , և ետ զնոսա ևս ի ձեռս քաջին
մուշեղայ , խոստացեալ նմա տալ զմարզպանուն հայոց՝ եթէ
վերստին հաստատեսցի ի թագաւորուն իւր : Իրեալ ապա ի
դունայ այնչափ զօրօք՝ չհնեաց և եկն ի բահլ շահաստան :
Ունեալ վարհամայ զգաստաստ խոսրովու այնչափ բազմութիւն
զօրաց յունաց և հայոց ի վէր իւր՝ անկաւ ի վարանս . զի ընդ
իւր կային միայն քառասուն հազար զօրք , և ոչ աւելի : Ի-
ռաքեաց բանս առ մուշեղ , և բազմադիմի ողոքանօք կամե-
ցաւ յանկուցանել զնա յինքն , ըստ աւանդելոյ թէոփանեայ ,
խոստացեալ նմա բազում ինչ . քզի ձանձրացեր զզօրուն առն
և գնդին՝ որ ընդ նմա . այլ մուշեղ և ոչ իսկ պինուոյ արար զնա
արժանի :

Եւ եղև իբրև յանդիման եղեն երկոքին բանակքն , յերիս
բաժանեաց խոսրով զզօրս իւր . եկաց ինքն ի միջին գնդի և
ներսէս ընդ նմա զօրօք յունաց . յաջ թևն մեծով և զարմիկն

զօրավարք պարսից հանդերձ պարսիկ գնդաւ յարեցեալ՝ ինն·
և յահեակ Թևն մուշեղ ընդ ամբաստ՝ զօրաք Հայոց ։ Այլ
ցեալ վարհամայ յահեղ պատրաստութիւն բանակին խոսրովու
երկեաւ յոյժ · և խաղացուցեալ բանակեցոյց զզօրս իւր առ
լերամբ ։ Այլ քաջին ներսեհ յառաջ մղեալ զձակատ իւր՝
յարձակեցաւ ի վերայ վարհամայ , և վանեալ ցրուեաց զզօրս
նր · և եկեալ բանակեցաւ յաւանն՝ որ հասարակ անուամբ
կոչիւր դաստակերտ ։ Այլ մուշեղ հանդերձ գնդաւն Հայոց
բանակեցաւ ի դաշտի՝ աւուրբք միով հեռի ի բանակէն խոս-
րովու ։

Ը · Փութացեալ վարհամայ մինչանգամ ի մի վայր ժողո-
վեաց զզօրսն , և զայլս ևս յայլևայլ տեղեաց ի նոյն յաւելել
դարձաւ յետս , յարձակիլ ի վր խոսրովու ։ Այն լուեալ
արքային՝ առաքեաց զՀեծելազօրն պարսից առ մուշեղ · զի
նոքօք հանդերձ յայնմ կողմանէ զդէմ կալցի վարհամայ · և
յոյնք ըստ հետևակացն պարսից յայսմ կողմանէ ։ Ուրեք վար-
համայ , թէ մուշեղ երեսուն հազարաւ բանակեալ է մեկու-
սի՝ հեռի ի խոսրովայ ի դաշտի , և ոչ գիտելով՝ թէ հեծե-
լազօրն պարսից ևս հասեալ իցէ առ նա , եկն ի վր նր յան-
ակնկալ պահու ։

Այն յարձակումն վարհամայ տեսեալ զօրացն Հայոց և հե-
ծելագնդին պարսից՝ զահի հարան յոյժ , և խորհեցան փախ-
չիլ ։ Այլ քաջն մուշեղ՝ որ յեղեալ էր ի ծերութիւն , զերիտա-
սարդութիւն իւրոյ զարուն ի ձեռս առեալ՝ քաջալերեաց զնոսա ,
և հաղիւ ուրեմն հանդարտեցոյց · և խրախոյս ետ նց՝ քաջու-
պտի մնանել ի պատերազմ՝ կոչելով ինքեանց յօգնութիւն զնր
կարապետն յովհաննէս , յորոյ ի բարեխօսութիւն յանձն արա-
րեալ էր զինքն և զզօրս իւր · և ևս զնր սարգիս զանյաղթ
վկայն ։ Եւ ապա ի մի բերան աղաղակելով , * նր՝ կարապետ
հաս մեզ յօգնութի ‖ , դիմեցին առ հասարակ ի վերայ զօրացն
վարհամայ հանդերձ հեծելովքն պարսից · և հարին զնոսա
չարաչար յոյժ ։

Տեսեալ մուշեղայ ի հեռուստ զվարհամ զինու զարդու փայ-
լեալ , յարձակեցաւ ուժգին ի վր նր · և ի բաց ցրուեալ ըստ
Թիկնապահ զօրսն՝ սկսաւ մարտնչիլ ընդ նմա · և զի նա ևս
էր այր քաջ , ի բաբախել ըստ միմեանս՝ վաստակեցաւ մուշեղ ,
և զօրացաւ վարհամ · և դիպեցուցեալ զսուր իւր սրոյն մուշե-
ղայ՝ ընկէց զայն ի ձեռաց նորա · և կամէր յերկուս ձեղքել
զնա ։ Այլ մուշեղ յոգիա առաստան՝ զվէրջին շունչ զօրութեն
իւրոյ յուցեալ՝ ձգեաց զմուրճ իւր , և եհար ուժգնութեամբ ըզ-
գլուխ վարհամայ , և ցրուեաց զուղեղ նր , և յերկիր կործա-
նեաց զնա ։

Ա. Մ. Ի. Ե. ՔՐ. Ա. Ե. Ա. Ա. Ա

զայլ միւս փառաւոր խաչն, զոր առաքինին խոսրով հաւն այսր
երկիր խոսրովայ յաւիտենական էր՝ ի տաճարէ սիջին սարգսի.
զորմէ յիշեցաք ՚ի գլ. լէ։ Իսկ այս յայտնի երևի նաև ի բա-
նից անտի, զոր ետ գրել նա ինքն խոսրով ՚ի պատուհանդան
խաչին. ըստ օրում՝ ի մէջ բերի եւագրիոս ականատես վկայ.

գլուխ. Ը. գլ. 21։

Ա՛ամիկն։ Պատմ։ Յետ այսորիկ խոսրով արքայ պարսից ՚ի վէր հասեալ ստուար
ամբաստանութեանցն, զորս խօսեցան յոմնք զքաջին մուշեղայ,
առաքեաց առ նա պարգևս մեծամեծս. և կարգեաց զնա
գործակալ ՚ի Թիւրուէ իւրում, և ազատ ՚ի մէջ իշխանաց։
Այնպէս և առ ամբաստ բագրատունի յղեալ պարգևս՝ կոչեաց
զնա առ ինքն հանդերձ որդւովք նորին, որոց անուանքն էին
աշոտ և վարազտիրոց. և կայոյց զնա ինքն զամբաստ զօրավար
պարսից. և երկուց որդւոց նոր աշոտայ և վարազտիրոցայ ետ
պատիւս, ոսպ օրէն էր պատուել զորդիս իշխանացն պարսից։

Յովհ. կոնի։ Ա՛սող. Բ. 2։ Ամոռէ։ Այս ամբաստ արար բազում մեծամեծ յազգն Թիւրքաց ընդդէմ 593
Թիւնամեացն խոսրովու. և գրեցին զամենեսեան նուիրեալ խնդ
հնազանդեցոյց ընդ իշխանութեան նորա։ Ապա որոյ և խոսրով կամե-
լով փոխարէն հատուցանել՝ կացոյց զնա մարզպան աշխարհին
Հայոց և վրկանայ, և արձակեաց զնա յիւրմէ զօրաց պարսից, (2)
և առ Հայոց՝ որք էին ընդ ձեռամբ նորա։

Ապա ամբաստայ յաշխարհէն պարսից՝ գնաց նախ յՕմն վրկա-
նայ. և եգիտ անդէն զբազում Հայս գերեալս յառաջագոյն
՚ի պարսից, և քննակեալս առ կողմամբք սագաստանի. որոց
մուռացեալ զէրոյ և զպիտս Հայոց՝ վարեցին պարսկականաց։
Առքա էբրև տեսին զամբաստ, ուրախ եղեն յոյժ։ Իսկ ամբաս-
տայ կոչեալ յայլևայլ կողմանց զքաջհանայս և զդպիրս Հայ-
ոց՝ կարգեաց զնոսա ուսուցիչս լեզուին. և ապա գտեալ ՚ի գե-
րելոց անտի զերեց ոմն աբել անուն՝ այր քաջ, առաքեաց
զնա առ մովսէս կաթուղիկոս Հայոց, և ետ ձեռնադրել զնա
եպիսկոպոս վրկանայ. և զվիճակ այնր ՚ծի էարկ ընդ իշխանութիւն
կաթողիկոսին Հայոց։

ԳԼՈՒԽ ԽԶ :

Յաղագս ընդունելոյ վրաց ՚ի հետն հիւրիսմէի զծողովն Խաչէ-
դոնի . և յաղագս կանոնադիրքն աբրահամոյ , որ արար
զնորոգեալ ծողովն դուինայ ընդդէմ վրաց և այլոց
Խաչէդոնականաց :

{580} {լեթ}

ԱՅ . Յաւուրս ժամանակացս այսոցիկ՝ նախ քան զթագաւորել խոսրովու երկրորդի ՚ի մեռանիլ կաթուղիկոսին վրաց , անկաւ շփոթութի՛ ՚ի մէջ նոյ՛ վի՛ ընտրութե՛ նոր կթե՛ղիսի . և ոչ եղև նոյ՛ հնար համաձայնիլ և ընտրել զոք . և թէպէտ յայն վայր կաթուղիկոսն հայոց ձեռնադրեր նո՛յ եպիսկոպետ կի՛ կթե՛ղիս , բայց ընտրութի՛ն ՚ի ձեռս նո՛յ էր : Այլ իբրև ոչ կարացին նո՛ր որոշել , առաքեցին թուղթ առ մովսէս հայրապետ հայոց , և խնդրեցին ՚ի նմանէ , վի՛ զո՛ ոք և կամիցի նա , ձեռնադրեսցէ իւրեանց կթե՛ղիս , խոստանալով ընդունիլ զնա առանց իրիք հակառակութեան :

Յայնժամ և մովսէս ընտրեաց և ձեռնադրեաց կաթուղիկոս վրաց զկիւրիոն , որ էր ազգաւ վրացի ՚ի գաւառէ ջաւախեայ ՚ի գեղջէ սկուտրայ , տեղեակ չորից լեզուաց , յունաց , հայոց , պարսից և վրաց , այր բարւոք և իմաստուն . զոր և յառաջագոյն կայուցեալ էր նա ինքն մովսէս՝ վանեցւոց եկեղեցւոյ կաթուղիկոսարանին , և քորեպիսկոպոս այրարատոյ : Ա՛ա յառաջագոյն իսկ տեղեկացեալ գիտէր զուղղութի՛ն և վճռմարտութի՛ն դաւանութեան սո՛ր ժողովոյն քաղկեդոնի . և իբրև գնաց ՚ի կողմանս վրաց , քարոզեաց նոցա զայն . և եցոյց բազում իրօք , թէ զոր ինչ լուեալ են նոքա զայնմ սո՛ր ժողովոյ , բանք թշնամեաց են . և որպէս զի աներ կբայ գիտասցեն զայս , ետ բերել ՚ի կոստանդինուպօլսոյ վիմագրութի՛ բազմաց զբուն պատմութի՛ ժողովոյն և զկանոնս նո՛ր , և զուղիղ թարգմանութի՛ թղթոյ սո՛յն լեւոնի : Զայն իբրև տեսին եպիսկոպոսունք և քահանայք՝ ևս և իշխանք վրաց , ըստ որս և եգերացւոց , ամենին ընկալան զսո՛ր ժողովն իբրև զայլ երիս ժողովս . և կացին և կան իսկ մինչև ցայժմ ՚ի նոյն դաւանութե՛ . և մնացին ընդ իշխանութի՛ կայսերն յունաց :

Այն յայն աւուրսն ՚ի կողմանս վրաց բազում նեստորականք ՚ի խուժիկ ազգէ . և զի արհամարհեալ լինէին ՚ի վրաց անտի իբրև զհերետիկոսս , դաւձան կեղծաւորութի՛ ՚ի մոլորութե՛ իւրեանց . և կիւրիոնի ոչ գիտացեալ զատութի՛ դար-

{Յովհ. կաթ. Իմաստասէր. Վարդան : Ներսէս : Սամուէլ :}

{Ծովինարի հիւրիսմէի և աբրահամ" : Վարդան :}

ձի ինչ՝ ընկալաւ զինն ի հաղորդութենէ եկեղեցւոյ : Ո այս լը-
հեալ մովսէսի կաթողիկոսի՝ գրեաց մեղադրութեան առ կիւրիոն .
և նոքա քննեալ զիրան , և ի վեր հասեալ՝ թէ յիրաւի այնոքիկ
խուժիկք ատուածք էին դարձեալ , նզովիւք հերքեաց զնա յե-
կեղեցւոյ իւրմէ . ըստ որում պատմէ նա ինքն կիւրիոն ի
թուղթն իւր :

Աբրահամ : Ա. Նոյն ամն յետ կալոյ մովսեսի կաթողիկոսի յաթոռ {581
Պապ : Հայրապետութեանն ամս . Ը . հասեալ ի ծերութեն , և անկա- Ը }
րացեալ ինքնին քառնալ զկոդ եկեղեցեաց աղգին իւրոյ՝ կար-
գեաց փոխանորդ իւր՝ իբր տեղապահ աթոռոյ զվրթանէս
վիպ ումն . զոր կիրակոս՝ քերթող անուանէ . և նովաւ կա-
տարեալ զիշխանութենէն հայրապետութենէ այլ և ամն իբր
երեքտասան . մինչև եհաս ինքն ի խոր ծերութեն , և հան-
գեաւ լի աւուրբք , կալեալ զաթոռ կաթողիկոսութենէ , ամս .
Ը . առանձինն . և ժԷ . ամ ըստ վրթանիսի . ըստ նմա՝ ամս . խԷ .
զորմէ տես ի ծանօթութիւն . Ե . (1) . ի վերջ : Այս՝ի վախճանիլ 593
նորա խթ
նէ յերկուս պատահէ ենկատ ծին՝ ոմանք կամէին զվրթա-
նէս ձեռնադրել , և կէսք զայլոք . ապա լուեալ , թէ զկնի
սակաւուց գայ ի հայս քաջն մեծաւ իշխանութենէ մարզպա-
նութենէ , սպասեցին առ ժամ մի . զի խորհրդով նոր ի վեր միոյ
ուրուք միաբանեսցին . և այսպէս այլ ևս ամիսս ինչ վրթա-
նէս պահէր զաթոռն առանձին :

Այս էր յայն աւուրսն ենկիս ումն յծին վասն ի ցրտաւոյ քէֆի
մովսէս անուն , զոր ձեռնադրեալ էր կիւրիոնի կաթողիկոսին
վրաց . սա լուեալ զմահ մովսեսի կաթողիկոսին՝ գրեաց առ
վրթանէս տեղապահ վասն կիւրիոնի , թէ ընկալեալ է ըղ-
ձողովն քաղկեդոնի . և նա գրեաց առ կիւրիոն թուղթ՝ յոր-
դորելով զնա յետս կալ ի քաղկեդոնականացն . այլ կիւրիոն
ոչինչ անսաց նմա :

Յովհաննէս : Ա. Ոսկ սմբատ դարձ արարեալ յծէն վրկանայ՝ գնաց ի տխբան
Ա. Ծող. Բ. 2 : առ խոսրով արքայ վն իրիք գործոյ . և կրկին և պատուե-
Ա. Պրդոն : ցաւ ի նմանէ . և քէմ պարգևօք արձակեցաւ գնալ յծ իւր :
Այս ի մեկնիլ նմ յարքայէ՝ խնդրեաց ի նմ շինել զեկեղեցի
մի յատուկ ի գոհին քէֆի . և նա յօժար կամօք ետ նմ հրա-
ման առնելոյ զայն :

Յօրժամ եկն սմբատ յծս հայոց , տեսեալ՝ թէ վախճանեալ 594
է մովսէս կաթողիկոս , և չև են եղեալ զոք , կարգեաց ի տեղի նր խթ
զտէր աբրահամ զենկկոն ուղտասնեաց , որ էր ի գեղջէ աղբա-
թանից : Այս յետ այնորիկ հինգ կարկ եկեղեցւոյ սիգն գրիգո-
րի լուսաւորչին մերոյ՝ շինել զայն համայն կոփածոյ քա-
րամբք . զի յառաջն ի փայտե և յաղուաղոյ էր շինեալ ի սկզբն
վարդանայ : Այս յամբաստան լինել պարսից քննակելոց անդ

առ

առ արքայ , եթէ չինուԹիւն այնր եկեղեցւոյ ընտանական է
քերդին , հրամայեաց արքայ քակել զայն կողմն քերդին , և
հեռագոյն չինել , և զեկեղեցւոյն չինուԹիւն անխափան կա-
տարել ըստ փափաքանացն սրբատայ . վնյ և սմանատ առաւել
և յորդորեալ՝ կարի լինն հոյակապ չինեցաւ զայն ։

595 ՚Ի սմին ժամանակի՝ նախայիշեալ մովսէս եպիսկոպոս ցրտաւայ սա-
խտ. 581 բաստանեալ եղև առաջի կիւրիոնի կաԹուղիկոսին վրաց ՚ի
Ը վերայ պեսպես իրաց . և իբրև կոչեաց զնա կիւրիոն գալ առ
ինքն , երկուցեալ մովսեսի՝ փախեաւ ՚ի քաղաքէ անտի գիշե-
րային . և եկն ՚ի հայս առ աթբահամ կաԹուղիկոս . և չա-
րախօս եղև զկիւրիոնէ , Թէ վն մերժելոյ իմ զժողովն քաղ-
կեդոնի՝ զոր նա ընկալեալ է , հալածեաց զիս . և յուսել և ա-
սել , Թէ զժամերգուԹիւնն՝ զորս կարգաւորեալ էր սբն
շուշանիկ առաջին եղիկս ցրտաւայ , ոչ Թողու հայերէն կա-
տարել , այլ՝ վրացերէն ։

593 ՚Ք . ՚Ո այս իբրև լուաւ աթբահամ կԹիղկս , գրեաց ԹուղԹ
խտ. առ կիւրիոն . յորում մեղադրէր զնա վն ընդունելոյ նր զժո-
ղովն քաղկեդոնի և վն հաղորդելոյ ընդ յոյնս , և վն հալածե-
լոյ յաղագս այսր պատճառի զմովսէս եպիսկս , և վն փոփոխե-
լոյ զժամերգուԹիւնն . * Յաւաջագոյն ասէ երանելի հայրա-
,, պետն մեր մովսէս գրեաց առ ձեզ մեղադրուԹիւն յաղագս
,, հաղորդելոյն ձեր ընդ այնոսիկ՝ ընդ որս չէր պարտ . և ձեր՝
,, գրով և պատգամաւորաւ յանձն էր առեալ չհեռանալ ՚ի
,, միաբանական հաւատոյ հաղորդուԹէ ձիս մերոյ ։ ՚Այժմ
,, զչարագոյնն և զծանրագոյնն եհաս մեզ լսել . զի զմիաւո-
,, րուԹիւն հաւատոյ և զասպնջականուԹիւն զերկոցունց ձագս
,, ցուրտաւայ եկեղեցւոյն՝ անշարժ միջնորդուԹէ պահէր . ուս-
,, տի սեր և խնամուԹիւնք մարմնաւորականք , և հաղորդու-
,, ԹիւնՔ հոգևորականք կատարէին ցնծալից ուրախուԹէ ,
,, աստի ՚ի մեխիԹարայ ՚ի խաչն գալով , և այտի ՚ի սբ կա-
,, Թուղիկէ ։ ՚Այժմ զցուրտաւայ զեղիկոն հալածեալ , Թէ
,, ընդէր խոստովանել հրամայէ զհաւատ ուղղափառուԹե .
,, և զպաշտօնն հայերէն սբոյ շուշանիկեան զկարգաւորեալն՝
,, լսեմ , Թէ ՚ի բաց փոխեցէք (յո փոխեցիք) ։ ՚Ու յետ այ-
լոյ բանից յարէ զկնի , Թէ կամիմ առաքել առ ձեզ քանի մի
եպիսկոսունս , զի խօսեսցին ընդ ձեզ վն այսր . բայց ասէ առ
այժմ բաւականասցի ԹուղԹս ։

խտ. ՚Ակ կիւրիոն գրեաց պինդ , Թէ երանելին մովսէս կաԹու-
ղիկոս ոչ վն ընդ քաղկեդոնականն , այլ՝ ընդ խուժիկն հա-
ղորդելոյ գրեալ էր առ իս . և իրաւամբք էր ասէ գրեալ .
զի ՚ի նէ կեղծաւորուԹէ էին գարձեալ . վնյ իբրև յայտնի եղև
ստուԹի՝ նզ , մերժեցաք զնս ։ ՚Ակ մովսէս եպիսկս ցրտաւայ ոչ

վն

վն ուղիղ հաւատոյ խոստովանութեանն եկն առ ձեզ , այլ՝ վասն անպատեհ գործոց ինչ , զոր արարեալ էր . որոյ տակս իբրև կոչեցեալ վնաս , և կամէի խրատել , Թողեալ նը զեկեղեցի իւր՝ փախեաւ գիշերային ։ Նոյնժամուրեմն այնր եկեղեցւոյ ոչ է փոփոխեալ՝ի միջոջ , այլ զի ամենեքեան լմնասցին զբանս պաշտաման , երկոքումեանք լեզուօք կատարի այն՝ հայերէն և վրացերէն ։ Այլ յաղագս հաղորդելոյ մեր ընդ յոյնս , և մտանելոյ ընդ ծառայութիւնն կայսեր , չէր արժան մեզ զայդ մեզ . զի մեք ոչ եթէ նորոգ ընկալաք զհաւատս նոցա , այլ զայն՝ի սկզբանէ ունեաք ընդ ձեզ՝ ըստ հաւատոյ եկեղեցւոյն եէմի , ուր աւանդեցաւ զառաքելնն . և զի նը այժմ հաստատուն ունին զնոյն , մեք և ես ըստ նոցա հաստատուն ունիմք և կալցուք ։ Եւ՝ի վախճանի յաւելու . իսկ * որ ասէ գրեալ էր ,, (ձեր) , Թէ կամիք եղկաւնա արձակել՝ որ գայինն և ուսուցանեին , Թէ կամիք՝ արձակեցէք . Թող զի գան՝ որ ,, ուսուցանեն և ուսանին ։

Այս Թուղթ ընկալեալ աբրահամու՝ գրեաց պինին , և առաքեաց առ կիւրիոն՝ի ձեռն պետրոսի եպիսկ , զոր վերք՝ ըստ ասելոյ կիրակոսի՝ վն համարձակութեանն գայլ կոչեցին ։ Եւ Թղթի անդ վերստին յորդորեր աբրահամ կԹղկս զկիւրիոն՝ի բաց կալ՝ի հաղորդութէ քաղկեդոնականաց , և նզովել զնա . զի նը Թուղինն սակ զհայրենի հաւատան , և բարձին զիաւան եէմի՝ մուծանելով յայն գնեստորական հերձուածս . զոր հայրապետք մեր առ բաւկենիւ մերժեցին ։ Այլ վն ցըստաւայ եպիսկին ասէ՝ Եւ՝ի վէր հասեալ եմք , Թէ չունի ինչ յանցանս . և ապա՝ի վերջոյ խնդրէ , զի որոշեսցէ տեղի ինչ տեսանելոյ զմիմեանս յետ տօնի զատկին ։

Նակ կիւրիոն գրեաց առ նա պինին երիւք գլխովք . Նախ՝ի վր բանից Թղթոյ մովսեսի կԹղկսին , ոչ գրեալ էր յառաջինն Թղթին ։ Երկրդ՝ի վր մովսեսի եպիսկին ցրտաւայ . եԹէ նա ասէ գիտեր , Թէ ես ընկալեալ եմ զժողովն քաղկեդոնի , և ինքն ոչ կամէր զայն ընդունիլ , ընդէր ձեռնադրեցաւ յինէն . ոչ ապաքէն պարտ էր նմ յայնժամ ասել , * Թէ ես՝ի ,, ձենջ չօրհնիմ , զի չէք ուղղահաւատ . միանչ յայնժամ օրհ ,, նեցաւ՝ի մէնջ , արդ զի պարտի զմեզ քննել . միԹէ յետ ,, այնր փոխեցաք ինչ զհաւատս ։ Երդ՝ի վր միաբանութեանն . մեք ասէ՝ի սկզբանէ և այսր միաբան էաք ընդ ձեզ , և ունեաք զայն հաւատոն՝ զոր ունէին և ունին այժմ՝ըստ եկեղեցիք քրիստոնէից , և պատրիարգունք հնգից աԹոռոց , Հռոմայ , աղեքսանդրիոյ , անտիոքայ , կոստանդնուպոլսոյ , և եէմի , և այլ անհամար եպիսկունք Հայոց , և երեսուն եվինդ եպիսկունք մեր . արդ՝ սոքա ամենեքեան զիարդ միան-

Ա. Կոր. ԺԱ. ա Կայս. 595 Խդ.

գամայն մոլորեցան . և միայն ցրտաւայ եւիկան գտաւ անմա-
լար . մեք ոչ կարեմք թողուլ զայդչափ բազմութեն հայրա-
պետաց և աղգայ ընդհանուր եկեղեցւոյ , և միաբանիլ ընդ
ձեզ . և ասպա յաւելու . * Լ՚րդ՝ ասէ , թէ միաբանութեի՛ և
,, սէր կամիս պահել , և կեալ ըստ մեզ խաղաղութե՛ , ոչ հարքն
,, մեր և ձեր կեցին , մեք պատրաստ եմք ի խաղաղուն . իսկ
,, եթէ այլ տարաղինչ կամիք խորհել , աւելի աշխատի լինիք .
,, և յաղագս այդորիկ այլ մի գրեք առ մեզ ։

Ը . Լ՚ուեալ աբրահամու զայս թուղթ և ընթերցեալ տա-
րակուսեր և հոգայր ի խորհուրդս . զի ինքն եդեալ էր ի
մտի , թէ քաղկեդոնիկքն նեստորականք են , և յերկուս բա-
ժանեն զքս . որոյ վասն ոչ կարէր հաւատալ քանիցն կիւրիոնի .
բայց և ոչ իշխեր հաստատել , թէ այլ ևս եկեղեցիք մոլորել
իցեն ։ Լ՚ւ սակայն առաւել ապահով համարելով զառաջինն
կարծիս իւր՝ վերստին գրեաց առ կիւրիոն , և յորդորեաց
զնա յետս կալ ի դաւանութե՛ քաղկեդոնականաց . զի ընդ
ասէ երկու բնութե՛ ասելով՝ երկեակ որդիս քարոզեն ընդեմ
բանից մարգարէից և առաքելոց . նոյնպէս և տուամարն լևոնի
ասէ բաժանումն քարոզել ։ Լ՚ւ եթէ այսպէս իցէ , ուրեմն հա-
ւատք ընդ խախտեալ է ասէ , և դաւանութե՛ նոյ մոլար . ապա
պարտ է ձեզ նղովել զայն ժողով և զտուամարն լևոնի . որպէս
ասէ նղովեցին զայն յաւուրս բազկենի հայք և վիրք ։ Զետ
այսորիկ գրէ և զատագովութե՛ զմոլեխան եպիսկոպոսն ցրտաւայ .
և խնդրէ ի կիւրիոնէ՝ գալ ի միասին , և խօսել ընդ միմեանս՝
հաստատել զխաղաղութե՛ ։

Լ՚սմ թղթոյ արար պէնկի կիւրիոն , և ասէ . զարմանամ ,
զի այդչափ իմաստութե՛ք՝ զոր ունիք , ոչ կամիք խորհիլ՝ զոր
խորհին համօրէն եկեղեցիք քրս , և տեսանել՝ թէ զի՛նչ խո-
սեցան երեքին սքը ժողովք , յոր առնեքին պարծիմք . և թէ
զիարդ անստերիւր մտօք դաւանութե՛ ժողովոյն քաղկեդոնի
միաձայն է ընդ բանս նց , և է նոյն . բայց ոչ զի ձշմարիտ ե-
րևեսցի ասացեալս , դիցուք ասէ առաջի համառօտիւ ըզ-
պատմութե՛ս և զսահմանս էջոյ ժողովոյն . զի արտաքինք դա-
տաստան ուղիղ , և մի՛ ի զուր միաբանիք յանկծս . զի մեղք
են ։ Լ՚ւ սկսանի պատմել զէջոյ ժողովոյն ընդ կարգի . և բե-
րէ զբանս վճռոց նց ։ Լ՚ւ ապա բանդակէ զվճիռ ժողովոյն
քաղկեդոնի յայս բան . սքը և աշխարհամարտ ժողով * խոս-
,, տովանի զմի և զնոյն քն մի որդի և տէր և միածին , և յեր-
,, կուց բնութե՛ անխառնականելի ։ և անշփոթելի և անբա-
ժանելի ։ Զայս այսպէս եդեալ՝ յաւելու կիւրիոն յորդորանս
առ կաթողիկոսն՝ ընդունիլ զսքը ժողովն ։

Ը . Լ՚նկալեալ աբրահամու կաթողիկոսի զայս թուղթ կիւ-

ղրիանի, և ընդերցեալ զայն՝ ոչ հաւանեցաւ. զի ոչ հաւա-
տայր՝ եթէ ունի գրեալ ի կիւրիոն, այնպիսի խոչ լեալ ժողովն
քաղկեդոնի և սահմանադրութեան նորին. վասն զի ամենևին
պաշտպեալ էր ի խորհուրդս իւր յաւանդութենէ ումանց, եթէ այն
ժողով մոլորական էր. և եթէ չէր ասէ այնպէս, ոչ մերժէին
զայն հայք ի ձեռն բազկենի։ Այլ ապա տեսեալ, եթէ չէ՛
նմա հնար համոզել զկիւրիոն, ըստ նմին և զաղգն վրաց՝ յետո
կալ յընդունելութենէ ժողովոյն քաղկեդոնի, արար ժողով ի
դուին յեպիսկոպոսաց ումանց յերրորդ ամի կաթողիկոսութե իւրոյ, և ի
չորրորդ ամի մարզպանութե սմբատայ. ուր ի մէջ մատուցեալ
զբանս ժողովոյն քաղկեդոնի զգրեալսն ի կիւրիոնէ՝ համա-
րեցաւ զայն ըստ մտաց Թէոդորոսի և Նեստորի առակել. վ-
որոյ և հերքեալ զնոյն՝ նզովեաց զկիւրիոն, և զամենեսին՝
որք ընդունին զժողովն քաղկեդոնի. և բաժանեաց զազգն ի
քաղկեդոնականաց առ Տէր։ Այս մանաւանդ նզովիւք ար-
գել, զի մի՛ բնաւ ոք հաղորդեսցի ըստ վերոյ՝ ո՛չ ի խնամութիս
և ո՛չ ի վաճառս. և ահա սովին որոշակի բաժանեցան վերոյ
ի հայոց։ Այսմ ժողովոյ դուընայ տէս և ի վահանայ եղեդ
պրոցս ի ծանօթութենէ. ԼԲ. (1)։

Արդ լուեալ զայս կիւրիոն, դժուարացաւ յոյժ ըստ գործս աթ-
րահամու, և գրեաց ամբաստանութե վնասանել ի վերայ այսր
գործողութե առ մօրիկ կայսր։ Ոչառ մօրիկ զայս և յայ-
լոց. և ցասուցեալ ըստ այն՝ հրամայեաց ժողով առնել ի կոս- 597
տանդինուպօլիս, և կոչել յայն ձեռնկատունս յունաց և հայ- խե
ոց. որոյ աղագաւ առաքեաց աթրահամ կաթողիկոս զվրթանէս
վիշապ զաթոռակալ իւր, և զդրիդոր վիշապ. ընդ որս դնացին և
այլ ինն և տասն եպիսկոպոսք հայոց եղելոց ի մասն յունաց։
Այլ ի դուսմարիլ ժողովոյն՝ եպիսկոպոսքն հայոց ընկալան զժո-
ղովն քաղկեդոնի. իսկ վրթանէս և դրիդոր ոչ հաւանեցան
ըստ այն. և ի ծագել դժուութե ի մէջ նոցա՝ յաղթահարեալ սո-
ցա ի նոցանէ, և ոչ կարացին զդեմ ունել նմա՝ և իմանալ զմիտս
նոցին և իմացուցանել զմիտս իւրեանց, դարձան յետս։ (1)

Այլ այսու պատճառաւ անկաւ շփոթութե ի մէջ հայոց ե-
ղելոյ ի բաժնին պարսից և յունաց. որ և տեւեաց գրեթէ
ամս երիս։ Որոյ վերայ մօրիկ կայսր որոշեալ զհայս եղեալս ի
բաժնին իւրում՝ ի հնազանդութե աթրահամու կաթողի- 600
կոսին. և զի մի՛ միաբանեն նոքա առանց կնճռակի՝ կացոյց ի վերայ խե
նոցա կաթողիկոս զյովհան ումն այլ բարւոյ՝ ի գաւառէ կոգաց
ի բագարան գեղջէ. և հրամայեաց նմա բնակել ի կուռայս ի
քաղաքաւանն՝ որ կոչիւր աւան։ Այր էինեաց յովհան զպայ-
ծառակերտ եկեղեցի մի. և շուրջ վնուաւ արար կալուածս
բնակութե իւրոյ։ Այս եպիսկոպատակութե հայրապետութե

հայոց՝ եղև պատճառ, որոյ սակս առաւել սաստկացան հա-
կառակութիւք՝ ի մէջ երկուց կողմանց միւնեւ ցամէ յովհաննու։
Իսկ ամբաստանողքն՝ յետ ժողովոյն, զոր արարի աբրահամ,
կոչեցեալ՝ ի խոտրովայ ալբաքէ՝ գնացի՝ ի տիւթռն. և պատե-
րազմեցաւ ընդ Թէնամին նմին. և յետ բազում յաղթութեանց, և
և յետ երկիցս հեռանալոյ ընդ հիւթեաղայ արքային քու-
շանաց, և սպանանելոյ զնա, ընդ գրելոյ յովհաննու կնճռիկի,
մեռաւ՝ ի տիւթռն՝ կացեալ՝ ի մարզպանութեան ամս . ը. և քար-
ձեալ իւրոցն զմարմին նորա՝ տարան՝ ի հայս՝ ի գաւառն կոգ,
և թաղեցին՝ ի դարունս։ Եւ խոտրով արքայ՝ ի խնդրոյ նա-
խարարացն կացոյց մարզպան հայոց զդաւիթ սահառունի.
որ և շինեաց զեկեղեցին մրենոյ։ Եւ յայնմհետէ ոչ ևս ա-
ռաքեցաւ՝ ի հայս մարզպան պարսիկ, այլ հայք նստեին՝ մին-
չեւ ցառաքումն ոստիկանաց՝ ի կողմանէ հապարացւոց։

Ամիդոն ։
Ղոռքնա ։
Եփս. 302

Յաւուրս ծիկացս այսոցիկ սկսաւ պայծառանալ յոյժ լինն-
ակնեան վանքն գլակայ՝ որ՝ ի տարոն. քանզի թադիկ ա-
ռաքնորդ տեղւոյն նորոգել զվանսն՝ վայելչացոյց բարեկար-
գութիւն. և ժողովեցան անդր արք սրբակեացք լիբր չորեք-
հարիւր. որով և կարի լինն հռչակեցաւ անուն այնր վանից.
և եկին անդր՝ ի կողմանցն յոտնաց չորք ճգնաւորք, և՝ ի կող-
մանց ասպաստանի այլ ևս երեք. և եօթանեքին սքն՝ ի մի
խորհուրդ միաբանեալ՝ բնակեցան մերձ յայն վանսն յանա-
պատի, և վարեին խստաձարակ կենօք. և էին անուանքն նո-
ցա թէոնիաս, պօղիկարպոս, սիմէոնն, յովհաննէս, եպիփան,
դիմառիոս, և ենարիկիոս, կիւնարիկեոս. զորոց զկատա-
րումն տեսցես՝ ի յաջորդ գլուխդ։

Ամիդոն ։
Ղոռքնա ։
Եփս. 302

ԿԱՊՈՒՏԻԿՈՍ։

Յաղագս վանելոյ խոտրովու պարսից՝ ի վրէժ մահուան մօրեայ ապա-
նելոյ՝ ի թիսաց. և առաւելոյ պիղծն՝ ի վէր մուշեղայ.
և խոտրելոյ գայլ վախճանի ղպարսիկս։

(1)

Ամիդոն ։
Ե·11·և 15
Եւթանէս ։
Նասատա ։
Եփրենոս ։
Ղոռքնա ։
Ե·14 ։
Յովհ·կաթ ։
Ամիդոն ։
Ղոռ·Ե·3 ։

Ա

ռեալս ունն անուն զօրավարք յունաց՝ ի դասէ հա-
զարապետաց կայսերական գնդին, այր դըժ-
նեայ և նենգաւոր, գրգռեալ զզօրս հռոմոց
ընդ Հայկազունին մծրկոյ կայսեր՝ քանզի նստաւ յաթոռ
ինքնակալութեան. և կենդանութեան ձերբակալ արարեալ զմծրկի՝
կացոյց առաջի իւր. և ետ խաղխաղել յանդիմանն աչաց նորա
զնեղեսին որդիս նորին. և զին կրասեր որդի նորին դեռ տղայ
էր, դայեակ նորին թաքուցեալ զնա՝ մատուցեալ ի մահ զիւր

մանուհին փոխանակ արքայորդւոյն։ Իբրև եառնս զայն բա-
րեպաշտն մօրիկ, չկարաց հանդուրժել ընդ մահ օտարի վնաս իւ-
րումն զաւակի. այլ՝ ինքնակամ յայտնեաց, թէ չէ այդ իմ
որդի. և հրամայեաց զիւր զհարազատ ծնունդն մատուցա-
նել՝ ի զննումն. և՝ ի խաղխաղել անդ մատաղ մանկանն՝ կամեն
հեղաւ՝ ի նմէ։ Իսկ ապա բռնաւորն փոկաս ասէն և զնա
ինքն զմօրիկ. որ և յայս ամս անցս դառնագին մահու ոչինչ
այլ յաւել ասել, բայց միայն զայս. արդար ես տէր, և ու-
ղիղ է դատաստան քո։

Իսկ ապիրատն փոկաս հաստատեալ՝ ի կայսերութեանէ իւրում՝
առ պատրուհակելոյ զչարութիւն իւր հրեշտակ առաքեաց առ
խոսրով երկիր արքայ պարսից՝ այն է Թուն հաւատացելոյն
խոսրովու, մեկանուհամբ աքրուզ ասացեալ, և անմեղադիր
արար զանձն վնաս պատուհաս մօրիկայ։ Իսկ եղև իբրև լուաւ
խոսրով զաղետալի մահ բազմերախտ իւրում բարերարի՝ յոր-
մէ հաստատեալ էր՝ ի թագուհե իւրում, յանհնարինս դառ-
նացեալ՝ անդէն առ նմին եդ զպատգամաւորն՝ ի բանտ ար-
կանել. և առ վրէժս խնդրելոյ՝ ի փոկասայ՝ վաղվաղակի գու-
մարեաց զօր բազում՝ խաղալ՝ ի վէր նմա։

Հայրմ Ձմկի ապստամբեցաւ՝ ի փոկասայ և ներսես մեծ զօ- 603
րավար յունաց՝ որդի հայկազնին ներսեհի բասենոյ. և գնա- ծբ
ցեալ էառ զերեսիա. և ազդ արար խոսրովու՝ փութալ եկանել
՝ի վէր փոկասայ. և ես ասէ ձեռնտու եղէց քեզ ընդդէմ անո-
ւղոյմ՝ առն, որ ոչ խնայեաց՝ ի տէրն իմ և յերախտաւորն քո
՝ի մօրիկ։ Օ՜այս լուեալ խոսրովու՝ առաւել ևս բորբոքե-
ցաւ. և առեալ էր իւր զաշտ զօրավար հայոց զորդի սմբա-
տայ բագրատունւոյ՝ դնէմեաց բարկութիւն մեծաւ՝ ի յոյնս։

Ա՜ռիւծն։

Եւ քանի գնետը, եթէ մուշեղ մամիկոնեան թշնամութիւնէ
էր յոյնս վնաս զուր զպարտութենէ նոցին, առաքեաց առ նա
դեսպան, և կոչեաց զնա գալ առ ինքն զօրօք տարոնոյ, և
գնալ էր իւր՝ ի վէր յունաց։ Իսկ նա թէպէտ և ծեր էր, բայց
այսու ամենայնիւ յօժարեցաւ գնալ։ Այլ յետոյ գրգռեալ՝ ի բան-
սարկուէ ումանց՝ յիշեաց զոր արար էր նա խոսրով՝ ի կոզմանս
պարսից, և որպէս փոխանակ պատուհելոյ՝ կամէր ըմբռնել և
սպանանել զնա. վնաս որոյ և՝ ի կասկած անկեալ՝ հաստատեաց
՝ի մտի չերթալ առ նա։

Օ՜այս լուեալ խոսրովու՝ առաքեաց առ նա զաշտ զօրավար,
և ասէ. եկ առ իս, և յարդեցից զծերութիւն քոյ. այլ մու-
շեղ ոչ միայն ոչ անսաց նմա, այլև խստութիւն արար պինդ։
Ընդ որ ցասուցեալ խոսրովու՝ վերստին առաքեաց առ նա
զայլ ոմն դեսպան, և ասէ. եթէ ոչ եկեսցես էր իս, ՝ի դառ-
նալ իմում՝ ի յունաց՝ քանդեցից զքո քս, և շրթայիւք տա-

բայց

Ա. տ. ։ Տէ պան
և հայոց
603
ծբ

լայց զքեզ ի պարսս . և անդ ջամբեցից քեզ մինչեր փխկ հա-
ցի ։ Ոչ մուշեղ և ոչ իսկ արար պինդի այսմ , այլ՝ սկսաւ ամ-
բաւցանել զնա տեղիս դաւաճին խըրոյ տարոնոյ՝ ի դիմի
հարկանիլ խոսրովու , եթէ դիմեսցէ ի վէր իւր ։ Եւ քանզի
խոսրով ազքայ փութայր դնալ զձանապարհ իւր , ոչ հուա-
ցեալ զնմանէ՝ չու արար խաղալ ի վէր յունաց ։

Յովհաննէս
և այլք ։

Ե . Ուեալ փոկասու կայսեր զգալուստ խոսրովու , և տե-
սեալ թէ նպատամբեալ է յիւրմէ և ներքես , վարաներ յանձն
իւր ։ Եւ ապա ժողովեալ զօր բազմ յոյժ՝ առաքեաց ի վէր խոս-
րովու . և առ զդէմ ուղեղոյ ներքեսի և՝ առաքեաց և ի վէր
նոր զմասն ինչ զօրաց . այլ իբրև ետես՝ թէ ոչ նուճաձին ներ-
սէս քառնուքէ , կոչեաց զնա առ ինքն դաւաճանուքէ և սուտ
երդմամբ . և կենդանւոյն այրեաց զայրն քաջ ։ Եւ այս է-
ղև անտանելի տրտմութիւն ազգին յունաց . քանզի յանուճանէ
նոր սարսեին ամ թշնամիք նոյ . ոչ և պարսիկք իսկ . ըստ որում
գրէ Թէոփանէս ։

Այլ այս ներքես է այն , առ որ բազում անգամ գրեաց
Թուղթ օրհնութենէ և ընտանեկան սէր գրիգոր պապն . ոչ է
տեսանել ի մատեանս Թղթոց նր . ա . 6 ։ ք . 32 ։ և ը . 14 ։ և
603 ներքես առ նա ։ Ո անուն այսր ներքսի չիտի թարգմանիս
ծբ (յամն . 568 .) ընդ անուճան ներքսի մեծի պատրկի ։

Յետ մահուն ներքսի՝ խոսրով ազքայ պատրկէ ահագին խիմն
զօրութիւն յարձակեաւ ի վէր զօրացն յունաց՝ անհնարին հար-
ուածովք խորտակեաց զնոսա , և արար փախստական . և ինքն
խաղայ յատաջ մինչև ի քաղկեդոն , և էառ զայն ։ Եւ ձգէր
բազումք ի զօրացն յունաց՝ ըստ գրելոյ յովհաննու կաթուղի-
կոսի՝ դիմեալ էին ի կոստանդնուպաս բասեներ , ընդէմ նոցա առաքեաց
խոսրով զաշտատ . որոյ յանկարծակի հասեալ ի վէր նոցա ի մեծի
դաշտին՝ եհար և կոտորեաց զնոսա չարաչար յոյժ , մինչև ոչ
մնալ ի նոցանէ գրեթէ և ոչ մի . և առեալ զաւար նոցա՝ դիմեաց
ի վէր կարնոյ . և սաստիկ պատերազմաւ էառ զայն . և ե-
դեալ պահապանս ի քաղաքին՝ վաղվաղակի եհաս անդրէն
առ խոսրով ի քաղկեդոն ։

Յովհ. Եծղ
Ա. տող. Ե. 23

Ապա խոսրով յաւարին առեալ զբազում քաղաքաց յունաց՝ դար-
ձաւ յալեքանդրիա , և եկն ի կարին . և առաքեաց անտի
զքեռորդի իւր զմիհրան տասն հազարաւ ի տարոն , պատ-
ուիրեր տոհմել նմա եղծանել և աւերել զամ ծն տարոնոյ , ուր
իշխերն մուշեղ . և զնոսն ինքն զմուշեղ ունել և կապել ի
շղթայս , և ածել կենդանւոյն առ ինքն ։ Եւ ապա Թողեալ
խոսրովայ զաշտատ ի կարին՝ եկ և գնաց ի տիսբոն ։ Եւ աշտատ
{605} յետ երկուց ամաց Տրամանն ընկալեալ ի խոսրովայ՝ եհան ի
ծբ կարնոյ զգերիսն , և տարաւ ի յահմատան . և ձգի յովհան

կԹղիկա՝ որ էր ի քաժնի յունաց, ի յառնել պտղմին փախուցեալ էր ի կարին իբր յապահով տեղւոջ, և ամուսնացեալ էր անդ, ի գերել աշուոյ զբնակիչս կարնոյ՝ նա և վարեցաւ ընդ նմա ի գերութեի յահմատան ։

Ա՛ադիկոն ։ Ա՛եպ · 30 ։ Ա՛ոքնդ ։

Գ · Ա՛յլ միհրան քեռորդի խոսրովու եկեալ տանն հալածրաւ ի գաւառն հաշտենից՝ կալաւ անտի զմայն իւր առաջնորդ ձիգի, և եկն մինչև գլեառն արձան ։ Ա՛ւ թողեալ անդ զերկու հազար զօրս վն պահպանութեե և վն ըմբռնելոյ զփախստեայն՝ էանց ինքն ուԹն հազարաւ ի տարոն · և եկն ի մեղտի · և անտի առաքեաց գունդ մի հազար զօրաց ի վր ամրոցին՝ որ կոչիւր աստղոն, մօտ յինանկնեան վանսն, տեսանել և գնանել՝ Թե որպէս մատԹ լիցե նմ կատարել զիւրդ հուրդ իւր ։ 604 ձգ

Ա՛ադիկոն ։

Ա՛ին զնակեալ ի կողմանն յայնոսիկ եօԹն խոտաձարակ ձգնաւորք, զորոց յիշեցաք ի նախընԹաց գլուխդ, որք և փայլէին հրեշտակակրօն վարուք ։ Որք պիտացեալ զարշաւանս պարսից՝ եկին վաղվաղակի յինանկնեան վանս · և ազդ արարեալ կրօնաւորացն՝ յորդորեցին զնս փախչիլ անտի · և ինքեանք միացին անդէն յեկեղեցւոջ ։ Ա՛ւ մինչդեռ կային յաղօԹս առ ոմն, և խնդրեին զօգնուԹի ի նմ, յանկարծակի հասին անդր գունդ զօրացն պարսից՝ որք գնացեալ էին յաստղոն, և կողոպտեցին զվանսն · և մտեալ յեկեղեցին՝ յարձակեցան ի վր ձգնաւորացն, և սպանին զնս առաջի սբց սեղանոյն · որոց մարմինք Թաղեցան յետոյ առ գերեզմանաւ սբց ձգնաւորացն անտոնի և կրօնիդեայ ։ Ո՛ոմն սբ կատարեմք առանձին շարականաւ, զոր արարեալ է յովհաննու մամիկոնէի, և կիր երգկացուց, ոյզ դնի ի ձեռագիր շարականոյն միում ։ Ա՛յլ գունդն պարսկական զօրաց դարձեալ անտի՝ եկին վերստին յաստղոն · և զերկուս աւուրս կացեալ առնուաւ՝ չկարացին մնանել ի ներքս ։

Ա՛ադիկոն ։

Ւսակ մուշեղ լուեալ զպղէտ ապանաւէ ձգնաւորացն՝ տրտմեցաւ յոյժ · վն ոչ ասկնուներ, Թէ պատահեսցի նմ այսպիսի ընդ վանականսն և ընդ ձգնաւորսն ընդ այնոսիկ, զորս յոյժ սիրէր ։ Ա՛ւ ապա կոչեալ առ ինքն յամուրն ոզկան զվահան՝ որ մնկանուճամբ գայլ կոչեցաւ, զոր և մուշեղայ կացուցեալ էր փոխանակ իւր իշխան տարոնոյ, խօսեցաւ ընդ նմա, և ասէ · Ես ծերացեալ եմ որդեակ իմ, և ժառանգ զայլ ոչ ունիմ · և ահա զքեզ հաստատեմ այսօր ժառանգ ամն՝ զոր ունիմ · և երկիրս իմ եղիցի քեզ և զաւակի քո յետ քո · և արդ՝ զօրացիր տերամբ, և մարտիր իմամատուէ ընդ թշնամիսն · և դիր զայս ի մտի քումմ, զի եԹէ ի վր եկեղեցւոյ և քրիստոնէիցդ պատերազմեսցիս, մատուիրեսուԹե ընկալցիս պատկ · և եԹէ ի

վր

վը մարմնաւոր իրաց, այն եղիցի քեզ անուն քաջուե. արդ՝ արի որդեակ իմ, և արա ըստ խոստուե քումմ, զի այր հանճարեղ ես դու, և փոքրումբք կարես մեծամեծս առնել. և աղերս կարասցես եղիցի քեզ օգնական ։

Ե. Ապա ելանէ Յովնան ի յորդորանաց մուշեղայ՝ պատրաստեցաւ վանել զմիհրան. այլ կամելով խաղալուե և հնարիւք վհատել զնորա՝ առաքեաց առ նա դեսպան. և աղաչեաց զնա դառնալ յետս ։ Ապա միհրան ասէ. ոչ կարեմ դառնալ, մինչև ոչ կալայց կենդանւոյն զիշխանն մուշեղ, և տարայց առաջի արքայ. ապա թէ ոչ՝ եգեալ է իմ՝ ի մուտ քանդել զերկիրդ տարոնոյ առ հասարակ. և առնուլ յաւարի զնմա տեղիս ։

Ե. Ապա լուեալ վահանայ՝ հնարեցաւ խոհական ձեռնհաս վարիլ ընդ միհրանայ, և ապականել զնմա պարծանս նորա՝ առանց կորուսանելոյ քնաւ զմի ոք յիւրոց անտի ։ Առաքեաց առ նա դրել դեսպան, և ասէ. եթէ ոչ հանջիք զերկիրս տարոնոյ ի ձեռաց իմոց, այլ ինձ յանձնեսջիք զայն, ապա և ես՝ ի ձեռս ձեր զմուշեղ. և եկիցէ առ քեզ. և վճարեսցի ամ ինչ խաղաղուե ։

Ապա այս բան վահանայ տարակուսեալ միհրանայ խորհուրդ արար ընդ իւրն. և յանձն էառ զդաշինն վահանայ, և էջ յաւանն մուշ ։ Ապա վահան վաղվաղակի գնացեալ յօձ քրէ՝ կարգեաց անդ զոր ինչ միանգամ խոյհեալն էր առնել. և ապա եկն առ միհրան. և եցոյց նմա սէր մեծ ։ Ապա բանս՝ ի մէջ արկեալ առաջի իշխանացն պարսից՝ ոլք էին ընդ միհրանայ, ասէ ցմիհրան. այժմ մուշեղ բնակեալ է յամուրն ողկան. և իշխանք և մեծերիմք նր ամրացեալ են յայլևայլ բերդս. արդ եթէ հաճոյ թուիցի քեզ, արասցուք այսպէս. առաքեա ընդ իս զէրոս հազար արս հզօրս. և ես մտից նոքօք անարգել յամուրն յայնոսիկ, և յաւէտ ևս յօձ քաղաք. և կալայց անաշխատ զմուշեղայ. և ապա զնոյն ինքն զմուշեղ. և զայց զնա՝ ի ձեռս քո ։

Ե. Ապա միհրանայ պատրեալ և ոչինչ կասկածեալ ընդ բանսն վահանայ՝ ետ՝ ի ձեռս նր զէրոս հազար հեծեալս՝ ի զօրաց իւրոց. և նր առաքնորդեալ նոցա՝ տարաւ մերձ՝ ի գեօղն խարձ. և անդ եթող՝ ի նոցանէ զարս չիսուն, և ասէ ցնոսա. եթէ չալծայ շէսայի գործ մեր, առաքեցիք առ ձեզ զմի ոք նշանաւս իմով. և դուք փութասջիք գնալ առ միհրան, և ածջիք զայլ հարս զօրս՝ ի քաղաքն օձ ։ Ապա ինքն դիմեալ անտի՝ եկն զօրօք պարսից՝ ի դուռն օձ քաղաքի, որոյ անցքն էր նեղ և դժուարին. զի չէր հնար բազմութե մարդկան ընդ այն՝ ի միասին մտանել՝ ի ներքս՝ մանաւանդ հեծելոց ։ Ընդ վահան փոքր ինչ հեռի՝ ի քաղաքէն հանգիստ տուեալ զօրացն պատուիրեաց նոցա, և ասէ. ի մտանել իմում՝ ի քաղաքն մտջիք և դուք զհետ իմ

խաչազուրկ իբրև բարեկամք, գինեալք ի ներքուստ. և յորժամ ժամ տայց ձեզ նշան, մի խնայեսջիք ումեք քնաւ՝ մի ծերոյ և մի տղայոյ, այլ զամենն կոտորեսջիք սրով։

Եւ ապա յառաջեալ լինքն քան զնոսա՝ եմուտ ի քաղաքն. և իբրև սկսան պարսիկք մտանել ընդ դուռն քաղաքին ի ներքս՝ առաքեաց զնա վահան հետ զհետե ի տունս տունս. և որք ի դարան մտեալ էին ի տունսն յայնոսիկ՝ արք կօրովիք սպառազինեալք, ընդ մտանել նոցա ի ներքս՝ իսկոյն խեղդէին զնոսա անձայն, և հատանէին զգլուխս նոցա. և զմարմինսն քարշէին ի տեղին, զոր յառաջագոյն պատրաստեալ էին. և ամենևին ոչ ոք յերկինսն մտելոցն ծանեաւ, թէ զինչ իրք անցանիցեն ընդ առաջինսն։ Եւ այսու օրինակաւ սպան զչորս հազարսն։ Եւ յառաջ քան զաւարտել նմին գործ՝ առաքեաց փութանակի զմի ումն ի հաւատարիմ ծառայից իւրոց առ յիսունսն, զորս թողեալ էր ի գեօղն խարձ. և ի ձեռն նոցա եւս քերել ի միհրանայ զերկու հազար արս ընտիրս. և * այնպիսի գործ էր հնարեալ (ասէ պատմագիրն), զոր ոչ կարացին գինն քնաւ գիտել պարսիկք ||։ Եւ մինչչև եկին եկեալ այն երկու հազարքն, առեալ վահանայ զչգեստս սպանեալ զօրացն պարսից՝ զգեցոյց հայոց. և զերիվարս նոցա ետ նոցա. և եհան զնոսա ի դուռն քաղաքին. պատուէր ետ նոցա, և ասէ. յորժամ հասանեն աստ զօրք պարսից, ի տեսանել նոցա զձեզ՝ մտջիք ի ներքս ի քաղաքն. և թողջիք բաց զդուռն, և հնչեցուսջիք զփողսն յաղթութեան. զի կարծեսցեն, թէ առիք դուք զքաղաքն։ Եւ ոչ պատուիրեաց նոցա վահան, արարին այնպէս։

Օ այն իբրև տեսին պարսիկքն, սկսան դիմել փութով ի քաղաքն. որոց ընդառաջ ելեալ վահանայ արտաքոյ՝ աւերիս ետ նոցա. և անդ նախ քան զմտանել նոցա ի ներքս՝ իսկոյն դարձոյց յետս զարս քսան՝ գնալ աւետաւոր միհրանայ, եթէ առաւ քաղաքն։ Եւ յորժամ սկսան պարսիկք մտանել ի ներքս. քաղաքացիքն զմտեալսն սպանանէին, և միանգամայն փողս հարկանէին. և վահան զկնի նոցա մտեալ ընդ հուն նեղ ձանապարհի դրանն՝ պահէր զանցս. և ոչ տայր նոցա տեղի փախուցեալ վահանայ՝ հրամայեաց հատանել զունչս կոտորելոցն և արկանել ի մախաղս. իսկ զգլուխն ետ կանգնել ցցոք ի վր պարսպին։

ԳԼՈՒԽ ԽԱ. ԽԱՅԹ :

Յաղագս գառամանուէնն գայլ վահանայ . որով ապան նա կղօրս պարսից առ մեղրեաս և առ ծծմակաս . ընդ որս և գիմի-քան և գՇէորէմ :

Առեալ վահանայ ի հայոց արս կորովիս ուժգն հա- Վահէան :
604 ծգ բիւր՝ եւ յօժ քաղաքէ . զերծոս հարիւրս ի նոցա- նէ եթող յանցս մեղուեայ . զերկու հարիւրս՝ որք էին ի սահոյ , եւ ոչ ի ծծմակն իբր ի գարանի . և առեալ եւ իւր միայն զերկու հարիւր այր՝ գնաց ի մուշ աւան . և մտեալ առ միհրան՝ խօսեցաւ ընդ նմա ցաւագին և զայրագին սրտիւ . և ասէ . զի՞ է այս ա՛ր , զի զօրք քոյ ապստամբութիւն վարեցան ընդ իս . այնչափ աշխատ եղաք , և առաք զքաղաքն օձ . և այժմ ոչ թողին զիս մտանել ի ներքս . և ոչ ետուն մեզ զմանն ինչ յաւարէ անտի քաղաքին . և զսակաւ զօրս իմ ևս արգելին ի քաղաքին . և ոչ կամիմ արձակել զնոսա գալ առ իս . և ես աւասիկ դրեթէ փախստական եկի առ քեզ :

կերիւբ արամբք :

Օ այս լուեալ միհրանայ՝ բարկացաւ , և խորհեցաւ արձակել ի վր նոցա զաւրս հազար հանդերձ հազարապետաւ . զի նաճաձեացեն զապստամբութի նմ : Ոակ վահան ասէ . զինչ առնես զայդ . նք թերևս ի քէն ևս ապստամբեալ են . և զիարդ կարասցեն վանել զնա հազարք : Ոյս միհրան առաւել ևս բարկացեալ՝ հրամայեաց , զի երթիցեն ի վր նմ երկու հազարք : Յայնժամ խրատ ետ վահան զօրացն , և ասէ . զգո՛յշ լերուք , ի մերձենալ ձեր ի գետն մեղուեայ՝ (այն է մեղրագետ ,) մի՛ անցանիցէք ընդ այն ի գիշերի , զի մի՛ վտանգ ինչ պատահեացէ ձեզ , և կամ թշնամիք յարձակեացին ի վր ձեր . և դուք չէք ընտել վայրացն : Ոյս ասդ՝ ինքևանս արարեալ ձեր անդ՝ ի վաղիւն երթիցէք հազար այր ընդ ծծմակն , և հազար այր ընդ դաշտն : Ոյս տուեալ նմ առաջնորդ՝ մեկնեցաւ ի միհրանայ . և գնաց ընդ զօրսն՝ յուզարկել զնոսա :

Իբրև հասին ի տեղին՝ ուր բաժանելոց էին , զհազարսն արձակեաց ընդ ծծմակ . և եդ ընդ նոսա հարիւր այր լիւոյն իբրև առաջնորդ նմ : Ոյս ինքն հարիւրով իւրով անցոյց ընդ գետն մեղուեայ զհազարսն՝ որք գնալոց էին ընդ դաշտն . և լինայց զնն անդէն հանգիստ առնուլ , և ննջել փոքր մի : Ոյս ետ հանել զանձս ի բերանոց երիվարաց . զի արածեցին . և եդեալ պահապան զարս լիսուն՝ ննջեաց կեղծեօք ի

վրանի իւրում հանդերձ չիսուն արամբք , որք ընդ նմա ։
Ընկեցին և զօրքն պարսից անհոգ և աներկեւան ՚ի դաշտի
անդ ։

Ոսկ պահապանքն ըս պատուիրելոյն վահանայ՝ տեսեալ , եթէ ՚ի քուն եղեն զօրքն , հնչեցուցին զփողս յայմ կողմանց բանակին . ընդ որ շրտուցեալ պարսից՝ գրեթէ թմրեցան յերկիւղէ ։ Եւ ահա յանկարծակի ելին ՚ի դարանէ չորս հարիւր աւք , զորս Թողեալ էր վահանայ անդ . և ՚ի մէջ առեալ զպարսիկան՝ կոտորեցին զնոսա . և ամացին ՚ի գետն զդիակունս նոցա ։ Եւ ապա փութացեալ անցուցին զերիվարսն ՚ի ծծմակ ընդ այլ ճանապարհ , և մտին ՚ի դարան . զի ՚ի գալ միւս հազարացն՝ յարձակեսցին ՚ի վրէ նոցա . քանզի պատուէր տուեալ էր վահանայ հարիւրոցն՝ որք գնացեալ էին ըս հազարաց , երկար ճանապարհ առաքնորդել նմա , և առ կամրջովք գետոյն հանգիստ տալ ։ Յորժամ հասին և նքա անդր , և լծել բանակեցան յանհոգս , ելեալ նմա ՚ի դարանէ անտի , և երկու հարիւրոցն առաքնոց յայլ դարանէ՝ ՚ի մէջ առին և կոտորեցին զնա , և զմանս գետաւիժ արարին ։ Ոսկ մի ոմն ՚ի նոցանէ հեծեալ երիվար՝ փախեաւ գնաց ՚ի մուշ . որոյ զհետ մտեալ երկու արանց քաջաց՝ հասին առ նա , և ջաղխեցին զգլուխ նմա . և մինչդեռ կենդանի էր , և արիւնն ըս ոտնգունս հոսէր , մին ՚ի նոցանէ եւաւ աւազ ափով , և մատոյց նմա , և ասէ . խահարմր պարսից ահ զալը ։ Եւ ասի՝ թէ այս բան առակ եղեալ ՚ի նոսա՝ կաչեցաւ տեղին այն առաղս . ուր և յետոյ շինեցաւ աւան ։
Ոսկ վահան ետ հատանել զունչս կոտորելոցն , և զամենեսեան ՚ի միասին դնել ՚ի մախաղս . և զդիակունս նոցա ամալ ՚ի գետն . և զերկու հազար երիվարս նոցա ետ տանիլ յեղանց բերդն . և դադարեալ աւուրս ինչ՝ առաքեաց աւետաւորս առ միհրան , եթէ ամ ինչ յաջողեալ է . և ահա ասէ ամ զօրքդ յաղթանակաւ գան առ քեզ վաղիւ . և նա ուրախացաւ յոյժ , և զարմացաւ ըս գործս վահանայ . զի ատոյգ կարծէր զամ՝ զօր լսէր ՚ի նմանէ ։

Գ . Ոսկ և ինքն վահան առ նա ՚ի նոմին աւուր հարիւր ասրամբք , և եգիտ զնա փոքր ինչ խօթացեալ . և ապա միխթարեալ զնա բազում բանիւք՝ ասէ . այսօր է քեզ օր ուրախուն . զի վաղիւ տեսցես զմուշեղ առաջի քո կապեալ ՚ի շղթայս . և արդ՝ եթէ հաճոյ իցէ նմն իմում , արասցուք առ վաղիւ խնջոյս իշխանաց և ծառայից քոց ։ Եւ միհրան թէպէտ և հաճեցաւ ըս այն , բայց ոչ եթող զվահան գնալ ընդ նա , այլ մնալ առ ինքն . ըս որում և կամէր նա ։ Ապա ՚ի վրայ մայեաց վահան ծառայից իւրոց՝ ոմն և կարգեալ էր յնմնն , պատրաստել առ վաղիւն սեղան մեծ և գինի առատ յընդարձակ

ձակ

ձակ դիւանին վ՚ը իշխանաց . և զայլ սեղան ևս յայլում տեղ-
ւոջ վ՚ը ծառայիցն ։ Այլ իբրև կարգեցան խնջոյքն , և ժողո-
վեցան իշխանք և ծիլք միհրանայ , ծանոյց նոցա վահան զառանն
միհրանայ . և պատուիրեաց նոցա ուրախ լինել . մեծ եղև ասէ
յայլթուինն միհրանայ . և արդ արժան է ձեզ մեծապէս ուրախ
լինել ՚ի պատիւ նոր . և նոքա սկսան ուտել և ըմպել , և ուրախ
լինել . և կային ՚ի ապատս նոցա ծառայքն վահանայ ։

Այլ ապա մեկնեալ ՚ի նոցանէ վահան՝ պատուիրեաց միւսմ ՚ի
ծառայից իւրոց , և ասէ . յորժամ տեսցես զմեկնիլ ատենա-
դպրին միհրանայ ՚ի նմանէ , բեր ՚ի ներքս զմախաղն՝ յորում
կան ունչք հատեալք սպանելոցն պարսից ։ Այլ մտեալ առ
ի՛հրան՝ սկսաւ խօսել ընդ նմա . և հրամանաւ նորա առաքեաց
զատենադպիր նոքին ՚ի խնջոյս . և մնային ինքն և միհրան
միայն ։ ՚Ի յայն ժամայն եբեր և ծառայն զմախաղն ՚ի ներքս .
և ՚ի հրամայել վահանայ՝ թափեաց զայն առաջի միհրանայ ։
Սոսկացաւ միհրան՝ իբրև ետես զայն , և ասէ ցվահան . զի՞նչ
է այդ . և նա ասէ . ոչ գիտես , այդ է խաղ պարսից . և յա-
սելն զայս՝ եհար աշտեիւ զփոր նորա սաստկութեամբ ուժոյ իւրոյ , և
սպան զնա . և ընկողմանեցոյց զնա ՚ի մահիճս՝ ոչ թէ ննջե-
ցե ։ Այլ վաղվաղակի առաքեաց զծառայ իւր՝ կոչել զատենա-
դպիրն և զսուրհանդակն միհրանայ . և ինքն եմուտ յայլ սե-
նեակ ։ Այլ իբրև եկին նոքա , ետ գրել ատենադպրին Թուղթ
՚ի բերանոյ միհրանայ առ պարսիկ կուսակալ ասպահունեաց
վարշէր անուն . յորում յետ ողջունելոյ զնա , և յայտնելոյ զգ-
յայթողուն գործոց իւրոց՝ հրաւիրեր զնա զկնի երից աւուրց
գալ հազար արամբք ՚ի բլուրն՝ որ էր ՚ի վէր ձորոյն անուճանե-
լոց կուռք . և կնքել զԹուղթն մատանեաւ միհրանայ՝ հրամայ-
եաց սուրհանդակին՝ կոչել ՚ի ծառայից նմին իւրոյ արս տասն .
և ետ նոցա զԹուղթն տանիլ առ վարշէր ։

Այլ իբրև գնացին նոքա , առաքեաց վահան զսուրհանդակն և
զատենադպիրն՝ կոչել փութով զչորեսին իշխանս պարսից ,
որք կային ՚ի քէշքին . իբր Թէ կամիցի միհրան խորհուրդ առ-
նել ընդ նոսա ։ Այլ որք միանգամ գային , առեալ զնոսա ՚ի ներքս
՚ի սենեակն միհրանայ՝ ուր կային երեք ծառայք իւր , անդէն
առ ետեղ խոստովեցուցեալ՝ սպանանէր զնոսա ։ Այլ յետ այսորիկ
բարկացեալ կեղծեօք ՚ի վէր ատենադպրին և սուրհանդակին՝
արկել զնոսա ՚ի բանտի ։

Այլ ապա ելեալ ՚ի տանէ միհրանայ հանդերձ ծառայիւք իւ-
րովք՝ եկն ՚ի դիւանն , ուր ժողովեալ էին իշխանքն միհրանայ .
և ողջունեալ զնոսա սիրով՝ նստաւ , և ել արտաքս . և
ծառայք նորա յանկարծակի փակեցին զդրունսն , և արդելին ՚ի
ներքս զամենեսին . և ելեալ ՚ի վեր ՚ը անձուկ ելանելիս՝ այրեցին

զառաստատն , և արկին հուր ՚ի ներքս . և ատտակեցին զնոսա անդ . ըստ նմին օրինակի արարին և ըստ այլ ծառայսն միհրանայ ։ Ո՛այս ամ արար վահան ՚ի սակաւ ՚ժամի . և ոչ ինոյ ՚ի մուշ պարսիկ ոք՝ բայ յերկուց անտի , զորս արձակել ՚ի բանսի , որք ոչինչ իմացան յայմմէ՝ զոր արար նա ։

Ե . Ա՛ւ ապա առեալ զնոսա ստացուածս նոցա՝ առաքեաց յամուրն ողկան , ուր էր մուշեղ . և կոչել անդ զիշխանսն հայոց՝ զգեցոյց նոցա զզգեստս իշխանացն միհրանայ . և առեալ չորս հազար այր ըստ իւր՝ գնաց հանդերձ իշխանօքն ըստ առաջ վարշիրայ ։ Ա՛ւ յերթալն հրամայեաց երկուց ծառայից իւրոց սպանանել և զսուրհանդակն միհրանայ . իսկ զատենադպիրն նոքա կապել և կապանօք ածել ընդ իւր ։

Ա՛նցեալ վահանայ ՚ի լեառն կուխայ՝ եդ ՚ի դարանի զզօրս իւր գնամ . և կոչեալ առաջի զատենադպիրն միհրանայ սպառնացաւ նմա, և ետ գրել թուղթ առ վարշիր . որ ինչեան էր մօտ յայն տեղի զօրօք իւրովք . և ՚ի թղթի անդ հրաւիրեր զնա՝ գալ առ ինքն փութով ձևացուցանելով զանձն իբրև զմիհրան։ Ո՛այն թուղթ ընդունեալ վարշիրայ՝ եառ զչօրս իւր՝ որք էին երեք հազար և վեցհարիւր , և եկ ՚ի լեառն . և թողեալ զգունդ զօրուն ՚ի հեռագոյն տեղւոջ՝ եկն ՚ի վրանն վահանայ , զոր կարծեր թէ իցէ ինքն միհրան ։ Իսկ իշխանքն հայոց՝ որք էին անդ արտաքոյ՝ զգեցեալք զհանդերձ իշխանացն պարսից , յետ տեսանել զինեալսն ՚ի վարշիրայ՝ մտին ՚ի վրանն վահանայ . հասեալ և վարշիր եմուտ ՚ի ներքս , և ետ ողջոյն վահանայ իբրև միհրանայ ։ Ա՛սէ ցնա վահան . վարշիր՝ զի՞նչ եղիք ՚ի մտի . գուցե կամիք ՚ի հաւատս պարսից դարձուցանել զերկիրս հայոց . և զայրագին բարկութիւն հրամայեաց ծառայից իւրոց՝ կապել զնա և գանել ։

Իսկ վարշիր ուշանալոյ եղեալ ՚ի զարմացմանէն և ՚ի սպառնալեաց կապանացն և գանից՝ անկաւ յերկիր . և իբրև զգաստացաւ , սկսաւ գանել զնա ծառայքն վահանայ ։ Ո՛կսաւ վարշիր աղաչել զվահան, զի խնայեսցէ ՚ի նա . և նա ասէ . խնայեմ , եթէ արասցես՝ զոր ասեմ ։ Ա՛ւ յառաջ մատուցեալ զատենադպիրն՝ հրամայեաց գրել ՚ի թերանոյ վարշիրայ թուղթ առ զօրապետն ՚ի , և ասէ . առաքեսցես ՚ի վաղիւն հազար այր ՚ի ստորոտ լերինն ՚ի հիւսիսոյ կողմանէ , և հազար ևս մօտ ՚ի ձորն , և զհազար վեց հարիւրսն թողցես անդ՝ ուր են . և դու եկեսցես առ իս տանն արամրէք ։ Ո՛այս թուղթ ստորագրել վարշիրայ՝ առաքեաց առ զօրապետն ։

Ե . Ա՛ռեալ զօրապետին զթուղթն՝ կատարեաց վաղվաղակի զհրամանն վարշիրայ , և ինքն եկն ՚ի վրանն . և վահան անդէն վաղվաղակի սպան զնա , և զտասն արսն՝ որք ընդ նմա ։

Ա՛ւ

Եւ ապա խեղդեալ զվարշիր և զատենադպիրն՝ էջ ինքն քան-
արամբք առ Հաղարան , որք էին առ ստորոտով լերինն . և
պատուէր տուեալ նմ՝ ի բերանոյ վարշիրայ և զօրապետի իւր-
եանց՝ գնալ առ վաղինՃ առ նա , ինքն եանց գնաց անտի . և
որք ի դարան մնեալ էին , յանկարծակի հասեալ ի վր նոցա՝
կոտորեցին զնա . և ի վաղինՃն յարձակեցան ի վր այլոց հա-
զարացն՝ որք էին մօտ ի ձորն . և սկսան հարկանել զնա . յա-
րեան անդ և այլ դարանամուտք , և ի մէջ առեալ զզօրն
պարսից՝ կոտորեցին զնա :

Լսեալ վահան յերրորդում աւուր գնացեալ առ հազարս վեց հա-
րիւրեան՝ ազդ արար նմ , եթէ առ վաղինՃն լիցին առ ձեզ
վարշիր . և զայս ասացեալ՝ գնաց անտի : Եւ մինչդեռ նորա
յանկոչս կային , յարձակեցան ի վր նոցա միանգամայն ա-
մենեքեան՝ որք մնեալ էին ի դարան . և սատակեցին զնոսա .
բայց մի ոմն միայն ի նոցանէ փախուցեալ անկաւ առ երկու
հազարս զօրն՝ զորս Թողեալ էր միհրանայ յարձանն : Օ այն
իբրև գիտաց վահան , զամենայն զօրս իւր եդ ի դարանի յա-
մենայն կողմանց . և իբրև սկսան յրուՃիլ և փախչիլ զօրքն
պարսից , անկան ի ձեռս նոցա . և Թէպէտ փախստեայ ևս ե-
ղեն արք հարիւր ի կողմանս ասպահովեցեալ , բայց նաև զնոսա
կալան դարանամուտքն , որք պահէին զայն ճանապարհ , և
սպանին՝ բայց ի քառասունն արանց , որք զերծեալ գնացին
առ խոսրով արքայ պարսից , և պատմեցին նմա զեղեալսն :
Ընդ որ կարի լինի խռովեցաւ խոսրով , զի ամենևին ակն ոչ
ունէր այսպիսի եղելոց :

Յետ վանելոյ գալ վահանայ զզօրս պարսից՝ եկն ի սբ կա-
րապետ , և մատոյց հանդիսիՃ գոհուՃի առ Ած . և ամենեքեան
որք լուՃան զոր արար նա , զարմացեալ կային . և ի բերան
առեալ զհնարս գործոց նր պատմէին յամ տեղիս : Եւ եղև
ի նմին ամի չինաստանեան վանան գեներալ մեծ . որով և
որմունք եկեղեցւոյ սբոյն կարապետի պատառեցան և քայ-
քայեցան . այլ մուշեղ եւս խնդրեաց զայն . և ինքն ի
նոյն աւուրս վախճանեցաւ . և կալաւ զիշխանուԹիւն նորա որդի
այս գալ վահան :

Գ Լ Ո Ւ Խ · Ճ ։

Յաղափա առաքելոյ խոսրովու վճխանութ ՚ի վր գայէ վհկանայ ։
և պաբպելոյ նը ՚ի նմանէ , և ՚ի ամբոսայ ։

Անկիոն ։ ՅԱ ։ Խոսրով պարսից արքայ Թէոփեոս ՚ի քաղաքս պա- 605
տերազմունս զբաղեալ էր , և ոչ ունէր պարապ ծէ
պատերազմել ընդ վհկանայ , բայց առ վրէժ խնդրե-
լոյ ՚ի նմանէ վասն մահու քեռորդւոյն իւրոյ միհրանայ՝ պատրաս-
տեցաւ թափել ՚ի նա զամս զցասումն բարկութե իւրոյ ։ Սկիզ
իրն գումարեաց զօր ՚ի ձեռս վախտանգայ հօրեղբօր միհրա-
նայ . և առաքեաց ՚ի վր վհկանայ՝ ունել զնա կենդանւոյն ,
և զամս երկիր նը յաւեր և յանապատ դարձուցանել ։ Նա յետ
առաքելոյ զվախտանգ՝ կամեցաւ յղել և պատգամաւորս առ
մարզպանն դաւիթ սահառունի գումարել ՚ի հայոց զօրս , և
ելանել ընդդէմ վհկանայ . այլ միւսոյնժամ արձակեալ էր զպատգա-
մաւորսն՝ ազդ արարին նմա ծառայք նորա , և զգուշացուցին
զնա . գուցէ ասեն դաւիթ սահառունի փոխ պատերազմելոյ
ընդ վհկանայ՝ օգնական լինի նմա՞ ՚ի ծածուկ վն հաւատակցու-
թենն և աղգակցութե . և զայս լուեալ խոսրովու՝ նահանջե-
ցաւ ՚ի խորհրդոյ իւրոց ։

Ոսկ վախտանգ եկեալ զօրօք ՚ի գաւառն ապահունեաց՝ իբրև
ետես զզուարճալի դիրս տեղեացն , հաձեցաւ յոյժ ընդ այն .
և խորհեր ՚ի մտի՝ շինել յայնոսիկ կողմանս իւր աւան , եթե
յաջողեսցին իրքն , որոյ վասն եկեալ էր ։ Եւ նախ առաքել
դեսպանս բազմութե զօրաց ՚ի հարք և ՚ի հաշտեանս և յայլ
տեղիս՝ խնդրեաց ՚ի նոցնէ հարկս ։ Պինսի ետուն գաւառա-
պետքն , և ասեն . եթե վհկան տայ , տամք և մեք . ապա
թե նա ոչ տայ , և ոչ մեք տամք ։

Ո այս իբրև լուաւ վախտանգ , բորբոքեցաւ բարկութե յոյժ .
և Թողեալ կողմնապետ յապահունիան՝ խաղաց խրոխտանօք
՚ի գլուխ տարոնոյ . ուր սկսաւ շինել զաւերել քաղաքն Ձիւն-
կերտ . և կոչեաց զնա յանուն կնոջ իւրոյ պորպէս , որ Թարգ-
մանի հսմեղ . այն է , զոր այժմ կոչեն որպէս ։ Ընդ ինեաց և
՚ի վր լերինն զամրոց , զոր կոչեաց գարհար . կանգնեաց և
ձեռակերտ մի յայլոսմ լերին վն ամարայնի , և կոչեաց զայն
յանուն որդւոյ իւրոյ գրեգուր կիր գրգուռս ։

Ոսկ վհկան՝ որ ՚ի մուշ նստեր , լուեալ զգալուստ վախտան-
գայ , և տեսեալ զգործս նը՝ զոր առնէր , ամենևին ոչ եցոյց
նմ նշան ընդդիմութե , և ոչ իսկ զանհաձութե ինչ . այլ ե-

Ա. Ա. Ա.

Աւուր և իշխանն հաշտենից հասեալ ՚ի ռահան՝ եհար և եհատ զգլուխ նորա . և կոտորեաց զորս ընդ նմա . և ՚ի փախուստ դառնալ մնացեալոցն՝ անտեղեակ գոլով նոցա Ճանապարհացդ , մատնեցան ՚ի բերան սրոյ . մինչև ՚ի չորս հազարաց անտի ոգիք լինուն հալիւճ կարապին խոյս տալ ՚ի տեղի անբոյթ . բայց անկեալ և նոքա ՚ի ձեռս հայոց՝ սկսան աղաչել և խոստանալ քշմինչ , միայն Թէ խնայեսցեն ՚ի նոսա ։

Ասէ վահան ասէ . գտէք լինձ փոյթ զգլուխ ռահանայ , և Թողից զձեզ . և նոքա որոնեալ ՚ի մէջ դիականց՝ իբրև ոչ գտին , կալան զորդի նորին զվահ , և ետուն ցվահան ։ Այլ ոչ հաձեցաւ նա ՚ի այն իշխանն հաշտենից , այլ՝ ստիպեր զնա գտանել զգլուխն ռահանայ . և կտրտուք ասէ զօրացդ մերոց երեսուն հազար դահեկան ։ Այլ նոքա չկարացեալ վճարել ինչ՝ աղաչէին Թոյլ տալ ինքեանց . և հաձեցուցեալ զնա՝ արձակեցան և եկին առ վախտանգ , և պատմեցին նմա զայս ։

Ը . Այն իբրև լուաւ վախտանգ , յիմարեցաւ ՚ի կատաղութենէ սրտի իւրոյ . և անդէն սպան զխուզն զարմն զոյնոսիկ . և փութանակի առաքեաց ՚ի վերայ վահանայ զայլ ոմն զօրավար ասուր անուն հինգ հազարաւ՝ ամբարիշտ արք զօրաւորք . որք եկեալ բանակեցան յեզր մեղտեայ ։ Իրեաց ասուր առ վահան , և ասէ . * գայլդ վահան , ոչ գիտես՝ զի ե-
,, լեալ ես ընդդէմ առիւծու , և ըներ այդպես յանդգնեալ
,, յարտաս . արի ՚ի կռիւ առ մեզ , և հպատակեա արեաց ձեն ,
,, զի մի իբրև զշուն մեռանիցիս ։

Այս բան ընդունելով վահանայ՝ ասէ . ահա արդ արժան է մեզ իբրև զգայլ գոռալ և պատառել զնա ։ Եւ ընտրեալ ՚ի զօրացն հայոց երկուասան հազար՝ յերկուս գունդս բաժանեաց զնա . և առաքեալ ընդ գաղտապուղի ձնպէրն՝ պատուիրեաց ետ նմա՝ ՚ի դարան մտանել ՚ի հեռուստ , մի դուրդն յամէ բանակին պարսից , և միւսն ՚ի ձախմէ . և ինքն առեալ ընդ իւր զորդի իւր զսմբատ՝ հանդերձ վեցհազարաւ , եկն և ձակատեցաւ յանդիման ասուրայ ։

Զայն արձակեալ ասուր ՚ի բանակէ իւրմէ առ վահան՝ և ասէ . ոչ ես անարի գայլդ վահան ։ Յանդիման եկայ վահան , և ասէ . ահա գայլդ՝ զոր խնդրես . գամ առնուիկ իբրև գայլ՝ պատառել զքեզ ։ Եւ ՚ի գրգռիլ բանից՝ գրգռեցաւ և պատերազմն ։ Եւ ըստ կարգելոյն վահանայ ՚ի սկսանիլ պատերազմին՝ իսկոյն յերկուս Թևս անջատեցան զօրքն հայոց , և սկսան փախչիլ ։ Այն տեսեալ ասուրայ՝ խրախոյս եբաւձ , և պընդեցաւ զօրօք իւրովք զվնաս վահանայ ։ Իսկ զօրքն վահանայ՝ որք ժամադիր լեալ էին ընդ դարանամուտսն , յանկարծակի յետս դարձեալ՝ դիմեցին յերեսս պարսից . և զի նոքա ոչ ակն-

ունէին այսմ, շփոթեցան, յիմարեցան և տագնապեցան. և՝ի
հարկանել սոցա զնոսա՝ հասին և դարանամուտքն զինի. և
սկսան կոտորել զնա։
Նեղին պահու ակն եդեալ ամբաստայ և տեսեալ՝ թէ սաստ
խռովեալ տարուբերի իբրև նաւ ալեկոծեալ, դիմեալ էանց
զնովաւ, և կամէր պատահել նմ. այլ վրիպեցաւ. և ինքն ա-
սաստ պնդեցաւ զհետ նր։ Եւ իբրև վերացոյց զսուր իւր հար-
կանել զնա, աձապարեալ ամբաստայ խոյս ետ առ՝ի կողմն. և
՝ի շարժել զսուր իւր՝ի վր սաստրայ՝ եհատ զդլուխ երիվարի
նր. և մինչեւ կործանեալ էր սաստր, դարձաւ ընդ կրունկն, և
եհար զդլուխ նր ևս, և ընկեց՝ի քաց, և սակ բարձրաձայն.
փութ քեզ քո՝ որ յաղթեցեր հակառակորդին։
Օ այն տեսեալ զօրացն պարսից՝ ի փախստական դարձան. իսկ
հայք զհետ մտեալ նց՝ հարին զբազումս՝ի նց, ընդ որս և զոր-
դի սաստրայ. և անկան՝ի պաքսից յաւուր յայնմիկ արք իբր
երիք հազար։ Իսկ վահան ժողովեալ զաւար անկելոցն՝ դար-
ձաւ՝ի մուշ. և ինքն ոչ երկարեալ զաւուրս կենաց իւրոց՝
հիւանդացաւ՝ի նոյն աւուրս և վախճանեցաւ, և թաղեցաւ
՝ի վանսն գլակայ. և որդի նր ամբաստ սկսաւ պայազատել զին-
խանութիւն նր։
Տեսեալ վախտանգայ, թէ երկիցս յաղթեցաւ՝ի վա-
հանայ, հանդարտեաց զամ մի. և յայնմ ամի ժողովեաց զօր
քիմ յոյժ. և լուեալ՝ թէ մեռաւ վահան, և պայազատեաց
որդի նր ամբաստ, եւթող զընտանիս իւր՝ի քաղաքն պորպէտ,
և կացոյց պահապանս՝ի նմ. և ել ինքնին բազմութիւբ զօրաց
՝ի վր ամբաստայ, եդեալ՝ի մտի՝ կենդանւոյն ըմբռնել զնա,
և ածել յաշխարհն պարսից։ Իսկ ամբաստ ժողովեալ զարս
կորովիս տանն հազար՝ եկն՝ի տեղին, որ կոչիւր անդակ. և
թողեալ հինգ հազար արս՝ի ձորաբերանն՝ որ յետոյ կոչեցաւ
մահապրակ, գնաց հինգ հազարաւ՝ի վր վախտանգայ։ Ար-
կուցեալ վախտանգայ, թէ սմբաստ հինգհազարաւ միայն ե-
կեալ է՝ի վր իւր, եկաց անդ՝ ուր էր. և առաքեաց ընդ-
դէմ նր արս վեց հնդր։ Օ այն տեսեալ ամբաստայ՝ պատրաս-
տեցաւ յարձակիլ՝ի վր նց գիշերի. քայց արգելուին զնա
քահանայք դրան նր. իսկ նա ասէ. ոչ գիտեք, զի ընդ իս է
սր յովհաննէս. վասն՛ զի եմ յաճ, զի բարեխօսութեամբ սրբոյն
յովհաննու կարասցեմ՝ի ձեռս իմ զթշնամիս ե-
կեղեցւոյ իւրոյ։
Օ այս ասացեալ՝ քաջալերեաց զզօրս իւր. և տուեալ՝ի ձեռս
անց նց զհան՝ հրամայեաց նց աղաղակել ու ծառայն. և դի-
մեաց՝ի վր պարսից՝ի մէջ գիշերի. և՝ի դիմել անդ իւրում
ետես զայր մի լուսափայլ, որ գնայր առաջի, և խռովեցուցա-

հեր զզօրս պարսից։ Զայն եբարձ ամբաստ, և ասէ ցզօրս իւր. քաջալերացարուք, և մի երկնչիք. զի սքեն յովհաննէս հասեալ է մեզ ի Թիկունս. և փեակ մեր ինքն պատերազմի ընդ Թշնամիս մեր։ Յայնժամ հայեցեալ նոքա ի զօրս պարսից՝ տեսին աղմուկ անհնարին, և լսէին աղաղակ սարսափելի։ Յարձակեցան ի վրէ նոցա, և հարին զնոսա ի հարուածս սաստիկս. և ի վեց հազարաց անտի երկու հարիւր ևեթ հազիւ ապրեցան. զօրս կալեալ ամբաստայ՝ առաքեաց առ վախտանգ. պատուիրեաց նոցա, և ասէ. գնացէք պատուեցէք վախտանգայ՝ զօր տեսիքդ։

Իսկ զօրքն հայոց ի ժողովել զաւար անկելոցն՝ կալան և զերիվարս երիս հազար՝ զնացեալսն ի պարսից, զօրս առաքեաց ամբաստ առ վահան որդի իշխանին հաշտենից. և պատուիրեաց նմա, զի ընտրեսցէ հազար այր. և տուեալ նոցա զերիվարան՝ առաքեսցէ զնոսա փութով։ Նա ինքն ամբաստ խոյս տուեալ անտի՝ եկաց զաւուրս ութն յամուր տեղիս. և ետ փոքր մի հանգիստ զօրացն։ Նա երբեմն հասին առ նա հեծեալքն, առեալ զնոսա զօրս իւր՝ դիմեաց ի վրէ բուն բանակին վախտանգայ՝ որ ի դաշտին։ Նա բաժանեալ զզօրսն յերիս գունդս, զմինն՝ որ էր երկու հազար, եդ ի գաւառին յետուստ կողմանէ հեծելազօր գնդին պարսից. զերկրդն՝ որ էր հազար հինգ հարիւր, յայլմէ հետևակաց. և զերրորդն՝ որ ևս էր հազար հինգ հարիւր՝ ի ձախմէ. և զմնացեալ վեց գունդսն յամ կողմանց շուրջանակի յայնպիսի տեղիս՝ յորոց կասկած ինչ ոչ ունէին պարսիկք։

Խուեացեալ ապա ամբաստայ՝ յանկարծակի դիմեաց ի վերայ պարսից սակաւ արամբք, և շարժեաց զբանակն նոցա ի վրէ իւր. և ի կարի ինն խուճապել նորա՝ պաշարեցաւ և վտանգեցաւ յոյժ. և զայն ոչ իմացան դարանամուտքն. զի կանխեաց ամբաստ քան զպայման ժամադրութենն։ Նա ի հատանիլ յուսոյ փրկութենէ իւրոյ, ապաւինեալ ի զօրութենին նոցա, և ի բարեխօսութենէ սրբոյ կարապետին, յարձակեցաւ ի վրէ պաշարողաց անձին իւրոյ. և յայլ և յայնկոյս կատորեալ զնոսա՝ հանոյց և եղ ի բլուրն, և զերծաւ։ Նա զի պարսիկք կարծէին, թէ այնչափ զօրօք միայն իցէ եկեալ ամբաստ ի վրէ իւրեանց, և թէ յամէ նա դառնալ, մնացին յանհոգս. և յայնմ անհոգութենէ նոցա յանկարծակի դիմելոյն դարանամուտքն ի վրէ նոցա, և որս և նա ինքն ամբաստ. և ի միջ առեալ՝ սկսան կոտորել զնոսա։

Յայն աղմուկ կոտորածի դիպեցան միմեանց վախտանգ և ամբաստ. և ի խոյս տալ ամբաստայ՝ գազանացեալ վախտանգայ՝ այնդեցաւ իբրև արջ կատաղի զհետ նմա, և ասէ. հարձորդի դու

կաց։

կաց ։ Իսկ ամբաստանկարծակի դիմձել առ նա՝ եհար և կտրեաց զառնապանս քարձից նորա . և մղոն տուեալ՝ աձապարէր ընկերանալ զնա ի վայր ։ Այլք ձգեալ վախտանգաւ զնիզակն՝ եհար ընդ կուրծս նորա . և յաղաղակել ամբաստայ առ նա և առ սքեն յոմէհանեն՝ սեգ նիզակին սահեալ առ կրծումն ոչինչ նեղգործեաց ընդ նա . որով մեծապէս քաջալերեալ ամբաստայ՝ եհար ինքն տիգաւ իւրով ընդ թիկունս վախտանգայ , և անցոյց ի սիրտ նորա . և մինչև կործանեալ էր վախտանգ , փութացաւ ամբաստ և եհատ զգլուխ նորա ։

Այլ յանկանիլ գլխոյն ի գետին՝ մի ումն ի թիկնապահ ծառայից վախտանգայ յաւիշտակեաց զայն , և փախեաւ ։ Պնդեցաւ ամբաստ զհետ ծառային , և կամէր հարկանել զնա , և առնուլ ի ձեռաց նորա զգլուխն վախտանգայ ։ Տեսեալ ծառային՝ թէ չիք հնար զերծանելոյ , ձգեաց ուժգնութիւն ըզգլուխն ընդ կուրծս ամբաստայ , և ասէ . տար խորովեա՛ և կեր զդա . վայ ձեզ , որ վաղ եւս չարարիք զայդ ։ Իսկ ամբաստ առեալ յինքն զգլուխն՝ եմուտ և եւս զկնի ծառային , և ասէ . տիրատեաց պարսիկ զգլուխ քո ընկեր ոչ փինկեցեր ընդ ինձ քո . և արդ՝ զի այդպէս արարեր դու , արարից և ես զքեզ իբրև զնոր քոյ . և հատեալ զգլուխ նորա՝ էանդ ի բլուրն ։

Է . Իսկ զօրքն հայոց՝ որք պաշարեալ էին զպարսիկան , կոտորեցին զնա չարաչար յոյժ . և մնացին ի նոցանէ չորեքհարիւր ոգիք , որք էին հեռագոյն ի բանակէն , և պահէին զուղտս և զձորս ։ Որոց ի վերայ հասեալ ամբաստայ՝ հրամայեաց նոցա ծածկել զպատերազմին առեալ ամբաստայ զզօրս իւր՝ դիմեաց ի քաղաքն պորպէտ . և զօրք նր յարձակեալ ի տունս տունս՝ զորս միանգամ գտին ի նմա պարսիկ լեզուաբաւ , հարին զնոսա ։ Իսկ զորդի վախտանգայ և զկին նր հրամայեաց ամբաստ տանել յայծիկ բերդ , և պահել անդ . և ինքն դարձաւ ի մուշ ։ Եւ տուեալ պարգեւս զօրաց իւրոց՝ արձակեաց զնոսա յիւրաքանչիւր տեղիս , պատուիրեալ նոցա զի մի կացցեն յանհոգս ։ Եւ յայնմ հետէ դադարեցին պարսիկք յարձակիլ ի տարոն աւուրս քանի մի . զի ընդունայն եւանեին աշխատանք նոցա . այլև զի նոս ինքն խոտրոյ որքայ զբաղեալ էր ի մեծամեծ պատրաստութեան ընդ արքային հեփթաղայ , և ոչ համարէր արժան ի այսպիսի ընկոյն գործոյ զբազմութիւն զօրացն քակտել . նաև զի կնկի սակաւուց ծագեցաւ և այլ միւս եւս կռիւ մեծ ընդ յոյնս . ոյոյ վն առաւել եւս անփոյթ եղև նա զմամիկոնեանց . և ամբաստ խաղաղութիւն տիրեր յերկրի իւրում ։

ԳԼՈՒԽ. ԾԱ.

Յաշտպս գերուԹԵ և պարՀի խալՀին. և կաԹուղիկոսուԹԵ Հռ-
Հիպատոս, դրիպատիրի, և եղբի. և ծողովոյն կաԹող-
ոսի և յաշտպս մարզպանուԹԵ վարաչուրոյոյ։

Ընդ աւուրս ժամանակաց այսոցիկ հերակլ որդի 610
Հերակլեայ իշխանին ափրիկոյ եկեալ՝ի վիր քա- ԺԹ
ղաքին կոստանդինուպօլսոյ՝ պաշարեաց զայն.
և սպանեալ զբռնաւորն փոկաս յետ ութն ամի կայսերուԹե-
նի՝ Թագաւորեաց ինքն՝ի վիր յունաց։ Ո՛յն իբրև լուաւ խոս-
լով արքայ պարսից՝ Հետամուտ եղև տեղեկանալ, Թէ ի՛նչ
միտս իցէ Հերակլ. և ինքն պարապ առեալ՝ի պատերազմաց
արևելակողման՝ պատրաստեցաւ ընդդէմ նմին. ետ զնամ զգօրս
իւր՝ի ձեռս փեսային իւրոյ, որ կոչիւր խոռեամ ազգմամն շահր-
վարազ, և առաքեաց զնա՝ի վիր յունաց։ Լսեալ խոռեամայ
յՕձէն պարսից՝ դիմեաց՝ի սահմանս ՀռոմԵ կայսեր. և վեր
՝ի վայր արարեալ զՕ՛ չորաւ՝ի պաղեստին, և Հաւ զսո՛ք քա- 614
ղաքն զերուսաղէմ յամի ՅՀն. 614. յամսեանն յունիսի. և ԺԴ
կոտորեաց՝ի նմա յԻսուն Հազար ոգիս. և վարեաց՝ի գերու-
Թի երեսուն Հազար անձինս. ընդ որս և զղաքարիա պատրի-
արգ. և բարձեալ անտի զփայտն կենաց զսո՛ք խաչն քո՛ի՝
տարաւ՝ի պարս. և խոսրով եդ զայն՝ի մեհենի իւրում. և
զայս արար յաւէտ՝ի նախատինս Հերակլի։

ՅովՀ.էքս. Ո՛ այսու ժամանակաւ մեռաւ յովՀան կԹՂկս, որ կարգեալ 616
Ղ.սող.Ե. էր՝ի մօրկայ՝ի վիր Հայոց եղելոց՝ի բաժնին յունաց. որ և
2. և 3 վարեալ էր յաշտաց յաՀմատան. և զմարմին նորա բերեալ՝ի
Ամոռէլ գեօղն աւան՝ եդին մերձ յեկեղեցին, զոր իւր էր շինեալ. և
Ալ արքան եղեն ամ աւուրք ՀայրապետուԹեն նո՛ր՝ ամք. ԺՂ. փոքր ի մա-
Ընչախոս էլի. և ոչ ևս ոք այլ յաջորդեաց՝ի տեղի նո՛ր։ Ի վերջ այնր
ամի մեռաւ և աբբահամ կԹՂկս՝ կացեալ՝ի Հայրապետու- 617
ԹԵ ամս. իՂ։ Ընդ յաջորդեաց նո՛ր կոմիտաս եպիսկս տարոնոյ կՂ
մամիկոնեանց, և առաջնորդ գլխակալ վանից, այր խոհական
և արքակեաց՝ յարագածոտն գաւառէ՝ի գեղջէ աղցից։ Այս
յառաջ ձմեռաւ լեալ էր փակակալ վկայարանի սո՛ց Հռիփսի-
մեանց, զոր շինեալ էր սո՛ց լուսաւորչին՝ և ապա սո՛ցն սա-
հակայ. և իբրև նստաւ յաԹոռ կաԹուղիկոսուԹԵ, կա-
մեցաւ նորոգ յօրինել զայն։

Իբրև սկիզբն արար շինելոյ յերկրորդ ամի անդ իւրում, և 618
՝ի քան և ինն երորդ ամի խոսրովու երկրի արքային պարսից, կՂ

եդիտ

եգիտ զտապանակ սիրոյն Հռիփսիմեայ , որ կնքեալ էր մատա-
նեաւ սիրոյն գրիգորի լուսաւորչին , և սիրոյն սահակայ : Այս
տեսեալ հայրապետին՝ ոչ իշխեաց բանալ զտապանակն , այլ
զիւր կնիք ևս եդ ՚ի վրայ նոր : Եւ ունէր տապանակն այն եր-
կայնութեամբ լինել չափ հասակ սրբուհւոյն Հռիփսիմեայ : Եւ ապա շի-
նեալ զհոյակապ եկեղեցի՝ զետեղեաց անդ զտապանակ սրբուհ
ւոյն . և առաջ շարականն վայելուչ և աբանելի ՚ի վրայ նորա և
ընկերաց նորին ըստ կարգի այբուբենից , այն է՝ * Նախնիք
հաւիրեալք սիրոյն Քրիստոսի , ևայլն ॥ :

610 ծիթ

Յետ այսորիկ քակեալ և զփայտաշէն գմբէթ կաթուղիկէին
էջմիածնայ՝ որ ՚ի վաղարշապատ , շինեաց զայն չքնաղ ևս՝ կո-
փածոյ քարամբք : Էրար սա և զայլ շինուածս , և աղքի աղ-
գի բարեկարգութեամբ : Յօրինեաց և զբազում ձառս . զորս
ոչ ունիմք առ մեզ . գրեաց և պէսպէս թուղթս առ այլեայլ
անձինս . և թուղթ մի յատուկ առ պատրիարգն կոստանդի-
նուպոլսոյ ՚ի վրայ ծիսի և ժամերգութեանն հայոց : Զոտանին և
բանք ինչ հարցաքննուեն . զորմէ ասի թէ ալարեալ. էին տա-
րա . բայց այն կիր յայլոց է կեղծեալ , և կիր բազմօք այլեայ-
լեալ . զի լի է տգիտաբանութեամբ :

614 619 թ . Յաւուրս կաթուղիկոսութեանն տորա դարձեալ գրգռեցաւ պատերազմ ընդ յոյնս և ընդ պարսիկս . քանզի խաղաղ արքայ
կիր կիր լսեալ առնել , թէ հերակլ կայսր նստի յանդորրս , և թէ նորոգ կին ածեալ զմարտինէ դշխոյն՝ կատարէ հան-
դես հարսանեաց , արձակեաց յԱրեւելս զբազմութիւն զօրաց իւրոց
առաստաւակաւ . որոց սփռեալ այսր և անդր՝ գործեցին աւերու-
թիւն բազում . և կոտեցին աւար և գերի բազում . և բռնա-
616 կէ ցան ՚ի վրայ քաղաքաց քրիստոնէից : Որոյ վասն խորհե-
ցաւ հերակլ կայսր խնամարկական բանիւք հաշտութիւն առնել
ընդ նմա . և առաքեաց առ նա դեսպան խաղաղութեան , խնդրե-
լով ՚ի նմանէ միանգամայն և զսրբէ խաչն : Իսկ խոտորով արար
նմա պատասխանի . ոչ կարեմ հաշտութիւն առնել ընդ քեզ , եթէ
620 ոչ թողցես զհաւատս քրիստոնէութեան : Որոյ լսեալ ընդ այս հերակ-
617 կէ լի՝ ժողովեաց զզօրս ՚ի յունաց , ընդ որս էառ և զսրբոյն ՚ի հայոց
կէ եղեալսն ՚ի բաժնի իւրում՝ գունդ մի հզօր . յորոյ վերայ կար-
գեաց զօրսավար զմժէժ կամ զմաժէժ գնունի , որ էր որդի
Թոռինն մժեժայ մարզպանի՝ պատանի հզօր և գեղեցիկ . և
եւ ընդդէմ պարսից ՚ի պատերազմ ընդ պատրաստուէ հռոմ-
մայեցւոց . և ձանապարհ արարեալ ընդ հայս՝ եկն ՚ի դուռն ,
և գնացեալ անտի ՚ի նախճուանի՝ էանց յատրպատական ՚ի , և
618 արար հիմնայատակ զդաւխէժ . և յաւարի առեալ զնոն պար-
կէ սից՝ եկն ՚ի փայտակարան :

Իսկ

(Հերակլիոս : Կիրակոս : Թէոդոսիոս : Նասր . Բ : Ոնաբաս : ժէ . 15 : Յովհ. Կաթ : Ամինա : Ասող. Գ. 3 : և այլք :

Յակ խոստով զայրացեալ ի գործս հերակլի՝ առաքեալ ընդ-
դեմ նր զամ զօրս պարսից՝ ի ձեռն երիսւց երևելի զօրապետաց
որոց անուանք էին խոռեամ շահրվարազ և շահէն. և ինքն
խուսեաց՝ ի տեղի ապահով։ Իսկ եղև՝ ի պատահիլ նոցա մի-
մեանց զառաջինն՝ ի պարտուն մատնեցան պարսիկք, և կո-
տորեցան՝ ինոցանէ երեսուն հազարք, և շահէն ընդ նմա. այլ
խոռեամ փախուցեալ զերծաւ։ Յակ հերակլ՝ ի խումբս խումբս
քաջանեալ զզօրս իւր՝ առպատակ սիրեաց զնոսա յձեն պարսից։
Յիմեալ և մեծաժայռ զօրավարին հայոց իւրով գնդաւն՝ պա-
տահեցաւ գունդավոյ միում՝ ի զօրավարացն պարսից. ընդ ո-
րում էին և հինգ արք յառաջաց նոցին հանդերձ իւրեանց
զօրօք. զորս վանեալ քաջին մժեժայ՝ էարկ առաջի իւր հալա-
ծականս. և կալաւ կենդանւոյն զգունդավ զօրավար և զհինգ
իշխանսն, և ածեալ կացոյց զնոս առաջի հերակլի։

Դառնացեալ յոյժ խոստովայ ընդ պարտուն իւրոցն՝ առաքեաց
՝ի վերայ հերակլի վերստին զխոռեամ շահրվարազ. և նա կըր-
կին յաղթեալ՝ ի հերակլէ՝ եղև փախստական։ Այս առա-
ւել ևս զայրացեալ խոստովու՝ առաքեաց ընդդէմ նր ամ զո-
րութ պարսից զհրաշալեացն զօրավար՝ զայր հզօր և երևելի.
քայց սա ևս՝ ի պարտուն մատնեալ խայտառակեցաւ։ Ընդ
այս պատերազմունք հերակլի և խոստովու երկարեցան աւն
քառասն։ Ընդ մինչդեռ խոստով՝ ի տխրեան էր, և շրջէր՝ ի
պալատի իւրում, կաւատ որդի նորա՝ որ և շիրոյ կոչի, (զոր
յովհաննէս կաթուղիկոս Համարի որդի խոստովու առաջնոյ) {627}
ապան գնա, ի լեր ամ թագաւոր նր. և թագրեաց ինքն՝ ի տեղի {ՀՂ}
նորին։ Ընդ առաքեալ երկուս հրեշտակս՝ որոց մին էր պար-
սիկ, և միւսն հայ, առ հերակլ՝ հաշտուի խոսեցաւ ընդ նմա,
խոստացեալ դարձուցանել առ նա զխաչն և զամ պերիս։
Ընդ աստի համարեցան ումանք, թէ կաւատ իցէ դարձուցեալ
զխաչն։ Իայց ըստ աւանդելոյ պատմուճից հայոց, որում հա-
մաձայնին և ումանք՝ ի յոյնսայ, միայնչև էր դարձուցեալ զայն՝
կանխեալ օրհասի նր՝ մեռաւ, թագրեալ ամ մի; և ամիսս ինչ.
և նստաւ փոխանակ նր արտաշիր որդի նորին. ամիսս. 7. գո-
յով գեռևս տղայ. յորմէ և անկաւ շինութիւն մեծ՝ ի պարսս։
Ոչնչեալ հերակլի կայսեր զմնայն կաւատայ, և զթագրել ար-
տաշրի տղայն, առաքեաց զպատգամաւոր ումն առ խոռեամ
շահրվարազ փեսայ խոստովու. և խոստացաւ նմա ձեռնտու
լինել և թագրեցուցանել զնա՝ այսու պայմանս, զի դարձուսցէ
յհաս զսուրբ խաչն, զոր նա ինքն խոռեամ գերեալ էր յերկիր յա-
ռուս խոստովու։ Յանձն առեալ զայն խոռեամայ, և գնացեալ
՝ի տիսբոն՝ ապան զարտաշիր, և թագրեաց ինքն՝ ի տեղի նորա
ամիսս. 2. և վաղվաղակի առաքեաց առ հերակլ զսուրբ խաչն։ (Ի)

և

և հերակլեայ ընկալեալ զայն՝ տարաւ և եդ՝ ի տեղւոջ իւրում յերուսաղէմ։

629 Յոկ զօրք պարսից սպանեալ զկոռեմ՝ ի Ձեմարանի իւրում՝ Թէոդորոսին գրկին նոր քաղաք կամ քորանէ դուստր խոսրովու. որոյ կացեալ իբր ամիս. 4. մեռաւ. և Թէոդորոս երրորդ խոսրով անն յաղթէ սասանայ, ամիս. 3. և յետ նոր ազգիկ կամ ամբիկ քոյրն քաղորայ, ամիս. 6. և ապա որմիզդ երրորդ՝ Թառն խոսրովու. զոր յետ եօթն ամաց խեղդամահ արարեալ սպանին պարսիկք. և այր զարամբք ելանելով Յանայինն խլել՝ ի միմեանց զԹագաւորութիւն։ Յետ ամի նստաւ յազկերտ երրորդ՝ միւս Թառն խոսրովու. որ և եղև վերջին Թագաւոր՝ ի սասանեանց։

625 Ե. Ամ. ՅԼյ առաջ քան զդարձ խաչին, և նախ քան զմահն խոսրովու, յամի ՌՀՌ իբր. 625. և հայոց. ՀՂ. գաւիթ սահառունի մնորզպան հայոց կասկածեալ յերեսաց պարսից յաղագս քաջաե ոմանց, եթող զՀայաստան, և գնաց՝ ի կոստանդինուպոլիս, յետ կալոյ յայնմ իշխանութեան ամս իբր. ԻՂ։ Ոյն լուեալ խոսրովայ՝ կացոյց՝ ի տեղի նոր մնորզպան զվարազտիրոց բագրատունի զորդի բագմայաղեն ամբատայ մնորզպանի՝ ի շնորհս երախտեաց հօր նր. և առաքեաց զնա աղբունի հրովարտակաւ՝ ի հայս։

Ինչև հասեալ էր նր անդր, վախճանեցաւ կոմիտաս կաթուղիկոս՝ կացեալ՝ ի հայրապետուե ամս. ը։ Ոյ իբրև եկն վարազտիրոց, խորհուրդ արարեալ ընդ Թէոդորոսի ոշտունեաց և ընդ այլ նախարարս՝ կացոյց յաթոռ հայրապետութե փոխանակ կոմիտասայ զնր քրիստափոր երրորդ յազգականուէ աբրահամու կաթուղիկոսի։ Այս էր այր ձգնազգեաց և աշխարհատեաց. այլ զի անհաւատութե յանդիմանէր զմեծամեծս, եւս և զնա ինքն զվարազտիրոց, եմուտ շընջիւն յիշխանս հայոց, ոչ Թէ յազգաբարուէ վարազտիրոցայ առնել զայն քրիստափոր. նոյնպես և վարազտիրոց կարծէր, Թէ խոսրովայ՝ մանաւանդ ազգայնոց իւրոց՝ այնպես վարի առ ինքն։ Ոյ յաղագս այսորիկ ոմանք յընտանեաց նր չարախօս եղեն առ նա, Թէ քրիստափոր երեսպաշտութե և քաջութե վարելով խառնի զժողովուրդն, և յաչաց հանէ զքեզ. և հաւանեցուցին ընկենուլ զնա յաթոռոյ հայրապետուե։ Ոյս իմացեալ քրիստափորի՝ իւրովի հրաժարեցաւ յիշխանուէ կաթուղիկոսութե յետ վարելոյ զայն ամս երեք, և փոքր ինչ աւելի. և գնացեալ յոտն մաեաց՝ շինեաց զվանք մի մեծ՝ ի գիւղն ուղեաց. և ժողովեալ անդ զմիանձունս՝ եկաց կրօնաւորութե և խստակեաց վարուք մինչև ցվախճան կենաց իւրոց։

Վար-

Արդեօք ոչ ապա փոխանակ նոր յաթոռ հայրապետութեանն զոր եզը՝ այն է եղբայս, ի նիզակահարն գեղջկէ. որ և էր մնեալ ի տան կաթուղիկոսարանին, և էր փակակալ եկեղեցւոյ սրբոյն Գրիգորի։ Յառաջնում ամի անդ կաթուղիկոսութեանն սորին եղեւ, յորում ճիւղն ասի լեալ դարձ խաչին, եկն հերակլ կայսր ի քաղաքն կարնոյ, այն է Թէոդոսուպոլիս. ուր և եցոյց բազում խնամ և սէր առ հայս եղեալ ի մանն բաժնի յունաց. և կացոյց ի վր նոր զօրավար և իշխան զմիւժէժ գնունի, զորմէ յիշեցաք վերագոյնդ։

Ե. Ա. Ե քանզի յայնմ ժամանակի բազումք ի հայոց եղեւ լոց անդր ընկալեալ էին զնզուածոյն քաղկեդոնի, և թշնամք և ոչ կայր ի մէջ նոր խռովութի ոչ սակաւ։ Սին իրի հրամայեաց կայսրն գումարել գաւառական ժողով եպիսկոպոսաց հայոց և յունաց ի քաղաքն կարնի. զի խնդրատեցուսցեն զոչ հաւանօղսն ի գիտութի ձշմարտութե։ Այսր պատճառի աղագաւ առաքեաց կայսրն զնա ինքն զմիւժէժ գնունի առ եզը կաթուղիկոս՝ գալ ի ժողովն, և ընդունիլ զձշմարտութի դաւանութե ժողովոյն քաղկեդոնի։ Ե միւժէժայ գնացեալ առ նա՝ եդ առաջի նր զպատգամն Թագաւորին. և յաւել և ասել. եթէ ոչ կամիցիս երթալ, և ընդունիլ զդաւանութի սր ժողովոյն քաղկեդոնի, և ոչ հաղորդեսցիս ընդ կայսեր, և ընդ յունաց եկեղեցւոյ, գիտասջիր, զի մեք մերում բաժնի կացուցանեմք զայլ կաթուղիկոս, և ոչ տամք քեզ Թոյլ վարել զիշխանութիւդ ի վր մեր։

Յաւուրս յայնժամ ընդ իւր եզր զոմանս յեպիսկոպոսաց և ի վարդապետաց. զտիրատուր արքեպիսկոպոս, զքրիստափոր եպիսկոպոս դարունեաց, զմարտիրոս եպիսկոպոս գողթնեաց, զեպիփան եպիսկոպոս մամիկոնէից զառաջնորդ գլակայ վանից տարօնոյ, զվարդան վրդ ի բագաւիձոյ, զԹովմա վրդ ի վանայն արշարունեաց՝ որ յերասխաձորն, և զայլս՝ ընդ գրելոյ զաքարիայ ծործորեցւոյ, և խորհնայ սահառունեւոյ. ընդ որս էառ և ընդ քեռորդի իւր զԹէոդորոս, որ և էր եղբօրորդի կոմիտասայ կաթուղիկոսի, տեղեակ արտաքին իմաստից և հելլենական ուսմանց, և վարժ ի սր գիրս։

Լինէր եղեալ ոտքօք ի դուռնայ՝ գնաց ընդ միւժէժայ գնունւոյ ի կարին հանդերձ այլ և քանի մի իշխանօք հայոց։ Ե հանդիպեալ կայսերն և եպիսկոպոսացն յունաց՝ պատուով մեծաւ ընկալեալ եղեն ի նմանէ։ Ե ի լինել բանից յաղագս առաքելոյ իրացն՝ որոյ վրն ժողովեալ էին, եհարց կայսրն ցկաթուղիկոսն և ասէ. ընդէր ոչ միաբանիք դուք ընդ մեզ ի հաւատս։ Ասէ հայրապետն. բարերար արքայ, եթէ կամիս՝ հնչեա ես այդ. բայց միայն խնդրեմք, զի բարձիցէ ի ձէնջ զնա կարծիս նեստոր-

Յով.կաթ։
Ա՛ռաջ.Բ.2։
Ա՛ռիկոն։
Ա՛մոռել։
Ա՛իրակոս։
Ա՛ողով։
Ա՛ապա։

629 Ա՛ր

տորական հերձուածոյ, որոյ վէճ խորհիմք մեք ի ձէնջ. և եթէ զայն աղանդ հաստատեաց՝ ոչ լսեմք՝ ժողովն քաղկեդոնի, մերժեալք և զնա. և մեք յօժարակամ միաբանիմք ընդ ձեզ։ Նա յաւել խնդրել եզը Հայրապետ և եպիսկոպոսք Հայոց որ ընդ նմա՝ նամակ հաւատոյ ի յունաց կայսերական ձեռագրով, (ըստ որում աւանդէ և յովհաննէս կաթողիկոս), տեսանել՝ թէ զնորպիսի դաւանութիւն ունին. համախոհ էցեն նեստորականաց՝ թէ ոչ։

Նպա հրամանաւ հերակլի գրեցին եպիսկոպոսք յունաց զդաւանութիւն հաւատոյ իւրեանց. յորում նախ նզովեալ զնմա հերետիկոսա՝ ըստ որս և զնեստոր, ի մէջ բերին անդ և զձեռ խոստովանութիւն քաղկեդոնի ժողովոյն, և ցուցին յայտնապէս, թէ հեռի է ամենեւին այն սէր ժողովոյ յաղանդոյն նեստորի։ Նյ այսմ նամակի ստորագրեալ նա ինքն կայսրն հերակլ, և կնքեալ իւրով մատանեաւ, եդ զայն ի վէր սեղ խաչի իբր ի նշանակ երդմանն, և մատոյց ցեզր Հայրապետ, և ասէ. ահա տէր կաթողիկոս առ ընծայիր և քննեա. եթէ գոյ ի դմա արատ կիր թիւրութեի ինչ, ցոյց ինձ, և ես զնմա հոռոմս ի քոյդ դարձուցից դաւանութեի. ապա թէ ոչ՝ դուք հաւանեցարուք մեզ։

Նռեալ կաթողիկոսին զնամակն՝ տարաւ ի ձեռանս իւր. և ընթերցեալ քննեցին զայն եպիսկոպոսք և վճռեցք հայոց անաչառ մտօք. և տեսին, զի նոյն դաւանութի է ամենևին՝ զոր ինքեանք միշտ ցայն վայր դաւանէին։ Նյ ապա եկեալ առ կայսրն՝ ասեն. գիտասջիր արքայդ մեծ, զի մեք ոչինչ գտաք ի մանթիւր. այլ՝ ամենևին հաւանարեալ է ուղղափառ դաւանութեն հարց սրբոց. զորոց և մեք գնամք զհետ։ Նյ ասէ կայսրն. արդ՝ հաւանեալ եք մեզ այժմ։ Նյ կաթողիկոն ասէ. յայսմ մասին հաւանեմք. բայց է ինչ ձեր բազում՝ ինձդ չգիտեցականս, յորոց խորհրդաղգ մեր և գայթակղի. եթէ հնար ինչ է, այդմ ևս դարմանս մատուսջիք. և մեք յամի միաբան եմք ընդ ձեզ։ Նյ ասէ կայսրն. մեր բանքս վճռ հաւատոյ է, և ոչ վճռ գործոյ քննութե. ապա թէ ոչ՝ կան և ի քումդ աղգիդ բազում ինչ, որ ծանրանան մեզ. բարձ դու զայնոսիկ ի հայոց, բառնամ և ես զայդոսիկ ի հոռոմոց։

Նյնժամ միաբանեցան մեկուսացեալ եզը կաթողիկոս՝ խորհուրդ արար առանձինն ընդ եպիսկոպոսունս և ընդ իշխանս հայոց ի վէր իրացս այսոցիկ. յորում խորհրդի ընդ մէմ դարձան ոմանք յիշխանաց, և ապա ի հաւանութի եկեալ յանձն առին ի բաց թողուլ զնմա յոդ և զինդիր, և միաբանիլ միայն ի բան խոստովանութե հաւատոյ. ուր և բազում ինչ խօսեցաւ Թէոդորոս քեռորդի կաթողիկոսին. չիք ասէ ի մէջ մեր և ի մէջ

նոյ Թիւրուէ՛ի բանս հաւատոյ. այլ՝ մի եմք մեք և նոքա. Թուղ
զային՝ զի նոքա ասէ բուն արմատ են, և մեք ոստ մի, ՛ի նոցանէ
ուսեալ և առեալ զհաւատս և զնամ կարդ քրիստոնէութե. ապա
ոչ է պարտ մեզ ապստամբիլ ՛ի նոցանէ, և խլիլ յարմատոյն
մերմէ. այլ իբրև կրտսերագոյնք նոցին յանձն առցուք
հպատակիլ նոցա իբր երիցագունի. և եղիցի մի հօտ և մի հո-
վիւ։ Լու յետ բազմ քննուեց և բանից՝ միաբան հաւանութե
գնացեալ անդրէն առ կայսրն՝ հաստատեցին զհաւատարուե
խոստովանութե հաւատոյ հայաստանեայց. և յանձն առին
ընդունիլ զժողովն քաղկեդոնի։ Լու այս եղև յամի հին. 629.
և ՛ի թուականութե հայոց. ՀԸ. ՛ի սկիզբն քսաներորդ ամի (2)
կայսերուե Հերակլի. և ՛ի վախճան առաջնոյ ամի հայրապե-
տութեան եզրի։

Է. Յաւարտիլ ժողովոյն՝ մեծարեալ կայսեր զեղը կթղկս՝
ետ նմա պարգևս առ ՛ի ցոյց սիրոյ միաբանուե զերկոցունդ մասն
կողբայ, որ ՛ի տայս։ Լու եզրի դարձ արարեալ անտի՝ եկն ՛ի
Հայս. և իբրև մերձ եղև ՛ի դուռն քղք, վաղվաղակի կղե-
րիկոսք և ուխտ եկեղեցւոյն առ հասարակ փութացեալ ընդ-
առաջ նո՛ւ մեծաւ շքով մուծին ՛ի քաղաքն, ըստ որում էր ա-
ւրէնք. և տարան յեկեղեցին։ Լու յայնժամ ՛ի դուռն վիպ
ամն յովհաննէս կոչեցեալ՝ որ և կարդեալ էր յեղբայ փակա-
կալ եկեղեցւոյ սբյն գրիգորի. գիտացեալ նմա՝ Թէ եզը կա-
Թուղիկոս ընկալեալ է զժողովն քաղկեդոնի, ՛ի մտանել նո
՛ի քաղաքն՝ ոչ էլ ընդառաջ նո, և ոչ իսկ երեւեցաւ յեկեղեց-
ւոջ անդ։ Տեսեալ եզրի՝ եթէ նա ոչ երևի ՛ի միջի, եհարց՝
Թէ ո՞ւր իցէ. և գնացեալ ոմանց ՛ի կղերիկոսաց առ նա՝ կո-
չեցին զնա, և մեղադիր ևս եղեն նմա, և ասեն. ո՞րպէս ոչ
եկեր դու ընդառաջ կաթուղիկոսին։ Լու նա պինդ ետ և ասէ։
* զիա՞րդ պարտ վարկանիմ յողջոյն կամ յերկրպագութի նմա
,, երթալ, որ քակեաց զսահման կանոնի հարց մերոց ուղ-
,, ղափառաց ‖։ Լու ապա յաւել ևս անարգել և նախատել
զնո՛ժողովն և ասէ. * հանգուցակիցս զմեզ խորհեցաւ առնել
քաղկեդոնեան չար հերձուածոյն ‖։

Ը. Այս իբրև լուաւ կաթուղիկոսն, հրամայեաց բանտարկել
ածել զնա առաջի իւր. և իբրև յանդիման եղև, ասէ ցնա.
* խրոխտաբար իմն և ամբարտաւանութե ընկեալ Թուխա. և
,, վնաս ախտակրեալ սրտիւ ոչ եկեր ընդ առաջ մեր. և ոչ տեսեր
,, զմեզ ‖։ Լուակ յովհան ասէ. * խրոխտումն և ամբարհաւա-
,, ճութի չիս ոչ գտանի. այլ քաջագոյ չքմարտութեն լինել հա-
,, ւանիմ. բայց քո ասէ յիրաւի կոչեցաւ անունդ եզր. վա՛ զի
,, յեզը հաներ զհայաստանեայս, քակեալ զսահման հաւա-
,, տոյ հարց մերոց ուղղափառաց, և խրամատեալ զցանկն

,, առա-

,, առաքելական , և ՚ի մարդաբաւան տուժմանէն լեռնին կող-
,, ծանեալ ‖ ։

Օ այսպիսի հայհոյական և յիմարական բանս լուծեալ եզիր ՚ի քեզանոյ յովհաննու , հրամայեաց բռնի հարկանել զպատ-
րանոց և վկիզակ նր , և վանել արտաքս յեկեղեցւոյ ։ Ապ յով-
հան կամելով զինքն անմեղ ցուցանել՝ իբր թէ ՚ի զուր գանի,
ամբարձ զձեռս իւր և ասէ . * ահաւասիկ գնացի խնդալով
,, յերեսաց ատենին . զի վա անուճմն ոտիժանի եղէ անար-
,, գելոց ‖ ։

Այս ապա հրամայեաց եզր ոտիշել զնա յուխտէ սբ եկեղեցւոյ՝ մի և երևիլ ՚ի քաղաքին , և մի քնաւ ուրեք յծին հայոց ։ (2)
Այս նա փախուցեալ գնաց ՚ի նիգ գաւառ ՚ի ծործորս լերինն՝ ընդ-
դէմ ամրոցին . և թաղեաւ ՚ի մայրոյ վանս . ուր սկսաւ
սերմանել զխռովմէն ։ Այրև լուաւ զայս եզր կաթուղիկոս ,
հրամայեաց ՚ի քաց տարագրել զնա անտի ևս . և զմայրոյ
վանն կոչեաց մայրեգոմ զի ընակելոց անդր յովհաննու . այն
ինչ՝ ասէ՝ յորում եղեն յովհան ընակեցաւ , մի և կոչեսցի
վանք , այլ՝ գոմ՝ . և որ յառաջն մայրոյ վանք անուանիւր ,
կոչեսցի այսուհետև մայրեգոմ . և նա ինքն յովհան՝ մայրոգո-
մեցի , կամ մայրագոմեցի ։ Գնացեալ ապա անտի յովհան-
նու մայրոգոմեցւոյն յաղուձանս ՚ի գլուխ գարդմանի գաւառի՝
եկաց անդ հանդերձ իւրով յամառաւոք . ուր և ստացաւ զա-
շակերտ մի սարգիս անուն . որոյ առաւել գտեալ քան զվկզ-
իւր՝ անկաւ յայլևայլ հերձուածս , և և յաղանդ յուվիա-
նեայ և սաբելի , ըստ գրելոյ վարդանայ . Թէպէտ ասի ևս , թէ
սա ինքն յովհան անկեալ էր ՚ի նոյն աղանդս , և յայլ բազ-
մապատիկ մոլորութիս . զորս և տարածեաց ՚ի մէջ բազմաց , (3)
մանաւանդ ընդդէմ խորհրդոյ մարդեղութե , առ աչօք ասե-
լով զկիրս մարմնոյն քրի , և զչարչարանս նր . և էարկ չիո-
թաւն ՚ի մէջ ազգին ։

Այսմիկ ժամանակի վկզ ոմն գրիգորատուր անուն՝ այր սքե
և բարեխորհուրդ՝ ՚ի գաւառէ անձախոյ ձորոյ . և սա՝ որպէս
գրե դաւիթ վանահայր ՃԻԿակիոյ շապհոյ բագրատունւոյ , ՚ի
Ճարակիր հերձուածոյ մայրագոմեցւոյն՝ բազմաք զինեցաւ
ընդդէմ մոլորութե նր . և այնչափ ջանիւք աշխատ եղև՝ մինչև
ասէ , զայն * զյովհաննու մայրագոմեցւոյ զաղանդն խափա-
նեաց ‖ ։ Այրեն աստանօր ստեփաննոս ասողիկն և վարդան ,
թէ այս յովհան մայրագոմեցի արտարեալ էիցէ զերիս գիրս՝
առանց դնելոյ զանուն իւր ՚ի նա . զմին ասեն կոչեաց խրատ
վարք , զերկրդն հաւատարմատ , և զերրդն նոյեմակ ։ Այայց ոմն
աւանդէ ՚ի պատասխանութիւն մխիթարայ կաթուղիկոսի , այս
գիրք նր մոլորականք էին ։ Այակ թէ ընդհեր ոչ էիցէ եգեալ

զանուն իւր, յայտ է պատճառն՝ զի մի՛ մերժեսցի ի հայոց, ըստ որում գրէ առաղնիկ. է. 2. * զանունն իւր առ ոչ վերագրեաց ի նա մի՛ յընդառնելոյ ժողովրդեանն ։

Յակ եղեր կաթուղիկոս յետ դառնալոյ ի կարնոյ՝ կամեցաւ նորոգել զվկայարան սքեղն գայիանեայ. բայց տեսեալ, թէ փոքր է այն և մթին, ետ քակել զնոյն, և ընդարձակագոյն և՛ և պայծառագոյնս շինեաց կոփածոյ քարամբք. և կանգնեաց արտաքոյ նր՛ բնակարանս քահանայից. արար և զայլ շինուածս ։ Կարգեաց սա և՛ ի ժամակարգութիւնէ զարևագալն սաղմոսն, եղիցի անուն նմա օրհնեալ լիցի. որպէս գրէ յովհան հայրապետ իմաստասէրն՝ ի կանոնն. ԽԲ. յասել նորա զայսպիսի բնչ. * Ո՛վ նիկ ամենեցուն (առաւօտեան ժամերգութենէ) ,, զարևագալնն նուագել սաղմոս. զոր՝ եղիցի անուն նմա ,, ասել սկսեալ են ի ժամնանակացն եղբի կթղկոսի ։ Այս հայի և այն, զոր գրէ նա բնքն յովհան իմաստասէրն՝ ի քաղ- ուածս մեկնութենէ ժամակարգութեց, յասելն. * Ո՛վ նիկ փառս ի ,, բարձանցն՝ եղիցի ասեն. զոր կարգեալ է նմա եղբն հայոց ,, կաթուղիկոսի. որ նկատապրն խորհուրդ իմաստիցն աշա- ,, կերտաց նմա ։ լուծ։

Այս ժողովոյն կարնոյ՝ բազումք ի հայոց բնակելոց ի մասն բաժնի յունաց ըստ նմա միաբանելով ընդ յոյնս՝ փոխեցին զծէսս իւրեանց ի բոլմ իրս, և մանաւանդ յերիս. նախ՝ զի զհայ նուիրացն խմորոյն առնէին, և՛ ի բաժակն ջուր խառնէին. երկրորդ՝ զի զտօն ծննդեան կատարէին ի դեկտեմբերի. 25. ևրդ՝ զի զնր աճն երգէին առանց խաչեցարի ։ Այս այս- պէս առնելով սոցա՝ հետուն պատճառս վերստին բաժանման. զի բազումք ի հայոց բնակելոց յայնմ մասին, որք ոչ կա- մէին փոխել զծէսս իւրեանց, ընդ այս գործ այլոց ծանրա- ցեալ և գժգոհեալ յետս կացին նաև՛ ի դասանուէ և՛ ի միա- բանութէ յունաց. և մերժեցին զարձեալ զնր ժողովն քաղ- կեդոնի. որոյ աղագաւ անկաւ խտրուն ի մէջ նոցա, այնպիսի օրինակաւ՝ զորպիսի տեսանեմք և՛ ի ձիկս մեր ։ Այլ որք ըստ ծիսի յունաց վարէին, իշխանութէ նոցա պարծելով՝ ձեռամբ նոցին՝ ի վէր այլոց բռնանային և նեղէին զնս ։ Յակ բնակիչք մեծին հայոց ընդ նախնի իւրեանց սովորութէ գնալով յայսմ մա- սին չունէին յայնժամ այնչափ ինչ շփոթութի. Թէպէտ ի նո՛ա սկսան ոմանք՝ ի տեղիս տեղիս քանալ դուռն խռովութէ՝ ի վր այս. որ և զկնի սակաւուց առաւել սաստկացաւ. ոմն ու- նիմք գրել՝ ի ստորև ։

ԳԼՈՒԽ ՃԾԶ։

Պաղափա գործոյ սմբատայ մամիկոնէի՝ ի սպանանել նը զիշխանն պարսից՝ զսուրէն, զդեհերան, և զվէրդոանդ։

Մամիկոն ։

ԱՅ. Ըրպէս ասացաք ի գլ. Ճ. սմբատ որդի գայլ վահանայ մամիկոնէի յետ հարկանելոյ զվախտանգ պարսիկ՝ եդեալ էր ի դիպահոդ զկին և զորդին նը յամուրն, որ կոչիւր այծից բերդ։ Այս կին ի ձիկս շինծուածէ պատերազմաց անփոյթ եղեն զնմանէ պարսիկք, սուրէն իշխան եղբայրն վախտանգայ այր հեզաբարոյ՝ որ հանապազ սուգ առնոյր վը մահու եղբօր իւրոյ, կամելով հնարիւք ինն զերծուցանել զկին և զորդին նը ի ձեռաց սմբատայ, խորհեցաւ տանիլ առ նա ընծայս մեծամեծս, երիվարս ընտիրս, {627} {ՀՇ} ջորիս և ուղտս, և նաւիւք հաձեցուցանել զմիտս սմբատայ. և իբր գնով առնուլ զդերեալ վտառանդեան. բայց զի մի վտանգ ինչ դիպեսցի նմա, էառ ընդ իւր և հինգ հարիւր այր. և եկն յԱծն տսրմոյ յամին՝ յորում մեռաւ խոսրով, և նստաւ կաւատ. և պատգամաւոր արձակեաց առաջի իւր առ սմբատ՝ ծանոյց նմա զպատճառ գալստեան իւրոյ։

Այս լուեալ սմբատայ՝ թէպէտ և հաւատաց քանիւց նորա, բայց առ անկասկած ինալոյ՝ պատրաստեաց և ինքն զզօրս հազար զօրս՝ ի գիւղաքաղաքն մեղտի. և պատուիրեաց նոցա կազմ և զգոյշ կալ. զի թէ դաւ ինչ գործեսցի, ի թիկունս հասցեն։ Այս ինքն եւ խաղաղութիւն ընդ առաջ սուրէնայ. և պատուհով ընկալեալ՝ էած զնա յաւանն իւր ի մուշ. և հրամայեաց, զի զօրք նը կացցեն յանտառս վանայն՝ զոր արտից գեղ կոչէին. և միայն հինգ հարիւր արանց նորա թոյլ ետ մտանել ընդ նմա ի մուշ։ Իսկ սուրէն յետ կալոյ անդ զաւուրս ինչ՝ խնդիր արար եղբօրորդւոյ իւրում առաջի սմբատայ և ծառայից նը, թէ ուր իցէ. և յասել նոյ՝ թէ յայծից բերդն է, ասէ ցնա. անդ այծարած է՝ թէ դիւաբած։ Այս սմբատայ ժպտեալ ընդ բանսն՝ հրամայեաց երթալ բերել զեղբօրորդին նը և զմայր նորին առաջի իւր։ Իբրև ածին զնա, ասէ սուրէն ցսմբատ. իշխանդ հնգօր տուս զսոսա ինձ ի պարգեւս։ Ասէ ցնա սմբատ. առն պարսկի և ոչ անասուն մի տամ առանց գնոյ, թոյլ թէ զսոսա. իսկ թէ դու կամիս առնուլ, հատո զգին դը. ապա թէ ոչ՝ երկոքեան և գնասցեն վերստին յայծից բերդ՝ այծս արածել, և բերդին ծառայել. և կերիցեն անդ զհացս իմ ձրի։

Ա.ՀՐ սուրբն քանզի էր այր խորագէտ, ետ պինդ, և ասէ. Թէև զշուն դարպասիդ տայիր ինձ արածել, այն պատիւ էր ինձ, զի կային ի դրան քումմ, Թող Թէ հովուել զայծիս. բայց Թէ հաձոյ իցէ քեզ, սո՛ւր ի միջոջ զընծայս, և տո՛ւր ի պարգև զկինս զայս և զմանուկս։ Ա.ՀՐ ամբառ պինդ արաբեալ՝ ասէ. այդ՝ զոր ընդ քեզ բերեր, մեր է. իսկ Թէ ինձ քեզ պիտոյ են, դու քրիստոնեայ լեր, և միրտեաց, և ինձ քեզ. ապա Թէ ո՛չ՝ զայլ հնարս խորհեսջիք ձեզ։ Կնացեալ անտի սուրենայ՝ եբեր զբսակս դրամոց. և ետ ածել զուլտան և զձիս. և ցուցեալ ամբառայ՝ ասէ. ահաւադիկ ունիմ ընծայք իմ, և չունիմ զայլ ինչ ընծայել քեզ։ Ա.ՀՐ ամբառ զայլ ինչ ի միջ արկեալ՝ ասէ. հաւանեմ ընծայիցդ. բայց ուստի առից զորս անկին տալ պարսիկք, յոտնակոխ առնել նոցա զերկիր իմ, և յաւար առնուլ զբաղում աւանս, և յայրել զդիւղս, և այլ ինչ բազում. զայն Թող տան, և դու ևս լեր քրիստոնեայ. և

դոքա քեզ։

Ի. Այս լուեալ սուրենայ՝ տխրեցաւ յոյժ, և գնաց յօթևանն իւր, և եկաց անդ տրտում զերիս աւուրս. և ոչ գտեալ զայլ հնարս՝ խորհեցաւ բռնութիւն առնուլ զոր լանդրեր։ Կոչեաց Թուղթ և առաքեաց առ զօրս իւր, որք էին յարտից գիւղն. և պատուիրեաց նոցա պատրաստիլ, և ի վաղիւ անդր յանկարծակի յարձակիլ ի մուշ։ Յակ ամբառ ոչ գիտացեալ զայս՝ առաքեաց զսուրհանդակ իւր առ սուրէն՝ կոչել զնա։ Նա ի գնալ սուրհանդակին՝ պատահեցաւ ի ձանապարհի առն այնմիկ, որ տանէր զԹուղթն։ Կարդաց ինքն՝ ուրախ դնաց. և նոր այլագունեալ՝ սկսաւ այլ ևս այլոց բանս խօսիլ։ Մտիպեաց գնաց սուրհանդակին՝ ասել զտոյնն. և նա բարկացեալ եհար յերեսս սուրհանդակին. յայնժամ և սուրհանդակն ատս արձակեալ՝ եհար գնա և ընկեց ի գետին իբր կիսամահ. և գտեալ ի ծոց նր զԹուղթն՝ կտակածեցաւ և եբեր զայն առ ամբառ։

Իբրև խնայաւ ամբառ զմիտս սուրենայ՝ առաքեաց առ նա զմի ի ծառայից իւրոց դաւաճանութիւ, և ասէ. մի հոգար, և մի ինչ տրտմիր. ըստ կամաց քոց առնեմ զամենայն. և արդ՝ եկ դու, և երդիցո՛ւք յուխտ ի վանան՝ զոր շինեաց հայր իմ։ Նա ապա յղեաց պատուհէր առ վարազ իշխանն պաղտնեաց, զի զզօրս իւր դիցէ ի դարանի ընդդէմ զօրացն պարսից։ Նա իբրև եկին սուրէն, առեալ սմբատայ զկինգ հարիւր այր ի զօրաց իւրոց, և զկինգ հարիւր զօրն սուրենայ, էանց ընդ նմ յայնկոյս գետոյն արածանւոյ հանդերձ կնաւ և որդւով վախճանեցաւ։ Նա ի մերձենալ ի տեղի վանացն՝ իջեալ յերիվարէ՝ գնայր հետ ինքեանք միայն. իսկ պաշտօնեայքն

տեղ-

տեղւոյն ըստ առաջ եւեալ նոյ՝ արգելուին զամբաստ վէն սուրբ-
նայ . չէ ասեն օրէն առն հեթանոսի մտանել յայս տեղի ։ Ա-
ւետ ամբաստ . եթէ պարսիկք վայրացս չեն արժանի , ապա և ոչ
կենայ ։ Օ այն իբրև ասաց նա , վարազ իշխանն պալատնեաց
ըստ ակնարկելոյ ամբաստայ դիմեալ ՚ի վէր սուրբենայ՝ եհար
սրովն , և սպան զնա . սպան և զորդի և զկին վախտանգայ
որք ընդ նմա ։

Ա՛ւ առտա դիմեալ երկոցունց հանդերձ հինգ հարիւր զօրօք
՚ի վէր հինգ հարիւր արանցն սուրբենայ՝ վարեցին մինչև ՚ի տե-
ղին՝ ուր էին դարանամուտքն . և ՚ի մէջ առեալ կոտորեցին
զամենին ։ Ա՛ւ անտի առաքեալ ամբաստայ զմի ոմն ՚ի մեզտի
առ ջորս հազարն՝ պատուիրեաց նոցա , զի յարձակեսցին ՚ի
վէր ջորս հազար զօրացն սուրբենայ , որք էին յանտառս վա-
նայն ։ Ա՛ւ ինքն ոչ սպասեալ գալստեան նոյ՝ գիմեաց ՚ի վէր
գնդին պարսից , և վարազ իշխանն ընդ նմա , հանդերձ հինգ-
հարիւրօքն ։

Տեսեալ ամբաստայ ՚ի հեռուստ զղօրավարն պարսից՝ յարձա-
կեցաւ ՚ի վէր նր . և ՚ի հարկանել զնա՝ վրիպեալ սրոյն՝ դի-
պաւ ՚ի պողպատեայ Թամբ երիվարին , և բեկաւ . և ձեռն
նր ընդմայեալ մնաւ , և ոչ կարաց զբեկեալ սուրն փոխել ։
Իբրև զայն տեսին Թիկնապահք զօրավարին , ձայն բարձին ,
և ասեն . կապեցաւ զնա ոմն իւր , և եբեկ զսուր նր , և պա-
տեալ զնովաւ՝ հարկանէին զնա . և նա բեկեալ սրովն վաներ
զբաղխմունս սուսերաց նոյ ։

Յայնմ վտանգի եհաս անդր վարազ իբր չսթարեալ . և մխեալ
զնիզակ իւր ՚ի Թիկանց միոյ ՚ի հարկանողացն՝ անցոյց ընդ
լանջ երիվարին նր , և ոչ կարաց հանել անտի . և ձգեալ զը-
սուսեր իւր՝ զերծոյց զամբաստ ։ Իւեալ սմբատայ վազվզակի
՚ի պատերազմէ անտի՝ կալաւ և սրկեաց ձախու ձեռամբ զմի
ոմն ՚ի զօրացն պարսից . և ետ զենուլ զնա ՚ի վէր աջու ձեռին
իւրոյ . և ՚ի ջերմութենէ արեանն և ՚ի խոնաւութենէն արձա-
կեալ մատանցն՝ ընկեց զբեկեալ սուրն ՚ի ձեռաց իւրոց , և
եառ զայլ սուր . և հեծեալ երիվար մի՝ եհաս առ վարազ ։ Ա՛ւ
քզլն յայնմ վայրի երիվարն վարազայ ընկալաւ վէրս և տկա-
րացաւ , զայն տեսեալ պարսից՝ պաշարեցին զնա ։ Ա՛հաս
սմբատ անդր , և վանեալ զպաշարօղսն , և սպանեալ զմի ՚ի
նոցանէ՝ առ ցվարազ . արի հեծոյր յերիվարդ պարսից ։ Ա՛նմին
պահու ժամանեաց և Հաշտենից իշխանն սմբատ գնդաւ իւ-
րով . որոց շուրջ փակեալ զպարսիկն՝ կոտորեցին զբազումս ՚ի
նոցանէ , և զինացեալսն արարին փախստական ։

{629 հն}

Յայնմ ժամի ՚ի մեռանիլ կաւատայ , և ՚ի Թիֆլիս ար-
տաշրի մանկան , և ապա խոռեմայ զօրավարի , զորոց յիշե-

Ա. Մկ. գլխ. և հայոց {629} ՀԸ

ցաք ի վերոյ, յորժամ վերադարձեալ էր բովանդակ ՚ի պարսից, դունդ մի մեծ ՚ի զօրաց նոցա՝ ոչք կային ՚ի պահպանութիւն ՚ի սահմանս յունաց, կամեցեալ դառնալ ՚ի պարսս՝ կէաք ՚ի նոցա անցին ՚ի միջագետս հանդերձ զօրավարաւ իւրեանց՝ որ կոչիւր վերդուհր, և կէաք՝ որոց զօրավար էր դեհրան կամ տիպրան անուն, ձնռերկ արսրկին յՅեն հայոց. և զի սա էր այր խորհուրդ, և դառնացեալ էր ընդ տունն մամիկոնեանց, ՚ի հասանել իւրում մեծ ՚ի տարոն, պատրաստեաց առաքեաց առ սմբատ՝ զօրաց իւրոց ՚ի պաշար ձնռերկն. նաև զնշխարս ոսկերաց մուշեղայ. և թէ ոչ՝ պատրաստեալ է ՚ի պատերազմ։

Օ այս իբրև լուաւ սմբատ, գնաց փութանակի ՚ի վանս սրբոյ կարապետին. և խնդրեալ աղօթս ՚ի կրօնաւորացն՝ ետ բերել տանն սուսերս, և եդ զնա առաջի սեղանոյն. և արտասուօք աղաչեաց զնա, զի միջնորդութիւն սրբոյ կարապետին զօրացուսցէ զբազուկս զօրաց իւրոց, և հատուս արասցէ ընդ սուսերս նոցա։ Եւ ապա ժողովեաց վաղվաղակի արս տանն հազար. և էջ ՚ի հաշտեանս ՚ի գեօղն, որ կոչիւր գրեհ։ Եւակ վահան կայեալ առ դեհրանայ զառուրս ինչ՝ իբրովք հաճոյական քանիք որոացաւ զսիրտ նորա, և արար զինքն նմա սիրելի. և առ երեսս հաւանեցոյց զնա՝ խօսիլ խաղաղութիւն ընդ սմբատայ. և որդի դեհրանայ այնչափ ընտանեցաւ և բարեկամացաւ ընդ վահանայ, մինչև համարիլ զնա իբրև զիւր հարազատ եղբայր, և կալ և ննջել ՚ի միում վրանի հանդերձ երեք իշխանօք։ Եւ ՚ի քուն հնարս խորհեր վահան կատարել ընդ զօրան պարսից, դրեաց առ սմբատ, զի պատրաստեսցէ հարիւր ջորիս, և երկու հարիւր կաշեայ ասպարս մեծամեծս. յորս խնդ ցցեալ երկաթ սուր յայսկոյս և յայնկոյս։

Եւակ դեհրան՝ որ ՚ի սրտե խորհեր դաւաճանել զսմբատ, և ընդ նմա զմիաբանեալսն ընդ նմ, բաժանեաց զզօրս իւր. զուարթն հազարան առաքեաց ՚ի քարապլուխն, որ հայի հանդէպ լերինն տարոնոյ. և զերկոտասան հազարան առեալ ընդ իւր՝ էջ ՚ի հոնընկէցն. և յղեաց ընծայութիւն պատգամաւոր առ սմբատ՝ դնել ընդ նմ դաշն խաղաղութ, և ասէ. Ե՛կ առ իս, և մի երկնչիր. և տաց առնել զքեզ մարզպան հայոց. միայն թէ տուր ինձ զմանն ինչ նշխարացն մուշեղայ, և դայլ վահա-

նայ, զի տարայց յԱն իմ, և մեղմացին սիրտք պարսից՝ ի վերայ
չարեաց ձերոց։

Լուաք ամենայն իմացեալ զմիտս դեհրանայ յաղթարարուէ վա-
հանայ՝ կալաւ և կապեաց զպատգամաւորն։ Եւ մինչդեռ
ակն ունէր դեհրան գալստեան պատգամաւորին, յայնմ դի-
շերի յարուցեալ վահանայ՝ ի մահձէ իւրմէ՝ եհատ զգլուխ
որդւոյ նր, յորժամ՝ ի քուն էր, և զերկոսին իշխանացն՝ որք ընդ
նմա։ Եւ առաւօտ գաղտ մտեալ առ դեհրան՝ սպան և զնա, և ե-
հատ զգլուխ նր. և առեալ զնոցունց գլուխն՝ եդ՝ ի մա-
խաղս, և եկն երկու ծովիւք իւրովք առ ամբաստ։ Եւ առեալ
զհարիւր ջորիսն՝ զորս պատրաստեալ էր ամբաստ, երկու եր-
կու ասպարօք ի խաեղովք ասաի և անտի՝ գնաց հազար արամբք
ընդ գաղունի ձնպէրհ՝ ի վերայ ուխտն հաղորացն, որք՝ ի քարաքլուխն
էին. և ամբաստ զօրօք իւրովք զկետ նր։ Եւ իբրև մերձ եղև
վահան՝ ի տեղի անդր, մինչչև լուսացեալ էր, հրամայեաց
յանկարծակի խմբել զջորիսն, և վարել զնա տագնապաւ՝ ի
վեր պարսից, և հնչեցուցանել զիոզան։ Այն ձայն առպարաց
քաղքենոյ՝ և փողոյն հնչելոց զգհի հարեալ զօրացն պար-
սից՝ շիոմեցան յոյժ, և կարծէին՝ թէ բիւրաւոր զօրք հայոց
հասեալ են՝ ի վեր։ Եւ յորժամ նք շուարեալ աղաղակէին,
հասեալ հայոց անդր՝ սուր եդին՝ ի վեր նց, և սկսան կոտորել
զնս. և մնացեալոցն փախստեայ լեալ՝ գահավէժ եղեն և կո-
րեան. և ոմանք անկան՝ ի քուն քանակն դեհրանայ. և եղև
աղմուկ մեծ։

Դիմեցին՝ ի վրանն դեհրանայ և որդւոյ նորա, և գտին զնս
մեռեալ. յիմարեցան առ հասարակ և շիոմեցան. և քար-
կուածք լցեալ՝ յարձակեցան՝ ի վեր հայոց։ Եւ ամբաստ ընդ ա-
ռաջ նոցա չորս հազարաւ՝ եդեալ նախ՝ ի դարանի զվեց հա-
զարան։ Եւ իբրև մօտ հասին պարսիկք, սկսաւ փախչել ամբաստ.
և՝ ի պնդիլ նց զհետ ամբաստայ՝ դարձաւ ամբաստ ընդ կրունկն.
և դարանամուտքն յարձակեցան զկնի. և՝ ի մէջ առեալ զզ-
պարսիկս՝ արարին կոտորած մեծ. որոց և զբնչմն գեաւակուր
կորուսին. և ապրեցան միայն հազար և քառասուն ոգիք.
որք փախուցեալ անկան՝ ի կողմանս մծբնայ. և հասեալ առ
վրդուհր զօրավար՝ որ տակաւին յայնոսիկ կողմանս էր գնդաւ
իւրով, պատմեցին նմա զկրան։

630 ՃԼ. Ընդ այս յանձնարինս սրտմտեալ վրդուհրայ՝ փու-
թանակի դարձ արար և դիմեաց իբրև զայրագին գազան՝ ի
տարան։ Հաղվեալ յայնժամ և ամբաստայ զնմ զօրս իւր,
և զզօրս իշխանացն պալունեաց, հաշտենից, արծրուց և այ-
լոց, եդ՝ ի դարանի զերկոտասան հազարսն՝ ի կողմանս դաշ-
տին մատրավանից։ Եւ գնացեալ հանդերձ որդւով իւրով

վահանաւ ՚ի վանս գլակայ՝ խնդրեաց յառաջնորդէն , զի ամ
կրօնաւորք վանացն եկեսցեն ընդ իւր ՚ի պատերազմ՝ օգնական
լինել աղօթիւք . և էին նոքա առհասարակ երեք հարիւր և
ութսուն ոգիք ։ Եւ էառ ամբատ ընդ տանն այր ժամնահար
մի , և խաչապրկեմ բարձր . և եկեալ հանդերձ նոքօք , և
վեցհազար զօրօք յելոյ արածանւոյ՝ ՚ի մեղրագետոյ՝ ձակա-
տեցաւ ընդէմ պարսից . և կարգեաց յառաջոյ զկրօնաւորան
՚ի մի շար ուղղափիծ ։

Եւ իբրև ժամ եղև դրգռելոյ պատերազմին , կրկնեցին ան-
դէն միանգամայն կրօնաւորք ծուխր . և խնդրեալ յՅիսուս զօ-
նութիւն՝ եդին ամենեքին զկնգուղս իւրեանց ՚ի գլուխս , և
կանգնեցան ՚ի միասին յոտս . և յանկարծակի հարին զժա-
մահարսն . և որս և զօրքն գոչեցուցին զփողսն ։ Այն տե-
սեալ պարսից՝ ապշեցան և երկեան . և ՚ի դիմել հայոց ՚ի վր
նոցա՝ շփոթեցան և փախեան ՚ի մեղմն . և ամբատ էանց ՚ի
գեօղն , որ կոչիւր պարսկագէմ . և եդ զկրօնաւորան անդ՝ կալ
յաղօթս առ Յն . և ինքն ել զօրօք իւրովք ՚ի դաշտն մատ-
րաւանից ։ Յոկ պարսիկք ոչինչ գիտացեալ զդարանամտիցն՝
դիմեցին ՚ի դաշտն . և որք ՚ի դարանի էին՝ յարձակեցան ՚ի վր
նոյ ։ Այնմ վայրի խշհանն պալատնեաց վարազ հանդերձ որդ-
ւով իւրով ամբատաւ հատեալ զմի թեւ ձախակողման ձակա-
տուն պարսից՝ առաջի էտրկ զհատուածեալսն . և հալածա-
կան արարեալ՝ կոտրեաց զբիշմն ՚ի նոյն ։ Նոյնպէս և իշխանն
արջուց գորդ անուն բեկեալ զաջ կողմն գնդին պարսից՝ եհար
զբիշմն . որով առաւել ևս զօրացեալ զօրացն հայոց՝ սաստկա-
ցուցին զսպատերազմն . և հատուցին անչնարին հարուածս
պարսից . և պնդացեալսն արարին հալածական . այլ անկան և
՚ի հայոց բազում արք կորովիք ։

Յոկ գունդ մի ՚ի պարսկականն զօրաց իբրև չորս հարիւր ութ-
սուն ոգիք՝ փախուցեալ անկան առ կրօնաւորան . և աղաչէին
զնոսա առնուլ զինքեանս ՚ի ներքս և պահել , երդմնեցուցեալ զնո
՚ի հաւատս նոյ ։ Եւ յորժամ առին ՚ի ներքս , դիմեցին անդր
զօրք իշխանին հայոց , որք զհետ մտեալ էին նոյ , և ա-
սէին . ուր գնացին պարսիկքն ։ Եւ նոքա թէպետ և ծանուցին ,
թէ առ ինքեանս են , բայց ոչ ետուն ՚ի ձեռս նոցա ։ Եւ իշ-
խանն հայոց յուցեալ պարսից զմարդասիրութիւն՝ արձա-
կեաց զնոսա գնալ յերկիր իւրեանց ։ Եւ այս եղև յերկրորդ ա-
մի կէսդկուէ եղև . յորում ժամի թիկրեաց ՚ի պարս խոս-
րով երրորդ . որ և տեղեկացեալ նմա անցից և կոտորածի
պարսկական զօրուն յերեսաց վահանայ և ամբատայ՝ կամե-
ցաւ վրէժ խնդրել ՚ի նոյն . այլ չեղև ձեռնհաս առնել ինչ .
զի յետ թագաւորելոյ ամիսս երեք՝ սպանաւ յիւրոց անտի .

նոյնպէս

նոյնպէս և առաւօտեայ յաջորդք նոր ։

Է. Այս իբրև էառ զՅիշատուածն պատուոյ յաղկերտ վերջինն՝ Թոռն խոսրովու երկրորդի, երկուցեալ ամբաստայ յերեսաց նոր՝ խորհեցաւ առնել խաղաղութիւն ընդ նմա. զի այլազգիք բնակք որք զօրացեալ էին, ձեռնտու էին նմա ։ Այս ըզի իշխանն վրաց վաշտէ՝ եր յայնժամ՝ի պարսս, և եր բարեկամ արքային, միանգամայն ունէր և սէր ընդ տանն ամբաստայ, միաբանեալ նոր ընդ իշխանին սիւնեաց՝ ջանայաւ խաղմք, և արար հաշտութիւն՝ի մէջ ամբաստայ և յաղկերտի. և ինքն դարձաւ յՅ իւր ։ Այլ զկնի ասկաւուց՝ կարծիս գաւազանութեան առեալ ամբաստայ յարքայէն, գաղտ դեսպանս արձակեաց առ հերակլ կայսր, և բանս եդ ընդ նմա՝ օգնականս և նիզակակից լինել ընդեմ պարսից ։ Այս հերակլն սիրով ընկալեալ զպատգամն նոր՝ խոստացաւ նմ՝ մեծամեծս, և գրեաց զնա բարեկամ ինքնակալի և ասպետ. և զորդի նորա զվահան անուանեաց պատրիկ ։

Օ այս լուեալ վաշտեայ իշխանին վրաց՝ որ ընդ այն ձիկս թշնամացեալ էր ընդ յոյնս, զայլայլաւ յոյժ ընդ գործս ամբաստայ. և՝ի ծածուկ պատրաստեալ զօրս իբրև հինգ հազար՝ի ձեռն որդւոյ իբրոյ ջոջկայ՝ եդ՝ի դարանի. և ապա գաւազանեալ թշ գրեաց թոռլթ սիրոյ առ ամբաստ և առ վահան՝ գալ յՅն վրաց, և յանդիման լինել միմեանց իբրև սիրելի բարեկամս ։ Այսակ քեռորդի վաշտեայ համամ անուն գիտացեալ զնենգութիւն քեռորդի իւրոյ՝ զգայցյց զայն ամբաստայ՝ի ծածուկ, և զգուշացոյց զնա ։ Այս ամբաստայ գրեալ պինդ առ վաշտե՝ յերեսս եհար զնենգութեն խարհրդոյ նորա, և յամօթ արար զնա յոյժ բանիւք ։

Իբրև գիտաց վաշտե, թէ համամայ է ծանուցեալ զնենգութիւն իւր՝ ետ ածել զնա առաջի, և եհատ զձեռս նր. և ոչ այսուհիկ շատացեալ՝ գնաց՝ի քէզ նր՝ որ կոչիւր տամբուր, և պլուեաց զայն հրով. և կոտորեաց զբազումս անմեղ մարդիկ որ՝ի նմ, և զնմ քահանայս. սպան անդ և

նդ ։ Այս մինչդեռ կայր նա՝ի գաւառն քաղաքին, յանկարծակի մ[illegible]թայան երկինք. և իջեալ կայծակն՝ի վր նր՝ սպան զնա ։ Այսակ համամ ետ նորոգ շինել զքաղաքն, և բնակեցաւ անդ. յարմն և կոչեցաւ տեղին այն համշէն, այն է համամաշէն ։ Այսակ ինքն ամբաստ կեցեալ այլ ևս աման ինչ՝ մեռաւ խաղաղութիւն յերկրի իւրում. և էառ զիշխանութիւն նր վահան որդի նր, որ՝ ոմն ասացաք՝ի մօր կողմանէ կամենարական կոչիւր ։ Այս պատմութիւնք զորս աւանդեցաք՝ի վր տանն մամիկոնէից, սկսեալ՝ի գործոց գալ վահանայ, ընդարձակ գրին՝ի գիրան յովհաննու մամիկոնէի, որ ասի լինել ծմակաւից վա-

հանապ կամնարականի ։ Այլ զի բազում առաստիլք խառնեալ են յայլոց յայն գիրք՝ հանդերձ շփոթութիւնք ժամագրութիւնք, ըստ կարի զտեալ մերն՝ այսչափ ինչ մարթացաք առուգել և դնել համեմատութիւնք բանից Ճառընտրաց ։ Այլ զայսցանէ տես ի ծանօթութիւնն մեք դարձցուք այժմ ի կարգ պատմութեան մերոյ յաւուրս իշխանութեն վարազտիրոցայ բազբատունւոյ ։ (1)

ԳԼՈՒԽ ՃԻԳ։

Յաղագս փախստեան վարազտիրոցայ, և հիւրասիրութենէ նորա և դառնի և ամբաստայ, և զօրավարելոյ ընդդէմ ոստանին պոլսոյ. և յարչակման հափարացոյց ի հայս. և հալածութենէ նեղսեան զինուորի, որ սպան զինուպերդր ծաղկեալ դռնոյ ։

ՅՈՎՀ. ԿԱՄՍ. ՊԱՏՄ. ։

631 ա

Ոստոմ ումն անուն՝ պարսիկ, այր հզօր, մարզպան ատրպատականի՝ յոր ատրպետեանն ծին, կամեալով ունել և զմարզպանութեն ծին հայոց, պէսպէս հնարիւք ջանայր տալ ընկենուլ զվարազտիրոց յիշխանութենէ անտի, և ինքնին վարել զայն ։ Այլ իբրև ոչ կարաց հասանել փափաքանաց իւրոց, տեսեալ թէ խառնեալ յուզի թագաւորութեանն պարսից, խորհեցաւ ապստամբիլ ի նոցանէ, և յարձակիլ ի վէր հայոց ։ բայց այսմ ևս անբաւական գիտելով զինքն՝ հաստատեաց ի մտի դաւով սպանանել զվարազտիրոց, և այնու ձեռնհաս տիրել ի վերայ հայոց ։ Ամին իւրի բազմոց քիմ ինչ խոստանալով՝ թաքոյց նմ որոգայթ մահու ի ձեռն ումանց ի հայոց ։ Ոյս զգացեալ վարազտիրոցայ, և երկուցեալ թէ գուցէ յանպատրաստի գտեալ՝ նենգութեամբ սուսակապատ արանց սպանցի, եառ զնմ ընտանիս և զաղխս իւր, և ել յծին հայոց, և գնաց առ կայսրն հերակլ ։ և ընկալեալ եղև ի նմ պատուով, և քնակեցաւ յաշխարհին յունաց, յետ կալոյ ի մարզպանութեն ամս ե ։ Ոսկ ոստոմ ոչ միայն չկարաց հասանել այնմ պատուոյ՝ զոր խնդրեր, այլև յիւրումն իշխանութեան վտղովեալ սասանեցաւ՝ յաղմկիլ ծին ատրպատականի, և ի խախտիլ թագաւորութեն պարսից առ հնար կ. ամ տեսցի արդ ։

622 / Գիմ

Իբր տասն ամօք յառաջ երևեալ էր յանպատրաստին առաքեայ՝ ի գառ քառէսին զարմէ՝ առաջին ամիրապետ հագարացւոց մուհամէտ, որ և մահմէտ, որդի ապտուլլահայ որդւոյ մաթալլահայ ։ Ա՛ս յետ մեռանելոյ հօր իւրոյ՝ սնեալ

առ

առ հօրեղբարս իւր, որոց անուանքն էին ապուԹալէպ, ապ-
ասպաս, և Համզա, Հանդերձ մարդն՝ որ կոչիւր Եմինէ, էառ
իւր կին զԱնԹիԽէ, և ապա զայլ զդուստր ապուպէքիրայ,
և զԱիշա զդուստր Էօմէրայ. յորոց ծնան երեք ուստերք,
այր են՝ քասիմ, դաՀիր և իսլաՀիմ. և չորք դստերք, այր են՝
բուքիե, վէյնէպ, Հիւմմիւկիւլսում և ՖաԹիմա. յետ մահու-
ան իմոյ ՖաԹիմա միայն՝ ծնեալ յայշէէ. զոր և ետ՛ի կնու-
ալիին որդւոյ հօրեղբօր իւրոյ ապուԹալէպի. յորմէ եղեն
Հասան և Հիւսէն։ Այլ ինքն լեալ երեսելի՛ի կողմանս մէք-
քէյի և մեծինէի՝ զօրացաւ յոյժ. և քարոզեաց զանձնէ յայ-
առաքեալ և օրինադիր, ունելով միաԽոՀ ընդ իւր զջորեսին
այս երևելիս, զապուպէքիր զաներ իւր՝ զկոչեցեալն սա-
մըք, և զալի զփեսայ իւր, և զօսմանն և զԷօմէր. ընդ որս և
զսէյիտ ապուՀալըԹ զՀաւատարիմ իւր, և զայլս. որովք
առաւել ևս զօրացեալ՝ տիրեաց բազմաց՛ի կողմանս արա-
բիոյ, և մեծացաւ յոյժ յիշխանութենէ իւրում. և յետ տասն
ամաց մեռեալ Թաղեցաւ՛ի քեաաբէն մէքքէյու յամի իբր
631. Ձ։ Այլ յայնմ ամի՝ յորում երևեցաւ նա առաջինն իշ-
խան, սկիզբն առնու ԹուՀանութենի ազգի նորա զՀԱնա-
լասնոյ. Թէպէտ ոմանք դնեն՛ի մահուանէ նորին։ Յաջոր-
դեաց նմա յիշխանութենէ նորին ապուպէքիր՝ խալիֆայ կոչմամբ,
և այլք զկնի. որոց աԹոռ փոխադրեցաւ նախ՛ի դամասկոս՝
որ է շամ, յամի իբր. 640. ձԾ. կամ ըստ այլոց՝ յամի իբր. 679.
Ճիլը. և ապա՛ի բաղտատ՝ յամի իբր. 753. մԾ։ Այլ զյա-
ջորդութենէ ոտից, զոր բազում բազմօրինակ դնեն, տեսցէս
՛ի վախճան գործոյս՛ի կարգս իշխանաց։

631 Ձ

631 Ձ

632 ձաա

Ապ՛՛ինատիլ ապուպէքիրայ, մինչդեռ՛ի խռովութեան էր Թիքրուի
պարսից, յայնկերտ ոմն Թուռն խոսրովու՛ի բնիկ ազգէ սա-
սանեանց՝ (զոր յիշեցաք՛ի նախընԹաց գլուխդ) ընկալեալ
զօրինս հագարացւոց, և բանս եդեալ ընդ նմա, օգնութենէ նոցա
զօրացաւ և դիմեաց յատրպատական ՚ց. և վանեալ անտի
զուստամ՛՛ և զայլս՝ Թիքրեաց լինքն՛ի վերայ պարսից, ըստ ա-
ւանդելոյ պատմութենէ արաբացւոց և ասորւոց առ ասսեման-
նեայ. Խոսր. Գ. Տաճ. Ե։ Այս ոմն ասի՝ եղեւ յամի ՚ռն.
632. Յունիսի. 16. ՛ի ԹուՀին հագարացւոց. ժաա. ՛ի 22.
աւուր ընկալ էվել ամսոյ. յորմէ հաշուի առ պարսիկս նոր
ԹուՀական, որ ասի յազկերտեան։ Ո՛կի սակաւ ամաց՛ի
մեռանիլ յազկերտի՝ Թիքրութենէն պարսից անկաւ խոպատ ընդ
իշխանութենէ հագարացւոց յամի ՚ռն. 637. ըստ հաշուի իս-
մայելի շաՀնշահայ արաբացւոց՝ առ ասսեմանեայ. և կիսի
յամի ՚ռն. 639. ըստ Թէոփանեայ և ըստ կեդրենեայ յոյն պատ-
մագրաց։ Այլ յայնմ հետէ կառավարիւր այն Թիքրութենի՛ի

ձեռն

ձեռն ոստիկանաց , զորս առաքէին ամիրասպետք հանդերձ զօրօք յՅն ատրպատական . և յայնց ժամուց հետէ պարսիկք ընկալեալ զայն օրէնս՝ կացին ի նմին ։ Ամանք աստանօր քա-
նի մի ամօք յառաջ դնեն զմահ յազկերտի՝ ի յամի . 632 .
զի կարծեն՝ թէ ի մահուանէ նր եղև սկիզբն յազկերտեան
ճոճականին . քայց զայս ոչ ուղիղ համարի ասելման՝ հայե-
լոյ ի քանս արևելեան մատենագրաց ։

Յեղինեան։ Ա՛ոաքնա։ Գ. Ի վերայ ելեալ Թէոդոսի պարսից՝ և ի մեկնիլ ի հայաս-
տանէ վարազտիրոցայ մարզպանի , զոր յիշեցաք ի գլխ. ա. եզր կաթուղիկոս հաւանեցուցեալ զինակարգսն՝ առաքեաց դեսպան առ հերակլ կայսր , և խնդրեաց ի նմանէ կայու-
ցանել զոք իշխան ՅՈՒյազգէ հայոց ։ Եւ կայսրն կոչեալ առ
ինքն զդաւիթ սահառունի՝ որ յառաջագոյն իակ գնացեալ
էր ի յոյնս , կացոյց զնա իբր ի գլխոյ իւրոյ կիւրապաղատ
ի վր հայոց . և նր եկեալ ի հայաստան՝ ժողովեաց քանի մի
զօրս , և բազում ինամովք կառավարէր զաշխն ։
Ա՛յլ մինչդեռ լրացեալ էր երրորդ ամ իշխանութե նր , նա- 634
խարարք հայոց անարգեալ գնան՝ գրգռեցին զզօրսն ընդ էմնր , ձգ
և հալածեցին զնա յաշխարհէ իւրեանց . և ինքեանք հակա-
ռակութե թշնամացեալք ընդ միմեանս , և նախանձեալք ընդ
պատիւ իւրեարց , սկսան զմիմեանս հալածել . որով և զՅն
հայոց՝ որ իբր յերկերիւր ամաց հետէ վրդովեալ էր , կրկին
վրդովեցին ։ Եւ ի յառնել թշնամեաց յայլեայլ աղգաց ի
բազում կողմանց՝ անդադարանութե իւրեանց չկարացեալ ըզ-
դեմ ունել նոցա , թոյլ եառն ասպատակաց առաւել և եղ-
ծանել զՅն ։
Տեսեալ զայսպիսի ալէտս թշնամութե Թէոդոսոս նախա- 636
րար ուշտունեաց՝ այր քաջակորով , ժողովեաց զօրս . և զ-
բաւարեալով նոցա ինքնին սկսաւ դիմակալ լինել հինից և աս-
պատակաց , և խնամել զաղգն ըստ կարի իբր մարզպան ։ Ա՛յն
ինչ զհետ լինէր Թէոդոսոս խաղաղութե Յն , բազմութիք զօ-
րաց ի հազարացոյց անտի արշաւեցին ի կողմանս ատրպե-
տանի . և արարին կոտորած մեծ . և ձգեցին զբազում յօրէնս
իւրեանց ։ Ալեթ և տասն հազարք ի նոցանէ դիմեալ հասին 637
և սփռեցան ի հայաստան յինքեանցոդ ամի կաթուղիկոսութե ձէ
եզրի , առաջնորդ ունելով իւրեանց զապստամբմանն ոմն ։ Եւ
նախ եկեալ ի կողմանս տարօնոյ՝ վեր ի վայր արարին զեր-
կիրն , և տարին զբազում ի թերան օրոյ . և խնդրէին ըզ-
տուրս և զհարկս , զմանկունս և զկանայս , և զայլ բազմ ինչ ։
Ա՛ոաքնա։ Ա՛ոմոնէ։ Ա՛ոաքնա։ Օ այն տեսեալ վահանայ կամսարականի՝ ժողովեաց զաւր
ուժն հազար . և առաքեալ դեսպան առ նախարարս հայոց՝
յորդորեաց զնա զինիլ ընդեմ թշնամեաց . այլ յոչ առնուլ նոքա

յանձն՝ առաքեաց զեղբայր իւր զտիրան և զմուշեղ զօրավար ուղեն հազարօքն՝ ի ստորոտ աւանին գրգրոյ . եկն ընդ տիրանայ և սահուռ իշխանն անձևացեայ զօրօք իւրովք . և գիմեալ՝ ի վերայ զօրացն այլազգեաց՝ ձակատեցան յանդիման նոցա ։ Ի սկանիլ պատերազմին՝ սահուռ անձևացն եղեալ ընդդէմ՝ ի բանակէն տիրանայ՝ խոռնեցաւ՝ ի հազարացիս , և յարձակեցաւ՝ ի վրէ հայոց . և սպառ կոտորած եղեմ ։ Օ՜այն իբրև եահս տիրան , չսպարեցաւ . և ոչ կարացեալ հանդուրժել՝ գիմեաց ամ զօրուքն՝ ի վրէ նոր . և ձգեալ զսուր իւր՝ եհար և ձեղքեաց զգլուխս նր , և սպան զնա . և ինքն ևս վիրաւորեալ՝ ի մահ՝ ի թիկնապահաց նորա՝ անկաւ և մեռաւ ։ Եւ հազարացւոցն՝ ի մէջ առեալ զզօրս հայոց՝ կոտորեցին զամենին . ընդ որս և զմուշեղ զօրավար . և սակաւք ոմանք՝ ողջ մնացին կենդանի, փախուցեալ յրտնէեցան ։ Ոմն տեղին՝ ուր եղև այս կոտորած, ասի՝ Թէ կոչեցաւ յետոյ սէր բանակ . զի ամբքին նոքա վն սէր հաւատոյ մարտուցեալ անկան ։

Գիմեալ ապա հազարացւոց յամ տեղիս տարմնոյ և ապահունեաց , և ևս և բաւենոյ և այլոց գաւառաց՝ յաւարի առին . յարձակեցան և յՅն վաղուրական և յՅն այրարատեան , և գործեցին բազում աղետս ։ Եւ Թէպետ Թէոդոսոս ուշտունի աձապարեաց զդէմ ունել ահագին արշաւանաց նոյ , բայց ա՜ նոգան . մանաւանդ զի ոչ եգիտ օգնականս՝ ի նախարգին հայոց . վն որոյ և ինքն կառեցաւ և ամիսս եցաւ յառանձին տեղի ինչ . և զոյ տկդեհուն այլազգեաց տարածեալ տոչորեցաւ համայն զՀայաստանեայս ։

Ի . Տեսեալ եղբն հայրապետի զԹշնամանսն ծիս՝ ի սուգ եմուտ . և ի բազում յաւոյ սրտի իւրոյ հիւանդացեալ՝ անկաւ ի մահիճս , և մնաւ , կալեալ զանձուն կաթուղիկոսութեան . Ժ . և ամիսս իբր . 8 ։ Եւ յորժամ կամէին հայք կարգել ի տեղի նր զայլ ոք կաթուղիկոս , ի նոյն աւուրս ի տրէմանոյ . ի . այն է ի նոյեմբերի . 28 . բազմունք զօրացն հագարացւոց յարձակեալ ի վրէ մեծի քաղաքին դունայ , յորում էր և հայրապետական աթոռն , պաշարեցին յամ կողմանց . և ի վեցերորդ աւուր ամենեքին յոռնվարի՝ յաւուր սբց յայտնութեան աւին զայն . և կոտորեցին անդ յանխնայ զերկոտասան հազար մարդիկ , և արբուցին զսուսերս իւրեանց յարեանս հաւատացելոց . այրեցին և զմեծամեծ ապարանս , և աւերեցին զվայելչուն քաղաքին . և ի գերուն վարեցին երեսուն և հինգ հազար ոգիս . և եղեալ գնացին ի կողմանս ասորեստանի ։ Օ՜այս յիշէ և դևտնեսիոս պատմիչ ասորւոց առ ասսեմանեայ . Է . 16 . և գնել լինել յամի սելևկիայեցւոց . 952 . որ է յամի տեն . 641 . փոխանակ գնելոյ միով ամաւ յառաջ ։

Յաւելիլ այսպէս քաղաքին դուննայ ժողովեցան նախաւորքն Հայոց անդր, և յորդորմամբ Թէոդորոսի ուշաւնուոյ յառաջ քան յայլ ինչ ձեռն արկանել՝ ընտրեցին կաթուղիկոս փոխանակ եղբն ընդհատ երրորդ զեղիկեան տայոց. որ յայնժամ էր՝ի քաղաքն անդ՝ի գումին։ Եւ նոքա զահի հարեալ՝ի կոտորածէ անտի և՝ի գերուէն՝ զոր արարին հագարացիքն, և տեսեալ թէ քաղաքն արեամբ շաղախեալ կայ, և դիակունք անկեալք դեռևս անթաղ մնալով՝ նեխեալ են, ոչ այլ ինչ խորհեր՝ի մոմ՝ բայց եթէ փախչիլ՝ի քաղաքէ անտի։ Ոչ այս իմացեալ Թէոդորոսի և այլոց նախարարաց՝ աղաչեցին զնա մի գնալ, այլ՝ յանձն առնուլ զնմանն եկեղեցւոյ, և հոգ տանիլ նմին։ Եւ յոմ աղաչանաց նոցա ոչ կարացեալ էգդէմ դառնալ ներսեհ՝ յօժարեցաւ ընդունիլ զկաթողիկոսութիւն. և իբրև նստաւ յաթոռ հայրապետութե, վաղվաղակի եհան ժողովել զբազմութի դիականցն անկելոց, և թաղել զնոսին ըստ օրինի քրիստոնէութե. և նորոգեաց զքաղաքն։ Եւ ապա եհան շինել՝ի նմին քաղաքի՝ի դումին զվկայարան սքանչ սարգսի, զոր այրեալ էին հագարացիքն։

64¹ Ղ

րի . բայց այս չերևի հաւանական ։ Այն և ոմանք՝ որք զբա-
նի մի ի շարականաց խորենացւոյն սմա ընծայեն ։ Այլն սո-
րա բազում աշակերտք . յորոց միւն եղև ստեփաննոս սիւնեցի
երկրորդ , ոչ ինքն աւանդէ . զորմէ ունիմք գրել ի գլ . կե .

Գ Լ Ո Ւ Խ · Ծ Ե ։

Յաշափս կայսրընդդուխե մծեցւոյ . և վէցերորդ ընդհանուր ժողովոյ . և պայազատուխե աղետից և ներսեհի . և հարուածոցն՝ որք եղեն ի հայս ի յոռնաց և յայլազգեաց ։

667 ՃԺԷ

Յովհաննէս Նաստաս ։ Օգոստ·ի 19· և 20։ Անաստ ։ և այլք ։

Ամն ։ Զամին ժամանակի կոստանդ կայսր Թոռն հերակլի դեգերէր ի սիկիլիա . քանզի այս այր միակամ դաւան յետ բազմապատիկ տառապեցուցանելոյ զուղղափառ քրիստոնեայս , ոչ և գնայս , և յետ բառնալոյ ի կենաց զբազում հայրապետս և վերուելի արս աքսորանօք և տանջանօք , յաւելեալ չարեայ ի չարիս՝ տալտկալն եղև հպատակաց իւրոց . յորոց և կասկածեալ՝ խոյս ետ ի սիրակուզա քաղաք սիկիլիայ կղզւոյն՝ հանդերձ իշխանօք ոմանք . և որս էր և մեծ գնուն . զոր յոյնք կոչեն միժիժ կամ միժիժինոս հայ . որ և յառաջն կարգեալ էր ի հերակլէ իշխան և զօրավար փոքուն հայոց ։ Զադարեալ անդ կայսերն ամս եօթն , եդ ի մոռ՝ զաթոռ կայսերութենն անդր փոխադրել . ամն իրի գրեաց ի կոստանդնուպօլիս , զի թագուհին որդւովքն հանդերձ եկեսցէ առ ինքն . բայց մեծամեծքն ոչ ետուն Թոյլ Թագուհւոյն երթալ ։

Ի յամել կայսեր ի սիրակուզա՝ յաւուր միում եմուտ նա ի բաղանիս . եմուտ և նիմ և միումն ի ծառայից նորա անդրէաս անուն՝ սպաս տանիլ նմ . և մինչդեռ լուծանայր կայսրն , առեալ անդրէասայ զանօթ ջրոյն՝ եհար աւժդին ի գլուխ կայսերն , և նոյն ժամայն եղ և փախեաւ անտի ։ Ոմանք որք արտաքս կային , տեսեալ՝ Թէ յամէ կայսրն ի ներքս , մտին առ նա , և գտին մեռեալ ։ Օ այն տեսեալ նոյ՝ նոյն ժամայն միաբանեալ Թագաւորեցուցին զմժէժ գնունի , և ասեն՝ կեցցէ կայսր . և էր սա ինքն մժէժ դիմօք վեհափառ և աղատունձնեայ , և առաւել քան զպայման հասարակ մարդկան հրաշագեղ . ոչ գրեն Թէոփանէս և այլք ։ Ոչեաւ կոստանդինոս պոգոնատոսի զմնհ հօր իւրոյ կոստանդեայ՝ եկ ի կոստանդնուպօլսոյ , և զօրս ծանու դիմեաց ի սիկիլիա . և ձերբակալ արարեալ զմժէժ հանդերձ այլովք որք միաբանեցան ընդ նմա , դարձաւ ի Թէոդրական քաղաքն , և նստաւ կայսր . և անդէն սպան զկալանաւորսն . և որս և զնոր կայսրն զմժէժ գնունի ։

Եկն այս կոստանդին պոգոնատոս յետ հաստատելոյ ի կայ-

սերութեանէ լսող լեալ բարեխրատիկ՝ գուն գործեաց քառնալ զնուռվութեն Հերետիկոսաց միակամադաւան անուանելոց. վ՚ո որոյ հրամանաւ աղաքեանի պապին արալ ընհանուր ժողով եպիսկոպոսաց՝ ի կոստանդինուպոլիս յարքունի պալատին յերբեքտասաներորդ ամի կայսերութեն իւրոյ՝ յամի ՈՀՌ. 680. և ի թուին Հայոց. ՃԻԹ։ Ասումարեցան յայս ժողով հարիւր վաթսուն և վեց հայրապետք. որոց ոմանք էին՝ ի Հայոց քնակելոց՝ ի քաժնին յունաց. այս են Թէոդորոս, գէորգ, գրիգոր, յովհաննէս, եւն։ Այս ժողով՝ ի չիղ գումարման ընթերցել եղեն երկու նամակք. մին՝ աղաքեանի պապին, և միւսն՝ արևմտեան ժողովոյն, զոր գումարեալ էր աղաքեան՝ ի հռովմ հարիւր քսան և հինգ եպիսկոպք։ Յիններորդ գումարման դատապարտեցաւ մակարիոս անտիոքացի միակամադաւան։ Յերեքտասաներորդ գումարման դատապարտեցան և այլ միակամադաւանք։

Ի հնգետասաներորդ գումարման՝ պողիքրոնիոս միայնակեաց աշակերտ մակարիոսի մատոյց թուղթ մի առ ժողովն, և աղաչեաց զհայրս, զի հրաման տացեն գնել զայն թուղթ՝ ի վէր մեռեալ մարդոյ. և խոստանայր յարուցանել զնա զօրութիւն դաւանութեան այնր թղթոյ, առ՝ ի ցուցանել՝ թէ այն է ձշմարիտ հաւատք քրիստոնէի. և էր գրեալ՝ ի նմա այսպէս. * որ ոչ խոստովանի մի կամն, և մի ածայրական գործ,, ծողութի, ոչ է քրիստոնեայ ‖։ Ասէ հարք ժողովին յետ խրատելոյ զնա զգոյշ կալ այնպիսի գործոյ, և՝ ի փորձելոյ զնա, իբրև տեսին՝ թէ նա պնդեալ է՝ ի բանս իւր՝ յարուցանել զմեռեալն, թոյլ ետուն նմա. և ահա ժողովեցան բազմութիւնք ամբոխին արտաքոյ՝ ի տեղւոջ ուրեք. և՝ ի բերել անդ զդի ուրուն նորոգ մեռելոյ՝ մատեաւ և եդ պողիքրոնիոս զայն թուղթ՝ ի վէր մեռելոյն. և սկսաւ շշնջելով բարբառիլ յունկն մեռելոյն յօգուտ ժամ առաջի բազմութեան։ Եւ իբրև ետնայն եղև ջան նորա՝ մինչև լինքնին իսկ խոստովանիլ, թէ չյառնէ այդ մեռեալ, սկսան ժողովուրդք միաբերան աղաղակել, * նոր սիմոնն նզովեաւ եղիցի. պողիքրոնիոս մոլորեցուցիչ ժողովրդեան նզովեալ եղիցի ‖։ Եւ այսու ամիւ յամառ մնացեալ նա՝ ի կարծիս իւր՝ դատապարտեցաւ՝ ի հարց ժողովոյն։

ՅուԹևտասաներորդ գումարման յետ հաստատելոյ զդաւանութիւն հնգեցունց նախընթաց սբ. ժողովոց, և զԹուղթն սբ. կիւրղի և սբ. լևոնի, յաւելին ևս մտաց նոցա ընդեմ միակամադաւանից, Թէ՝ քս որն մեր ունէր զերկուս կամս և զերկուս ներգործութիւնս՝ այ զաստուածայինն և զմարդկայինն, * անանց,, ջատ և անփոփոխ, անբաժան և անշփոթ. և այս երկա-

Ալեքսանդրու. հայոց. քա. երես. 190. մինչ՝ է 920։

680 ՃԻԹ

667 ՃԺԷ

Ա. Կո. պն և հայոց

,, քանզիւբր բնաւորական կամք (ասեն) ոչ միմեանց հա-
,, կառակ , որպէս ամբարիշտ հերետիկոսքն հաստատեցան ,
,, քաւ լիցի · այլ մարդկային նոր կամք անընդհմակ և ան-
,, դիմադարձ հպատակութեամբ հետեւօղ աստուածային և ամենա-
,, կարօղ նորին կամաց ։ · Վն զի ասեն , ոչ մարմինն միաւո-
րեալ ընդ աստուածն՝ ոչ կարացս զլինելն մարմին , այսոքն և մարդ-
կային կամքն միաւորեալ ընդ աստուածայնոյն՝ ոչ կարացս զիւր կամա-
ւորութինն , ևն ։

{685 Ակդ}

Ե · Զետ այսր ժողովոյ յարեան հակառակորդք ոմանք , և սկսան խռովել զբազումս ընդեմ սահմանադրութեանն ժողովոյն ։ Այլ երբեմն մեռաւ կոստանդին , որպէս նոր յուստինիանոս երկիդ յաջորդեալ՝ ի կայսերութեանն՝ ժողովեաց առ ինքն զեպիսկոպոսունս և զիշխանս և զգօրավարս յայլևայլ տեղեաց , նաև զՅնէն հայոց · և ետ ընթեռնուլ առաջի նոցա զսիւնհոդոսական նամակ այնր վեցերորդ ժողովոյն · ընդ որ հաւանեալ աւձյն՝ և հայոց իսկ՝ ստորագրեցին , և ետուն զնամակն՝ ի ձեռս կայսեր · և յայնմհետե առ սակաւ սակաւ գոգաւորեցաւ աղմուկն ։ Օ այս պատմէ նա ինքն յուստինիանոս կայսր՝ ի թղթի իւրում՝ զոր գրեաց առ հինգերորդ յովհաննէս պապ , կիսաւ յաջորդ նոր · ոչ է տեսանել՝ ի հաւաքմունս ժողովոյ · հատոր · ԺԲ · երես · 737 · ևս 738 ։

Ալեքսանդրոս · ԺԲ · 922 ։

{692 Ակա}

Օ հնի այսորիկ գումարեաց յուստինիանոս և զայլ ժողով կանոնադրութեանց բազմութիւն եղկաց յունաց յարքունի պալատան՝ ի գմբեթայարկ տեղւոջ ։ Որոշակի պատճառ ինչ գումարման այսր ժողովոյ ոչ յիշատակի , այլ այս միայն , զի եղկոսունք յունաց նամակ մատուցեալ առ կայսրն՝ յորդորեցին զնա հաստատել ժողովոյ քանի մի կանոնս՝ ի վէր բարեկարգութեանց եկեղեցւոյ · զի ասեն՝ յառաջինն չորեսին սբ ժողով կարգեցան կանոնք՝ ի վէր այսպիսի իրաց · իսկ՝ ի հինգերորդն և՝ ի վեցերորդն կանոնք ինչ այսպիսի ոչ եգան , այլ միայն կանոնք հաւատոյ · որոյ աղագաւ տեսանեմք ասեն մոռացեալ զանկարդ սովորութինս ինչ յայլևայլ տեղիս · որոց ընդեմ արժան համարիմք հաստատել բանս ինչ բարեկարգութեան ։ Այս՝ ի հաձիլ ընդ այս կայսերն՝ սահմանեցին հարիւր և երկու կանոնս ։ Ոմանք՝ ի կանոնաց աստի վերաբերին՝ ի յոյնս , ոմանք՝ ի լատինս , ոմանք յասորիս , և ոմանք՝ ի հայս · յորոց միջի են և քանի մի կանոնք , վն ոչ պահելոյ վնտրուի ձեռնադրելոյ միայն զորդիս քահանայից · վն զգուշանալոյ յաւելորդ արարմանց՝ ի նուէրս գնելոյ · վն չառնելոյ ընկնի յաւուրս քառասնորդաց · վն արկանելոյ ջուր՝ ի բաժակն · վն չերդելոյ զոր ածն խաչեցարիւ ։

Ա. յս ժողով որովհետև եղև իբր առ՝ ի լուսին գործոց հին-

Ա՛մէն ան-
ուն հայոց

գերդ և վեցերդ ժողովոյն գումարելոց ՚ի կոստանդնուպո-
լիս , վանկ կոչեցաւ հինգվեցեան . և զի գումարեալ եղև ՚ի
գմբեթեան յարկի՝ կոչեցաւ տրուլեան , այր գմբեթեան ։
Ասացք պարտ է և զիտել , զի այս տրուլեան ժողով ոչ է ՚ի
թիւս ընդունելի ժողովոց . և որքանապատիկ հռովմայ բնաւ ոչ
ետ նմին հաւանուելի ։ Այլ սակայն տեսանեմք , զի ոմանք ՚ի նոր
մատենագրաց կանոնս լինել սորա՝ որ հայի յայլ եկեղեցիս ,
ըստ ամ տուելոյն պաշտպանեն իբրև ընդունելիս և անսահանջե-
լիս , ասելով՝ թէ այսպէս սահմանեցաւ ՚ի տրուլեան ժողովն .
{685} ՃԼԴ իսկ զայնոսիկ կանոնս՝ որք հայելին առ եկեղեցիս իբրեանց , ոչ
միայն չկամին ընդունիլ՝ այլև մերժեն և պատասպարտեն ,
ասելով՝ ժողովն տրուլեան չէ ընդունելի , այլ՝ խոտելի ։ Այլ
ոմանք զայլ ինչ ուսեալ ՚ի յունաց , համբաւեն երբեմն զկա-
նոնս սորա իբրև զսահմանադրուելիս վեցերորդ ընդհանուր ժո-
ղովոյ . ընդեմ որոց ասի ՚ի ծանօթութիւնս հաւաքմանց ժողո-
վոց . հատ . ժա . երես . 926 . թէ * ժողովն այն ոչ կարէ հա-
,, մարիլ ՚ի կարգս ընդհանուր ժողովոց , և ոչ են կանոնք նո-
,, իբրև զկանոնս տիեզերական ժողովոյ . ոչ ցուցանեն ի-
,, մաստուն և հնագոյն հեղինակք . թէպէտ և ունիցին այնո-
,, քիկ կանոնք զպիտակ անուն պատուոյ վեցերորդ ժո-
,, ղովոյ ։

677 Ե . Այլ յառաջ քան զգումարիլ ժողովոցս այսոցիկ՝ վախ-
{692} ՃԽԹ ճանեցաւ խրատել կաթուղիկոս հայոց , կացեալ ՚ի հայրա-
պետութենէ սմա . Ճ . և նստաւ ՚ի տեղի նոր երանելին սահակ
երդ՝ եղիկ ոստիկաց ։ Սա էր հայրենեաք ՚ի ձորափոր գաւա-
ռէ յարքունաշէն գեղջէ , և մայրենեաք ՚ի մաղազ գաւառէ
՚ի գեղջէ բերդկանց , մարդեապ յիմնատ գիտուն և ՚ի վարս
արքունեաց առ մեծին թէոդորոսի միայնակեցի ։ Յառաջնում
սմի կաթուղիկոսութեանն սորա յարձակեցաւ յոյն մեծին հայոց
զօրավարն այլազգեաց բառաբա անուն . և յաւարի առեալ
զբազում տեղիս՝ դիմեաց անտի ՚ի կոզմանս վրաց ։ Ընդ ա-
ռաջ ել նմին ներսէհ իշխան նոյ , և կոտորեաց զզօրսն , և զարար
զնա փախստական ։

Յովհ . ի-
ոան . Ը .
2 . և 4 ։
Յամուել ։
Ա պրպն ։
Ի բաիոս ։

683 ՃԼԲ Ետ քանի մի ամաց յարձակեցան ՚ի հայս հէնք բազումք ՚ի
խազրաց . ընդ որս սաստկապէս պատերազմեալ գրիգորն մա-
միկոնի պատրիկ հայոց՝ անկաւ ՚ի մարտի յեօթներորդ ամի
սահակայ . և բարձեալ թաղեցաւ ընդ հարս իւր , կացեալ
յիշխանութեան ամս . իդ ։ Այս զինն այնորիկ մնաց աշխարհս
մեր անմար՝ իբր ամս երկու . որով և վրդովեցաւ խաղաղու-
թիւն նոր . և ահ հինից և ընչաւառացն ՚ի խազրաց անտի և յայ-
լոց աղգաց՝ շուրջանակի պատեալ պաշարեաց զնա . և չէր
ուստեք օգնականութիւն ։ Ուստ աշուտ բագրատունին որդի բիւ-

ըստ այ զօրացեալ՝ ձեռն էարկ վանել զԵհնաւիսն. և տիրեաց ազգին իբրև պատրիկ. և կացոյց զեղբայր իւր զամբաստ զօրավար զօրաց. և խօսեցաւ խաղաղուն ընդ հագարացիս՝ տալով նոցա հարկս։ Իսկ՝ թէ չինեաց սա յայնժամ զեկեղեցին դարուն. և եթէր անդ զպատկեր փրկչին պատկեր իցէ, ոչ կայր։

Ի զի յաւուրս սորին աշտոյ տակաւին կենդանի էր դաւիթ փիլիսոփայ բագրեւանդացի, զորմէ խօսեցաք՝ ի գլ. ԾԲ. յերես. 349. գրեաց առ նա աշտ, և խնդրեաց տալ տեղեկութիւն՝ թէ յինչ միտս մարթ իցէ իմանալ և խօսիլ զիաւորութիւն աճմային և մարդկային բնութեց՝ ի քս. և նա յօրինեաց ձառ մի ուղղափառական՝ ի վր այսր, և առաքեաց առ նա։

Ի. սաղ. Ք. 2. և 4. Ամովսիանէս Լեոբենաս։

Դ. Իսկ կայսրն յուստինիանոս երկրդ՝ զոր յիշեցաք՝ ի վերայ, ՝ի սկզբան անդ՝ ի թագրել իւրում՝ տեսեալ թէ հայք մտեալ են ընդ իշխանութիւնք հագարացւոց, կամեցաւ ընդ իւրև նուճաձել զնոսա։ Եւ ետուն պինդ. այս քանիցս անգամ ետ ասեն, զի հնազանդեցաք ձեզ, և ոչ գտաք օգնուն՝ ի ձենջ՝ ի նեղութիւնն մերում. այլ ումեմն զրկանս և լշկանս. և եթէ այժմ և մեզ մտցուք ընդ ձերով իշխանութիւնք, դրձել ունիմք մատնել՝ ի սուր և՝ ի գերութիւն ոտար ազգաց. և յամխրել ձեր յայնժամ զձեռադ՝ ի մենջ՝ ոչ արարիք և յայլ նուճագս, ուստի գտցուք մեք օգնականութիւն. վասն որոյ աղաչեմք զձեզ՝ թոյլ տալ մեզ ունել՝ ի վիճակի մերում։ Յաստուցեալ յոյժ ընդ այս կայսերն՝ առաքեաց՝ ի հայս զօր ոստիկ յերկրդ ամի թագաւորութիւնն իւրոյ. որք՝ ընդ ասելոյ ասողկայ՝ հրով և գերութիւնք քանդեցին քան և հինգ գաւառս. և գերի վարեալ անտի ուրեն հազար տուն՝ վաճառեցին յոտար երկիր։ Իսկ՝ ի յայլ ամի վերստին առաքեաց՝ ի հայս քառասուն հազար զօր. յորոց կոխան եղև հայաստան. ըստ որում յիշատակեն նաև պատմիչք յունաց։

(1) Ոսկ. կաթ. Ա. սաղ. Ք. 2.

(1) Եւ այսր հարուածոյ հասին և յարևելից հարեալ այլազգիք. և պատերազմեր ընդ ամենայն՝ քանդեալ աւերեցին զհայրենի տեղիս, և գերեցին զմոլորս. որոց ընդեմ ելեալ աշտոյ պատրիկ, և քաջութիւնք մարտ եդեալ՝ սպանաւ՝ ի նոցանէ, պահ աղատեալ զազգն ամն. Դ. և փոքր ինչ աւելի։ Իսկ այլազգիք վերստին դիմեալ՝ ի հայս հանդերձ զօրավարաւ իւրեանց՝ որ կոչիւր մահմատ, ասպատակեցին՝ ի քաղցում տեղիս. և ումանք՝ ի նոցէ հասեալ՝ ի վր սեանայ կղզւոյն՝ կործանեցին զամրոց նր. և յաւարն առեալ զնոմ ինչ որ՝ ի նմա՝ գերի վարեցին գրեթէ զնոմ բնակիչս նր. յորմէ զսկի հարեալ այլոց իշխանաց հայոց՝ անձնատուր եղեն յայլազգիսն, և ապրեցուցին զանձինս, և դարձուցին յինքեանս զոմանս՝ ի գերելոց։

Ա.մխ. ՊՀ
և հայոց
685
ՈՀԵ

Ա.մխ. ՊՀ
և հայոց
690
ՈՂԹ

Ա.ՀԼ յուսահատեալ կայսր տակաւին լցեալ սրտմտութեբ՛ ի վր՛ հայոց՝ եւ ինքնին զօրու ծանու. և դիմեալ՛ ի հայաստան՝ եկն՛ ի լեառն, որ կոչեր արարատակ. և անդ յերիս բաժանեալ զզօրսն՝ զմին սիրեաց՛ ի միջոց ՅԻՆ հայոց, զերկդն յաղուհանս, և զերրորդն՛ ի վիրս, կամելով խափան տիրել ՅԱՅՆ այնոցիկ. և հրեշտակս առաքեալ՝ կոչեաց զերևելի իշխանս նոց. և նք առ հարկի և ակամայ եկին առ նա։ Ա.ՈՀ. սեցաւ ընդ կայսրն դատաստանաւ. և էարկ գնա ընդ իշխանութեբ և ընդ հարկատուութեբ յոմանց. և առնս առեալ՛ ի պատանդի զորդիս նոց՝ արձակեաց գնա. և եղ կիւրապաղատ՛ ի վր՛ հայոց զներսհ զՈՐն շինական՝ զորդի ծերունւոյն վահանայ կամսարականի, հիւպատոս և պատրիկ անուանեալ. և զմբաստ բիւրատեան հաստատեաց՛ ի զօրավարութեբ հայոց. և եթող յիւրոցն երեսուն հազար զօրս յՈՐնէն հայոց և յաղուանս։ Ա.ՈՀ. (1) Եւ կոչեալ առ ինքն զսահակ կԹՂիս հանդերձ հինգ եպիսկոպ, ընդ գրելոյ ստղկայ, արգել առ իւր. և յետ քանի մի աւուրց արձակեալ գնա յիւրմէ՝ դարձաւ ինքն՛ ի կոստանդնուպօլիս, տարեալ ընդ իւր և զպատանդսն։

Ա.ՀԼ մեհնել կայսեր՛ ի հայաստանէ՝ այն անցք անցին ընդ ՅԵՆ, որ ինչ յաւուրս ներսխի շինողի, յերեսաց զօրավարացն յունաց, ի խտրել նց՛ ի հայոց՝ և ՍՅ՛ ի նՅՆէ, գայթակղելով՛ ի միմեանս, և վիճելով՛ ի վր՛ բանից հաւատոյ, և մնւնդ՛ ի վր՛ կարգաց և պաշտամանց եկեղեցւոյ։ Ա.ՀԼ սակայն ներսհ կամսարական բՂՀ խնամով հոգ տարեալ ջանայր՛ ի խաղաղութեբ պահել զաշխն, միանգամայն զգոյշ և պատրաստ կալով ընդեմ արշաւանաց օտար ազգաց, ուսնելով իւր օգնական զկրտսեր եղբայր իւր զգագիկ։

Ա.Ը. Ասէ հայր նց՛ վահան կամսարական՝ որ կոչիւր պատրիկ մեծ, տեսեալ զտառապանս ազգին և զվերադառնումն ՅԵՆ՝ եթող զնմ. և առանձնացաւ ինքն՛ ի վանս սբ՛ ՍՅԾԱԾՆի՝ որ ի վաղարշակերտ յերկրին բագրեւանդայ. և անդ կեայր խաւսնազգեցութբ, պահօք և տքնութբ իբրև զմի՛ ի խստակեաց ՀԱՆաւորաց. և զի էր ընԹերցասէր յոյժ և տեղեակ գրոց, հանապազ դեղերը՛ ի կարդացմունս սուրբ կտակարանաց և բանից սբց հարց, և քաղցրանայր՛ ի նոսին։

Ա.ՈՀ. Եւ՛ ի նոյն աւուրս երևելի՛ ի մէջ հայոց գրիգորիս վՀՊ ումն՝ այր բանիբուն պիտութբ և հմուտ յիմաստս ՍՅԾԱՅԻՆ գրոց. որ և յամի ՅՈՆ. 684. և՛ ի թուՀին հայոց. ՈՂԳ. ձեռնադրեցաւ՛ ի ահակայ կաթուղիկոսէ ենկց գաւառին արշարունեաց, որ էր բնիկ երկիր ՅՈՐԱՆ կամսարականաց յերասխաձորն։ Այն է այն՝ որ՛ ի գիրս հայոց հաւատարակօրէն կոչի գրիգոր քաջ ենկց աշարունեաց կամ արշարունեաց, ոչ զի չէր նա եպիս-

կոպոս, այլ զի որովհետև յաւաչէն քորեպիսկոպոս նստեր յար-
շարունիս ըստ ձեռամբ եպիսկոպոսին բագրեւանդայ, յայն սակս և ե-
պիսկոպոս այնր գաւառի քորեպիսկոպոս և անուանեցաւ ։ Իսկ Թէ
զիարդ է, պիտելն է. զի ոմն աւանդի ի գաւազանագիրս Հայոց
ի կարգս եպիսկոպոսին արշարունեաց, ըստ որում մեք տեսանել և ի
կանոնագիրս ի վերջ ։ ԼԸ ։ Գլխոյ · սկսեալ յաւուրց անտի սքան-
չելագործին, գաւառն արշարունեաց՝ կամ որ նոյն է կամա-
րականաց, ոչ էր ուրոյն եպիսկոպական վիճակ, այլ նստեր անդ
զոմ քորեպիսկոպոս՝ կարգեալ ըստ իշխանութեան եպիսկոպոսին բագրեւանդայ ։
և այս միանգամ ի ժամս ելանելոյն մովսիսի խորենացւոյ · որ
նստաւ եպիսկոպոս այնր գաւառի, յետ բագրեւանդայ ։ Իսկ զկնի
վախճանելոյ նորա՝ բաժանեցաւ այն աթոռ յերկուս · և կարգե-
ցաւ երկու եպիսկոպոսան · միւն՝ բագրեւանդայ, և միւսն՝ արշա-
րունեաց · և յայնմհետե Թէպէտ և նստեին եպիսկոպոսունք յար-
շարունիս, բայց հաստատակ անուամբ առաջնոյն երբեմն քո-
րեպիսկոպոս և անուանէին ։ որոց առաջինն եղև խնդակ ա-
նուն · յետ նոր յովհան · և ապա թաթուլ · թուման · հաւուկ ·
թովմաս · մովսէս · յոյս · թէոփիլոս · մովսէս · և զակար · և
զկնի զաքարու ոմն այս նախակարգեալդ գրիգորիս · որ եկաց
եպիսկոպոսութեան ամս · Ը ։

Գնդ եղև սմա գնալ յաւուր միում յայցելուի վհանայ կամ-
սարականի՝ հօր ներսեհի պատրկի՝ հանդերձ քանի մի վիճակ
հայոց · և վհան արար նոցա սեղան խրախութեան · ոմն սա ինքն
գրիգորիս պատմէ ի յիշատակարանի իւրում · և ի սեղանի
անդ մեղմով ինն սկսաւ ստգտանել զնոսա ծերունին վհան,
Թէ զի՞ է՝ զի վիճակական պատուհով և իշխանութեամբ պերճանայք,
և ոչ տանիք փոյթ ծաղկեցուցանել և պտղաբեր առնել ըղ-
գաւազան վիճակի ձերոյ՝ շարագրութեամբ օգտակար մատենից,
կամ մեկնութեամբ գրոց, կամ Թարգմանութեամբ բանից նոր հարց ·
և յաւել յորդորել զգրիգորիս, զի ձեռն արկցէ ի մեկնութեն
ընԹերցուածոց եկեղեցական պաշտամանց, և Թէ զի՛նչ խոր-
հուրդ ունին կարգք պահոց և ուրուանական տօնից, և որ ի
կարգի ։

Իսկ գրիգորիս հայեցեալ ի դժուարութի գործոյն՝ անփոյթ եղև ·
և իբրև վերատին ստիպով խնդրեաց վհան, ձեռն էարկ և
կատարեաց զխնդիր նորա, և առաքեաց առ նա զգիրսն · ուր
կանխաբանէ ի խօսիլն առ նա գրէ այսպէս · * Ո՛չ Հարկ բանից
„ զոր պահենքեցեր յինէն փութանալ յաղագս ընԹերց-
„ ուածոցն ով կամնարակատդ վհան պատրիկ, Հատուցի
„ քեզ յամրագոյն, ոչ ի Հարուստ մատաց ուրուք ժողովել, և
„ ոչ ի բարձրագոյն բանից ուսեալ, այլ՝ յաչխատութէ աղ-

,, վեկ հեղգ առ այսպիսի փոյթս գտայ յառաջագոյն . զի
,, մի նուաղ զպայծառ ջահ իմաստուն եկեղեցւոյ երևեցու-
,, ցից , և կամ ախտս զվայելուչ զգեղեցկուն խորհրդոյս . վա-
,, զի ուժաւորաց ումանց և հոգևորաց յառաքինուին պատշաճ
,, վարկայ զգործս զայս ։ Այլ վա՛ զի այր ես դու մեծ և ոչ-
,, ջախոհ մտօք , պակեալ ծերութե՛ և իմաստութե՛ իբրև թա-
,, գաւոր յայ՛ի ժամանակիս՝ ի միջի մերում , յորդորական
,, հրաման տո՛ւեալ ինձ քո միշտ մտրակեաց զիրաւացի հեղգ
,, երկչոտուի մտաց իմոց . որ իբրև ահագին ինն խորոց հան-
,, դիպեալ իմաստութե՛ ընթերցուածոցն՝ ցնորեցայ ի՛ խոր-
,, հուրդս , և պակուցեալ՝ի փախուստ դարձայ քո՛ւմ անգամ
,, ՚ի հնազանդուե՛ այսպիսի հրամանաց ։ Ահա այժմ վերատին
,, հասելոյ հրամանիս քո ոչ կարացեալ ՚ի դիմի հարկանել ,
,, ուստի խոնարհիկ յառաջագոյն իբրև յալեաց ծովու ,
,, այժմ ՚ի նոյն դարձեալ դիմեցի՝ վստահանալով ՚ի չնորհս
,, հոգւոյն սրբոյ , ո՛չ գիտեմ՝ հնազանդութեամբ , թէ յան-
,, դգնութե՛ . ևե ։ Ընթերցեալ վահանայ զայս գիրք գրիգո-
(2) րիսի՝ ուրախ եղև յոյժ . և ինքն յետ սակաւու վախճանեալ
հանգեաւ ՚ի քրս ։

Հանգուցանակից գտաւ սմա յընթերցասիրութե՛ և որդի սորա պատրիկն հայոց Ներսէհ կամսարական . որ և հետամուտ գոլով տեղեկուե՛ պէսպէս իրաց և պատմութե՛ց՝ հրամայեաց վարդապետի ումեմն տիրակացւոյ , որում անուն էր փիլոն , Թարգմանել ՚ի հայս զյունարէն պատմագիրքն սոկրատայ , որ շարունակէ զկարգ վիպասանուե՛ եւսեբեայ կեսարացւոյ , զոր ունէին հայք թարգմանեալ յառուրց անտի սբ՛ն մեսրոպայ ։ Այլ փիլոն ձեռն արկեալ ՚ի թարգմանել՝ ոչ շատացաւ լոկ զբանս սոկրատայ հայերէն կարգել , այլ՝ յաւել ՚ի նոյն և զայլ պատմութիս ինչ ՚ի հայոց , և առաւել յառուրց , յո-
րինեալով զնոսին իբրև ՚ի դիմաց սոկրատայ հեղինակի գրոց . մինչև պատմել անդ բանս նաև ՚ի վե՛ր փլաբիանոսի և եւտի-
քեայ , և երկիդ ժողովոյն եփեսոսի , յորում ժամանակի մե-
ռեալ էր սոկրատ . զարդեալ ՚ի նոյն և զբոյցս սուտս , ըստ որս է և պատմուի սբ՛ ծնծին ։ Այլ զայս մնրեմ է յայտնի տեսանել ՚ի բազդատելն զսա ընդ յունական օրինակին . եթէ և առ յոյնս չի-
նել լեալ մինչև ցարդ փոփոխուի ինչ ։ Այլ զնոյնդ և իսկ , այն Թարգմանեալ գիրք սոկրատայ եղև ոմանց ՚ի հայոց առիթ գայթակղուե՛ , զի ընթերցեալ ՚ի նմա պէսպէս օտարոտի բանս , և զսուտ աւանդուին՝ զոյս տեսանելեաւք ՚ի գիրս սուրբ-
ս , համարեցան՝ թէ ստոյգ այնպէս գրեալ իցէ հեղինակն . և յայն ապաւինելով նովին ընդհակ զինեին այլոց պատմուե-
յունաց ։ Այ՛րթ է և առ սակաւ , թէ ո՛չ ՚ի փիլոնէ թարգմանչէ,

այլ՝

այլ գուցէ յայլոց ոմանց յաւելեալ լիցեն այն քանք. և կամ
թէ յանհարազատ և՛ ի խանգարեալ օրինակէ լեալ թարգմա-
նեալ: Այլ մեք հայեցաք՝ ի կարգ պատմուեաս:

ԳԼՈՒԽ ԾՐ:

Յաղագս գալստեան աբդլայի և հաշմայ ոստիկանին ի հայս,
և վերադարձն աշխարհին. և նահապետութեանն պատիւ
գունեցաւոյ. և այրման նախարարացն՝ ի նախջուանն:

ԶԱՄԱՆԱԿ էր համբաւ՝ ի վաղուց հետէ առ ամի- 691
րապետն հօգւարարացոց, թէ հայք մտին ընդ իշ- Ձէ
խանութիւն յունաց, և են միաբան ընդ նմա, և նոյ
տան զհարկ ծին. որոյ վասն շարժեալ նոր՝ ի սրտմտութիւն բար-
կութեան՝ կամէր առաքել զօրս, և անդրէն նուաճել զհայս ընդ
իւրեւ. այլ ոչ իշխեաց առ ժամանայն ձեռն արկանել՝ ի նոսա,
կասկածեալ՝ ի բազմութիւն անտի զօրացն յունաց, զորս թողէր
էր կայսրն յՀռոմ անդ և՛ ի սահմանս միջագետաց. նաև զի
զօրք իւր զբաղեալ էին յոյժ յայլևայլ պատերազմունս: Սակ
յանցանել իւր երից ամաց՝ յորժամ հետզհետէ մեկնեցան
զօրք յունաց՝ ի հայաստանէ, պարապ առեալ սիրապետին՝ 693
առաքեաց անդր զոստիկան ոմն աբդլայ անուն՝ բանիւք խա- Ձխգ
զաղուէ. և քանի հայք չէին ձեռնհաս ընդդէմ դառնալ նմա՝
անմիաբան գոլով յինքեանս, ըստ առաջ ելելոյ նորա՝ ընկալան
պատուով իբր իւրեանց յատուկ իշխան:

Այսպէս աբդլայի ոստիկանին հանդերձ զօրօք իւրովք՝ ի
դուինն քաղաք՝ որ յատաջն էր անուն մարզպանաց, հաստա-
տեաց զաթոռ իւր՝ ի նմա՝ ի ջրոյդ ամի պատրիարքէ ներսեհի
կամարականի: Ի սկզբան անդ՝ ի յանդորրու կալաւ աբդլ-
լայ զնա, և քաղցրութիւք վարեցաւ ընդ ամենին. և եցոյց սէր բա-
զում առ նախարարս և առ ազատս. մինչև համարձակեցոյց
զնա մնալ անկասկած: Այս ասպա այլևայլ պատճառս պատ-
ճառելով՝ մի ըստ միոջէ կալեալ և կապեալ զնա՝ կողոպտեաց
յամառաձիգածոց նոյ. զոր տեսեալ՝ ներսեհի կամարականին փա-
խեաւ՝ ի տայս: Կալաւ աբդլայ և զահակ կաթուղիկոս,
և կապեալ՝ ի շղթայս՝ առաքեաց՝ ի դամասկոս. ընդ նմին և
զամբաստ բագրատունի բիւրատեան զսպարապետ հայոց. և
ապա ծրչալի մեծամեծ եկեղեցիք կային յՀին արտաշատայ՝ զա-
մենայնն յաւարի էառ, և զնմա զարդս նոյ մերկացոյց:

Ետ այսորիկ կալեալ նահատակեաց զդուխն դոմնեցին. Ձ
զորմէ պատմի՝ ի Ձեռնընտիրս և յայսմուտուրս, թէ էր նա՝ ի

Թէգրական զարմէ պարսից, և մայրն նր ազգաւ հայ. որ և ե-
կեալ ի խորասանայ ի հայս վն իրիք գործոյ ի ժամանակս
գրիգորի մամիկոնէի, և տեսեալ անդ զվարս քրիստոնէից՝
հաւանեցաւ ընդ այն. և գնացեալ առ իշխանն գրիգոր՝ յայտ-
նեաց նմա, թէ կամի քրիստոնեայ լինել։ Եւ գրիգոր ա-
ռեալ տարաւ զնա առ անապատս կաթուղիկոս. և նորա երե-
խայացուցեալ զնա՝ ըստ օրէնս ուղղն զնմ օրհնս
քրիստոնէութե. և մկրտեալ զնա՝ կոչեաց դաւիթ յանուն հօրն
գրիգորի մամիկոնէի. զի յառաջն սուրհան կոչիւր. զոր և ըն-
կալաւ յաւազանէն նա ինքն գրիգոր իշխան. և ետ նմա ի
կալուածս զաւառն ձագ կոչեցեալ ի նահանգին կոտայից։
Եւ յետ աւուրց ինչ ամուսնացեալ նր՝ բնակեցաւ ի դուինն.
և ծնաւ զորդիս. և եկաց անդ մինչև ի ժամանակս ոստիկա-
նութե աբդլայայ։

Որոյ լուեալ զնմանէ՝ թէ յընկն պարսիկ էր, ետ ածել առաջի իւր.
և հարցեալ զնա եգիտ անշարժ ի հաւատս. և ի փառաւորել
նր զքն՝ հրամայեաց հարկանել զբերան նորա, և արկանել ի
բանտ. ուր թաղին զնա զաւուրս ութն անաւճաղ. և յետոյ
հանեալ անտի՝ բերին և արկին առաջի նր խաչ մի. և կռափա-
հարէին և նեղէին զնա կոխել զայն։ Իսկ սքն առաւել ևս
զօրացեալ ի խոստովանութե հաւատոյ՝ տայր փառս խաչելե-
լոյն. վնյ տարեալ զնա մօտ ի դուռն վանից սքն սարգսի՝ որ
ի վր պողոտային, խաչեցին զնա անդ. ուր և ամուսին նորա
կացեալ առաջի՝ քաջալերէր զնա. և մինչև էր նր աւանդել
զհոգին, տարին դահիճքն գեղարդեամբ ի սիրտ նորա և ի
կուշտն. և այնպէս կատարեցաւ նա ի քն յամի տեառն. 693. և ի
թուին հայոց. ճխբ. յարեգի. լիգ. այն է, մարտի. 31։
Եւ յետոյ հրամանաւ ոստիկանին բարձին զնա սարգիս եպիս-
կոպոս, և մուշեղ իշխանն մամիկոնեան, և արտաւազդ
եղբայր նր, և այլք բազումք՝ հանդերձ քահանայիւք և պաշ-
տօնէիւք. և տարեալ թաղեցին ի սքն գրիգոր առ գերեզ-
մանի սքն յիզտբուզտի։ Եւ զփայտն յորոյ վր խաչեցաւ նա,
խաչ յօրինեալ կանգնեցին ի վերայ տապանի սքն։ Իսկ զգե-
զարդն գնեաց մուշեղ ի դահճաց քսան դահեկանի. և ետ
ձեւացուցանել ի խաչ։ Եւ յա երանելի նահատակ վանն ի
դուինն բնակելոյ, և անդ նահատակելոյ՝ կոչեցաւ դաւիթ
դուինեցի։

ը. Իսկ սմբատ բագրատունի՝ ի նմին ամի, յորում վարե-
ցաւ ի դամասկոս, խոյս տուեալ անտի եկն ի հայս. և տե-
սեալ զանհնարին բռնակալութի աբդլայայ՝ տառապէր ի
սրտի իւրում. և խորհէր դիմել յօգնութի կայսերն յոստինիա-
նոսի. որոյ վն իսկ յղեաց առ նա հրեշտակս։ Եւ կայսրն հա-

693 ձխբ

691 ձխա

693 ձխգ

Ա.մտ պն և հայոց

Ա.մտ պն և հայոց

693 ձխբ

Ա.ղուկ.ե.3։
Ա արտան։
Ա ամոռէլ։
Ա էմեսան։

եանեալ առաքեաց ՚ի հայն պղեհնդիոս զինչհանն մեծ՝ զօրօք բազմօք ։ Եւ մինչչև հասեալ էր նոյ , առեալ սմբատայ զաշտ պղօրեզբօրորդի իւր և զվարդ հանդերձ քանի մի նախարարօք և զնոյին արամբք՝ գնաց ՚ի գաւառն վարդանակերտ ։ Օ՚այն իմացեալ աբդլայայ՝ պնդեցաւ զհետ նոյ հինգ հազար զօրօք ։

694 ՉխԸ

Ա՚ն մեկնիլ նոր ՚ի դունայ՝ յետ աւուրց ինչ հասին զօրք յունաց յարարատեան ։ և դիմեալ ՚ի դուին՝ այրեցին զապարանս ոստիկանին և այլոց մեծամեծաց նոր ։ և դիտացեալ Թէ աբդլայ պնդեալ է ղկնի նախարարացն , զհետ եղեն նոր ։ և ժամանեալ ՚ի վարդանակերտ՝ յարձակեցան ՚ի վր զօրաց նոր ։ և սմբատեանքն դիմեալ ՚ի միւս կողմանէ՝ հարին և կոտորեցին զնոսա և նոքա անտի և նոքա անտի զզօրս ոստիկանին մինչև իսպառ ։ և ըզբազումս ՚ի նոցանէ ձերբակալ արարեալ վարեցին ՚ի գերուն ։ Իսկ ՚ի փախչիլ մնացելոցն յանցանել ընդ գետն երասխ ՚ի վր սահմանն՝ անդէն պատառեցաւ ոտն , և եկուլ զնոսա ։ և զերծաւ միայն աբդլայ ոստիկան քանի մի արամբք ։ Վարձ արարեալ անտի զևոնդիոս ՚ի կոստանդինուպոլիս յարեաւ ՚ի վր յուստինիանոսի ։ զի տեսեալ զանողորմ գործս նոր՝ խորհուրդ արար ընդ մեծամեծս, և ընկեց զնա ՚ի կայսերուէ ։ և հատեալ զունչս նր՝ աքսորեաց զնա , և ինքն եառ զթագաւորուէն ։ և ՚ի նմին ամի յղեաց պատիճ կիւբրապաղատուէ առ սմբատ ։ Եւ սմբատայ գնացեալ ՚ի տայս՝ բնակեցաւ յամուրն կոչեցեալ Թռխոտ ։ և յայնմ հետէ նա ինամէր զազգն խաղաղուէ ամն քանի մի ։ Քզի և ՚ի կողմանցն հարաւոյ չեղև նոցա յայնժամ բռնուն ։ զի նք զաղմկաւ իւրեանց պատաղեալ՝ չզօրէին առնել ինչ ։

702 ՉծԲ

Ե ։ Ա՚յլ սակայն իբր յետ վեց ամաց պարապ առեալ մըհանայ ամիրապետին՝ առաքեաց ՚ի հայս զմեծ զօրավար իւր , օր կոչիւր մնհմատ ոբդայ ։ որոյ եկեալ ՚ի կողմանս վանանդայ՝ յաւարի առնոյր զերկիրն ։ Յտեսեալ զայս ներսեհ կամսարականի՝ միաբանեցաւ ընդ սմբատայ ։ և ժողովեալ զվանանդացիսն՝ յանկարծակի դիմեալ եհաս ՚ի վերայ մնհմատայ , և կոտորեաց զնա զօրս նր ։ մինչև հազիւ մնացեալք ազատ առ աքիրապետն՝ շարժեաց զբարկուէն նր ՚ի վր աղգին ։ և հրամանն առեալ ՚ինմանէ՝ ժողովեաց զանհամար բազմուէն զօրաց՝ գալ առնուլ վրէժս ՚ի հայոց , ՚ի մտի եդեալ՝ սրով Ձարսակ տալ զամենայն հայս , և զինացեալսն առ հասարակ վարել ՚ի գերուն , և զնմանց

առաքեաց զոմն ՚ի դամասկոս առ սահակ կաթուղիկոս , որ
դեռևս անդ ՚ի գերուե էր . և աղաչեաց զնա հնարս հաշտուե
գտանել : Յայնժամ և երանելին սահակ առաքեաց առ մահ-
մատ զդեսպան մի , և խնդրեաց ՚ի նմանե հրաման երթալոյ
առ նա . զի թերևս աղերսալն բանիւք մարթասցի քաղցրա-
ցուցանել զսիրտ նորա :

Եւ իբրև հրամայեաց նա գալ , եկ կաթուղիկոսն ՚ի հանա-
պարհ . և հասեալ ՚ի խառան՝ հիւանդացաւ , և ոչ ևս կարաց
գնալ առ նա . և դիտացեալ՝ թէ մեռանի , զօրացաւ հոգւով-
եկ ՚ի մահձէ իւրմէ , և գրեաց ձեռամբ իւրով գիր աղաչանաց
առ մնհմատ ՚ի լեզու արաբացւոց՝ այսպէս . * Ես գիր ե
,, ձեռին իմոյ սահակայ հայրապետիս հայոց առ զօրավարդ
,, մնհմատ . ես առաքեցայ յազգէն իմմէ ընտրեալ քո . այլ որ
,, շտեմարանապետն է հոգւոց , ստիպեաց զհոգի իմ առ ինքն ,
,, և ոչ ժամանեցի տեսանել զերեսս քոյ . և այժմ ունիմ ՚ի
,, ձեռին զդիր դաշինն , որով պարտին հարկս տալ քեզ ազ-
,, գատոհմիք իմ , և ծառայել միամտութիւ , և հնազանդ լինել
,, ոմի և վայել է տերանց . և քեզ ևս արժան է զարժանն առ-
,, նել , և առնուլ զհարկս և զհնազանդութիւն . և մի բարկու-
,, թեամբ առնել զաշխարհ ազգատոհմին իմոյ ոմի զիշնա-
,, մեաց : Եւ արդ՝ հոգալ պարտիս զձեն իմ ոմի զձ քո . և
,, եթէ այլազգ ոք յարիցէ ՚ի վէր նոցա , և նոքա ձայն արկցեն
,, ՚ի քեզ , դու օգնեսցես նոցա , և փրկեսցես ՚ի նեղչաց նոցա .
,, և զհարկն և զմաքսն՝ զոր տացեն ձեզ , խաղաղութիւ վայե-
,, լեսցես դու և զօրք քոյ : Եւ արդ՝ եթէ քաղցրասցի սիրտ
,, քոյ՝ և արասցես ըստ սմին իմում , և լիցիս ներօղ առ ակա-
,, մայս ստամբակուն իմոյն , հաստատեսցէ ձեր զաթոռ թա-
,, գաւորութե աղգիդ . և եկեսցէ ՚ի վերայ քո օրհնութիւն
,, հօր քոյ իսմայէլի . զի եղիցի իսմայէլ յազգ մեծ . ձեռք քա-
,, մայ ՚ի վէր թիկանց թշնամեաց իւրոց՝ ոմի գաւազան խրա-
,, տու . արք սէր տեարք , և կանայք սէր տիկնայք : Եւ այժմ
,, եթէ արասցես զհրամանս իմ , նոյն օրհնուն հասատատեսցի
,, ՚ի վէր քո . ապա եթէ ապախտ արասցես զբանս իմ , դար-
,, ձուսցէ ձեր յերես զսիրտ արանց միաբանելոց ընդ քեզ . և մի
,, ուղղեսցին գնացք ոտից քոց . և երիվարք զօրաց քոց խրթ-
,, նասցին , և մի կարասցեն գնալ՝ ուր խնդրես : Եւ այժ կացցէ
,, պայման ՚ի միջի ընդ իս և ընդ քեզ . այլ դու յերկոցունգդ ընտ-
,, րեա զմին՝ զոր սիրէ սիրտ քո : Այս թուղթ կնքեալ երա-
նելւոյն սահակայ՝ հրամայեաց սարկաւագաց իւրոց . զի ՚ի
մեռանիլ իւրում՝ դիցեն զայն յաջ ձեռն իւր . ոմի զի մնհմատ
կնքնին առեալ ՚ի ձեռանէ իւրմէ՝ ընծերցցի զայն . և այնու
դուցէ ՚ի գութ եկեալ՝ դադարեսցի ՚ի սրտմտութե և ՚ի սպառ-

նահեաց ։

Եւ իբրև վախճանեցաւ երանելին, վաղվաղակի աղդ արարին մոհմատայ զնմ՝ զոր խօսեցեալն էր նմ. և մոհմատայ լուեալ ասէ. եթէ կենդանի էր նա, գայր առ իս. և զի այժմ ոչ կարէ գալ նա, ես գնացից առ նա. և հրամայեաց մի թաղել զմարմին նմ՝ մինչև ինքնին եկեսցէ առ նա։ Եղեալ ապա մոհմատայ ի ձնալրն, և փութանակի հասեալ անդր՝ մերձեցաւ առ մարմին երանելւոյն. և ողջոյն ետ նմա իբրև կենդանւոյ ձեռօք և բանիւք՝ ըստ իւրեանց լեզուին՝ ասելով, սէլամ ալէք։ Յայնժամ և մարմին սրբոյն իբրև կենդանի ողջոյն տուեալ նմա ձեռօք՝ մատոյց առ նա զԹուղքն, զոր ունէր ի ձեռին։ Եւ որ կարի լինն զարմացեալ և քստմնեալ սպարապետին՝ յարգանօք էած զայն ի ձեռանէ նմ. և ընթերցեալ զբանն՝ ասէ ցնա. * այս ինդիւր քոյ կատարեալ է պատուհասական այլդ այդ ինձ ։ Եւ սպա վաղվաղակի գրեաց Թուղթ առ նախարարսն հայոց՝ ծանուցանելով նոցա, թէ Թողեալ է զնմ յանցանս, զոր գործեցին ընդ նա ի վանանդ, և ընդ ամենայն ի վարդանակերտ. և խոստանայր երդմամբ՝ ոչ ինդրել վրէժ ի նոցանէ. և ոչ իսկ յիշել զանցս՝ որք անցին ընդ նա։ Եւ յետ գրելոյ զնամակն՝ հրամայեաց բզնմ պատուով տանիլ ի հայս զմարմին երանելւոյն, հանդերձ զօրօք հազարացւոյ՝ որոց զօրավար էր կամ անուն. և ինքն դարձաւ ի տեղի իւր. և հասանեցուցեալ զամիրապետն՝ արձակեաց զայլ գերին. որք եկեալ էին ընդ սահակայ ի դամասկոս ։ * Եւ այսպէս (ըստ ասելոյ յովհան-
,, նու կաթուղիկոսի) զմեռելուԹի նմ պատուհասական արար
,, ած քան զմեր կենդանութիս. և ի սադրելոյ սղօթից նորա
,, փրկուի մեծ ծագեալ աշխարհին մերում ։ Իսկ ամք կա-
թուղիկոսուԹ նորա եղեն ընդ ամ. ին. և ամիսս քանի մի. զի ժղ. ամ եկաց ի դռնին. և սուրբ քան զսահակ ամ յաքսորս. և վեկ ամանք. ին. ամ դնեն ընդ ամ։ Այլ այս երանելիս արարք ձառս գեղեցիկս, և շարականս համեղաձայնս՝ զհա-
ղիւն և զեկեղեցւոյն։ Իսկ դրիպոր կԹղիկս անաւարելի ի Թուղքն առ հեԹում ԹՂր, Թէ ինքն տեսեալ է զաջ սուրբ ի հռոմկլայ անապական. որ և յետոյ պատեցաւ ասէ արծա-
Թով։ Իսկ յետ երանելւոյն սահակայ նստաւ յաԹոռ կա-
թուղիկոսուԹ ներ եղիա ենկս բզնունեաց ի գաւառէ աղիով-
տայ ի գեղջէ արձիշոյ ։

ԺԴ. Ի յաջորդ ամի մեռաւ ամիրապետն մրուձան, և նստաւ ի տեղի նր արդլայ, որ յառաջն ոստիկան էր հայոց, որ և կոչի ապուլմզլիք։ Յիշեալ սորա զչարիսն՝ զոր անցուցին հայք ընդ նմա և ընդ զօրս իւր ի վարդանակերտ, ոչ հաձեցաւ ընդ գործ հաշտուԹեն՝ զոր արար մոհմատ. այլ՝ առաւել ևս ցասուցեալ՝

704 ՃԾՊ

Յովհաննէս կաթողիկոս։
Ղազար. 4։
Ասողիկ. 2։
Արծրունի։

եդ ի մեռ առնուլ զվրէժ ի հայոց : Ընդեաց պատգամ առ
կայմ զօրավար՝ որ նստեր ի նախճուանն . և կացուցեալ զնա
ստիկան ի վերայ Ձին հայոց՝ հրամայեաց նմա , զի հնարիւք
լինն կալեալ զմեծամեծս՝ որք են ի հայս , կորուսցէ զնոսա ,
և նուճաձեալ ընկճեսցէ զՁն :

Ընկալեալ կայմայ զայս պատուէրս յամիրապետէն՝ եկան համ-
քառ սուտ , թէ ամիրապետն խոստի յաստիճան պատուոյ հա-
նել զառաջս հայոց , և տուրս բազմել զօրականաց , և դրել
զնա աղատս . որոյ վճռ հրամայեաց գալ ժողովիլ մեծամեծաց
առ ինքն : Եւ զի հայք անկասկած էին վճռ երդմանն մահ-
մատայ , վստահացեալ ի նոյն՝ գնացին առ նա ի նախճուանն
նախարարք պատուականք և սեպուհք և իշխանք մեծամեծք .
ել որս և զօրականք քաջք : Ուրեաք կայմ զանուճանս նոցա , և
խոստացաւ իւրաքանչիւր նոցա իշխանութիս և պատիւս . այլ առ-
առ ի հաստատութէ պահելոյ ձեր զհաւատարմութէն առ ամիրա-
պետն՝ հարկ է ձեզ ել օրինաց ձերոց երդումն տալ յեկեղեց-
ւոջ ձերում : Եւ իբրև մտին նոքա յեկեղեցին , զօրքն կայմայ
վաղվաղակի փակեցին զդրունս , և կալան զնոսա եղ փախս-
տեան . և ելեալ ի վեր՝ լուցին հուր ի փայտաշէն վերնայարկ
եկեղեցւոյն . և անդ ի բորբոքել հրոյն հրայեան և թարձ-
րուխք կղմնդրացն , և սկսան հոսել ի վերուստ ի վայր սկսա-
խառն հրով :

Յոմ որք ի ներքս էին , տեսեալ զինքեանս յայսպիսի աղէտս
տանջանաց մատնել , բարձրացուցին զձայնս իւրեանց ել երից
մանկանցն , և օրհնելով զնոսա՝ կատարեցան անդր : Ցայս ա-
րարին և ընդ այլ մեծամեծս ի քաղաքն խրամ : Ցայնժամ
յապահովս եղեալ զօրացն կայմայ յերկիւղէ նախարարացն
հայոց՝ յարձակեցան յաւար Ձին . և մտեալ ի տունս տունս՝
կողոպտեցին զորս և գտին . և զմանս ի ծացել նախարարացն
կալեալ կախեցին զփայտէ . և զկանայս և զորդիս նոցա և զամ
ընտանիս այրեցելոցն վարեցին ի գերուն :

Ցայս իբրև լուան որք քաղաքին դունայ՝ հայք և հագա-
րացիք , ամրացուցին զքաղաքն : Եւ յորժամ եկին անդ զօրքն
կայմայ , մարտ եդեալ ընդ քաղաքացւոցն՝ ոչ թողին զնոսա
մտանել ի ներքս : Եւ յայնժամ ի քաղաքի անդ մանուկ ունի
հագարացի երկոտասանամեայ աթդլավիզ անուն . սա կա-
մեալ մատնել զքաղաքն , եել գիշերային ընդ նեղ անձուկս
պարսպին ի վեր , և աղաղակեալ առ պահապանն՝ ասէ .
մտին թշնամիք ի ներքս , և յաւարն առնուն զքաղաքն :
Լուեալ զայս պահապանացն և մարտիկ զօրաց , որք էին ի
վճռ պարսպին , ոմանք ընթացան ի ներքս , և ոմանք հոսե-
ցին զանձինս ի պարսպէ անտի ի վայր , և փախեան : Եւ զօ-

Ա՛ մ պն
ե հայոց
703
ձծբ

Ա՛ մ պն
ե հայոց
704
ձծփ

704
ձծփ

Ա՛մոռել :
Ա՛ղբակոս :
Ա՛ղեքսանդր :
Ա՛ղեքսիոս :
Ա՛ոնարաս :
ծբ . 24 :

բացն կաշմայ յայն չիսոթ մուտ գտեալ՝ դիմեցին ի ներքս, և առին զքաղն, և աւերեցին զքիմ չինուհածս ։ Եւ ապա ժողովեալ զնմա գերիս՝ ածին զնս ի գամասկոս յոկոտն և բացագլուխ · * Եւ այսպէս ծս մեր (ասէ յովհաննէս կաթուղիկոս) ծովացաւ արտասուօք, և լցաւ բազում ողբովք ‖ ։ Ընդ այն գերեալսն կայր և մանուկ մի վահան անուն չորից ամաց՝ որդի խոստովանողն ներսի · որ ի տղայութենէ իւրում՝ տաճկացեալ՝ ի գամասկոս՝ կոչեցաւ վահապ · և քանզ ուսեալ զգիր և զօրինս հագարացւոց՝ եղև դիւանապետ արքունի ։

Ընդ ձեռնս : Ալանդիերս : գլ · լիս · 2 ։

Եր ընդ գերեալսն և շուշան դուստր վահանայ կամնարականի · զոր տարեալ՝ ի խառան քաղաք մինչագետաց՝ տանջեցին վնասս ի քէս հաւատոց · և ոչ կարացեալ խախտել զհաստատութենէ մտաց նր՝ արկին ի բանտ խաւարչտին · և անդ նեղէին զնա սով և ծարաւ · ուր և վախճանեցաւ իսկ երանելին յետ ամաց ութ , և ժառանգեաց զանուն խոստովանողի և վկայի · յամի ռն · 706 · և ի թուին հայոց · ձնե · ի քանևերեքերորդ ամի եպիսկոպոսութեն գրիգորիսի արշարունեաց ։ Եր յայնժամ եղբայր սրբոյն գագիկ ի վարդանակերտ , և շիներ անդ զեկեղեցի · և ի կատարել զնաւակատիսն՝ եհաս առ նա լուր նահատակութեն քեռ իւրոյ շուշանայ · եր որ ուրախ լեալ նր՝ կատարեաց անդէն և զաջն յիշատակի քեռն ։ Այս աւանդի ի պատմութենս եպիսկոպոսացն արշարունեաց այսինքն ե կամնարականաց , և ի ձառընտիրս և ի կանոնագիրս ի գլ · լիս · ի վերջն ։

706 ձնե

Պատճան : Պաղեփ :

Ե · Նոյն սմբատ բիւրատեան կիւրապաղատ , և գրիգոր և կորիւն արծրունիք , և այլ ևս մնացեալ նախարարքն վերծեալ ի ձեռաց ոստիկանին , և եղեալ յձէս հայոց՝ գնացին յձն եգերացւոց , որ էր եր ընդ ձեռամբ յունաց · և կայսրն ետ նոցա զքաղաքն մի որ կոչիւր փոյթ · յոր մտեալ նր՝ բնակեցան անդ զաւուրս քանի մի · և տեսեալ թէ յոյնքն ոչինչ օգնեն ինքեանց , այլ մանաւանդ հաձեալս ցուցանեն զանձինս ընդ թշուառութեն նր , յաւարի առին զքաղաքն · և կողոպտեալ զեկեղեցիսն՝ բերին զաւարն ի հայս ։ Ո այս լուեալ յունաց՝ բարկացան յոյժ , և կարգեցին նզովս ի վրն հայոց · զոր և կարդային ամի ամի ի տօնի զատկին յայնմ տեղիս՝ ընդ գրելոյն առաղկայ · է · 4 · և վարդանայ ։

Ընդ ձեռնս : Կեդրենոս : Ո ննարապ · ձբ · 24 ։

Հանդէն պատմիչք յունաց , թէ յայն աւուրսն և վահան նախարար չորրորդ հայոց՝ որ կայր ընդ հնազանդութենէ յունաց , ձանձրացեալ ի հանապազորեայ արշաւանաց հագարացւոցն , և ոչ գտեալ ինչ օգնուի ի յունաց , զձ իւր էարկ խոպատ ընդ իշխանութենէ հագարացւոց ։ Ընդ այս գործ վահանայ դժկամակեալ յոյժ յունաց՝ նախատական անուամբ

707 ձնէ

կո-

կոչէին զնա Էփեսատէմն , այլ և եօթնադև ։ Այլ յետ մեռանելոյ վահանայ նախարարի փիլիպպիկոս կայսր , զոր ոմանք կոչեն վարդան , և այլք անուանեն որդի վարդանայ ուրումն հայոյ , վերստին նոճաձեաց ՚ի հնազանդութի՛ւն յունաց զջորրորդ հայս . և զբազումս ՚ի հայոց յայլևայլ տեղեաց փոխադրեաց անդր առ ՚ի պաշտպանութի՛ւն երկրին ։

711 ՌԺԿ

Գ Լ Ո Ւ Խ · ՃՒԱ ։

Յաղագս գործոյ եղիայի կաթուղիկոսի ընդդէմ ներսեսի աղուանից կաթուղիկոսի . և յաղագս ոսկիհանութե՛ան վլհայ . և նահապատուե՛ան վահանայ գողթնացւոյ . և զօրանալոյ աղանդաւորաց հերձուածողին պօղիկեանց ։

706 ՌԾԶ

708 ՌԾԸ

Ա. ստէր ՚ի սմին ՁԻԿի կաթողիկոս յաղուանս ներսէս ոմն՝ բակուր առայել . սա քննել և ՚ի վեր հասել մտաց դաւանութե՛ան ժողովոյն քաղկեդոնի՝ ընկալաւ զայն , և հաւանեցոյց դշխոյին աղուանից՝ ընդունել զնոյն . և երկոքեան ՚ի միասին ՚ի նախանձ բարւոյ բերեալ՝ առաքին զբազումս յաղուանից ՚ի գիտութի՛ւն ճշմարտութե՛ան . իսկ ոմանք ՚ի նոցանէ անհաւան գտեալ՝ գրեցին առ եղիա հայոց կաթուղիկոս , և ծանուցին նմա զգործս կաթողիկոսին և դշխոյին իւրեանց ։ Նա եղիա երիցս գրեաց առ ներսէս և առ տիկինն յետս կալ յընդունելութե՛ն ժողովոյն . բայց չեղև հնար . որոյ վերջի՛ն գրեաց եղիա թուղթ ամբաստանութե՛ան առ ամիրապետն աբդլմելիք , և ասէ . գոյ աստ առ սահմանօք ծիս մերոյ ՚ի յաղուանս եպիսկոպոսն և տիկինն մի , որք միակամ հաւանութե՛ամբ եկին ՚ի հնազանդութե՛ն տէրութե՛ան ձերոյ . և ոչ միայնակին ընդմէջ , որք միշտ զանուն քոյ յիշատակեմք և քարոզեմք յաղօթս մեր ։ Նա ոչ այսչափ միայն , այլև մտեալ նոցա ընդ հնազանդութի՛ւն հռոմոց թագաւորին՝ հնարին ՚ի նա դարձուցանել և ջնջել մեր . և արդ՝ եթէ ոչ աճապարեցես բառնալ զնա ՚ի միջոյ աստի մերմէ , փութով ձեռնտու լինին նոքա ՚ի հռոմն ընդդէմ ձերոյ տէրութե՛ան ։

Ընդ այս թուղթ ընկալեալ և ընթերցեալ ամիրապետին՝ ձրջմարիտ համարեցաւ զբանն . վասն և բազմ ընծորհակալութե՛ան պատուհասաց զդեսպանն՝ որ տարաւ զայն թուղթ ։ Նա վաղվաղակի առաքեաց զներքինապետ իւր յաղուանս՝ ածել ընդ ներսես հանդերձ տիկնաւն առ ինքն ։ Գտեալ անդր ներքինապետին՝ փութանակի կալաւ զերկոսին և կապեալ երկաթի շղթայիւք՝ հեծոյց զնա յուղտս , և եբեր առ ամի-

707 ՌԾԿ

ղասպետն։ Վ[ասնեալ զինս ամիրապետին՝ իբրև ետես թէ չու-
նին ինչ յանցանս, եթող զինս. բայց ոչ ետ հրաման դառնալ
ՀԺ իւրեանց. ուր և յետ ումեն աւուրց մեռաւ ներսէս։
Վակ եղիայի գնացեալ յաղուձանս՝ արար ժողով ենկիսայ. և
հաւանութիւն նոյ ձեռնադրեաց՝ ի տեղի ներսեսի զսիմէոն ումն.
և յայս ժողով սահմանեաց սիմէոն քանի մի բարեկարգութիւն
վս ծէս աղուձանից։

Ի դառնալ եղիայի՝ ի հայս՝ եկեալ՝ ի նոյն աւուրս աշակերտք 710
անանիայի շիրակացւոյ, Հերմոնէ, տրդատ, ագարիս, եղե- ՀԾԹ
կիել և կիրակոս. որք հրամանաւ վէպին իբրեանց գնացեալ
էին յեգիպ։ Որք ևս՝ որք ստուգութիւն տեղեկացեալ էին ուղ-
ղութեն մտաց դաւանութեն ժողովոյն քաղկեդոնի, սկսան
քարոզել զնոյն՝ ի հայս. և բազմաց խոկ հաւանեցուցին ընդ-
նիւ զայն։ Իբրև իմացաւ եղիա կաթողիկոս զդործս նոցա, չանա-
յաւ լռեցուցանել զնոսա. և նոքա ոչ ևս իշխեին խօսիլ համար-
ձակ, այլ՝ քարոզէին՝ ի ծածուկ։

Յայն աւուրսն նոյնաւ ամիրապետ օմար կիսէմէր. 717
և առաքեաց՝ ի հայս ոստիկան ումն վիլէթ կիսէվլետ անուն՝ ի ՀԿԷ
տեղի կաշմայ. և յայնմ հետէ ՃՀ մեր ինայ՝ ի ձեռս ոստի-
կանաց, որք առաքեալ լինէին յամիրապետէն. և ընդէմ կա-
մաց ամիրապետին բազում տուպանս և տաձապանս հասու-
ցանէին ազգին։ Վակ գերեալքն՝ ի կաշմայ՝ ընդ որս և վահան
գողթնացի, մատուցեալ աղերս առաջի օմարայ ամիրապե-
տին՝ խնդրեցին ազատուի. և ՃՀղի գՃաստրատ ումն էր օմար,
զինջեալ յոտաշանս նոցա՝ արձակեաց զնոսա, և զվահան գողթնա-
ցի ընդ նմա՝ պատուս պայմանաւ, զի յետ ութևտասն ամաց դարձցի նա
անդրէն յետս։

Ա՛ռաքեալ վահանայ՝ ի հայս՝ տիրեաց գողթան գաւառի՝ ի- Ա՛ռաք. 28։
րումն ժառանգութեն. և ապա յիշելով զուրացութեն իւր՝ ըն-
կաւ լալ. և ողբայր անդադար. և աւազան կարդեալ զար-
տասուս իւր՝ լուանայր զմեղս. և եկաց այսպէս ՃՀ ինչ։
Ա՛յ յետոյ յորդորել յիշեանոյց ումանց՝ ամուանացաւ ընդ դրս-
ուեր բազկենի իշխանին սիւնեաց. բայց ՃՀղի միշտ՝ ի կասկա-
ծի էր, թէ գուցէ գործակալք հագարացւոց մատնեսցեն
զնա ամիրապետին, խորհեցաւ խոյս տալ յՃՀն յոմանց։ Այն
իմացեալ կնոջ նորա՝ ազդ արար եղբարց իւրոց. և նոքա արգե-
լին զնա. և ապա գնացեալ՝ ի սիւնիս՝ եկաց անդ ամ մի։
Ի՛ՀՀել զնամէ ամիրապետին՝ խնդրակս առաքեաց ածել զնա
առ ինքն. և նոր գնացեալ զայս՝ սկսաւ շրջիլ՝ ի վանորայս
և յանապատս. և գնացեալ՝ ի շիրակ գաւառ՝ ՃՀնեալ՝ ի միայ-
նարանի միում կերպարանօք աղքատի ամիս վեց։ Այլ շի-
րակացիք կասկածեալ՝ թէ գուցէ չարիք հասցեն ինքեանց

վա՛ նմ , հրամմանաւ ոսկնոջ տեղւոյն վարեցին զնա անտի
եւս : Եւ նո՛ գնացեալ յերկիրն գեղամայ՝ ի վանքն մաքենիս՝
ձգնեցաւ սա մի . և՝ ի ձեռս առեալ զնուագարանն գիրս՝ ըն-
թեռնոյր և խելամուտ լինէր ծածկին գիտութեանց : Եւ յետ
բազմամեայ վտարանդութեանն իւրոյ փափաքեալ մարտիրոսա-
կան մահու՝ ինքնակամ յանձն էառ գնալ՝ ի դուռն ամիրա-
պետին . և յանդիման լեալ նմա՝ յայտնեաց զինքն . և յետ
բազում չարչարելոյ վա՛ռ՝ ընդ ձեռն հաւատոցն՝ գլխատեցաւ՝ ի
ռուճափ քաղաքի , յամի ռնե . 737 . և՝ ի թուին հայոց .
{737 / ՌՃԶ} ՌՃԶ . կիս ըստ յայսմաւուրաց . ՌՃԶ . ի մարտի . 28 . զկնի ե-
րեսունևերեք ամաց՝ ի գերութենէ անտի իւրմէ : Եւ ամիրա-
պետեալ քրիստոնէից զնշխարս նո՛ շինեցին զեկեղեցի յանուն
նորին : Օ՛ ամանէ երկար գրի՝ ի Հաւընտիրս և յայսմաւուրս .
եթէ կամին , տե՛ս անդ . և մեք դարձցուք՝ ի կարգ պատ-
մութեանս :

717 ՉՃԿ Ի՛ գ . Ի՛ դառնալ գերելոցն ընդ վահանայ՝ ի հայս , ի վեր-
ջին աւուրս կաթողիկոսութե՛ եղիայի՝ միաբանգամ նորոգ՝ ի վեր
երևեալ էին չա՛ր անդ ոմանք չարաշանդք հետևողք պօղո-
կեանց . որք և որսայեալ զբաղումն՝ ի պարզամտաց՝ արկին
զնո՛ ի խորխորատ կորստեան . նաև քաղում ընծայիւք հա-
ճեցուցեալ զմիտս ոստիկանին վրացոյ՝ զօրացան ձեռնտո՛ւթե
նո՛ : Որք ըստ իւրեանց նենգապատիր չարուձն նախ սկսան
քարոզել , թէ չէ՛ արժան պատի՛ւ տալ պատկերաց . և յե-
տոյ , թէ՝ և ոչ խաչի , ասելով , կռապաշտութի՛ է այն . և
յետ այնորիկ հայհոյէին , թէ և ոչ ա՛յ պարտ է պաշտօն մա-
տուցանել արտաքսեալ զի նա ոչ կարօտի ասեն մերում եր-
կրպագութե՛ . և ապա քարոզէին , թէ պա՛րտ է պատուե՛լ զդե՛ս , զի մի՛ չար լինէ արասցեն ընդ մեզ , այլ՝ բարեկամացեալ
յաջողեսցեն մեզ :

Յայսմ ամի խելացնոր աղանդս պաշարէ տոցա՝ ամ գարշելեաց գործարան լինելեն . և յա՛մ՝ անօրէնութի՛ն անկղնտանային : Ի՛ խաւարի վխաւարայինսն գործէին գարշ ծանակութի՛ք . և՝ ի լոյս տո՛ընջեան անախտ երևեցուցանէին զանձինս առ՝ ի պատ-
րելոյ զմիամիտս : Ա՛ն օգնութի՛ գտանելոյ աղաչէին զարե-
գակն և զլուսին , ասելով՝ * արևիկ , լուսիկ ‖ . և յասեն զայս
կոչէին կախարդանօք գործոյին դե՛ս : Օ՛ դիակունս մեռելոց
դնէին՝ ի վե՛ տանեաց՝ և շշնջէին՝ ի վեր հայելով : Ա՛նուն
զարհուն տղայոց , և ընդ աղեր զանգեալ ուտէին : Ի՛ ծնանիլ
կնոջ զառաջինն որդի՝ առեալ՝ ի մէջ իւրեանց՝ խաղային ձեր-
բաձգութի՛ . և յորոյ ձեռս մեռանէր , զնա իբր մեծ ումն սպաշ-
տէին . և անսպատակառ բանիւ՛ զնա վկայ կոչէին . * վկայ ասեն
ոչնիմ քեզ զփառս այնորիկ , յորոյ ձեռս միածինն որդի զոգի

Յովհաննէս Եդեսացի՝ "Ընդեմ պօղ" :

իւր աւանդեաց ։ Այլ երբեմն ի մեռեալ տղայն երդնուին՝ ասելով . * երդմնեալ ի միածինն որդի ։ Զայս ասելով՝ կարծեցուցանէին ոգեխտաց , թէ յոյժ հայր և յորդի նոր միածին երդնուն ։ Խաղում և այլ չարապաշտուիք էին ի մէջ սոցա , զորս անկատար է թուել ։

ՃԸ. Ապա՝ ոմն ասացաք յերկիր գիրս . Ժամանակ . ծՁ. (ւ). երես. 766. էին ի պօղիկեանց մանիքեցւոց խառն յիմ աղգաց . որոց ումանք մանաւանդ անուանմբ արևորդիք կոչեցան . և կէսք ընկալան նաև զօրէնս հագարացւոց . յորոց ելին եզիտիք ։ Երբեմն սոցա յաւուրս ներսխի հայոց կաթողկոսի՝ չինաղ կոչեցելոց , մերժեցան և հալածեցան ի նմանէ . ոմն ասացաք ի գլ. ծԸ. երես. 356 . և 357 . և յետ մահու նորա միաւանդամ խլրտեալ՝ արարին իւրեանց որպէս չարուէ ի տեղւոջ ուրեք չծին հայոց առ լՀիւն , որ ջրկայ անուանիւր ։ Յարեցան յայսոսիկ աղանդաւորս և ումանք յաղուէանից , որք վն պատկերամարտուէ մերժեալ ի կաթուղիկոսուց իւրեանց յուխտանիսէ և յեղիազարէ և ի ներսխէ՝ հետզհետէ խոյս տուեալ ապաւինեցան ի սոսս . ապա յաւելան և ումանք ի հայոց ի ժամս վրդովմանն ծին յաւուրս կաթուղիկոսացն սբին սահակայ . միաբանեցան ընդ նոսա և այլք ումանք յօտար ազգաց՝ արք ժպիրհք և անօրէնք . և ըստ ասելոյ յովհաննու իմաստասիրի , յայն ջրկայ ասացեալ տեղին * ի միասին ընթացեալ կուտեցան ամ ուստեք՝ ոմն անգեղք ,, աշխարհաց ի նեխաշաղիղ լինչ գետ ։ որ և դնեն զպատճառն՝ ասելով . * զի սիրէ առ համանմանին իւր հասանել վերիպէնն ի չմարտուէ ։ Այս իբրև բազմացան սքը ըստ այսմ օրինակի , սկսան այնուհետև ի դուրս երևիլ և մեծել ի միջոցս աշխարհին հայոց և յունաց և ասորւոց և արաբացւոց , և այս մանաւանդ ի յետին աւուրս կաթուղիկոսուէ եղիայի . և եղև առաջին գէն նոցն արհամարհել զպաշտօն պատկերաց . յորմէ և զինի սակաւուց զօրացան ի մէջ յունաց պատկերամարտք ումանք , ոչ միայն ի հաւատոյ ժողովրդենէ , այլ և ի կայսերաց և յեպիսկոպոսաց՝ յաւուրս լևոնի խաւարացւոյ և կոպրոնիմոսի . ոմն տեսցես ի գլ. կԸ ։

Ե. Իսկ եղիա կաթողկոս հայոց զբաղել գոլով ընդեմ քաղկեդոնականաց՝ անփոյթ եղև տարագիր առնել զայսոսիկ չար աղանդաւորս պօղիկեանց յՀայոց ։ Այս սակայն յաւաւելն զինել նոր ընդդեմ նոցա քան ընդդեմ սոցա՝ առաւել եղև Թիւր բազմանել նոյ՝ նոր քաղկեդոնականաց . մանաւանդ այնոցիկ՝ որք էին ի բաժնին յունաց . յորոց միջի ոչ սակաւ յուզէին յայնժամ հակառակաբանուիք յերկուց կողմանց ևս , ի վր մի և երկու բնաւի ասելոյ , ի վր խմորոն և անխմոր պատարագելոյ , նոյնպէս և ի վր անջուր և ջրախառն պնորգելոյ , ի

վր

Ա. մխ. պն և հայոց Ե. 4 7ւ7 ձկիզ

Ա. Մկ. պան և հայոց 717 ՉԿԷ

վէր առանձինն տօնելոյ զծնունդն, ի վէր խաչելեացարիւն և առնոյց խաչելեացարի երգելոյ զօրք ամենն, ի վէր իւղոյ երեխայիկ և հիւանդ գայ ։ ևբ ։ ըն որում յայտնի ցուցանեն քանք յովհաննու իմաստասիրի, և սա և ստեփաննոսի ասողկայ ։ Ը ։ 2 ։ ևբ ։

Ամանք ի սոցանէ եկին ի մեծն հայս ։ և փոխանակ զՀիւսարատուն քարոզելոյ՝ սկսան խռովել զժողովուրդն, և վարիլ ընդ նա անարգանօք ։ և կոչել զնա հերետիկոս և ամբաստարկուս, և արհամարհել զպաշտամունս և զպատարագս նոյ, և եպերել զտօնսն ։ Այս էին ոմանք և ի մեծն հայս՝ որք հաւանէին ըստ այնպիսիս, միաբանեցան և սքը ըն նա ։ և ինքեանք ևս եղեն միջամուխ ի յուզմունս խռովութեց, և սրկին երկպառակութի ի մէջ բազմաց ։ Այս թէպէտ եղիա կաթուղիկոս պատուհասակոծ արար զամանս ի նոցանէ, և զամանս հալածեաց ի վիճակէ իւրմէ, բայց չկարաց խաղաղացուցանել զազգն ։ մնէնդ ալ և ոչ երկարել զկեանս իւր՝ մեռաւ, կացել յիշխանութե իւրում ամս ։ ԺՂ ։ և ամիսս իբր ։ 6 ։

Գ Լ Ո Ւ Խ ։ Կ ։

Յաղագս կաթուղիկոսաց յովհաննու եմասպատրի, և գործոց նը, և եօթնեերորդ ժողովոյն գումնայ՝ որ արար նա ։

718 ՉԿԸ

Ի ին ՚ի ամն եղիայի յաջորդեաց յաթոռ հայրապետութե հայոց յովհաննէս չորրորդ՝ մականուն՝ նեաղն իմաստասէր կամ փիլիսոփայ, ՚ի գաւառէն տարօնոյ ։ յամի ՚ի ամն ։ 718 ։ և ՚ի թուականութե հայոց ՉԿԸ ։ Օ ամանէ քիմ գովութե բանք գրին ՚ի պատմագրութե յովհաննու կաթուղիկոսի յաջորդին մաշտոցի, և ՚ի հին ձեռագիրս յայտնութա, և ՚ի զանազան մատեանս ։ զոր և հաստատեն գրուածք սորին իսկ յովհաննու իմաստասիրի ։ յորոց առեալ և մեր՝ գրեցուք աստ ։ Այս ՚ի մանկութե աշակերտեալ էր առ ոտս մեծի վարդապետի իմաստնոյն թէոդորոսի քրթենաւորն կոչեցելոյ՝ առն քաջ վարժի յամ իմաստս ՚ի ծայնն գիտութե և հելլենական իմաստասիրութե ։ զորմէ գրեալ ունք ՚ի գլ ։ ծՂ ։ Ի նմանէ ուսեալ յովհաննու զամ ուսումն՝ գերագոյն գտաւ քան զբազումս, մինաւանդ թէ քան զամենեսեան՝ որք էին յիւրումն ժամանակի ։ և եղև քաջ տեղեակ ՚ի ծայնն և արտաքինն գիտութե ։ յաջողակ ՚ի քերթողութե արուեստի ։ պերճ ՚ի հռետորական հանդիսի ։ և առաւելեալ յուսումն փիլիսոփայական մանաւանդ յոյժ՝ ըստ ամ մասանց նորուն ։ որով վա և կոչեցաւ փիլիսոփայ կամ իմաստասէր ։

Յովհ. կաթ. Ա. պրէլ. 17. Գիշա ։ Պապ ։

Կրեաց բազում ինչ . զորոց ունելիք յիշատակել ՚ի ստորև . այլ այնքան նուրբ է ոճ բանից նոցա , և այնպիսի արուեստագործութեամբ յօրինեալ , և այնչափ խորհրդոց իմաստութեամբ լեռիւրեալ , մինչև անկարելի է ումեք անվթար և ամբողջ իմանալ զիրս շարագրուածս բանից նորին , բայց եթէ քաջ վարժելոյ ՚ի քերականական և ՚ի հռետորական արուեստս , և ՚ի տեղեկութիւն նախնի պատմութեանց , և հմտացեալ ՚ի խնդիրս փիլիսոփայական մակացութեանց , և մարզեալ յաճախականի դիտութիւնս և ՚ի մեկնութիւնս սքանչելոցն . ապա թէ ոչ՝ եթէ ոք յինքեանէն զբանս նոքա , համարեսցի՝ թէ իմացաւ , ՚ի քննելն վերստին՝ ծանիցէ թէ չէ իմացեալ : Զնդ այսպիսի նրբութեամբ նոցա վեմ է յոյժ և հոյակապ իմն՝ շարադրուի նորին և քաղցր . զորոյ զձաշակն առցես յընկնիլ գրելոցդ . որովհետև և յոյն հանճարեղ պատմագրացն՝ որ քաջահմուտն է ՚ի պանծալի շարադրուին : Այլ սա ըստ ներքինն և ըստ արտաքին կազմուածոյ ևս գտաւ գերազանց յոյժ . ըստ մասին ներքնոյ՝ մեծահոգի և ազատանձնեայ , բազմահանճար և լայնախորհուրդ . միանգամայն խոնարհատիտ և խաղաղասէր . իսկ ըստ արտաքնոյն՝ վայելչահասակ և թիկնաւէտ , շքեղատիպ և փառացի : Ի ներքնոյ ուներ զգեցեալ խարտեղն խիտ և անտանելի . իսկ արտաքուստ յաւուրս հանդիսի ազգաներ ահեղակերպս . մինչև ամէն ակնածել ՚ի նմանէ , և պատկառանօք մերձիլ առ նա :

Ա՛ ՚ի նատիլ իւրում յաթոռ հայրապետութեան , բազում խնամով փոյթ կալաւ յանդորրու պահել զհօտ իւր , որ ՚ի բազում աւմուկս շփոթից տատանեալ լինէր , մանաւանդ յերից . Ա՛ ՚ի կեղծաւորութենէ ամենայնի աղանդաւորացն պօղիկեանց . որք մուտ գտեալ էին ՚ի հայս յաւուրս եղիայի . ոչ սասացաք ՚ի նախընթաց գլուխդ : Այդիկ՝ յանկարդուէ ոմանց ՚ի քահանայից և յՅակոբանաց . որք աներկիւղ վարելով բազմ ինչ անպատշաճ գործէին յեկեղեցւոջ և արտաքոյ : Այդ՝ ՚ի հակառակութենէ անձանց ոմանց ընդդէմ միաբանից գինելոց՝ պատճառ այսոցիկ , որք ըստ գրելոյ մերս այժմ՝ եկեալ ՚ի մանանէ բաժնին յունաց՝ վիճէին ՚ի վերայ ծիսից եկեղեցւոյ , պնդելով՝ թէ պարտ է խմորուն և ջրախառն պատարագել , և առանց խոչեցարի զնոսա ածն երգել . և զոմն ծննդեան ՚ի դեկտեմբերի 25 . կատարել առանձինն . զիւղ երեխայից և զՀիւանդաց ՚ի կիր առնուլ . յաւուրս քառասնորդաց ՚ի շաբաթու և ՚ի կիրակիս առնուլ . զձուկն . և այլ ևս բանք բազումք :

Յորդորեալ ոմանց ՚ի բանից սոցա՝ սկսան այլատարազ ծէսս վարել արտաքոյ հաստատուն կարգի . զի ոմանք խմորուն պատարագէին , բայց առանց խառնելոյ զջուր . ոմանք ջրախառն և խմորուն . ոմանք յերգեն զոնձ ածն՝ յերկրորդումն նոճապէ

Ա՚մէ պն
ն հայոց
718
ՉՀԿԵ

միայն սահին վնասչեցարն . իսկ յառաջնումն և՛ ի վերջնումն
ոչ . իբր թէ այսու միւն՛ ի սրբասացուեց սասացի՛ ի դէմս հօր ,
միւսն՛ ի դէմս որդւոյ՝ որ խաչեցաւ , և երդն՛ ի դէմս հոգւոյն
սրբոյ . ոմանք առանձինն տօնէին զծնունդն . իսկ զօր յայտնումն
առանց յատուկ պաշտամանց կատարէին . ոմանք կամէլով զե-
րեսայից և զհիւանդաց իւղ՛ ի կիր առնուլ՝ փիսկ այնր զսրբ
միւռոնն՛ ի գործ ածէին , և ոմանք զայլ իւղ՝ բերեալ յեկեմ ,
զոր և խաչի ձեթ անուանէին :

Ա՚ալ քանզի ազգն առ հասարակ ըստ իւրեանց նախնի սով-
րուելն վարէին , զայսպիսի այլայլուելի ծիսի տեսեալ՛ ի նո՚
ոչ միայն զայթակղէին , այլև գուն գործէին հալածել զնո .
և այր ըստ եղբօր իւրում ըստ թիւնամի կագէին : Իսկ առաջնորդք
ազգին եթէ արդարացի և ուղիղ հնչ և տեսանէին՛ ի փափո-
խուելս նոյ , չէին ձեռնհաս յայն յորդորել զազգն վնո հաստա-
տեալ լինելոյ՛ ի նոսա ներհական սովորութեն . մանաւանդ զի
ոչ գոլով յայնժամ սեպհական իշխանութեի ազգին՝ դժուարին
լինէր կատարել , զոր կարելին էր առնել . և այնպես զնստո-
վարարան զսպելով , և զերկպառակութեան բառնալով՝ խաղա-
ղութե դարմանս մատուցանել . և՛ ի տեղի տալրացեալ հին սո-
վորութեց ըստ կարի զպատշաճականն կարգել . և յայմ յու-
ղիղն յօժարեցուցանելով՝ ոչ միայն՛ ի խռովութենէ պահել
զազգն , այլև յանստերիւր գնացս անխոտոր և անքոյթ ա-
ռաջնորդել :

719
ՉՀԿԸ

Ը . Մնաւ ածեալ ապա հայրապետին մեծի յովհաննու իմաստասիրի , որոյ ՚ամ փոյթ էր զազգն՛ ի խաղաղութե պա-
հել , և՛ ի դառնութե ժամանակի անդ ըստ քաղցր լծոյն քրի-
ստոսի՝ զոր կարելի տեսանէր : Սմին իրի յերկրորդում ամի անդ
կաթուղիկոսութե իւրոյ հրամանն եհան առ համօրէն եպիսկո-
պոսունս մեծին և փոքուն հայոց՝ գալ ժողովիլ՛ ի հայրապե-
տական աթոռ՛ ի մայրաքաղաքն գոհին : Ըստ եղև անդ ժո-
ղով մեծ և գումար հանդիսի բազմութե հայրապետաց հայոց .
յորում նախ ինքն կաթուղիկոսն յովհան իմաստասէր բացեալ
զբերան իւր՝ սկսաւ առաջի դնել ժողովելոցն զվիճակ եկե-
ղեցւոյն հայաստանեայց ըստ այնմ ձևի , և յուշ առնել զառա-
ջին բարեզարդուն նորին՝ զկարգեալն՛ ի սքոց հարց անտի՛ ի
նախնեաց մերոց : Ըստ զայս յանդիման կացոյց նոյն զեղեցիկ օ-
րինակաւ անմեղսք հասակի , որ՛ ի չափ հասանելն օր քան
զօր յանցուածոց արատաւորութե անշքանայ , յանձն իւր ա-
ռակեալ զսոյն՝ ձոխ և վսեմ ատենախօսութե . զորոյ զբանին ըն-
մանեայ յառաջ բերել աստանօր կարևոր համարիմ : Ա՚դդ
սկիզբն արարեալ սորա ատենաբանութեան իւրում՝ խօսի

այսպէս :

Յովհաննէս իմաստասէր . յայնմ ատենի :

այսպէս։

* Համբերողացն նախատիպ մեծն Յովբ՝ ասէր երբեմն յիւ-
„ րում բանսն՝ նեղեալ ՚ի փորձանացն սրկածէից. ոչ առնէր
„ զիս ըստ աւուրցն առաջնոց. միանգամայն ՚ի բայ եդեալ
„ զքայլողուն, զընչաւետուն և զբազմորդուն։ Ո՛չնոյնս և
„ ես հանդերձ հառաչմամբ բարբառիմ, ՚ի դիպուածոց ա-
„ տի վտանգեալ. Որ զիս անցելոցն առաջի դնէր ամմնա-
„ կաց, վերատին զմանկական տիոցն զգեցուցանելով զհա-
„ սակ յորում Ձոխացեալն էի հայրենատուր Հոգեկան ընչիցն
„ առատուբ. և զարդարեալ հրձուէի եօթնամամնեայ հոգ-
„ ւոյն պատմուճանաւ. և շնորհացն պսակաւ փառաւորեալ
„ գլխոյ իմոյ. և զառաջնորդականին իմոյ կախեալ զպարա-
„ նոցէ զոսկետեսակ զքայդամանեակին զգեղեցկութի. և ա-
„ մենևին զնոյն ընդ իս բերէի զհարսնական յօրինուճածոյն
„ զգեստ, պատշաճ լինելով յերկնայնոյն պարփակիլ փեսայի
„ առաքաստ. Քզի արդարև զարդարի պատկերս՝ առաքի-
„ նոնէն երանդովք՝ ըստ նախատիպին կերպարանեալ, որպես
„ Հնմարտունն և ինձ Թուի։ Այնժամ բոլորովին ես ինքն
„ էի լուսատեսիլ՝ յոճծայնոյ Թափանցանց լինելոյ նշուլից.
„ զոր իբրև մաքուր հայելեաւ առ իս զիրկչականն ձգելով
„ դիմի զնմանուն, հանդոյն արեգականն ՚ի խորս ուրեք ընդ
„ յատակուն ջուրցն առաքելով զիւր ՀառագայԹան։ Եւ նախ
„ նորին ստէպ ստէպ Հոգւոյն ուղևից վտակօք ոռոգաներ զար
„ գաւանդ երկիր մտաց իմոց. և որպես ՚ի ծաղկահոտ գինի
„ սպունդ լինել Թացեալ, այնպես լցեալ ուռճանայր ՚ի նմանե
„ բանական իմ ոգի. մինչ զի կարել ասել լինձ զայն ժամու
„ պատահիցն՝ իբրև զայլմէ պատմելով. մանուկ էի մտա-
„ վարժ, և ոչ ոչոյ բարւոյ դիպեցայ։
„ Վանդն և վարժապետ վերհագոյն ունէի յայ պարգևեալ
„ լինձ՝ հայր, միանգամայն և հրահանգօղ Հոգեկան վար-
„ ժուԹց, զինն Թէոդորոս, ըստ մերումն՝ ածանունի պատշա-
„ ձեալ՝ լեզուի. որ ոչ զառ յինքենէն ևեԹ բաւականանայր
„ շտեմարանել յիմումն ոչ ուղղ զբարին, այլ և ՚ի յոլովից ըղ-
„ պայծառագոյնն ծաղկաքաղ առնելով զընծորհաց, լիացու-
„ ցանել զագահունն իւրոյ լինև ջանայր զուսումնասիրուն։
„ Եւ գրեԹէ յազդմանե Հոգւոյն զլինելոցս նախատեսեալ՝
„ զառ ՚ի յոքունցն հաւաքեալ պատրաստեր լինել բազմաց
„ պիտոյից նիւԹ, ծածկաբար զնոյն առ իս բարբառելով.
„ կէր մանր զմատեանդ զայդ՝ պատգամատուդ հրաւիրեալ
„ լինել ինձ Եանն ազին։ Եւ եԹէ երբեք ուրեք խորհէի ար-
„ դեօք զհրամանացն խորտակել զլուծ, և խզել զաշխա-
„ տուԹենն սամեստս, այլում ումեք ակն դնելով կենցաղա-

„ կան

,, կան տարփանաց , ձծայինն ընդրէն ձգեալ զերկը
,, զիս կապանօք սիրոյ իւրոյ , սաստելով յականջս խորհրդոցն
,, իմոց • զի կայ քոյ և ձանաչարհին եգիպտացւոց՝ ըմնել
,, զջուրն գեհոնի • յաղագս որոյ ասա հաւանեալ իմ այսո-
,, քիւք՝ իբրու թէ ձայնիւ կոչողին զիս ես , զյանձնառականն
,, ընառաջ տանելով քան • ահաւասիկ եմ ես , առաքեա զիս •
,, զմր օրինակ ձի ոք նորաւարժ ոչ կարացեալ յինքենէ զվեր-
,, ելեակն իւր ի քաց ոստուցանել , զակամայ սանձիցն բըռ-
,, նադատուն զժոխականսն իւրոյ եղեալ՝ գործիցէ քաջ
,, հլուն ասպարէզ ։
,, Ա.յսքանք և այսպիսիք յիսկզբանն առ իս ես նախախնա-
,, մուն մեծուն • որով իմիք առասիկ ես այժմիկ հարկանեմ
,, զանձն իմ և նուաստանամ • հաղցափորձեալ ի սոնէ , թէ
,, զիարդ անհանձարեղագունի հասակին տուիմ զգործոցն խո-
,, հականուն • իսկ զգեղապարելն ուսեալ ներշնչանակացն՝ և
,, մակացականօքն փարթամացելոց , զյոլովս անդուստ ի քաց
,, յուզարկեցաք զգործնական իմաստուն ։ Ա.ինչ զի ըղձալի
,, լինել լինձ այսօր՝ ոմի յառաջն ասացի՝ հանդերձ կատարե-
,, լութեամբ և պատուոյս բարձրութեամբ՝ դառնալ հանդիպել
,, մատաղագունի և անթարշամ ի մեղայ եղելոց հասակին •
,, եթէ պարտ է ըզ առաքելական բանին զպիտանի և զընտ-
,, րեալ անօթ ընուլ պատուական գանձու , վկայք լինելով
,, յարմարուն միմեանց հանգիտաբար և ազդակցաբ ։ Ա-
,, զի մի թուիցայց՝ այագունիւ բերեալ ցանկութիւն՝ զպեղինոյ
,, զթեատացւոց գուռոյն ախտանալ , որ զզառամացեալն
,, իւր միդիայ առաջի առնէր առ ի յօշել՝ զմարմինն , ոմի թէ
,, ի մեռելոյն առ մանկուն զծերուն փոխոխել յուսալով •
(Ա.յս այն պեղիաս է արքայ Թեսսաղիոյ , զոր յիշեցաք •
գէր • ա • երես • 85 • որ խնդրեաց ի պիւգեայ պատգամախօսէն
ապողոնի , զի զզառամացեալ մարմին իւր յօշմամբ մանկա-
ցուսցէ • որ չէր կարելի • և այսու կամի ցուցանել հայրա-
պետն , թէ կան ինչ ինչ սովորութիւնք յազգին , զորս մարթ է
ուղղել • և ինչ ինչ ևս՝ զորս անհնար է փոփոխել վ առաւել
հնուէն • յաղագս որոյ՝ ասէ •) ,, դարձցուք , և զկարելոյն
,, բռնուն հարցուք , ի քաց դնելով զանհնարինն մտածուի •
,, զի կարելի է բանական կենդանւոյս՝ ամենեցուն յիմ ժամ
,, լինել զինչ և կամեսցի • թէպետև ոչ համանգամայն ի
,, միոջէ և ի նմին ժամու ներգործելով զներհականն , որ
,, միանդ ըզ զօրուն երկոքինն ի նմին գտանին ի մարդն ։ Ա-
,, պարտ է այնմիկ՝ որ զնուստացեալն իբրև զըմբռնելոս յու-
,, սոյն ողջունել գիտէ , յարատեւողացն և դժուարաշարժիցն
,, հոգ տանելով ձգել ձեռն • որք միանգամ բնաւորեցան

,, կամ

,, կամ ոչ հեռանալ ի մարդոյն , կամ թէ հեռացեալ՝ վաղ-
,, վաղակի վերստին դառնալով յարահիւսել . և այս են առա-
,, քինութիք , որք առ հասարակ հոգւոյ և մարմնոյ զփառացն
,, ի գլուխ յօրինեալ կապեն զպսակ ։ Ոչ զի այլք ի տրա-
,, մադրուեցն ճմկաւ տրամակայեալ՝ լուծանեն զմիմեանս .
,, իսկ առաքինութի հանապազորդ ի մէջ ինդրէ բնականալ .
,, վ՚ս զի յայս իսկ և գոյացուցիչն վերոս հաստատեաց բնութի ,
,, զի բարեգործք և ածասերք եղիցուք . և ինքնիշխանութեն
,, կառոյ իբր ի տեսարանի ումեք ի սոսա նահատակել հան-
,, դիսացուք , կնքելով որպէս Թագաւորական մատանեաւ
,, ածայինն երկիւղին զսիրտս մեր և զձեռս . ըստ որս յարմա-
,, րեալ պատկանի խորհուրդ և գործ . զի նոքումբք իրօք , ո-
,, րովք առ մահն սողոսկեալ անկաք , առ կեանն դառնալ
,, վերստին գիտիցեմք ։
,, Օ կնի որոյ ապա ձչմարիտ և քաջ հովուապետին հնարել
,, հանգիստատիպ առ նմանութենն , զառ ի նմանել ի վայր մնա-
,, ցեալն՝ ի մերումս ընդով մարմնի՝ զվշտամբերութիս . մինչ
,, զի կարօղք լինիցիմք համարձակապէս որոց իշխիցեմքն հրա
,, մայել . նմանօղք լինձ եղիջիք, ոպ և ես քնի ։ Ձանգոյն նմա
,, առաջի երթալ ըստ պատուիրանապահութեն չաւիղս . և զառ-
,, դելոյն ձայն միշտ ի լսելիսն հնչեցուցանել՝ զաւետարանա-
,, կան քարոզութեն վարդապետուն . զառողջ և զանվնաս քա-
,, նիցն ձարակեցուցանել դալարիս . և առ մնուցիչ հոգեկան
,, պատգամացն մնուցանելով զոչխս , մանաւանդ՝ որ արտաքոյ
,, ապականացուիս այսորիկ է՝ ի հրաւիրեցելումն զմեզ վայ-
,, րի . անխրամատելի երեքկին շրջապատել զինս պարապատ՝
,, եռանձնական հաւատոյն խոստովանութե . և ըստ գալանացն
,, կռուել յարձակմունս . զի մի քայքայեալ ցրուիցին մերձ ի
,, գժոխս՝ գեղեցկապէս միաւորեալ քնի անդամքն . այլ ամե-
,, նեքին միով գաւթի՝ միով քնական գաւազանիւն յարդարես-
,, ցին լինել հօտ ։
,, Ոչանզի տեսանեմ ի յոլովագոյն և ի ծանր իրս անկար-
,, գութի քազմացեալ , ոչ միայն ի ժողովրդականս , այլ ա-
,, ռաւել յուխտի մանկունս՝ և յառաջնորդս եկեղեցեաց ։ Որք
,, մին լեզու՝ ի ձեռն միոյ քարոզի ի մի եղաք ձչմարտութե
,, ձանապարհ . և արդ քազմահետք և քազմաշաւիղք եղաք ,
,, յանչափաքար և զանազան և այլաձևան առնելոյ , թէ ըզ-
,, վարս , և եթէ զփառաբանութիս՝ որ առ ածծ . մինչ գրեթէ
,, զնոյն կրել զինեաս ըստ հնոյ պատմունն՝ պատերազմել մեզ
,, սգր ըստ եղբօր՝ և այր ըստ ընկերի , քաղաք ընդ քաղաքի , և
,, օրինք ընդ օրինս ։ Այրկրական զբօսանօքն և վանառացն
,, տուրևառութք՝ խոսակիցք և հաշուակիցք իրերաց լինելով

,, և առ խաղաղութեն ՚ի ժողովեալք՝ զնաազաղութիւն խնդրել,
,, խուճապիմք և խռովիմք. և իբրև այլազգիք և այլալեզուք՝
,, տանիմք և բերիմք զմիմեանս. լինելով սա նմա խուժ, և
,, այլք այլոց պուժ ॥։

Ա՚յսպիսի գեղապանծ և խորհրդաց բանիւք կանխաձառեալ յովհաննու իմաստասերն հայրապետի յատենի ժողովոյն, մի առ մի առաջի եդ ժողովելոցդ զհանգամանս անկարգութեց ինչ եղելոց յիւրում ժամկի. և ՚ի վեր. ՚ի ասար վարդապետութենէ երկար բանիւք այնչափ գեղեցիկ, մինչև արժան իսկ էր զնոսին ոսկեգրով գրոշմել։ Յակ ՚ի վախճան ձառիցն՝ յաւարտ հասուցեալ զբան իւր՝ ասէ. * Ա՚ռայց արդ՝ այսոցիկ այսքան բաւական լիցի, սակաւս ինչ ՚ի բազմից նշանակելով յորովիցն ՚ի գիտուն ածել կամեցեալ։ Ա՚յլ զի և չէ իսկ առաջի կայս մեզ զատեղծեալն եղծանել հակաձառութեամբ տարօրինակ սովորութեն, այլ՝ կանոնական սահմանադրութեամբ ըստ իւրաքանչիւր գլխոց զհիմնացեալ զանկարգութիւնն քակել և ՚ի բաց հանել յեկեղեցւոյ այ. և փոխանակ նոցա զբաւելութեանն և զօգտակարագոյնսն ՚ի տեղւոջն արձանացուցանել։

,, Ա՚րդ՝ որովհետև ՚ի միասին հրաւիրեալ դումարեաց զմեզ
,, ածաքին տեսչութեն հրամանի, որք միանգամ հաղորդք եմք
,, միմեանց առ ՚ած խոստովանութեն և նախագահութեն, այլ և
,, սիրով առ իրեարս եռացեալք, ոչինչ արգելու զառաջի
,, արկեալս ՚ի գլուխ բերել մեզ հոգևորական ջան։ Ա՚ն-
,, զի և զայս ՚ի մէնջ պահանջէ, որ հաւատացն ՚ի մեզ զվե-
,, րակացուեալս այսորիկ չնորհ, շուրջ գալով միշտ՝ տեսանել
,, հոգաբարձութեն զկօտ քնի, զոր պատուհասական արեամբն իւ-
,, րով փրկեալս ազատեաց, և յայժմ հարուածոց բանսարկուին
,, բժշկեալ՝ առողջս և անարատս ինքեան յօրինեաց մարմին,
,, զբաղորեցուն զանուանս գրելով ՚ի դպրութեն կենաց. զի մի
,, գայցէ՝ որ առ մահն զմեզ ածէ՝ ՚ի վեր եկեալ ժուժկութենն
,, քուն, յափշտակել համարձակութեն տայ զհօտս հանդերձ
,, հովուաւն՝ աներևոյթն գազանի, որ յայժմ ժամ շուրջ գայ
,, և խնդրէ կլանել զոր ելծուքն. և գտանիցիմք եղեալ պար-
,, տականք արեան անձանց և յանձնեցելոցս. այլ՝ պարտ և
,, արժան է հանապազօր վէրպական մեր բանիւն ամրացու-
,, ցանել զառաջնն, և վիրաւորելոցն զբարեգործութեն հրա-
,, ման տալով ՚ի վեր բերել ապեղանիս ॥։

Ե՚ւ ապա ՚ի մէջ մատոյց երեսուն և երկու կանոնս. զորս քաղելով համառօտեացուք աստ։ Ա՚կեղեցականք յարքեպսկոպոսէ գտեալ, մի իշխեսցեն մատչիլ ՚ի խորհուրդ, քայց եթէ յետ արժանաւոր ապաշխարութե։ Ե՚. Ա՚շխարհականք

արբեցօղք՝ եթէ ոչ զգաստասցին , որոշեսցին ։ Ճ · Յաւագ շաբաթու մի՛ լինի պակ ։ Ո · Ամք առ վաղուց պակելոց են , մի՛ յարբեցութենէ զեղխեսցին յերեկոյն ։ Ե · Ի զատկէ մինչ՛ի պենտեկոստէ մի՛ լինի հարսանիք ։ Ջ · Յաղուհացոյն յաւուրս շաբաթու և կիւրակէի պատարագ մատուցցի անխափան ։ Է · Պահել կամ լուծանել (ձկեղով և ձկամբ և կթովք) զշաբաթ և զկիւրակէ յաւուրս աղուհացիկ յիւրաքանչիւր կամ կթողեալ լինի · միայն թէ պարկեշտութիւ և առանց գայթակղութեան և բամբասանաց · (զայսմ · Է · կանոնէ , տես՛ ի ծանօթութենէ այսր գլխոյ , ի յունգերորդ յօդուածն ։) Ը · Ի հացն և ի գինին՝ որք մատչին ի սեղան պատարագի՛ մի՛ նորաձևս ինչ առնել , այլ հաց անխմոր և գինի անապակ ընծայել՛ի խորհուրդ՝ ըստ նախնեաց աւանդութե զգիին՝ առեալ՛ի լուսաւորչէ ։ (զայսմ կանոնէ և տես՛ ի վերոյիշեալ ծանօթութենէ) ։ Թ · Օրք միւռոնն հայրապետն օրհնեսցէ ։ Ժ · Ի զէթն երեխայեաւ յատուկ՛ ի կիր առնուլ · զոր քահանայն օրհնեսցէ՝ այնչափ , որչափ պիտոյ է ։ ԺԱ · Ի զէթ օծութեան հիւանդաց քահանայն օրհնեսցէ ըստ իւրում աղօթից և ըստ ժամուն պիտոյից ։ ԺԲ · Սեղան պատարագին մի՛ լինի փայտեղէն , այլ՝ քարեղէն և սնեարժ ։ ԺԳ · Ասաղանն մկրտութե քարեղէն լինի ։ ԺԴ · Ընծայիլ ուրուք յերեխայութի՛ առ դպան սկրտարանին օծցի · և ապա տարցի ի սկրտարանն ։ ԺԵ · Սկք հանդերձեալ են պսակիլ , տարցի վնոսա քահանայն յեկեղեցին , և անդ պսակեսցէ ։ ԺԶ · Յոյնպէս արասցեն և սկք ընտնելոց են զերկրդ պսակ · իսկ եթէ չկամ միջին պսակիլ՝ կամ՛ի միւռանց մեկնիլ , որոշեսցին յեկեղեցւոյ ։ ԺԷ · Յերեկոյի շաբաթուն զղջս զօրհնն ասել · և զպաշտօն մարտիրոսաց կատարել · և ծունր չկրկնել ։ ԺԸ · Ի գիշերի՛ յոր լուսանայ կիւրակէն , գիշերապաշտօն առնել · և տքնութե և աղօթիւք զանցեալ աւուրց պչանցանն ջնջել · և պատրաստել զանձն յարժանաւոր ընտնելուն հաղորդութե , ակնկալել անձկանաւք գալստեան նոն ։ ԺԹ · Յաւաւօտու և յերեկոյի և ի ժամ պատարագի զնթ ասել ։ Ի · Յերգեն զնթ ասն ի գէմն որդւոյ մի՛ նուիազեցուցանել՛ի ընտրհաց խաչին քի՛ միանգամ ևեթ խաչեցար ասելով , այլ երիցս · (տես զայսմ կանոնէ ի վերոյիշեալ ծանօթութե ։) ԻԱ · Ի գիշերային ժամուն զնմ կանոնել սաղմոսն , և զառ ի յովհաննէ մանգակունեայ կարգեալ քարոզն և զաղօթքն ասել ։ ԻԲ · Ո առաւօտեան ժամու կարգն անթերի կատարել ։ ԻԳ · Յոյնպէս և զերեկոյինն ։ ԻԴ · Ոչ զկիւրակէին ըստ պատշաճի · ԻԵ · Ոչ ըզգիշերապաշտամանն ըստ կանոնաց ։ (Յայսոսիկ յետին չորս

կա-

Կանոն ՃԻ և հայր 719 ՃԿԸ

կանոնս որոշ որոշ իսօսի՝ ԹԷ զինչ սաղմոս կամ աղօթք կամ
կցուրդ պարտ է ասել) : ԻԷ . Ի տանի յայտնուէ կատարել ըզ-
ջրոյն օրհնութի . և ի ծաղկազարդի ոտս բառնալ : ԻԷ . Ի
յայտնուէ ընթեռնուլ զմկրտուէ և զծննդեան աւետարանս .
զի ոչ տօնն երկուցն ևս հաստատակ է , նոյնպէ և կարդացմունքն .
(զայսմանէ ևս տես ի վերոյիշեալ ծանօթուէ) : ԽԷ . Ի ԹԷ ոք
չինեսցէ խաչ յինչ և իցէ նիւթոյ , տայէ քահանային օրհնել
և օծանել միւռոնաւ : ԽԸ . Պաշտել զնաչս օրհնեալս և եր-
կիրպագանել այնմ , և մի հրաժարել յերկրպագութէ , ԹԷև
մեռանել հասանիցէ : Ծ . Օր կիւրակէի մինչև ցերեկոյ պատ-
ուէր . և մի մինչև ցձաշն . Լ . Ի անխտիր հաղորդուէ առ-
նել ընդ յիմար հերձուածօղս , զի պատկառեսցին : ԼԱ . Ի
քնականալ ի տեղիս չարաղանդիցն պօղնկեանց , մի աղօթել
անդ , և մի ընտանենալ առ նոս , և մի խօսակից լինել ընդ նոս .
այլ՝ ամենևին հեռանալ և գարշիլ ի նոցանէ . զի որդիք սա-
տանայի են նոք , և լուսկիք յաւիտենական հրոյն . և եԹէ ոք
յարեսցի ի նս , կամ քարեկամասցի , խոշտանգանօք և ծանր
պատժով պատուհասեսցի , մինչև զգաստասցի . և եԹէ
վերսին յարեսցի ի նս , հատցի իբրև ժանտախտ յանդամոց

եկեղեցւոյն քրի :

Ծ . այսոսիկ կանոնս առաջի եդեալ հարց ժողովոյն , ամենե-
ցուն հաւանութէ հաստատեաց անդրդուժելի մնալ յեկեղեցի
հայոց . և արձակեաց զժողովն : Ա . Ինքն յայտմհետէ ամ զօ-
րութէ ընդեմ գնելով պօղնկեանց՝ հալածեաց գնս յԱծէն հայոց
ձեռնտուութէ ոտիկանին վրԹայ . գրեաց և աղգու Ճտուս
գեղեցիկս ընդեմ մնջորուէ նջ , և յատկապէս ընդեմ պատկե-
րամարտուէ նոցուն . և ոչ ետ Թոյլ այնմ մնջորուէ արմա-
տանալ յաղգին հայոց :

720 Ձ . Յաւել կարգել սոյն այս յովհան իմաստասէր և զկա-
ձկԹ նոնագիրս , հաւաքել ի նոյն զկանոնս նախնի հարց և ժողո-
վոց . ուր և յաւարտ գրոցն կարգեալ զվերջաբանուէն իւր՝
ասէ . * Ուսաշաւիղ Ճանապարհ առ ածծ հնազանդուի ընդ-
,, նուր հնաւատացելոց քրի կալմեցին սք հարքն զկանոնական
,, բանից դիտաւորուի . զի օրք յերկնայինն հրաւիրել են ի
,, քնակուէն մարդկան տարակարծ խոհականուէ նուաւ ըն-
,, Թացեալք՝ ի նպատակն հասցեն քարեգործուէ . և յանդի-
,, մանեալ խոշտանկեսցեն զինքնակամուէ գնացեալն կամ-
,, ցողքն : Ա . Ով վա զի ոմանք առ ոմանս՝ և ոչ առնեքեան առ
,, ամենեսեան՝ սոքա սերմանեալք , կամեցայ զբովանդակ
,, զառ ի նոցանէն կանոնական սահմանեալ բան՝ ի միում
,, տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ
,, արմատացուցանել : Ա . Ուրանօր և զիս ընծայեալն հոգին վերա-

720 ՉԿԼԹ

,, կարգեաց յանձուս սրբոյն գրիգորի ի կաթուղիկոսութիւն Տից
,, հայոց · յովհաննէս նոճաստագոյն յիմաստասիրականաց
,, խմբից , և ի բոլորից մեկին մնայեալ ըստ մարմնոյ յաղ-
,, գականաց ։ Այս ընկալեալ զայս ջան , նախկին՝ վասն հո-
,, գեկանաց իմոց զարմին , զի ըստ հրամայողական ան-
,, ուանն՝ առնլեթեր կացցեն և հրամանացն գումարութիւք ·
,, և թէ պարտ է սպասաւորաց բանին ՚ծախսօսնակ հարցն
,, բանիւք կնքել բանս ։ Երկրորդ՝ զի զուսումնասիրաց ան-
,, ձանց՝ իմով աշխատութեաւ սիրով կամեցայ հանգուցանել զը-
,, բազմախոյզ խնդիրս ։ Վասնզի գրեցաք ի սմա՝ ոչ միայն
,, զկանոնական սահմանեալն նոյ շարակարգութիս , այլ և զը-
,, ճմին և զպատճառն ի սոյն յայս ի ներքս ածեալ յաւելաք ·
,, ընդ նմին և զգլուխս անցնիւրոց՝ համառօտեալ բանիւք ի
,, սկզբան անդ նախակարգեցաք · զի անուշհատուցաբար ան-
,, դուստ զբանն յիւրում տեղւոյն գոյե խնդրոյն ։
,, Յազագս որոյ անմոռացաբար հայցեմ ընտնել ի ձեզնէ զը-
,, հիշողութեն փոխարէնս ։ Վասնզի ե այս գանձ՝ ոչ զոր ցեց
,, և ոտիչ ապականէ , այլ՝ որ ըստ ինքեան յերկնայինն ի վեր
,, տանի գանձարան զոնանկ ստացողին զսիրտ · յորմէ ասա ոչ
,, ե պարտ թաւիսուր թողուլ , որում և հաւատայ զսա՝ զսըր-
,, բարանս · զի մի զրկեալք ի սմանե՝ զրկեացին յայլ · կամ ա-
,, նարդ լինել ի քէն , յանարգաց ուրուք ձեռս արկանելով ի
,, սա ։ Այլ այն՝ որ պարգեւեաց ինձ ի վերայ երկրի տրութեն՝
,, ըստ ամենազօր իւրոյ տրութեըն՝ որոյ բարեգթութեըն և ի
,, հանդերձեալսն ի նոյն վաստհանամ վայելել ի փառս , նա
,, տայցէ ձեզ միշտ ծաղաւաբար մերձենալով՝ ձաշակել ի
,, հոգեկանս յայս աղբիւրէ · յարաբաց ունելով զձերան
,, մտաց՝ առ ի լնուլ սուքս զորովելոյն ներքին մարդոյն , ա-
,, ձել զաձուսն ՚ձայ , և հաւատարել չափոյ հասակի կատար-
,, մանն քրի ։

Յայս կանոնագիրս սորա յաւելին յետոյ և այլք զայլ կանոնս և զվարդապետուիս պետսէոս՝ զսարս և զբարիս յայլեալ աղ-
գաց , առանց ընտրութե · և ոչ այսչափ միայն , այլև ի բուն
կանոնսն իսկ՝ զոր կարգել էր, ձեռս արկին ոմանք յանարգաց,
և աղաւաղեցին ի տեղիս տեղիս · ոմն յայտնի տեսանելեաւք ի
բազդատելն զայն ըստ ուղիղ բնագիրն օրինակս ։ Տեսանելիք և
ի բազում օրինակս ի բաց բարձեալ նաև զայս յիշատակա-
րան սորա ։ Այլ գուցե զայս գուշակելով զգուշացոյց նոա ի յի-
շատակարանն իւրում՝ չարկանել ձեռն ի սոյն ուանք յա-
նարգաց ։

Ասա ինքն յովհան Հայրապետ իմնաստասէր սրատ և դշարականոս
աւագ տօնից · ՚ձ էն , ստեփաննոսի նախաւկայիկն , որդւոյն

որոտ-

որոտման, և պետրոսի և պօղոսի։ Ասէ մեզաբ յայմմէն արարել
էր յայլմէ յառաջ քան զնա, կամ գուցէ յետոյ. Թէպէտ ու-
րեք գնի, Թէ միայն զմեզաբ յայմմէն ասաց նա, միւսկ գնելոյ
Թէ՝ ի մէջ շարականաց աւագ տօնից միայն զմեզաբ յայմմէն
չասաց նա. զի Թէև կամեցեալ էր ասել՝ ոչ կարէր զայնպիսի
անալի բանս շարադրել։ Այլ և արարեալ և ցնորեալն՝ ի շա-
րականս՝ * անսկիզբն բանդ ՚ա՚, ի համբարձի համօրէն
մարդկութեան. զոր այժմ՝ ի դէմս հոգևխիսեանց նուագեմք։
Այսր սա և զգեցա՝ ի վէր մարդեղութե բանին՝ ի ցոյց անշփոթ
միաւորութե երկուց բնութեց՝ ի մի անձն քրի՝ համաձայն մտաց
սրբ՚ ժողովոյն քաղկեդոնի։ Այրեաց սա և ձառս պէտք սքան-
չելի խմաստիւք լի՝ ի վէր ապուխարութե և զգաստութե վարուց։
Այսր և քաղցրածօս ինչ մեկնութե ժամակարգութեց պարզ ո-
ձիւ առ՝ ի պէտս հասարակաց։

725 ՃՀԴ

Ե. Յաւուրս սր յարեան երկու ումանք յազգէ աստրուց, որ
են քարշապուհ և գաբրիել. որք եկեալ՝ ի հայս՝ սկսան աղ-
մուկ յարուցանել, և խռովութիւն արկանել՝ ի մէջ ժողվրդեան,
պրգռելով զնա՝ ի բանս տարապարտս, Թէ դուք ունիք զմոլո-
րութի յունականց. զի եղեալ էին՝ ի մոլի՝ Թէ հայք հետևող
են մոլորութե մայրագումեցւոյն և աշակերտի նր սարգսի, որք
վկարծիս յունականց ունէին. և անուանք նոյ յումանց՝ ի պար-
ծամտաց պատուեալ լինէին։ Ոչն լուեալ յովհաննու ի-
մաստասիրի՝ խրատեաց զնա՝ Հանապազ զչարի ամձին. և խրդև
ետես, Թէ ոչ հանդարտին նք, հալածեաց զնա յաշխ հայոց։
Այս նոյ գնացեալ յասորիս՝ բանսարկու եղեն՝ ՚ի մէջ երկուց
ազգաց. և մատուցեալ առ պատրիարգ իւրեանց՝ որոյ անուն
էր աթանաս, բամբասէին զհայս՝ սնդելով և հաստատելով,
Թէ նորա շաղախեալ են՝ ՚ի մոլորութիս յունականսի աղիկատ-
նատցոյ, և առ այօք ասեն զտնօրէնուհին քրի։ Այնժամ
գրեաց Թուղթ աթանաս պատրիարգ ասորւոց առ յովհաննէս
իմաստասէրն, և ծանոյց նմա՝ զոր լուաւ յերկուց անտի.
միանգամայն աղդ արար նմա զգուշացուցանել զժողովուրդն
յայնպիսի մոլորութէ. և խնդրեր ժողովել ևս մերժել զայն ա-
զանդ չար.

726 ՃՀԶ

Այս՝ ի հաձել ընդ այն յովհաննու հայրապետի, առաքեաց ա-
թանաս գիւղ եպիսկոպոսունս յասորւոց անտի. որոց անու-
ունք էին. կոստանդին եպիսկ՝ փոխանորդ պատրիարգին.
թասիլ մետրապոլիտ ուռհայու. սիմէոն եպիսկ խաւանայ.
Թէոդոս եպիսկ դարդամանկաց. աթանաս եպիսկ նփրկերտոյ.
և Թէոդորոս եպիսկ ամմոսատոյ։ Այս արար յովհան հայրա-
պետ փոքրիկ ժողով մի յամի ՇՀՆ. 726. և ՚ի Թուէին հայոց.
ՃՀԵ. ածեալ անդ և գլեց եպիսկոպոսունս ՚ի հայոց. որոց ան-

Ասորեաց ասեն Ք.Ջ.42 Արիոս։ Պաւղ։

ոմանք էին. ալիեոս հարքայ. Թադէոս ոստանէն. սահակ մամիկոնէից. յեսու բասենոյ. սարգիս տայոց, և Թէոդորոս բզնունեացւոյ։ Եւ ի ժողովն անդ՝ ոչ գրէ գրիգոր բարեբերեայս պատմիչ ասորւոց, և կիրակոս գլատմիչ Հայոց, նզովեալ հերքեցին զյուլիանոս աղիկառնացի և զդերս նորա. և զմոլորութիւն նորին, և զհամախոհս նորուն։ Յաւելու կիրակոս՝ Թէ նզովեցին և զբարշապուհ և զաբրիել՝ վ՚ր լինեալ նոյ նշ բանասարկու և սուտ զրպարտիչ. և յարձակիլ ժողովոյն գնացին իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց։

727 ՃՀՂ

Ի յաջորդ ամի այսր ժողովոյ յետս կոչեցաւ յամիրապետէն վիրք ոստիկան՝ որ կարգեալ էր ի վր Ջին Հայոց. և փիսկ նր առաքեցաւ մահմէտ ոմն։ Ընացեալ վիրքայ ի դամասկոս և յանդիման լեալ առաջի ամիրապետին օմմայ՝ բզմ գովեաց բանս խօսեցաւ զյովհաննէ Հայրապետէ իմաստասիրէ. մինչև ըղձանալ նմ տեսանել զնա. որոյ վ՚ր պատգամաւորս առաքեալ կոչեաց զնա գալ առ ինքն, և յանդիման լինել իւրով հանդիսական զգեստուք։ Իբրև գնաց առ նա յովհան Հայրապետ, տեսեալ ամիրապետին զշքեղութիւն կերպարանացն նր և զվայելչութիւն զգեստուցն, սեծապէս պատուհեաց զնա։ Եւ յետ բզմ ինչ խօսելոյ ընդ նմ, ասաց ցնա. ոչ ապաքէն ըս օրինաց ձերոց պարտ է ձեզ խոնարհս զգեստել. ապա ընդէր այդպէս զգեցեալ ես քո։ Ցնա ետ պիտոխ և ասէ. զայդ յայն սակս առնեմք, զի որովհետև այժմ առ բզմ պակասութիւն մերոյ պակասեալ են ի ձեռս մեր գործք աքանչելեաց, որովք ձգին ժողովուրդք առ քրիստոս, հարկիմք ահեղ գնացիւք նոճաձել զնս ի չարեաց. և պատկառանս արկանել ի վր նց՝ յորդոր լինել ի բարին։ Եւ զի ամիրապետն ցուցանէր զինքն իբր ոչ չինեալ ի վր զգեստու նորա, ասէ պետ յովհաննու Հայրապետի՝ եցոյց նմ յառաջնումն տեղւոջ զնաթարազն՝ զոր զգեցեալ էր ի ներքուստ ի վր մերկ մարմնոյն։ Եւ զայն իբրև տեսս ամիրապետն, և մերձեցեալ յայն զձեռն իւր, սոսկացաւ և ապշեցաւ յոյժ, և ասէ. զիարդ հնար է մարդկային մարմնոյ ժուժկալել այսպիսի անքերելի խստութիւն, եթէ չիցէ տուեալ նմա հաւատոյ ի Քրիստոս յոյս։ Եւ ապա բազում պարգեւօք պատուհեալ զնա՝ մեծաշուք փառօք յուղարկեաց ի հայս. և նորա եկեալ յանձնառու իւր՝ եկաց ի յանդորրու. և ի նոյն անդորրութեան ջանացաւ պահել հանապազ զպզտն հայոց. և կացեալ ի հայրապետութեան սմն. ժ։ վախճանեցաւ։

728 ՃՀԸ

Իբրև Թէ սա էր յառաջադոյն առաքնորդ սբ ուխտին, որ ի յոան արեզածու. ոչ է տեսանել ի հին Ճառընտիրս ի վարս վահանայ գողթնացւոյ. յերես. պլբ. և յայսմաւուրս ի մարտ. 28. յերես. 622։

Ա.մխ. գիր. Ա.մխ. գիր.
և հայոց և հայոց

Օ սմին յովհաննէս հայրապետէ իմաստասիրէ և ժողովմ սո-
րա յետին պատմիչք ոմանք գրեն զայնպիսի ինչ , զորպիսի
բնաւ ոչ գտանեմք ուրեք ՚ի հարազատ պատմութեան վա-
րուց սորա , և ոչ ՚ի գրոհածս սորին . և կոչեն զսա օձնեցի ,
վասն լինելոյ սորա յաւձուն կիւ յօձուն գեղջէ . և խառնեն ըզ-
գործս սր ընդ այլոցն . այլ առ հասու լինելոյ ձշմարտուէ իրին ,
տես ՚ի վերջ ծանօթութեանց այսր երրորդ գրոցս ։ (1)

Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս ։

Յաղագս կաթուղիկոսութեանն դասուին և պրդապայ . և յաղագս սրբ-
ջանոյ սէնեցւոյ եպիսկ . և գործոց ոսկիանացն մանկիպայ
և աբդլաղիզայ . և հայսերսութեանն արտաւազդայ ։

729 Ա.ռ. Յետ մահու յովհաննու իմաստասիրի յաջորդեաց յաթոռ հայրապետութեանն սուր գաւիթ առաջինն՝ ՚ի գաւառէն կոտէից , ՚ի գեղջէ արամունից ։ Յաւուրս սորա երևեցաւ եղև ՚ի հայս ստեփաննոս սիւնեցի եպիսկոպոս . սա ՚ի մանկութենէ իւրմէ աշակերտեալ էր մովսեսի սիւնեաց եպիսկ . զորմէ խօսեցաք ՚ի գլ. ծշ. երես. 367. և ուսեալ ՚ի նմանէ զարուեստ քերականութենէ և հռետորութենէ , հեռամուտ եղև և այլոց հելլենական ուսմանց ։ Ընդ այս յետ ձեռնադրելոյ քահանայ ՚ի դուինն յեղիայէ կաթուղիկոսէ՝ գնաց ՚ի կոստանդնուպօլիս յամի ՚ին երբ . 713 . և ՚ի թուինն հայոց . ճկբ . և կացեալ անդ ամս քազումս անխոնջ տքնութիւբ՝ ուսաւ գրեթէ զամ գիտութի ։ Նա ձեռն ՚ի գործ արարեալ թարգմանեաց զգիրս սբ հարց , զմեկնիսիօսի արիապագացւոյ , զգրիգորի նիւսացւոյ , եւլ ։ Վիտաձեալ ապա , թէ առաւել ևս ծաղկեալ է իմաստութի յիտալիա , քան անդր . և կացեալ ՚ի հռոմ քաղաք առ ժամ մի ուսաւ և անդ բազում ինչ . և գտեալ մատեանս ընտիրս ՚ի վէր գիպուածոյ հաւատոյ՝ էառ զայնս ընդ իւր , և դարձաւ ՚ի կոստանդնուպօլիս . այլ խտրելոյ վարդն ընդ յոյնս . և ոչ կամեր հաղորդիլ ընդ նոսա յեկեղեցւոջ ։

Ա.ստեր յայն աւուրս պատրիարգ ՚ի կոստանդնուպօլիս աբէն գերմանոս , սկսեալ յամէ ՚ին . 714 . կիս . 715 . և իբրև աղդ արարին նմա ոմանք , թէ ստեփաննոս հայ քահանայ ոչ հաղորդի ընդ մեզ ՚ի խորհուրդս եկեղեցւոյ , կոչեաց զնա առ ինքն երանելի հայրապետն . և երկար ցնա զպատճառն . և կասկածեալ ՚ի վէր նր՝ խնդրեաց ՚ի նմէ զդաւանութի հաւատոյ . և նր խոստացեալ տալ՝ գրեաց զայն ՚ի վէր քարտի-

728 ՃԻՀ

Յովհաննէս Ա.սող. է. 2. և այլ ։
Ա.նանիան ։
Աբէրակոս ։
Յուլիս. 24
Ղազարոպ ։
Յիշատ ։
Վասիմ ։

զի · յորում առաջի եդ զուգիղ դաւանութեան ընդ երից ժողովոյ՝ նիկիոյ , կոստանդինուպօլսոյ , և եփեսոսի · բայց սակայն զժողովոյն քաղկեդոնի և զդաւանութեանն նորա , և որք զկնի այնր եղեն , լռէր ։ Օ այն տեսեալ գերմանոսի՝ քէմ բանիւք ջանացաւ հաւանեցուցանել նմ զուգղութեի դաւանութեանն ժողովոյն · և նա թէպետև հաւանեցաւ , սակ գրէ նա ինքն սքէն գերմանոս , բայց այսու ամենայնիւ հրաժարեցաւ ի հաղորդելոյ ընդ նմա յեկեղեցւոջ նոցին՝ ասելով · մինչև ազգն իմ ոչ միաւորեսցի ընդ ձեզ , իմ հաղորդիլս պատճառ լինի նոցա գայթակղութեան · և եթէ դէպ լինիցի ինձ գնալ անդ ի հայրենիս իմ ի սիւնիս , հալածեսցեն զիս ։

Օ այս բան նորա ոչ արհամարհեալ գերմանոսի՝ գրեաց ընդուղթ առ հայս վն միաբանութեան · որ սկսանի · * Ի՞նչ է ,, խաղաղութեի մեր ‖ · յորում բազում սիրով և խնամոտալից վիպութեամբ յայտ արար զձգտմարտուն մտաց քաղկեդոնի ժողովոյն , և վնաստովանութեի միաւորութեան երկուց բնութեց ի մի քս · և եցոյց թէ ինքեանք երկու բնութեի ասելով ի քս՝ ոչ այլ ինչ իմանան , բայց եթէ զայս միայն · զի մի և նոյն քս ուներ զձգմարիտ աճուրդն և զձգմարիտ մարդկութեի · և քզի աճուրդի և մարդկութեի քսի ի միաւորիլն ոչ չփոթեցան ընդ միմեանս , այն երկաքանչիւր բնութիք կատարեալ մնացին ի մի քս · որով նոյն ինքն քս մի գոլով՝ ասի և է ձգմարիտ աճ ըստ աճուրդեն , և ձգմարիտ մարդ ըստ մարդկութեն ։

Օ այս ընդուղթ սքէն գերմանոսի առեալ ստեփաննոսի՝ եկն ի հայս ի վերջին աւուրս կաթողիկոսէ յովհաննու խնամոտասիրի , յետ կալոյ յաթոռն յունաց ամն հնգետասան · և չոքաւ յաթուր ի սիւնիս · ուր իշխեր յայնժամ բագրատն նախարարը , և եղբայր նր՝ պարոն քուրդ կոչեցեալ ։ Յուցեալ նմ ստեփաննոս զընդուղթն գերմանոսի՝ պատմեաց զոր ինչ անցք անցին ընդ ինքն ի կոստանդինուպօլիս ։ Եւ յանփոյթ լինել քաջակենի , գրեաց նա ինքն ստեփաննոս պիտի թղթոյն , զոր իւր էր բերեալ · և յղեաց ի կոստանդինուպօլիս ։ Այլ զի ի նոյն աւուրս ընկեցաւ յաթոռոյ սքէն գերմանոս , ոչ է յայտ թէ առ ո՞ եչաս այն թուղթ , և զինչ եղև ։ Այսերին օրինակ այսր թղթոյ յետ ձիւաց անկեալ ի ձեռս ումանց հայկաւակասիրաց՝ որպէս ազդ առնէ վանական վիպ , յաւելին յայն քէմ բանս ընդեմ ձգմարտութեի , և քէմ թշնամանս և նախատինս ընդեմ յունաց , և մանաւանդ ընդեմ բանից սքէն գերմանոսի , կոչելով զայնս՝ * անխելաբար գրեալս և ունօղս զայր մտածութիս նեստորի ‖ , ևն · տես զայսմանէ ի ծանօթ՞ · ծղ · (1) ։ Այսպէս թէ թուղթ սքէն գերմանոսի

քանի սխրալի բանիւք սիրոյ լցեալ էր , և զիմոդ անկեղծ յայտարարութիւնք ուղղափառ հաւատոյ գրեալ , ինքնին ե-
րևի . և յայտնի տեսանէ ընթերցօղն , թէ նա զչմարտու-
թիւն միայն խնդրէ , և չմարտութիւնք խօսի : Յաղագս որոյ և
՚ի պատասխանին , զոր ետուն Հայրապետք Հայոց առ խըն-
դիրս յունաց ՚ի ժմկս կիւմանուէլի կայսեր , գովեն և յար-
գանօք ՚ի մէջ բերեն զայն ՚ի գլուխն . ա . է . և . իս . յասելն .
* Վերմանոս պատուական՝ քարի և երջանիկ պատրիարգ
,, գրեաց ՚ի հայս զթուղթն հոգևոր սիրով և ուղղափառու-
,, թիւ լցեալ ‖ : Նաև համօրէն ազգ մեր զնա ինքն զգեր-
մանոս ձանաչէ և ընունի սէր և վիպ ուղղափառութենէ . և
յիշատակէ յայսմաւուրս ՚ի յունիս . 12 . և գրի անդ այսպէս .
* Այր հայրապետն գերմանոս . . . վճռ ամծահաձոյ վարուցն ,
,, և ուղղափառ հաւատոցն , զոր ունէր , ձեռնադրեցին ըզ-
,, նա մետրապօլիտ . . . որ էր ամենիմաստ և հանճարեղ ,
,, խոնարհ հոգւով և սէր սրտիւ . . . . . և եղև քաջ հովիւ
,, և քանման վիպ չմարտութենէ ուղղափառ հաւատոյ . . . .
,, և ՚ի սէր տապանէ նոր բջմ նշանք լինին ‖ : Յոկ ուղղա-
փառ հաւատք նոր էր այն , զոր գրեաց բայայայտ ՚ի թուղթն
առ հայս . զորմէ յիշի և ՚ի նոյն յայսմաւուրս , ՚ի յունիս .
24 . այսպիսի համառօտ բանիւք . * Պատրիարգն կոստան-
,, դինուպօլսոյ գերմանոս գրեաց թուղթ ՚ի հայս , թէ ընդ
,, ոչ ասէք ՚ի քէս երկու բնութիւն , և ընդոունիք զժողովն
,, քաղկեդոնի ‖ :

Օ՚ոյն գայս գերմանոս զերմանելի հայրապետ մերժեաց պատկերամարտն լևոն խաւարացի ՚ի պատրիարգութենէ . վասն զի իբրև հրովարտակ եհան կայսրն ընդդեմ պատկերաց , և ատիպեր զգերմանոս ստորագրել այնմ , յոչ առնուլ նորա յանձն՝ ընկեց զնա յաթոռոյ յայնմ ամի՝ յորում վախճանեցաւ յովհան իմաստասէր . որ և առանձնացեալ ՚ի տան ուրեք՝ անցոյց զինացուճածս կենաց իւրոց սրբութենէ , և ժառանգեաց զանուն խոստովանողի : Այլ ՚ի տեղի նոր նստաւ պատրիարգ

անաստաս ոմն պատկերամարտ :

Յոկ ստեփաննոս սիւնեցի կացեալ յՅէին սիւնեաց աստն քանի մի ամիս եաց ՚ի մէջ հայոց զգիրսն , զորս բերեալ էր ՚ի հռովմայ , և զորս թարգմանեալ էր յՅէին յունաց . արար սա և զմեկ-
նութի յօթեայ , դանիէլի և եզեկիէլի և դիոնեսիոսի . և զայլ բջմ գրուածս . և քանի մի շարականս . ըստ որս և զշարականն * Մր-
,, թուղթ սրբոց ‖ , ՚ի դէմս սքղ խաչին : Այս ասպա ձեռնա-
դրեցաւ ՚ի դաւթէ կաթողիկոսէ ենկից սիւնեաց ՚ի խնդրոյ գաթո-
ղիկէ իշխանին : Այս չև ևս կացեալ նոր յայնմ առաջնորդու-
թեան ամ մի՝ սպանաւ դաւով կնոջ միոյ , որ յանդիմանեալ լի-

(1) Ստ պն և հայոց {728 ձէջե}

(1) Ստեփաննես Սիւնեցի
(2) Ա՚ Դիկեփ .
(3) Եղբեանոս .
(4) Ոնորատ .
(5) Թէ . 2 .

(6) Յունս . 24 .
(7) Իրաքոս .
(8) Պատմ .

Ա. Մակ. ա. 2 Եւ հայր նոցա ասէ ցնոսա՝ ես և որդիք իմ և եղբարք իմ կենցաղեցաք ի հարսն մերս, զի ոչ բարւոք է մեզ ի կենցաղել ի ժողովրդեանս ազգիս մերոյ, և ոչ ի սրբութեան մերում։ Եղեւ ի ժամանակս նոցա, եկին ի քաղաքն Մոդէին, զոր ասացաք զնոսա ի Մոդէին, և ժողովեցան ի նոսա ազգն Իսրայէլի ի ժողովս։ Եւ Մատաթիա և որդիք նորա եկեալ էին ի տեղին ի ժողովն։ Եւ ասաց թագաւորն առ Մատաթիա՝ այր հզօր, և առաջնորդ ես ի քաղաքիդ, և զօրացեալ ես որդովք և եղբարբք։ Արդ եկ դու առաջի՛ն և կատարեա զհրամանս թագաւորին, որպէս արարին ամենայն հեթանոսքն, և այրք Հրէաստանեայք, որ մնացին ի Երուսաղէմ։ Եւ ասաց Մատաթիա և որդիք նորա՝ եթէ թագաւորն Անտիոքոս ոչ ինչ չարեաց ասէ ամենայն հեթանոսացն, որ ի թագաւորութեան իւրում, և

Աենաց , ժողովեաց երկուհարիւր հազար զօրս , և խաղաց ՚ի վր նդ . և եկեալ քանակեցաւ յեզր գետոյն , որ կոչիւր բաւտիս : Պատգամ յղեաց անտի առ արքայն Աենաց , և ասէ . ընդ ոչ հնազանդիս դու ինձ . և նա ասէ . հնազանդիլ ոչ կամիմ , զի ոչ կարեմ . վ՚ս զի այս թիւրութի՛ ոչ երբեք ծառայեալ է , ո՛չ աստրեստանեայց՝ և ոչ մակեդոնացւոց , ոչ մսրայ՝ և ոչ պարթից . ապա և ոչ այլում թիւրութե՛ ծնչեսցէ . այլ թէ կամիք , յարդեցից զձեզ ընծայիւք իւր բարեկամ : Լ՚ուիթ առեալ աստի մահմետայ՝ առաքեաց առ նա , և ասէ . տո՛ւր արդ երեսուն հազար աղջկունս մեզ յընծայ , և մեկնեցայց ՚ի քէն :

Լուսաւացաւ արքայն Աենաց կատարել զխնդիր նր . այդ ասէ թէթև ինչ է յիմումն մեծի թագաւորութեան . և ժողովեալ քառասուն հազար արս ամենիւս՝ զինեաց զնն , և կացուցանէր զգեցուցեալ նոցա արտաքուստ՝ նատոյց ՚ի կուռս և ՚ի սայլս , և եթեր ինքնին յեզր գետոյն . և նստեալ անդ յանդիման բանակին մահմետայ՝ պատգամ առաքեաց առ նա , և ասէ . ահա քեզի զընծայս իմ . արդ՝ անց ընդ գետդ՝ դու և երեսուն հազար այր ընդ քեզ ՚ի պատուհասուորացդ լսատ թուոյ աղջկանցս . զի և սոքին ՚ի պատուհասուորաց են . առ և բաժանեա՛ զսոսա՝ ոմն և կամիս : Ուրախացեալ նր ընդ այս՝ ընտրեաց երեսուն հազար արս յիշխանաց իւրոց , և ՚ի հազարապետաց և ՚ի հարիւրապետաց . և էանց նոքօք յայնկոյս գետոյն . և ՚ի հասանել նդ անդր՝ կերպարանեալ զօրքն Աենաց առեալ ՚ի վայր յերեսաց իւրեանց զքօղան կանացի՝ յարձակեցան ՚ի վերայ նոցա , և կոտորեցին զամենին . միայն մահմետ և քանի մի արք ընդ նմա արկեալ զանձինս ՚ի գետն՝ փախեան . նոյնպէս և մնացեալ զօրք նորա՝ որ ՚ի բանակին էին , ցրուեցան :

Ընդ այն աւուրս՝ յն և յառաջնում ամի տրդատայ կաթուղիկոսի նստաւ կայսր ՚ի տեղի լևոնի իսաւրացւոյ որդի նր կոստանդին , որ անուանեցաւ կոպրոնիմոս , առեալ զայս անուն ՚ի չարագուշակ ինչ դիպուածոյ . զի ասի թէ ՚ի մկրտել զնա սպեն գերմանոսի՝ ապականեալ էր զաւազանն սր՝ լուծմամբ որովայնի : Այն այս կոպրոնիմոս գտաւ պատկերասնարտ չար առաւել քան զհայր իւր , և ապիրատ գործովք եղև աւելի զղջմելի . և ո՞ կարէ պատմել ասէ Թէոփանէս ըզչարիս նր . զի գրեթէ նաև ընդ տարածութի՛ թանձրութե՛ օդոյ զբազ ժանտութե՛ իւրոյ ախտեր . ամին իւրն ժողովուրդք առհասարակ խորշէին ՚ի նմանէ :

ՎՐ յայնմ ժամանակի արտաւազդ ամն իշխան երևելի յազգէն հայոց , որ առեալ էր ՚ի կնութի՛ զանունս զքոյր կոպրո-

նիմոսի կայսեր . քանզի լուան հայրն կոպրոնիմոսի քոյր օգ-
նուԹիւ գտեալ յարտաւազդայ՝ փեսայացուցեալ էր զնա ին-
քեան , և կալեալ էր զնա հիւրասպաղատ և կոմս ոսպիկիոյ ։
Այլ էր արտաւազդ այր քաջ և հզօր , վեհանձն և փառասէր ,
միանգամայն և ուղղահաւատ և պաշտպան սուրբ սպատկերաց .
որոյ վա՛ զօրք յաւնայց և մեծամեծք իսկ յարեալ էին՛ի նա .
և այս տհաճեալ կոպրոնիմոսի՝ և ակամբ հայեր՛ի քեռայրն
իւր յարտաւազդ ։

Ի դիմել ասպա կոպրոնիմոսի՛ի վե՛ր այլազգեաց , և յանցա-
նել առ սահմանաւն ոսպիկիոյ , կասկածեալ յարտաւազդայ՝
որ կոմսն էր տեղւոյն , առ որ և ժողովեալ էին բազմք , պատ-
գամ սիրոյ առաքեաց դաւաճանուԹի՛ առ արտաւազդ , և
խնդրեաց՛ի նմանէ յղել առ ինքն զորդիս իւր . զի տեսից ասէ
զքեռորդիսն իմ , եդեալ՛ի մտի՝ արգելուլ զնա՛ի դիպա-
հոջ ։ Այլ արտաւազդ գիտելով զնենգուԹի՛ կայսերն՝ ոչ ան-
ասաց բանիւ նմա՛ . և խորհուրդ արարեալ ընդ զօրս իւր՝ յայտնի
նշիահեաց զկոպրոնիմոս , և խաղաց զօրօք՛ի վե՛ր նո՛ր . և ըղ-
ձանապարհայն զնա՛ի մտերիմ իշխանաց կայսերն՝ որ ընդդէմ
եկաց նմա՛ , կալեալ սպան սրով . և կայսրն փախստեալ գնաց
յերեսաց նո՛ր յամուրիա . և արտաւազդ յիւրոցն կացուցաւ
կայսր ։ Այս այնուհետև երկոքին նո՛ր զօրաժողով լեալ՝ սկսան
կռուիլ վա՛ կայսերուԹի՛ . և յերկոցունց կողմանց լինէր կո-
տորած բազմաց ։

Պետան առաքեաց արտաւազդ՛ի կոստանդինուպոլիս , և
ծանոյց զնմա՛ մինոտեալ պատրկի , որ փոխանորդ էր կայսեր
՛ի քաղաքին ։ Այս զի նա բարեկամուԹի՛ էր ընդ արտաւազ-
դայ , ժողովեալ զամբոխն՛ի մեծ եկեղեցին՝ հրատարակեաց
ստուԹի՛ , Թէ մեռեալ է կայսրն կոպրոնիմոս , և արտա-
ւազդ ընտրեալ է՛ի զօրաց կայսր ։ Յայնժամ ժողովուրդք
նմա՛ , և անասնաց պատրիարգ ընդ նմա՛ ՛ի բերան առեալ զա-
նուն կոպրոնիմոսի՝ անէծս կարդային նմա , և ցնծային ընդ
կորուստ նո՛ր . զի զերծաք ասեն յայնպիսի անօրէնն և ոճա-
տեաց իշխանէ . և զարտաւազդ իբրև զջատագով ուղղափառ
վի՛պուԹի՛ կայսր ձայնէին ։ Յայնմ վայրի մինոտ պատրիկ
վաղվաղակի ետ աղեսել զդրունս և զանցս քաղքին , և եդեալ
պահապանս զդուշուԹի՛ ձերբակալ արարո զմտերիմս կոպրոնի-
մոսի . և զանիւք խոշտանգեալ զնո՛ա արգել՛ի բանտի ։

Այլ յայնժամ արտաւազդ հանդերձ գնդաւ իւրով , և ե-
մուտ՛ի քաղաքն կոստանդինուպոլիս կայսերական շքով ։
Այն լուեալ կոպրոնիմոսի՝ ածապարեաց և էառ ընդ իւր ըղ-
զօրս Թրակացւոց և արևելեայց , և եկն՛ի խրիսոպոլիս ,
այն է իւսկիւտար . բայց չկարացեալ վճարել ինչ՝ առիպեցաւ

դառ-

742 Ձղ՚՚

դառնալ յետս. և ձմերեաց յամուրիս։ Իսկ արտաւազդ այնուհետև հրամանն եհան յայտնի պատուհել յամ քաղաքս զսբ պատկերս։ Ընդ որ մեծապէս ուրախ լեալ ժողովրդեանն հաստատեցին՝ զնա միաբան իւրեանց կայսր. և անաստաս պատրիարգ եդ զթագ՝ ի գլուխս նորին յեկեղեցւոջ. թէպէտև ինքն անաստատ պատկերամարտ էր։

Ե. Ոմն արաբ արտաւազդ յամենայնի մայիսի՝ ի գաւառն ոսպնկիոյ. և զձմեռնապարհայն նուճարձեաց զասիա ըէ իւրև. և աստատակեաց զբազում գաւառս թշնամեաց։ Իսկ կոպրոնիմոս անհամար զօրս գումարեալ յայլևայլ տեղեաց՝ գիմեաց՝ ի վէր նոր, և հալածական արար զնա մինչև՝ ի կիւզիկոն։ Իսկ արտաւազդ ամրացեալ՝ ի քաղաք անդր՝ արձակեաց՝ ի վէր կոպրոնիմոսի զորդի իւր զնիկետ, որ էր սպարապետ ամ զօրաց նոր. ըէ նմին և զազգական իւր զտրդատ պատրիկ՝ զայր քաջ. և նոյ մարտ եղեալ ըէ կոպրոնիմոսի առ մոդրինեաւ՝ ի պարտուեիլ մատնեցան յերեսաց քաղմուեիե զօրացն նոր. և անկաւ անդ տրդատ պատրիկ հանդերձ այլ ևս մեծամեծ և ընտիր արամբք. և՝ ի փախուստ դարձաւ նիկետ որդի արտաւազդայ։ Իսկ ապա՝ ի կռիւ մատուցեալ առ՝ի՛ւր զօրք հայոց և յունաց ըէ արևելեայ զօրս կոպրոնիմոսի և ըէ Թրակացիս, յերկոցունց կողմանց բազմք կոտորեցան. և բազմ արեան ձապալիք հեղան յերկրի՝ ի մէջ քրիստոնէից, որիւք ըէ հարս, և եղբարք ըէ եղբարս պատերազմեալ, կէսք՝ ի կողմն արտաւազդայ՝ և կէսք՝ ի կողմն կոպրոնիմոսի։ Իսկ զի նոտաւ ընդ այն ձիւկս ամիրապետ վէլիտ, երկոքին կայսերք ևս խնդրեցին՝ ի նմէ օգնութիւն. քայց ոչ գտին. քզի և նա՝ ի զբաղմունս պատերազմաց էր. և դարձաւ արտաւազդ՝ ի կոստանդինուպոլիս։

Իսկ յամենայնի սեպտեմբերի արձակեաց կոպրոնիմոս՝ ի վէր նոր զսիսինիոս զօրավար Թրակացւոց. որ և եկեալ պաշարեաց զկոստանդինուպոլիս. մինչև անկաւ տալ՝ ի մեծի քաղաքին. յորմէ նեղեալ արտաւազդայ յղեաց զաթանաս խորհրդական իւր, և զարտաւազդ զիւր սպասաւոր գնալ և բերել նաւուվք պաշար՝ ի քաղաքն. այլ զօրք կոպրոնիմոսի կալեալ զնոսա՝ ածին առաջի. և նա կուրացուցեալ զերկոցունց նոցա զաչս՝ բաշխեաց զհամբարան՝ զոր բերէին նոր, ՝ի զօրս իւր։ Իսկ ապա արտաւազդ ըէ դուռն քաղաքին՝ ի յամաքակողմն, և ընդ այն ետ պատերազմ ընդ կոպրոնիմոսի. և՝ ի սաստկանալ մարտին՝ պարտեցան զօրք նր առաջի կոպրոնիմոսի. և անկան բազմք. ընդ որս և մինոտ պատրիկ. և մնացեալքն փախեան՝ ի քաղաքն, և փակեցան՝ ի ներքս. և սուին առաւել ևս սաստկացաւ։ Իսկ՝ ի քողոք թառնալ ամբոխին

առ արտաւազդ՝ հրամանն ետ նոցա մեկնիլ ի քաղաքէ , և գտանել պաշարս ։ Իսկ իբրև բացին զդուռն մի , բղխեալ ել այն՝ փախեան , ծպտեալ՝ կերպարանօք աղքատի , և կանայցի զգեստուք ։

{743}

Լուաւ նիկեա որդի արտաւազդայ , որ յասիա շրջէր , ժողովեալ միւսանգամ զլեւրան՝ եկն մինչև ի խրիսոպօլիս. այլ զորք կոպրոնիմոսի՝ որք եկին յայմմ կողմանն , դիմեալ ի վր նր՝ հալածեցին մինչև ի նիկոմիդիա՝ որ է իշնիմիա . և ձերբակալ առեալ զնա՝ բերին ի քանակն . և կոպրոնիմոս ետ կախել զնա շղթայիւք յանդիման հօրն ։ Եւ այսորիկ ի դիմել կոպրոնիմոսի դարձեալ ի վերոյ քաղաքին և ցամաքակողմն՝ անձառացեալ արտաւազդայ՝ խոյս ետ նաւաւ յերկիր իշխանութեանն յոպպէիկիա . և ապա մտեալ ի դղեակն պուլտանայ՝ որ և պիղու , ամրացաւ անդ , և իւր ունելով զվաստակ պատրիկ ։ Կոպրոնիմոս տիրեալ կոստանդինուպօլսոյ՝ հնարիւք իմն կալաւ զարտաւազդ , և կուբացոյց զնա , և զերկու որդիս նորա . և հատեալ զգլուխս վաստակայ՝ կախեաց ի բարձր տեղւոջ զերիս աւուրս ի տեսիլ ամենեցուն . ապան և զբաղումն ի համախոհից արտաւազդայ . և զբաղումն զրկեաց յաչաց . զոմանց եհատ զձեռս , և զայլոց զոտս ։ Եւ ապա հրամանն ետ զօրաց իւրոց կողոպտել զտունս քաղաքացւոց և հաձոյս կամաց իւրեանց . և եղև շուկ շփոթի մեծ ի Թագաւորական քաղաքի անդ ։

Եւ այսորիկ կարգեալ կոպրոնիմոսի զհանդէս խաղոյ ի ձիարձակարանի (այ ի յաթ մէյտանին) , ետ բերել անդ զկուրացեալն զարտաւազդ , և զորդիս նր և զբարեկամն նորին կապեալ շղթայիւք՝ յառաջ նշաւակի ի զննին եղելոց ։ Եւ զպատրիարգն զանաստաս զրկեալ յաչաց , և հեծուցեալ ի վր էշոյ՝ զերեսս յագիս ուղեալ հրամայեաց շրջեցուցանել այսպէս ի մէջ Թատրոնին . և այսպիսեօք հանդէս յաղթանակի արարեալ անդրէն հաստատեցաւ ի կայսերութեէ ։ Իսկ ասի և յոմանց՝ Թէ վերոյհն հաստատեաց նա յաթոռ պատրիարգութե զնա ինքն զանաստաս՝ վասն հաճախոհ լինելոյ նր յաղանդ իւր ։



Կ Ա Ի Ս Ա Ր Ա Կ Ա Ն :

Յաղագս ապիկաոսութեան մրուանայ եւ եղիպտոսի եւ սիւրիոյ եւ պարսկաստանեայ աշտոյ եւ ասկածոյ . եւ կաթուղիկոսութեան պետրոսի եւ պօղոսի . եւ ծաղկեալ պարսատաւոյ :

743 ձղթ

742 ձղթ

Ի ժամանակս յաւուրս շփոթուէ արտաւազդայ եւ կոպրոնիմոսի մեռաւ ոստիկան Հայոց աբդլազիզ . եւ կարգեցաւ ի տեղի նր ոստիկան մրուան որդի նախընթաց ոստիկանին մահմետայ՝ այր երեւելի եւ զօրաւոր, զոր յիշէ եւ դիոնեսիոս ասորի առ ասսեմանեայ . Ը . 16 : Եւ զի ի նմին ժամի աշտ քագրատունի որդի վաստակայ նախապատիւ էր ի մէջ իշխանացն Հայոց , եւ սիրէր նոցին իսկ հագարացւոց , ոստիկանն մրուան կացոյց զնա իշխանաց իշխան և պատրիկ : Ա՝ինչդեռ ի հայս էր մրուան , ծագեցաւ շփոթուի յիշխանսն հագարացւոց . և վեհիտ ամիրապետ սպանաւ յիւրոցն . և նստաւ որդի նր եզիտ : Այս լուեալ մրուանայ ոստիկանին Հայոց՝ ժողովեաց զօրս ի Հայոց աշխարհէ և յայլոց ազգաց . և չանձն արարեալ զձն բոլոր ի ձեռս աշտոյ պատրկի՝ դիմեաց ինքն ի միջագետս . և գրաեաց ընդ նմա զայնոսիկ կողմանս . և խորհէր ընկենուլ զեզիտ , և նստիլ ինքն ամիրապետ : Ա՝յլ յետ հինգ ամաց նորա մեռաւ եզիտ , նստաւ ի տեղի նր եզբայր նորին իսպրահիմ , զոր ոմանք սիւլէյման կոչեն :

Ոստիկան Հայոց

Ոստիկանին մրուանայ

Ոստիկանին Հայոց

Յաղ. Ե. 3 : Ա՝րդուն :

Յաղ. Ե. 4 : Ա՝րդուն :

Լսեալ մրուանայ դարձեալ զօր գումարեալ ի միջագետաց՝ խաղաց ի վր դամասկոսի : Ա՝յլ ընդեմ նր իսպրահիմ բազում զօրօք , և ի պարտուի մատնեցաւ յերեսաց նր . և անկան ի զօրաց նր այն օր քսան հազար այր . և ինքն մազապուրծ զերծեալ ի դամասկոս՝ կալաւ և սպան զնմ եղբարս իւր , կասկածելով ի նոցանէ՝ թէ ձեռնտու լինեն մրուանայ . և առեալ զանձ բազում՝ գաղտ մեկնեցաւ անտի : Եւ մրուանայ մտեալ ի դամասկոս՝ կոտորեաց զբազումն ի մեծամեծաց՝ որք միաբանեալ էին ի սպանութի վեհիտայ . և զնմ ինչս և զգանձս դամասկոսի առեալ եբեր ի խառան . և ապա պատերազմեալ ընդ այլ թշնամիս իւր՝ յիմի գտաւ յաղթօղ . և նստաւ ամիրապետ ի վերայ համօրէն հագարացւոց : Եւ արձակեալ յիւրմէ զզօրս հայոց բազում պարգեւօք՝ առաւել և մեծարեաց զշտ պատրիկ , և ընդարձակեաց զիշխանութի նր :

744 ձղթ

Ընդ այս պատիւ աշտոյ մնախացեալ սմբատ ումն ազգական նորին , և սա և երկու իշխանք դաւիթ և գրիգոր յաղթէ մնմ-

կոնեանց՝ խորհելին չարիս ի վէր ընդ։ Ա.Յլ աշոտ քանզի եր այր
քաջ պատերազմ, ցածուբ և մարդասէր բարուքն հնարէր շահիլ
զսիրտս ատելեաց իւրոց. և ամ փութայով խնամարկեալ ի վէր
ազգին՝ աշխատ լինէր յանդորրու պահել զամենին։ Ա.Այս աշոտ
վաստակեան համարի լինել իբր արմատ Թ՟գրուճ բագրատու-
նեաց ի հայս և ի վիրս։ Ա.Ղէն սորա երկու որդիք. անուն
երիցուն սմբատ, և կրտսերոյն՝ վասակ. սմբատայ որդի եղև
քաջն աշոտ, որ մականունեամբ մնակեր կոչեցաւ ի Թուրքաց.
աշոտոյ որդի սմբատ խոստովանող, որ ապստաբաս ասացաւ.
սմբատայ որդի աշոտ առաջին Թ՟գուր բագրատունեաց։ Այսոքիւ
և վասակայ եղև որդի ատրներսեհ. ատրներսեհի որդի ա-
շոտ, որ փեսայացեալ վրաց՝ ստացաւ իւր կալուածս յօժ
նոցա. և հաւատարիմ գտեալ առ ամիրապետն՝ կարգեցաւ
իշխան մեծ և պատրիկ ի վէր վրաց. և ի կայսերէ ևս ընկա-
լաւ պատիճ կիւրապաղատութեան. աշոտոյ որդի բագարատ
և գոմար. բագարատայ որդի դաւիթ. դաւթի որդի ատր-
ներսեհ, որ Թ՟գրեաց ի վիրս ձեռնադրուբ սմբատայ արքայի
որդւոյ աշոտոյ առաջնոյ Թ՟գրի։ Էր եղև սորա նախապատիճ է ի
վիրս, և կոչի բագրատիւն։

(1)Էջ ճանէ
Ա.սող.Բ.4։
Ալարքան։
Ալիբաիս։
Ա՟այէս.20։

ՃԲ. Ի սկ մրուճան ամիրապետ մղեալ զբաղում պատերազ- 753
մունս ընդդէմ Թէնաւեայ՝ ի դիմել իւրում յեգիպտոս՝ սպա- մԲ
նաւ. և անկաւ չխոթի մեծ ի հագարացիս. և ի տիրել բա-
զում իշխանապետաց ի զանազան գաւառս, նստաւ ամիրա-
պետ ի դամասկոս միւսիւմ ի կողմանցն խորասանայ. և այլ
ոմն ևս սափահ աբդլլա անուն՝ ի սահմանս պարսից. և յայնմ
չխոթուէ ժամանակի փոխադրեցաւ աթոռ Թագաւորութե
հագարացւոց ի բաղտատ։ Ա.Ե յամի տեառն. 755. այն է ի Թուա- 755
կանութե հայոց. ոԻԴ. նաստաւ անդ Ճաֆար ալմանսուր ամի- մԴ
րապետ էաֆիա, որ ի գերս հայոց դնի ջափրէ առաջին, կամ
աբդլլա երկրորդ։

Ա.ետդի ի պատմութիս արաբացւոց և ասորւոց ևս և հայոց,
Թէ սա ինքն ալմանսուր ջափրէ ի հիմանց շինեաց զքաղաքն
զայն մեծ. և կոչեաց մեդինատ ասսալամ, այ է քաղաք խա-
ղաղութե. այլ քանզի բնակեալ եր անդ յառաջագոյն իշխան
ոմն բաղտ անուն, ի նմանէ առեալ զանունն՝ բաղտատ կոչե-
ցաւ։ Այն այս ալմանսուր ի չորրորդ ամի իշխանութե իւրոյ 758
առաքեալ յԱ՟ամ յարևելս զեղբայր իւր զաբդլլա՝ եդ ծանր մԸ
հարկս ի վէր աւիշն, մանաւանդ ի վէր հայոց, ևս և ի վէր ե-
կեղեցականաց և անապատաւորաց, ի պատճառս շինուԹենն
բաղտատայ. և ի համար արկեալ զայնոսիկ՝ որք մեռան յա-
ւուրս իւր՝ վճռնջ ևս էառ հարկս. և հրամայեաց բառնալ
զնայն ի գլխոյ եկեղեցեաց. և ետ կնքել զգանձատունս նոցա.

և զամբ սպասս նոցին վաճառեաց հրէից։ Երգել զգիշերային պաշտամունս, և զուսումն գրոց. և պատուհեր ետ գերծուել զմօրուսն, և գլխարկս գնել կանգնաչափ, և կախել ամբարն կապարեայ ինչիք՝ ի պարանոցս իւրեանց։ Եւ ապա Թողեալ աթդլայայ՝ ի վերայ հայոց ոստիկան զեզիտ անուն ումն՝ գնաց անտի. և եղիտ սկսաւ չարչարել զհայս՝ առնուլ՝ ի նոցանէ քսմ լիռ։ Յայսպիսի հարկահանութեանէ և յայսչափ հարստահարութեանէ նեղեալ յոյժ իշխանացն հայոց՝ խորհեցան ապստամբել յամենապետէն՝ ի նմին ամի յորում եկաց ոստիկան եղիտ։ Եւ յընդեմ գառնալ աշոտոյ մեծի պատրկի, և՝ ի յորդորել նմա զինս համբերել սակաւիկ մի, դիմեցին՝ ի վերայ նմա սխեմիմ Թշնամիք նորին գրիգոր և դաւիթ իշխանք մամիկոնեանց. և կալեալ զնա՝ բրեցին զաչս նմա. և կուրացուցին զնա՝ յետ կալոյ նորին յիշխանութենէ ամն. ԺԵ. և ապա կեցեալ նորա՝ ի կուրութենէ այլ ևս ամս. ԺԶ. վախճանեցաւ, և Թաղեցաւ՝ ի գեօղն դարոնս։ Սակ ոստիկանն եղիտ նստեալ՝ ի գունին ամս իբր. Ը. կոչեցաւ յետոյ. և Թողեալ հրամանատար և պատրիկ՝ ի վերայ հայոց զսահակ զորդի բագարատայ բագրատունւոյ, գնաց՝ ի բաղտատ. և էր սոյն այս սահակ պատրիկ այր գեղեցկադէմ և փառահեղ տեսլեամբ, և երկիւղած յոյ. և ինքն խնամ մէր զամենին խաղաղութիւն։

Յաւուրս սորա բազմութիւնք ասպատակաց, որոց գլխաւորն անուն էր սիւլէյման, դիմեալ՝ ի կողմանցն պարսից՝ եկին՝ ի վասպուրական. որոց՝ ի դիմի հարեալ իշխանք սրծբռնեալ՝ երկոքին եղբարք՝ սահակ և համազասպ որդիք վահանայ, հարին զբազումսն՝ ինոցանէ՝ ի սուր սուսերի. այլ համազասպայ կարեվէր խոցեալ՝ անկաւ ի բիւրևարէն. և ժողովեալ՝ ի վեր նր բազմութիւնք Թշնամեաց՝ հարին և սպանին զնա։ Այն տեսեալ սահակայ եղբօր նորա՝ վառեցաւ՝ ի նախանձ սրտմտութեան. և դիմեալ՝ ի վերայ սպանողաց եղբօր իւրոյ՝ դիւթաւալ յերկիր կործանեաց զնա. և ինքն՝ ի յետուստ վերս ընկալեալ կատարեցաւ անդէն։

Այս իբրև լուաւ ի բաներ եղբայր նոյ գագիկ, փախուցեալ անկաւ յամուրն ոլկան. և ապա զօր բազում ժողովեալ՝ դիմեաց մինչև՝ ի կողմանս պարսից, ուստի եկեալ էին ասպատակքն, ՝ի խնդրել զվրէժ քինու եղբարց իւրոց. և աւերեալ զբազում տեղիս՝ դարձաւ անդրէն՝ ի նոյն ամրոցն յոլկան։ Սակ Թշնամեացն միաւանգամ գումարել՝ ի վեր նր՝ եկին և սպառնացին զամրոցն տալոյ մի. և իբրև ոչինչ կարացին առնել, դաւով և նենգաւք՝ ի խաղաղուն կոչեցին զնա. և կալեալ եդին՝ ի բանտի. ուր և վախճանեցաւ նա։ Ունի սա որդիք երեք, որոց անուն էր սահակ, համազասպ՝ և մերուժան. և

Ա՛ն զնա պայազատել զիշխանուն հօր իւրեանց զագկայ Յ֊ին
վասպուրականի ։

763 մԺԲ Ա՛յլ հարկապահանջուն այլազգեաց ամ ըստ ամէ առաւել և
սաստկանայր և ծանրանայր ի վրէ հասոյ ։ * մինչև նախարարք
և մեծամեծք (ասէ ասողնկն) ի չքաւոր աղքատուէ անկան ։
Ա՛ն թէպէտ բազմ անգամ բողոքեցին առ ամիրապետն՝ սահակ
պատրիկ և տրդատ կաթողիկոս , բայց ոչ ինչ օգտեցան , այլ՝ ա֊
ռաւել և տառապեցան ։ Ա՛ն վինչդեռ յայն տառապանս
էին , տեղաց յՅա հայոց զարհուրելի կարկուտ · և յետ այնո֊
րիկ մարախ սաստիկ · և ապա երաշտութի՛ն մեծ · որովք կարի
լինն անշքացաւ հայաստան ։

764 մԺԳ Ե֊ · Տեսեալ տրդատայ հայրապետին զայսպիսի և զայլնչափ
աղէտս տարակուսի՝ հիւանդացաւ և մեռաւ , կացեալ՛ի կա֊
թուղիկոսութե՛ն ամս · իգ ։ Ա՛ն յաջորդեաց զաթոռն այլ ոմն
տրդատ անուն յՅէն տուրուբերանոյ՝ ի գաւառէ դամնաւո֊
րից ։ Ա՛րևելի էր յաւուրս սմ սրբութ և իմաստութ սիոն ոմն
յարագածոտնէ՝ ի գեղջէ բաւունեաց կամ բզնոյից · սա՝ ի
մանկուէ իւրում ըմբռնեալ յերկիւղն աՅ՝ ընծայեաց զանձն
իւր՝ ի ծառայուի՛ն նր՝ ի կաթողիկոսարանին · և տղայ գոլով հա֊
սակաւ , օրինակ բարւո եղև ծերոց · և վարժեալ յաՅմ առաքի֊
նութե՛ն և յուսումն ածային գրոց՝ եղև այր կատարեալ , և
ձեռնադրեցաւ յաւագնոյ տրդատայ կաթողիկոսէ եպիսկոպոս աղձնեաց
նահանգին · ուր սրբութե՛ն և ողջամիտ վիճակուե՛ն հովուե՛ր զե֊
կեղեցին ։

765 մԺԴ Ա՛ն եղև յաւուրս յայնոսիկ յամաքիլ յորդաբուղխ աղբեր
միւմ , որ էր առ ստորոտով սիմ լերին · յորմէ ուռոգանէին
այգեստանեաւք և բուրաստանք գիւղիցն · որոյ վ֊ն նուազեցան
և պտղաբերուի՛ք տեղոյն ։ Ա՛ն քանզի յայտնի էր յայնժամ
սրբուե՛ երանելոյն սիոնի, կողմնակալ տեղոյն՝ որ էր հագա֊
րացի սիւլէյման անուն , կոչեաց զնա առ ինքն՝ աղաչեաց զնա,
զի աղօթիւք իւրովք վերստին տացէ բղխել աղբերն ։ Ա՛ն ե֊
րանելին պատգամ առաքեալ առ վիճակեալս իւր՝ պատուի֊
րեաց նոցա , զի՝ ի գիշերի կիրակամուին ամենեքին հակեա֊
ցեն յաղօթս՝ խնդրելով յայ վերստին ընծորհել զյորդուութիւն
ջուրց աղբերն՝ ի պարծանս քրիստոնէական հաւատոյ առաքի֊
չին ։ Ա՛ն յաւաւօտու կիւրակէին առեալ երանելոյն ընդ
իւր զուխտ եկեղեցւոյն , և եկեալ մերձ յաղբիւրն՝ եկաց յա֊
ղօթս · և ձենագրեաց զանձին սբ խաչիւն՝ զոր ունէր՝ ի ձե֊
ռին · և ապա յանուն նր եհար գաւազանաւ իւրով զակն աղ֊
բեր · և առ ժամայն բղխեաց յաղբերէ անտի յորդաւուտ և
ականակիտ ջուր ։ Ո՛ այս տեսեալ իշխանին սիւլէյմանայ՝ զար֊
մացաւ յոյժ , և պահեաց՝ ի մտի զեղեալսն ։

Յովհ֊կաթ ։ Ա՛ղղ֊ե֊2 ։ Ա՛մոռել ։ Ա՛ պրպան ։ Ակնակոս ։

Ի նոյն աեւուրս կարգեցաւ նա ինքն սիւնէյման ոստիկան ՅԻՆ
Հայոց ՚ի վեցերորդ ամի պատրկուեէ սահակայ բագրատունւոյ.
763 և յորժամ եկն նա ՚ի դուինն քաղաք, ՚ի յաջորդ ամի վախճա- 766
մԺԵ նեցաւ կաթողիկոն Հայոց տրդատ երկրդ, կացեալ ՚ի հայրապե- մԺԵ
տուեէ ամս. Ը։ Եւ էբրև աղդ եղև ոստիկանին մահն տրդա-
տայ, վաղվաղակի առաքեաց պատգամ առ սիմէոն եպիսկոպոս,
զի եկեսցէ ՚ի դուինն. և ՚ի գալ նորա անդր՝ առ ժամայն ետ
ձեռնադրել զնա կաթողիկոս։

Ե. Եղեն այս երանելիս էբրև արեգուն հուիւր հակելով ՚ի Կանոնք տե-
767 վեր հօտին՝ ջանայր յամի անաբատ պահել զայն. և տեսեալ գեալոյ. կա-
մԺԶ յոմանս յառաջնորդաց եկեղեցւոյ Թուրուբնա և անկարգուեա, ղոսէ. 3։
և յայլս զբռնակալուեի և զպջաքաղուեի, կամեցաւ ժողով Վասպ։
764 գումարել, և դարման ուղղուե մատուցանել. և զի ոչ կարեր
մԺԴ հանգստեամբ առնել զայս ՚ի դուինն, գրեաց նամակ առ ամ
եպիսկոսունս հայոց՝ ժողովիլ ՚ի պարտաւ քաղաք աղուանից։
Եւ զի դժուարին եր յայնմ ձմեի ժողովիլ ամենն ընդ անդր,
գրեցին առ նա բազում Թուղթ հաւանուեե, Թե զոր ինչ
768 սահմանեսցես ժողովով ընդունելի է մեզ։ Եւ եբև ապա սիմէոն
մԺԵ կաթողիկոս ՚ի դուինայ՝ գնաց ՚ի պարտաւ քաղաք, առեալ ընդ իւր
զոմանս յերևելի եպիսկոպոսաց. այս են՝ գէորգ ոստան եպիսկոս. սա-
դովիկ սիւնեաց եպիսկոս. եսայի գողթան եպիսկոս. և այլք. Ընդ որս
և բազում վարդապետք և վանականք և երէցունք։ Ընդ որոց ընդ ոստա
և քանի մի իշխանք. սահակ պատրիկ բագրատունի. ատր-
ներսեհ սիւնեաց տէր. սմբատ բագրատունեաց իշխան. մե-
ծուժան արծրունի. վարդան խորխոռունեաց տէր. արտաւազդ
765 աշոցայ տէր. վահան վանանդայ տէր. և սահակ գողթան տէր։
մԺԶ Ամենքեան ժողով արարեալ սիոնի կաթողիկոսի՚ի պարտաւ՝ սահմանեաց
քան և չորս կանոնս. որոց ոմանք ՚ի վաղ ՃԻԿաց հաստատեալ
եղեն և յայլ ժողովս. զորս և մարդիս եմ համառօտել աստանօր
այսպէս։

Ա. Ընկն, քորեպիսկոպոսն, և երէց՝ եԹէ զկնի լինելոյ փառաց և
զբռնանալ՝ անկոծ լինին ՚ի խնամելոյ հօտին, լուծցին ՚ի
կարգէ։ Բ. Ընկալունք մի իշխեսցեն ձեռնադրուեի առնել ՚ի
վիճակ այլոց եպիսկոպոսաց։ Գ. Ընկնք մի ոտիպեսցեն զյանցաւորս՝
տալ ինչ յեկեղեցի, այլ՝ հրամայեսցեն, զի նոքք իւրեանց ձե-
ռօք տացեն աղքատաց։ Դ. Ընկնք մի Թոյլ տացեն քորե-
պիսկոպոսաց կամ քահանայից սեղան հաստատել, կամ եկե-
ղեցի օրհնել։ Ե. Ընկնք մի իշխեսցեն միւռոն օրհնել, կամ
յօրհնեալն յաւելուլ ինչ. այլ՝ ի հայրապետանոցէն առցեն
ամ յամէ։ Զ. Ընկնք կարգեսցեն վարդապետս յեկեղեցւոջ՝
անխափան քարոզել և ուսուցանել զժողովուրդն։ Է. Ընկնք
չինեսցեն ՚ի գիւղս, զի անդ հանգիցեն առաջնորդք. նաև

Հիւրանոց և աղքատանոց . և հաս նոցա ՚ի գիւղից տայէ ։
Ը · Ա՛ւազանն մկրտուէ մաքուր պահեսցէ և պատուհեսցէ . և
ջուր մկրտուեն մի թափեսցէ յանոնք տեղիս ։ Թ · Ա՛հմանայ՝
որում հասեալ է կարդ սպասաւորելոյ եկեղեցւոյ , որքուէ ա-
րասցէ . և զծածկին աղօթիսն անխափան կատարեսցէ ։ Ժ ·
Ա՛հմանայ եթէ ամուսնասցի , կամ եթէ երկրորդ ամուսնա-
ցեալն ձեռնադրեսցի , մի իշխեսցէ քահանայուն առնել , այլ
յապաշխարուեթէ կացցէ ։ ԺԱ · Ա՛հմանայք զդուշ լիցին մի
պակել զհաւատացեալս ընդ անհաւատի ։ ԺԲ · Ո՛չ նշխարս
աք խորհրդոյն քահանայք պատրաստեսցեն , և մի՛ ծախանք ։
ԺԳ · Ա՛ւթէ քահանայ պակ արասցէ երրորդաց յառաջագոյն
չնացելոյ , նզովեալ լիցի , և պահն քակտեսցի ։ ԺԴ · Ո՛նչք և
սպասք եկեղեցւոյ մի վաճառեսցին ։ ԺԵ · Ա՛րօնաւորք մի տե-
զափոխ լիցին վանից ՚ի վանս . այլ՝ կացցեն անդ , ուր կրօնա-
ւորեցան . բայց եթէ կոչեսցին ՚ի վիճակ առաջնորդուե ։ ԺԶ ·
Ա՛մուսնուն մի լիցի մերձաւորաց մինչև ՚ի չորրորդ զարմ ։ ԺԷ ·
Ա՛նկեղանոցք չինեսցին վնն նոյ , որք յաղագս ախտից լինչ հա-
լածեալ լինին ՚ի քաղաքաց . և հաս կարգեսցի նոյ ՚ի ժողովը-
դենէ ։ ԺԸ · ՚Ի մեռանիլ ուրուք՝ տուրք ողորմութեն վնո չիշա-
տակի հոգւոյ նը տացին այնմ եկեղեցւոյ և այնմ վանից , ո-
րոյ էր ժողովուրդ , և ոչ այլոց , բայց եթէ յաւելցի ինչ ։ ԺԹ ·
Ա՛նաւադրեալն յեղկսկ եթէ յառաջ քան զարձակիչն մեռցի ,
հանդիսիւ մի թաղեսցի ։ Ի · Ա՛ւթէ երեխայ ոք առանց մկըր-
տուե մեռցի , հանդէս թաղմանն մի կատարեսցի ՚ի վնո նորա ։
ԻԱ · Ո՛րեպիսութիւնք մի իշխեսցեն փակել զդրունս եկեղեցւոյ ·
և կամ խափանել զծածկին պաշտամունս ։ ԻԲ · Ի՛նչման գեղջն
եթէ վանն պահանջելոյ զհարկ՝ տացէ փակել զեկեղեցին ,
նզովեալ լիցի ։ ԻԳ · Ա՛րք գերի վարեալ ՚ի հեթանոսս՝ եթէ
կեցեալ իցեն ըստ կրօնի հեթանոսաց , և անպատշաճ ինչ գործել
ըստ նոցա , թէպէտ և առանց ուրանալոյ զհաւատս , ՚ի դարձին
իւրեանց առ մի ապաշխարեսցեն . և յայնմ ամի ծոմապահ լիցին
յառուրս չորեքշաբաթու և ուրբաթու ։ ԻԴ · Ա՛ր գիրք հա-
մարեսցին ՚ի հին օրինաց սքն . ծննդոց . ելից . ղեւտականք .
թուոց . երկրորդ օրինք . յեսուէ . դատաւորաց . Հռութայ .
չորս գիրք թագաւորաց . երկու գիրք մնացորդաց . երկու գիրք
եզրայ . տոբիթայ . յուդիթայ . եսթերայ . մակաբայեցւոց .
յոբայ . սաղմոսք դաւթի . չորս գիրք սողոմոնի . գիրք երկո-
տասան մարգարէից . գիրք եսայեայ , երեմիայ (ըստ որում ի-
մացեալ լինի և մարգարէուն բարուքայ) , եզեկիէլն և դա-
նիէլն և խմաստուն սիրաքայ ։ Ո՛ այսոսիկ կանոնս ՚ի կոնդա-
կի հաստատեալ սիոնի կաթողիկէ՝ սիրեցայ զպատուհանս յայլեայլ
գաւառս յծին հայոց , նաև յծին աղուանից հաւանութեն դաւ-

768 մ՚ձէ

Թէ կը ձիկսի նէ , և հաձուէք իշխանսայ նոցին , որոց անուճանք էին վարազդուդակ վաչականեան , և վարդան սատունեան , և տիրիկ քարոնեան , ևն ։

769 մԺԸ

Ի յաջորդ ամի այսր ժողովոյ մեռաւ սիւնեցւոյն ոստիկան . և ամիրապետ առաքեաց ի տեղի նորա զայլ ոք պեքիր անուն . որ բազմօք տառապեցոյց զՀայս . և զօրք նր առաւել էս . որոց ումանք գնացեալ և ի կողմանս քաղենոյ , աբրենոյ և Թաչնոյ՝ նեղէին յոյժ զբնակիչսն . ըստ որ ոչ էս կարացեալ նր հանդուրժել՝ յարձակեցան ի վր , զումանս Հարին ի բերան սրոյ , և զումանս ցրուեցին փախստեայ ։ Օ այն իբրև իմացաւ պեքիր ոստիկան , աղդ սրար վաղվաղակի մեծի իշխանին միջապետայ , որոյ անուն էր մուսէ մուսահաբէ , արձակել զօրս ի Հայս ի սահմանս քաղենոյ , արբենոյ և Թաչնոյ . և նր կազմեալ գունդ մի ստուար՝ արի արանց՝ առաքեաց ի կողմանս յայնոսիկ ։ Հասեալ նոցա անդր յանկարծակի՝ յաւարի առին զերկիրն , և կոտորեցին արս եօթնհարիւր , և գերեցին ոգիս հազար և երկու հարիւր ։ Եւ ապա դառնանալ ամենց կալեալ և զմեծ պատրիկն ըզսահակ բագրատունի՝ աճին առ մուսէ . և զի մուսէ յառաջագոյն իսկ ուներ թշնամութիւն ընդ սահակայ պատրկի , իբրև ետես զնա՝ առ ժամայն ետ սպանանել , և զնա զանձս նր էառ յարքունիս . ոմն գրէ դիոնեսիոս պատմիչ ասորւոց . առ ասսեմանեայ . Ը . 16 ։

770 մԺԹ

Գ Լ Ո Ւ Խ . ԿԳ .

Յաջափս կաթուղիկոսութիւնէ եսայեայ , պետիննոսի , և յովաբայ . և պատերազմելոյ հայոց ընդ ասպարիսն . և նահապետութիւնէ իշխանացն ամենայն և հմայազասպայ ։

775 միՀ

Ա . Յետ երանելի հայրապետ հայոց կայեալ ի կաթուղիկոսութիւնէ ամս . ը . վախճանեցաւ . և յաջորդեաց զաթոռն նր եսայի ի նիզ գաւառէ յերզնկայ գաւառաշուշ գեղջէ : Պատմի վն սորա , Թէ մինչդեռ մանուկ էր ամնդհաց՝ և միամօր որդի ծնողացդ , մեռաւ հայրն . իսկ մայր նր աղքատ մնացեալ՝ էառ զնա և տարաւ ի դուխին ի դուռն եկեղեցւոյ կաթողկոսարանին . և անդ նստեալ մնայաներ զնա . և ոչ մեկներ անտի քնաւ , զխիճ և զգիշեր ի բացօթեայս կալով յամառանայր ի ձմերան : Եւ յորժամ հարցանէին զնա քահանայք տեղւոյն , Թէ ընդէր այդպէս քաղցօթեայ դադարես առ յայսչափ գառնաշունչ խստութիւնէ

օրդոյ հանդերձ ամենեսեան մանկամբդ, և ոչ նատիս ի տան
աբրեք, նա տայր պատճառ ասելոյ. ոչ գիտեք, զի ես վասն
կաթուղիկոսութեանդ մտացանեմ սատ զօրդեակս իմ: Զրոյ
գրեթէ մարգարէանայր վէմ մանկանն. զի յետ փոքր ինչ մե-
ծանալոյ նոր կացեալ և մնալ ի նմին կաթուղիկոսատանն,
և զարգացեալ ի բարի վարս և յուսմունս, ձեռնադրեցաւ
նախ եպիսկոպոսութեան գաւառի, որ և գտաւ ի ժողովին զոր
արար սիմն կաթուղիկոս՝ ըստ պատմելոյ մերոյ ի նախընթաց
գլուխդ. և ապա կոչեցաւ ի պատիւ կաթուղիկոսութեանն ի
վէմ տաճկին:

Որ յաւուրս սորա երևեցաւ ի մէջ հայոց առեփանոս գունե-
ցին դրան երից կիթիկարանքին, այր բանիբուն. զորմէ ասէ
սամուէլ անեցի, թէ * եհաս ի կատարումն ամ իմնաստասի-
,, րական և գրամարտիկոս արհեստից՝ հանդերձ հոգևորա-
,, կան առաքինութեբ ||: Յաւելու ևս ասել. * Վասն յայնմ
,, ժամանակի և վիպագ յաշխարհիս հայոց ընտրեալք և լու-
,, սաւորեալք, ձեր եփրեմ, և անաստաս, և խաչիկ, և դա-
,, ւիթ հռոմայրեցի ||:

Ալպան: Ընդ այն աւուրս առաքեցաւ ի հայս հռոմն անաւն ոստի- 778
կան ումն ի տեղի պէքիրայ. և սա առաւել գտաւ քան զպէ- մին.
քիր և քան զայլս ի կեղեքել և ի չարչարել զհայս. նաև
զօրք նորա անդադար աշխատեալ սատ և անդ՝ սպատակ
սփռէին և աւերէին զեղն: Ընդ որ դառնացեալ յոյժ մուշե-
ղայ մամիկոնէի՝ խորհեցաւ ապստամբել յոստիկանէն. և
ժողովեալ ընդ իւր արս քանի մի քաջս ի մամիկոնեանց՝ յարձա-
կեցաւ ի վրդ զօրաց նոր, որք եկեալ էին ի կողմանս տարոնոյ,
և սպատակէին ի գիւղս և յաւանս. և ապա ի նոցէ ոգիս 780
երկերիւր. և ապա միաւանգամ պատահեալ նոցա ետար զբա- մին.
հազարս ի նոցէ. և գիմեալ ի դռնէն՝ վարեցաւ անտի զոստի-
կան: Ընդարձակուի գտեալ յայնժամ և այլ իշխանք հայոց
սկսան ի նոր իւրեանց տիրել գաւառաց իւրեանց:

Ալպան: Սմռոել: Ի լինել այսր այսպէս՝ յայտնեցաւ ի հայս կրօնաւոր ումն ա- 781
նազդի, որ արտաքուստ խստակրօն վարս երևեցուցանելով՝ մին.
նազդի, որ արտաքուստ խստակրօն վարս երևեցուցանելով՝
սկսաւ առաւել և պատիր բանիւք գուշակութիւս առնել, թէ
լցեալ են ժամանակք հաւատարացոյ, և ունին վերջանալ. վա-
րոյ չէ պատուհաս ձեզ ասէ հնազանդիլ նոցա, այլ՝ վանել զնոս ի-
պատ յոտ ձերմէ: Հաւատացեալ ըստ այս իշխանացն հայոց՝
յայտնապէս ապստամբեցան ի հաւատարացոյ. և ամենեք ի
նմանէ սրբ իբր հինգ հազարք ժողովեցան ի մի. որոց գլուխ
եղեն մուշեղ և սմբատ և սամուէլ: Եւ ի յարձակիլ բազ-
մութեբ հաւատարացոյ իբր երեսուն հազարաց ի հայս, ե-
տուն պատերազմ ընդ նոսա յաւուրս զատկաց. և հարան ի նո-

ցանել չարաչար յոյժ . և կոտորեցան ոչիք իբր երեք հազար ,
և առաջնորդք նոցա ըստ նն , մուշեղ՝ սմբատ և սամուէլ . և
այլք մազապուր փախուցեալ ցրուեցան յայլևայլ տեղիս . ըստ
որս և երկու որդիք սմբատայ աշոտ և շապուհ , և եղբայրն
սամուէլի շապուհ . և երկու որդիք մուշեղայ՝ միւս ևս շա-
պուհ և վարդ . որք անկան յերկիրն վաստպուրական . այլ
զերկոսին զսոսա զվարդ և զշապուհ սպան ՚ի ծերուժան արծ-
րունի եղբայր սահակայ և համազասպայ . իսր թէ պատճառ
այսր հարուճածոյ լեալ լիցի հայր ինչ մուշեղ :

Վրէ վարդան , թէ էին այսր մուշեղայ չորս դստերք ևս . | Ա՛ արդան :
որոց մին կամելով առնել իւր թիկունս և ապրեցուցանել
զանձն ՚ի թշնամեացն՝ ամուսնացաւ ըստ ջահապի ումեմն հա-
զարացւոյ առն հզօրի . որ գրաւեալ էր յինքն զմահն ինչ երկ-
րին արշարունեաց ՚ի գաւառին շիրակայ՝ որ էր ՚ի ձեռս կամ-
սարականաց . և խորհէր հնարիւք իմն ՚ի ձեռն կնոջ իւրոյ
առնուլ և զբռլորն . այլ ոչ կարաց :

78ա մ՚ ի՚ ե. Ապա բազմութիք հազարացւոց յետ վանելոյ զմիաբա-
նեալսն ըստ մուշեղայ՝ դիմեցին ՚ի ներքս ՚ի հայս՝ յաւարի առ-
նուլ զնոսն . յորոց զգոն հարեալ իշխանացն հայոց՝ և շուռ-
րեալ , ոմանք ամլացան ՚ի քաղաքս իւրեանց , և կայլին ՚ի
նոսին տարակուսեալք . և ոմանք փախեան յանմատոյց տե-
ղիս . նոյնպէս և գիւղականք պաշարեալ ՚ի վտանգս՝ ոմանք
ապաստան եղեն յամուր քաղաքս . և բազումք ցրուեցան և
գերծան ՚ի լերինս . և կէսք ղօղեցան ՚ի յայրս և ՚ի ձորս :
Նոյնպէս և որդիք բազպատունեացն սմբատայ՝ աշոտ , որ մա- | Ա՛ ղուկ. Է. 2 :
կանունամբ մնակեր կոչիւր , և շապուհ , կամելով պահել ըզ- | Ա՛ արդան :
քնիկ երկիր իւրեանց զգաւառն սպեր՝ բաժանեցին զայն ՚ի
մէջ իւրեանց , և զգուշանային նմին . և ոչ տային թոյլ թշ-
նամեաց միջամուխ լինել յայն գաւառ : Լուեալ սոցա՝ թէ
բազմութիք հազարացւոց սփռեալ են զկողմամբք աշոցայ և
տաշրի , և քանդեն զերկիրն , ժողովեցին յինքեանս զարս կո-
րովիս . և հասեալ յանկարծուստ ՚ի վէր այլազգեաց՝ հարին
և վանեցին զնա անտի :

783 մ՚ ի՚ Եւ իբրև այս յաջողեցաւ նոցա , դիմեցին ապա և յերկիրն շի-
րակայ յարշարունիսն , և վանեցին անտի զջահապ իշխանն
և զամ զօրս հազարացւոց՝ որք էին անդ . որով առաւել ևս
վատահացեալ՝ ետուն գանձ բազում ՚ի կամսարականս , և
գնոյ առին ՚ի նոցանէ զայն գաւառ . ուր և նորոգ շինեալ
աշոտոյ զերկրորդն սպի , որ յաւագն էր աւան փոքրիկ , բնա-
կեցոյց ՚ի նմա զընտանիս իւր : Այն այս աշոտ գաւառ և բա-
րեպաշտ կամ ՚ի գործս իւր . և յոր ժամանակ ձեռնամուխ
լինէր , նախ կանխէր առ ած : Յաւուր միում մինչդեռ կայր

Նա յաղօթս յեկեղեցւոջ, ազդ եղև նմա, թէ դիմեալ գան
հաւատացիք՝ ի վէր քո. այլ նա ոչ թուլացաւ՝ ի խօսելոյ ընդ
ամ մինչև ցաւարտումն աղօթից. և ապա ելեալ ընդէմ նոցա՝
առանց ձակատելոյ յարձակեցաւ՝ ի վէր, և պատահեալ գլխա-
ւորի նոցին՝ որ կոչիւր լիպառոն աբդլմելիք, եհար և յերկուս
կտրեաց զնա. և կոտրեաց՝ ի զօրաց նոր արս իբր հինգ հա-
րիւր։ Ո այսպիսի քաջութիւն՝ որ լուեալ ազգին գնուներաց՝ որք
քննակէին յաղխուվիտ, առաքեցին առ նա, և խնդրեցին թա-
փել զինքեանս յասպատակութենէ հաւատացոց. և նոր հա-
սեալ անդր հազար արամբք՝ վանեաց զասպատակն. և առ
ապահովս առնելոյ զգնուներսն՝ տարաւ զնա աղխուէն իւրեանց,
և քնակեցոյց՝ ի տայս ։

785 մէջ

Յակ Քահապն հանդերձ որդւով իւրով աբդլլայիւ դիմեալ՝ ի
դուռն՝ էառ զայն. և թողեալ անդ զորդի իւր՝ ժողովեաց
զոր հինգ հազար, և յարձակեցաւ՝ ի տայս ։ Այլ քաջին
աղոտոյ ելեալ ընդէմ նորա երկու հարիւր հեծելօք և երեք
հարիւր հետևակօք՝ կոտորեաց զբոլոր հազարս՝ ի գնդէ զօրաց
նոր, և էառ զամ աւար նոյ, և դարձաւ անդրէն փառաւորե-
լով զԱծ ։ Այսպէս և շապուհ եղբայր նորա ասպատակեալ
՝ի կողմանս դունայ, և առեալ աւար բազմ՝ դառնայր անտի.
և՝ ի գնդիլ զօրաց քաղաքին գՀետ նր՝ քաղաքացիքն ապանին
զաբդլլայ զորդի Քահապայ. և իբրև դարձան նք յետս, փա-
կեցին զդուռն քաղաքին ընդէմ նոյ. որով և անոր և անձար
ձնացեալ զօրայն՝ ցրուեցան ։ Յակ Քահապ դիմեալ սակաւա-
ւոր զօրօք՝ ի կողմանս եղիմացւոց՝ տիրեաց առ եղերք ծովոյն
պարսից յարևելից կուսէ. և շինեաց անդ իւր քաղաք՝ ի բե-
րան գետոյն. յորմէ և ազգք տեղւոյն կոչեցան Քահապք ։ Ի
դիմել դարձեալ հաւատացւոց յՀն վասպուրական՝ ՝ի դիմի
Հարան նոյ և վանեցին զնս երեքին եղբարք՝ սահակ, Համա-
զասպ և մերուժան. և ապանին զգլխաւորս նոցա ։ Եւ այս
խառնակութիւք ապստամբութե տեսեցին ամս վեց։

786 մէջ

Ա՛ռաքնպ ։ Ա՛պրէլ· 8։ Ա՛սող· Է· 2· Ե 4։

Է· Այլ իբրև նստաւ ամիրապետ Հարն եղբայր մուսէի,
առաքեաց՝ ի Հայս ոստիկան ոմն եզիտ անուն, տումեալ՝ ի
ձեռս նր զօր բազում յոյժ. և նորա եկեալ յՀն մեր՝ նուա-
ճեաց զասպատամբսն ողջանօք և սպառնալեօք. և էարկ
վերստին զՀայս ընդ իշխանութե ամիրապետին Խալաթ ։ Եւ
կոչեալ առ ինքն զերևելսն իշխանս՝ արգել զնս առ իւր. և
առեալ յամենեցունց՝ ի նմէ պատանդս՝ արձակեաց զնս ։ Եւ
ինքն գՀետ մտեալ եր՝ զբոլամբ ածել զերեսին եղբարս՝ զիշ-
խանսն ազգրունեաց, զՀամազասպ, զսահակ, և զմերու-
ժան. զի պատուէր ունէր յամիրապետէն վ նմ՝ կամ ուրա-
ցուցանել և կամ սպանանել ։ Եւ զի ոչ վստահէր զայս առնել

'ի գումին , գնաց 'ի պարտաւ քաղաք աղուձանից . և պատճառանօք լինի կոչեաց զնա գալ առ ինքն . և նա յանձն արարեալ զնա իւրեանց 'ի դաւիթ մամիկոնեան՝ գնացին առ նա : Նա իբրև յանդիման եղեն նմա , եցոյց նոքա եղիտ զպատգամն առաքելոյն , և ասէ . երկու ինչ առաջի կայ ձեզ , կամ թողուլ զկրօնս ձեր , և կամ զրկիլ յաշխարհէ և 'ի կենաց : Պինդ եւտուն նոքա , և ասեն . երկոքին խնդրելոցդ ևս օտար են յիրաւանց . մեք ոչ կարեմք թողուլ զքէս . իսկ թէ դու կամիս պահանջել զմեզ յանիրաւի , տացես համարս ոչ , և մեք առցուք 'ի նմէ զպահն նահատակութեան : Նա ասէ ցնոսա . 'ի վերնոյ եղիտայ՝ էարկ 'ի քանտ . ուր ուրացեալ մերոյ աստուածոյ զհաւատս իւր՝ եկ և գնաց առ ամիրապետն , և էառ 'ի նմանէ զիշխանութեան համօրէն ձին վասպուրականի :

Այլ սահակ և համազասպ կացին հաստատուն 'ի հաւատս . վնյ և ոստիկանն հրամայեաց հատանել զգլուխս նոցա : Նա յորժամ տանէին զնոսա 'ի տեղի գլխատման , նոքա ցնծալով գոհանային զնոյ , ոմն թէ հրաւիրեալ էին 'ի հարսնեաց թէ և 'ի փառս . և 'ի ձանապարհի յորդորէին զմիմեանս՝ աներկիւղ համարձակութեամբ մատչիլ 'ի մահ վասն քրիստոսի , և մի լինչ փոյթ յանձին ունել վասն կենաց , կամ վասն որդւոց և կանանց և ընչից : Նոքայն զկնի նոցա և բազմութիւնք մարդկան՝ հայոց և այլազգեաց , ընդ նոսին և նա ինքն ոստիկան , որ անպատմելի խրատեր զնոսա և ողբերս յուրացուն : Նա 'ի հասանել 'ի տեղին , այն ինչ յարդարէին դահիճքն զսուսերս , նոքա ծունր եդեալ խնդրէին յնոյ զօրացուցանել զինքեանս՝ անվեհեր մտօք տալ զանձինս 'ի պատուհաս վասն սիրոյ նորա : Նա սուրբ մատուցեալ համազասպ՝ որ երիցն էր , ասէ ցերանելին սահակ . եղբայր իմ , դու՝ որ կրտսեր էիր քան զիս ըստ մարմնոյ , ելեր այժմ անդրանիկ ըստ հոգւոյ վկայական մահուամբս . ես գահու 'ի վեր նստեայ , նիստ դու այժմ 'ի վեր մարտիրոսութեանդ . 'ի խրախուճիս մարմնոյ ես յառաջ ըմպեի բաժակաւ , այժմ դու յառաջ արբցես զբաժակ փրկութեանն քրիստոսի , և փառաւորս լիցի անուն նոցին 'ի քեզ նահատակութեանդ : Այնժամ կնքեալ սահակայ զինքն նշանաւ սքի խաչին՝ խոնարհեցոյց զպարանոց իւր առաջի սրոյ դահճին , և կատարեցաւ . և երանելին համազասպ նոյնպէս փառս տուեալ այն վանն կատարման եղբօրն՝ ինքն ևս զկնի նորա նահատակեցաւ , յառաջնում աւուր ամսեանն ահեկանի , այն է ապրիլի . 8 . յամի տեառն . 786 . և 'ի թուին հայոց . մլե :

Այսպէս դարձ արար ուրացեալն մերոյ աստուծոյ՝ և գայր 'ի վասպուրական ՚ , եւ ընդ առաջ նորա գաւիթ մամիկո-

նեան՝ որ նստեր ՚ի վան, և սպան զնա։ Այսու նահատա-
կութիւք երկուց եղբարց արծրունեաց, և կորստեամբ երրոր-
դին, կատարեցաւ նախադուշակութիւն սքանչ մովսեսի խոսե-
նայոյ՝ ըստ յիշատակելոյ մերոյ յերկրորդ գիրս. Գլ. Կ. Ե-
րես. 538։

Յովհաննու և պետրոսի։

Ը. Յետ նահատակելոյ եղիտայ զերանելին սահակ և ըզ- 787
համազասպ՝ եկն ՚ի նախջուան քաղաք. և վաղվաղակի առա- մլԸ
քեաց գործակալս ՚ի գաւառս գաւառս՝ առնուլ հարկս և
տուրս։ Նա զմիոմն ՚ի պատուհասուորաց իւրոց սրի անուն առա-
քեաց ՚ի գաւառն բագրեւանդայ. որոյ հասեալ ՚ի դեօղն
բագուճան՝ եկն և եմուտ ՚ի վանս եկեղեցւոյ սքանչ գրիգորի.
և անդ ագաւ աւուրս հինչ։ Այր տեսեալ նորա զգեղեցիկ և
զչքնաղ սպասս եկեղեցւոյ, և զոսկեղէն և զարծաթեղէն
անօթս, և զոսկեձամուկ վարագոյր խորանին, և զփառա-
ւոր զգեստս, հարաւ ագահութիւք սիրտ նորա ՚ի յափշտա-
կութիւն նոցին. և խորհեր զայնպիսի գտանել հնարս, զի իբ-
րև իրաւամբք կարասցէ առնուլ յինքն զնոսին։

Յայսպիսի խորհրդով վարանեալ նր՝ եւ խեղդամահ առնել
՚ի գիշերի զմի ոմն յանարգագոյն ծառայից իւրոց, և ըն-
կենուլ զայն ՚ի վիհ մի խորափիտ՝ որ անդ կայր. և կափուցա-
նել զմուտ նորին։ Այլ իբրև այգ եղև, ոչ թէ ոչ գիտեալով
զեղեալն՝ սկսաւ խնդիր առնել ծառային սպանելոյ. և յոչ
գտանելն զնա՝ եղեալ զբարկութիւն մեծ. և հրամայեաց կո-
չել առաջի իւր զկրօնաւորս վանիցն. և հարցանէր ՚ի նոցանէ.
ուր է ասէ ծառայն իմ. գուցէ յինէն նեղեալ ՚ի նմանէ ա-
ռիք վրէժս։

Պէտք եւս նորա. ոչ գիտեմք ասեն՝ ո՞ է, և ոչ իսկ տե-
սեալ է մեր զնա։ Յայնժամ հրամայեաց իշխանն կապել ըզ-
նոսա, և պահել ՚ի բանտի. և ինքն սկսաւ յուզել զվանան և
զնմա վայրս. և հասեալ ՚ի վիհն՝ զոր ինքն կափուցեալ էր,
եբաց զայն. և տեսեալ անդ զիւեզդեալ ծառայն՝ ձիչ ե-
բարձ, և ասէ. ահա սպանին սքանչ ծառայն իմ, և արկին ՚ի
վիհս յայս. և հանեալ զնա անտի՝ եղեալ բանտարկելոցն, և
ասէ. այս է ձեր մարդասիրութիւն՝ զոր ցուցիք ինձ. այլ չարք
և անօրինք՝ պարտականք մահու։ Այնոյն ժամայն առա-
քեալ այր մի առ ոստիկանն եզիտ՝ զպատուոյ նմա. և բնդ բանս
ամբաստանութիւն բարդելով ՚ի վերայ կրօնաւորացն՝ մահու
պարտաւոր եղոյց զնոսա. և ոստիկանն առանց հարցուփորձ
առնելոյ՝ հրամայեաց սպանանել։

Այսպիսի հրաման ընկալեալ այլ իշխանին՝ խողխողեաց
՚ի բանտի զնմա կրօնաւորան՝ որք էին աւելի քան զքառա-
սուն. և ինայեին սակաւք ոմանք՝ որք ՚ի սկզբան ՚ի ծագել

շփո-

շիմոնեան՝ ի ծածուկ տեղիս: Այսպէս յաւարի առեալ Իշխանին զնա սպասս և զնա զարդս եկեղեցւոյն, և մերկացուցեալ զվանան յամէն՝ եւ գնաց անտի: Այնժամ որք Թաքուցեանն էին յանյայտ տեղիս՝ ելեալ արտաքս, և տեսեալ զեկեղեցին դատարկացեալ և խրճնացեալ՝ ի բազարդութենէ՝ սգացին յոյժ. և գնացեալ՝ ի քանան՝ իբրև տեսին զդիակունս կրծնաւորաց, յափշտակեալ՝ ուշաթափ անկան անդէն. և յետոյ զգաստացեալ՝ ողորմելի և ցաւագին ողբով լային՝ ի վերայ նոցա. և քարձեալ զմարմինս նոցուն՝ թաղեցին պատուով իբրև զմարմինս մարտիրոսաց: Եւ այս եղև առ ժամուբ եսայեայ կենդանւոյ կիսփոքր մի յետոյ. ոչ պատճ յովհաննէս կենդանի. այլ ասողիկ քեզմ ամբք յառաջ գնեք, այլ է յաւուրս սահակայ կենդանի. իսկ վարդան յերկուս տեղիս ևս յիշէ:

Ե. Ինչպէս յայսմիսի տառապանս էին հայք, ամիրապետն հարուն ետ զՀայաստան համօրէն՝ եղբօր իւրում աբեղայ. և նա առաքեաց յՅոյս հայոց հարկահան ումն իշխնդօկլ ուրայօղ յազգէ Հոռոմոց: Եւ սա՝ ի ձեռն ոստիկանին եզիտայ և ինքնին իսկ այնչափ խոշտանգեաց զՀայս, մինչև յոտիս լինել նոցա ապստամբ. վեց և նախարարքն Հայոց հանդերձ կենդանւոյն եսայեաւ բողոք կալեալ առ նա ինքն իսկ դօկլ. աղաչէին թեթևացուցանել զանուր ծանրութենէ հարկացն. քայց նա առաւել ևս՝ և կրկին քան զառաջինն եդ հարկս՝ ի վերն նոցա. որով և ըստ ասելոյ առողիկայ՝ մարդիկ ՚ին հասին վերատին՝ ի յետին տնանկութիւն: Օ այս տեսեալ շահիդոյ ամատունեայ, և որդւոյ նորա համամոյ, խորհեցան թողուլ զՅն և փախչիլ. և՝ ի նոյն յորդորեալ և այլ ևս երկոտասան հաշտ ոգիք՝ մեկնեցան անտի, և գնացին յՅն Հոռոմոյ: Իբրև գիտաց զայս հարկահանն իշխնդօկլ, առաքեաց զօրս զկնի նոցա. և իբրև հասին նքա՝ ի սահմանս կողմն դարձան հայքն՝ ի վերն նոցա. և մարտ եդեալ ընդ նմա՝ վանեցին զնա. և ինքեանք անցեալ ընդ գետն՝ որ կոչիւր ակամխա, մտին՝ ի սահմանս յունաց: Ուրեալ զգալուստ նոցա կոստանդինոս կայսեր՝ ետ նոցա տեղի բնակութենէ՝ ի բարւոք երկրի. և նքա մնացեալ անդ՝ ոչ ևս դարձան՝ ի հայս:

788 Ա ախճանեցաւ յայն աւուրս եսայի կաթուղիկոս, կացեալ ՚ի Հայրապետութեան ամս. ժէ: Իբրև գիտաց զայն իշխնդօկլ Հարկահան, բռնութենէ եւ թերել առաջի իւր զնա սպասս եկեղեցւոյն դուննայ. և որ ինչ հաձոյ երևեցաւ յաչս նորա՝ ի մատուցեալ նմա և ոստիկանին ինչ՝ հաձեցոյց զնա, և կալաւ զաթոռ Հայրապետութեան ամս. ը: Եւ ապա յովաք

Ggg 2 կամ

(1) Յովհ. կաթ.
(2) Ագաղ. 4.
(3) Մամուէլ
(4) Արդաս.
(5) Երեմիա.

կամ յոլք յոստանէն յատպարանից կիւրապաղատին՝ ամիսս. 6։ Իսկ իպնդոկիլ կողոպտեալ և յայլ տեղիս զվնասուցեալ և զեկեղեցիս՝ դարձաւ ՚ի տեղի իւր. և մնաց Հայաստան ՚ի ձեռս ստիկանին եղիտայ այլևս ամս իբր. Է։

Գ Լ Ո Ւ Խ. ԿԴ.

Յաղագս եօթնեցորդ ընդհանուր ժողովոյ. և ապստամբելոյ հայոց եղելոյ ՚ի թագինն յոանաց ՚ի կոյսերէ։

Ա յս ժողով գումարեցաւ ընդդէմ պատկերամարտից ՚ի նիկիա բիւզանդացւոց. որոյ վասն կոչի և երկրորդ ժողով նիկիոյ. զորմէ թէպէտ և չէր հարկ մեզ խօսիլ, բայց չէ ինչ անդէպ ասկաւուք ևս առաջի առնել զպատմութիւն ասորա։ Ա՛յլ կամեցեալ ՚ի գրգռութիւնէ անտի պատկերամարտութենէ սկիզբն առնել քանզի գիտելի է, զի առ ՃԻԿ օք լևոնի կայսեր խաւարացոյ՝ որ և իսաւրոս կիւռոս կոչի, յաւուրս հայրապետութենէ յովհաննու հայոց կաթղկոսի, հրեայ ոմն նենգաւոր առաքինութեան գուշակիչ սկսաւ սերմանել քանս ՚ի մէջ արաբացւոց և հագարացւոց ընդդէմ նկարուց պատկերաց, թէ կռապաշտութեան է այն՝ զոր առնեն քրիստոնեայք. և յայս սակս գրգռեցաւ զեղիտ ամիրապետ և յորդոր եղև նմա ջնջել յեկեղեցիս իւրեանց զպատկերս, խոստանալով նմա՝ թէ այնուհետև մնասցէ նա երկար կենօք ՚ի թիւրութենէ սմա քան զնա։ Հաւանեալ ընդ այն ամիրապետին՝ հրամայեաց խորտակել զպատկերս և զնաչս. և ինքն զկնի սակաւուց մեռաւ. որով և ՚ի դերև եղ սուտ գուշակութենէ հրէին. վասն որոյ և վեհիտ որդի եղիտայ՝ չարաչար սատակեաց զհրէայն։ Այլոց այսոցիկ ամենեցուն ըստ առաջնոյ հրամանին՝ ուր և գտանէին պատկերս ինչ կամ արձան, խորտակէին՝ այրէին և ջնջէին. մինչև անգամ առնել և ՚ի դրամոց զպատկերս թագաւորին, և լոկ գիրս դրոշմել։

Այս զի ընդ այն աւուրս սիրեալ էին ՚ի հասարակս ասիա և ՚ի յունաստան արբանեակք մանիքեցւոց պօղիկեանք աղանդաւորք չարք, որք յայնմ սրտէ ատէին զպատկերս և զնաչս, ընդ այս առթիւ սկսան յայտնապէս զինել ընդդէմ յարգութեան պատկերաց. մինչև ՚ի հաւանութենէ ածել և զկայսրն յունաց զլևոն խաւարս. որում հաստատող գտաւ և թէոփիլ կոստանդին եղկն նակողիոյ՝ որ ՚ի փոխարէն պատուհասեր եհան ապա կայսրն բառնալ զնշան պատկերս յեկեղեցեաց.

և

Ա՛մմ. պատ. ի հայոց 790 մլթ.

Անանիա Մոկացի հատոր. ՃԸ. երես. 951. ձին՚է 11154 և ՃԻ. 1. ձին՚է 758։ Ֆրէդեգանէս Օռնաքաւս Ելեզբենոս։ Ժոխն. 11։ Պռնկ. 5։ Ա՛ստղ. Է. 4. և 6։ Սոմոսել։ և այլք։

{723 ՉՀԸ}

{726 ՉՀԶ}

և հրամայեաց և՛ս կործանել զայն երևելի արձանն՝ քան՝ որ
կայր ՚ի բարձրաւանդակի ՚ի վերայ պղնձի անուանեալ դրան
քաղաքին . զոր իբրև իմացան ժողովուրդքն , ՚ի վե՛ր հասին
սպասաւորաց Թադաւորին , և քարամբք և փայտիւք հա-
րին զնոսա :

Ապա այս առաւել և կատաղեալ կայսերն՝ բռնացաւ ՚ի վե՛ր
անդէն . և արձակեալ զօր բազում յա՛մ տեղիս՝ հրաման ետ
անհետ առնել զա՛մ պատկերս փրկչին և զսո՛ց . և զընդդի-
մակացս կորուսանել սրով և հրով . և եղև հալածումն ասստիկ
՚ի Թէոդոսէ յոմանց : Այլ Թէոպէտ սո՛ցն գերմանոս և քա՛հնյա-
պետք հռոմայեցւոյ և յովհան դամասկացին բազմօք հնարեցան
շինուցանել զայս հուր , և դարձուցանել զմիտս կայսերն
յուղղութի՛ն , բայց չեղև հնար . որոյ վասն և պահն ՚ի բաց
եհան ղիտաղացիս ՚ի հարկատուութէ կայսերն յոմանց . և
ժողով արարեալ՝ նզովիւք դատապարտեաց զպատկերամարտս .
որպէս և զնոյն արար նաև յովհան խմաստասէր հայրապետ
հայոց յիւրում ժողովի :

{741} {723} {723} {723}

Զ . Յետ մեռանելոյ լևոնի կայսեր Թշնամուէ՝ Թէոդեայ
որդի նորա կոստանդին կոպրոնիմոս , որ և կոչի կաւալի-
նոս , և ըստ հայոց Թրքաժողով . և սա և՛ս ապիրատագոյն
գտեալ՝ ոչ միայն ընդդէմ զինեցաւ սո՛ց պատկերաց , այլև դրե-
Թէ ամենի՛ զհետ գնացեալ աղանդոյ պօղիկեանց՝ սկսաւ ար-
համարհել զա՛մ եկեղեցական կարգս և զպաշտամունս , և
բերել նաև ՚ի կախարդութի՛ն և յանհաւատութի՛ն . և պատ-
ուէր ետ մի՛ կոչել զսո՛ս յօգնութի՛ն , և մի՛ պատուել զնշխարս
նոցա . և ժպրհեցաւ հայհոյել պիղծ շրթամբք և զամենասո՛ր
կոյսն : Այս ոմն գրեցաք ՚ի գլ . կ՚ . երես . 404 . ՚ի սակս այսպիսի
չարեաց նո՛ր ասպատամբեցան ՚ի նմանէ բազումք , և ընտրեցին
կայսր զարտաւազդ զբարեպաշտ իշխանն հայոց , որ նորո-
գեաց զյարգուն պատկերաց . այլ իբրև նուաճեաց զնա կոպ-
րոնիմոս , անդրէն սկսաւ հալածել զուղղափառս , և նա-
հատակեաց զբազումս :

{754} {754} {754}

Այլ ոչ այսչափ միայն , այլև յինքն յանկուցեալ զբանի մի
անարժան ենթկաւնս , ըստ յորդորելոյ նո՛ց ժողովեաց առ ինքն
զայլ բազմութի՛ն ենթկաց՝ Թուով իբր երեքհարիւր երեսուն
և ութն . և ետ նո՛ց բռնութի՛ն հաստատել զհերքումն պատկե-
րաց , և նզովել զընդդիմակս , և՛ս առաւել զսո՛ն գերմանոս :
Այլ յետ արձակելոյ զնո՛ս , զորս միանգամ եգիտ յենկաց և
՚ի կրօնաւորաց զընդդէմն առնել , բազում տանջանաւք չար-
չարեաց և սպան . և զմանս յիշխանաւորաց հրապարակաւ
գանակոծ արար . ետ յոգւոյն երդնուլ առաջի բազմութե՛ն՝
Թէ հերքեմ և նզովեմ զպատկերս . ատիպեաց զկրօնաւորս

{726} {726} {726}

Ա.ՄԿ. ՊՃ
ԱՌ ԿԱՅՍՐ

կ՚ելանել և արուճեստաւոր լինել. զգաղութս վանորայս ետ
՚ի բնակութիւն զինուորաց. պ՚ոլով գրեանս նախնի հարց և
զպատուհասական նշխարս սրբոց ՚ի հուր այրեաց. և այսու օրի-
նակաւ վարեալ զիշխանութիւն իւր՝ չարաչար և դժնդակ մահ-
ուամբ եւ կ՚ծէ: Յաջորդեաց սմա լեւոն որդի իւր. և սա
ևս եղև առեցօղ պատկերաց. և ժողովուրդն իսկ՝ գրեթէ
առ հասարակ ՚ի նոյն սովորեցան:

{780 ՄԼԹ} Ի՚ձերեաց ապա կոստանդին հանդերձ մարթ իւրով եւթ-
նեաւ. և յաւուրս սոցա ընտրեցաւ ՚ի պատրիարգութիւն կոս-
տանդինուպօլսոյ տարասիոս՝ այր զգօն և զգուշաւոր. որ և
գրեալ Թուղթ առ ադրիանոս պապ՝ նը՚ խորհրդով գոն գո-
ծեաց բառնալ ՚ի միջոյ զայմ գայթակղութիւնս, և խաղաղել
զաշխարհ շփոթի. ոլոր վ՚ս իսկ հաւանութիւնք քննչապետին և
կայսեր և դշխոյին եղև հրաման ժողով մեծ լինել ՚ի վերայ
այսր. և զի բնդմէ ՚ի կոստանդինուպօլսեցւոց հաստատեալ
էին ՚ի մոլորութիւնէ իւրեանց՝ հակառակիլ ընդեմ պատկերաց,
կասկածեալ ՚ի նոցանէ գումարեցան ՚ի նիկիա քաղաք բիւթա-
նիոյ՝ եպիսկոպոսունք երեք հարիւր և յիսուն, և վանականք և կրօ- {787 ՄԼՁ}
նաւորք բազում յոյժ. յամի տեառն. 787. և ՚ի Թուականութ-
Թենն հայոց. ՄԼՁ. ՚ի վերջնում ամի կաթուղիկոսութենէ տեն
եաղկեայ:

Ձ. Յայս սրբ ժողով յառաջնում գումարման Թողութի՚ն
խնդրեցին ՚ի հարց ոմանք յոյնց եպիսկոպոսաց՝ որք յառաջնմէ գոր-
ծակից լեալ էին կոպրոնիմոսի. և յետ բազում քննութի՚ն լինելոյ
հաշիւ ուրեմն ընկալաւ գնա ժողովն: Երկրորդ գումարման
ընթերցեալ եղև նամակն ադրիանոսի պապին գրեալ առ կայսրն
և առ դշխոյն, և միւս ևս նամակ գրեալ առ տարասիոս. յորս
հաստատուիւր բազում բանիւք յարգուն սրբ պատկերաց իւրեանց
առաքելական աւանդուի՚ն. և համօրէն հարք ժողովոյն ՚ի միւ
միոջէ ետուն հաւանութի՚ն այնց Թղթոց. և յաւելին ասել.
յարգեմք զպատկերս փրկչին և զսբին, և զմերժօղսն նզո-
վեմք: Նոյնպէս և երկրորդ գումարման ընթերցեալ եղև
նամակն տարասիոսի և այլոց ոմանց եպիսկոպոսաց ՚ի վերայ այսոցիկ
իրաց. և զայնս ևս ընկալաւ ժողովն: Ի՚ երրորդ և ՚ի հին-
գերորդ գումարման ՚ի մէջ բերին և զբանս սրբ հարց ՚ի հաս-
տատի՚ յարգուե պատկերաց, և զպատմութի՚ն վարուց սրբ
յորս յիշատակին պատկերք և աղգի աղգի հրաշք: Ի՚ աջմի
մատուցին և զսբ պատկեր փրկչին, և երկիր պագին այնմ՝
հայրապետաք հաւնդերձ մնդԹողական բանիւք: Ի՚
վեցերորդ գումարման ՚ի մէջ բերեալ զգործս սուտ ժողո-
վոյն կոպրոնիմոսի՝ նանրացուցին զնա. և հրամայեցին դնել
զպատկերս յամ եկեղեցիս և ՚ի մատուռնս, և պատուել:

{Յետ-

Յ.մէ պան և հայոց

Յեօթներորդ գումարման կարգեցին սահմանադրուձի հաւատոյ ։ յորում նախ հաստատեցին զդաւանուձի վեցեցունց նախընթաց սուրբ ժողովոց , և զդատապարտեալսն ի նոցանէ դատապարտեցին ։ և ապա միւսանգամ օրինադրեցին զյարգումն պատկերաց , և զդիմադարձս նզովեցին ։ ՅուԹերորդ գումարման սահմանեցին կանոնս քսան և երկու վասն բարեկարգուԹե ։

{780 միլ} Ղատան յայս ժողով և ոմանք յՀէն մեծին և փոքուն հայոց ։ տեփանոս եպիսկ ։ վարդան եպիսկ ։ բարսեղ եպիսկ ։ վահան վանահայր ։ վարդ վանահայր ։ և այլք ։ զորոց զգաւառս և զԹեմս գԺոՀարին եղև մեզ տուգուԹիւն որոշել ։ Ի.յս ժողով ընկալեալ եղև ի հայոց ։ ոչ է տեսանել յայսմաւուրս ։ հակ ։ ԺԱ.որ և դրոՀատի անդ ։ ոչ և ի գեկո.ց.իբր ուղղափառական՝ վ'ս հաստատելոյ անգԷն յարգուածէ պատկերաց ։ Ասատի և վայրապար զրպարտուի է այն , զոր առնեն ոմանք ի յոյն մատենագրաց , Թէ հայք մերժեն զպատկերս սրբոց ։ Ի.յՀ զայսմանէ տեսցես ի ծանօԹուձիս չորրորդ գրոց ։

{787 միլ} {788 մէկ} Գ. Ի.յ Յաջորդ ամի այսր ժողովոց , կոստանդին կայսր՝ որ խօսեցեալ էր ի կնուԹի զդուստր մեծին կարոլոսի կայսեր գերմանացւոց , իբրև կամէր Հարանիս կարգել , մայր նորա եռինէ ի ԹշնամուԹի դարձեալ ընդ գերմանացիս վասն իրիք պատձառի՝ արգել զպատկն ։ և ետ բերել Հրաւիրանօք զաղջիկ մի ի հայոց մարիամ անուն՝ զդուստր մեծի իշխանի ուրուն յայնմհակական տոհմէ նախարարաց , զոր յոյնք կոչէին փիլարետ ։ և ընդեմ Հաձուէ կոստանդինայ ամուսնացոյց զնա ընդ նմա ։ յորմէ ծնաւ դուստր մի եփրոսինէ անուն ։ Ի.յսու պատձառաւ անկաւ ատելուԹի ի մէջ եռինեայ և կոստանդիեայ ։ յոր և առաւել գլգռեցին արք չարք ։ Ի.յՀ զօրացեալ եռինեայ՝ կալաւ և արգել ի տան զորդի իւր կոստանդին , և նոՀաձեայց զկուսակիցս նր ։ և Հրամայեն եԹան , զի ամբիծն զինքն մ այն ծանիցեն իշխող Հրուէ յունաց ։ և երդուին էառ ի զօրաց , զի ի կենդանուէ իւրում մի Հանցեն զկոստանդին

{789 մէկ}

յաԹոռ կայսերուէ ։

Ոակ զօրք հայոց եղէլոց ի բաժնին յունաց , և ի կողմանս կապադովկիոյ՝ զորս արմենիաքն կոչէին յոյնք , լուեալ զգործ եռինեայ՝ արհամարհեցին զՀրամանն նր ։ մեք ասեն զերկոսին Հս զկոստանդին և զեռինէ Հաւասար դիտեմք ի կայսերական իշխանուէ ։ Ի.յՀ Թագուհին կամելով ածել զնա ի Հաւանուձի՝ առաքեաց առ նա զմուշեղ իշխան հայոց , որ էր ի դրան արքունի , և կոչեր ի յունաց ալէքս մուշեղ , և ի ձեռն նորա Հնարեր քաղցրուէ և կամ սաստկուէ նուճաձել զնոսա ։ Ասայց նա յանկուցեալ զսիրտ մուշեղայ ի նենգեանս՝ կարգեցին զնա

(1.էոփանէս Կեդրենոս ։ () ոնոր.ձէ ։ 11.12.ԼԱ ։

ին-

հնաբեանց իշխան և զօրավար . և զառաջինն զօրավար իւրեանց
զնիկեփորոս արկին ՚ի բանտ . և ապստամբեալ յեռինեայ՝
զկոստանդին ևեթ համբաւէին լինել կայսր ։

790 Մնէր Եղև այս և յայլ գաւառս յիշխանութիւն յուննաց . և նոքա ևս
՚ի քաց հանեալ զիշխանս իւրեանց՝ զորս կարգեալ էր յունաց՝
ապստամբեցան ՚ի Թագուհւոյն . և զկոստանդին խնդրէին
իւրեանց կայսր ։ Եւ ապա ազմուկ մեծ արարեալ համօրէն
զօրացն՝ նաւուցին զկոստանդին յաթոռ կայսերուն . և նա ըզ-
մայր իւր զեռինէ եդ ՚ի պալատան միւսմ իբրև յորգելանա՝
վարել զկեանս առանց իշխանութե . Թէպէտ և յետոյ հաշտել
եհան զնա ։ Եւ ընդհս կամելով առնել գնդին հայոց՝ որք
առաջին եղեն խնդրել զինքն և կարգել վերստին կայսր ,
հաստատեաց զմուշեղ ըզ հաձուԹե նոյ ՚ի զօրավարուե ։ Ա.ՍԼ 791
յետ սակաւուց կասկած առեալ ՚ի նմանէ ապստամբութե՝ մ էն
կոչեաց զնա ՚ի դուռն պատճառանօք լինչ . և առեալ ՚ի նմանէ
զիշխանութի նը՝ արգել առ իւր . և ՚ի խնդրել զնա հայոց ստի-
պաւ՝ գերծեաց զչերս նը , և եդ ՚ի դիպահոջ . և փոխանակ
նը առաքեաց ՚ի զօրավարուի հայոց զԼեոդորոս ոմն . և նոքա
ակամայ կամօք ընկալան զնա ։

Է. Եւ եղև ըզ այն աւուրս ՚ի գնալ կոստանդինայ ընդեմ
բուլղարաց ՚ի պատերազմ , և ՚ի դառնալն նը անտի կորակոր ,
ոմանք յաւազակաց դրանն ապստամբել՝ զայլ ոք կամէին դնել
կայսր . և մեծ մասն ՚ի նոցն միաբել էր զետ մեծի առն մուշե-
ղայ . զոր կամէին հանել յարգելանաց , և նատուցանել յաթոռ
կայսերուե ։ Ա.ՍԼ կոստանդին զբռամբ ածեալ զնմ գլխա-
ւորս հակառակորդաց իւրոց՝ պատուհասեաց զնա , և զմու-
շեղ կուրացոյց , զի յուսահատ լեցին ՚ի բարձրացուցանելոյ
զնա ՚ի կայսերուն ։ Ոչեալ զօրացն հայոց զանցս քաջին մու- 792
շեղայ՝ վառեցան անհնարին բարկուԹե . և ՚ի բանտ արգելեալ վիճա
զնոր իշխանն զԼեոդորոս՝ յայտնի ապստամբեցան ՚ի կոստան-
դինոսէ . և միաբանեալ ընդ իւրեանս զբնակիչս Ծին բարձր
հայոց , որք զառաջինն չէին լեալ կամակից ընդ նմ , զինեցան
ընդդէմ կայսեր ։ Այն լուեալ կոստանդինայ՝ արձակեաց ՚ի
վր նոյ զօրու ծանու զարտաշիր զհայ իշխանն , որ անձնասա-
հապետ էր ՚ի դրան և մտերիմ կայսեր . և եղև պատերազմ
սաստիկ ՚ի մէջ յունաց և հայոց . և յերկոցունց կողմանց ոչ
սակաւ եղև կոտորած . և բազումք եղեն ձերբակալ . և զորս
միանգամ կալան աստի և անտի , զրկեցին զնոսա յաչաց . և ՚ի
վախճանի վաստակ արեալ զօրացն կայսեր՝ յետս կասեցան ՚ի պա-
տերազմէ ։

Տեսեալ կոստանդինայ՝ Թէ չկարաց նուճաձել զհայս , վերս-
տին զօրաժողով եղև անհամար բազմութե , և դիմեաց նոցա զօ-

790 մէթ

791 մխ

795 մէջ

797 մէջ

792 միւռ

զուրբ յունաց ՚ի վէր նոյ . և ոչ զի դիւրաւ մարթասցի յաղթել պաղտ պատգամ առաքեաց առ գունդն քարձր Հայոց , զի ՚ի նոցանէ առասել կասկածելր . և քաղցմ խոստմամբք քակտեալ զնա ՚ի միաբանութէնէ այլոց՝ որսայ զբաղումն ՚ի նոցանէ յիւր կողմն . և մատնուէք նոյ յաղթահարեաց զայնմն . և զրնակացեալ նոճաձեաց անդրէն զհակառակորդս իւր , և զգլխաւորս նոյ եքարձ ՚ի կենաց ։ Այլ բերեալ կապանօք ՚ի կոստանդինուպոլիս հաղար այր ՚ի Հայոց , զորս կալեալն էր ՚ի պատերազմի , խարանս էարկ ՚ի ձակատս նոյ , զբոշմեալ ՚ի վէր միոյ միոյ ՚ի նոցանէ յունարէն գրով զնախատական ինչ բան . և աքսորեաց զնս յայլևայլ տեղիս ։ Այսպէս որք պատրեալ ՚ի խոստմանէ կայսերՙ և գրելոյ Թէոփանեայ՝ մատնիչք եղեն ազգայնոց իւրեանց , ՚ի դերև ելին յակնկալուէ . և ոչնայն ձեռաք դարձան յՅ իւրեանց . որոյ վ՚ռ դառնացեալ ՚ի վէր կայսերՙ անձնատուր եղեն ՚ի հափարացիս , տուեալ զամրոցն անՙ ՚ի ղկամսն ՚ի ձեռս նոյ ։

Յետ այսորիկ կոստանդին կայսր դաւաձանուէք մօր իւրոյ եւռինեայ շարժեցաւ յատելուէն ընդեմ դշխոյին մարիամայ , զոր ՚ի Հայոց առեալ էր իւր կին . և հատեալ զՀերս նոյ՝ արգել ՚ի վանս կուսանաց Հանդերձ դստերք նորին եփրոսինեաւ . և էառ կին զԹէոդորա զնաժիշտ մօր իւրոյ ։ Այլ Թէպէտ ընդդեմ եկաց այսմ մեծ պատրիարգն տարասխոս , քայց ոչսառնացաւ նմա կոստանդին , և ասէ . Եթէ ոչ տաս Հրաման , քանամ զտաճարս կուսոց . ընդ որ զահի Հարեալ տարասխոսի՝ զիջաւ նմա . և յետ սակաւուց մայր նոյ եռինէ կուրացոյց զաչս նոյ . և ինքն կալաւ առանձին զիշխանուէն կայսերութե ։ Այլ մեք դարձցուք այժմ ՚ի կարգ պատմութեան կաթուղիկոսաց Հայոց ։

Գ Լ Ո Ւ Խ · Կ Զ ։

Յաղագս կաթուղիկոսուէ սողոմոնի , գէորգեայ , յովնէփայ և դաւթի . և ոսպիկանուէ խուպիմայի և հոլայ ։

791 մխ

ՎԱխձանիլ յովաբայ կաթուղիկոսի՝ նստաւ յաթոռ Հայրապետութե ծերունին սողոմոն ՚ի գաւառէ դեղալբունեայ ՚ի գիւղաքաղաքէն գառնոյ ։ Այ ՚ի մանկուէ միայնացեալ էր կրօնաւորութե ՚ի վանս մաքենոցայ կամ մաքենեաց . որ էր մենաստան մեծ ՚ի կոտայս գաւառի յՅին արարատայ . որոյ միանձունք զգեստուքն զմաքենիս , յր զատուին մաքեաց . յոր սակս և կոչիւք վանքն

{Յովհ.կաթ. Ա.տող . Բ . 2 . եւ 6 ։
Յաղող ։
Ա արդուն ։
Ա էրակոս ։}

այն մաքենիք կամ մաքենայք ։ Ընդ կացեալ սողոմոն խաչա-
կրօն վարուք առաքինանայր . ուր և քիչմ ջանիւք ուսեալ զար-
տաքին իմաստուն յունեացն փիլիսոփայէ՝ եղև այր երևելի
սրբութիւք և իմաստութիւք ։

Ի՝նչգեռ նա անդ էր , միաբանք վանացն վճռ իրիք պատճա-
ռի բաժանեցան յերկուս . և վանահայրն , որ կոչիւր ևս սո-
ղոմոն , առեալ ղկէս ՚ի նոցանէ՝ գնաց ՚ի շիրակ գաւառ . և
բնակեցաւ յայլ վանս . ընդ նմա գնացեալ և սողոմոն կրօնաւոր՝
հրամանս էառ ՚ի նմանէ , և բնակեցաւ իբրև միայնակեաց ՚ի
փոքրիկ խրճիթ միում ՚ի գրեակ աւանի . յորում քիչմ ձգնու-
թեանց և աշխատութեանց տուեալ ղանձն մինչև ցժամանակս
ծերութեան՝ առացաւ ղվարս սքեմ . և համբաւ սրբութեան նոր և իմաս-
տուն տարածեցաւ ընդ բոլոր ՏՆ . վայ և ընտրեցաւ կաթղիկոս ։
Յորժամ տանէին զնա ՚ի գուխն յաթոռ հայրապետութեան, հար-
ցին ցնա ոմանք յիշխանացն հայոց , և ասեն . ծեր ես դու , և
ամենևին նիհարացեալ ՚ի ձգնութեդ . ապա ո՞նպ յօժարիս գնալ
լինել կաթուղիկոս ։ Պինախ ետ սողոմոն , և ասէ . * երթամ ,
,, զի գեղապատճոյճ նկարողաց սևեռ զիս ընդ այլ հայրապետան
,, տամ յորմն եկեղեցւոյ ։ Զրով կամէր ասել , թէ ես ոչ
գնամ իբրև հայրապետ , այլ՝ իբրև ստուեր հայրապետաց .
ուստի և զպատկերս իմ տաց սևագոյնս նկարել յորմն եկեղե-
ցւոյ ՚ի մէջ փառաւոր պատկերաց հայրապետացն , զորս գե-
ղապատճոյճ նկարեցին պատկերահանք ։ Նա ևս , թէ՝ թէպէտ
և գնամ ես , բայց ոչ ունիմ կատարել զհայրապետական պաշ-
տամունս . զի փութով հասանէ ինձ մեռանիլ . և ոչ ինչ
ճեռագէ յինէն , բայց եթէ պատկերս իմ նկարեալ յորմն եկե-
ղեցւոյ ։ Նա ոմն ասացն , նոյնպէս և կատարեցաւ . զի չևևա
լրացեալ ամ մի հայրապետութեն իւրոյ՝ փոխեցաւ յաստեացս .
և պատկեր նր նկարեցաւ յորմն եկեղեցւոյ . ընդ որում գրէ յայ-
հանէս կաթղիկս , և այլ պատմիչք մեր . ուր Տարևանցիկ ար-
ժան է ՚ի միտ առնուլ , թէ ուրեմն յայնմ ժամուն գոյր հասա-
րակ սովորութիւն ՚ի հոյս նկարել յեկեղեցիս զպատկերս՝ ոչ
միայն սքեց , այլև կաթուղիկոսաց ։

Յետ սողոմոնի յաջորդեաց զաթոռն նոր գէորգ՝ ամս . ՁԲ . զոր 792
սամուէլ երէց և կիրակոս կոչեն Հոյլորքուկ , կամ Խուլոր- միայն
քուկ , ՚ի գաւառէ արագածոտան ՚ի գեղջէ աշտարակայ՝ ըստ
ասելոյ ստեփաննոսի ասողկայ . իսկ ըստ այլոց ՚ի գեղջէ ոշա-
կանայ , կամ ՚ի բիւրականց ։

Յետ գէորգեայ նստաւ կաթուղիկոս նոր յովհէփ երկ- 795
ՔԲ . րորդ՝ որ կարիձն կոչիւր , ՚ի գաւառէ արագածոտան ՚ի վա- միայ.
նայ սքեն գրիգորի , կամ ՚ի գեղջէ սքե գէորգեայ ։ Ի չորրորդ
ամի սորա առաքեցաւ յամիրապետէն Հարունայ ոստիկան ոմն

խուլ-

խոշտիմայ անուն՝ ի տեղի եղիտայ. որ եկեալ՝ ի դուռն քաղաքն
նուաճեցաց զբռնութի այնոցիկ հպատակացոց, որք ընդեմ կամաց
798 ամիրապետին նեղէին զՀայս. և կոչնապատիս առաքել՝ ի զա-
ՄԻՔ նազան գաւառս Հայաստանեայց՝ ի խաղաղութե պահել զնոսն,
և քաղցրութե վարել ընդ նախարարսն, առեալ՝ ի նոցանէ զպա-
տանդս. ընդ որս և զմբաստ զորդի աշոտոյ քաջի. զորս և ա-
ռաքեաց՝ ի բաղտատ։ Յայնժամ սակաւուց յարոյց գժտութի
սա ինքն խոշտիմայ ընդ կաթուղիկոսին. քանզի տեսեալ զդե-
ղեցկութի մեծամեծ աւանից կաթուղիկոսարանին, այն են ար-
տաշատ, և կաւսակերտ, և հոռոմոց մարգ, յանկացաւ առ-
նուլ զնա. և խնդրեաց՝ ի հայրապետէն յովսեփայ՝ վաճառել
զայնս ինքեան, ոչ զի տալոց էր ղգինն, այլ զի անուանաբ վա-
ճառման յափշտակեսցէ զնա։ Իսկ հայրապետն ծանոյց նմա,
թէ չէ մեզ օրէն զկալուածս և զինչս եկեղեցւոյ վաճառել.
զի սակ նուիրեալ են նոքին այ. բայց ոչ համոզեցաւ այսու
ոստիկանն. այլ՝ արհամարհել ղբանս նորա՝ առաւել ևս սկզբն
և խնդրել զայնս։

Եւ իբրև ոչ կարաց հաւանեցուցանել զՀայրապետն, սրտմտել
՝ի վեր նորա՝ ետ ըմբռնել և կապել զնա՝ ի շղթայս, և գան ևս
հարկանել, և՝ ի բանտի դնել, պատճառելով զայլ ինչ. զի դու-
ել այսու մեղմացուցել զնա՝ առնուցու՝ ի նմանէ, զոր Հայեցին.
այլ Հայրապետն արուէր սրտի համբերել չարչարանաց և նե-
802 ղութե՝ ոչ էառ յանձն տալ նմա զկալուածս եկեղեցւոյ։ Իբրև
ՄԾԲ ետես ոստիկանն, եթէ ոչ կարէ այնու ձնդրհաւ առնուլ զա-
ւանան, հնարս խորհեցաւ այսպիսի. ելից զերիս պայուսակս
(յն կաշեայ սպարկս) գանձիւք. և եդեալ զնոսին՝ ի գլուխս
երից ծառայից իւրոց՝ ետ յայտնի և հրապարակաւ տանիլ առ
Հայրապետն, պատուիրեալ նմ, զի՝ ի գնալն խոտորեսցին՝ ի
ձնդրհն անտի, և տարցին զգանձսն ընդ գաղտնի ձանապարհ
յայլ տեղի, զոր ցուցեալ էր նմ յառաջն. և հրաման եհան,
թէ Հայրապետն վաճառեաց նմ զաւանան. և ետ հանել զնա
՝ի բանտէ, և տանիլ՝ ի կաթուղիկոսարանն։ Ո՜յ այս յայն ամէն
այնպէս արար ոստիկանն. զի ոչ կարէր յայտնի ընդունել յափշտա
կել զաւանան. վ՚ն զի ոչ ունէր զայն իշխանութի յամիրապետէն։
792 Եւ ամենայն յովսէփ Հայրապետ յետ ելանելոյ՝ ի բանտէն ցու-
ՄՈՒԱ ցեալ առաջի աւագաց ոստիկանին զբռնաբարութի նորին, և
զտուեալն վաճառմանն, Հաղիւ կարաց առնուլ յոստիկանէն
զերկուս աւանան զկաւսակերտ և զհոռոմոց մարգ. իսկ աւանն
արտաշատ մնաց՝ ի ձեռս ոստիկանին։
795 ՄՈՒԵ
804 Ձ. Եւ ընդ վեց այսր դիպուածոյ մախանօք և թշնամութե
ՄԾԴ էր ոստիկանն ընդ Հայրապետին, ոչ դադարէր՝ ի նեղելոյ զնա
պեսպես իրօք, երբեմն յափշտակութե ընչից, երբեմն զրպարտ-

տուբք քանից , և երբեմն չարչարելով զքՀնյա ։ Օ այս տեսեալ
եղբօր Հայրապետին՝ սպառնացաւ նմա գրել ամբաստանութի՛ 805
վն ՆՐ առ ամիրապետն ։ Ըստ որ զայրացեալ ոստիկանին՝ առա- մԾԴ
ւել և թշնամացաւ ընդ Հայրապետին , և Հրամայեաց ծռելով
իւրոց սպանանել զեղբայր նր՝ ի ծածուկ ։ Այս նոյն կալեալ զնա
յակունս ։ ծառօր գետոյն՝ խեղդեցին զնա , և ընկեցին ըզ-
մարմինն՝ ի ծովակն՝ որ էր ի հիւսիսոյ կողմանէ ականց գե- 806
տոյն ։ Օ այն իբրև լուաւ յովսեփ Հայրապետ , սուգ եհան՝ ի մԾԵ
վր եղբօր իւրոյ ։ և՝ ի քաղում յաւուց սրտին , ոք՝ ի սակս տա-
ռապանաց ծին՝ հիւանդացեալ անկաւ՝ ի մահիճս ։ և յետ քա-
նի մի աւուրց վախճանեցաւ , կացեալ՝ ի կթղկսուԹե ամն ։
ԺԱ ։ Այ նստաւ՝ ի տեղի նր յաԹոռ ՀայրապետուԹե գաւԹ
եղկրդ՝ ի գաւառէ մազազայ՝ ի գեղջէ կակազոյ կիմ կակազայ ։
Յովան. 24։ Յաւուրս սորա նահատակեցան երկու եղբարք՝ սահակ և յով- 808
Մամռէլ ։ սեփ ։ որոց մայրն հայ էր , և հայրն պարսիկ , արք անուանի՛ք մԾԸ
Աղբակուս ։ և երևելիք՝ ի քաղաքին կարնոյ ։ վ՛ա զի կամեցեալ այր գնալ՝ ի
կոստանդինուպօլիս առ աներկիւղ պաշտելոյ զքրիստոնէուԹի-
նն՝ կալեալ եղեն յամիրայէն կարնոյ ։ և՝ ի ստիպել իւրեանց ուրա-
նալ զՀաւատս քրի , ոչ Հաւանեալ այնմ՝ մատնեցին զանձինս
՝ի տանջանս և՝ ի մահ ։ և ընկալան զպսակն մարտիրոսուԹե ։
զորոց կարեաս տեսանել յայտմաւուրս՝ է յունվարի ։ 22։

Յովհ. կաթ։ Ա արդան ։ Ոսկան ։ Ե՛տ այսորիկ մեռաւ խուզիմայ ոստիկան ։ և մինչդեռ 818
էր այլ ոք եկել՝ ի տեղի նր , արշաւեցին՝ ի հայս առպատակք՝ ի մԿԷ
կողմանցն միջագետաց ։ որոց ընդդէմ ելեալ երկոքեան եղբարք
քաջագործունեք , քաջն աշոտ՝ կոչեցեալն մեսակեր՝ որ տերեր՝ ի
շիրակ , և շապուհ՝ որ իշխեր գաւառին սպերոյ , վանեցին ըզ-
նոսա , և հարին զբազումս՝ ի նոցանէ՝ ի սուր սուսերի ։ այլ
շապուհ՝ ի մարտնչելն աստուածապէս՝ վտանգեալ անկաւ ։ և
պայազատեաց փխիկ նր՝ ի սպեր որդի նորին աշոտ անուն ։ ո-
րոյ որդի եղև շապուհ պատմագիր ։ Իսկ քաջն աշոտ առա-
քեալ դեսպան առ ամիրապետն՝ ծանոյց նմա զանցս ծին ։
միանգամայն և խնդրեաց դարձուցանել յետս զորդի իւր ըզ-
սմբատ՝ զոր տուեալ էր՝ ի պատանդ ։ Այ ամիրապետն կարդել
զոք ոստիկան հաւել կամ հոլ անուն , որ էր այր խաղաղարար
և մարդասէր բարուք , առաքեաց զնա՝ ի հայս հանդերձ սրմ-
բատաւ ։ Եհաս յետ երկուց ամաց քաջն աշոտ ։ և սմբատ
որդի նր կալաւ զերկիրն շիրակայ՝ ի տեղի հօր իւրոյ ։ և ըն-
կալաւ յամիրապետէն զպատիւ սպարապետուԹե Հայոց ։ Ա
շինեաց յերկիրն արշարունեաց ձեռակերտ մի , զոր անուա-
նեաց ագարձկոյս ։ Օնաւ սա ուստերս երեք ։ աշոտ , սահլ , և
աբաս ։ յորմէ և նա ինքն սմբատ Համարի սպանաբաս ասացեալ ,
իբր Թե Հայր աբասայ ։

Ընդ առաւօտն ևս քանի մի դատերս . որոց զմին ետ՛ի կնոջէ բագարատայ իշխանին վրաց , որ էր որդի աշոտոյ կիւրապաղատի՛ի զարմէ բագրատունեաց ։ Զայն այսր ամբաստայ մերձաւոր ազգականք՝ չորեքին եղբարք . դաւիթ , սահակ , մուշեղ և գագարատ ։ Դաւիթ խնամութեի՛ն արարեալ ընտանի մանկունեանց՝ գնաց և նստաւ յօձ քերդ . և նորոգեալ ամբացոյց զայն ։ Զոկ բագարատ փեսայացեալ տանն արծրունեաց՝ տիրեաց՛ի կողմանս սիմ լերկիւն յերկիրն սասնոյ ։

Ընդ այն ժամանակս սևադայ ոմն անուն՛ի կայսիկ տոհմէ այլազգեաց՝ կիսր ընկալեալ վարդանայ՛ի տանէն ջահապայ , կէս առեալ իւր՛ի բագրատունի տանէ՝ որում անուն էր արուսեակ , ՛ի ձեռն նորա բռնակալեալ տիրեր՛ի մասն լինչ երկրիս հայոց ։ Նա ապա ընդվզեալ ընդեմ ոստիկանին հոլայ՝ ժողովեաց զօր բազմ . ընդ որում միաբանեցաւ և ամբաստ սպարապետ . և սահակ սիւնեաց տէր , և այլ ևս աղատագունդ նախարարք և սեպուհք հայոց ։ Նա ամենքին՛ի միասին խորհուրդ արարեալ՝ հնարեցան դաւով ըմբռնել զհոլ , և կամ յորոգայթ մահու արկանել զնա . վասն որոյ և յամ կողմանց դուընայ եղին զարս՛ի դարանի ։

Այս իբրև իմացաւ հոլ , կոչեաց առ ինքն զհայրապետն դաւիթ , և ասէ . երդմնեցուցանեմ ղքեզ՛ի հոգի քոյ , ձեռն քոյ և ընդ նոսա՞ է՝ թէ ոչ . եթէ ասացես զնրաւն , և ես երդնում՛ի հոգի իմ՝ զի ոչինչ արարից ընդ քեզ չար ։ Նա իբրև ծանեաւ ստուգիւ , թէ հայրապետն ոչ է՛ի խորհուրդս նոցա , առաքեաց զնա դեսպան առ սևադայն և առ ամբաստ և առ սահակ , և ասէ . ընդէր այդպէս հպարտացեալ խրոխտանայք՛ի վերայ իմ , և կամիք դաւել զիս . եթէ ոչ կամիք ընդունիլ զիս , տեղի՛ տուք ինձ . զի գնացից անվտանգ յոտն ձերմէ ։ Նա հայրապետն յաւել՛ի բանս ոստիկանին և յիւրմէ բազում աղաչանս . և ջանացաւ հաւոզել , և՛ի խաղաղութի՛ն ածել զնա . և իբրև ոչ առին նմա յանձն , և ոչ կամեցան լսել նմա , դարձաւ՛ի նոցանէ տրտմեալ ։

Ե . Տեղեկացեալ հոլայ՝ թէ նմա հաստատուն կան՛ի կամս իւրեանց , ընտրեաց՛ի զօրաց իւրոց զհզօրս սակաւ թուով , և հնարիւք լինն վարձեաց յօտար ազգաց և զերկու հազար արս հեծեալս , հաստաբազուկս՝ կորովիս և կատաղիս . և լուսնթէ եկն՛ի ծածուկ՛ի կոզմն հուրաստան գետոյն . զի անդ առ եղերք գետոյն նստեալ էր բանակն սևադայի հանդեպ կաւակերտին . և յանկարծուստ լինն ուժգնին և սաստիկ զօրութի՛ն յարձակեալ՛ի վե՛ր նոցա՝ անդէն կոտորեաց զբազումն՛ի նոցանէ . կէս մի արար սմբակակոխ երիվարացն , և կէս մի տարաւ փախստեայս ։ Նա սևադայն և սմբաստ և սա-

հակ հանդերձ իւրեանց Թիկնապահ զօրօքն խառն և սաստիկ պատերազմեալ ընդ զօրս հոլայ՝ սպանին զյոլովս ի նմանէ. բայց ի կատարի սրոյ նոցա տկարացեալ՝ վտանդեցան յոյժ. ուր անկաւ և սահակ սիւնի. իսկ ամբատ և սեւադայն հազիւ ձողպրեալ անձնասպառ փախեան. և մնացեալ զօրք նոցա ցիրեւան սփռեալ փախստեայ գնացին։

Ընդ այն աւուրս յամի տեառն. 802. նստաւ կայսր յոստանդ ի կոստանդինուպոլիս նիկեփորոս բըռնաւոր՝ այր անագորոյն և խիստ. յորոյ անտանելի գնացից նեղեալ արեւելեայ զօրաց առ Հարկ, միաբան եղեալ կայսր զվարդան պատրիկ զզօրավարն իւրեանց, որ էր յազգէն հայոց՝ Թուրք մականուանեալ, այր փառաւոր և ազատ անձնեայ։ Եւ Թէպէտ նա ինքն վարդան բազմօք ընդդէմ եկաց՝ և չկամէր յանձն առնուլ զայն իշխանութիւն, մանաւանդ զի գուշակեաց նմ կրօնաւոր ոմն, Թէ միայն հասանէ քեզ այտի, և ունիս զրկել զքեզ ի լուսոյ արեգական, բայց զօրքն առի պեցին զնա յոյժ. և նա հարկեալ զինքն ի կամս նոցա. և կայսերական շքով և բազմ զօրօք խաղայ ի խրիստուպոլիս, այն է իսկիւտար. և զուԹն օր դեգերեալ յայնոսիկ կողմանս, և տեսեալ զանհաւան միտս իշխանացն կոստանդինուպոլսոյ՝ դարձաւ ընդ կրունկն։

Եւ ապա երկիւղածութիւնք իմն զմտաւ ածեալ զտարտասարտուց կոտորած բազմաց, որ հանդերձել էր լինել՝ ի մարտն չիլ իւրում ընդդէմ նիկեփորոսի, պատգամ առաքեաց անկեղծ

Ընդ այն աւուրս

{802 մ.ծ.ա.}

քա-

(1) Ոմանք՝ Նիկեփորոս Կերբենոս։ (2) Ոմանք՝ Ձեռնաբաձեալ. գլ. 14։ (3) Ոմանք՝ Պղնիկոպիտ։ (4) Ոմանք՝ Ա՝անասէ։ և այլք։

ԳԼՈՒԽ ԿՕ.

Յաղագս հայրընդդուռնէ վարդանայ և արշաւրի. և հայաերտուռնէ լեռնէ արծրունւոյ։

զանիւք առ կայսրն Նիկեփորոս, և խնդրեաց ի նմէ յետկար
երդման՝ ոչինչ վնասել ինքեան և իւրոցն. և ես ասէ յետս
կամ յայտնիսի գործոյ՝ յոր յակամայս ձեռն արկի։ Եւ Նի-
կեփորոս կայսր գրեաց առ նա իւրով ձեռամբ, և խոստացաւ
նմ անվնաս պահել զնա, և ոչինչ առնել չար՝ ոչ նմ, և ոչ
որոց միաբանեալ էին ընդ նմ. և այսմ նամակի նմ ձեռս եդին
ամ քշմանք պալատին, նաև պատրիարգն տարաստիոս։ Եւ
այսու ամիճ կասկածեալ վարդանայ ի բանից կայսերն, ըզ-
րոյ գիտեր զանուղիղ միտս, եւ գաղտ գիշերայն, և գիմեաց
ի կիոնէն քաղաք բիւթանիոյ ի վանս հերակլեայ. և զգե-
ցեալ զաբեմ կրօնաւորական՝ էանց անտի ի պուռտայ կղզի ի
մենաստան մի, զոր ինքն էր շինեալ. և կրօնաւորեալ անդէն՝
անուանեցաւ սաբա։

Այս իբրև լուաւ կայսրն, էառ զամ ինչս նմ յար-
քունիս. և ընդեմ երդման իւրոյ պատուհասեաց զհամախոհս
նորա. և առաքեալ արս գազանամիտս ի պուռտա՝ պատուէր
ետ նոցա առանձինն գտանել զվարդան, և կուրացուցանել
զնա. զոր և արարին իսկ։ Իբրև իմացան զայս պատրիարգն
տարաստիոս, և ամ աւագանին՝ որք միանգամ յոյժ երկիւ-
ղածքն էին, գժկամակ եղեն ընդ ապիրատութեն նիկեփորայ։
Այլ կայսրն իբրև անպարտ ի գամեղս լինէր. և սպառնա-
լեօք խօսեր՝ գտանել և վրէժս առնուլ յայնցանէ՝ որք կուրա-
ցուցին զվարդան. և կեղծաւորութեբ զեօթն օր յարքունի
պալատան փակեալ՝ լայր ատեբ, և քաղքեր զերեսս իւր ի
վր աղետիցն վարդանայ. բայց յայտնի գիտէին ամենքին, թէ
ոչ ձշմարտութեբ է այն՝ զոր առնէր կայսրն։ Իսկ վարդան անո-
խակալ ցուցեալ առ նենգաւոս իւր՝ այնուհետև ետ զանձն մե-
ծի ձգնութեբ և պահեցողութեբ. և եկաց ի վանսն անտա-
նելի խստութեբ վարուց մինչև ի մահ իւր։

Յաղում և այլ չարիս գործեալ նիկեփորայ՝ ատելի եղև
ամենեցուն. մինչև յետ ամաց հինգ միաւանգամ միաբանեցան բա-
զումք ի մեծամեծաց, և ընտրեցին կայսր զարշաւիր գան-
ձապետ զհայ պատրիկ՝ զայր քաջերկրեն և իմաստուն։ Եւ
նիկեփորոս փութով տեղեկացեալ այսմ, նախ քան ղգալ
նմ զինքն՝ ձերբակալ արար զարշաւիր, և ետ չարաչար գան-
հարկանել զնա. և կտրեալ զձեռս նմ՝ տարագրեաց ի բիւ-
թանիա՝ կալ ի վանս կրօնաւորութեբ. և զամ համախոհս նմ
պատուհասեաց։ Որոց մի էր և փեսայն արշաւրայ լեւոն
որդի վարդայ, յոմ մեծին հայոց յայգեկ արծրունեաց, այր
աչալուրջ և հնարագէտ, և ի բազուկ արուն ձեռայ և քա-
ջութեբ սրտի անհամեմատ. զոմ ես հնարիւք դաւաձանու-
թեբ կալեալ՝ գան եհար, և խուզեալ զվերան՝ աքսորեաց ի

մենաս-

{802 մծն}

{807 մծբ}

մեհենատան մի ։

Ը · Եւ եղեւ նիկեփորոյ կայսեր նստեալ միքայել հիւրտապատ
ղաւտ՝ ռանգաց առաջեալ , այր սպարզամիտ և երկիւղած . և
պրոկոպիա Թագուհին ունէր զԴոջ կառավարութիւն ։ Այլ եր-
կոքին սնդրէին հաստատեցին զնիշխանս յիշխանութիւն իւրեանց ,
զորս ընկեցեալ էր նիկեփորոյ . և որս դարձուցեալ և զևսն
պատրիկ արծրունի՝ կացուցին զօրավար արեւելեան գնդից ։
Եւ եղև՝ ի յարձակիլ բուլղարաց յՀին յունաց , և՝ ի յաւարն
առնուլ զքիմ տեղիս , եւ ընդ Դոջա միքայել կայսր . այլ
պարտեցան զօրքն Հռ և՝ ի փախուստ դարձան . յորմէ ընկ-
ճեալ կայսեր՝ խորհեր հրաժարիլ՝ ի կայսերութենէ , և զանձն
ածել ապրեցուցանել . և կոչեալ առ ինքն զևսն արծրունի
զարեւելեան զօրավար՝ կամեցաւ՝ ի նա տալ զայն իշխանու-
թիւն . և նորա ոչ առեալ յանձն՝ ասէ . ոչ ընդունիմ զայսպիսի իշ-
խանութիւն , յորմէ կամովին հրաժարի առնօղն ։ Եւ երբեմն
լուծան արեւելեան զօրք յունաց , թէ միքայել կամի հրաժա-
րիլ՝ ի կայսերութենէ , անդէն իսկ կացուցին կայսր զինա ինքն
զևսն ։ Եւ ակ միքայել կայսր մեկուսացեալ՝ ի վանս ինչ՝ կրօ-
նաւորեցաւ անդէն ։

Ա տեալ ապա լևոնի հանդիսիւ յեկեղեցին՝ պահակեցաւ՝ ի պըշն
նիկեփորոյ պատրիարգէ , ձեռագիր տուեալ՝ ոչինչ ընդեմ
գործել պաշտաման եկեղեցւոյ և վճռոյն սքի Հարց ։ Եւ ակդ-
բան անդ հայութիւն կացեալ՝ պահեաց զնաստուն իւր , և ըս
իւրում հանձարեղ մտաց և կորովի արուեստ օրըստօրէ զօ-
րացեալ՝ եղև երևելի յոյժ . յաղթեաց բուլղարաց , և վա-
նեաց զայլազգիս , և ընդարձակեալ տարածեաց զիշխանութիւն
կայսերութենէ ։ Այլ յետոյ բռնացաւ՝ ի վրդ քրիստոնէից , և
առ ոտն եհար զերդումն իւր . քանզի գրգռեալ՝ ի տուտանուն
երիցանց , մինդ՝ ի Թէոդոտոսէ ուժեմնէ՝ որ ամ ոգւով զի-
նեալ ընդեմ յարգութենէ պատկերաց , ըս խորհրդոյ նոյ ակաա
վարիլ . տարագրեաց զբազում յուղղափառաց , և զբազումն նա-
հատակեաց . և ընկեցեալ զաբն նիկեփորոս՝ ի պատրիարգու-
թենէ՝ եդ՝ ի տեղի նր զԹէոդոտոս . և խուզեալ զհերս Թա-
գուհւոյն պրոկոպիայ՝ աքսորեաց զնա հանդերձ որդւովքն .
և այնչափ չարացաւ , մինչև կոչել յոտանց դերաքո , և յո-
տանց ևս քամհլէոն , յր է գեհենատուիծ . զի այլ ինչ խոստա-
ցաւ , և այլ ինչ արար ։

Ասեր սա զչորս որդիս , ամբատ , բարսեղ , գրիգոր , և Թէո-
դոս . զորս ծնաւ նմա Թէոդոսիա կին Թէոդորա Թագուհի ,
որ էր դուստր արշաւրայ գանձապետի . և կամելով յաջող-
դեցուցանել յետ իւր զամբատ , խորհեցաւ գահակից առ-
նել զնա . բայց կասկածեր՝ ի զօրացն յունաց ։ Այլ յորժամ

դեպ եղև առաքել զնա ուրեք ՚ի պատերազմ, նոր խումբ զօրաց կազմեալ յայլևայլ քաղաքաց՝ հանդէս արար ՚ի Թագաւորական քաղաքի. և եղեալ պատակ ՚ի գլուխ սմբատայ որդւոյ իւրոյ՝ անուանեալոյ զնա աթոռակից և կայսերակից իւր. և փոխեալ զանունն սմբատ՝ որ ոչն էր ընտել առ հռոմայս, կոչեաց կոստանդին. և առատ պարգևս քաշխեալ ամբոխին՝ ետ աղաղակել. կեցցէ լևոն կայսր. կեցցէ կոստանդին կայսր ։

{819} ԺԷ. Եւայց մի ոմն ՚ի զօրավարացն յունաց միքայէլ անուն Թլմէսաց՝ միաբանեալ ընդ բազումս ՚ի մեծամեծաց՝ խորհեցաւ ապստամբել ՚ի լևոնէ ։ Իրազեկ լեալ այսմ լևոնի կայսր զնա, և կապեալ ՚ի շղթայս՝ էարկ ՚ի բանտ. և ՚ի ձրագալուցի ծննդեան կամեցաւ բառնալ զնա ՚ի կենաց՝ կենդանոյն այրելով առաջի իւր. այլ կին նր Թէոդոսիա լեալ գուհին սրգել զնա յայնմ խորհրդոյ՝ մի հեղուլ զարիւն յայնպիսի մեծահանդէս առուր տօնի ։

Եւակ միքայէլ՝ որ բանտարկեալն էր, հոչեալ առ ինքն պատմին՝ որք կամակից էին ընդ նմ՝ ՚ի խորհուրդ ապստամբութեանն, ասէ ցնա. Թէ ոչ հանեք զիս ՚ի բանտէս յայսմ գիշերի, մատնեմ զամենեսեան զձեզ կայսեր, և դուք ևս ընդ իս ընդունիք զպատուհաս չարեաց. յորմէ զահի հարեալ նոցա՝ միաբանեցան ՚ի մի խորհուրդ, և արկեալ զիւրեանց զքահանայական զգեստս՝ զինեալ ՚ի ներքուստ սրով, մտին գիշերային յեկեղեցի աղքատանն պալատանն. ուր և այլ քահանայք ժողովեալ էին ։ Եւ ՚ի գալ անդ լևոնի կայսեր, և ՚ի սկսանիլ գիշերային ժամուն՝ յարձակեցան նմ նովին քահանայական զգեստուք սուր ՚ի ձեռին ՚ի վր նր. և լևոն յանպատրաստից գտեալ, և ընդ անկածելի իրսն շուարեալ՝ դիմեաց ՚ի ներքսագոլմն խորանին, և էառ զնաչ մի. և նովին իբրև զինու զդեմ կալաւ նմ յերկար. բայց քիչ նք բազումք էին, հարին զնա՝ ոմն ՚ի գլուխ, և ոմն ՚ի Թիկունս, ոմն ՚ի մէջս, և ոմն ՚ի բարձս. և անդէն անդամ անդամ յօշեցին զնա ։ Եւ ընթացեալ ք առ ժամայն ՚ի բանտն՝ հանին զմիքայէլ. և ծիրանիս զգեցուցեալ նմա՝ նստուցին վաղվաղակի յաթոռ կայսերուն, մինչդեռ շրղթայքն յոտս նր կային. քանզի փականք նոցին առ լևոնի պահեալ էին, և առ ժամն չկարացին գտանել. մինչև հարկ եղև յետոյ ուռամբ խորտակել զայնս ։ Եւակ զդիշատեալ անդամս լևոնի յանարգ պատանս ամփոփեալ՝ առաքեցին ՚ի պռոտա կղզի. և զչորեսին որդիս նր ներքինացուցեալ՝ աքսորեցին յայն կղզի՝ կրօնաւորիլ ՚ի մենաստանի. նոյնպէս և զԹադուհին եդին ՚ի վանս կուսանաց ։

Իրէն սիմէոն մագիստրոս. ՚ի հմարն. ԺԲ. և կեդրենոս

պատմիչք յառնոյց, [1]Թե երեց որդի լևոնի սմբատ՝ զառաջինն ունէր ձայն ահեղաբարբառ և քաղցրանուագ, և կորոյս զայն յետ ներքինացուցանելոյն. և տեսեալ՝ի վանս անդ ըզպատկերն գրիգորի ածաբանին, Թէպետև ոչ [2]ունէր զպաշտօն պատկերոյ՝ բարեխօս կալաւ զնա առ ած՝ վերստին առնել զձայնն. և յաւուր ոճոն ձրագալուցին ձայն եղև առ նա՝ի պատկերէ անտի. արի կարդա. և նոյնժամայն բացաւ ձայն նմա, և սկսաւ նուագել քաղցր առաւել քան զառաջինն. և այսու պատճառաւ պատուէր այնուհետև զնմ պատկերս։

[1]Եւ կայսրն միքայէլ առաւել գտաւ քան զլևոն՝ի վինիլ ընդդէմ պատկերաց, և առաւել ևս ընդդէմ գրուածոց սրբոց հարց. զորս ջանայր ջնջել՝ի միջոյ. և եղև իւրև երկիւղ կոտրոմոս՝ի հալածել զաղզափառս և՝ի գործել զնմ չարիս։ Այս եհան բռնութիւն՝ի կուսաստանէ զեփրոսինէ ըզդուստր մարիամու գլխոյին հայկազնոյ, զորմէ յիշեցաք՝ի գլխ. ԽԲ. և էառ իւր՝ի կնութիւն զկնի Թեկղեայ առաջին կնոջն. այլ ըմեռանիլ միքայելի՝ միւսանգամ խոյս ետ եփրոսինէ՝ի վանս. և անդ անցոյց զվիճակաւճածս կենաց իւրոց խիստ ճգնութեամբ։

Գ Լ Ո Ւ Խ Ս Կ Ի Ց։

Հաղափս արշաւանաց Ընդոփլիչեայ հայոցն. և գրծոց մաղեղայ գրօնեցւոյ։

[1]Սոզ.Բ.6. Ձեռն։

829 Մհկ

Պատաւորեալ զկնի միքայելի կայսերն՝ որ Թըլուճան էր՝ որդի նորին Թէոփիլոս, յարոյց պատերազմ ընդէմ հայոց. և նախ դիմեալ յԱրկիւրն բասենոյ՝ եհար և վանեաց անտի զզօրս այլազգեաց. ընդ որս կոտրուած և զբազումս՝ի հայոց՝ որք մտեալ էին ընդ նոսա ի գերութիւն նոյն. և հասեալ՝ի մէջ գիւղաքաղաքին գումաձորոյ՝ խողխողեաց զյոլովս՝ի բնակչաց տեղւոյն. և ապա սփռեաց ըզզօրս իւր այսր և անդր յասպատակութիւն. յորոց գունդ մի հասեալ՝ի վանանդ՝ մարտ եդին ընդ մեծի աւանին, որ կոչիւր կաճկաւար. այլ սահակ իշխան երկրին ելեալ ընդդէմ նոցա՝ արար՝ի նմա հարուած սաստիկ։

830 Մհկ

Իսկ կայսրն իւրով բանակաւն էանց յԱծն խաղտեաց. և խաղացոյց զկնայս եղեալս անդ յԱծ իւր հանդերձ ընտանեօք նոյնպէս. ասյնպէս և յայլ տեղիս՝ էր զոր կոտորէր, և էր զոր գերի վարէր, և խաղացուցանէր յերկիրն յառնոյց. խոկ զխուզան գաւառ յԱծին ջարդոյզ հայոց անասպատ արար՝ի մարդոյ և

յա-

յանառանոց, ըստ ասելոյ առաքեալ։ Եւ խաղայեաւ միւնեւ
յերկիրն գերազանց՝ էառ զքանի մի բերդս, յորս բնակեալ
էին այլազգիք, այն է՝ Ծմուռ, ասպին, մեծկերտ, և ալ
բերդ։ Եկն ապա ի տեղի գաւառն։ և եղ ընդ առաջ նմա խա-
ղաղութիւն և մեծամեծ պատարագօք նախատար երկրին ա-
շոտ շապուհեան, այն է որդի շապհոյ երջոյ քաջին աշոտոյ
մնակերի, և հայր շապհոյ բագրատունեաց պատմագրի։ և
կայսրն հաւանեալ ընդ աշոտ, և գովեալ զնա՝ կարգեաց ա-
պուհիւպատ և անթիպատրիկ, այ հիւպատոս և պատրիկ
մեծ։ և յանէն ապար ի ձեռս նոր իշխանութեն մերձակայ
գաւառացն։

Ա։ դառնալ անտի կայսեր՝ էանց ընդ գաւառն տարօնոյ, որում իշխեր յայնժամ մուշեղ՝ ցրօնեցի ասացեալ, որ և էր հպատակ յունաց։ և կայսրն քաջ խնամ և սէր եցոյց հայոց անդ եղելոց։ և հաճեալ յոյժ ընդ քաջն մուշեղ՝ մնոնդ թէ կա-
պեալ սիրով նմա, տուեալ տարաւ զնա ընդ իւր ի կոստանդի-
նուպօլիս։ քանի էր մուշեղ այր ընտրեալ դիմօք և գեղեցիկ
կերպարանօք, առոյգանման և ծաղկահասակ, կոտուածիտ և
ընտատ, հզօր ի գործս՝ և քաջաբազուկ ի պատերազմունս։
որպէս վկայեն պատմիչք յունաց։

831 Այլ այս մուշեղ ի բազում իրս քաջ հաւատարմութեն ցու-
մ՚ց ցեալ թէոփիլեայ կայսեր՝ առաւել և սիրելի եղև նմա։ և
զի ոչ ունէր թէոփիլոս զորդի, փեսայացոյց զնա ինքեան
յաղջ ամի կայսերութեն իւրոյ՝ տալով նմ՚ի կնութի զդուստր
իւր զմարիամ։ և անուն եդ մուշեղայ՝ ասէքս։ և կացոյց զնա
պատրիկ և իշխան մեծ և կեսար։ Այլ յետ սակաւուց ի
829 քառեմէ բանտարկու արարոց ի կասկածանս անկեալ ի վէր
մ՚ը նմ, իբր ընդ յափշտակել կամիցի նա զկայսերութեն իւր,
պատճառանաւք իմն մագիստրոս և դուքս զօրաց կարգեաց
զնա՝ և ազդակեաց ի սիկիլիա, ըստ աւանդելոյ ամենայն և
պէտքեանց և ապրանց, կամ՚ի լանգոբարտիա՝ ընդ կեդրենեայ և
զնաստայ։ զի հեռասցի նա յիւրմէ աւուրձիմ մի։ Այնդ ջամ
ինչ քաղաքաւ անտեսեալ մուշեղայ՝ եկաց հաւատարմութեն ընդ
կամն աներոյ իւրոյ թէոփիլեայ կայսեր։

832 Ա։ Այց այսու ամենի և ոչ անդէն զերծ գտաւ ի մա-
մ՚ա իրանաց չարանախանձ մարդկան։ քանզի ոմանք ի սիկիլիացւոց
անտի եկեալ առ կայսրն՝ չարախօս եղեն զնմանէ, իբր թէ զ-
քրիստոնէից եդեալ է ի մտի մատնել այլազգեաց, և զընդ-
դէմն խորհի ինքնակալիդ։ և թէ զսիրտս ամենայն յանկուցեալ
է յինքն։ մինչև առել զօրաց նոր և ռամկաց, թէ ազէքս մու-
շեղ առնլոց է զկայսերութի՚ի ձեռաց թէոփիլեայ։ և զայս
նշանակել կամելով խօսեին ընդ միմեանս առակաբար։ ա։ և ն։

(820) մկ՚ը հայոց

829 մկ՚ը

830 մկ՚ը

Աբգարոս։
Աղբրդ տան։
Ինդեան մա՚։
Եկբրենոս։
Ռնարոս։
թէ. 27։
և այլք։

ասելով թէ այլն ունի զօրանալ՝ի վէր նոյն · կամ ըստ յատնակա-
տին՝ ալքայն՝ի վէր ներքոյն ։

Լ.մէ տե
եւ հայոց Լ

Հայց կայսրն ոչ կամեցաւ նշանակել զիեռայ իւր զմուշեղ՝ի պատիւ երեսաց դատեր իւրոց՝ բռներ առ ժամ մի ։ Զանուշեցեալ մուշեղայ զթշնամութեն կայսեր՝ յղեաց առ նա պատգամ, և ասէ · տուր ինձ հրամանն տէր իմ առանձնանալ և հրճնաւորել · զի հանգիցես՝ի տարապարտ կատկածանաց՝ զոր ունիս՝ի վէր իմ ։ Առնէ կայսրն ոչ եաւ յանձն , զի մի այլոյ ինչ դուստր իւր , և ինքն առնէ կրեսցէ ։

833 մէջ

Ջ · Երբև մեռաւ զկնի սակաւուց դստեր նէ , և ծնաւ ինքեան որդի յաջորդ կայսերութեն , յայտնեաց՝ զոր ունէր՝ի սրտի՝ զթշնամութեն իւր ։ Զայն տեսեալ մուշեղայ՝ այնուհետեւ ամ իրօք զդուշանայր՝ի նմանէ ։ Եւ ձգի յաչալկոտք անդադար չարախօսութեն բարդէին՝ի վէր նորա , կամակած կայսերն օրքան զօր առաւելոյր · և խորհեր հնարիւք իմն ըզբռամբ ածել զմուշեղ ։ Այնմ իրի առաքեաց առ նա զթէոդորոս ոմն արքեղիկս՝ զայր երևելի , յետիարաւ երգման՝ ապահով լինել յիւրմէ , և դառնալ՝ի կոստանդինուպոլիս · մինդ զի կարօտեալ եմ ասէ տեսանել զքեզ , և զանձուկ վախճանելոյ դատեր իմոյ՝ի սիրելի փեսայդ իմ առնուլ ։ Գնաց Թէոդորոս եպիկս առ մուշեղ · և ողոք բանիւք չինեալ զմիտս նր՝ էած զնա առ կայսրն ։ Յակ կայսրն ստեալ երդման իւրում՝ նոյն ժամայն կալաւ զմուշեղ , և էտ դանել զնա իբրև ապստամբ · և ապա եդ՝ի կալանս՝ի մէջ բանտի · և զնմ ինչս նորա էառ յարքունիս ։ Ընդ որ տրտմեալ յոյժ Թէոդորոսի եպիկն՝ սպասեր առնէին՝ յանդիմանել զկայսրն ։

Է · Ապա յաւուր միում՝ի գնալ կայսեր՝ի տաճար սրբ Սոֆիայ՝ եկաց նա՝ի բեմի հայրապետական զգեստուք · և բարբառեալ առ կայսրն՝ ասաց զայն բան սաղմոսին · * լաւ ,, լեա , ուղղեա , և Թագաւորեա , ո՛ ինքնակալ կայսր · ,, բայց վա՛յ ոյր ։ Յակ կայսրն զամենի հարեալ՝ի բանից նր առաքի աւազանեայն՝ ասաց զիսոհատարած բան սաղմոսին · * վա՛յ ձգնարարութեն , հեզութեն և արդարութեն ։ Եւ ես զնա արքեղիկն · և ոչ էր իմէ ձգնարարութեն կամ արդարութեն քոյ · ոչ դու ինքն զբան քոյ Հաստատեցեր քոյին ձեռամբ , և ետուր ինձ տանել առ ալէքս մուշեղ · և զինչ ձգնարարութեն այժմ , կամ հեզութեն , և կամ արդարութեն ցուցեր նմա ։

Ընդ այս յանկնարինս գտանեացեալ կայսեր , և՛ի ցասումն բարկութեն բրդեալ՝ կատաղաբար ինքնին կորզեաց և վարժեաց՝ի բաց զարքեղիկն՝ի բեմէ անտի · և չարաչար եւ գանն Հարկանել զնա · և ապա արտասահմանեաց՝ի մեռանել ։

Ի մէջ ՚ի և հայոց 833 մեջ

Ի մէջ ՚ի և հայոց 833 մեջ

Եւ այժմ վն այսր կշռամբեալ նորա յանտոնիոսէ պատրիարգէն կոստանդինուպօլսոյ՝ դարձոյց զնա յաքսորանաց . և ՚ի խնդրոյ ազագանուցն եհան ՚ի բանտէ և զաղէքս մուշեղ զիեսայն իւր . և զնմա ինչս նոր դարձուցեալ անդրէն ՚ի նա՝ կալաւ զնա ՚ի պատուի ։ Նայց նա կամելին հրաժարեալ յաշխարհէ՝ եղև կրօնաւոր . և չինեաց մենաստան հոյակապ ՚ի տեղին՝ որ կոչիւր անթեմիա . և եկաց անդ մինչև ՚ի մահ , և անդ թաղեցաւ ։

ԳԼՈՒԽ Ծ.ԿԴ։

Գործք տալին Ռոմանոսի Ռոմիկոնէի ։

Ռոմանոսի Արիս Ելենէ Կեդրենոս ։ Ծնունդ Ռոմանոսի ։ Ամուսնանայ ընդ Եւդոկիայ ։ Արքայ ։

Ի նմին ժամանակի ՚ի դրան կայսեր և մանուէլ ումն յազգէ հայոց ըստ առածդելոյ յունաց , ՚ի մականուանէ տանէ՝ ըստ գրելոյ վարդանայ ։ Ց սա բազմօք գրուածուն պատմիչք յունաց . և ասեն , թէ հռչակաւոր էր անուն քաջութեամբ և բարեպաշտութեամբ նոր ՚ի մէջ ազգաց . և բազմ երևելի գործս ցուցեալ էր յաւուրս նախընթաց կայսերացն՝ լեռնի և միքայէլի ։ Ց սա կալուցեալ կայսրն Թէոփիլոս սպարապետ արևելեան զօրաց , և խաղաց նուաճ ՚ի վր այլազգեաց , և էառ զբազմ տեղիս . և ՚ի մեռանել նուճապէս այնչափ զօրացոյց մանուէլ զզօրս յունաց , մինչև խոպան վանել նոցա զթշնամիս , և ՚ի գերութեն վարել քան և հինգ հազար ոչխար ։

Վասն եղև դարձեալ խաղալ կայսեր Թէոփիլեայ ընդեմ այլազգեաց՝ առեալ ընդ իւր և զկորովին մանուէլ սպարապետ , և զմնան ՚ի պարսկաց՝ որք փախստեայ անկեալ էին առ նա . և ՚ի ձակատիլ նոցա յանդիման Թշնամեաց՝ յերկուս Թևս բաժանեալ կայսրն զզօրս իւր . զմին ետ ՚ի ձեռս մանուէլի , և զմիւսն էառ ինքն . իսկ զգունդն պարսից կարգեալ ընդ իւր յայլ Թև ։ Այլ ՚ի ժամ մարտին իբրև յառաջ անցեալ գիմեցին առքինին առիւծուկ ՚ի վր Թշնամեաց , վտանգեցաւ կայսրն . և յետս ընկրկեալ՝ ապաւինեցաւ ՚ի գունդն պարսից , որք ընդ իւր էին . և Թշնամիք եկեալ ՚ի մէջ փակեցին զկայսրն . յայնժամ և պարսիկքն խորհեցան մատնել զնա ՚ի ձեռս Թշնամեաց ։

Ց այն իբրև ետես մանուէլ ՚ի հեռուստ , արագաւ հանգոյն արծուոյ , և յարձակեալ ընդ մէջ ձեղքեաց զգունդն Թշնամեաց և զպարսից . և կալեալ զսանձն երիվարի կայսերն՝ արտաքս հորդեաց զնա . ընդ որ ապշեալ Թշնամեացն՝ յիմարեցան

և գրեթէ Թմրեցան յահէ նէր ։ Իսկ կայսրն երկուցեալ , Թէ
գուցէ ի վերայ յարուցեալ Թշնամեացն՝ ոձիրս ինչ գործեցցեն , և անդէն զնա սպանցեն , դանդաղէր գալ զհետ մտնուելի և ելանել ի միջոյ Թշնամեացդ . և յուսայանէր յանձն առնուլ կենդանւոյն մատնիլ ի ձեռս նոյ՝ քան սրախողխող լինել ի նոցանէ ։ Իսկ քաջն մանուել երկիցս և երիցս կոչեաւ զկայսրն ի միջոյ նոյ , իբրև ետես՝ Թէ տակաւին վաստատեալ յամս շարժի , ձգեալ զսուսերն իւր՝ սպառնացաւ նմա . հերձուա՛ս ասէ զքեզ ընդ մէջ . անսա՛ ինձ , և եկ ընդ իս . և Թո՛ղ ինձ սպրեցուցանել զքեզ ։ Իսկ կայսրն երկուցեալ՝ ի նմէ՝ զինքն նորա , և զերծաւ ի խառանէ անտի Թշնամեացն ։ Իսկ իբրև էլ յանդորր , յայնժամ ի միտ էառ զբաղրեւուհին մանուելի , որ եդ զանձն ի վտանգ առ ի փրկելոյ զնա . նմին իրի և երախտապարտ նմին զանձն համարեր , և աղաւաղէ իւր ձանձրեր զնա . և քէմ պատսճառ և ձոխութիւ յառաւել սուգուԹեն հասուցանել կամէր զնա ։

{838 մէկ}

ԻԵ . Այլ գտան արք ոմանք յաչաղկոտք , որք նախանձեալ ընդ փառս մանուելի , չարախօս եղեն զնմէ . այլք այնպէս ասեն՝ ի նա զարձան . և նա զուարձացեալ է՝ ի նոյն , և խորհի զկայսերուԹենէ քոյ յափշտակել ի քէն ։ Իսկ այնչափ յաձախեցին չարախօսուԹիք յականջս Թէոփիլեայ կայսեր ընդմանուելէ , մինչև սկսաւ կայսրն պղտորիլ ի միտս իւր , և ընդ ակամբ հայիլ ի նա . և սպա խորհեցաւ զառաձանել նմա զնա ։ Իրազեկ լեալ այսմ մանուելի՝ եկ գաղտ ի կոստանդնուպոլսոյ , և անկաւ փախստեայ մինչև յերկիր սաղրոց , այն է կելևսիւրիա կիմ կիլեասւր , և սպա ի կամախ . և առաքեաց պատգամաւոր առ հազարապետս , և ասէ . յեԹեաց կայսեր փախուցեալ եմ ես այսր . դուք Թէ ոչ սակաւիկ զնա Թողուլ զհաւատս իմ , կուսակիս և նիզակակիցս ձեզ եղէք ։ ԻԹէ հաձիք ընդ այս պայման , տուք ինձ յետկար երդմանն առ ի անկասկած մնալոյ ինձ ի ձէնջ , և ես անցից առ ձեզ ։ Ա այս լուեալ ամիրապետին և այլոց իշխանաց հազարապետաց՝ ուրախ եղեն յոյժ . ձգեն գխոհին զարուԹիւն քաջուԹեն նորա . մին վազվազակի առաքեցին առ նա յետկար հաւատիկն՝ չառնել անհաձոյ ինչ նմա , և ընկալան զնա ոչ իբրև զգերեալ , այլ իբրև զկայսր հռոմայեցւոց . ոչ սակս յոյն պատմիչք . և մեծարեալ պատուհեցին առաքուբ . և ընդ գրելոյ վարդանայ՝ կարգեցին նմա ռոձիկ առուրն բէմ յոյժ ։ Ա սպա հրամանն էառ մանուել յամիրապետէն գնալ զօրօք հազարապետաց , կամ միայն գերեօք յունաց՝ ընդ կեդրենեայ , ի վէմ Թշնամեաց ի պատրզմ . ուր քաջուԹիւ յաղԹօղ գտեալ՝ առաւել ևս պատուհեցաւ ի նմանէ . և այնչափ եղև նմա սիրելի մինչև չանկանիլ

քան

քան մի՛ ի բանից նոր առաջի ամիրապետին՝ ի գետին։

Ձ. Այլ իբրև լաւ եղեւ գառաջինն Թէոփիլեայ կայսեր՝ Թէ մանուէլ վտարանդեալ է յիւրմէ՝ և անկեալ է առ հագարացիս, յանտանելի տրամուԹի ըմբռնեալ՝ բեկաւ սիրտ նո՛ր՝ վէ՛ր կորուսանելոց զայնպիսի այր. վարաներ, և ելս իրացն ոչ գտաներ։ Այսպա կոչեալ առ ինքն զյովհաննէս սիւնկեղոս զհաւատարիմն իւր՝ խորհուրդ հնարից հարցաներ՛ ի նմէ։ Այն նմա ասէ ցկայսրն. Թէ կամք իցեն ինքնակալիդ յամ՛ սըրտէ դարձուցանել առ քեզ զմանուէլ, տա՛ր՛ ի ձեռս իմ նամակ երդման վասն չվնասելոց ինչ նմա՛ ի գործի նո՛ր. և առաքեա՛ ինձ ինչ բազում առ ամիրապետն հագարացւոց. և ես երԹեալ՝ իբրև Թէ յայցելուԹի՛ գնացեալ իցեմ գերեզոց և բանտարկելոց, դիւրաւ զիրդ՛ ի գլուխս տարայց։ Այն՛ ի հաւանիլ կայսեր՝ երԹեալ յովհաննու անդր քաղուամ հանգերձանօք և ընչիւք՝ յայցել կապելոցն. և ընտելացեալ՝ մուտ եգիտ խօսակից լինել առանձինն ընդ մանուէլի. և ծանոյց նմ՛ զպատճառ գալստեան իւրոյ. և եցոյց գյեւակար նամակի կայսերն՝ չառնել ինչ նմ՛ չար, Թէ՛ գարձոյն անդրէն. այլ՝ կրկին և սա ասէ ունի մեծացուցանել զքեզ։ Յանձն առեալ մանուէլի զպայման կայսերն՝ արձակեաց զյովհաննէս, խոստացեալ նմ՛ գառնալ՛ ի կոստանդնուպոլիս։

{840 մձ՛} Ձ. Այս հնարս գարձի խորհեալ մանուէլի՝ բանս էարկ առաջի մեծամեծացն հագարացւոց. Թէ՛ ասէ՝ այր ամիրապետս յիմ ձեռս զբազմուի զօրաց, և առաքեր՛ ի վէր յունաց, զբովանդակ իշխանուԹի նոցա՛ ընդ ձեօք նուճանել՛, ի վրէժխնդրուԹի չարեացն՝ զոր անցուցին ընդ իս ազգն հռոմոց։ Իբրև ազդ եղև այս բան յականջս ամիրապետին, անդէն վաղվաղակի գումարեաց՛ ի ձեռս նորա զբազմուի զօրաց իւրոց, և առաքեաց զնա հանդերձ օրդւովն՛ ի վէր յունաց։ Այն իբրև հասին նո՛ք՛ ի սահմանս կայսեր, և բանակեցան ուրեք՛ ի գաշտի, առեալ մանուէլի զօրդի ամիրապետին՝ ել ընդ նմ՛ ի զբօսանս օրոց. և մեկնեալ՛ ի հեռագոյն տեղւոյ առանձինն՝ կալաւ զձեռանէ նորա, և ետ նմա ողջոյն հրաժարականս, և ասէ. ես գնամ՝ ուստի եկեալն էի. և դու դարձի՛ր քոյովքդ՛ ի տունս քո։ Այն նո՛ր տեսեալ զհրաժեշտ մանուէլի՝ ընդ որում կապեալ էր սիրով յարտաստուս հարաւ՛ ի դառնալն սրտին՝ վէ՛ր մեկնելոյ յամենայն քաջ առնէ. և դիտացեալ Թէ անհնար է նմա նահանջիլ՛ ի խորհրդոց իւրոց, դարձաւ տրտմութե՛ առ իւրան։ Այսակ մանուէլ երագ դիմեալ սրաւարս երիվարաւ՛ ի ներքինն կողմն յունաց՝ եկն եհաս՛ ի կոստանդնուպոլիս. զոր իբրև ետես կայսրն Թէոփիլոս, անպատմելի խնդութե՛ լցաւ. և իբրև Թէ գտեալ իցէ զկորուսեալ անգին ակն պատուական՝

առա-

առաւել քան զառաջինն ձոխացոյց զնա , և ամբարձ յիշխանուն մեծի աւագուն . և եղև և նա նման ինքնահայր՝ ընդունելով զորդիս նր՝ ի սէր աւազանին : Եւ ապա առեալ զնա ընդ իւր՝ գնաց ի պատերազմ ընդդէմ այլազգեաց . յորս եղոյց մանուկն քաջ քաջութիւն . և զարմացոյց զամենայն զօրս յունաց . և տասանեցոյց զթշնամիսն համօրէն :

842 մայիս

Ե . Յետ ամաց լինչ մեռաւ Թէոփիլոս կայսր , և նստաւ որդի նր միքայէլ երդ ի տղայութեան հասակի՝ հանդերձ մօրը իւրով Թէոդորա . և մանուկ կացուցաւ հոգաբարձու ի վէր նց , և գործակալ ի վէր արքունեաց : Յակաւին շաղախեալ կայր յայն ժամս յունաստան ի մոլորութի պատկերամարտուե . և Թէպէտ բազումք ի սէց սրանց զդէմ կալան այսմ , բայց քանզի նաև յարքունիս ամմատացեալ էր այն մոլորութի , և պատրիարգն իսկ յաննէս կամ յովհաննէս յայն միտս էր , ոչ լինէր հնար դեզ և դարման գտանելոյ : Եւ եղև ընդ այն աւուրս հիւանդանալ քաջին մանուկն յաշխատութենէ պատերազմաց հիւանդութենի ծանր . մինչև անյոյս լինել բժշկաց ի նմանէ . և այն ինչ մերձ էր յաւանգումն հոգւոյ , եկին առ նա ի տեսութենի ոմանք ի սուրբ միայնակեցաց , և ասեն . քաջալերեաց մեծդ մանուկ , տայ քեզ ՚ի անդրկն առողջուի : Եւ նա ասէ . ահա մերձեալ եմ ի դրունս մահու , և զյետին շունչ ունիմ հնչել . և զիարդ մարթ իցէ ինձ առողջանալ , բայց եթէ սքանչելեօք ի մեռելոց ի կեանս դարձայց : Եւ նոքա ասեն . ՚ամ ինչ հնարաւոր է ՚այ . և մերձ է փրկուն նր առ երկիւղածս իւր : Յայնժամ ասէ մանուկն . եթէ արդարև կամք իցեն ՚այ հնարհել ինձ զկեանս իմ , մեծացուցից զփառս անուան նր զ՚ամ աւուրս կենաց իմոց . և ոգւով չափ գոն գործեցից բառնալ ի միջոյ զմոլորուի պատկերամարտուե , որ տարածեալ է յիշխանուես կայսեր : Եւ սեն ցնա միայնակեացքն . սիրեդ կաց յայդ խորհուրդ բարի . և կեցցես . քզի եցոյց մեզ ՚որ զարթուցանել զմահիձս քո ի հիւանդութենէ քումմէ , և ՚ի ձեռն քո նորոգել զյարգութենի սքց պատկերաց : Ասս ասացեալ՝ մեկնեցան անտի :

Եւ մանուկն իսկ ՚ի նմին աւուր զօրացեալ տերամբ՝ եել ՚ի մահճաց . և եւտես զինքն ազատ յամէնայն ախտից և ՚ի ցաւոց . և գիտացեալ զաքանչելիսն ՚այ՝ փառս ետ նմա . և նոյն ժամայն փութացեալ ձեռն արկանել ՚ի կատարումն խոստման իւրոյ՝ հեծաւ յերիվար , և գնաց ՚ի պալատն արքունի . և քառասուն քանիւք յորդորեաց զԹագուհին հանել հրամանս յամս Թէոդորեաց զԹագուհին՝ պատուել զսքբ պատկերս : Եւ նա իբրև դժուարաւ յանձն առնոյր՝ զանգիտեալ ՚ի բազմուէ ընդդիմակայից , ասէ ցնա մանուկն . եթէ ոչ կատարես՝ զոր ասացի,

գիտեաւ , ղի ընկենում յաթոռոյ զորդի քո և զքեզ , և գնեմ զայլ ոք , որ բարեհաւան լինի ի յարգուն պատկերաց : Ա. պա յանձն էառ Թագուհին . և ժողով արարեալ հաստատեցին և ըստ համօրէնս հրատարակեցին զյարգուն սրբոց պատկերաց . և զանհաւան պատրիարգն զյանձնէս ընկեցեալ՝ եդին զմեԹոդիոս ի տեղի նր : Ապա երեւելին մանուէլ յետ բազմ արիւական հանդիսից , որովք պանծալի գտաւ ի մէջ ազգին յուՆաց , քաջ անուն ժառանգեալ և ի բարի վարս փայլեալ վճարեցաւ ի կենցաղոյս ի խոր ծերուե . զորոյ զմարմինն տաղեալ հանգուցին ի վանս՝ զոր նր էր շինեալ , և կոչիւր յանուն նորին մանուիլկերտ :

Գ Լ Ո Ւ Խ . Կ Ա .

Ցաղագս իշխանութիւնն յովհաննու հինգերորդի . և իշխանութեանն բուլղարաստոյ բարերարութեան . և գործոց բարեաց նորա :

833 Ա. Յհնդեւ տակաւին կենդանի էր իշխանն մանուէլ , ի հինգերորդ ամի թագաւորելոյ կայսերն՝ լցեալ դաւթի եկեղ կաթուղիկոսն հայոց զաւուրս կենդանոյ իւրոյ՝ վախճանեցաւ , կալեալ զաթոռ հայրապետութե ամս լիե : Ա. յաջորդեաց ի տեղի նր որ յովհաննէս հինգերորդ ի գաւառէ կոտայից կամ խաւտայոց , ի գեղջ ովայից կամ վկայից , այր բարի և ձգնաղբեայ , խոնարհ և անարգամտածար : Ի յերկրորդ ամի կաթուղիկոսութե սր կոչեցաւ յամիրապետէ ի գուռն՝ հոլ ասիկան հայոց . և ի խնդրոյ ամբաստայ ասարապետին և այլոց ոմանց՝ կարգեցաւ պատրիկ ի վր ազգին բագարատ կամ բագրատ բագրատունի , այր հզօր և երևելի , ի մերձաւոր ազգականութէ նորին ամբաստայ ասարապետի . որ և նստեր ի կողմանս սիմ լերին , և իշխեր անդ : Ա. եր ի նմին ժամանակի սարկաւագապետ ոմն ասորի՝ նահապետն , այր բանիբուն և փիլիսոփայ . խնդրեաց ի ամենէ բազարատ՝ յօրինել զմեկնութի յովհաննու աւետարանին . և նորա առանձնացեալ ամս երիս ի կողմանս միջագետաց՝ յօրինեաց զայն ասորերէն՝ քաղեալ ի մեկնութէ յովհաննու ոսկեբերանի . և ապա թարգմանեաց ինքն ի լեզու հայագարացւոց . և ընծայեաց բազարատայ . որովհետև քաջ գիտեր նա զայն լեզու : Ա. զայս գիրք յետոյ եաւ թարգմանել ի հայս ամբաստ բազրատունի :

839 Թ. Յաւուրս իշխանութե սորին բազարատայ՝ իշխան ոմն Ա ապրան : Ա ղոպոմ :

յազգէն պարսից բաբան անուն , որ քնահեաձն էր ՚ի բազ-
տատ , այր սէգ և խրոխտ , զօրաւոր և պատերազմասէր ,
կամեալով զՀորուն Հագարացւոց ՚ի պարսիկս փոխել՝ խոյս ետ
յերեսաց ամիրապետին. և ժողովեալ առ ինքն զբազմուն յոյժ
՚ի պարսից և յայլոց օտար ազգաց՝ կանգնեցաւ զդրօշակ ապս-
տամբութե . և առ ՚ի պատրելոյ զպարզամիտս՝ համբաւեր թէ
ածուստ պարգևեալ իցէ ինքեան անմահութի՛ և զօրուն տիրե-
լոյ համօրէն տիեզերաց . և այսպիսի բանիւք ձգեաց յինքն
զյոգունս , և ստուարացոյց զդունդս զօրաց իւրոց . և յարձա-
կեալ յայլևայլ տեղիս իշխանութե ամիրապետին՝ սպասատակէր
և աւար Հարկանէր . գերեր զբազմութի արանց և կանանց , և
աւերէր զքաղաքս ։

Արաքեաց ամիրապետն մնուցն ընդդէմ նմա զօր բազում իբր
Հարիւր Հազարաց . այլ բաբան յարձակեալ ՚ի վրի՛ կոտորեաց
զերեսուն Հազարն ՚ի նմանէ , և զայլսն փախստական արարեալ՝
յիրևցան կայցոյց լերանց և անտառաց ։ Խաղաց ապա ինքն ՚ի
կողմանս միջագետաց . ուր էր յայնժամ քանակ ամիրապե-
տին ՚ի կռուիլ ընդ յոյնս . և զի ՚ի բանակի անդ էր տակաւին
յայն աւուրսն քաջն մանուէլ մամիկոնեան , զորմէ խօսեցաք
՚ի նախընթաց գլուխդ , եւ Հրամանաւ ամիրապետին ընդդէմ
բաբանայ , և Հալածական տարաւ զնա ընդ կրունկն ։ Ոչ
բաբան չուեալ գնաց ՚ի կողմանս տարոնոյ . և ապա էանց յՀն
սիւնեաց , և եկն մինչև ՚ի գեղարքունիս . և անդ միաւանգամ
յօրիներ կազմեր զզօրս իւր . և խորհեր նախ նուճաձել զնմա
Հայս ընդ իւրև , և Հանել զնա ՚ի ներուժէ Հագարացւոց ։

Ոչնչացոյ աւուրս մեռաւ մանուէլ ամիրապետ , և թագրեաց փո- 840
խանակ նր եղբայր նորին մաքսամ աբուսահակ կամ ապու- մՆԹ
Ջաֆար . առ որ հրեշտակս առաքեալ ամբաստայ սպարապե-
տին Հայոց՝ ծանոյց զկրկին զօրանալ բաբանայ ։ Եւ ամիրա-
պետն արձակեաց ՚ի վրի՛ բռնաւորին ՚ի Հայս զօրուս ծանուս ըզ-
մեծ զօրավար իւր , որ կոչիւր ապիշին կամ աւշին . յայնժամ և
ամբաստ սպարապետ կազմեալ ՚ի Հայոց գունդ մի այրուձիոյ՝
նիզակակից եղև Հագարացւոց ընդդէմ բաբանայ ։ Եւ եղև
պատերազմ սաստիկ ՚ի կողմանս այրարատեան . յորում խորտա-
կեցան զօրք բռնաւորին . և նա ինքն բաբան իւրովքն Թիկ-
նապահօք դարձաւ ՚ի փախուստ . զորոյ զՀետ սկսեալ քանի
մի քաջ արամբք ՚ի Հայոց՝ կորուին պատանին սահլ որդի սմբա-
տայ սպարապետին՝ եհաս ՚ի վրի՛ , և ձերբակալ արար կեն-
դանւոյն զբռնաւորն . և ածեալ կացոյց առաջի ապիշինայ
զօրավարին Հագարացւոց ։

Ընդ այս մեծապէս զուարձացեալ ապիշինն՝ բազում երևելի
պարգևօք մեծարեաց զսահլ . և ետ նմա յոլով քանքարս ոսկւոյ

և ար-

և արծաթով , և բազմ անկածս յաւարէ թշնամեաց : Ուստի զբա-
զանայ եւս կտրել զձեռս և զոտս , և հանել ի փայտ . և ապա
դարձեալ ինքն խաղաղութիւն ի տեղի իւր : Այլ գնացեալ պատ-
մեաց ամիրապետին զհաւատարմութեան ամբաստայ և սահլայ . և
մինչդեռ խորհէր ամիրապետն յիշխանութեան մեծ կարգել զսահլ
մեռաւ նա ի զօրաթափաղիկ տիս պատանեկութեան . և եթող
զուգ մեծ հօր իւրում ամբաստայ , և եղբարց իւրոց աշտոյ և
աբատայ : Այլ սահլին զօրաւոր թէպէտ և գովութիւն խոտեցաւ
պատանէն ամբաստայ առաջի ամիրապետին , բայց բազմիք էա-
րախաօս եղև զբազաւորատայ բազբատունեաց զմեծ պատրիկն
հայոց . իբր թէ չիցէ լեալ նիզակակից զօրուն հազարայոց .
և ամիրապետն ոխացեալ էր ընդ նմա , և խորհէր հասուցանել
զնա ի մեծ անարգութիւն :

Ե . Նոյն ձմեռն իբր ի վերջորդ ամի իշխանութեան բա- Յովհ. կաթ.
գարատայ , և յութերորդ ամի կաթուղիկոսութեան յովհաննու , և ալ.
չարաբանք ոմանք ի տանէ կիճիկաարանին ապիրատ բանս
բամբասանացս յօրելով ի վերայ հայրապետին՝ խորհեցան ընդ-
կենուլ զնա ի կաթուղիկոսութենէ : Այլ առ կատարումն կամաց
իւրեանց ելեալ գնացին առ բագարատ . և այնչափ ինչ խօսե-
ցան նմա զյովհաննէ , մինչև հաւատալ նմա բանից նոցա , և
ինքնին ևս վրէժխնդիր լինել նմա , և գրել հրովարտակ առ
աւմն , զի ի բաց կացցեն ի նմանէ , հաստատեալ ի մտի
զայլ կաթուղիկոս դնել ի տեղի նորա : Ո՛այս իմացեալ յով-
հաննու , և գիտացեալ թէ բագարատ ոչ այնչափ ըստ իրա-
ւանց՝ որչափ ըստ սխրծանաց իշխանութեանն իւրոյ կամի ընդ-
կենուլ զնա յաթոռոյ , բանադրեաց զնա հրապարակաւ . և
ինքն յարուցեալ գնաց ի վանս այրից յերկիրն գեղամայ . և
անդ եկաց թաքուցեալ ամիս քանի մի :

Իբրև ազդ եղև այս ամբաստայ բագրատունեաց սպարապետի ,
և գլխիգորի տուփանայ սիւնեաց տէն որդւոյ սահակայ , և այլոց
նախարարաց , ժողովեցան ի միասին յերնջակ . և կոչեցեալ
զեպիսկոպոսունս հայոց՝ ի քննութիւն մատուցին զբանս բամ-
բասողացն , մանաւանդ երից սրանց՝ որք երևելիքն էին . և
տեսեալ թէ տուտ են այն ամ բանք , կոչեցին յետս զյովհան-
նէս , և վերստին հաստատեցին զնա յաթոռ կաթուղիկոսու-
թեան : Այլ քզի յայս ժողով ոչ կոչեցին զբագարատ մեծ իշխանն ,
զգարեալ նըր ընդ այս , և մերժեալ զժողով նոյ, ձեռն էարկ կա-
տարել զկամս իւր . և խնդրեաց զայլ ոք կացուցանել կաթու-
ղիկոս . և էարկ խուովութիւն մեծ ի հայս : Այլ մինչդեռ նա
յայսպիսի չխութիւնս էր, պատիժք պատուհասի հասին ի վրայ
երից բամբասողացն . զի մին ի նոցանէ ի քարձրաւանդակ
քարանձաւաց ի վայր անկաւ , և ի քարաժայռից դիպելոց

նման ՚ի հոսիքն՝ պատառ պատառ եղև, և ոսկերք նորա ՚ի մի-
մեանց բաժանեալ ցրուէցան ։ Իսկ ՚ի բարձր տանեալ ՚ի
վայր գլորեալ՝ ջախջախեցաւ և մեռաւ ։ Եւ երիցն ՚ի գետ
անկեալ, ՚ի յորձանան տեզաւ և կորեաւ ։

Յովհ.ֆաս. Ի.սող.Բ.2. Ա.թգ.ան Ա.Մակ.Ե.2. Ա.Ես.ա.

847 Եւ նոյն ինքն բագարատ յետ քանի ի ամաց անկաւ ՚ի վտանգ
մեծ · ՚քզի յանցաւոր գտեալ Յիրս արքունի՝ ամբաստանեալ եղև
առաջի ամիրապետին · և քանզի արդէն սխացեալ էր ընդ նա
ամիրապետն, առաքեաց զոստիկան ոմն ապուսահէթ կալ ապու-
սահէթ անուն նոճաձել զբագարատ ։ Նմին ապուսահէթայ զօ- 848
րօք ՚ի կոզմանս տաթևոյ, և գտեալ անդ զիշխանն բագա-
րատ, կամեցաւ հնարիւք որսալ զնա · նմին իրի պատրանօք
կոչեաց զնա առ ինքն · որպես թէ կամիցի տեղեկանալ ինչ ՚ի
նմանէ · և բագարատայ ոչ գիտելով զնորհդ ապուսահէթայ՝
աներկիւղ գնաց առ նա · և նոքա վեր ՚ի վերոյ պատուճով ընկա-
լեալ զնա, կապեաց ՚ի շղթայս զկին երեքտասան ամ իշխա-
նութեանն նորա, և ետ տանիլ առ ամիրապետն · * Եւ որ սակս սքի
,, հայրապետին զանիրաւս խօսիցեր (ասէ յովհաննէս կաթողիկոս),
,, աստ ապա զնիրաւացի պատուհաս վրէժխնդրութեանն ընդ արժանի
,, յանձին իւրում կրեր ։

Ա.Այլ այս չէր ինչ, եթէ պահել էր նմա զհաստատուն հաւատոյ
իւրոյ առ քս · քանզի և ՚ի նմին տկտրացաւ առ ՚ի զերծանել
զոյ ՚ի ցասմանէ սպասզեցոյ · որպէս գրէ վկայ ոմն ճմկակից
թարգմանիչ գրոցն նահապետ · * Յորժամ առէ ըմբռնեալ լի-
,, ներ մեծին և երևելին այն իշխանն հայոց վեհմամիտն, որ
,, և զառվանդական յանձին քերեր ունել զդիտութեն որ ՚ի քս
,, հաւատոյն, ոչինչ արուի քաջութեն այնուհետև ընդ արժանի
,, իւրոյ մեծութեն երևեցոյց, այլ երապաստիս ՚ի վայր հոլո-
,, վեալ յանծային հաւատոյն՝ զոր ունէր, գլորեցաւ վաղվաղա-
,, կի ՚ի վիհ անկանգնելի կորստեանն · և ՚ի քաց ընկենուլով
,, զդրոշմ ուխտի ձշմարիտ հաւատոյն, սուգ անհնարին քաշե-
,, ծիս հայաստանեայց հասուցանէր ։ Վնպէտ և յաւելու ես
ասել, թէ ըստ հաւանելոյ առ մեզ համբաւոյն՝ նա ՚ի սրտի
իւրում պահէր զհաւատս ։

849 Ա.Ուստ բնակիչք սիմ լերին՝ որք աստուն կոչին, իմացեալ
զվտարանդութեն բագարատայ կապանօք ՚ի գուռն, բոլոր քաջք
անհնարին սրտմտութիւք յոյժ · և համագունդ ՚ի մի վայր գու-
մարեալ, քանս եդին ՚ի մէջ իւրեանց՝ սպանանել զոստիկանն
ապուսահէթ · և առեալ զզէնս իւրեանց՝ մեծաւ բազմութիւք և
ամբոխիւ յանկարծակի յարձակեցան ՚ի վերայ ոստիկանին, մինչ-
դեռ նա յապահովի էր · և չարաչար սպանին զնա · և ցրուե-
ցին զնմա բազմութիւն զօրացն նորա ։ Եւ ահա այս եղև սկիզբն մե-
ծամեծ չարեաց և աղետից, որք հասին ՚ի վերայ Տիս մերոյ ·

որովք և իսպառ անչքացաւ մեծին Թէ քանդեցաւ Յս. որպէս
ունիմք գրել ի յաջորդ գլուխդ :

849 Ի նմին ամի յորում սպանին սատունք զապուսէԹ , գրգռե-
ցաւ գործ դառնութե ի մէջ երկուց հզօր նախարարաց՝ բազ-
կենի սիւնականի , և գրիգորի սիւնեաց տեն՝ որ առփանն կո-
չիւր : Ի Թէպետ բնչք ի մեծամեծաց հայոց լուծել զայս՝
յորդորէին զնա խաղաղել և հաշտել , բայց բազումք ևս ընդ
հակառակն առաւել ևս գրգռէին զնոսա : Ապա երկաքան-
չիւր նոցա ժողովեալ զօր բազում՝ ելին ընդդէմ միմեանց ի
մարտ պատերազմի . և սկսան կոտորել զիմեանս . և յերկա-
րիլ այսպիսի գործոյ՝ ձեռն արկին սպատակ սիրել ի գեօղս
և յաւանս իրերաց , և այրել զբազում տեղիս , և ի գերուի
վարել զարս և զկանայս , և զբնչն ծայրակտուր առնել :
Ետ այսր ամի վերստին Ձակատ կարգել նոք՝ մեծամեծ հար-
ուածովք հարին զներեարս . և յայսմ վերջին պատերազմի զօ-
բացեալ բաբկենի՝ սպան զգրիգոր առփան . և ինքն որ սի-
սականի տէր էր՝ եղև և տէր բուխանդակ երկրին սիւնեաց . իսկ
զօրդի գրիգորի առփանայ գվասակ՝ որ մնկանուճամբ գա-
բուռ կոչիւր , կարգեաց իշխան միոյ սիսական կողմանն . և
վ՛ա այսր պատճառի սա ինքն գաբուռ և որդիք տորա սիսա-
կան ևս կոչին ի յովհաննէ կաթուղիկոսէ . նոյնպէս և որդիք
բաբկենի վասակ և աշոտ երբեմն սիւնիք կոչին , և երբեմն
սիսականք . այլ մեք վ՛ա որոշելոյ զօրդիս այսր բաբկենի ի
կարգի պատմուԹենս կոչեմք սիսական . իսկ զօրդիս գրի-
գորի առփանայ կոչեմք սիւնիս . և զայս պարտ է պահել ի
մտի՝ առ բարւոք իմանալոյ գկարգ պատմուենս :
Ե . Ի նորոգ խաղաղել սոյ՝ ապլհերԹ ումն ի տանէ ջահա-
պայ յարձակեցաւ յերկիրն սիւնեաց չորս հազարաւ , ըստ գրե-
լոյ վարդանայ . ընդդէմ որոյ ելեալ բաբկենի երկու հազա-
րաւ՝ եհար և վանեաց զնա : Իսկ զօրքն հագարացւոց , որք
ցրուեցան ի հայոց , հասեալ առ ամիրապետն՝ գոյժ ետուն
նմ վ՛ա սպանուԹենն ապուսէԹայ , և վասն ամի զոր արարին
ընդ նա բնակիչք սիմ լերինն : Այն իբրև լուաւ ամիրա-
պետն՝ որ ի հայոց կոչի ջափրէ , բարկացաւ սրտմտուԹբ ի
վր նոք , միանգամայն և ի վր ամ հայոց՝ ըստ սադրելոյ Թշնա-
մեաց . և գումարեալ զօր բազմ իբրև զաւազ առ ափն ծո-
վու՝ ետ ի ձեռս ուրուման ընդհօծնի իւրոյ , որ կոչիւր բուղայ
կիմ բուխայ , և առաքեաց զնա ի հայս . պատուէր եդեալ ի
վր նր , զի զամ իշխանս հայոց և զտեարս առ հնրկ ըմբռ-
նեալ՝ առաքեցէք առ ինքն կապանօք . իսկ զայլ ամ մարդ՝ որ
կարօղ իցէ սուր առնուլ ի ձեռին , սասակեցէք առանց խըն-
նայելոյ : Այլ եԹէ ոք Թողեալ զօրէնս քրիստոնէուԹե

դարձցի յօրինս հայաբարացւոյ, ընդ իւր առեալ բերցէ առ ա-
միրապետն. միայն թէ իցեն նք արք քաջք կիր գեղեցիկք.
ապա թէ ոչ՝ մի խնայեսցէ ի նմա: Իսկ զանպիտան ռամիկս
ժողովրդեանն, նոյնպէս և զմանկունս և զկանայս թողուլ ան-
շնաս. և եթէ արժանի դատեսցի զնա մահու՝ սպանցէ:

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս ճեմանեն հարուածոյ և գերութեանն՝ զոր արար
ի հայս Բռաղայ ոստիկան. և յաղագս նշանա-
գնիւոսութեանն պատրիկայ:

Ռաղայ ոստիկան առեալ զայսպիսի սաստիկ պատ- 850
ուհեր յամիրապետէն՝ հօրդան ետ համագունդ մղել
զօրօք յաշխարհս հայոց իբրև զհեղեղ գայրացեալ.
և հասեալ ի տարոն գաւառ՝ պատեալ պաշարեաց զնա՝ եր-
կիրն, և զամենեսին առ հնձիկ յահի մեծի ըմբռնեալ սասանե-
ցոյց. և ապա ձեռն արկեալ կալաւ և կապեաց զերկուս որդիսն
բագարատայ զաշոտ և զդաւիթ, և զնա զազատս և զհամա-
խոհս նոցա, ընդ որս և զգրիգոր մամիկոնեան զթոռն գրիգորի, և
եդ զնս ի պահեստի: Իսկ զքէն քննակիչք սիմ լերինն էին՝ որք
սպանին զապուսահլ, նախ առաջին սփռեաց բռաղայ զբա-
զում զօրս առպատակութիւնք ընդ ծործորս այնր լերինն. և զա-
մենեսին՝ որք քնակէք էին ի դիւրամատոյց վայրս, ի սուր
սուսերի կոտորեաց. և ապա արձակեաց զայլ զօրս ընդ ե-
րեսս դաւառին տարոնոյ. և այս զօրք կոտորեցին զնա խու-
ճապիս ի վերայ լերինն՝ որ կոչիւր վաչգինակ: Իսկ դիմեալ ի
վէր հեծելազօր գնդի հայոց իջելոց ի սիմ լեռնէ զբազումն
ի նոցանէ սրոյ եհատուն ձարակ. և զբազումն կալեալ կապեցին
տոռամբք. և տարան առաջի բռաղայի: Իսկ նա զգեղեցիկս
և զկորովիս ի նոցնէ ընտրեալ՝ եդ ի պահեստի վ՛ն դարձուցա-
նելոյ զնս յօրինս իւր. իսկ զայլսն ետ խողխողել առաջի ա-
ջոց իւրոց. այսպէս արար և յայլ քէմ գաւառս այնր կողմանն:
Իսկ ապա զորդիսն բագարատայ զիշխանն աշոտ, և զեղբայր
նր զդաւիթ, զորս եդեալ էր ի պահեստի, առաքեաց առ
ամիրապետն հանդերձ ընտանեօք և աղդականօք նոցին:
Իսուր այսր ամի հասեալ յականջս աշոտոյ մեծի իշխանի տանն 851
արծրունեաց՝ պատրաստեցաւ ելանել մարտիւ ընդ առաջ
բռաղայի. զի էր նա այր քաջ և բազմահնար. և սակայն
նախատրտիք իւր՝ որք յօժարեցան միաբանիլ ընդ նմ՝, յետս
կացին ի նմանէ. և զի ինքն միայնակ ոչ կարէր առնել ինչ,

և

Յովհաննէս:
Մովսէս. 2:
Ստեփանոս:
Սմբատ. 3:
Գրիգոր. 2:
Տիրակոս. 2:
Գագիկ. 2:
Յակոբ. 3:
Գրիգոր. 2:
Գրիգոր. 2:
Յակոբ. 3:
Գրիգոր. 2:
Գրիգոր. 2:
Գրիգոր. 2

և ոչ իսկ ձեռնհաս էր պահել զնոն, խորհեցաւ գնալ հեզու-
թիւն և ընծայիւք առ բուղայ։ Եւ իբրև յանդիման եղև նմ,
հրամայեաց բուղայ կապել զնա ի շղթայս. և ըմբռնեալ
զկին և զորդիս նորին և զազգականս՝ զամենին ի միասին ետ
տանիլ առ ամիրապետն։ Եւ ինքն չոր արարեալ քաղմութիւն
զօրաց իւրոց՝ խաղաց յերկիր նիր ի վաստրական ՃՀ. և տա-
րածեալ սիրեաց զզօրս իւր ի գաւառս գաւառս. և հրա-
մայեաց ձերբակալ առնել և կապել զամ այր, որ կարիցէ
գնդն շարժել. յորոց զբաջքն և զբարեհասակսն և զյաջողա-
ձեռնսն տրտճեալ պահեաց կապանօք. իսկ զայլս՝ որոց գրե-
թէ ոչ գոյր համար, ետ սպանանել սրով. ոչ արար ի կող-
մանս տարրունոյ. մինչև արեան սպանելոցն հեղեղօրէն հոսել
և զերկիր ոռոգանել, և դիականց նոյ լնուլ զձորս։ Եւ ապա
սկսաւ զկապեալսն բռնադատել և հաւանեցուցանել յօրէնս
իւր. և իբրև ետես՝ թէ ոչ դառնան նոքա, յետ դառն տան-
ջանաց ետ խողխողել զբոլոր։ Այս այսպէս կատա-
րեալ ոստիկանին՝ պատրաստեցաւ խաղալ յառաջ զօրօք իւ-
րովք յաշխարհն այրարատայ. և փութայր հասանել ի
դուինն իբր ի մայրաքաղաք ՅԻՆ։

Իսկ սմբատ բագրատունի՝ աբլաբանն կոչեցեալ, որ սպա-
րապետի ունէր գործակալութիւն, ըստ որում յիշեցաք ի նախ-
ընթաց գլուխսդ, տեսեալ զաղէտս թշուառութենէ հայ-
ոց, և գիտացեալ՝ թէ չիք հնար այնուհետև պատերազմաւ
կատարել ինչ, խորհեցաւ վն օգտի հասարակաց գնալ ընդ ա-
ռաջ բուղային, որ մերձ էր հասանել ի դուին։ Եւ առեալ
զբազում ընծայս ազնիւս՝ գնաց առ նա. և նա պատուով
ընկալեալ զնա՝ արար իւր առաջնորդ յամ ՃՀորդութիւն,
և յամ ի գործս ինասու։ Եւ գտեալ զնա յամի հաւատա-
րիմ՝ արար իւր խորհրդակից։ Եւ հասեալ նովաւ հանդերձ
ի դուին՝ սիրեաց անտի ընդ ամ գաւառս այրարատայ աս-
պատակս հինից։

Իսկ թէ այն հինք գինչ ինչ գործեցին, անպատմելի
է և անբերելի ի գիրս բովանդակել. կալան գամ այր՝ որ կա-
րող էր ձգել զաւար. որոց զամենս իբրև զձագս հաւուց խող-
խողեցին. և զամենս տուառամբ ձգեալ ածին առ բուղայ. և
նա ընտրեալ ի նոցանէ զառոյգս և զվայելչահասակս, ոչ արար
այլ տեղիս, կրկին կապանօք էարկ ի բանտ ընդ առաջ-
նոյ կապելոցն. իսկ զորս ոչ ետես այնպիսի, ետ սրոյ կերա-
կուր։ Եւ յետ ոչ բազում աւուրց կոչեալ յատեան զայնո-
սիկ՝ զորս պահեալ էր ի շղթայս, եհարց ցնոսա, եթէ ընդու-
նիք զօրինս մեր։ Նոքաղաղումք ի նոցանէ երկուցեալ ի սպառնա-
լեաց՝ ուրացան զնա. բայց բազումք ևս հաստատուն մնա-

յետալ

ցեալ՝ ի հաւատս՝ սկսան յորդորել զմիմեանս, և ասեն. տեսանելով սորա զմեզ քաջս և արիս՝ կամի զինուհորեցուցանել օրինաց իւրոց. բայց արդ՝ եթէ արդարև քաջք էք եմք, ժամ է արդ ցուցանել զքաջութիւն մեր առաջի՝ քան՝ զինու զօրութիւն նոր. և արդ՝ մեռցուք քաջութիւն վա՛ն նորա, և նա ընկալցի զմեզ։

Տեսեալ բուղայի զհաստատութիւն մտաց նոցին, և զքաջալերել նոցա զմիմեանս, լցաւ բարկութիւն. և սկսաւ զարհուրել ի տանջանաւք չարչարել զնա. և ոչ եթող՝ ի գեղեցիկ գէմս և՝ ի հասակս նոյ կերպարան մարդոյ։ Եւ տեսեալ թէ ոչինչ համարին նք զտանջանսն, և ոչ իսկ ձիկ հանեն՝ ի նոսին, առաւել ևս սրտմտեալ՝ հրամայեաց այրել զնա, ոչ միանգամայն, այլ՝ մի առ մի և տակաւ տակաւ. և այսու օրինակաւ աջքին նք կատարեցան՝ ի քէս, և ընկալան զպսակն մարտիրոսութե՝ ոգիք իբրև հարիւր և չիսուն. թո՛ղ զայնոսիկ՝ ոլք յայլ գաւառս նոյնին օրինակաւ նահատակեալ մարտիրոսացան։

Ի մէջ երանելեացս այսոցիկ կային արք եօթն, սրոց գլխաւորն անուն էր ատումՙ՝ ի գաւառէ աղբակայ՝ ի գեղջէ որսիրանայ. նք այնչափ գեղեցիկ էին դիմօք, զուարթագին երեսօք, վայելուչ հասակօք, և յաջողակ ձեռօք, մինչև. ամ զօրաց հագարացւոց հիանալՙ՝ ի վրայ հրաշատիպ կերպարանացն. ոմն և ինքն իսկ ոստիկանն բուղայ զմոլեալ էր ընդ այն. և ոչ համարձակէր տանջել զնա. և ջանայր ամ հնարիւք որսալ զնոսին յօրինս իւր. բայց պաքգևս բարեաց խոստացաւ նմ. գանձս ոսկւոյ և արծաթոյ էարկ առաջի նց. գեօղս և գերդաստանս սահմանեաց նոցա. և հաստատեաց երդմամբ իշխան փառաւոր առնել զնա՝ ի թէքուրէն հագարացւոց։ Եւ իբրև ետես, թէ նոքա ոչինչ առնուն յանձն, քայց միայն յորդորեն զմիմեանս մի՛ թողուլ զքն, մատոյց զնոսա յամ ազգ տանջանաց. * զոր ոչ լեզու բաւական լինի պատմել, „ և ոչ ընդ գրով բովանդակել՚՚, ասէ յովհաննէս կաթողիկոս։ Եւ յետ ամ տանջանաց ետ խաչել զնա. և նք քաջալերելով զմիմեանս՝ ի վերայ խաչին, և ընդ քեի խօսելով աւանդեցին զհոգիս իւրեանց։ Կատարումն սց և առաջնոյն եղև յամի տեառն. 853. և՝ ի թուականութեանս հայոց. յբ։ Եւ հայրապետն յովհաննէս ասհմանեաց օր՝ կատարել զոն նց՝ ի մեհեկանի. ի՛ե. նց՝ ի մարտի. 3. ընդ նախնին ատովմեանն։ Օ այս գրե յովհաննէս կաթողիկոս պատմագրանն իբր ակնատես. զի յայնմ ժամուի էր ինքն՝ ի տիս մանկուե։

Օ այսչափ խոստովանեցաք զառնութիւն ոստիկանին տեսեալ ոմանց՝ ի նախարարաց, ոլք ամրացեալ էին յանմատոյց տեղիս. և զմտաւ ածեալ՝ թէ ոլդիք և կանայք իւրեանց մատնին՝ ի

ձեռս օտարաց , դառնացան յոյժ . և ոմանք ի նոցանէ եկեալ
կացին ի կերձս ձորոյն , ընդ որ ունէին անցանել մեռան ինչ
զօրացն բուղայի . ուր և ժամ պատեհ գտեալ նոքա յարձակե-
ցան ի վերայ զօրացն , և սպանին զբազումս ի նոցանէ . և զայլսն
փախստական արարեալ՝ հանին ի ձեռաց նոցա , զորս գերեալ
էին . և տարեալ ամրացուցին յանառիկ վայրս : Այլ սակայն
բազմութիւնք զօրացն բուղայի դիմեալ ընդ այլ ձանապարհս
ի վեր նոցա՝ կալան գնան , և ածին առ բուղայ . և նա յետ քիչ
ողջանալոյ և տանջանաց՝ զորս ետ նոցա վն խախտելոյ գնաց ի
հաւատոյ , հրամայեաց հատանել զգլուխս նոցա . յորս երևեալն
էին գէօրգ յակեաց տոհմէ , և խոստով ի տանէ գաբեղենից .
(որ ի տպագրեալ յայսմաւուրս . յապրիլի . 21 . վրիպակաւ
դնի՝ հաբեղայ) : Տեսեալ մի ոմն յայլազգեաց անտի զհամ-
բերութիւն վկայիցն՝ աղաղակեաց , և ասէ . և ես քրիստոնեայ
եմ . որոյ վն գնա և նա կոտորմամբ սպանին անդէն :

854 Ի . Ոստիկանն բուղայ տեսեալ , թէ ամ ինչ՝ զոր խոր-
յՀ հէրն առնել յայրարատեան ծի , յաջողեցաւ , ձեռն էարկ
և յօն սիւնեաց և ի սիսականս . և առաքեաց զօր բազում
առաջակութիւնք յամ գաւառս՝ առնել ընդ նա ըստ օրինակի
այլոց աշխարհաց , և ունել զնա տեարս ծին , մանաւանդ
զիշխանն սիսական զվասակ , և զեղբայր նր զաշոտ՝ զորդիս
բաբկենի : Այս արդ՝ եթէ ոչ աւերն , բայց և ոչինչ պակաս
քան յայլ տեղիս՝ և յայս ծ՝ կոտորածս հասուցին առաջատակքն
բուղայի . որով և ներկեցին զդաշտան արեամբ , և լցին զձոն
դեակամբք :

Ի այս տեսեալ իշխանաց աշխարհին՝ փախստեայ անկան ի
գաւառն բաղաց , և զերծան յանառիկ ամրոցս : Ոակ վասակ
իշխան՝ փոքր մի յապաղեալ վն իրիք հարկի՝ պաշարեցաւ ի
զօրաց . և հնարիւք լինն հազիւ ձողոպրեալ զանձն ի նոցն՝
փութացաւ փախչել և անկանիլ ի կողմանս կոտայս գաւա-
ռի : Իբրև զայն գիտացին զօրքն բուղայի , սնդեցան զհետ
նր , և ձեռով ժամանեցին նմա : Այլ նորա տեսեալ՝ թէ չիք
հնար փախստեան , և ոչ տեղի թագստեան , յեցաւ ի զօրու-
թիւն քաջութիւնէ իւրոյ . դարձաւ ընդ կրունկն , եհան զսուր
իւր , և իբրև վարազ զայրագին յարձակեալ ի վերայ զօրացն
ինքնին միայնակ՝ եհար զնոսա չարաչար յոյժ . և զամենեսեան
առ հասարակ դիակս առեալ յերկիր կործանեալ՝ եհաս և ի
զօրավար նոցա՝ որ ձգտեալ փախչել , և ի վայր արկեալ
գնա ի ձիոյն՝ ընդ ոտիւք երիվարին իւրոյ կոխեաց գնա . և
վազելով ի վերայ դիականց անկելոց՝ հանց գնաց յարևելս
կոյս յաշխարհն գարդմանաց առ իշխան տեղւոյն՝ որ կո-
չիւր կորիձ :

Ասակ նա պատուիրով ընկալեալ զվասակ՝ հանդոյց զնա, և ա-
պա դաւաճանութիւնն կապեալ զայրն քաջ՝ առաքեաց ի ձեռս
թուղայի, ակնուանելով գտանել ի նմանէ պատիժ մեռանել, և
կամ ոչ կրել չարիս ի սաստից նորա. քայց ընդ հակառակն դի-
պաւ, որպէս տեսցի ի ստորև։ Եւ իբրև ետես թուղայ զվա-
սակ, ուրախ եղև յոյժ. և առաքեաց պատգամ առ եղբայրն
նորա աշոտ և առ մայրն՝ գալ առ ինքն. ապաքէն ոչ ասէ՝
թէպէտ կտտանօք սպանանեմ զնա։ Այլ նախ քան զժամանել
դեսպանացն առ նոսա՝ հինք զօրացն թուղայի պաշարեալ էին
զնա. զորս և կալեալ կապեցին. ընդ որս և զայլ իշխանս. և
ածին զնա ի դուռն առ թուղայ. և նա կրկին կապանօք կա-
պեալ զնա պահեաց զդուշաւորն։ Եւ ապա առեալ ընդ իւր
զնամ կապելոյն՝ սկսաւ խաղալ ի ներքս ի կողմանս արևե-
լից։ Եւ զի յայնժամ ոչ էր առ նմա սմբատ սպարապետ,
յղեաց առ նա պատուէր, զի վաղվաղակի հասցէ զինի
իւր։

Ջ. Քայսմ գառնութեամբ ժամանակի կաթուղիկոսն յոյժ
հանեաւ ոչ էր ի դուռն, այլ՝ շրջեր յայլև այլ գաւառս յայց-
ելութիւն և ի քաջալերութիւն տառապեալ ժողովրդոց. և
ունէր իւր կայան հանգստի ի գեղարքունիսն ի վանս մա-
քենոցաց. յորում և հիւանդացեալ ի բազում ցաւոց սրտի
իւրոյ՝ վախճանեցաւ յամի տեառն. 854. և ի թուին հայոց. յիգ.
և թաղեցաւ յայն վանսն, կայեալ ի կաթուղիկոսութեանն ամն
իբր. ին։ Ասակ սմբատ՝ որ փութայր հասանել առ թուղայ ըս
պատուիրելոյ նորա, լուեալ զմահ հայրապետին յուհաննու՝
հրամայեաց վաղվաղակի ժողով եպիսկոպոսաց գումարել
վանն ընտրութեան նոր կաթուղիկոսի ի քաղաքագեօղն ե-
րազգաւորս՝ այն է շիրակաւան, ի գաւառն շիրակայ. զի
այն տեղի միայն էր յայնժամ յատակովք. և ընտրեցին բազ-
մութիւնք ժողովելոցն՝ զզաքարիա ի կոտայս գաւառէ ի ձագ
գեղջէ. զոր և ի միում աւուր ձեռնադրեցին սարկաւագ,
քահանայ, եպիսկոպոս, և կաթուղիկոս, առ ստիպելոյ կաց-
ուցելոցն ժամանակին։ Եւ սմբատ յանձն արարեալ զինքն յա-
ղօթս հայրապետին և այլոց եպիսկոպոսաց՝ որք անդ էին,

փութանակի եղև և գնաց առ թուղայ։

Ի հասանել նորա առ նա՝ հարցեալ տեղեկացաւ ի նմանէ
թուղայ, թէ ո՞ր արդեօք գտցէ կայցէ իշխանն ատրներ-
սէհ՝ որն խաչէնոյ՝ որ ի յարցախ ծի։ Եւ իբրև գիտաց թէ
ամենայնեւ նատի նա անդէն յերկրի իւրում ի նոյն ամրոց
խաչէնոյ, խաղաց ի վե՛ր նորա. և պաշարեալ զամրոցն՝ հաւ-
զայն, և կալաւ զատրներսեհ և զազգատոհմ նորա, և զայլ
ևս երևելի անձինս։ Եւ զամենայն դիմակաց և զարս տու-

սերաձիկս եարկ ՚ի թերսն սրոյ . և արբոյց զերկիրն արեամբ
նոցա , և արեամբ այլ ևս բազմ անմեղ մատրկան ։
Եւ անտի յառաջ անցեալ՝ եկին յաշխարհն ուտի ՚ի գաւառն
գարդմանացւոց , ուր վախճաւաւն նախ վասակ սիսական ։ Եւ
կանգնեալ պատնէշ զբերդիւ , որ յանուն գաւառին կոչիւր
գարդման , էառ զայն , և կալաւ զիշխանն կարին , որ մատ-
նիչն եղև վասակայ . և էարկ զնա ՚ի կապանս ։ Պաշարեաց
և զՄԾ աւանն տուա , և քանդեաց զայն . և կալաւ զիշխան
տեղւոյն զատեփանոս զանուանեալն կոն . որոյ ազգն անուա-
նեին սևորդիք ՚ի նախնոյն իբրեանց , որ յորշոբզևր սև կամ
սևուկ . իսկ թէ յուտի աշխարհին քանի՛ արեան հեղմունս
արար քուղայ , չեղև հնար յովհաննու կաթուղիկոսի ընդ
դրոյլ արկանել ։
Յետ այսորիկ էանց և յաշխարհն աղուանից . և նախ հնա- 855
րիւք լինի կալաւ զիշխան նոցա զեսայի , և զամենայն համազ- յՀ
գիս նորա ։ Եւ ապա ՚ի սուր արկեալ զաշխարհն համայն՝
ծուխացոյց արեամբ անմեղաց . և կալաւ գրեթէ զամ իշխանս
տեղւոյն ։ Եւ դիմեալ անտի ՚ի վերայ տիխեաց՝ արար բազմ
ինաս . և անդ ՚ի փայտ եհան զսահակ զիշխանն վանանդայ .
և դրձ ՚ի պարտաւ՝ ապան սրով զմոկաթել վանանդացի ՚ի վե-
թայ խոստովանութեանն հաւատոյ ։
Ե . Եւ ապա դարձ արարեալ անտի՝ էառ ընդ իւր զամե- 856
նայն կայսեալս , զորս էբրև զանարդ գերիս քարշելով՝ էած
՚ի դաւին . և ՚ի մի ժողովեալ զամ՝ զորս ունէր ՚ի դիպահոդ ,
տարաւ ընդ իւր առ ամիրապետան ՚ի բաղտատ . և եթող վերա-
կացու ՚ձին զայր ոմն շէխ անուն ազգաւ պարսիկ ՚ի դաւին ։
Էառ ընդ իւր քուղայ և զամբաստ սպարապետ՝ հաւանեցու-
ցեալ զնա , թէ փոխանակ հաւատարմութեան նորա տացէ
նմ ամիրապետն զնորութի ՚ի վր բոլոր հայաստանեայց , և
և պատիւս և պարգևս մեծամեծս . և դարձուցէ զնա փա-
ռօք յՃ իւր ։ Տարաւ քուղայ ՚ի բաղտատ և զասորի սարկա-
ւագն զնանայ , զոր եգիտ ՚ի հայս ։
Իբրև յանդիման եղեն ամիրապետին իշխանք հայոց հանդերձ
կապանօքն , սպառնալեօք խօսեցաւ ընդ նմ ամիրապետն . և
հրամայեաց կապել և զամբաստ , և զամենեսեան ՚ի միասին
գնել ՚ի բանտի ընդ այլ նախարարաս , զորս յառաջագոյն ա-
ռաքեալ էր առ նա քուղայ ։ Եւ յետ ոչ բազումի ինչ աւուրց
հրամայեաց առաքեաց ամիրապետն առ նոսա սամենեսին , և ե-
հարից զնա . ունկնդիր արդեօք կամն գառնալոյ յօրէնս հա-
գարացւոց , թէ ոչ ։ Եթէ գարձցին ասէ , բէշմ պարգևօք և
պատուօք և իշխանական փառօք գարձուցից զնա յՃ իւ-
րեանց . իսկ եթէ ոչ , բազում չարչարանօք և սաստիկ խոշ-

տանգամանօք և անհնարին մահուամբ կորուսիչ զնա ։ Օ այս
հրամայեն ի բազում ժամանակս օր ըստ օրէ առաքել առ նոսա
ահաբեկ առնէր զնա , և ակն ունէր դարձին նոյ · որպէս և եղև
իսկ · քանզի բազումք ի նոցանէ զարհուրեալք ի սպառնա-
լեացն՝ դարձան յօրինս հաւատացելոց · իսկ այլք՝ գրեթէ ա-
մենեքեան իսկ խոստացան դառնալ · և արտաքսակիս ուրացան
իսկ զքրիստոնէութիւնն , բայց յերից ոմանց՝ որ են ստեփաննոս
կոն կոչեցեալ , գրիգոր մամիկոնեան , և սմբատ սպարա-
պետ · զի ստեփաննոս քննաւ ոչ առեալ յանձն՝ դառնալ յօ-
րինս նոյ՝ անհանդուրժելի տանջանօք կատարեցաւ ի քէս , ի
վեցհարիւրերորդի ութերորդի ամի թուականութենն հռո-
մոյ , ըստ գրելոյ յովհաննու կլիմիկոսի , այն է՝ յամի տաս-
855 · և ի թուէն հայոց · յիդ ։
Իսկ գրիգոր մամիկոնեան հնարիւք ինչ վերծեալ ի բան-
տէն՝ եկն ի դաւառն բագրեւանդ · և հասեալ միով ծառայիւ
ի սահմանս գաբեղենից՝ եմուտ ի տեղին կոչեցեալ դաշա-
նաձակ , ուր երբեմն ձգներ սքեն թաքուլ եղբայրք վարո-
սի · և անդ դադարեալ՝ զկնի եօթն աւուրց մեռաւ ։ Ի-
րբև աղդ եղև ամիրապետին փախուստն գրիգորի՝ գրեաց
առ մահմէտ ոստիկանն ատրպատականի , զի գտցէ զնա · և
նա առաքեաց պատգամ առ աշոտ որդի սմբատայ · զի ուր և
իցէ գրիգոր՝ գտեալ տարցի առ ինքն · և նոքա հասեալ զգլուխ
մեռելոյն՝ յղեաց առ նա , և ասէ · ջղի կամէր դա անցանել
առ յոյնս՝ կալայ և հատի զգլուխ դորա ։ Ընդ այս կարի ինն
խնդացեալ մահմէտ՝ զգայողց ամիրապետին · և նորա ու-
րախացեալ ընդ հաւատարմութի աշոտոյ՝ հրամայեաց կար-
գել զնա իշխան դաւառին բագրեւանդայ , և տալ նմ արա-
ծաթ հինգ բիւր՝ ըստ գրելոյ վարդանայ ։ Որ և յաւելու ասել ,
եթէ *յայնմ հետէ բարձաւ ի հայոց ծէս ազգն մամիկոնէից ։
զի թէպէտ և մնացորդք ազգին դասունէին յծի անդ տարո-
նոյ , բայց օր քան զօր նուազեալ յիշխանութէ՝ ի մոռացօնս
եղև անուն յիշատակի նոցա · որք յառաջնմէ անուանիք էին ի
մէջ հայոց քաջութէ և բարեպաշտութէ · ոմք և տեսեր մին-
չև ցարդ յընթացս պատմութէ ։
Իսակ սմբատ սպարապետ ի բազմից բազում անգամ յորդո- 856
րեալ՝ մանաւանդ ի քուշայէ , դառնալ յօրինս իւրեանց , յն
միշտ զայս բան արար պատասխանի · ոչ կարեմ թողուլ զքէս ,
ոչ կարեմ ի բաց կալ ի քրիստոնէական հաւատոց , զոր ա-
ւազանին ընդ օրհնօք ընկալայ ։ Ի-րբև գիտացին , եթէ նա
հաստատուն կայ ի հաւատս քէս , խորհեցան դառն տան-
ջանօք կորուսանել զնա ։ Ի-նորա յիշեալ և ի զեղջ եկեալ
վանս ամենայն իրաց , որովք ձեռնատու եղև քուշայի ի գործ

մատ-

մատնութեանէ քաղցեալ, սկսաւ լալ և ողբալ առաջի նոյ ՚ի քա-
ղաքէն աւուրս ՚ի կապանս անդ քանտիոն. և յայն ջեղջան իւր՝
մինչդեռ յաղօթս կայր առ Աստ, աւանդեաց զհոգին. որոյ
վերայ իսկ կոչեցաւ նա ամբառն խոստովանող։ Եւ ոմանք ՚ի քրիս-
տոնէից՝ որք կային ՚ի քաղաքի անդ, հրամանաւ խնդրեալ յա-
ռաքելեան՝ տարեալ թաղեցին զմարմին նորա։

Այլ թէ ուր և զնացդ, գրէ յովհաննէս կաթողիկոս ՚ի Ճմկաւկից
և յականատես մարդկանէ, թէ * տարեալ եդին զնա ՚ի վիմա-
,, ձարանի մի՝ զոր դանիէլի մարգարէին. ուր և ընկեցեալն
,, իսկ լինէր նա ՚ի գուբն առիւծուց ‖։ Այսով գուցէ տայ ի-
մանալ, թէ՝ նա, և այլք ոմանք ՚ի քանտարկելոց եդեալ էին
՚ի դխպահոլ ՚ի հինն բաբելոն՝ ուր էր գուբն դանիէլի. կամ
ըստ ասելոյ ասողկոյ՝ ՚ի քաղաքն սամաւտայ։ Եւ կամ թէ յետ
վախճանելոյ սմբատայ ՚ի նորն բաբելոն՝ այլ ՚ի քաղտատ,
հաւատացեալքն տարեալ իցեն զմարմին նր ՚ի հինն բաբե-
լոն, որ երկու աւուրք հեռի է ՚ի նորոյն. ուր և կայր շինեալ
վկայարան ՚ի վր գբոյն դանիէլի. ոմք յիշատակի այս և յայլ
պատմութիս. զոր և ՚ի մէջ բերէ ասսեման ՚ի հատորն. գ. ե-
րես. 726. ՚ի պատմութէ արաբացւոց. և ասէ, թէ զեկե-
ղեցին՝ որ գոյր անդ ՚ի վաղուց շինեալ ՚ի վերայ գբոյն, քան-
դեալ էին հրէայք. իսկ ՚ի ժամս փոքուն Թէոդոսի կայսեր ՚ի
լինել հաշտութէ ընդ պարսից ՚ի ձեռն սրբոյն մարութայի, նո-
րոգ շինեցաւ անդ վկայարան և մեհենատուն կրօնաւորաց. և
անդ ահա ասէ լինել յովհաննէս կաթողիկոս զքաղաքումն սմբա-
տայ խոստովանողին։

Այս այն սմբատ է, յորոյ որդւոյն՝ որ կոչիւր աշոտ, զոր և
յիշեցաք այժմ, սկսաւ իշխանութէն Թագաւորութէնն բաղ-
դատունեաց. զորմէ ունիմք գրել ՚ի յորդոր գիրսդ՝ որ
գինի։ Ուր խօսեցեալ եւս և զդարձեալ իշխանացն հայոց յաշ-
խարհն իւրեանց։ Այլ նախ աստանօր առաջի գծանօթու-
թիւն այսր երրորդ գրոց։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ընդարձակ գիրս։



Այեցեալ ի սկիզբն պատմութեանդ աւանդելոյ յայս երրորդ գիրս, փոքր ինչ ունիմք խօսիլ ի ծանօթութենէն նոցին. վասն զի վիպասանութիւնք այնոց ժամուց մինչև ի մարզպանութեան վահանայ մամիկոնենի՝ անառարկուսելի են. որովհետև յականատեսից աւանդին. և եթէ գտանիցին ինչ ինչ տարբերութիւնք, դիւրին է միաբանել զնոսա. նաև զորս յայլոց ազգաց աւանդին՝ ընդ նոսին համաձայնեցուցանել ըստ կարի։ Յոյնպէս եթէ հայեացուք ի վերջ պատմութեանդ այսր գրոց, չկարօտիմք ծանօթութեանէ. զի և այնց գոն ստուգագիւք պատմանք. յորոց առեալ գրեմ յուվհաննէս կաթողիս համառօտիւ։ Նոյնպէս եթէ հայեացուք ի մեջն, ի յոյն միջոց ժամուն՝ որ սկսանի ի մարզպանութենէ վահանայ մինչև ի յոստիկանութեն մրուճանայ, և ի կաթողիսութեն տրդատայ, բաղմապատիկ տարակուսանք մատուցանին առաջի. վ՚որ զի պատմութիւք այսոցիկ ժամուց նուիագ են ամենևին և խառն ի այս յաւէտ ի հինգ իրս։ Ա՚ի ի կարգս մարզպանաց և ոստիկանաց. զի ոչ աւանդի որոշ քանիւ, թէ զիա՞րդ և ո՞ր զինի որոյ յաջորդեաց։ Բ՚րկրորդ՝ ի կարգս հայրապետաց. քանզի Թէոփիլոս ըստ ստոյգ յիշատակարանաց կաթուղիկոսացն՝ անվրէպ դնին անուանք նոյ, բայց գործք միոյն խառնեալ երևին ընդ միւսոյն. ընդ որովհետև երբեմն ի վախճանիլ կաթողիկի՝ և կամ ի հեռանալ նորա ուրեք՝ հոգաբարձու ոք և տեղապահ կարգեալ լինէր մինչև ի յընտրուիլն նոր կաթուղիկոսի, կամ մինչև ի դարձ հեռացելոյն, զնա այսր պատճառի անուանք նոյ, և գործք և ժամք ուրեք ուրեք Թուինն շփոթեալ ընդ գործս կաթուղիկոսաց։ Գ՚երրորդ՝ ի կարգս ժողովոց. յորս այնչափ շփոթութի կայ, մինչև ոչ միայն շուրջ բիլ մտաց մարդոյ, այլև յուսահատիլ առ ի զատոյգն գտանել։ և անհնարին երևի անսխալ որոշել, թէ ո՞ր գործ որոյ ժողովոյ իցէ։ Չորրորդ՝ ի կարգս մանաւանդ պատմութեանդ և

առան-